Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

Բակուր
ISSN 1829-1473
4,5
Տասներեքերորդ տարի



Արցախյան զոյամարտի համահավաք

Լ 3(2Հ)
Բ 24

ԲԱԿՈՒՐ

ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՄԱՐՏԻ ՀԱՄԱՀԱՎԱՔ

ՄԱՏԵՆԱՇԱՐ

ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ
ԵՎ
ԳԻՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ

49. 817

«ԾՈՒԾԻ ԲՀ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Երևան 2011

ՀՏԴ 325
ԳՄԴ 66.3 (3Հ)
Կ-294

4-րդ և 5-րդ հատորների խմբագիր՝
ԱՐՄԵՆԱԿ ՂԱՋԻՆՅԱՆ
Շապիկի նկարը՝ ԲԱԿՈՒՐԻ

Մատենաշարի 4-րդ հատորը հրատարակվում է ԼՂՀ Մարտակերտի շրջանի Չափար գյուղից ՌՈՄԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ հովանավորությամբ:
Մատենաշարի 5-րդ հատորը հրատարակվում է Շիրակի մարզպետ, ուտիկանության գեներալ մայոր ԱՇՈՏ ԳԻԶԻՐՅԱՆԻ հովանավորությամբ:
Մատենաշարի լույս ընծայմանը օժանդակել է www.armenia-online.ru ինտերնետային ֆորումը:

Բակուր

Կ-294 Արցախյան գոյամարտի համահավաք, գիրք չորրորդ, հինգերորդ. -Եր.: «Շուշի» ԲՀ, 2011 թ. - 528 էջ:

Մատենաշարի 4-րդ և 5-րդ հատորները Արցախյան ազատագրական շարժման և Ադրբեջան-Արցախ պատերազմի մասնակիցների իրապատում պատմություններով լրացնում են 1-3 հատորներին, ընթերցողների առջև բացահայտում շարժման ու պատերազմի նոր դրվագներ և իրողություններ: Հատորներում նոր զրույցներին զուգահեռ օգտագործվել են պատերազմի տարիներին հեղինակի ռազմաճակատային հարցազրույցները, որոնք լույս են տեսել «Ազատամարտ» թերթում: Եթե Սամվել Բաբայանի, Յուրի Խաչատուրովի, ազատամարտիկների զրույցները պատերազմի ընթացքի մասին է, ապա Սարգիս Խաչատրյանը պատմում է 1940-80-ական թթ. Հայաստանի կոմկուսի Կենտկոմում իշխանության համար դաժան պայքարի, ազգային խնդիրների շուրջը իմորումների մասին: Դավիթ Շահնազարյանը, Լևոն Մելիք-Շահնազարյանը բացահայտում են Ղարաբաղյան խնդրի հետ կապված դիվանագիտական որոշ դրվագներ: Քերոլայն Քոկսը, Վալենտին Օսկոցկին ու Անդրեյ Նոյկինը պատմում են Արցախում իրենց դիտարկումների և խնդիրը միջազգային հանրությանը ճիշտ ներկայացնելու մասին: Պատերազմի մասնակից ազատամարտիկները վկայություններ են տալիս ռազմաճակատային մարտամասների, զոհված ընկերների, մոռացված դրվագների մասին:

Մատենաշարը՝ որպես մեր ժողովրդի պատմության կարևոր ժամանակահատվածի վավերագրություն, հարուստ նյութ է պարունակում ապագա ուսումնասիրողների համար:

ԳՄԴ 66.3 (3Հ)
© Բակուր, 2008 թ.

ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ

ՉՈՐՐՈՐԴ ԳՐՔԻ
Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Սամվել Բաբայան 5
2. Սարգիս Խաչատրյան 9
3. Դավիթ Շահնազարյան 35
4. Քերոլայն Քոկս 50
5. Ռոման Հարությունով 55
6. Լյուդմիլա Հարությունյան 62
7. Համազասպ Հովսեփյան 72
8. Վալենտին Օսկոցկի, Անդրեյ և Գալինա Նույկիններ 83
9. Արտեմ Ալեքսանյան 89
10. Նելլի Ոսկանյան 107
11. Ալեքսանդր Բալբաբյան 115
12. Արայիկ Սարգսյան, Հովիկ Գրիգորյան, Հովհաննես Սարգսյան, Բորիս Սաղյան 119
13. Նորիկ Գասպարյան 139
14. Արթուր Հակոբյան 143
15. Սեմյոն Տրեգուբով 157
16. Արթուր Ջիվանշիրյան 162
17. Մարտին Եսայան 174
18. Պավել Սահիյան 181
19. Վալերի Նանագուլյան 183
20. Շավարշ Վարդանյան 189
21. Վասիլի Նալբանդյան 197
22. Վլադիմիր Դավթյան 204
23. Ալեքսեյ Տրոյանովսկի 210
24. Բենիկ Կարախանյան 212
25. Դավիթ Ոսկանյան 222
26. Բորիկ Ծատուրյան 232
27. Արայիկ Բաբայան 239

Պատմում է ՍԱՄՎԵԼ ԲԱԲԱՅԱՆԸ (1993-1998 թթ. ԼՂՀ Պաշտպանության բանակի հրամանատար)

– Ի՞նչ զգացումներ է ապրում հաղթող բանակի գլխավոր հրամանատարը:

– Դա ինձ անծանոթ զգացում է, քանի որ մենք հաղթող կողմ չենք: Մենք պաշտպանում ենք մեր երկիրը, մեր ժողովրդի ապրելու իրավունքը: Այսօր ես հայրենի երկիրը պաշտպանողի զգացում եմ ապրում: Ուղղակի հիմա հանգիստ եմ ու վստահ մեր ուժերի նկատմամբ: Հարձակվողն ու նախաձեռնողը Ազրբեյջանի ղեկավարությունն է: Սա նրանց պարտադրած պատերազմն է:

– Ջոկատային զինվորից գլխավոր հրամանատարի երկար ու դժվարին ճանապարհ եք անցել. ինչ կասեիք այդ մասին:

– Ինձ հետ մի շարք տղաներ աճեցին ու զորամիավորումների հրամանատար դարձան: Գաղտնիքը երևի իրարից սովորելու մեջ է ու որոշակի փորձ կուտակելը: Եթե զորամասում մասնագետ սպա չկա, ապա հնարավոր է, որ հողագործը, ուսուցիչը կամ ճարտարագետը, ցուցաբերելով իր մարտավարական ունակությունները, վաշտի կամ գումարտակի հրամանատար նշանակվի: Կադրային սպան ևս մարտերում է հմտություն ձեռք բերում ու շատ բան սովորում:

– Մարտավարության տեսանկյունից Մարտակերտի գործողությունը կարևոր նվաճում էր: Ինչպես հանգեցիք նման մտահղացման:

– Նախապես հավաքել էինք չորս ուղղությունների հրամանատարներին ու մանրազնին քննարկել խնդիրը: Առաջին օրը հաջողություն ու-

նեցավ միայն Ավոյի զորամասը: Նա, ինչպես միշտ, փայլուն կատարեց առաջադրանքը: Հակառակորդը Մարտակերտի ու Ասկերանի ուղղությամբ մեծ կորուստ կրեց: Քանի որ թշնամին պատրաստվել էր Հեռուստաշտարակի ու Պուշկին Յալ բարձունքների կողմից հակահարվածներ տալու, մենք փնտրեցինք այն թույլ կետը, որտեղից կարելի էր հեշտորեն ճեղքել և շրջանցել ամրությունները: Ալի Աղալուի կողմից Խաչենագետի հովտով անսպասելիորեն ճեղքեցինք թշնամու դիրքերն ու շարժվեցինք Բաղմանլարի և Փափրավանդի ուղղությամբ: Իր թիկունքում տեսնելով մեր մարտիկներին՝ թշնամին խուճապի մատնվեց: Պահեստում թողած Շուշիի զորամասը գրոհեց ձախ թևից, որը ևս մեծ անակնկալ էր թշնամու համար: Հենց այս քայլերն էլ վճռեցին ճակատամարտի ելքը, որի արդյունքում ազատագրվեց Մարտակերտը:

– Հավանաբար, հրամանատարության համար կարևոր ելակետ է հնարավորին չափ քիչ զոհեր ունենալը:

– Անշուշտ, յուրաքանչյուր գործողություն մշակելիս մենք նախ մտածում ենք հնարավորին չափ քիչ զոհ տալ կամ խուսափել զոհեր տալուց: Հետաքրքիրն այն է, որ նման հնարավորություն միշտ էլ կա, ուղղակի գտնել է պետք:

– Շուշիի գործողությունը նման մի օրինակ էր:

– Այո: Ինձ այն ժամանակ հանձնարարված էր Շուշիի թիկունքի խնդրի լուծումը: Լիսագորից մինչև Քարինտակ գյուղը 450 մարտիկներով հսկում էինք ողջ ճանապարհն ու արգելում Լաչինի կողմից Շուշիում գտնվող ադրբեջանական ուժերին օգնության գալը: Մենք գիտակցում էինք մեր գործի կարևորությունը: Մենք գրավել էինք բոլոր բարձունքներն ու վերահսկում էինք ճանապարհը: Զգալով, որ ճանապարհը մեր ձեռքին է ու ոչ մի օգնություն չի գալու՝ Շուշիում գտնվող ադրբեջանցի զինվորները որոշեցին, որ անօգուտ է կռվելը, ու նախապես լքեցին դիրքերը և հեռացան: Ես հայտնեցի հրամանատարությանը, որ Շուշին ազատ է ու կարելի է բերդաքաղաք մտնել: Իրոք, բուն բերդաքաղաքում մարտեր տեղի չունեցան:

– Ի՞նչ նպատակ է հետապնդում Աղդամի գործողությունը:

– Ստեփանակերտը, Ասկերանն ու մեր մյուս բնակավայրերը անընդհատ թիրախ էին դառնում Աղդամում տեղակայված ադրբեջանական զորքերի համար: Ուղտի Մեջք կոչվող բարձունքներից հեռահար

թնդանոթներով ավերում էին Ստեփանակերտը: Իսկ խաղաղ բնակավայրերի վրա ամեն մի հրթիռի արկի համար ինքս ինձ պատասխանատու և հանցագործ էի զգում, մանավանդ որ երեխաներ, կանայք, ծերուներ էին զոհվում: Որոշեցինք ամեն գնով ոչնչացնել այդ կրակակետը: Ասկերանի հրամանատարի միջոցով կապվեցինք Աղդամի ստորաբաժանման հրամանատարության հետ և զգուշացրինք, որ մեր խաղաղ բնակավայրերին հարվածելու դեպքում ստիպված կլինենք պատասխան հարվածներ հասցնել կամ ընդմիշտ լռեցնելու միջոցներ ձեռնարկել: Բայց մենք Աղդամը չէինք ռմբակոծում: Իսկ նրանք հրանոթները տեղափոխեցին երկաթգծի կայարան ու այնտեղից շարունակեցին հրետակոծությունները: Ստիպված էինք Աղդամի կրակակետը ոչնչացնելու դժվարին գործողությանը դիմելու, որը հրաշալիորեն իրականացրին մեր մարտիկները: Բայց թե ադրբեջանցի զինվորները ինչու էին հեռանալուց առաջ հրկիզում իրենց տները, մեզ համար անհասկանալի մնաց:

– Ի՞նչ եք կարծում, Ադրբեջանի իշխանություններն ինչ բայլերի կդիմեն:

– Նրանք մի ելք ունեն. կապվել ԼՂՀ իշխանությունների հետ և նստել բանակցությունների: Զինվորականներս գիտենք, որ այլևս ետ կանգնելու տեղ չունենք ու պարտավոր ենք երաշխիքներ ստեղծել մեր բնակչության անվտանգության համար: Մենք կորցրել ենք մեր լավագույն ընկերներին, սակայն և պատրաստ ենք ամեն գնով հասնել մեր այդ նպատակին: Պատերազմն իրենք են պարտադրել մեզ, պարտադրել են, որ խաղաղ բնակչությունը ստիպված զենք վերցնի և կռվել սովորի, պաշտպանի իր հողը, ի վերջո, երկրի սահմաններից հեռացնի ոսոխին, ազատագրի իր երկիրը: Ինքս ավտոնորոգող էի, սիրում էի գործս, սակայն ստիպված զենք վերցրի: Մենք ստիպված ենք ջոկատներ ստեղծել, ստիպված ենք բանակային կառույցներ հիմնել: Եթե Ադրբեջանի ղեկավարները՝ Բաղիրովը, Մութալիբովը, Վեզիրովը, Էլչիբեյը, Ալիևն ու նրանից հետո եկողները ժամանակին հասկանային և ձգտեին ոչ թե խնդրել արցախահայությանը, այլ բանակցելով լուծել հարցը, ոչ մեր, ոչ էլ նրանց կողմից այսքան զոհեր չէին լինի, Ադրբեջանն այս խայտառակ վիճակում ու փլուզման եզրին չէր գտնվի: Իսկ Ադրբեջանը վաղ թե ուշ կփլուզվի, որովհետև այդ երկրում ուրիշ ազգեր էլ կան, որոնք բաժանման իրենց ժամին են սպասում:

– Ինքներդ ինչպես եք գնահատում հրամանատարական ձեր կարողությունները:

– Ես ամեն ժամ ձգտում եմ սովորել, մանավանդ զինվորական մասնագետներից:

– Ադրբեջանցիներին այդպես էլ չհաջողվեց կուռ բանակ ստեղծել: Ի՞նչն է պատճառը:

– Ադրբեջանցի զինվորը Ղարաբաղում ոչինչ չի կորցրել, ուստի նա չի ուզում կռվել: Ադրբեջանը բանակ ունի, բայց կռվել չի ցանկանում: Նրա զինվորները չգիտեն, թե ինչի համար են զոհվում: Մերն այլ է: Կազմակերպելով ինքնապաշտպանությունը՝ մենք որոշակի հաջողությունների հասանք: Իհարկե, եղան և բացթողումներ: Նրանք Քարվաճառում հարվածեցին մեր թիկունքից, ու ստիպված Մարտակերտից ետ նահանջեցինք: Մենք պատերազմը դիտավորյալ Լաչինի շրջան տեղափոխեցինք, որպեսզի Մարտակերտի ուղղությամբ վերադասավորենք մեր ուժերը: Թշնամին ենթարկվեց մեր կամքին ու Լաչին տեղափոխվեց: Հետո մենք ցույց տվեցինք, թե Մարտակերտի վրա ենք շարժվում, բայց հիմնական հարվածը Քարվաճառի կողմը թեքեցինք: Առանց ռազմական այդ հզոր հենակետը ոչնչացնելու մենք չէինք կարող ապահով զգալ մեզ: Միշտ թիկունքից հարվածում էին ու ծանր կացություն ստեղծում: Մեզ հաջողվեց անակնկալի բերել թշնամուն և հաղթանակի հասնել: Հենց այդպիսի մարտավարությունը թույլ է տալիս, որ խուսափենք զոհերից: Քանի որ մենք մեծաքանակ ուժեր չունենք, պետք է ճկուն և մարտունակ զորք ստեղծենք և մարտավարական հնարքների դիմենք: Երեք խոշոր գործողություն հաջողություն են ունեցել: Արդյունքում ադրբեջանական կողմը մեզ հետ առանց միջնորդի բանակցությունների նստեց: Ճիշտ կլիներ, որ Ադրբեջանի ղեկավարները ոչ թե ուժի և ճնշման հետևանքով ստիպված լինեին բանակցելու մեզ հետ, այլ ուղղակի հասկանային, հարգեին մեր իրավունքն ու ճանաչեին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

«ԱԶԱՏԱՄԱՐՏ», օգոստոս, 1993
(«ԿԱՄՔ», 6-7 սեպտեմբերի, 1993 թ.)

Պատմում է ՍԱՐԳԻՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ (1945-1989թթ. Հայաստանի կոմկուսի Կենտկոմի աշխատակից)
Երևան, 02.07.2006

Ս.Խ.– Ծնվել եմ 1924 թ.-ին, Ղուկասյան գյուղում: Միջնակարգ դպրոցն ավարտել եմ ոչ թե տասը, այլ ութ տարում, քանի որ ինձ, այսպես ասած, «թոցրին». ուսումնատենչ եմ եղել դեռ մանկուց: Ավարտեցի Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, զուգահեռաբար նաև՝ Հայաստանի կոմկուսին առընթեր եռամյա կուսակցական բարձրագույն դպրոցը: Հետո աշխատել եմ Ղուկասյանի շրջանում՝ որպես կուսակցության շրջկոմի քարտուղար մեքենատրակտորային կայանի գծով. այդպիսի միավորումներ կային այն ժամանակ, հետագայում, իհարկե, վերափոխվեց: Գնացի Երևան: Աշխատանքի ուղարկեցին խորհրդային վերահսկողության հանձնաժողով: Սա կառավարությանն առընթեր մի մարմին էր, որն զբաղվում էր պետական վերահսկողությամբ և նախկին «Госконтроль»-ի վերափոխված ձևն էր: Այստեղ էլ աշխատեցի շուրջ երեք տարի՝ որպես ավագ վերահսկիչ, միաժամանակ նաև կուսակցական կազմակերպության քարտուղար էի: Անցած այս ճանապարհից հետո, ուրեմն, ինձ վերցրին Կենտկոմ: Այստեղի կազմբաժնում պատասխանատու կազմակերպիչ էի, բայց հետագայում այս անվանումը փոխվեց ու կոչվեց «տեսուչ», բայց, դե, նույն գործառույթն էր կատարում: Ուրեմն, սա այն օղակն էր, որը կապում էր Կենտրոնական կոմիտեն շրջկոմների հետ. անմիջական կապ, գնալ-գալ, ուսումնասիրել և այսպես շարունակ: Այստեղ աշխատեցի երեք-չորս տարի, որից հետո՝ Ջարոբյանի ժամանակ, ինձ ուղարկեցին Հրազ-

դան. կուսակցական շրջանային կոմիտեի առաջին քարտուղարի պաշտոնի անցա: Իմ մասին, թերևս, այսքանը:

Շատ արժանի ու կարգին տղաներ ունեինք, որոնք քաղաքական դաշտում, և ոչ միայն, մեծ վաստակ ու ներդրում են ունեցել: Փառքի արժանի փայլուն դեմքեր... Ազգի նվիրյալներ էին, նրանց նմաններն այսօր էլ չկան... Յակով Զարոբյան, Գրիգորի Արտեմիչ Հարությունյան, Աղասի Խանջյան, որը, սակայն, չկարողացավ ծավալվել՝ ինչպես պետքն է, կյանքը կարճ տևեց: Էս արժանավոր դեմքերի շարքում են նաև Ալեքսանդր Մյասնիկյանը, որը եղել է կառավարության նախագահ. մի հրաշալի անձնավորություն, ողբի ու որբի այս երկիրը նա խելքի բերեց, դարձրեց հանրապետություն, ձեր հայրենակից ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը, ով բազում զրկանքներ կրեց, մեղադրեցին, կալանավորեցին... Ի՞նչ եմ ուզում ասել. դեռ ոչ հեռու անցյալում, ահա, այսպիսի անհատներ են եղել, որոնք իսկական հայ էին, վեհ մարդու կերպարանք ունեին. հայրենասիրությո՛ն, նվիրմո՛ւնք, գո՛րծ, վաստակ, աշխատանք... Իրենք իրենց անձը, իրենց կյանքը հարվածի տակ էին դնում հանուն հայրենիքի, հանուն մեր արժանապատվության ու իղձերի...

Առաջին հերթին ուզում եմ խոսել Գրիգորի Արտեմիչ Հարությունյանի մասին: Ես, դեռ երիտասարդ տարիներից, մի լուրջ սկզբունք ունեմ՝ մարդուն գնահատել առաջին հերթին իր հայրենասիրությամբ: Դա, թերևս, ընտանիքիցս է եկել. մանուկ ժամանակ շատ եմ լսել Անդրանիկի հերոսության մասին պատմություններ: Եթե նա հայ է ու ասում է «Հայրենի՛ք, Հայաստա՛ն», ու քթից ծուխ դուրս չի գալիս, այդ մարդն ինձ համար չնչին արժեք անգամ չունի, ուզում է լինի գրող, ակադեմիկոս, հանճար... Ի՞նչ անենք հանճար է, բայց ախր մարդ չի, հայ չի, հայրենասեր չի... Ինձ համար դա, իրոք, չափանիշ է, իմ արյան մեջ պարզապես ներարկված էր հայրենասիրությունը, Անդրանիկը, և երբ համեմատում եմ ղեկավար մարմիններին իմ հոգու այս չափանիշին, շատ քչերն են այդ քննությունը բռնում: Այ, Գրիգորի Արտեմիչ Հարությունյանը փայլուն հանձնեց այդ «քննությունը»: Նա Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի առաջին քարտուղար աշխատեց 16 տարի: Մինչ այդ՝ Թիֆլիսում էր, այնտեղի քաղաքային կոմիտեի առաջին քարտուղարն էր: Մի զարմացեք, որ, լինելով ազգությամբ հայ, Թիֆլիսում այդպիսի պատասխանատու պաշտոն է զբաղեցրել: Այն ժամանակ

Թբիլիսիում ավելի շատ հայեր էին ապրում, քան վրացիներ: Առհասարակ, 17, 18, 19-րդ դարերում Թբիլիսիում քաղաքագլուխները եղել են հայեր, նրանք ավելի բանիմաց ու խելացի էին, դե, վրացիներն էլ ուրիշ հրապուրանք են ունեցել... Ինչնէ, չմանրանանք... Ուրեմն, ինչո՞ւ Գրիգորի Արտեմիչին ուղարկեցին Հայաստան Կենտկոմի քարտուղար, ո՞ւմ էր դրդապատճառը... Ամեն ինչ սկսվեց այն բանից, երբ Ստալինը Հայաստան ուղարկեց Կենտկոմի կազմբաժնի վարիչ Մալենկովին: Չնայած այն ժամանակ նա դեռ քարտուղար կամ քաղբյուրոյի անդամ չէր, բայց, այնուամենայնիվ... Կենտկոմի սիրտն էր եկել Հայաստան, իսկ դա վիթխարի կազմակերպություն է: Իր հետ բերել էր մի նամակ, որը Ստալինն էր թելադրել մեքենագրուհուն ու կարմիր մատիտով ստորագրել (այն ժամանակ մատիտով էին ստորագրում՝ կարմիր, կապույտ և սև): Ես տեսել եմ այդ նամակը՝ մեկ և կես էջ էր այն ու հասցեագրված էր ՀամԿ(բ)Կ-ին, իսկ Կենտկոմի առաջին քարտուղարն այն ժամանակ Ամատունին էր: Նա, ի միջի այլոց, Ադրբեջանի կողմերից էր, չգիտեմ՝ Բաքվի՞ց, թե՞ Կիրովաբադից, եղբայրն էլ երկրաբան էր՝ բարձրահասակ, հաղթանդամ տղամարդ էր: Ինչնէ, Ամատունին կոմերիտմիության աշխատող էր, կոմսոմոլ, իսկ այս բնագավառի մարդիկ, սովորաբար, շատ աշխույժ էին լինում, հաճախ և ձախլիկ, բոլորի մեջ թշնամի տեսնում, մի խոսքով՝ աչքի են ընկնում էլի: Ամատունին էլ էր այդպիսին: Հետո՝ որոշ ժամանակ անց, կոմերիտական աշխատանքից նրան վերցնում են կուսակցական աշխատանքի, իսկ Աղասի Խանջյանի սպանությունից հետո ուղարկում են այստեղ՝ որպես Կենտկոմի առաջին քարտուղար, ավելի ճիշտ՝ ասում են՝ սկզբնապես երկրորդ քարտուղար էր, հետո առաջին դարձավ: Ընդ որում, այն ժամանակ նրան կապում էին Բերիայի հետ, թե՝ Բերիայի մարդն է, նրա դրածոն է... Իսկ Բերիան եղել է Անդրկովկասի Ներքին գործոց նախարարը, հետո, երբ հանրապետությունները բաժանվեցին, մնաց Վրաստանում, հետագայում դարձավ Վրաստանի Կենտկոմի առաջին քարտուղար: Եվ, ահա, Խանջյանի դաժան հաշվեհարդարը տեսնելուց հետո, չգիտեմ լսել եք, թե ո՛չ. Խանջյանին Բերիան է սպանել. Խանջյանը ձախլիկ էր, իսկ ատրճանակի կրակոցը աջ կողմից է... Ձախլիկը, որ խփի, ձախից կխփի չէ՞... Դե, սա երկար պատմություն է...

Ինչպես: Ստալինի այն նամակում, որ արդեն հիշատակել եմ, այս-

պիսի մտքեր կային. «Հայաստանում ժողովրդի թշնամիները փողոցներում ազատ ու անկաշկանդ շրջում են»,– խելագարվել կարելի է, այսպիսի մեղադրանք... «Հայաստանին տրամադրված պետական հսկայական միջոցներն արդյունավետ չեն օգտագործվում և չարաշահվում են, կոլտնտեսություններն ու սովխոզները քայքայվում են»: Գրում է նաև. «Մուղդուսուն,– կարծեմ Խաչիկ էր անունը, Նախիջևանից էր, նա էր Ներքին գործոց նախարարը,– Մոսկվայի կենտրոնական կառավարության հրամանով կալանավորել են, և նրա գործը քննության տակ է»: Հիշատակվում է նաև մեր կառավարության նախագահ Սահակ Տեր-Գարրիելյանի անունը, ասեմ, որ նա հին գործիչ է եղել, և Ստալինը ճանաչել է Տեր-Գաբրիելյանին դեռ Բաքվից: Ուրեմն, նամակում գրված է, թե՝ նրա բերանը փակեցին, որպեսզի նա լռեր ու չբացվեր: Ստալինը չգիտեր՝ իրականում ինչ էր եղել նրա հետ, այդ պատճառով էլ անորոշ է ասում. «բերանը փակել են»: Իրականում, ես հետո իմացա, Տեր- Գաբրիելյանին կալանավորել են, քննության ժամանակ երկու-երեք օր չեն թողել ոչ քնի, ոչ հանգստանա, արյունոտ, տանջված, հազար ու մի խոշտանգումների են ենթարկել՝ շշերի վրա են նստեցրել, էս արել, էն արել... Էդ մարդն, ի վերջո, չի դիմացել, իրեն լուսամուտից դուրս է նետել: Այս առումով երկու վարկած կա. մեկ ասում են՝ ինքն է իրեն գցել, մեկ էլ, թե՝ չեկիստներն են դա արել: Մի խոսքով՝ գլուխը կերել են էլի: Հա, անդրադառնանք նամակին. վերջում գրվում է. «Այդ բոլորի մեջ մեղավոր է Հայաստանի բոլշևիկյան կուսակցության Կենտրոնական կոմիտեն, և նրա առաջին քարտուղարը»,– ազգն էլ չի ասում, արժանի էլ չի համարում առաջին քարտուղարին ազգանունով կոչել: Էդ նամակով Մալենկովը, ինչպես արդեն ասացի, գալիս է Երևան, հրավիրում են Կենտկոմի պլենում (լիակազմ ժողով), որը տևում է 12 օր, բայց արձանագրությունը չորս էջի վրա է ընդամենը, ես արխիվում տեսել եմ այն: Զարմանալի է չէ, 12 օրվա պլենումի արձանագրությունն ընդամենը չորս էջի վրա... Սկզբից, որ Մալենկովը գալիս է, որոշ ժամանակ ծանոթանում է դրությանը, հետո էլ գանգում է Ստալինին, թե. «Ընկեր Ստալին, ես գլուխ չեմ հանում՝ ինչ է կատարվում այստեղ: Մեկը մյուսին մեղադրում, դավաճան է անվանում, դե ես էլ չեմ կողմնորոշվում՝ որն է ճիշտը, որը՝ ոչ: Այստեղ փորձառու մարդ է պետք»: Նա խորամանկություն է անում էլի, ուզում է որ Անաստաս Միկոյանը գա, որ իր բեռը թեթևանա: Այդպես էլ լինում է՝

Ստալինը Միկոյանին ուղարկում է Հայաստան: Սա գալիս է գնացքով, վագոնն էլ մնում է կայարանում, այնտեղ էր գնում գիշերելու, չնայած Խանջյանի ամառանոցը նրա տրամադրության տակ էր, կարող էր այնտեղ ապրել, բայց, ոչ, նախընտրեց վագոնը, որ ոչ մեկի հետ չկարողանա շփվել, խոսել՝ ավելորդ թյուրիմացություններից խուսափելու համար: Եվ սրանք իրենց, այսպես կոչված, առաքելությունը իրականացնում են, վերջում էլ կալանքի են վերցնում, ասել է, թե՝ քավության նոխազը դառնում է Կենտկոմի առաջին քարտուղար Ամատունին: Պատճառաբանում են, թե՝ Բերիայի դրածոն էր: Ախր, հնարավոր է, որ Բերիայի հետ մոտ լիներ, բայց բոլոր այդ մոտ մարդիկ հո դրածո չեն: Այդպես, Ամատունուն գնացքով ուղարկում են Մոսկվա, կայարանամերձ տարածքում նա կտրում է երակն ու, լուցկու հատիկը սևփական արյան մեջ թաթախելով, թաշկինակի վրա նամակ է գրում Ստալինին. «Ես անմեղ եմ, ես զոհ եմ դարձել: Ի վերջո պարզեք ամեն ինչ... Կեղծ, շինծու մեղադրանքով ինչպես կարելի է մարդուն գնդակահարել»: Այդ թաշկինակը ներքև է գցում, կարծում էր՝ մեկը կգտնի, կտանի հասցեագրված վայրը, սակայն, հակառակի պես, պահպանության ծառայության ձեռքն է ընկնում, և, գիտեք, այդ թաշկինակը քրեական գործին է կցված: Ամատունուն դատում է ռազմական տրիբունալը. Գերագույն դատարանն ուներ ռազմական տրիբունալ... Ռազմական տրիբունալ... Սա ահասարսուռ անուն է. որքան մարդու գլուխ են կերել, բոլորն այդ տրիբունալով են դատվել, բոլորն անխտիր... Դատը տևել է 45 րոպե, ընդամենը 45 րոպե... Ո՛չ վկա, ոչ դատապաշտպան, ոչ հարցաքննություն... Ոչինչ չի եղել:

Բ.Կ.– *Ապացուցելու կարիք, պարզապես, չկար...*

Ս.Խ.– Դե, իհարկե, իրենց խոսքն արդեն ապացույց էր: Եվ, ուրեմն, դատից 15 րոպե հետո այդ մարդուն գնդակահարում են: Ամատունու կինը, որը ազգությամբ ռուս էր, բժշկուհի, հերթական համագումարին բոլորարկել էր, իսկ երբ բողոքարկում են, պետք է տվյալ գործը անպայման վերանայվի: Ի դեպ, այս ամենը, որ պատմում եմ, ուսումնասիրել եմ կուսակցական վերահսկողության կոմիտեի մի անդամի հետ, Սեմյոն էր անունը, տաղանդավոր մարդ էր, պատմաբան, նա Մոսկվայից եկավ, ու միասին ենք այս ամենը պրպտել: Ասում էր, թե՝ մինչև չգտնենք Ստալինի նամակը, ձեր Ամատունուն փրկություն չկա: Ես էլ զարմացած. «Ախր, ինչ փրկության մասին է խոսքը, եթե նա եղել է Բերիայի դրածոն»: «Ի՞նչ

եք ասում... Եթե դրածն լիներ, ինչո՞ էին նրա գլուխը ուտում...», ասում էր Սեմյոնը, և սա ճիշտ դատողություն էր: Այդ նամակը շատ երկար փնտրեցինք. արխիվում չկար, Հրաչիկ Սիմոնյանի մոտ գնացինք, որը Կոմպատմության ինստիտուտի տնօրենն էր, նրա մոտ էլ չկար, հին բոլշևիկներից հարցուփորձ արեցինք, թե. «Հա, Լդպիսի նամակ եղել է, հրապարակել են, բայց չգիտենք՝ որտեղ է»: Կենտկոմում մի ընդհանուր բաժին կար, որտեղ պահվում էր ամբողջ գրագրությունը, փոստը, գաղտնի, ոչ գաղտնի փաստաթղթերը: Այդ բաժնում իմ ընկեր Սերգեյ Շնկոյանն էր աշխատում, ու նա էլ տեղյակ չէր, բայց իր մոտ մի չամուսնացած աղջիկ կար, որը ժամանակին Գրիգորի Արտեմիչ Հարությունովի անձնական քարտուղարուհին է եղել: Այդ ժամանակ նա ընդհանուր բաժնում հատուկ սեկտորի, ուր պահվում էին հույժ գաղտնի գրագրությունները, վարիչն էր: Ինչևէ, կանչեցինք նրան, թե. «Արփիկ Ազարովնա, քեզ մոտ հնարավոր է Ամատունու նամակը պահված լինի», նա էլ, թե. «Հա, մի թղթապանակ կա, վախենում եմ ձեռք տալ, դե, ասել են՝ ձեռք չտաս»: Ասացինք՝ բեր: Բացեցինք ու, աստված իմ, այն ամենը, ինչ այդքան ժամանակ փնտրում էինք, ամբողջն այդ թղթապանակում էր. Ստալինի նամակը, որ ասում եմ, կարմիր մատիտով ստորագրած, դեռ ավելին՝ գտանք նաև Ղարաբաղի հարցի վերաբերյալ Ստալինին ուղղված Գրիգորի Արտեմիչի նամակը, որը հասցեատիրոջը հասել է 1945 թ.-ի նոյեմբերին: Դրա մասին մենք շատ էինք լսել, բայց ապացույցներ ուղղակի չունեինք: Ասեմ, որ Գրիգորի Արտեմիչի թղթապանակը առանձին էր՝ մեջն էլ մի 10-12 նամակ՝ հասցեագրված «մեծերին»: Ինչևէ, ինչ է գրում Ստալինին Արցախի հարցի մասին. «Ընկեր Ստալին, Լեռնային Ղարաբաղը, որ Հայաստանի անբաժանելի մասն է, այնպես ստացվեց, որ անցավ Ադրբեջանի կազմի մեջ: Ղարաբաղն ամեն ինչով կապված է Հայաստանին. թե լեզվով, թե էթնիկայով, թե անցած պատմական ուղիով, շատ ավելի լավ կլինի, որ անցնի Հայաստանի կազմի մեջ, որովհետև այդ դեպքում մարդիկ նորմալ, մայրենի լեզվով կրթություն կստանան, կադրեր կաճեն, իսկ Ղարաբաղի կադրերը կարող են մեզ մեծապես օգուտ տալ: Նրանք շատ մարտունակ, ընդունակ մարդիկ են: Եթե այս հարցին դրական լուծում տաք, մենք կառավարության հետ միասին կձեռնարկենք բոլոր անհրաժեշտ միջոցառումները, որպեսզի պրոցեսը նորմալ ընթանա...»: Կարճ ասած՝ առաջարկում է Հայաստանին տալ

Կոյսախը: Նամակը մեքենագրված ու ստորագրված էր: Ես ենթադրում եմ, որ նախքան այս գրությունը, Հարությունովը գնացել, խոսել է Ստալինի հետ, նրա «դաբրոն» ստացել է, ու նոր շարադրել է նամակը: Որով հետև շատ ինքնավստահ է գրել, այն էլ Ստալինին, որին 1945 թ.-ին՝ հաղթանակից հետո, ուղղակի, երկինք էին հանել... Համ էլ կարգն էր սրբիսին. ստանում էիր այդ «դաբրոն», ասում էին՝ գնա, գլի՛ր, հիմնավորված բեր... Ասեմ նաև, որ Ստալինն իսկապես բարձր էր գնահատում Գրիգորի Արտեմիչին, խելացի մարդ էր:

Ստալինի՝ կարմիր մատիտով ստորագրած նամակը պնդեցի, որ սրբիսիվ ուղարկեն, չկորչի-գնա, բայց Հարությունովի այս նամակը չգիտեմ՝ ինչ եղավ, ինչ չեղավ...

Բ.Կ.– *Հայրենադարձության խնդիր չկար այն ժամանակ, այնպես չէ:*

Ս.Խ.– Դեռ չկար, այն 46-ին սկսվեց: Բայց ինչո՞ չկար... Այդ մասին դեռ կխոսեմ: Հիմա ուզում եմ Հարությունովի այս նամակի դրդապատճառի մասին ասել: Ուրեմն, Հարությունովը շատ լավ գիտեր, որ այն պայմանագրի, որով հայոց հողերը նվիրաբերեցին, ժամկետը 20 տարի էր (կնքվեց 1921 թ.-ի մարտի 16-ին Մոսկվայում, հետո՝ այդ նույն պայմանագիրը Ղարսում իբր թե «օրինականացրին»): Ու այդ քսան տարին համընկավ պատերազմի հետ: Պատերազմը ավարտվեց: Իմիջիայլոց, ասեմ, որ Հարությունովը շատ լավ գիտեր Ստալինի կարծիքը. նա գոհ էր իր վարած բոլոր պատերազմներից, և արևելքում, և արևմուտքում, և հյուսիսում: Հարավային կողմից էր դժգոհ, սակայն դրա հետ կապված խնդիրներ ուներ. լուծված չէր Բոսֆորի, Դարդանելի հարցը, Ռուսաստանը երեք դար պայքարում էր, բայց այդպես էլ չկարողացավ էս խնդիրը լուծել, Ստալինը սրա հետ կարող էր հաշտվել... Եվ նա նախապատրաստում էր հարված Թուրքիային: Թուրքը խորամանկ է. էս մոտալուտ վտանգը զգալով՝ 1944 թ.-ին Գերմանիայի հետ իր դաշնակցային հարաբերությունները խզեց ու պատերազմ հայտարարեց նույն այդ Գերմանիային: Պարզ է՝ դիվանագիտական ճիշտ ու խորամանկ քայլ կատարելիս, դե, գիտակցում էին՝ Ստալինը շատ է հզորացել, հարվածը ջախջախիչ կլիներ: Այսպես... Ու սրան հետևանք Արտեմիչի նամակը... Իսկապես խելացի քայլ էր չէ: Իսկ ինչ վերաբերում է հայրենադարձությանը, ասեմ, որ այստեղ էլ Գրիգորի Հարությունովը մեծ դերակատարում ունի: Երբ հայրենադարձությունը նախապատրաստվեց, Արտեմիչն էլի խելոք քայլ

կատարեց. ադրբեջանցիներին այստեղից տեղափոխեց Մուղանի դաշտ, այս տարածքում ջրաշինարարական խոշոր աշխատանքներ կատարվեցին, ինչի արդյունքում հսկայական տարածքներ դարձան, այսպես ասած, ջրովի, ու այդ ամբողջ աշխատանքները Բաղրամյանի կրտսեր եղբոր ղեկավարությամբ է կատարվել: Նա Ադրբեջանի ջրային տնտեսության պետն էր, ծանոթ եմ հետը, հանդիպել ենք Բաքվում: Մի խոսքով՝ Հարությունովը ադրբեջանցիներին տարել է Մուղան, որպեսզի հայերին էստեղ բերեն, տեղավորեն: Այսինքն՝ կլասիկ խաբել է էլի... Բայց դե այստեղ՝ մեր լեռնային, Սևանի ավազանի շրջաններում ապրած մարդն ինչպես կարող էր հարմարվել անապատային այդ գոտուն... Բնական է՝ դրանք հետո փախան-ցրվեցին, մի մասը նորից ետ եկավ, ովքեր խելոք էին, դրանց չընդունեցին, ովքեր՝ ոչ, ընդունեցին... Ու հենց սրա հետ է կապված հայրենադարձության հարցը: Ու նոյեմբերին Հարությունովը մի նամակ էլ հասցեագրեց Ստալինին: Շատերը կարծում են՝ այդ նամակն Արցախն է պահանջել, սակայն դա այդպես չէ, այն Հարությունովի հեղինակածն է, միայն նրա ստորագրությամբ: Արտեմիչը դրանով պահանջում էր հայոց հողերը: Ըստ նամակի՝ պետք է Թուրքիայի հետ կնքած պայմանագիրը չեղյալ հայտարարել: Էդ էն պայմանագրի մասին է խոսքը, որ Ղարսում օրինականացրին, մեր հողերը տվեցին թուրքին, և պահանջում է Կարսը, Արդահանը, Սարիղամիշը, Սուրմալուն և հայոց մնացյալ բոլոր պատմական հողերը վերադարձնել: Ու վկայակոչում է երկու անձնավորության անուն. «Սա ողջ հայ ժողովրդի և, հատկապես, երկու կարկառուն մարդու՝ Ավետիք Իսահակյանի, Մարտիրոս Սարյանի ցանկությունն է»: Ես կարդացել եմ այդ նամակը, հիմա չգիտեմ՝ ուր է, կամ, թե չկա: Տեսել եմ նաև մեկ այլ՝ Թուրքահայաստանի վերաբերյալ ավելի մանրամասն պատմող մի թուղթ: Ըստ երևույթին, սա բանակցության հետևանք էր, այսինքն՝ նախքան նամակ գրելը էդ հարցի մասին խոսել են, ու Քավթառաձեն (ԱԳՆ-ում աշխատող մի պաշտոնյա) հանձնարարել էր այդ մանրամասնությունները ներկայացնել ԱԳՆ, որ նախարարությունը, երևի թե, հիշյալ պայմանագիրը չեղյալ հայտարարելու փաստացի հիմքեր ունենա: Բայց այդ նամակը ոչ թե Հարությունովի, այլ Կառավարության նախագահ Սահակ Կառկովիչի ստորագրությամբ էր: Իմիջիայլոց, այն բոլորովին վերջերս հրատարակեց Հարությունովի դուստրը (վերցնովի երեխա էր, նրա կնոջ եղբոր

աղջիկն էր), անունը Նամի էր՝ հայտնի Ստաս Նամիի մայրը:

Ինչևէ, Գրիգորի Արտեմիչը չկարողացավ իր նպատակին հասնել մի շատ պարզ պատճառով: Որեմն, նախքան այս պատճառին անցնելը, ուզում եմ մի երկու խոսք ասել Ռուզվելտի, իր շրջանի դեպքերի մասին: Ռուզվելտն, իսկապես, խելացի մարդ էր, չորս անգամ ընտրվեց որպես նախագահ, կրկնում եմ՝ չորս անգամ, սովորաբար երկու անգամ են ընտրվում... Եվ դա բնական էր, միայն պատկերացրեք՝ 11 մլն մարդ գործազուրկ էր, ու հենց Ռուզվելտը երկիրը հանեց այդ ճգնաժամից. սա արդեն հեղափոխում էր... Իմիջիայլոց, նա կիսահաշմանդամ մարդ էր, ոտքերը թոլանում էին, չէր կարող քայլել, հենասայլակով էին տանում-բերում: Այդպես, անգամ նա մի ուսմունք ունի՝ «Ռուզվելտի նոր կուրս» վերնագրով, որի գաղափարը շուկայական հարաբերությունների պետական կարգավորումն էր: Հրաշալի մտքեր է արտահայտել... Ու շատ լավ էլ կարողանում էր ղեկավարել այդ հսկա երկիրը: Մահացավ 45-ի ապրիլի 12-ին, ու նախագահ դարձավ 7-ամյա կրթությամբ կիսագրագետ փոխնախագահ Հարի Տրումենը: Հիմա կասեք՝ այդ ինչպես, Ամերիկայում մի կիրթ մարդ չկա՞ր: Կար, և Ռուզվելտը մի շատ խելացի մարդու թեկնածությունն էր առաջադրել, բայց սա արհմիության հետ կոնֆլիկտ ուներ, ու այդպես էլ ոչինչ չստացվեց: Տրումենը հակասովետական տրամադրություն ուներ, թույնով էր լցված Խորհրդային Միության դեմ: Որեմն, Պոտսդամի կոնֆերանսին եկավ Տրումենը: Նիստերից մեկի ժամանակ առանձին ասում է. «Պարո՛ն Ստալին, ես ձեզ մի գաղտնիք ունեմ հայտնելու», նա էլ, թե. «Ի՞նչ կա»,- ասում է. «Մենք ատոմային նոր զենք ենք փորձարկել, ու այն մեր բոլոր սպասումները գերազանցեց...»,- Ստալինն էլ՝ հուսամ, որ ձեր այդ զենքը ճիշտ կօգտագործեք: Ստալինն արդեն այդ մասին գիտեր, որովհետև երկու հետախուզական խումբ էր այնտեղ աշխատում, որի անդամ էր նաև մեր հայրենակից գեներալ լեյտենանտ Հովակիմյանը, նա Խորհրդային Միության գլխավոր ռեզիդենտն էր: Եվ, ուրեմն, որոշ ժամանակ անց, երբ օգոստոսի ութին թե իններին ատոմային ռումբեր գցեցին Հիրոսիմա և Նագասակի քաղաքների վրա, Ստալինի մեջքն արդեն կոտրվեց, որովհետև ամերիկացիներն այնպիսի զենք ունեին՝ Բ-12 զրահակիր ռմբակոծիչներ, ինչը չուներ Խորհրդային Միությունը: Ու եթե Ստալինը շատ թվրտար, մի տասը-տասն ռումբ կգցեին, ու Խորհրդային Միությունից կմնար միայն անմար-

դաբնակ, ամայի մի տարածք: Այնպես որ, շատ հարցեր, ինչպես նաև մեր Արցախի խնդիրը, իրենց տրամաբանական լուծումը չտացան: Այստեղ էլ չբերեց հայի բախտը:

Խրուշչովի ու Հարությունովի հարաբերությունները սոսկալի վատ էին, որովհետև Խրուշչովը մի ծրագիր էր առաջարկել, որը չէր իրականացվել հենց Հարությունովի շնորհիվ: Ուրեմն, նա՝ Խրուշչովը, ուզում էր ագրոարդյունաբերական կենտրոններ ստեղծել, այսինքն՝ 15-20 կոլտնտեսություն միավորել, մեկը մյուսին կօգնեին, մեծ կենտրոն կստեղծվեր, կոլտուրայի պալատ, այս, այն... Բայց ախր ինչպես... Պատերազմը նոր էր ավարտվել, էլ գյուղում տղամարդ չէր մնացել. զոհվել էին, մարդիկ սոված-ծարավ, էդ ինչով ես ագրոարդյունաբերական կոմպլեքս ստեղծում: Ու Գրիգորի Արտեմիչը Կենտկոմի պլենումում ելույթ ունեցավ, ուղղակի ջարդեց Խրուշչովին: Եվ, Ստալինը, այս ելույթը լսելով, ասաց. «Никита, ты переборщил»: Սա էլ, որպեսզի տակից դուրս գա, «Պրավդայում» հոդված տպագրեց, հիշում եմ, կարդացել եմ, թե՝ այս ամենը վաղաժամ է, ես շտապել եմ, ներողություն... Բայց, իրականում, երբ պլենումից դուրս էին գալիս, Խրուշչովը Գրիգորիին ապառնացել է. «Ну, Арутинов, мы еще встретимся на узкой тропе...» (Արութինով, մենք դեռ կհանդիպենք մեկմեկու մի «նեղ արահետում»): Այդպես էլ եղավ. Ստալինը մահացավ, սա դարձավ Կենտկոմի առաջին քարտուղար, Հայաստան հանձնաժողով ուղարկեց, որ Հարությունովին մի վատություն աներ էլի: Զուռնա ազգանունով մեկը, այդ հանձնաժողովի անդամներից էր, Գրիգորի Արտեմիչին ասել է. «Զարմանալի է, ձեզ մոտ իդեալական կարգապահություն է, ոչնչի չենք կարող կառչել, բայց մի բան պետք է գտնենք, հո դատարկաձեռն չենք վերադառնա»: Դե, որ բան չտացվեց, սկսեցին կլյաուզա անել. հիմնական մեղադրանքն այն էր, որ հայերեն չգիտեր, գիտեր, բայց ոչ լավ, բայց դե ոգին էր հայ, ոգին... Էս Մատենադարանը, էս Հաղթանակի այգին, էս կամուրջները, Մաշտոցի պողոտան, քաղաքի կենտրոնի ձևակերպելը, կառուցելը... Ախր էս ամբողջը նրա արածն է: Նույնիսկ նա ութ առանձնատուն կառուցեց Երևանում, որպեսզի հետագայում դրանք դեսպանատուն լինեն ՄԱԿ-ի համար, օրինակ, Պրոսպեկտում գտնվող Թատերական միության շենքը, Բաղրամյանում՝ Տեխնիկայի տան շենքը և այլն: Հեռատես մարդ էր: Հետո, Իսահակյանին նա է փրկել, չէ որ Իսահակյանը դաշնակ է եղել: Խնդրել,

սպասել է. «Շատ եմ խնդրում, մի բանաստեղծություն գրեք Ստալինի մասին»: Գրեց: Լենինի շքանշանով Իսահակյանին պարգևատրեցին, էս տուն-թանգարանը կառուցեցին, էն ժամանակ ոչ ոք տուն-թանգարան չուներ: Մի խոսքով՝ հեռու պահեց վտանգից: Ի դեպ, որոշ անձինք այստեղ-այնտեղ ասում են՝ Գրիգորի Արտեմիչը Բերիայի դրածոն է: Տո հիմարներ, ոնց կարող էր Բերիայի դրածոն լինել, եթե նրա հարազատ եղբորը իրեն այստեղ ուղարկելուց մեկ ամիս հետո Բերիան բանտարկում և գնդակահարում է որպես ժողովրդի թշնամի, որպես գերմանական չպիոն: Կտոջ եղբորն էլ են նման պիտակ կպցրել: Դև դա Խրուշչովի գործերն են էլի: Այսքանը կասեմ Գրիգորի Արտեմիչ Հարությունովի մասին... Այսպիսի մարդ էր նա...

Հիմա անցնենք մյուս հայտնի դեմքերին, ովքեր անդրադարձել են Ղարաբաղի հարցին: Այն ժամանակ, երբ Ղարաբաղը տվեցին Ադրբեջանին, Ալեքսանդր Մյասնիկյանը անհապաղ արձագանքեց այդ փաստին: Այստեղ 1921 թ.-ին պլենում տեղի ունեցավ, հենց այդ ժամանակ է Մյասնիկյանը նշել, որ այդ գործարքը սխալ է: Քոչինյանի ժամանակներն էր, երբ այստեղ եկավ Շելեպինը, ով Կենտկոմի երկրորդ քարտուղարն էր, նախկին Կենտկոմի կոմսոմոլի քարտուղար, հաճելի մարդ էր, հիշում եմ՝ Մատենադարանում ելույթ ունեցավ: Սա Բրեժնևի հակառակորդն էր: Ասեմ, որ Բրեժնևն այնքան էլ բարձր մակարդակի քաղաքական դեմք չի եղել, նրան դրեցին այդ պաշտոնին մեկ-երկու տարով, մինչև լավ կադրերը հասունանան: Ինչևէ, ծանոթացավ իրավիճակին, տեսավ ճշմարտությունը, առաջարկել էր. «Սա անարդարացի է, գրեք, կբննարկենք»: Եվ Քոչինյանն ու Բաղալ Մուրադյանը նամակ գրեցին, ստորագրեցին, Ղարաբաղի պահանջն են դրել, ուղարկել են Մոսկվա: Մոսկվայում էլ Քաղբյուրոյի գրեթե բոլոր անդամներն իրենց համաձայնությունն են տվել, բացի մեկից՝ Սուսլովից, արձակուրդի մեջ է եղել: Հենց Սուսլովը եկել է, ադրբեջանցիները վրա են տվել, թե՝ տեսեք՝ ինչեր են անում հայերը, այս, այն... Դե Սուսլովն էլ կատեգորիկ դեմ է լինում ու հարցի լուծմանը խոչընդոտում է:

Բ.Կ.– *Անապատ Միկոյանն այդտեղ ինչ դերակատարում ուներ:*

Ս.Խ.– Դե, Միկոյանն էդ հարցերում ձեռնպահ էր մնում, իհարկե, եթե ամեն ինչ հաջողվեր, բնական է՝ նա մի բան կաներ: Նա ի վերջո հայ է, և կարգին հայ է: Եթե ճիշտն ասեմ, Միկոյանն այդ Քաղբյուրոյի ամե-

նաև ազդանշանավոր մարդկանցից մեկն է եղել, ուղղակի իր կաշվից է վախենում: Միկոյանը կարող էր հաջող գործել Խրուշչովի ժամանակներում, որովհետև միմյանց հետ շատ լավ հարաբերություններ ունեին: Իսկ Խրուշչովը, ասեմ, որ շատ հանգիստ կառավարելի մարդ էր, տամաքը որ մոնես, ամեն ինչ կանի. ոնց Ղրիմը տվեց, ոնց Մասիսի 40 կմ-անոց թունելը կառուցելու թույլտվություն տվեց, այնպես որ, պետք էր միայն խնդրանքի կերպով համոզել: Այ, Միկոյանը կարող էր նպատակին հասնել, եթե մեր հայ մտավորականության սերունդի՝ Բաղրամյանի, Բաբաջանյանի, Ալիխանովի, մյուս-մյուս մտավորականների, խոշոր գործիչների բաղդը, մտավոր ուժը օգտագործեր... Բայց Միկոյանն այդ մարդը չէր, այդպիսի կտրուկ քայլերի նա երբեք չէր գնա: Բայց օգնում էր, ուղղակի այնպես, որ ոչ մի հետք չթողնի: Մի Արամ Փիրուզյան ունեինք, որ կառավարության նախագահն էր, վերջում եղավ Առևտրի նախարար, Անաստասի հետ շատ մոտ էր, իրար տուն էին գնում-գալիս, միշտ ասում էր՝ ես եմ ուզում, էն եմ ուզում... Միկոյանն էլ, թե՝ Արամ, ախր ինչքան կարելի է խնդրել, մուրալ, արի, ես քեզ տամ չորս-հինգ լավ գործարաններ, դուք էլ աշխատեք, փող ստացեք, մեծ եկամուտ կունենաք: Հա, իմիջիայլոց, Աբովյանի էդ ամբողջ գործարանները Անաստասն է բերել. նրանց կարգով դասավորել, արել է: Այ, նա էսպես էր օգնում...

Գրիգորի Հարությունովից հետո Կենտկոմի առաջին քարտուղար եղավ Սուրեն Թովմասյանը: Ջանգեզուրցի, ավելի կոնկրետ՝ գորիսեցի խրիտ, մարտական մարդ էր: Ինտելիգենցիան, սակայն, նրան չէր ընդունում, դե, որովհետև կուպիտ էր, բայց անձնապես մաքուր մարդ էր: Նրա ժամանակ Ղարաբաղի վերաբերյալ ոչ մի հարց Մոսկվա չի գնացել:

Անցնեմ Դեմիրճյանի ժամանակներին: Ուրեմն, Քոչինյանը եղավ առաջին քարտուղար ութ տարի: Մինչև այդ, շուրջ 14-15 տարի կառավարության նախագահ էր: Բան չունեմ ասելու, գերազանց նախագահ էր: Բայց որպես Կենտկոմի քարտուղար, ամենաանհաջողներից մեկն էր, ինչպես Քոչինյանն իրեն արդեն սպառել էր. իր գագաթնակետին հասել էր կառավարության նախագահ դառնալուց հետո: Հետո էլ, նա մեծ սխալություն արեց Գրիգորի Հարությունովի նկատմամբ. նրան պաշտպանելու նույնիսկ փորձ չարեց: Նույնն էլ՝ Ջարոբյանի նկատմամբ: Նորից ասում՝ որպես նախագահ լավն էր, բայց որպես գլխավոր դիրիժոր, մանավանդ կադրերի ընտրության հարցում, շատ վատն էր... Միայն ընկերներ ու բարեկամներ հովանավորող էր... Բայց եկավ այս պաշտոնին, նկավ, որովհետև Բրեժնևը նրա դասընկերն է եղել... Հետո Քոչինյանի դեմ ելույթներ եղան Համալսարանում, Պոլիտեխնիկում, դոկտոր, պրոֆեսոր Արամայիս Կարապետյանը նրան մեղադրեց, ինչից հետո Քոչինյանը նրան կուսշարքերից հեռացրեց, ջարդեց-փշրեց, հազար ու մի վայրագություն արեց: Մի խոսքով՝ Կենտկոմի պլենում տեղի ունեցավ, ելույթ ունեցան երկու պայծառ անձնավորություններ. Արարատի շրջկոմի առաջին քարտուղար Ստեփան Պողոսյանը, հրաշալի անձնավորություն, ասաց, թե՝ Քոչինյանն իրեն սպառել է, վերջ, հետո խոսեց Հոն Կիրակոսյանը, նա Կենտկոմի Դիլիջանի բաժնի վարիչն էր, եկավ իմ հերթը, պիտի պահանջեի. «Չի կարելի հանրապետության բախտը կապել մի մարդու հետ, ով չգիտի, թե ինչ է անում, ով վերջնականապես սպառել է իրեն»: Բայց իմ հերթը չհասավ: Տերը առաջարկեց սահմանափակել ելույթները. «Ինչ ասացիք, բավական է, եկեք սահմանափակենք...»,- ու վերջակետ դրեց: Նա մեծահոգություն, մարդկություն արեց, ճիշտ վարվեց, որովհետև, եթե տուն տար, պլենումի մեծ մասը նրա դարմանը քամուն կտար: Ասեմ, որ Քոչինյանը լոռեցի էր, լավ կողմեր շատ ունեն, բայց մի ախմախ բան կա. որ պաշտոնի եկան, ուզում է Քրիստոսն իջնի, ուզում է մայրը գա, կդավեն: Ինչնէ, նրա հարցը մի քանի տարի քննարկման առարկա էր, ուղղակի նրան հազիվ էին պահում պաշտոնում: Մոսկվան արդեն սկսել էր փնտրել՝ ում դարձնել առաջին քարտուղար: Կոմսոմոլի առաջին քարտուղար Հայրո Հայրապետյանից անընդհատ թեկնածու առաջադրել էին պահանջում: Նորից հիշեցնեմ՝ այդ ժամանակ Կենտկոմի առաջին քարտուղարը Հարությունովն էր, իսկ երկրորդը՝ Հրանտ Մարտինիչ Մարտիրոսյանը. աստվածային մարդ էր: Առաջարկվում է Գևորգ Ղարիբջանյանի, Գալուստ Գալոյանի և այլ մարդկանց թեկնածությունը: Բոլորին անուն է կպցնում, չի հավանում: Ասում է. «Խելոք, խելոք, խելոք մարդ գտիր»: Ու մի անգամ Հրանտ Մարտինիչը գնում է զորամաս, որտեղ կուսակցական կոնֆերանս էր անցկացվում, ու Տեր-Ղազարյանցն էլ, ով այնտեղ քաղաքաժնում կոմսոմոլի տեղակալ էր, փայլուն ելույթ է ունենում, կապիտան էր՝ բարալիկ-մարալիկ... Մարտիրոսյանը շատ-շատ տպավորված գալիս է Հարությունովի մոտ, թե.

Գրիգորի Արտեմիչ, ես կարծես գտել եմ նրան...

– Ո՞վ է:

– Բանակում...

– А, салдафона не хочу!

- Ախր, հրաշալի անձնավորություն է, գոնե միայն ընդունեք նրան, տեսեք՝ ինչ մարդ է:

– Լավ:

Ընդունում է ու հիանում: Ու այդպես «Տերը» դառնում է Հայաստանի Զոմտոմոյի առաջին քարտուղար: Խելոք, ընդունակ, տաղանդավոր մարդ էր: Բաքվից էր, լավ ընտանիքից, կարծեմ հայրը թե պապը տերտեր է եղել, լավ կրթություն էր ստացել: Էստեղ աշխատեց, հետո Մոսկվա տարան՝ ԽՍՀՄ կոմկուսի Կենտկոմ, այստեղ-այնտեղ... Այնտեղից նոր նկավ ու զբաղեցրեց կազմակերպչական գծով քարտուղարի պաշտոն, հետո՝ երկրորդ քարտուղար: Շատ խորամանկ էր, հիանալի, անկրկնելի դիվանագետ, բոլորին մատի վրա կխաղացներ, անգամ ասում են՝ Թուրքիայի նախագահի հետ ընկերական հարաբերություններ ուներ... Հայաստանը կարգին, խելոք դիվանագետ էս վերջին քանի հարյուր տարվա ընթացքում չի ունեցել... Եղել են, բայց դրսում՝ Իրանում, Եգիպտոսում՝ Նուբար Փաշան, Ռուսաստանում, բայց մեզ համար չկար:

Մի խոսքով, նրան կանչում են Մոսկվա, որ տան առաջին քարտուղարի պաշտոնը: Բրեժնևը ընդունում ու հիանում է: Մի խորհրդական ուներ՝ Ալեքսանդր Ագենտով, կանչում է նրան. «Ուրեմն Հայաստանում էսպիսի փայլուն ուղեղ կա, ու դու դա թաքցրել ես...», ղե, նա էլ ասում է, որ ինքն էլ չգիտեր: Այդպես, ու Բրեժնևը, քանի որ պետք է երկու օրով բացակայեր Մոսկվայից, նրան ասաց, որ մի քիչ սպասի, վերադառնալուն պես կոմկուսի առաջին քարտուղարի հրամանը կստորագրի: Մինչ Բրեժնևը կգար, մի շատ լավ մարդ, առանց այդ ներքին խոհանոցին ծանոթ լինելու, գնում է Կենտկոմ, ծանոթների, ընկերների հետ խոսելիս ասում է, թե. «Ձեզ կարող եմ շնորհավորել, մոտակա ժամանակներում արդեն Քոչինյանից կազատվեք, կգա Տեր-Ղազարյանցը...»: Ու այդպես լուրը հասնում է Կենտկոմի կազմակերպչական բաժնի վարիչ Ալբերտ Ստեփանյանին, նա Տեր-Ղազարյանցի զինակիցներից էր: Այդ ժամանակ Արոյի մոտ է մտնում Գերագույն խորհրդի նախագահ Նագուշ Հա-

թոյունյանը, Լեոյի թոռն էր, որը շատ մոտ էր Քոչինյանի հետ: Արոն էլ, իբր թե էս Նագուշին փրկելու համար, զգուշացնում է սրան, թե Քոչինյանին ահա այսպիսի բաներ են ասում... Նա էլ լուրը միանգամից տեղ է հասցնում, թե. «Անտոն Երվանդիչ, էդ ուղտի ականջում քնած ես, ու քարտուղար են փոխում, քեզ են փոխում...», Քոչինյանն էլ. «Էսօր երեկոյան կթռնես Մոսկվա, կգնաս Գերագույն խորհրդի նախագահությունն նախագահի մոտ, կասես, որ Տեր-Ղազարյանցը Շեվարդնաձեի մարդն է.»: Իսկ Շեվարդնաձեն Բրեժնևի հակառակորդն էր, այնպես որ, սա լուրջ մեղադրանք էր: Էդ ընթացքում Անտոնը երեք օրով կորավ, ոչ ոք չգիտեր՝ որտեղ է: Դու մի ասա, նրան ուղարկել է Մոսկվա, ինքն էլ նյութեր ու ապացույցներ է հավաքում՝ էդ մեղադրանքը հիմնավորելու համար: Դրանից հետո ինքն էլ է գնում Մոսկվա: Բրեժնևն այդ ընթացքում գաղիս է, լուրը տեղ են հասցնում, ու գործն այսպիսով ձախողում են: Տեր-Ղազարյանցի մասին վերջին խոսքս ասեմ. այդ ժամանակ նրա 50-ամյակը լրացավ, պարգևատրեցին Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով, ԽՍՀՄ-ի արտակարգ և լիազոր դեսպանի կոչում տվեցին, ուղարկեցին Աֆրիկա՝ որպես դեսպան: 16 տարի մնաց Աֆրիկայում, որ արձակուրդ էր գալիս, խնդրում էր՝ գոնե բերեք Հայաստան, Արտաքին գործերի նախարար, բայց չբերեցին... Հետո, երբ իրադրությունը փոխվեց, նրան ուզում էին վերցնել ԽՍՀՄ կոմկուսի Կենտկոմի արտաքին հարաբերությունների բաժնի վարիչի տեղակալ: Բայց Դեմիրճյանը. «Չէ, ոնց կլինի, չի՛ կարելի, ոչ մի դեպքում...»,– այ մարդ, քեզ ինչ... Էդպես փակվեց էդ գործը: Հիմա ողջ-առողջ ապրում է...

Բ.Կ.– *Հա, ես հանդիպել եմ նրան Մոսկվայում:*

Ս.Խ.– Հանդիպել եք: Լավ է: Շարունակեմ: Քոչինյանին ազատեցին, ու եկավ Կարեն Սերոբիչ Դեմիրճյանը: Ամբողջ խնդիրն այն է, որ Քոչինյանը հասցրել էր Հայաստանը անապատ դարձնել, ինչքան խելոք, իմաստուն մարդ կար, բոլորին հանեց ասպարեզից. Բաղալ Մուրադյան, Սուրեն Մովսիսյան, Տերին արդեն ասացի՝ ինչպես ազատեց, էլի շատ մարդկանց շինծու եղանակով հեռացրեց պաշտոններից: Ասպարեզը մնաց Դեմիրճյանին. լավ, կիրթ, խելացի, բուն ավարտած, Բարձրագույն կուսակցական դպրոցը գերազանց ավարտեց... Բայց չկայացած մարդ էր, հասուն չէր: Իբր Երևանի քաղկոմի առաջին քարտուղարն էր, ամբողջ օրը այս կողմ, այն կողմ էր շրջում, գործ չէր անում, Սուրենն ասում

էր. «Լսի՛, Կարեն, քեզ ինչո՞ւ են փող տալիս: Ա՛յ մարդ, դու ախր գործ չես անում, մի ժամ էլ չես աշխատում»: Այդ ժամանակ երկրորդ քարտուղարն Անիսիմովն էր, գրականության մեջ նրան աղավաղում են, որովհետև նա խիստ էր, բայց շատ խելոք, տաղանդավոր, հրաշալի անձնավորություն էր: Դե, այսպիսի մարդիկ ոչ բոլորին են դուր գալիս, մանավանդ Քոչինյանի ժամանակ էդ անիրավությունները նա չէր հանդուրժում... Հրազդանից նա ինձ կանչեց, բերեց: Ինչնէ, Երևանում կուսակցական վերահսկողության հանձնաժողովի նախագահ էի:

Հիմա Զարոբյանի մասին: Զարոբյանը եկավ շատ օրինաչափ ճանապարհով: Նրա ծնողները Արդահանից գաղթել են Ուկրաինա, որտեղ էլ նա ավարտել է դպրոցը, փայլուն կրթություն է ստացել՝ ինժեներ էլեկտրատեխնիկ: 28 տարեկանում, ինքն է ինձ պատմել, Խարկովի շրջկոմներից մեկի քարտուղարն է եղել, հետո ուղարկել են Օմսկ, որտեղ էլ արդյունաբերության, էներգետիկայի գծով քարտուղարներից մեկն է եղել, առաջինը չէր էլի: Այնտեղից էլ ուղարկել են Երևան: Այստեղ աշխատել է Կենտկոմում վարչական օրգանների բաժնի վարիչ, քաղկոմի քարտուղար: Վերջում եղավ Նախարարների խորհրդի նախագահի տեղակալ, հետո՝ Կենտկոմի քարտուղար, հետո՝ առաջին տեղակալ... Բոլոր փուլերով անցավ՝ օրգաններում աշխատեց, քաղկոմում աշխատեց, Կենտկոմ, նախագահի տեղակալ, մի խոսքով՝ բոլոր փուլերով անցավ, հայերեն էլ սովորեց: Դոկտոր, պրոֆեսոր Բարսեղյանը նրա հետ հինգվեց տարի հայերեն պարապեց: Ու այսպես օրինաչափ, աստիճանաբար հասունացավ նա: Ոչ թե Դեմիրճյանի նման՝ ականջից բռնեցին բարձրացրին: Զարոբյանն արեց այն, ինչ ոչ որ չարեց. Սփյուռքի կոմիտե ստեղծեց, Սփյուռքի «Հայրենիքի ձայն» թերթ հրատարակեց, Ցեղասպանության ճանաչմանը փորձեց պաշտոնական բնույթ տալ, որովհետև ո՛չ մենք էինք դատապարտող օրենք ընդունել, ո՛չ Խորհրդային Միության Գերագույն խորհուրդը... Որքան է չարչարվում, արա-նրա հետ բանակցում, որ թույլատրվեր Հայաստանում Եղեռնի 50-ամյակը նշել: Այս առումով ասեմ, որ Կենտկոմի քարտուղար Հովհաննես Բաղդասարյանի ղեկավարությամբ հանձնաժողով ստեղծվեց, նախապատրաստական աշխատանքներ էր տարվում, ու շատ հայ մտավորականներ ներգրավված էին այդ աշխատանքներին, օրինակ, Վիկտոր Համբարձումյան, Սիլվա Կապուտիկյան: Սրանք սկզբից ոգևորվել էին, բայց հետո

թափից ընկան, որովհետև, եթե հետո մի բան պատահեր, սրանց վրա նացիոնալիստի պիտակ կկպցնեին ու... Էս գաղափարական ոլորտի աշխատողները, այդ թվում՝ Կենտկոմի գաղափարական աշխատանքները ղեկավարող երկրորդ քարտուղար Հովհաննես Բաղդասարյանը, Խաչատրյանը, ով փայլուն հռետոր էր, փայլուն, բայց ծույլ ու անհամարձակ էր, վախկոտություն արեցին. թերթերում սկզբնապես գրեցին, թե՝ այսպիսի միջոցառում է լինելու, այս, այն... Ժողովրդին, մտավորականությանը ոտքի հանեցին... Բայց դե անընդհատ հապաղում էին: Եվ երբ ապրիլի 24-ը հասավ, իմիջիայլոց, այդ ժամանակ ես վատառողջ էի, ծնկիս ոսկորը կոտրված էր, փայտով էի քայլում, որոշեցի ընկերներիցս երկուսի հետ գնալ այդ միտինգներին (այդ ժամանակ Կենտկոմում էի աշխատում), ինձ կանգնեցրին, թե՝ էս ինչ ես անում, կարգին չես քայլում, ժողովուրդը ոտի տակ կտա... Օպերայի շենքում հանդիսավոր նիստ էր լինելու, առաջարկեցին, թե՝ գնա էնտեղ: Այդպես էլ արեցի: Հանդիսավոր նիստը բացեց Նագուշ Հարությունյանը, փայլուն ելույթ ունեցավ նաև Վիկտոր Համբարձումյանը, դրանից հետո ուժեղ շխկշխկոց էր գալիս, կարծես ապակիներ կոտրեցին: Հետո պարզեցինք, որ այդ միտինգավորները ցանկացել են, որ նիստին ներկա լինեն նաև իրենց ներկայացուցիչները, դե ոստիկանությունն էլ մեքենել է: Իրարանցում է ստեղծվել, մի 40-50 հազար մարդ կլիներ, ու մեկը, չեն էլ ասում, թե էդ ո՞ր «խելոքն» է եղել, էս ժողովրդի վրա ժանգոտ ջուր է բաց թողնում, սրանք էլ կատաղում են ու սկսում են քարերով, շշերով շենքի ապակիները կոտրել: Եկան, ներս լցվեցին, որոշ ժամանակ անց քաղկոմի քարտուղար Բաղալ Մուրադյանը փորձեց հանգստացնել միտինգավորներին, թե՝ հանգստացեք, ցրվեք, մի բան կանենք... Բայց դե պիտի շիտակ խոսք ասես, չէ՞, էդ հերթապահ խոսքերով կարո՞ղ ես կատաղած մարդկանց հանգստացնել: Մեկն էլ վեր կացավ ու մաքուր հայերենով, թե. «Հո՛ղ ենք ուզում, հո՛ղ: Դուք երևանցի եք, ես՝ վանեցի, ես էլ ուզում եմ Վանը տան: Մեր հողե՛րն ենք պահանջում»... Ես այդ մարդուն ճանաչում եմ, ՊԱԿ-ում էր աշխատում, Օնիկ Դադայանն էր: Կաթողիկոս Վազգեն Առաջինն էլ էր այնտեղ, աստվածային մարդ էր, դիմեցին նրան: Նա սկզբում բան չէր ասում, բայց երբ ասաց, թե՝ էս եղանակով հարցեր չեն լուծում և այլն, սրանք կաթողիկոսին էլ սկսեցին չլսել: Ասեմ, որ հենց այդ ժամանակներն էր, որ Զարոբյանը նախաձեռնեց Ծիծեռնակաբերդի կառուցումը,

դն, բազալտ է, չէ, բոլոր հանքերը սրա համար էին աշխատում: Սրանից հետո Զարոբյանի մեջքը կոտրվեց. այդ խավարամոլները այս եղանակով հաշվեհարդար տեսան, Քոչինյանն ու գաղափարական ոլորտի մյուս աշխատողները, փաստորեն... Այսինքն՝ չես կարող ապացուցել, որ իրենք են դա կազմակերպել, բայց իրենց մատը խառն է եղել, որովհետև, ախր, այդ ինչո՞ ժողովուրդը պետք է դուրս գար փողոց... Նրանց ուզածն ինչ էր. «մեր հողերը», խոսքը Ղարաբաղի ու Նախիջևանի մասին էր: Ռա էն մարդու՝ Զարոբյանի արածն էլ հենց դա էր էլի:

Բ.Կ. - *Ներողություն, մի բան հիշեցնեմ. քույրս՝ Ռիմա Դավթյանը, մի պրոֆիսի բան ասաց, թե՝ Քոչինյանը եկավ մեր տնակ, ձեռքերը շփեց ու ասաց, «Ահա, Ղարաբաղը սրանում ենք, արդեն մերն է»: Սա ինչպես կբացատրեք:*

Ս.Խ.– Դա տարբերան անգրագիտություն է: Բա պետական այրը այդպիսի բան կասի... Բա դա ասելու բան է: Դա հեղինակություն ստեղծելու էժանագին միջոց է: Դրա նման այլ դեպքեր էլի են եղել, նման էժանագին քայլեր արել են նաև կապված համալսարանի հետ: Էդ դեպքերից հետո Մոսկվայից 15 հոգանոց մի հանձնաժողով, մեծ մասը հայեր էին, դպրոցներում, բուհերում և ամենուր ուսումնասիրում էին «գաղափարական աշխատանքը»: Մի բան էին փնտրում՝ ազգայնամոլություն: Այն ժամանակ կինս Կրասնոյարսկայի դպրոցում ուսուցչուհի էր, ասում է, որ անգամ երեխաների շարադրություններն էին կարդում նշյալ ուսումնասիրությունների շրջանակում: Հա, պարզ է, երեխաները գրում էին Արցախի, հայոց մտահոգությունների մասին, դա բնական էր: Ինչևէ, Քոչինյանն այդ բոլորն իր օգտին օգտագործեց, և, ուրեմն, այդ նախագահության անդամներին համախմբում է, խոսում է... Բոլոր անդամները, բացի չորս հոգուց, այն եզրակացությանն են հանգում, որ Զարոբյանն այլևս չի կարող ղեկավարել, Մոսկվա հնազիր են ուղարկում, Մոսկվան էլ այդ մարդուն ազատում է: Էլի Քոչինյանի մատը խառն է: Զարոբյանը շատ բան է արել: Էն ժամանակ, որ Խրուշչովը եկավ Երևան, տարավ նրան Սևան, շատ խելացի ու կշռադատված ձևով Սևանի խնդիրը լուծել տվեց: Հենց այդ օրերին էր, որ հավաքում է Կենտկոմի բյուրոյի անդամներին, ու Ղարաբաղի հարցը նորից առաջ են քաշում: Բայց Խրուշչովը մերժել է. «Եղբայրներ, մենք միասնական պետություն ենք, ոչ, չենք կարող, ինչպես կա, թող այնպես էլ մնա: Հարց ունե-

իք, լուծեցի, էլ ինչ եք ուզում»: Բայց էն, որ Ղրիմը լիտիարար տվեց Ուկրաինային, դա կարելի է, իսկ Ղարաբաղը՝ ոչ:

Անցնենք Դեմիրճյանին: Վակուում էր ստեղծվել: Էն մեր առաջնակարգ դեմքերին պոչ կապեց Քոչինյանը, ոտքերին բերեց: Դատախազի տեղակալը, ՆԳՆ-ի տեղակալ, ՊԱԿ-ի պետը և էլի մի քանի կառույցներում ոտքերն էին աշխատում: Դե սա արեց, որպեսզի ամրապնդի իր տեղը, որ իր իշխանությունը մնա անսասան: Դա մեծ ապուշություն էր. անսասան մնաց, իհարկե ոչ, հակառակը՝ ավելի կատաղեցրեց մարդկանց: Մի խոսքով՝ էդ վակուումի մեջ ես տեսնում էի մի լուսավոր կետ. ազգային, քաղաքական գործիչ, փայլուն գիտնական, Հեռուստատեսության կոմիտեի նախագահ Ջոն Կիրակոսյանն էր դա: Պայծառ մարդ էր, բոլորից տասը գլուխ բարձր, Քոչինյան-մոչինյան, Դեմիրճյան նրա դեմ հեչ էին: Այ, ես ուզում էի, որ նա լիներ առաջին քարտուղարը, բայց հո իմ ուզելով չէր: Ասպարեզ եկավ Դեմիրճյանը: Նա լավ կապեր ուներ և այստեղ, և այնտեղ: Այնտեղ եղբայրն էր գործում, ակադեմիկոս էր: Ասում են՝ իբրև Սուսլովը կնոջ բարեկամներից էր, բայց դրանք շշուկներ են, դա լուրջ չեմ ընդունում: Իսկ այստեղ Դեմիրճյանին նեցուկ էր Ակեքսեյ Մատվեյիչ Կիրակոսյանը: Լավ անձնավորություն էր, վերջերս մահացավ, ես նրան ասում էի՝ դու պետք է լինես, ինչո՞ ես էս երիտասարդին մեջտեղ բերում: Նա էլ, թե՝ լավն է, ախր... Ա՛յ մարդ, ինչն է լավը, մարդ պետք է կոփվածք ունենա, անքուն գիշերներ անցկացնի իր ժողովրդի համար, տառապի նրա հետ, հա, կիրթ էր, խելոք էր, բայց հա սուն չէր: Կարենը ոչ Ղարաբաղի, ոչ Նախիջևանի հարցերով որևէ բան չձեռնարկեց, հավանաբար Զարոբյանի վտրձից վախեցավ. Զարոբյանը ձեռնարկեց, ու նրա գլուխը էդ հողի վրա կկրան: Մի կողմից էլ պետք կլիներ ասելը, թե՝ եթե շատ ուզենար այս հարցերը դեկավարների միջոցով կլուծեր: Չէր կարող: Ինչո՞, որովհետև խեղկատակ Գորբաչովի հետ բա հնարավոր է մի հարց լուծել: Հիշենք՝ Գրիգորի Արտեմիչը հարց է լուծել Ստալինի հետ, էն մյուսները՝ Խրուշչովի, բայց էդ Գորբաչովը աննորմալ մարդ էր... Բայց, ամեն դեպքում, Դեմիրճյանը կարող էր շատ բաներ անել, որ չարեց: Կարող էր այստեղ հասարակական կարծիք ստեղծել, գիրք, զրականություն... Վրաստանն էս էր գրում, էն էր գրում, իսկ մենք... Միայն մի մարդ կար՝ Եղիշե Սարգսյանը, որ անդրադառնում էր հայոց հողերի պատմությանը, իսկ Պատմության ինստիտուտի մյուս

մասը՝ կոմսոմոլի պատմություն, սոցմրցում, էլ չգիտեմ ինչ... Մի անգամ Վիկտոր Համբարձումյանի հետ Մոսկվայի մի հյուրանոցում հանդիպեցինք, ասացի. «Վիկտոր, բացի ձեզանից Հայաստանում կամ մեկ ուրիշ անձնավորություն, որ անկախ լինի ամեն ինչից: Անառարկելի հեղինակություն ունեք, և դա պետք է ճիշտ, լավ օգտագործեք: Մեր ազգային ոգին չպիտի մեռնի, էսօր չկա, վաղը կլինի, էդ բոցը, կրակը, անթեղը պետք է լինի: Իսկ այսօր... Ինչով է զբաղված Պատմության ինստիտուտը... Թող գոնե մի գիրք գրեն, ոնց վրացիները արեցին. էն իրենց ազգային ոգով Վրաստանի պատմություն գրեցին, ճիշտ է՝ Մոսկվան իրանցում արեց, բայց վնց ամիս հետո շատ լավ գնահատվեց էդ գիրքը: Բա դուք ինչու չեք անում, կամաց-կամաց, դանդաղ քայլերով գոնե անեք»: Էդ որ ասացի, ասաց. «Ընկեր Խաչատրյան, գիտեք, մի բան հիշեցի, մենք մի միութենական ակադեմիկոս ունենք՝ Մաքսուդովը, նա ժամանակին եղել է Անդրանիկի զորամասում: Միշտ ասում է, թե երբ թոշակի անցնի, պիտի գրի այդ մասին: Արդեն թոշակի է անցնելու, կկանչեմ, կձայնագրեմ նրան»: Այդպես էլ եղել է. նրան Բյուրական է կանչել, խոսել են դես-դեն, բայց որ իմացել է՝ ձայնագրիչ է միացրած՝ դադարել է: Վիկտորն ուժ ուներ, կարող էր մի բան անել, բայց նրան պետք է ուղղություն տվող լիներ, Դեմիրճյանը, որ դա աներ... Բայց չի արել:

Այն ժամանակ բոլոր օբյեկտները հիմնականում Հրազդանում էին՝ ջերմաէլեկտրակայան, հիդրոէլեկտրակայան, Ծաղկաձորի սպորտբազան, Սևան-Երևան մայրուղին... Էդ չարաբաստիկ Լեռնաքիմիական կոմբինատը փակվեց, փոխարենը ստեղծվեց Հրազդանմաշը: Այն ժամանակ, երբ պետք է գնայի Հրազդան, երկրորդ քարտուղար Գեորգի Արտաշեսովիչ Տեր-Ղազարյանցն ասաց. «Լսիր, որքան կարող ես հետաձգիր Քիմիական կոմբինատի բացումը, էդ փողերը ծախսեք ճանապարհների, տներ կառուցելու վրա: Ճիշտ է՝ էդ ցեմենտն էլ է փոշի, բայց դե, դա չես կարող համեմատել քիմիական գործարանի սպառնացող վտանգին»: Այդպես էլ արեցինք: Դեմիրճյանի ամենալավ գործն այն էր, իհարկե Վազգեն Սարգսյանի օգնությամբ, որ կարողացավ կասեցնել, վերափոխել Հրազդանմաշը, դարձնել ռադիոտեխնիկական արտադրության օբյեկտ, որտեղ պետք է աշխատեր 21 հազար մարդ: 120 մլն ռուբլու աշխատանք էր կատարվել դրա վրա: Ես լսեցի, շատ ուրախացա, ի վերջո, էդ փոշին կվերանար: Երբ Դեմիրճյանը Մոսկվայից եկավ, զանգեց ու ասաց, որ բարձրանամ վերև: Բարձրացա:

– Ի՞նչ կա,– ասացի:

– Էնտեղից մի հանձնարարություն կա, գրիր մոտդ, որ կատարես, իրենց հաղորդենք:

– Սպասիր, սպասիր, նախքան դրան անցնելը ուզում եմ քեզ սրտանց շնորհավորել: Դու գիտես՝ ես չեմ գովաբանում ղեկավարներին, հակառակը՝ ավելի շատ քննադատում եմ, բայց քո արածը իսկապես արժանի է գովեստի, այն նախադեպ չունի: Էդ ինչպես արեցիր:

– Արեցի էլի:

– Ո՞նց:

– Ընդհանուր բաժնի վարիչ Զեռնենկոյի մոտ գնացի, պատմեցի, ներկայացրի: Դե, մինչ այդ նախարարների հետ կառավարություն ենք գնացել, բայց վերջնական «դաբրոն» նա պիտի տար: Նա էլ, թե. «Գիտես ինչ, Կարեն, քեզ այդ հարցով միայն մի մարդ կօգնի՝ Սուսլովը, միայն նա»:

Ինչու Սուսլովը, որովհետև Բրեժնևը կենդանի դիակ էր՝ ոչ ողջ էր, ոչ մեռած, համարյա էլ չէր աշխատում, իսկ Քաղբյուրոյի մյուս անդամները հո խենթ չեն այդպիսի ծանր բարի տակ գլուխները դնեն: Սուսլովը կզբաղվեր այդ հարցով: Կարենն էլ գնում է նրա մոտ, ամեն ինչ ներկայացնում է, տալիս է փաստաթղթերը, պայմանավորվում են երկու օրից հանդիպել:

– Երկու օրից հանդիպեցինք: Զանգ տվեց Կոսիգինին ու էլի մի քանիսին, որոշ հարցեր ճշտեց ու... «Դաբրոն» տվեց,– ասաց Կարեն Սերոբիչը:

Ասում եմ՝ էդ ապուշ է, ինչ է... Լավ, ջանդամ ապուշ է, բայց էդ ինչ անհատական հարց էր, որ այդքան գումար տրամադրվեց, գոնե մեր հողերի հարցը լիներ: Ես լիրիկական զեղումների մեջ ընկա.

– Կարեն, գիտես ինչ,– որ երկուսով էինք լինում, Կարեն էի ասում,– ես իմ կյանքի կեսը Հրազդանում թողեցի, էդ շինարարությունների վրա, բայց այսօր ես հարյուրից հարյուր կողմ եմ, որ Լեռնաքիմիական կոմբինատի հրապարակում քո կիսանդրին դնեն, եթե դու էդ գործը կատարես:

Նա էլ ցինիկ էր, չէ, ծիծաղելով ասաց.

– Արա, էս ինչ ժլատ մարդ ես դու, ինչու ես իմ կիսանդրին դնում, ինչու իմ լրիվ արձանը չես դնում:

– Կդնեմ, միայն մի պայմանով:

– Էդ ինչ պայման է, որ...

– Երբ Ղարաբաղն ու Նախիջևանը կբերես: Այ, էդ ժամանակ, ոչ թե ես, այլ ժողովուրդը քո արձանը կկանգնեցնի:

– Գիժ է էս մարդը... ոնց թե՝ Ղարաբաղ, Նախիջևան... Դու Ալիևի մասին չգիտես... Էդ խորամանկին չգիտես: Չէ, չի լինի:

– Գիտեմ, բայց դու քո կրթությամբ մի բան էլ ավելի ես Ալիևից, Շևարդնաձեից:

– Չէ:

Հիասթափվեցի: Դե, հանձնարարություն տալու համար էր, չէ, կանչել, դա էլ մոռացա վերցնել, շատ վատ տրամադրությամբ դուրս եկա: Նա էն մարդը չէր, որ Ղարաբաղ ու Նախիջևան վերցներ: Այդպես է, սիրելիս: Ասծատրյան Եղիշեի գրքում, ձեր հայրենակիցն է, խոսվում է Միկոյանի, Գրիգորի Հարությունյանի, Սուրեն Թովմասյանի, Զարոբյանի, Քոչինյանի, Դեմիրճյանի մասին, նրանց բնութագրերն է ներկայացնում: Այստեղ Դեմիրճյանի մասին մի քանի հուշ կա գրած, արժե կարդալ... Դեմիրճյանը առաջին քարտուղար դարձավ Ջոն Կիրակոսյանի շնորհիվ, բայց հենց առաջինը Կիրակոսյանին պաշտոնից հեռացրեց: Մի անգամ նրա տանը, մի շենքում էինք առաջ ապրում, մի-մի բաժակ խմեցինք, սկսեց փնթփնթալ: Ասացի. «Ի՞նչ ես փնթփնթում, չէի՞ ասում՝ էդ Երևային ինչ ես առաջ քաշում, ախր դա նրա տեղը չէր»... Ազնիվ խոսք եմ ասում, մեր Կենտկոմի քարտուղարներից, բացի Զարոբյանից, քո հայրենակից Աշոտ Հովհաննիսյանից, ոչ ոք այդպիսի ֆունդամենտալ կրթություն չի ստացել, ինչպես Դեմիրճյանը: Նա փայլուն ինժեներ էր, մետաղի լեզուն գիտեր, բայց ախր էդ պաշտոնը զբաղեցնողը մարդու լեզուն պիտի հասկանար, ազգի ոգին ու իրոնը պիտի հասկանար: Ասում էր. «Ղարաբաղը ջնքս է, որ հանեմ տամ»... Քո գրպանում չի այն, բայց ժողովուրդդ էդ էր պահանջում, որ քո ազգին չես անում, հասկանում, էլ որ օրվա ղեկավարն ես:

Բ.Կ.– *Հիշում եմ՝ 88-ի մարտի երեսունին Մոսկվա մեկնեցի: Մի երկու օր հետո Դեմիրճյանի եղբայրն ինձ իր տուն հրավիրեց: Գնացի: Ղարաբաղի առաջին նկարահանումները ցույց տվեցի նրան, բացի այդ՝ Գորբաչովին նամակ էի գրել՝ ինչ է իրականում կատարվում, դա էլ կարդաց: Զրուցում էինք, ասացի. «Եթե եղբորդ չհամոզես, որ անցնի շարժման կողմը, վատ կլինի. Գորբաչովն էլ կհանի: Նա արդեն թույլ է, մեկակ է»: Եղբայրն ասաց, որ կհամոզի Դեմիրճյանին. «Նա ինձ հասկանալ կլսի»: Բայց, ինչպես երևում է, չհամոզվեց: Ավելին՝ ես վերադարձա Հայաստան, այդ ֆիլմերը հանձնեցի, Դեմիրճյանն էլ նույն այդ տեսագրությունները վերցրել է ու մեկնել Մոսկվա՝ Գորբաչովի մոտ: Ներկայացրել է նրան, նա էլ, թե. «Я уже это знаю...»: Բանի տեղ չի դրել, Դեմիրճյանը շշմել է, թևաթափ վերադարձել: Այ, եթե շարժման կողմնակիցը լիներ, անունն ու պատիվը կփրկվեր, բայց չեղավ ու... Թեկուզ ողբերգական մահով գնաց, բայց միևնույն է...*

Ս.Խ.– Դուք ճիշտ եք: Ուրեմն, մեր Արխիվային վարչության պետի տեղակալը մի գիրք ունի, որտեղ շատ հետաքրքիր մի դրվագ կա: Դեմիրճյանը փլուզումից երկու-երեք տարի առաջ Գորբաչովի մոտ է գնացել, որպեսզի թույլտվություն ստանա, որ Հայոց եղեռնի օրը դառնա սգո օր: Դե, սա լուրջ հարց է, բայց եթե համեմատենք Ծիծեռնակաբերդի կառուցման հետ, ոչինչ է: Ի՞նչ է որ. պետք է ուղղակի սգո օր հայտարարեին ապրիլի 24-ը: Հարցը, սակայն, չի լուծվել: Էդ չի նրա կշիռը... Այս խնդիրը կարողացավ Սուրեն Հարությունյանը լուծել, նրան ես միջակություն եմ համարում, բայց դե կարողացավ լուծել մարդը: Ես էլ մտածում եմ. «Դու ինչո՞ւ ես գնում Գորբաչովին հարցնելու, ախր Ծիծեռնակաբերդի հուշարձանը արդեն կառուցվել է, տո, կանչիր Ոսկանյան Հրանտին ու ասա, որ հրամանագիրն ընդունի»: Շատ-շատ Մոսկվան ջղայնանա ու կարգադրի, որ հանեն:

Բ.Կ.– *Ժողովուրդը կլսեր նրան, չէին համարձակվի այդ սգո օրը չեղյալ համարել:*

Ս.Խ.– Ես համամիտ եմ, այո՛, ճիշտ է: Փաստի առաջ կանգնեցրու ու մի կողմ քաշվիր... Հրազդանում իմ գործունեության ընթացքում քանի անգամ է եղել՝ արել եմ, փաստի առաջ եմ կանգնեցրել: Ես իմ կաշվի մասին չեմ մտածել: Իսկ սրանք ուղղակի մորթապաշտներ են, մորթապաշտներ...

Բ.Կ.– *Սիա՛, այսքան մեծ փորձ ունեք, ի՞նչ եք կարծում Խորհրդային Միության փլուզման մասին: Ի՞նչ դատողություններ ունեք:*

Ս.Խ.– Փլուզվեց, որովհետև ապուշներ էին իշխանության գլուխ բարձրացել: Եթե մի երկիր քառասուն տարի ապուշները ղեկավարեն, բա ինչ ես ուզում... Ամերիկայում կարո՞ղ եք մի ապուշ նախագահի գտնել, կամ Ֆրանսիայում, չէ, չկա նման բան: Միությունը հիմարների ձեռքում էր. մի խեղկատակ Խրուշչովն էր, մյուսը՝ Բրեժնևը, էն մյուսը՝

Չեռնենկոն, տո էլ ո՞ւմ ասեմ, Գորբաչովը, Ելցինը: Բա, սրանք կքանդեն, բա ինչ կանեն: Նույնիսկ մի փոքրիկ գյուղ, որ ղեկավար չունենա, ծանր վիճակում կհայտնվի, բա էդ հսկայական երկիրը, որ աշխարհի երկրորդ գերտերությունն էր ու ապուշների ձեռքին էր, կարո՞ղ է հարատևել... Այնքան զենք ուներ Խորհրդային Միությունը, որ այդքանով հնարավոր կլիներ հիսուն անգամ վերացնել աշխարհը: Ինչո՞ւ ես դու ջրածնային զենք ստեղծում, Ամերիկայի հե՞տ ես մրցակցում... Անհեռատեսությո՞ւն էր. Ամերիկան հզոր էկոնոմիկա, հարստություն ուներ, դու դա չունեիր: Ժողովուրդը կիսասոված էր, ամբողջ գումարը զենքի՞ն ես տալիս: Մի անգամ Ռեյգանն այս առումով ասել է. «Մարդիկ, որոնց համար առաջնահերթը էկոնոմիկան է, դադարել են դրա մասին մտածել: Միայն զենքեր, զենքեր ու զենքեր: Իսկ մենք նորմալ զարգացում ենք ապրում. տնտեսությունն իր տեղն ունի, զենքը՝ իր: Իսկ նրանց տնտեսությունը թզուկ վիճակում է»: Լավ է ասված՝ «թզուկ վիճակում», իսկ այդ վիճակում ինչքա՞ն կարող է մի երկիր գոյատևել... Ու հավատ էլ չկար, իսկ Ստալինի ժամանակ... Շուն է, գել է, ինչ է, բայց կարողանում էր էդ մարդը ժողովրդի մեջ հավատ սերմանել. քանի՞-քանի մարդ է հանուն հայրենիքի զոհվել, այդ հավատն էր, չէ՞, նրանց մեջ խոսում, ինչն սպանեց Խրուշչովը: Դրան գումարած՝ ապուշները եկան իշխանության, օրինակ, Բրեժնևը, որ ութ աստղ ուներ (հինգը՝ այստեղից, երկուսը՝ Բուլղարիայից, մեկն էլ՝ Գերմանիայից), այսպիսի խեղկատակ էր ղեկավարում Խորհրդային այդ հսկա տերությունը: Ասում են, թե՝ Ամերիկան արեց, էս, էն... Ամերիկան արել է, էն էլ ոնց է արել, միլիարդներ է դրել: Բայց հենց այդ նույն Ամերիկան չէր, որ 1917 թ.-ին Անգլիայի, Ֆրանսիայի, Ճապոնիայի հետ միասին հարձակվեցին Խորհրդային Ռուսաստանի վրա. արևելքից՝ ճապոնացիները, Օդեսայից՝ ֆրանսիացիները, Մուրմանսկից ու Արխանգելսկից՝ անգլիացիներն ու ամերիկացիները: Էդ ոնց է, որ էդ ողորմելի, քաղաքացիական պատերազմից նոր դուրս եկած, սոված-ծարավ վիճակում գտնվող ժողովուրդը դիմակայեց արտաքին այդ ճնշմանը: Իսկ այս անգամ, լինելով աշխարհի մեկ վեցերորդ մասը, ունենալով ջրածնային զենք, չկարողացավ Ամերիկային ետ մղել: Այո՛, չկարողացավ, որովհետև հավատը սպանվել էր, ու չկար նորմալ տնտեսական վիճակ: Ներսից էր, ներսից...

Բ.Կ.– *Բոլոր մեծ կայսրություններն էլ ներսից են փլուզվել... Ինչևէ, իսկ մեր օրերի մասին ինչ կասեք:*

Ս.Խ.– Այդ մասին ես երկար-բարակ չեմ ուզում խոսել, քանի որ դա ընդամենը իմ եզրակացությունն է: Ասեմ, որ հիմա բոլորն իրենց գրպանի համար են աշխատում: Ստալինը, որ Ստալին էր... Նրա վաթսունամյակը, յոթանասունամյակը նշեցին, գիտե՞ք ինչ նվերներ նա ստացավ Խորհրդային Միության բոլոր ծայրերից: Այդ բոլորը տեղափոխվեց Գորկու փողոցում գտնվող Հեղափոխության թանգարան, ու մի վիթխարի մասնաշենք տրամադրվեց էդ նվերներին: Ու Ստալինն այդ նվերներից չի էլ օգտվել: Նրա մահից հետո ծախեցին, ու գումարը կազմեց 9 միլիարդ ռուբլի, այս գումարը գնաց պետբյուջե: Հա՛, գազան է եղել, հրեշ է եղել, բայց գող չի եղել: Խրուշչովը չորան է եղել, կոշիկը հանել մարդու գլխին է խփել, բայց էլի գող չի եղել: Իսկ հիմա մեր երկրի այրերը բոլորն էլ գող են:

Բ.Կ.– *Իսկ ո՞րն է դրա պատճառը, այդ գողությունը արմատներ ունի՞ արդյոք:*

Ս.Խ.– Ունի՞: Երբ Բրեժնևը եկավ, նրա փեսան, աղջիկը, շրջապատը, համակարգն ամբողջությամբ արդեն այլասերվեց: Դե, Քոչինյանն էլ Բրեժնևի ընկերն էր... Որ ասում էին Անտոն Բրիլիանտովիչ, իզո՞ւր էին ասում: 10-15 հոգի յուրայիններ ուներ առևտրի նախարարությունում, դա բավական չէ՞ր: Բայց գոնե ինչ-որ առումով այդ գողությունը չափավոր էր: Իսկ Դեմիրճյանի ժամանակ սարսափելի էր: Այնպես որ, նրանք հիմքը դրեցին, այսօր էլ շարունակվում է: Ու գոնե էն ժամանակ սեփականաշնորհում չկար, պատժողներ կային, այսօր ո՞վ կարող է պատժել: Իմ գրքում անուն առ անուն, բացահայտ փաստերով նշում եմ այդ գողերին, ոչ ոքի չեմ խնայում: Այնպես որ, առանց արդարության, հավասարության, մարդասիրության, ազգային ոգու, ոչնչի չենք հասնի: Բա գողը կարո՞ղ է հայրենասեր լինել... Հիշենք՝ թուրքերը որ մտան Ալեքսանդրապոլ, հարուստները ինչ արեցին. հավաքվեցին, աղ ու հացով դիմավորեցին նրանց: Գողից պետական այր չի ստացվի, նրանք ի վիճակի են միայն իրենց որկորի ու քսակի մասին մտածել՝ թալանելով ժողովրդին... Ցավոք, դա այսօրվա մեր իրականությունն է, դա մեր ցավն է: Ակադեմիկոս Ներսիսյանը ժամանակին մի շատ ճիշտ դատողություն է արել, նա ասում էր, որ սոցիալիզմից հետդարձ դեպի կապիտալիզմ չի կարող լինել, սոցիալիզմից հետո ստրկատիրական, ֆեոդալական հասարակարգի կարող ես միայն անցնել: Կապիտալիստականի կհասնենք միայն էս

զարգացումներից հետո: Այսր ոնց կարող ենք հասնել Ամերիկայի մակարդակին, դա հնարավոր չէ: Ասում են արտադրության 13-14 տոկոս աճ է գրանցվել: Էդ ոնց է... Արտադրության աճ կա, բայց գները չորս կողմից բարձրանում են, տարադրամի կուրսն էլ՝ իջնում: Էդ ֆոկուս է, ոչ ավել, ոչ պակաս: Ֆոկուսնիկությամբ երկիր են կառավարում: Առանց առաքինության, առանց բարոյականության մարդիկ են... Հայրենիքը պետք է կառուցեն, իմ գրքում գրել եմ, իսկական այր Տիգրան Մեծի, Անդրանիկի նմանները: Այսօր այդպիսի մարդ չկա ոչ ընդդիմության, ոչ էլ... Կա է, կա խելացի մարդ, բայց նրանց էլ ասպարեզ չեն թողնում: Կուսակցություն են իբր ստեղծել. մի պարկ կարտոֆիլ են մարդկանց տալիս, իբր իրենք շատ հոգատար են, բայց հո այդպես չի ձևը: Դրա համար էլ ոչինչ չեմ ուզում ասել էս իշխանության ու ընդդիմության մասին... Ամեն ինչ այնքան պարզ է...

Պատմում է ԴԱՎԻԹ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԸ (1994-1998 թթ. ՀՀ Հատուկ հանձնարարություններով դեսպան), 08.03.2006, Երևան

Ծնվել եմ 1954 թվականին, Երևանում: 1988 թվականից ակտիվ մասնակցում էի շարժմանը: 1988 թվականի սեպտեմբերին անդամագրվեցի «Ղարաբաղ» կոմիտեի կազմում: Ավելի շատ Արցախում էի լինում, քան Հայաստանում:

Բ.Կ.- *Երկրաշարժի ընթացքում ինչ էիք անում:*

Դ.Շ.- Երկրաշարժից հետո առաջին երկու օրը եղել եմ աղետի գոտում:

Բ.Կ.- *Մենք այնտեղ հանդիպեցինք:*

Դ.Շ.- Այո, հիշում եմ, հանդիպեցինք Գյումրիում, Սպիտակում: Երկրաշարժից հետո Հայաստան ժամանեց Միխայիլ Գորբաչովը: Նրա հրամանով սկսեցին ձերբակալությունները: «Ղարաբաղ» կոմիտեի անդամների մեծ մասին ձերբակալեցին: Մենք կարողացանք թաքնվել: Դեկտեմբերի տասին ցույց կազմակերպեցինք Երևանում: Մեծ բախում եղավ խորհրդային զորքերի հետ: Բախման արդյունքում զորքերը փախան բառիս բուն իմաստով: Այնուհետև երկար ժամանակ թաքնված էինք: Առաջին ձերբակալությունից բացի, դեկտեմբերի վերջին ձերբակալեցին նաև Վանո Սիրադեղյանին, Արշակ Սադոյանին: Մյուսներիս ձերբակալեցին հունվարի 7-ին:

Բ.Կ.- *Պատմեք 1989 թվականի մայիսյան ցույցերի մասին:*

Դ.Շ.- Իմիջիայլոց, կապը իշխանությունների հետ եղել է հենց ամենասկզբից՝ 1988 թվականից: Կապը եղել է, և ես պետք է ըստ արժան-

վոյն ասեմ, որ արդյունքները եղել են դրական, չնայած հակասություններ ունեինք Հայաստանի կոմկուսի ղեկավարների հետ: Այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ ես դա գնահատում եմ դրական: 1988-1989 թթ. Հայաստանի կոմկուսի ղեկավարությունում բավականին շատ մարդիկ կային, որոնք նույնպես, ինչպես մենք, չէին ուզում բախումներ, ծայրահեղ իրավիճակներ: Համագործակցություն, իհարկե, չի եղել, բայց կապը անընդհատ և մշտապես եղել է:

Բ.Կ.- *Մայիսմեկյան ցույցին մեր խնդիրն ինչ էր, որ այդ օրը նրանց միջոցով կարողանանք այնպես անել, որ խորհրդային զորքերը չիանգարեն այդ ցույցին:*

Դ.Շ.- Երբ 1988 թվականի նոյեմբերի 24-ին հայտարարվեց պարետային ժամ, ցույցերը դադարեցին, սկսեցին ձերբակալությունները: Դրանից հետո, երբ բանտից դուրս եկանք, տղաների մեծ մասը Մոսկվայում էին: Մենք՝ «Ղարաբաղ» կոմիտեի ազատության մեջ գտնվող հինգ անդամներով, ընդհատակի պայմաններում կազմակերպում էինք թռուցիկների տպագրում, տարածում: Փետրվար, մարտ, ապրիլ ամիսներին տարածում էի շատ մեծ տպաքանակով՝ մոտ վաթսուն-ութսուն հազար թռուցիկներ: Այնուհետև Հայաստանի իշխանությունների հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ պետք է անենք առաջին ցույցը: Իմիջիայլոց, առաջին ցույցը տեղի ունեցավ 1989 թ. ապրիլի 24-ին, Մատենադարանի մոտ: Հետո եղավ մայիսմեկյան շատ մեծ ցույցը: Դրանից հետո, ըստ էության, անընդհատ գնաց ցույցերի շղթան: Շատ մեծ հանրահավաքներ էին: Մի քանի անգամ Մատենադարանի հանրահավաքի ժամանակ նույնիսկ փակվեց Սայաթ-Նովայի խաչմերուկը: Բազմակի պահանջներից բացի, հիմնական պահանջը «Ղարաբաղ» կոմիտեի՝ Մոսկվայի բանտերում գտնվող անդամների ազատությունն էր: Մայիսի վերջին մենք հասանք այդ արդյունքին, և տղաներին բերեցին Երևան: Երևան գալուց մեկ օր հետո նրանք արդեն ազատ արձակվեցին:

Բ.Կ.- *Ղարաբաղի հետ ձեր կապը՝ և արմատներով, և ձեր անմիջական շփումներով...*

Դ.Շ.- Արդեն 1990-ական թվականների վերջերին իմ հոդվածներում ես վերլուծություն արել եմ այդ կապի, նրա առանձնահատկությունների մասին: Շարժումը Հայաստանում և Ղարաբաղում բավականին առանձնահատկություններ և տարբերություններ ուներ: Երբ փետրվարին շարժումն սկսվեց Հայաստանում, զուտ ազգայնական շարժում էր: Բայց մայիսի վերջին, երբ շարժման ղեկավարությունը փոխվեց, և այն ստանձնեց «Ղարաբաղ» կոմիտեն, շարժումը դարձավ ազգային-ժողովրդական: Ակնհայտ էր, որ միայն Ղարաբաղի հարցը առաջ քաշելով՝ ոչնչի չենք հասնի: Շարժումն ընդլայնեց իր խնդիրները, ժողովրդավարության հարցեր դրեց: Հետագայում, ընդգծում եմ՝ հետագայում, Հայաստանի անկախության հարցը դրեց: Ղարաբաղում շարժումը այդպես էլ մնաց հիմնականում ազգայնական, և պատճառները բնական են: Այդ տարբերությունները, ըստ էության, կային:

Բ.Կ.- *Այնտեղ ռազմաճակատ էր:*

Դ.Շ.- Իհարկե, այնտեղ ճակատ էր: Զմոռանանք, որ Հայաստանն էլ շատ շուտ՝ արդեն 1989-ին, ճակատ դարձավ՝ Երասխի, Նոյեմբերյանի, Իջևանի դեպքերից հետո: Բայց այնտեղ պայքարը ավելի սուր էր ընթանում, որն ուներ իր օբյեկտիվ պայմանները: Պետք է ասել, որ ի տարբերություն Հայաստանի՝ Ղարաբաղում շարժման հստակ ղեկավարություն չկար: «Կոմունկ» կոմիտեն էր շատ մեծ՝ անընդհատ փոփոխվող: Արդեն 1988 թվականից սկսվել էին հարձակումները, դեպքերը: Դրանք, իհարկե, պատերազմական բնույթ չունեին: Կարող եմ ասել, որ պատերազմն սկսվեց «Կոլցո» գործողությամբ: Այսինքն՝ խորհրդային զորքերն սկսեցին պատերազմը, որովհետև մինչ այդ դեպքեր էին: Բայց պատերազմը, կարելի է ասել, հենց դրանից սկսվեց:

Բ.Կ.- *Հիշում եմ՝ «Միացման» համագումարին դուք այնտեղ էիք, ինչպես էին ընթանում շփումները ձեր և Ղարաբաղի տղաների միջև, ում հետ էիք շփվում:*

Դ.Շ.- Բոլորի հետ, ըստ էության: Սկզբնական շրջանում՝ 1988 թվականի կեսերից, Ղարաբաղում լուրջ դեմքեր էին Արկադի Մանուչարովը, Բորիս Դադամյանը: Այնուհետև, ազդեցություն ձեռք բերեցին Ռոբերտ Քոչարյանը, Մերժ Սարգսյանը: Առանց բացառության բոլորի հետ սերտ համագործակցել, աշխատել, շփվել ենք, որովհետև մենք մեկ ընդհանուր խնդիր ենք լուծել:

Բ.Կ.- *Դուք ինչպես ընդունեցիք, որ «Միացումը» իր համագումարում հայտարարեց, որ մտնում է ՀՀՇ-ի կազմի մեջ: Անսպասելի էր:*

Դ.Շ.- Բացարձակապես անսպասելի չէր: Բայց այդ հայտարարու-

թյունը իրականում միս ու արյուն չստացավ: Եվ գուցե դա ճիշտ էր: Այն ժամանակ մենք ՀՀՇ-ում բավական հստակ դիրքորոշում ունեինք, որ ՀՀՇ-ն զուտ հայաստանյան կազմակերպություն պետք է լինի: Հատկապես, երբ Ղարաբաղը հռչակեց իր անկախությունը, արդեն ակնհայտ էր, որ բոլոր կուսակցությունները, կուսակցական կառույցները պետք է լինեն միմիայն Հայաստանի Հանրապետությունում: Ի տարբերություն շատ ու շատ կուսակցությունների՝ մենք հստակ այն դիրքորոշումն էինք պահում, որ ՀՀՇ-ն քաղաքական գործունեություն պետք է ծավալի միմիայն ՀՀ տարածքում: Եվ «Միացումի» այդ հայտարարությունը իրականում, փաստորեն, չիրագործվեց: Կարծում եմ՝ դա բավականին ճիշտ էր, որովհետև կդրվեր և հետևողականորեն շարունակվում էր Ղարաբաղի ինքնորոշման հարցի առաջ քաշումը: Մինչև Հայաստանում 1998 թվականի իշխանության բռնազավթումը այդ քաղաքականությունն էր իրականացվում, որը տվեց բավական շոշափելի դրական արդյունքներ թե ներքին, թե արտաքին քաղաքականության մեջ: Հետո արդեն... երևի դրա մասին չխոսենք, Հայաստանում իշխանափոխությունից հետո խեղաթյուրվեց այդ խնդիրը:

Բ.Կ.- *Ջոկատների կազմավորման խնդրում դուք ինչ մասնակցություն ունեցաք:*

Դ.Շ.- Առաջին ջոկատները կազմավորվեցին և Ղարաբաղում, և, իհարկե, Հայաստանում: Պաշտպանության հարցերը չափազանց կարևոր էին: Անկեղծ ասեմ, որ ջոկատների կազմավորումը, ըստ էության, սկսվեց 1988 թվականից: Խոր ընդհատակում այդ հարցերով զբաղվել ենք Վանո Միրզեխանյանի հետ: «Ղարաբաղ» կոմիտեում այդ հարցերով Ալբերտ Բաղդասարյանն էր զբաղվում, և, իհարկե, ես: Երասխի դեպքերից հետո այդ ջոկատները հանձնեցինք Վազգեն Սարգսյանին: Եվ այդ ջոկատային համակարգը՝ թե Ղարաբաղում, թե Հայաստանում, արդարացված էր: Դա միակ համակարգն էր, որ այդ տարիներին կարող էր գործել: Խորհրդային Միության հատուկ ծառայությունները նույնպես սկսեցին Հայաստանում իրենց հսկողության տակ ձևավորել ջոկատներ, խոսքս մասնավորապես ՀԱԲ-ի մասին է, որպեսզի ապակայունացնեն իրավիճակը: Նրանք իրենց մեթոդներով էին դա անում: 1988 թվականից հետո Հայաստանում ստեղծվել էր երկիշխանություն. կոմկուսը պաշտոնական իշխանությունն էր, երկրորդ

իշխանությունը «Ղարաբաղ» կոմիտեն էր: Մինչև 1990 թվականի ընտրությունները և ընտրություններից հետո ԳԽ առաջին նիստը Հայաստանում բացահայտ երկիշխանական վիճակ էր տիրում: Առաջին ջոկատները գրեթե զինված չէին, առավելագույնը՝ որսորդական հրացաններով: Հետո, քանի որ Խորհրդային Միությունը ժամ առ ժամ թուլանում էր, հնարավոր էր դառնում տարբեր ճանապարհներով զենք ձեռք բերել: Մի քիչ առաջ անցնելով ասեմ, որ Խորհրդային Միության փլուզման արդյունքում Ադրբեջանում մոտ չորս ու կես անգամ ավելի զենք-զինամթերք, սպառազինություն մնաց, քան Հայաստանում: Չեմ ուզում շատ մանրամասնել ջոկատների ձևավորման հետ կապված հարցերը, բայց այդ ջոկատները չափազանց կարևոր դեր կատարեցին: Այդ ջոկատները գոյատևեցին մինչև անկախության շրջանը, Պաշտպանության նախարարության ստեղծումը, և արդեն կազմավորված պետական կառույցների մեջ մտան: Իմիջիայլոց, շատ կուսակցություններ դեմ էին, որ դրանք մտնեն Պաշտպանության նախարարության ենթակայության տակ:

Բ.Կ.- *Դուք ինչպես եք բացատրում Շահումյանի կորուստը:*

Դ.Շ.- Անկեղծ ասած՝ Շահումյանի կորուստը Ադրբեջանի գործողության արդյունքը չէր, Խորհրդային Միության զորքերի միջամտության արդյունք էր:

Բ.Կ.- *Ես ուրիշ բան նկատի ունեմ, այնտեղ կուսակցական թեքում կար՝ հստակորեն դաշնակցական էր: Ինքս էլ ակնարկել եմ Շահենին, որ դա վտանգ է ներկայացնում, Հայաստանում իշխանությունը ՀՀՇ-ն է: Գուցե ճկունություն լիներ... նրանք ոչ Ստեփանակերտի հետ կարողացան լեզու գտնել, ոչ այստեղ, ճիշտ է, Վազգենի հետ ինչ-որ կերպ կապ կար, բայց դա թույլ էր:*

Դ.Շ.- Կապը, իսկապես, կար: Ես ինքս շատ եմ եղել Շահումյանում: 1990 թվականի ամռանը Բուզլուխ, Էրքեջ, Մանաշիդ գյուղերի վրա հարձակումներ սկսվեցին, արդեն ադրբեջանական ՕՄՕՆ-ն էր: Ես այնտեղ էի, Շահենի հետ բավական մտերիմ հարաբերությունների մեջ ենք եղել: Երբ Շահումյանում էի, Շահենենց տանն էի ապրում: Այնուամենայնիվ, Շահումյանի կորուստը ես չէի կապի այդ հակասությունների հետ: Իմ կարծիքով, ռազմատեխնիկական առումով չափազանց բարդ էր Շահումյանը պահելը: Հաղորդակցությունն ընդամենը ուղղաթիռներով էր:

Ուղղաթիռները շատ հաճախ գնդակոծվում էին: Եկեք չմոռանանք, որ դրանից հետո՝ արդեն 1992 թվականին, Ադրբեջանը Ղարաբաղի՝ տվյալ դեպքում նկատի ունեմ ԼՂԻՄ-ի, տարածքի հիսուներկու տոկոսը օկուպացրել և վերցրել էր իր հսկողության տակ, միայն Շահումյանը չէր:

Բ.Կ.- Հետո Շահենը զոհվեց ուղղաթիռով:

Դ.Շ.- Շահենի զոհվելը մինչև հիմա առեղծված է: Ես մինչև հիմա շատ լուրջ կասկածներ ունեմ պաշտոնական վարկածի վերաբերյալ:

Բ.Կ.- *Դա կարող էր մեր կողմից արված լիներ:*

Դ.Շ.- Չգիտեմ, ես, այնուամենայնիվ, որևէ այլ վարկած չեմ բացառում: Պաշտոնական վարկածները... Ի՞նչ է նշանակում պաշտոնական վարկած. պաշտոնական որևէ քննություն անցկացնելու հնարավորություն չկար: Բայց դա մինչև հիմա, կրկնում եմ, առեղծված է: Ես դա համարում եմ առեղծված: Շահենը դաշնակցության հետ էլ խնդիրներ ուներ, լինելով ընդգծված առաջնորդ, շատ մեծ ներդրում ունենալով այդ ամեն ինչում: Շատ ցավալի էր Մեղրյան Շահենի կորուստը: Մենք շատ մտերիմ էինք իրար հետ:

Բ.Կ.- *Երբ Շահումյանը հանձնվեց, նրանք նահանջեցին անտառ, անտառում փորձեցին ազատագրական շարժում անել, և նրա դեմ թերթերը բավականին սուր էին գրում՝ իբր նա դավաճանեց, և այլն:*

Դ.Շ.- Ես հիշում եմ, որ նույնիսկ ԳԽ-ում հատուկ Շահումյանի համար հանձնաժողով ստեղծվեց, ես էլ էի այդ հանձնաժողովի կազմում: Մի անգամ ընդամենը արվեց... Առնվազն ստորություն էր Մեղրյան Շահենին նման պիտակներ փորձել կպցնելը:

Բ.Կ.- *Բայց հենց ՀՀՇ-ի թերթերն էլ բավական գրում էին...*

Դ.Շ.- Ես չեմ հիշում, որ ՀՀՇ-ի թերթերը գրեին այդ մասին:

Բ.Կ.- *Գրում էին... Ցավալի էր:*

Դ.Շ.- Ստորություն էր Շահենի դեմ այդպիսի բան գրելը:

Բ.Կ.- *Ես գնացի անտառում նրան հանդիպեցի, հարցազրույց վերցրի՝ ցույց տալու, որ նրանք պատերազմում են:*

Դ.Շ.- Ես մանրամասն գիտեմ այդ պատերազմական գործողությունները, նա միշտ ինձ հետ կապի մեջ է եղել:

Բ.Կ.- *Նրանց շարժումը բավականին արդյունք տվեց:*

Դ.Շ.- Այո, իհարկե: Ցավոք սրտի, կազմակերպչական իմաստով չհաջողվեց բարձրացնել այդ շարժումը, հիմնականում, ես կասեի, օբյեկտիվ պատճառներով: Հակասություններ կային Շահենի և Ղարաբաղի իշխանությունների միջև, և բավական խորն էին այդ հակասությունները: Հիմնական պատճառը, ես կարծում եմ, այն էր, որ Մեղրյան Շահենը ընդգծված առաջնորդ էր՝ օժտված առաջնորդի բոլոր հատկանիշներով: Ի տարբերություն շատ շատերի՝ նա պատասխանատվությունից, որոշում ընդունելուց երբեք չի խուսափել: Վճռական մարդ էր Շահենը:

Բ.Կ.- *Ուղղակի նրա՝ Ստեփանակերտում իշխանության գալու խնդիր կար:*

Դ.Շ.- Ես չէի ցանկանա այդքան բացել փակագծերը, ակնհայտ էր, որ մրցակցության հարցեր էլ կային, որովհետև Շահենը մեծ հեղինակություն էր:

Բ.Կ.- *Պատերազմից դուք ինչ հիշողություններ ունեք:*

Դ.Շ.- Չէի ցանկանա ձեզ ծանրաբեռնել հիշողություններով, բայց ես կարծում եմ, որ պատերազմում մի քանի փուլեր եղան: Ես արդեն նշել եմ, որ երբ Շուշին, Լաչինը անցան Ղարաբաղի ուժերի վերահսկողության տակ, դա առաջին լուրջ հաջողությունն էր: Բայց դրանից հետո ունեցանք բավական լուրջ կորուստներ, որովհետև Ադրբեջանը բավականին լուրջ հարձակումներ սկսեց: Ամռանը ԼՂԻՄ-ի հիսուներկու տոկոսն արդեն Ադրբեջանի հսկողության տակ էր:

Բ.Կ.- *Կցանկանայի, որ ներքին հարցերը, որոնք դեռ չեն բացվել, դուք բացեիք:*

Դ.Շ.- Ներքին խոհանոցում այդքան շատ ներքին հարցեր իրականում չկային, ինչքան այդ մասին խոսվում էր: Այդ իրավիճակում ակնհայտ էր, որ Ադրբեջանը (1992 թվականից ես արդեն ակտիվ բանակցությունների մեջ էի կարգավորման հարցով) հույսը դրել էր բացառապես ռազմական լուծման վրա: Ըստ էության, 1992 թվականի աշնանը դա մեզ համար արդեն անառարկելի ճշմարտություն էր. Ադրբեջանի ողջ քաղաքականությունը դրա վրա էր հիմնված: Ղարաբաղի պատերազմում բեկում եղավ: Առաջին կարևոր բեկումը Շուշին և Լաչինն էին, երկրորդը՝ Քելբաջարն էր: Ես կարծում եմ, որ Քելբաջարով ադրբեջանական ռազմական մեքենայի մեջքը կոտրվեց, առաջին հերթին՝ բարոյահոգեբանական առումով, որովհետև, հիմա բաց կարող եմ ասել, որ այն դիմադրությունը, որ սպասվում էր, թե Ադրբեջանը պետք է ցույց տար Քելբաջարում, բացարձակապես չեղավ: Եվ նույնիսկ ռազմական գործողու-

թյունների ծրագրավորողները Ղարաբաղում ծրագրում էին շտաբը... ռազմական այդ գործողության իրականացման նրանց հաշվարկները շատ ավելի մեծ ժամանակահատվածի համար էին, բայց սպասվելիք լուրջ դիմադրությունը չեղավ:

Բ.Կ.- *Այսինքն՝ «բլից-կրիգ» եղավ:*

Դ.Շ.- Ես չէի ցանկանա այդ խոսքը օգտագործել, բայց Ղարաբաղի կողմից, ընդգծենք, որովհետև... տեղական հայկական ուժերն են դա իրականացրել: Այնուամենայնիվ, «բլից-կրիգ» չկոչենք, որովհետև մենք զոհեր ենք տվել Քելբաջարում, բայց սպասվածից շատ ավելի թույլ դիմադրություն եղավ: Դրանից հետո էլ Ադրբեջանը այդ քաղաքականությունը չթողեց:

Բ.Կ.- *Հետո մի խնդիր էլ կար, պետք էր հաշվի առնել, որ Բաքուն Օմարի լեռնանցքով ռազմաճակատ պահել չէր կարող:*

Դ.Շ.- Արդեն 1993 թվականի վերջին, 1994-ի սկզբին Օմարի լեռնանցքում մեզ համար շատ ծանր իրավիճակ ստեղծվեց: Դրանք բոլորովին ուրիշ գործողություններ էին, որովհետև Ադրբեջանի իշխանությունը փոխվել էր. Ալիևը եկել էր իշխանության և 1993 թվականի վերջին ծրագրեց լայնածավալ հարձակում ամբողջ ճակատով: Մենք նախօրոք գիտեինք այդ մասին, նույնիսկ հարձակման օրը գիտեինք՝ դեկտեմբերի տասնվեցից տասնութը, ամենաուշը՝ քսանին: Այդ ամեն ինչը արտահայտվում էր Ադրբեջանի արտգործնախարարի և ԱԺՃ-ի անդամների հետ բանակցությունների ժամանակ, ակնհայտ էր: Մենք գիտեինք, և սկսվեց Ադրբեջանի այդ չորսամյա հարձակումը, որը պատերազմի ամենածանր շրջանն էր: Թե՛ հայկական, թե՛ ադրբեջանական կողմերից ամենաշատ զոհերը հենց այդ շրջանում եղան: Օմարի վրա երկրորդ հարձակմանը Հեյդար Ալիևը ծախսել է ավելի քան հարյուր միլիոն դոլար: 1993 թվականի վերջին, 1994-ի հունվարին Օմարում կրիտիկական իրավիճակ էր ստեղծվել՝ ցուրտ ձմեռ լեռներում... Բայց հաջողվեց դիրքերը պահել, և ճակատային գիծը այնպես ուրվագծվեց, որ այն ամենակարճն էր և նպաստավոր էր մեզ համար: Սրանով չեմ ուզում պատասխանել հատկապես վերջին վեց-յոթ տարիների երբեմն բավական հիմնազուրկ այն պնդումներին, որ մամուլում շատ հաճախ հայտնվում էր: Ռազմական գործողությունների արդյունքում Ղարաբաղը ստացել է առավելագույնը, ինչ հնարավոր էր ստանալ: Ավելին՝ դա արդեն տրամաբանությունից զուրկ է: Այսօր էլ այն պահպանվում է, դա առավելագույնն էր, որ հնարավոր էր ստանալ ռազմական գործողությունների արդյունքում:

Բ.Կ.- *Մի ճակատի դեպքում, եթե երկրորդը չկա...*

Դ.Շ.- Այո, ես հենց դրա մասին էի ուզում ասել: Մեզ հաջողվում էր ռազմական գործողությունները ներդաշնակել արտաքին քաղաքականության, բանակցային պրոցեսի հետ: Այդ առումով մենք արտաքին հարաբերություններում բավականին լուրջ հաջողություններ ունեցանք. հաջողվեց հասնել նրան, որ Թուրքիան ուղղակիորեն չմասնակցի պատերազմին: Մի քանի անգամ կառավարությունը այդ հարցը ամենայն լրջությամբ պաշտոնապես քննարկել է: Այնուամենայնիվ, հաջողվեց Հայաստանին զերծ պահել միջազգային սանկցիաներից. Անվտանգության խորհրդի մեթոդ-բանաձևերում Հայաստանի վերաբերյալ որևէ պահանջ չկա, բացի այն պահանջից, որ Հայաստանը պետք է օգտագործի իր ազդեցությունը Ստեփանակերտի վրա:

Բ.Կ.- *Իսկ Հայաստանը կարող էր խուսափել «հակամարտող կողմ» statusից, ինչու չխուսափեց:*

Դ.Շ.- Հայաստանը ներքաշված է եղել այդ պատերազմի մեջ: Հայաստանը ներքաշվեց ռազմական գործողությունների մեջ, որովհետև Ադրբեջանը սկսեց հարձակումներ նաև Հայաստանի վրա: Ըստ էության, միջազգային հանրությունը դա փաստացիորեն ընդունեց, և 1994 թվականի Բուդապեշտում կայացած ԵԱՀԿ-ի գագաթաժողովը ուղղակիորեն ֆիքսեց ղարաբաղյան կոնֆլիկտի ուրվանկարը (կոնֆիգուրացիան) երեք կողմերով՝ Ադրբեջան, Ղարաբաղ և Հայաստան:

Բ.Կ.- *Երեքը գոնե պահվեր, ինչու չկա:*

Դ.Շ.- Դա արդեն առանձին խոսակցության նյութ է: Շատ կարճ ասեմ՝ Ռոբերտ Քոչարյանի իշխանության գալուց հետո արմատապես, ինչպես ինքն է ասում, փոխվեց այդ հարցի քաղաքականությունը: Բանակցությունների ընթացքում Քոչարյանը բազմիցս հայտարարել է, որ ինքը ներկայացնում է և՛ Ղարաբաղը, և՛ Հայաստանը: Դրա մեղքը և պատասխանատվությունը ամբողջովին կրում է Հայաստանի ներկայիս ռեժիմը, որը բերեց իր շատ դառը պտուղները: Ես վախենում եմ, որ ավելի դառը «պտուղներ» մենք դեռ պիտի ստանանք: Հայաստանի քաղաքականությունը հետևյալն էր. բանակցող կողմերը Ղարաբաղն ու Ադրբե-

ջանն են, և ցանկացած համաձայնություն, որ նրանք ձեռք են բերել, Հայաստանը կընդունի: Բայց Հայաստանը ամբողջովին պատասխանատվություն էր կրում Ղարաբաղի համար և ասում էր, որ խնդիրը խաղաղ ճանապարհով պետք է լուծվի: Ցանկացած ռազմական գործողության դեպքում Հայաստանը ամբողջովին պատասխանատու էր Ղարաբաղի համար և համարժեք ռազմական պատասխաններ էր տալիս, դա էր այդ քաղաքականությունը: Այսօր արդեն խեղաթյուրված քաղաքականություն է, և այս քաղաքականության արդյունքում... դա ընդամենը տարածքային վեճ է, ոչ թե ինքնորոշման իրավունք, մարդու իրավունքների խնդիր:

Բ.Կ.- *Ինձ հետաքրքրում է մինչև 1994 թվականը ադրբեջանական դիվանագետների հետ ինչ հանդիպումներ եք ունեցել:*

Դ.Շ.- Բազմաթիվ, տասնյակ հանդիպումներ ենք ունեցել՝ Հեյդար Ալիևից սկսած մինչև Ադրբեջանի բոլոր բանագնացները, նրա անձնական ներկայացուցիչները: Ո՞վքեր էին հիմնականում բանակցում՝ արտգործնախարարները...

Բ.Կ.- *Համեմատած մեր թիմի հետ՝ ինչ գնահատական կտայիք:*

Դ.Շ.- Կարծում եմ, որ այդ տարիներին ադրբեջանական դիվանագիտությունն անընդհատ անհաջողություններ էր ունենում, որովհետև նրանց համար քաղաքականությունը ռազմական հարցի լուծում էր: Նրանք բազմիցս մերժել են զինադադարները, հրադադարները, իրենք խախտում էին, դա արձանագրված է միջազգային փաստաթղթերում: Եվ արտաքին քաղաքականության մեջ դա իրենց դնում էր բավական ծանր իրավիճակում: Չէի ասի, թե նրանց դիվանագիտական մակարդակը էապես զիջում էր, իրենց քաղաքական հրահանգավորումն էր խանգարում, որպեսզի նրանք կարողանային հասնել դրական արդյունքների: Ճիշտ այնպես, ինչպես մեր այսօրվա դիվանագետները, որ անընդհատ կորուստներ են ունենում, որովհետև քաղաքական ձևակերպումը, որը Ռոբերտ Քոչարյանի կողմից դրված է, նրանց հնարավորություն չի տալիս իրականացնել, այստեղ քաղաքականության հարց է, դիվանագիտության հարց չէ: Ովքե՞ր էին բանակցում. սկզբում Ադրբեջանի արտգործնախարարը Թոֆիկ Գասիմովն էր՝ շատ կիրթ, ինտելեկտուալ անձնավորություն, իմիջիայլոց, պետք է ասեմ՝ նա միտված էր խաղաղության: Թոֆիկ Զուլֆիգարովն էր բանակցում, հետագայում նա դարձավ արտգործնախարար: Իր լիազորությունների սահմաններում նա նույնպես բավական կոնստրուկտիվ էր: Վաֆա Գյուլիզադեն, նրա համար նույնպես տրամաբանությունը արգումենտ էր: Նույնը չեմ կարող ասել Արազ Աբիզադեի մասին: Նրա դիրքորոշումները միշտ լինում էին ավելի կոշտ: Թեև ես կարծես թե այդ գնահատականները տալու իրավունքը չունեմ, այնուամենայնիվ, նրա այդ դիրքորոշումները իր երկրի համար բավական բացասական հետևանքներ ունեցան: Անընդհատ զինադադարը մերժելու արդյունքում Ադրբեջանը կորցնում էր նորանոր տարածքներ: Վերադառնալով 1993-1994 թվականների չորսամյա այդ դաժան պատերազմին, ասենք, որ Ադրբեջանի այդ հարձակումը ամբողջովին և վերջնականապես տապալվեց ապրիլին: Դրանից հետո Ադրբեջանը ինքը հայտարարեց, որ պատրաստ է հրադադար կնքել: Մայիսին կնքվեց այդ հրադադարը, սկզբից մեկ ամսով, հետո երկարաձգվեց: Անկեղծ ասած, այդ ժամանակ՝ մայիս-հունիս ամիսներին, մենք վստահ չէինք, որ դա հարատև զինադադար է, որովհետև բազմաթիվ հրադադարներ էին կնքվել, որոնք խախտվել էին: Բայց ամառվա ընթացքում պարզվեց, որ այս հրադադարը բավական տևական է: Արդեն տասներկու տարի է ֆորմալ շարունակվում է, չնայած այն բազմաթիվ խախտումներին, որոնք կան ճակատային գծում: Ադրբեջանի կողմից հիմնական բանակցողները եղել են այդ անձինք, որոնց ես նշեցի: Մի քանիսի հետ մինչև հիմա էլ երբեմն հանդիպում ենք միջազգային կոնֆերանսներում, ֆորումներում: Անձնական հարաբերությունները բավական նորմալ են եղել՝ չնայած տրամագծորեն իրար խիստ հակառակ մեր դիրքորոշումներին և տեսակետներին:

Բ.Կ.- *Դուք դիվանագիտական հարաբերությունների մեջ էիք, ինչպես էիք նայում տեղեկատվական պատերազմի խնդրին՝ նրանց և մեր կողմից:*

Դ.Շ.- Դա եղել է իմ աշխատանքի կարևորագույն հատվածը, և ես հստակ կարող եմ ասել, որ մինչև 1994, նույնիսկ՝ 1995 թվականը մեզ հաջողվում էր տեղեկատվական այդ ոլորտներում բավականին լուրջ հաջողությունների հասնել: Ոչ միայն նրա համար, որ մենք, կարծես թե, ավելի արդյունավետ էինք աշխատում: Հիմնական պատճառը նորից պետք է, նշեմ՝ Ադրբեջանի ռազմատենչ քաղաքականությունն էր և մեր քաղաքականությունը, որ գնում էր հրադադար հաստատելուն, այնուհետև

այդ հրադադարը դարձնել ավելի կայուն և գնալ բանակցությունների: Այդ քաղաքականությունն էր հիմնական պատճառը, որ մեզ հաջողվում էր բավական լուրջ արդյունքների հասնել նաև տեղեկատվական մրցակցության մեջ:

1995-1996 թվականներին, կարծում եմ, մեր դիրքերն ավելի թուլացան: Իսկ հիմա, ցավոք սրտի, բավական խղճուկ վիճակում ենք հայտնվել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հարցերում:

Բ.Կ.- *Ադրբեջանը ուներ լուրջ խոցելի տեղ՝ մուսուլմանական, մահմեդական փոքրամասնությունները: Ինչո՞ւ մենք չկարողացանք օգտագործել դրանք:*

Դ.Շ.- Որոշ փորձեր արվել են դա օգտագործելու, բայց ինքս ի սկզբանե այդ ուղղությունը, անկեղծ ասած, անհեռանկարային եմ համարել, և այդպես էլ ստացվեց: Կարծում եմ, որ Ադրբեջանի ներսում բավարար հիմքեր չկային, որպեսզի փորձեինք դրանք օգտագործել Ադրբեջանում ներքին անկայունություն ստեղծելու համար: Ես ընդգծեմ մի պահ, որ մեզ հաջողվեց այնպես անել, որ այս հակամարտությունը չընկալվի որպես կրոնական հակամարտություն: Ուզում եմ նշել, որ երբ Ադրբեջանում իշխանության էր Էլչիբեյը, նման փորձեր եղան՝ հակամարտությանը կրոնական երանգ, և ընդհանրապես՝ կրոնական հիմք տալու: Բայց հետո Հեյդար Ալիևը այդ փորձերը չշարունակեց: Մի քանի անգամ ես նրա հետ անձնական շփումներ եմ ունեցել, և ինձ մոտ այն տպավորությունն է եղել, որ ինքն էլ է դա համարում բավական վտանգավոր: Ես պետք է նշեմ, որ Հեյդար Ալիևի իշխանության գալուց հետո այս հարցում լուրջ համաձայնություն կար մեր և Ադրբեջանի ղեկավարության հետ: Հակամարտությանը կրոնական երանգ տալը չափազանց վտանգավոր ուղղություն կլիներ: Իսկ ինչ վերաբերում է ձեր ասած հարցին, կարծում եմ, որ դրա համար Ադրբեջանի հասարակությունում բավարար հիմքեր չկային: Եղան ինչ-որ փորձեր, և Ադրբեջանում այդ մուսուլմանական փոքրամասնությունները փորձեցին ակտիվանալ, նույնիսկ ապակայունացում ստեղծել, բայց այդ փորձերը բավական արագ ճնշվեցին Ադրբեջանի իշխանությունների կողմից: Կարծում եմ, որ նույնիսկ մեր որոշ փորձագետների մոտ այդ հիմքերը մի փոքր չափազանցված էին:

Քելբաջարի գործողությունների ժամանակ ժնևում գնում էր Մինսկի խմբի, կարելի է ասել, անդամ հինգ պետությունների մասնակցությամբ նիստը: Մինսկի խմբում տասներկու պետություններ էին: Բանակցությունները պետք է գնան այս ֆորմատով՝ Հայաստան, Ադրբեջան, ԱՄՆ, Ռուսաստան, Թուրքիա: Դրա իմաստն այն էր, որ եթե այս հնգյակում ինչ-որ համաձայնություն ձեռք բերվի, արդեն ակնհայտ է, որ այն տասներկուսը միանգամից կհաստատեն: Ժնևյան երեք-չորս ռաունդ բանակցություններ գնացին: Քննարկվել էր մի շատ կարևոր հարց՝ պետք էր մշակել և արդեն Մինսկի ամբողջ խմբով՝ տասներկու պետություններով ընդունել ԵԱՀԿ դիտորդների մանդատը, այսինքն՝ լիազորությունները, որը, ի վերջո, ընդունվեց: Քելբաջարյան գործողությունները համընկան հենց այդ ժնևյան բանակցությունների հետ: Պետք է նշեմ, որ դիվանագիտական առումով բավական ծանր վիճակում էի գտնվում: Ես նախօրոք գիտեի՝ ինչ է եղել: ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Թուրքիայի մյուս ներկայացուցիչներն էլ իմացան, թե Քելբաջարում ինչ է տեղի ունեցել: Ընդ որում, Ադրբեջանի արտգործնախարար Թոփիկ Գասիմովը շատ ավելի ուշ իմացավ այդ մասին: Երկար բանակցելուց հետո... Թե՛ Ռուսաստանը, թե՛ ԱՄՆ-ը, առավել ևս՝ Թուրքիան, առաջարկում էին անմիջապես Հայաստանին դատապարտելու որոշում ընդունել: Իմ խնդիրն էր՝ շարունակել բանակցությունները, ամեն ինչ անել, որպեսզի այդ ձևաչափով ոչինչ չընդունվի: Ես կարծում եմ, որ Ադրբեջանի արտգործնախարարը լուրջ սխալ կատարեց: Բայց դա իր սխալը չէր: Նա Բաքվից հրահանգ ստացավ թողնել բանակցությունները: Ես կարծում եմ, որ դա կոպիտ սխալ էր նրանց կողմից, և Էլչիբեյի՝ Ադրբեջանի համար ոչ արդյունավետ քաղաքականության արդյունքն էր: Նա՝ Ադրբեջանի արտգործնախարարը, որպես անձնավորություն, դրական մարդ էր, գիտնական էր: Երեկոյան նա հյուրանոցում երեկվա իրադարձության հետ կապված իրենց որոշման առթիվ ինձ ասաց, որ ինքը համաձայն չէ այդ որոշման հետ, բայց ստիպված է եղել ենթարկվել Էլչիբեյի հրահանգներին: Ինձ համար հաճելի անակնկալ էր, և ես դա անմիջապես հեռախոսով զեկուցեցի Լևոն Տեր-Պետրոսյանին: Ամերիկյան միսիայի շենքում էր այդ հանդիպումը. մեկ՝ ամերիկյան, մեկ՝ ռուսական միսիայի շենքերում էին լինում հանդիպումները: Շատ լավ հիշում եմ ամեն պահը, բանակցությունների ամեն խոսքը: Ասացի, որ Ադրբեջանի արտգործնախարարը հեռացավ միսիայի շենքից, Տեր-Պետրոսյանն էլ հաճելիորեն զարմացավ:

Բ.Կ.- *Իսկ ամերիկացիներն ինչպես ընկալեցին:*

Դ.Շ.- Ամերիկացիներից Ջեկ Մարեսկան էր՝ շատ բարձր կարգի դիվանագետ: Ամերիկացիները, առավել ևս՝ Թուրքիայի պատվիրակ Ջանդա Նազերովը՝ շատ հմուտ դիվանագետ, ինչպես նաև՝ Կազիմիրովը, նրան համոզում էին, որ նա մնա և փորձի ինչ-որ բան անել: Բայց նա, փաստորեն, լքեց բանակցությունների դահլիճը, և, ընդհանրապես, ամերիկյան միսիայի շենքը: Բոլորը դա ընդունում էին որպես շատ կոպիտ սխալ, որովհետև իրավիճակը նրա օգտին էր, և նա կարող էր պայքարել, որպեսզի նույն այդ հնգյակի կողմից բավական լուրջ փաստաթուղթը լինի: Չնայած ես ամեն ինչ անում էի, որ չլինի: Հայտնի չէ՝ կլիներ այդ փաստաթուղթը, թե չէ, բայց նա բաց թողեց իր համար բավական մեծ այդ շանսը: Դրանից մի քանի օր հետո եղավ Անվտանգության խորհրդի «822» հայտնի բանաձևը: Մենք դիվանագիտական շատ մեծ ջանքեր գործադրեցինք, որպեսզի բանաձևը լինի այնպես, ինչպիսին այն կա: Ֆիքսվեց, որ Քելբաջարը գրավվել է տեղական հայկական ուժերի կողմից, այսինքն՝ Ղարաբաղի կողմից: Հետագայում թե Մարեսկայի, թե մյուսների հետ հանդիպումներում մենք միշտ հիշում ենք այդ էպիզոդը: Վերջերս Ջանդա Նազերովի հետ հանդիպեցի, նա արդեն պաշտոնաթող էր լինելու: Մինչև հիմա նա ասում է, որ որևէ տրամաբանական բացատրություն չկար այդ քայլի մեջ: Այն ժամանակ բանակցությունները չափազանց ինտենսիվ էին՝ մի քանի ձևաչափերով էին գնում՝ ԵԱՀԿ Մինսկի խումբ, կար Ռուսաստանի միջնորդական առաքելությունը: Ռուսաստանի կողմից կային երկու իրարից տարբերվող միջնորդական առաքելություններ. մեկը Ռուսաստանի Արտաքին գործերի նախարարության կողմից էր, մյուսը՝ Պաշտպանության նախարարության կողմից: Եվ ես չէի ասի, թե նրանք միշտ իրար հետ, մեղմ ասած, համահունչ էին: 1992 թվականին եղավ Իրանի միջնորդությունը, այնուհետև՝ Ղազախստանի միջնորդությունը: Բանակցությունները գնում էին չափազանց ինտենսիվ, և դա ամենօրյա ծանր աշխատանք էր: Նման դեպքեր շատ են եղել, երբ Ադրբեջանի ներկայացուցիչներն են դադարեցրել բանակցությունները: Երբևէ չի եղել, որ մենք դադարեցնենք, և բանակցությունները տապալվեն մեր մեղքով: Բոլոր միջազգային ատյաններում, ֆորումներում մենք փորձում էինք հարցը մտցնել օրակարգ, Ադրբեջանը ամեն ինչ անում էր, որպեսզի հարցը չմտնի օրակարգ, չքննարկվի:

1998 թվականից հետո պատկերը փոխվել է: Տարբեր տեղեր Ադրբեջանը փորձում է հարցը մտցնել օրակարգ, մերոնք լավագույն դեպքում հանդիսատեսի տոնով ասում են. «Մեզ հաջողվեց, որ հարցը չքննարկվի»: Ինչո՞ւ, եթե քո դիրքերն ամուր են, ինչո՞ւ չես ուզում, որ քննարկեն: Որովհետև սխալ քաղաքականություն է վարվում՝ 1998 թվականից սկսած:

Բ.Կ.- *Այն ժամանակ արտգործնախարարը...*

Դ.Շ.- Փափազյան Վահանն էր: Վահանից առաջ պաշտոնակատար էր Արման Կիրակոսյանը, նրանից առաջ՝ Բաֆֆի Հովհաննիսյանն էր:

Բ.Կ.- *Դուք նրանց հետ շփվել եք, ինչպես եք գնահատում նրանց գործունեությունը:*

Դ.Շ.- Քանի որ այն ժամանակ ընդհանուր քաղաքականությունը ճիշտ է եղել, համարում եմ, որ ընտրված է եղել միակ ճիշտ արտաքին քաղաքականությունը, իսկ Ղարաբաղի հարցը արտաքին քաղաքականության մեր հիմնախնդիրն է եղել: Բանակցային պրոցեսի պատասխանատվությունը ինձ վրա էր դրված նախագահի կողմից: Որևէ խնդիրներ բացարձակապես չեն եղել, եղել է համագործակցություն, բավական սերտ համագործակցություն: Ամենը, ինչ արվում էր, ընդհանուր քաղաքականության կոնցեպտով էր արվում: Իհարկե, մանր-մունր սխալներ, վրիպումներ միշտ էլ կարող են լինել: Երբ հետադարձ հայացքով նայում ես, միշտ էլ կարելի էր ավելի լավ անել: Բայց ընդհանուր առմամբ ես այդ ամենը՝ ինչ տեղի ունեցավ այդ տարիներին, գնահատում եմ բավական դրական: Մեզ հետ համեմատած՝ Ադրբեջանի կողմից բանակցողները մի թույլ տեղ էլ ունեին. նրանք ինֆորմացված չէին ռազմական հնարավոր գործողություններից, իրենց հանրապետության ընդհանուր անտեսական վիճակից: Ռազմական և արտաքին քաղաքական գործողությունների ներդաշնակումը մեզ մոտ ավելի լավ էր ստացվում, քան Ադրբեջանի:

Պատմում է բարոնուհի ՔԵՐՈԼԱՅՆ ՔՈԿՍԸ (Անգլիայի Լորդերի պալատի փոխխոսնակ), Ստեփանակերտ, 1993, հունիս

- Դուք մասնագետների, լրագրողների մեծ խմբով կրկին ԼՂՀ-ում եք, նորից դեղորայք, և այլ բարեգործական օգնություն եք բերել Ստեփանակերտ, իսկ «Քրիստոնեական միջազգային զորակցություն» կազմակերպությունը բժշկական մի նոր մեքենա նվիրեց գինվորական հոսպիտային: Որպես Անգլիայի Լորդերի պալատի անդամ, ինչպես եք գնահատում Ղարաբաղի վերաբերյալ ԵԱՀԽ-ի Մինսկի խմբի վերջին փաստաթղթերը և դրանց ստորագրումը:

- Ինձ համար դժվար է հասկանալ այն ճնշումը, որ ԵԱՀԽ -ն գործում է Հայաստանի և ԼՂՀ-ի նկատմամբ: Հատկապես ինձ անհանգստացնում է համաձայնագրի ոչ համաչափությունը, ըստ որի Ղարաբաղը պետք է թողնի Քարվաճառի շրջանը, որտեղ Ադրբեջանն արագորեն կվերականգնի իր ռազմական հենակետերը: Չկա բնակչության անվտանգությունն ապահովող որևէ մի երաշխիք, Ադրբեջանի կողմից ոչ մի զիջում չի նախատեսվում: Կարելի է հասկանալ ղարաբաղցիներին, որոնք հայտնվելու են անորոշ վիճակում: Ոչինչ չի արվում փախստականների վերադարձը Մարտակերտի և Շահումյանի շրջաններ ապահովելու համար:

- Ինչու է միջազգային հանրությունը նման ճնշում գործադրում ղարաբաղցիների վրա:

- Ամբողջականությամբ դժվար է հասկանալ, թե ինչ է տեղի ունենում, քանի որ այս գործում ընդգրկված կողմերի պահվածքը հիմնականում բնորոշվում է որպես անբարո դիրքորոշում: Ճնշում է գործադրվում

թույլ կողմի վրա՝ սպառնալով, որ եթե չստորագրի, խիստ նեղության մեջ կհայտնվի Հայաստանը: Դիտորդները տեսել են, թե ձմռանն ինչ վիճակում էր հայտնվել Հայաստանը, ինչպես է շրջափակման մեջ առնվել նաև Թուրքիայի կողմից, և այս իրավիճակն օգտագործվում է Լեռնային Ղարաբաղի վրա ճնշում գործադրելու համար: Նպատակն այն է, որ ճնշման միջոցով Ղարաբաղն ու Հայաստանը դիմեն զիջողության և այդպես խուսափեն նման մի դաժան ձմեռից: Իմ գործընկերներն անհանգստացած են, որ միջազգային հանրությունը քիչ բան է անում այդ ճնշումը թուլացնելու ուղղությամբ: ԵԱՀԽ-ն ուղղակի ոչ մի քննադատության չի ենթարկում:

- ԵԱՀԽ-ի Մինսկի խմբի փաստաթղթերի ստորագրմանը հետևեցին ռազմական գործողությունները Լեռնային Ղարաբաղում: Դա չի՞ նշանակում, որ հենց միջազգային հանրությունը հարցին իր սիսալ մոտեցմամբ առիթ հանդիսացավ, որ խափսրվի զինադադարը:

- Ես կարծում եմ, որ ԵԱՀԽ-ի Մինսկի խմբի որոշ երկրներ շահագրգռված են, որ լարվածությունը մեծանա: Սակայն ես երկու հարցով եմ անհանգստացած: Առաջինը Արցախի բնակչության անվտանգության ապահովման միջոցառումների բացակայությունն է, չնայած Քարվաճառի ազատագրումը հայերի համար լուրջ հաջողություն էր: Իսկ Արցախի հայերը, ինչպես գիտենք, պատերազմ չեն ուզում: Ես ռազմաճակատում շատերի հետ եմ զրուցել և եկել եմ այն համոզման, որ ոչ ոք պատերազմ չի ուզում: Հայերը ևս կորուստներ ունեն և երբեք չեն ցանկացել, որ պատերազմ լինի. այն նրանց պարտադրված է: Ելնելով դրանից՝ մենք հանգում ենք հետևության, որ Ադրբեջանը ագրեսիա ձեռնարկող կողմ է: 1991 թ. բռնագաղթի հեղինակները հենց ադրբեջանցիներն են: Հայ բնակչության դեմ համատեղ գործում էին ադրբեջանական ՕՄՕՆ-ն ու ԽՍՀՄ ՆԳ զորքերը...

- Նկատի ունեցեք, որ բռնագաղթի առաջին դեպքը տեղի է ունեցել 1988-ի մարտին, Սումգայիթում, երբ տեղահանվեց 18 հազար հայ:

- Ես ասեմ միայն իմ տեսածի մասին: Նախ՝ ես այդ ամենի շուրջ զրուցել եմ Լուկյանովի, Նիազովի և Շապոշնիկովի հետ: Նրանք խոստովանում էին, որ դա իրոք տեղի է ունեցել, բայց արդեն պատմություն է: Մարտունաշենի և Գետաշենի բնակիչները մինչև հիմա փախստականի վիճակում են, ու նրանք իրենց վրա կրում են բռնագաղթվածների ողջ

ծանրությունը: Երկրորդ, որ կրկին ցույց է տալիս Ադրբեջանի ագրեսոր լինելը, նրա կողմից Հայաստանի ու Ղարաբաղի շրջափակումն է. դա մարդու իրավունքի բացահայտ խախտում է: Երրորդ՝ Ադրբեջանն առաջինը կիրառեց «Գրադ» կայանքը խաղաղ բնակչության դեմ: Չորրորդ՝ Ադրբեջանն առաջինն օգտագործեց օդուժը խաղաղ բնակչության նկատմամբ, ինքս բազմիցս ականատես եմ եղել նրա ռմբակոծություններին, տեսել եմ կեստոնանոց ռումբերի պայթյուններ Ստեփանակերտի բնակելի թաղամասերում: Նրանք առաջինն են կիրառել Երկիր-երկիր հրթիռները: Եվ ահա Ղարաբաղի խաղաղ ժողովրդի դեմ լայնածավալ հարձակում է կատարվել: Իսկ մենք գիտենք, որ Ղարաբաղի 160 հազար բնակչությունն իր գոյության համար պատերազմում է 7 միլիոնանոց Ադրբեջանի դեմ: Միջազգային հանրությունը պարտավոր է հասկանալ այս ամենը, պաշտպանել Ղարաբաղի ժողովրդին և ավելի լուրջ վերաբերվել արցախահայությանը երաշխիքներ տալու հարցում: Երկու կողմերի նկատմամբ գոյություն ունի քննադատության որոշակի տարրալուծում. հայկական կողմին քննադատում են Ադրբեջանի տարածքային ամբողջականության սկզբունքի խախտման, Լաչինի միջանցքի բացման համար, բայց և չեն քննադատում ադրբեջանցիներին շրջափակման համար, որն էլ հայերին ստիպեց բացելու միջանցքը: Այդ քննադատությունները նույն մակարդակի վրա չեն: Դա լուրջ խնդիր է: ԵԱՀԿ-ն պաշտպանում է տարածքային ամբողջականության սկզբունքը, և նրան երբեք չի հուզում այն հանգամանքը, որ մարդիկ մեռնում են սովից, որն էլ հենց հետևանք է մարդու իրավունքի խախտման:

- Մոսկվայի արտաքին գործոց նախարար Դուգլաս Հոգը վերջերս պատրամենտական կարծիքների բախման ժամանակ ասել էր, որ Ղարաբաղին կտրվի ինքնավար մարզի կարգավիճակ: Այդ մասին ինչ կարծիքի եք:

- Բրիտանական կառավարությունը պաշտպանում է Հայաստանի և Ղարաբաղի ստորագրած 9-ի փաստաթուղթը, բայց և կողմ է Ղարաբաղը տեսնելու ինքնիշխան Ադրբեջանի կազմի մեջ: Վերջերս մեր կառավարությունից ստացել եմ բաց նամակ, որտեղ հայտնվում է, որ Ադրբեջանի ղեկավարության հետ այս առիթով հանդիպում են ունեցել, ու ադրբեջանցիները խոստացել են պաշտպանել Ղարաբաղի բնակչության իրավունքը: Դա պաշտպանություն է գտել բրիտանական կառավարության կողմից: Ինքս անձամբ անհանգստացած եմ մեր կառավարության այդ դիրքորոշմամբ, որովհետև նրանում բացարձակապես բացակայում են երաշխիքները: Մարդու իրավունքները կրկին ոտնահարվում են: Այժմ Վիեննայում տեղի է ունենում մարդու իրավունքների հարցերի շուրջ խորհրդաժողով, շատ երկրներ արդեն դիմել են մարդու իրավունքների ընդունված նորմերի ավելի ճշգրիտ սահմանման պահանջով: Հասկանալի է, թե ինչպես է Ադրբեջանը յուրովի ներկայացնում մարդու իրավունքների պաշտպանությունը Ղարաբաղում:

- Ձեր այս առաքելության ժամանակ ինչ հանդիպումներ ունեցաք Արցախում, ինչ նպատակ էր հետապնդում ձեր այս այցը:

- Այս այցելությունն, անշուշտ, կապված է նախորդների հետ: Արցախցիները շարունակում են աշխատանքները իրավիճակի կայունացման ուղղությամբ: Եղանք Մարտունու շրջանի Հաղորդի գյուղում, որտեղ մասնակցեցինք ջրաղացի բացման տոնակատարությանը: Դա խորհրդանշում էր Ղարաբաղի անկոտրում կամքը՝ շարունակել կյանքն ու զարգանալ նախնիների երկրում: Այն խորհրդանշական էր նաև այն առումով, որ տեղի էր ունենում մի հողում, որտեղ մարտնչել է Մոնթե հերոսը: Դա ինձ համար երջանիկ օր էր՝ տեսնելով, թե վշտի պահին ինչպես են ղարաբաղցիներն ուժ գտնում ապրելու և հաղթելու համար: Ջուրն ու հացը կյանքի խորհրդանիշ են: Ժողովուրդն ապացուցում է, որ ամենևին էլ զուր չեն այդ զոհերը, որ լի են ռազմի դաշտում: Ես տեսա ադրբեջանցիների շարունակվող հարձակումները նաև այն ժամանակ, երբ Ղարաբաղի ղեկավարները ստորագրել էին համաձայնությունը: Ադրբեջանի բանակը վերսկսել է Ստեփանակերտի թնդանոթային ռմբակոծությունը, 6 խոշոր արկ է ընկել քաղաքի վրա: Դա իրադարձությունների լուրջ զարգացում է: Վերսկսել են նաև օդային հարձակումները:

Ես ուզում եմ հավատալ, որ Ադրբեջանի նոր ղեկավարությունն այս խնդրի լուծման համար ավելի քաղաքակիրթ ուղիներ կգտնի և կհրաժարվի ռազմական ձևով հարցի լուծման մեթոդից, որին նախապատվություն էին տվել նախորդ ղեկավարները: Կարծում եմ, որ դա համապատասխանում է թե՛ Ադրբեջանի և թե՛ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի շահերին:

Ցավոք, նոր ղեկավարության ծնունդն ուղեկցվում է ռազմական

գործողություններով: Խաղաղություն ոչ թե մահվան, այլ ճշմարտության համար:

- Ձեզ հետ կրկին ուղեկիցներ կային: Ի՞նչ ծրագիր ունեին նրանք:

- Իմ գործընկերներից մեկը Սեն Ռոջերսն է՝ Մեծ Բրիտանիայի երեխաների քրիստոնեական հիմնադրամի ներկայացուցիչը: Այս կազմակերպությունը շատ երկրներում օգնում է ծնողազուրկ երեխաներին: Նա փնտրում է հայկական այն կազմակերպությունը, որի օգնությամբ կարող է օգնել այդ երեխաներին: Ինչպես միշտ, այս անգամ էլ մեզ հետ է «Քրիստոնեական միջազգային զորակցություն» կազմակերպության ներկայացուցիչը, ինչպես նաև լեհ ժուռնալիստ՝ «Վազետա Ռիբոտսկա» թերթից, որոնք նախկինում ևս հոդվածներ են տպագրել Ղարաբաղի մասին: Ես կարծում եմ, որ լեհ ժողովուրդը համակրում է Արցախյան շարժմանը, քանի որ շատ լավ է գիտակցում, թե ինչ է պայքարը ազատության համար: Անցյալ ամիս ես եղել եմ Լեհաստանում և խոսել Ղարաբաղի մասին:

«ԱԶԱՏԱՄԱՐՏ», թիվ 24, հուն.93

Պատմում է գեներալ մայոր ՌՈՄԱՆ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՈՎԸ, Մոսկվա, 05.12.06

Ռ.Հ.– Ծնվել եմ 1934 թ.-ի նոյեմբերի հինգին, Մարտակերտի շրջանի Մարալյան գյուղում: Դպրոցն ավարտել եմ Ադրբեջանական ԽՍՀ-ի Միրբաշիր քաղաքում, որը մոտ էր մեր գյուղին: Ծառայել եմ Սովետական Միության զինված ուժերում ու այդ 34 տարիներին անցել եմ բոլոր հրամանատարական, շտաբային և օպերատիվ պաշտոնները: Ծառայությունս ավարտել եմ Արտակարգ իրավիճակների ռազմական ակադեմիայի պետի պաշտոնում: Լեռնային Ղարաբաղի դեպքերից, իմ՝ այդ դեպքերին մասնակցությունից, ԽՍՀՄ Պաշտպանության նախարար Յազովի հետ ընդհարումից հետո ստիպված եղա հրաժարական տալ:

1988 թ. փետրվարին անձնական գործերով Երևանում էի, երբ իմ վերադասից՝ բանակի գեներալ Վլադիմիր Լեոնիդովիչ Գովորովից, առաջադրանք ստացա. «Շտապ մեկնել Ստեփանակերտ»: Նշեմ, որ Մ. Գորբաչովի հրամանով ես ընդգրկվել էի «տասնմեկ ակադեմիկոսների» կազմի մեջ: Եվ այսպես, մեկնեցի Ստեփանակերտ: Այնտեղ անցկացվում էր ԼՂԻՄ-ի մարզային խորհրդի նիստը: Խումբը գլխավորում էր Սովետական Միության կոմկուսի Կենտկոմի միջազգային հարցերով բաժնի վարիչ ընկեր Բրուտենցը: Լեռնային Ղարաբաղի՝ Հայաստանի կազմի մեջ մտնելու վերաբերյալ խորհրդի նիստում ելույթ ունեցավ Արկադի Մանուչարովը: Նրան շատ հաճախ էր ընդհատում Բրուտենցը, և Մանուչարովը, չհանդուրժելով դա, ասաց. «Ընկեր Բրուտենց, եթե եկել եք Լեռնային Ղարաբաղ և ուզում եք հասկանալ՝ ինչ է այստեղ կատարվում, բարի՛ եղեք, մի՛ ընդհատեք իմ ելույթը: Ես խոսում եմ Ղարաբաղի ժողովրդի անունից...»:

Ստեփանակերտում քառասային իրավիճակ էր. հրապարակում անընդմեջ հանրահավաք էր անցկացվում, ետևի մասում վրաններ էին տեղադրված: Ելույթ էին ունենում համազգային շարժման մասնակիցները: Բրուտենցն ասաց, որ խմբերի բաժանվենք, մեկնենք շրջաններ՝ ժողովրդի առջև ելույթ ունենալու: Բրուտենցը ցանկանում էր հանդարտեցնել ժողովրդին, որը պայքարում էր Արցախյան Հանրապետության ստեղծման կամ Հայաստանի կազմի մեջ մտնելու համար: Նրանց խնդիրն էր, որ մարդիկ ճիշտ ընկալեն Գորբաչովի քաղաքականությունը և հրաժարվեն հանրահավաքներից: Բայց ես ամենևին էլ համաձայն չէի այդ ծրագրին: Բրուտենցին ասացի, որ դատարկաձեռն չեմ նստելու, այլ գնալու եմ իմ հայրենի Մարտակերտի շրջան ու մարդկանց առջև ելույթ եմ ունենալու: Բայց մինչ գնալս, մեզ ընթրիքի հրավիրեցին: Հրավիրողները մարզգործկոմի նախագահ Սեմյոն Բաբայանն ու կուսակցության մարզկոմի առաջին քարտուղար Հենրիխ Պողոսյանն էին: Ընթրիքի ժամանակ տեղի ունեցավ մի միջադեպ, որը հետո պետք է ազդեր իմ հետագա ծառայության վրա: Ես դեռ չգիտեի, որ Մոսկվայից ժամանած պատվիրակների խմբում էր նաև Ադրբեջանի Կենտկոմի ներկայացուցիչը (խմբին էր միացել Բաքվում): Ինչևէ, ընթրիքի ժամանակ քննարկվում էր Ղարաբաղի հարցը: Ես, իհարկե, չէի կարող լռել: Ասացի. «Մոսկվայից Բաքու հասնում եմ երեք ժամում, ևս երեք-չորս ժամում՝ Բաքվից Եվլախ: Եվլախից Ղարաբաղ գնալու համար հարկավոր է տասը ժամ, որովհետև ճանապարհներն ամբողջովին ավերված են... Ու այդպես կլինի այնքան ժամանակ, մինչև Ղարաբաղը չհռչակվի «ազատ» և չմիանա Հայաստանին»: Այդ պահին Բրուտենցը ոտքս ուժեղ սեղմեց: Ես չհասկացա՝ ինչ է կատարվում, ինչ խնդիր կար: Միայն ընթրիքից հետո իմացա, որ ներկաների շարքում էր, ինչպես արդեն ասացի, Ադրբեջանի ներկայացուցիչ Ազարբաևը:

Մարտակերտ գնացի առաջին քարտուղար Վահան Գաբրիելյանի և շրջգործկոմի նախագահ Սերգեյ Օհանջանյանի հետ: Մարտակերտի հրապարակում հավաքված բազմության պահանջով ելույթ ունեցա: Ներկայացրի մեր նպատակները, մեր քաղաքականությունը, ասացի, որ կպնդենք, որ Ղարաբաղի՝ Հայաստանին միանալու հարցը լուծվի: Հաջորդ օրը ելույթ ունեցա շրջանի Զայլու, Մարգուշեվան, Մարաղա, Հասանղայա գյուղերում: Հանկարծ Ստեփանակերտից հաղորդագրություն

ստացա, որ պատվիրակությունն արդեն մեկնել է, և պետք է շտապ վերադառնամ մարզկենտրոն: Ես այդպես էլ արեցի: Քանի որ շտապ պետք է գնայի Բաքու, այնտեղից էլ մեկնեի Մոսկվա, ես Բաքվից կանչեցի իմ աներձագին, նա մեքենայով պետք է գար և ինձ հանդիպեր Աղդամում՝ կուսակցության քաղկոմի մոտ: Հենց այստեղ էլ տեղի ունեցավ առաջին հարձակումն ինձ վրա:

Բաքու գնալու ճանապարհին ինձ տեղեկացրին, որ Սումգայիթում կոտորած է սկսվել: Ես խնդրեցի մեքենան դեպի Սումգայիթ ուղղել:

Բ.Կ.- Դուք զինվորական համազգեստով էիք:

Ռ.Հ.- Իհարկե: Ինձ փորձեցին ետ պահել այնտեղ գնալու որոշումից, բայց ես արդեն վճռել էի: Ասացի. «Ես չեմ կարող չգնալ, այնտեղ են իմ մայրը, քույրերը, զարմիկները...»: Տեսնեմ՝ ճանապարհով մեկ ձգվում է մեքենաների երկար մի շարասյուն: Դա Չորրորդ բանակի Բաքվի դիվիզիան էր, որն սպասում էր քաղաք մտնելու թույլտվությանը: Դիվիզիայի հրամանատարն ինձ ընդառաջ եկավ: Պարզվեց՝ նա իմ նախկին ենթական էր՝ գեներալ Վալերի Սոկոլովը: Նա ասաց.

- Այդ ո՞ւր, Ռոման Սերգեևիչ:

- Վալերա, ինչ էլ որ լինի, պետք է գնամ. իմ հարազատներն այնտեղ են:

Ինձ հետ էին նաև երկու ադրբեջանցիներ, նրանց մեքենայով էինք: Գնացինք ավտոկայան, քանի որ այնտեղ էր ապրում իմ ավագ քույրը: Երբ մոտեցա շենքին, տեսնեմ՝ երրորդ հարկում բոլոր դռներն ու պատուհանները կրակի մեջ են, իսկ շենքում ոչ ոք չկար: Քանի որ ես շատ վարժ խոսում եմ ադրբեջաներեն, սկսեցի հարցուփորձ անել հարևաններին: Ասացին, որ գնամ 8-րդ միկրոշրջան, միգուցե նրանք կրտսեր քրոջս տանն են: Այդպես էլ արեցի: Սակայն այնտեղ էլ էր նույն պատկերը. ամեն ինչ կրակի մեջ էր, հրդեհված տրամվայներ, շրջված ավտոբուսներ... Սարսափելի էր:

Բ.Կ.- Իսկ ադրբեջանցիների խմբեր տեսաք:

Ռ.Հ.- Այո՛, տասնհինգ-քսան մարդ՝ երկար մետաղյա ձողերով, փայտերով... Նրանք գոռում էին. «Էրմանիլարա օլուֆ» (մահ հայերին): Իմ հարազատներից ոչ մեկին էլ չգտա: Ինձ ասացին, որ հայերը հավաքվել են Սումգայիթի Քիմիագործների կուլտուրայի տանը: Գնացի: Եվ իրոք, Սումգայիթում հաստատված մեր գյուղացիներն այնտեղ էին: Գտա նաև

իմ հարազատներին: Մինչ ես զրուցում էի նրանց հետ, ինձ մոտեցավ ինչ-որ գնդապետ ու ասաց. «Ընկեր գեներալ, չի կարելի այստեղ լարված իրավիճակ ստեղծել...»: Ես էլ, թե. «Հեռացեք այստեղից, հակառակ դեպքում արարքներիս համար պատասխան չեմ տալիս»: Որոշ ժամանակ անց ինձ կանչեցին երրորդ հարկ: Բարձրացա: Այնտեղ էին Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Աբդուռահման Վեզիրովը, Մինիստրների խորհրդի նախագահ Սեիդովը, ԽՍՀՄ կոմկուսի Կենտկոմի բաժնի վարիչ Խարչենկոն: Սկսեցին ինձ հարցաքննել, թե ինչպես էի հայտնվել այնտեղ, որն էր գալուս նպատակը: Պատասխանեցի, որ Բրուտենցի խմբից եմ, Մոսկվա եմ վերադառնում, բայց... Սումգայիթ եկա մորս, քույրերիս, զարմիկներիս գտնելու, նրանց Մոսկվա տանելու համար: Գալուս նպատակը պարզելուց հետո, նրանք կանչեցին հայերի էվակուացիայի շտաբի պետ գեներալ լեյտենանտ Կրանին, որն իմ վաղեմի ընկերն էր, ու միասին ենք սովորել Ֆրունզեի անվան զինվորական ակադեմիայում: Ողջունեցինք միմյանց, ներկայացրի՝ ինչու եմ Սումգայիթում, նա էլ, թե. «Ռոման, ինձ մի քիչ ժամանակ տուր, ընդամենը կես ժամ, ես ձերոնց բոլորին կգտնեմ»: Այդպես էլ արեց... Ու հարազատներիս հետ Բաքու գնացինք, որ այնտեղից մեկնենք Մոսկվա: Կրանի օգնությամբ բոլորի համար տոմսեր գնեցի, բայց ինձ համար տոմս չգտնվեց: Ինչնէ, բարեկամներիս բարեհաջող ճանապարհեցի ու գնացի քաղաքաշտպանության շտաբ. ներկայիս ԱԻՄ-ի ակադեմիան, որը նախկինում քաղաքաշտպանության կազմում էր: Ինչպես արդեն նշեցի, ես ակադեմիայի պետն էի: Բաքվի քաղաքաշտպանության շտաբը ղեկավարում էր գնդապետ Բաբաևը: Հենց նա էլ ինձ տեղեկացրեց, որ Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի երկրորդ քարտուղար Նիկոլայ Վասիլևիչ Կոնովալովն ինձ իր մոտ է կանչել: Ասեմ, որ փողոցում նույն քառասային իրավիճակն էր, թուրքերը նույն այն հայատյաց լոզունգն էին աղաղակում. «Էրմանիլարա օլուֆ»: Մի խոսքով՝ տեղ հասա, բարձրացա երրորդ հարկ, քարտուղարուհին ասաց, որ պետք է սպասեմ. Կոնովալովի մոտ խորհրդակցություն էր: Տասը րոպեից, տեսնեմ, երկրորդ քարտուղարի սենյակից մեկը մյուսի ետևից դուրս են գալիս մորուքավոր երիտասարդներ: Հաշվեցի. 35 հոգի էին: Վերջին դուրս եկողներից մեկը մոտեցավ ինձ ու հարցրեց. «Էդ դու՞ ես գեներալ Հարությունովը...»: Ես էլ, թե. «Նախ՝ «դու» չէ, այլ «դուք», երկրորդն էլ՝ ես Սովետական բանակի գեներալ եմ, ձեզ կարգի՛ հրավիրեք...»: Գոռաց. «Մենք դեռ քեզ ցույց կտանք...»: Ես ձեռքս մեկնեցի, որ օձիքից բռնեմ, բայց նրա գոռալն ու փախչելը մեկ եղավ: Հենց այս տրամադրությամբ մտա Կոնովալովի աշխատասենյակ, ու մեր զրույցն էլ ընթացավ նույն վրդովված ու անբարյացակամ մթնոլորտում: Ես ասացի.

- Նիկոլայ Վասիլևիչ, էս ինչ է, ինձ այստեղ եք հրավիրել, որ գլխիս սադրանք սարքեք:

- Դե, գիտեք ինչ... Եկել եք, ելույթ եք ունենում... Հակասովետական կլույթներ, ... Ու մեզ չեք էլ տեղեկացնում ձեր գալու մասին:

- Մի րոպե, ընկեր Կոնովալով, ես ամեն տարի արձակուրդ եմ գալիս, ամեն տարի լինում եմ իմ շրջանում, իմ գյուղում: Անցած տարիների ընթացքում դուք իմ առջև երբեք նման հարց չեք դրել, թե ինչու եմ եկել, ինչու չեմ տեղեկացնում...

- Բայց տեսնում եք, չէ՞, ինչպիսի իրավիճակ է այժմ:- Ու ես նրան հենց այսպես էլ ասացի, - այդպիսի իրավիճակ ստեղծել եք դու՛ք: Այդ դու՛ք եք արյունահեղություն անում իմ Ղարաբաղում:

- Սթափվի՛ր, գեներալ...

Ահա այսպիսի տհաճ զրույցից հետո ես մեկնեցի Մոսկվա: Տեղ հասնելուն պես՝ ամբողջ իրողությունը զեկուցեցի իմ ղեկավարին՝ բանակի գեներալ Գովորովին: Երկու օրից ԽՍՀՄ պաշտպանության նախարար Յազովն ինձ իր աշխատասենյակ կանչեց: Գովորովն ասաց, որ չարժե մենակ գնալ և ինձ հետ ուղարկեց քաղաքական գծով իր տեղակալ գեներալ գնդապետ Վասիլի Պավլովիչ Նովիկովին: Գնացինք: Մտանք Յազովի աշխատասենյակ: Մեր խոսակցությունը, ավելի ճիշտ՝ բանակոիվը, տևեց երեք ու կես ժամ:

Բ.Կ.- *Իսկ ինչ ասաց նա:*

Ռ.Հ.- Ասում էր.

– Դե՛, պատմի՛ր, պատմի՛ր, գեներա՛լ, ինչ-որ բան քո Ղարաբաղի մասին:

Ու ես սկսեցի պատմել նրան իմ ծննդավայրի մասին՝ սկսած առաջին-երկրորդ դարերից մինչև մեր ժամանակները: Նա ասաց.

- Ինչ է, գեներա՛լ, ինձ հետ հանդիպելուց առաջ արխիվներն ես քրքրել:

Ես էլ, թե.

- Ընկեր նախարար, երբ մենք ասում ենք «Կեցցե սովետական ազգերի բարեկամությունը», ես դա չեմ հասկանում, եթե ոչինչ չգիտեմ իմ փոքրիկ Ղարաբաղի պատմության մասին:

- Իսկ ինչ են ուզում քո հայերը, ինչ ունեք դուք բացի քարակույտերից... Իսկ եթե մենք հանկարծ դադարեցնենք ձեզ նավթ, գազ մատակարարել... Ի՞նչ եք անելու...

- Ընկեր նախարար, ներողություն, բայց իմ հայրենիքը շրջափակելը ձեր որոշումն է, թե՝ Քաղբյուրոյի:

– Սթափվի՛ր, գեներալ: Եղույթներ ես ունենում երկու հրացանակիրների, տեսախցիկի ուղեկցությամբ, հակասովետական լոզունգներ ես տարածում...

- Չի եղել այդպիսի բան:

- Ես քեզ դատի կտամ, քեզ կհեռացնեմ պաշտոնից առանց թոշակի...

Ու ես վեր կացա տեղից ու շատ ջղայնացած ասացի.

- Իսկ ես այդ դեպքում եվրոպական բաց դատ կպահանջեմ:

Եվ այսպես, երեք ու կես ժամ վիճում էինք նախարարի հետ: Նա անընդհատ ասում էր, որ ես պրովոկատոր եմ, որ մենք ենք գրգռել Ղարաբաղյան իրավիճակը: Բայց դե հիմնական պրովոկատորը հենց Յազովն էր ու իր պես մարդիկ...

Անցավ որոշ ժամանակ: Քանի որ ես բարձր պաշտոն ունեի, բանակի գեներալ Գովորովը ինձ գեներալ լեյտենանտի կոչում տալու դիմում է ներկայացնում: Մեկ ամսից վերոնշյալ կոչումը ստանալու համար ինձ Պաշտպանության նախարարի մոտ է ուղարկում: Վերջինս էլ դիմումի ձախ անկյունում գրում է. «Ընկեր Գովորով, այս էքստրեմիստ-ղարաբաղցուն այլևս ինձ չներկայացնել»: Եվ այսպես էլ ես կոչում չստացա: Դա բավական չէր, որոշ ժամանակ անց նա պահանջեց, որ ինձ պաշտոնից հեռացնեն: Այդ մասին տեղեկանալով՝ հրաժարական տվեցի: Ահա այն դեպքերը, որ տեղի ունեցան իմ՝ Լեռնային Ղարաբաղ գնալու հետևանքով...

Հետո գիրք լույս տեսավ: Անվար Մանսուրովն էր գրել: Գրքում շատերի անունն է շոշափվում, բայց այն հիմնականում իմ մասին է: Հեղինակն այդ գրքում պահանջում է ինձ դատել: Կարճ ասած՝ շատ-շատ տհաճ բաներ է գրել իմ մասին:

Բ.Կ.- *Իսկ Աղրբեջանի ղեկավարությունն ինչ արեց. խոսքը վերաբերում է ղարաբաղյան իրարանցումներին:*

Ռ.Հ.- Սումգայիթի կուսակցության քաղկոմի առաջին քարտուղար Մուսլիմզադեն ինձ հավատացնում էր, թե սումգայիթյան այդ իրավիճակը հրահրվել է արտասահմանից...

Բ.Կ.- *Այսինքն՝ նրանք գիտեին այդ մասին: Արդյոք ցանկացել են կանխել...*

Ռ.Հ.- Իմ կրտսեր քույրը՝ Գալինան, Սումգայիթի մի դպրոցում էր աշխատում, նա նաև հանրապետության վաստակավոր բժշկի կոչում ուներ: Նա հայտնեց, որ Իրեն նախօրոք ասել են, թե նման դեպքեր են լինելու ու նախօրոք պլանավորված ակցիա էր:

Բ.Կ.- *Պարզվում է՝ իշխանությունն էլ գիտեր ... Իսկ Մոսկվան...*

Ռ.Հ.- Այո, իշխանությունը տեղյակ էր գալիք դեպքերի մասին: Ախր հենց նրանք են հրահրողները... Իհարկե, Մոսկվան էլ գիտեր, բայց ոչ ոք չի ենթադրում, թե Ղարաբաղի այդ իրարանցումն այդքան ծանր ու լուրջ հետևանքներ կունենա: Գորբաչովն ասում էր, որ դիվիզիան երկու օր ուշ է տեղ հասել: Բայց դա այդպես չէր. դիվիզիան պատրաստ սպասում էր քաղաք մտնելու հրամանին: Ես կենդանի վկա եմ, խոսել եմ դիվիզիայի հրամանատար Սոկոլովի հետ: Ես նրան հարցրի. «Սոկոլով, ինչո՞ւ եք դեռ կանգնած»: Նա էլ թե. «Սումգայիթ մտնելու հրաման չեն տալիս»....

Պատմում է ԼՅՈՒԴՄԻԼԱ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ (Երևանի պետական համալսարանի ամբիոնի վարիչ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր) Երևան, 24.05.2006

Ծնվել եմ 1941 թ., Երևանում: Ինձ համարում եմ մշեցի, քանի որ հայրս ծնվել է Մուշում և Եղեռնի կոլեկտիվ հիշողության կրողն է: Այս հանգամանքը շատ կարևոր է իմ կենսագրության և իմ ամբողջ գործունեությունը բացատրելու համար, նաև՝ պատմությանը վերաբերվելու տեսանկյունից:

Բ.Կ.- *Արցախյան խնդրին երբ եք առաջին անգամ առնչվել:*

Լ.Հ.- Արցախյան խնդրին անմիջականորեն առնչվել եմ 1988 թ., բայց որպես մշակութային հիմնահարց՝ նրա տարանջատվածության փաստի մասին լսել եմ իմ ֆակուլտետում: Աշխատանքի ընթացքում ես հետաքրքիր փաստի ականատես եղա. փիլիսոփայության ֆակուլտետի պրոֆեսորների շուրջ հիսուն տոկոսը ղարաբաղցիներ էին: Ինձ զարմացրեց այդ հանգամանքը, և հասկացա, որ խելոք մարդիկ Արցախում չէին կարողանում տեղավորվել, տեղափոխվում էին այստեղ և, իհարկե, հարստացնում հայաստանյան ընտրախավը: Իմ առաջին դիսերտացիան նվիրված էր ընտանիքի, ազգաբնակչության հարցերին: Միգրացիոն խնդիրները ինձ մինչև հիմա էլ շատ են հետաքրքրում: Եվ առաջին փաստը Արցախն էր: 1978-79 թթ. ես գնացի Արցախ: Գնացի Բաքվով, բայց եկա Հայաստանով: Բաքվում կոնֆերանս էր անցկացվում: Այդ հանգամանքը օգտագործեցի, որպեսզի գնամ Ղարաբաղ: Բաքվում տաքսու վարորդներից հարցնում էի, թե ոնց են վերաբերվում հայերին, հայերը որտեղ են ապրում: Սոցիոլոգը ինֆորմացիա հավաքող է, և ցանկացած տաքսու վարորդի հետ ես խոսում էի: Եվ շատ հետաքրքիր տպավորություն ստացա. ադրբեջանցիները ընդունում էին հայերի գոյության փաստը, նրանց արժանիքը, բայց շատ հստակ գիտեն նրանց տեղը սեփական հասարակությունում, որն է՝ երկրորդ, երրորդ... հինգերորդ... Ինձ զարմացնող երկրորդ փաստը, որը բնութագրում էր այն ժամանակվա Ադրբեջանին, հետևյալն էր՝ կոնֆերանսը նվիրված էր խորհրդային ապրելակերպի և նման հարցերին, բայց ադրբեջանցիները ցույց տվեցին ամբողջ մզկիթների հարստությունը: Ավելին, երբ համալսարանի մասնագետները ցույց էին տալիս մզկիթները, ես տեսնում էի, որ նրանք հավատացյալ են և շատ ֆիքսված են կրոնի հանգամանքի վրա: Մենք էլ էինք մեր եկեղեցիները ցույց տալիս, բայց որպես մշակույթի մի մասը: Ես հասկացա, որ ադրբեջանական հասարակության մեջ մուսուլմանական կրոնին պատկանելու փաստը բավական լուրջ է արտահայտված: Ես նրանց խնդրեցի թույլ տալ Ղարաբաղ գնալ, քանի որ այն ժամանակ դրա համար հատուկ թույլտվություն էր պետք: Նրանք մեքենա տվեցին, և մենք գնացինք Ղարաբաղ: Ճանապարհին Ղարաբաղի մասին պատմում էին որպես սեփական մշակույթի օրրանի, Շուշիի մասին՝ որպես ադրբեջանական քաղաքի: Ցույց տվեցին Շուշին: Հիշում եմ Շուշիի առողջարանը և եկեղեցին, որը քանդված էր: Հարցրի, թե ինչու է այդ չնաշխարհիկ կառույցը քանդված: Պատասխանեցին, թե փող չկա: Բայց հասկանալի էր, որ պարզապես վերաբերմունքի խնդիր էր: Ես մեքենայով վերադարձա Քելբաջարով: Երկրորդ շփումը Ղարաբաղի հետ մի հոդվածի առիթով էր: Լրագրերից մեկում լույս էր տեսել հոդված, որում Շուշիի բնակչությանը նկարագրում էին որպես լեռնցիներ: Այդ հոդվածի կապակցությամբ նամակ գրեցի խմբագրությանը. «.... Շուշիի պատմությունը բոլորովին այլ է: Քաղաքը 18-րդ դարում ունեցել է կոյուղի, հոյակապ ընտրախավ, եղել է մշակույթի կենտրոն: Այդ ինչի՞ մասին եք դուք պատմում. Շուշին՝ իբրև բազմազգ լեռնցիների մի կենտրոն.... Ի՞նչ իմաստ ունի քաղաքական բովանդակություն դնել մի փաստի մեջ, որը բոլորին հայտնի է....»: Ես խնդրեցի ռուս խմբագրին շուրջը նայել և Մոսկվայում ապրող բոլոր հայերին հարցնել, թե ինքը որտեղից է գալիս, և ասացի. «Համոզված եմ՝ նրանց իննսուն տոկոսը շուշեցի կամ ղարաբաղցի կլինի, և դուք կհասկանաք, թե ինչ է իրենից ներկայացնում Շուշին»: Խորհուրդ տվեցի կարդալ Մարիետա Շահինյանի գրվածքները Ղարաբաղի մասին: Խմբագրից ստացա նամակի պատասխանը:

Ընդ որում, ոչ թե խմբագիրն էր գրել պատասխանը, այլ՝ աղբրեջանցիները, ովքեր այդ հոդվածի հեղինակն էին: Նամակը համերաշխ ապրելու ոգով էր գրված. «....Տիկին, անշուշտ պատմությունը.... բայց Շուշին կերտել են ոչ միայն հայերը....»: Մի խոսքով, շատ հաշտեցնող, սովետական ոճով նամակ էին գրել, բայց այն ինձ ստիպեց ֆիքսվել այդ հարցի վրա: Հավաքեցի Շուշիի մասին ահագին տպագրված նյութեր: Սա միգուցե երրորդ մտորումն էր Ղարաբաղի շուրջ: Իսկ չորրորդը 1988 թվականին էր: Ես նախապատրաստվել էի դրան, քանի որ 1965 թվականին Եղեռնի կապակցությամբ համալսարանը ակտիվ մասնակցում էր առաջին հրապարակային ընդվզումներին: Ես այն երիտասարդների շարքում էի, որոնք այդ ընդվզումը իրականություն դարձրին: Հոյակապ, հիշելու արժանի ժամանակներ էին: Հիշում եմ ազատության զգացումը, որը համակել էր Օպերայի շենքի բակում հավաքված մարդկանց: Ես մոտեցա լիդերներից մեկին և ասացի. «Գտեր ձեր, որ այն մարդիկ, որոնք այսօր իրենց դուրս են զգում, ներսում լինեն, պետք չէ մեզ բաժանել լիդերների և ամբոխի»:

Բ.Կ.- *Հիշում եք, թե ով էր:*

Լ.Հ.- Բոլորդարահայ երիտասարդ էր, որը հետո դարձավ նախարար, ավարտել էր ֆիզիկայի ֆակուլտետը: Նրան մեղադրեցին փոդեր վերցնելու մեջ: Նա առաջին նախարարներից էր, որը հրաժարվեց և գնաց արտասահման: Ես նրան արտասահմանում էլ հանդիպեցի:

1988-ը սկսվեց, անշուշտ, Սումգայիթով: Սումգայիթի դեպքերի հետ կապված միտինգի ժամանակ ես ձեռքս բարձրացրի և ինձ գտա մի շատ հաղթանդամ տղամարդու կողքին: Ձեռքս հազիվ հասավ նրա պարանոցին: Նայեցի այդ տղամարդուն և մտածեցի. «Ձեռք բարձրացնող այստեղ կա, իմ տեղը այստեղ չէ, ես պիտի հետազոտեմ»: Դա իմ առաջին կողմնորոշումն էր. աշխատանքի բաժանում է պետք: Բոլորս կանգնած ձեռք էինք պարզել, ինչը պահանջ-խնդրանքի փաստն էր, մենք խնդրում էինք՝ որոշակի ուժ ցույց տալով: Այս մոտեցումը տեղավորվում էր սովետական տրամաբանության շրջանակներում. այսինքն՝ մենք գովենք իշխանությանը, ուժգին խնդրենք, միևնույն ժամանակ ցույց տանք, որ մեզնից ինչ-որ բան ենք ներկայացնում: Այս տրամաբանությունը չէր տեղավորվում իմ մտածելակերպի մեջ: Ես կարծում էի, որ խնդրել պետք չէ, որովհետև շատ լավ հասկանում էի, որ այն, միևնույն է, չի կատարվելու:

Ես հավաքեցի սոցիոլոգների, և մենք անցկացրինք հետազոտությունների շարք: Սոցիոլոգիական տասը հետազոտություն արեցինք, որոնք ընդգրկում էին այդ ժամանակահատվածի բոլոր էտապները՝ հացադուլ, գործադուլ և այլն: Դրանք բոլորը նորություն էին այդ ժամանակ:

Բ.Կ.- *Հրապարակվե՞ց են, թե՞ ոչ:*

Լ.Հ.- Ցավոք սրտի, չեն հրապարակվել: Մենք ուղղակի նյութ էինք հավաքում, հետո էլ սկսեցինք զբաղվել այլ խնդիրներով: Հիշում եմ մի խոսակցություն. երբ գիշերները հետազոտում էինք, մի երիտասարդ ֆիզիկոսն, որն ավարտել էր համալսարանը և ինձ ճանաչում էր, մոտեցավ ասաց.

- Տիկին Հարությունյան, ինչո՞վ եք զբաղված:

Հետազոտություն ենք անում: Սա զարթոնք է և պիտի ֆիքսվի պատմության մեջ:

Եթե Ղարաբաղ ենք ուզում, ինչ իմաստ ունի այսպես ուզելը, միևնույն է, այսպես մեզ չեն տա: Հավաքեք բիզնեսմեններին, և մենք կառնենք այդ հողը: Այն կամ արյունով պիտի առնվի, կամ փողով, շարժումով այդ հողը չենք առնի:

Այսինքն՝ հայկական միտքը ճանապարհներ էր փնտրում, և յուրաքանչյուրն ուզում էր իր տեղը գտնել այդ գործում: Ես իմ տեղը սկզբում գտա որպես հետազոտող, այդ տղան ուզում էր իր փողը տալ, կանգնածները ձեռքները մեկնում էին առ իշխանություն...

Բ.Կ.- *Կանգնածներից շատերը զինվորագրվեցին և գնացին կռվելու:*

Լ.Հ.- Կանգնածներից շատերը կամաց-կամաց ոգևորված իրենց տեղը գտան և կարողացան սպասարկել այդ ժամանակվա պահանջներին, որոնք էին՝ և գաղափարը, և մատակարարումը, և կազմակերպումը, և հետազոտումը, և ոգեշնչումը, և անտրտունջ լինելը...

Ես դիտարկում էի մի հետաքրքիր պատկեր, թե ովքեր էին ղեկավարում շարժումը, շարժման հրապարակային փուլը, և ինչպես էր այն ընթանում: Այդ փուլում առաջինը ռեժիսորն էր՝ Վաչե Սարուխանյանը, Իգոր Մուրադյանի հետ: Շատ հետաքրքիր էր, որ թելադրում էր ամբոխին, թե ինչպես նա պետք է շարժվի. «Մեկ քայլ ետ, երկու քայլ առաջ....»: Ես մտածեցի, որ այս ամենի մեջ բեմականացման հզոր էլեմենտ է մտցված, ինչը ամբոխը դարձնում է շարժում: Առաջին փուլը բե-

մականացման փուլն էր: Շատ կարևոր էր Իգորի կերպարը, որը գաղափարական որոշակի ուղղություն էր մտցնում: Ընդ որում, գաղափարի մեջ մի քանի հզոր կետ տեսա: Առաջինը՝ պետք է փորձել Մոսկվային յեգու հասկացնել: Երկրորդը՝ վերակառուցման, նորացման գաղափարը: Երրորդը արդարության, ժողովրդավարության գաղափարն էր: Մտցվում էր հակադրբեջանական էլեմենտը, այսինքն՝ ցույց էր տրվում հակառակորդը. այն ժամանակ դեռ ախոյան չկար, մենք ադրբեջանցիներին սիրում էինք: Ինձ համար դա ֆունկցիոնալ կարևոր փաստ էր, որ Իգորը և այդ ռեժիսորը ղեկավարում էին: Հետո երկուսն էլ դուրս եկան շարժումից: Ես հասկացա, որ եկավ հաջորդ էտապը: Ետսումգայիթյան 10 օրը շատ սեղմ ժամանակահատված էր, շատ կարևոր գործեր պետք է արվեին: Ամբոխին ռեժիսոր էր պետք, նա դրա կարիքն ուներ, չէր կարող ընդունել այլ գաղափարներ:

Բ.Կ.- *Բայց կարճ ժամանակ անց ապառվեց, կրկնվում էր...*

Լ.Հ.- Էտապն անցավ, ետսումգայիթյան շրջանը, որը կառուցված էր էմոցիաների, ազգային ազատագրական հզոր գաղափարի և կոլեկտիվ հիշողության վրա, շատ արագ սպառվեց: Հետո եկավ ավելի կազմակերպված պայքարի ժամանակահատվածը, որը շատ ավելի հետաքրքիր էր ինձ համար: Էստոնիայից եկավ Էդգար Սավիսարը՝ Էստոնիայի լիդերներից մեկը: Նա Էստոնիայի անկախության ջատագովներից էր և պայքարի մեջ էր: Էդգար Սավիսարը ինձ ու Սիլվա Կապուտիկյանին համոզեց գնալ Էստոնիա և այնտեղ պատմել Սումգայիթի մասին: Մարտի կեսերին Սիլվայի հետ գնացինք Էստոնիա: Մի ինժեներ պատմաբան կար, որին Սիլվան բերեց, կարծեմ ազգանունը Գասպարյան էր: Ես այդ ժամանակ նկատեցի, որ պատմաբան չեն, բայց ուզում են պատմել այն ամենի մասին, ինչ տեղի է ունենում: Այսինքն՝ պրոֆեսիոնալ դերերի կողքին առաջացան հասարակական դերերը: Ես, Սիլվան ու Գասպարյանը Սավիսարի տված մեքենայով շրջեցինք ողջ Էստոնիայով, ընդ որում, տաժանակիր ռեժիմով: Երկու ժամ գնում էինք, հասնում որևէ գյուղ կամ քաղաք: Այնտեղ արդեն մեզ սպասում էր ժողովուրդը: Մենք մտնում և պատմում էինք Սումգայիթի մասին: Մեր ետևից գալիս էր ՊԱԿ-ի մեքենան: Մի տեղում վերջացնում էինք, մի կտոր հաց ուտում և գնում հաջորդ քաղաքը կամ գյուղը: Բազում գյուղերում և քաղաքներում մեզ թվում էր, թե պատմում ենք Սումգայիթի մասին, բայց էստոնացիների համար այն սեփական շարժումը ձևավորելու ընթացք էր: Էստոնական շարժումը աղքատ էր այդ ժամանակ, էստոնական ռացիոնալ միտքն էր գործում: Հիշում եմ մի պատմություն. մեզ մարտ ամսվա ցուրտ եղանակին քնեցրին ֆաներայից սարքած տնակում, որտեղ երկաթյա մահճակալներ էին, ներքնակների վրա երեխաները չիշիկ էին արել: Սիլվան հանեց իր կարմիր շատ գեղեցիկ խալաթը, սիրուն տնային կոշիկները: Զուգարանը շատ հեռու էր, ճամբարի զուգարանը որտեղ պիտի լինի: Տեսնեմ՝ Սիլվան, շատ գեղեցիկ հագնված, գնում է զուգարան: Ասացի.

Տիկին Սիլվա, Դուք ձեզ զգում եք հինգաստղանի հյուրանոցում:

- Ոչ մի նշանակություն չունի, թե որտեղ ես գտնվում, կարևորը՝ ոնց ես քեզ զգում:

Վերջին զեկուցումը կարդացինք Տարտուի համալսարանում, այն սենյակում, որտեղ Աբովյանը ուսանել էր: Մեզ համար այն սիմվոլիկ էր, և իրար կապեցինք Աբովյանի ազատատենչ շունչն ու մեր ազատագրման համար մղվող պայքարը: Հետո մեզ պատմեցին, որ ՊԱԿ-ը մեզ խնայել է, քանի որ տիկին Սիլվան մեզ հետ էր: Բայց մեր ամբողջ էպոպեան նկարագրված է ՊԱԿ-ի մատյաններում:

Մինչ այդ շատ հետաքրքիր դեպք եղավ: Մարտի սկզբին Հայաստանից երեք-չորս հոգով գնացինք Մոսկվա՝ մասնակցելու կոնգրեսի: Կոնգրեսը Ջվինեգորոդում էր անցկացվում: Բոլոր հայտնի սոցիոլոգները այնտեղ էին: Եկավ նաև Գալինա Ստարովոյտովան, որը իմ լավ ընկերուհին էր, մասնագիտության բերումով շատ մտերիմ էինք: Դեռ կոնգրեսը չէր սկսվել, ասացի. «Գիտեք, այս կոնգրեսը չի կարող տեղի ունենալ առանց Սումգայիթում կատարվածի քննարկման: Դուք վաղը պարտավոր եք կոնգրեսը բացել այդ դեպքերի հիշատակմամբ և զոհերի հիշատակը հարգելով»: Պատկերացնում եք, թե ինչ է միութենական սոցիոլոգիական կոնգրեսը: Ասացին. «Անպայման կանենք, բայց կոնգրեսը այլ կերպ պիտի սկսվի, սցենար գոյություն ունի, Կենտկոմից մարդիկ են եկել»: Իսկ սոցիոլոգիան՝ այդ ժամանակ որպես նոր, վերակառուցմանը ծառայող գիտություն, շատ մոդայիկ էր: Ասացի. «Ես ուղղակի չեմ թողնի ձեզ դա անել»: Գալյայի հետ գիշերը նստեցինք ու սոցիոլոգների անունից նամակ գրեցինք Գորբաչովին. «....Արդյոք Դուք տեղյակ կա, թե ինչ է տեղի ունենում Սումգայիթում....»: Նամակում ներկայաց-

նում էինք, թե այնտեղ ինչ է կատարվում, և երկիրը ինչ հետևանքներ կունենա: Այդ նամակը փորձեցինք կոնգրեսում ստորագրել տալ: Հենց առաջին օրը, երբ սկսեցին հաստատել օրակարգը, ես վեր կացա և ասացի. «Ուզում եմ ձեզ տեղյակ պահել, թե ինչ է տեղի ունենում երկրում, դուք՝ սոցիոլոգներդ, պարտավոր եք իմանալ»: Պարզ է, որ արդեն խանգարող էլեմենտը կա, մարդ կա, որը չի թողնում կոնգրեսը լինի: Ինձ համոզեցին՝ նամակը, որ գրել եք՝ խնդրեմ.... Մեզ միացան ուկրաինացիները: Ես, Գալյան և ուկրաինացի խոշոր սոցիոլոգները միավորվեցինք և սկսեցինք այդ գործը առաջ տանել: Կոնգրեսը 4-5 օր տևեց: Նամակը սկսեցինք ստորագրել տալ: Ջարմանալիորեն առաջին դեմքերը չէին ստորագրում, մյուսներն էլ չէին ստորագրում՝ ասելով. «Թող նախ առաջին դեմքերը ստորագրեն»: Բայց հասանք նրան, որ բոլորից ստորագրություն ստացանք: Գնացքում, որը Զվինեգորոդից մեզ տանում էր Մոսկվա, ճանապարհին վերջապես ստիպեցինք Յադովին ստորագրել: Յադովը շատ հայտնի սոցիոլոգ էր, սոցիոլոգիայի ինստիտուտի տնօրենն էր: Երբ նա ստորագրեց, մյուսները ստորագրելու համար հերթ կանգնեցին: Եվ մենք սոցիոլոգների անունից գրեցինք Խորհրդային Միության մեջ առաջին նամակը Գորբաչովին Սումգայիթի մասին: Այդ նամակին կարծում եմ պատասխան չեկավ, որովհետև նամակը ոչ թե մեր անունից էր, այլ՝ սոցիոլոգների և կոնգրեսի, և ես չիմացա նամակի ճակատագիրը: Սակայն կարծում եմ, որ դա ընդվզման փորձ էր:

Բ.Կ.- *Բանց նամակ էր:*

Լ.Հ.- Սոցիոլոգիական կոնգրեսի նամակն էր Գորբաչովին:

Բ.Կ.- *Այսինքն՝ հրապարակված չէ:*

Լ.Հ.- Ո՛չ, հրապարակված չէ: Ավելին, իմ ձայնը կտրելու համար ինձ ասացին, որ երեկոները, երբ կոնգրեսը պլանավորված չէ, և մարդիկ ազատ են, ես, եթե ուզում եմ, կարող եմ սեսիաներ անել և պատմել Սումգայիթի մասին: Ամեն երեկո ես հավաքում էի սոցիոլոգներին, նստում էինք մի սրահում (ոչ պաշտոնական), և մարդիկ լսում էին, թե ինչ է տեղի ունենում Սումգայիթում: Դա արեցինք չորս օր շարունակ: Հրեաներն էին շատ շահագրգռված, շատ ակտիվ կազմակերպում էին, որ մարդիկ գան նստեն, և ես պատմեմ: Ես ջանք չէի խնայում նկարագրելու: Եվ ուշադրություն դարձրի, թե ես ինչ եմ խոսում: Ես տեղավորում էի Սումգայիթը սոցիոլոգիական գիտության մեջ, այլ կերպ նրանք ինձ չէին

լսի: Ես դերային կառույցն էի վերլուծում, ստրատիֆիկացիոն կառույցը, իերարքային վարքը և այլն: Այսինքն՝ դարձնում էի սոցիոլոգիական նյութ, ինչը նրանց համար շատ հետաքրքիր էր վերլուծել, որովհետև առաջին անգամ դա հրապարակվում էր: Ավելին, նրանցից յուրաքանչյուրը ինֆորմացիա էր տալիս այն մասին, թե խորհրդային կարգերի ժամանակ որտեղ է նման դեպք եղել: Կամաց-կամաց սկսեցին բացել երևույթների մի պանորամա, որոնք տեղի են ունեցել, բայց դրանց մասին ոչ ոք չգիտե: Օրինակ, հիշեցին Միջին Ասիայում պատահած երկրաշարժը, որի ժամանակ հարյուր հազար հոգի մահացան, բայց ոչ ոք չիմացավ, Հյուսիսային Կովկասի ընդվզումները, որտեղ հազարից ավելի մարդ սպանվեց, տանկերը գնացին մարդկանց վրայով, բայց դարձյալ ոչ ոք չիմացավ: Եվ ահա առաջին անգամ Հայաստանից մարդ է եկել, որը Սումգայիթի մասին է պատմում: Ես չէի ասում, թե պատմությունները շարժման մասին են, ես ասում էի, որ դա սոցիոլոգիա է, նոր երևույթ է, և բարի եկեք վերլուծել, դուք ականատես եք լինելու շարունակությանը: Այդտեղ կար և՛ սոցիոլոգիական վերլուծություն, և՛ սոցիոլոգիական կանխատեսում, և՛ գործողությունների պահանջ, որն ամբողջությամբ սոցիոլոգիա է: Սոցիալական ինժեներիայի պահանջ կար: Այսինքն՝ ես հանդես չէի գալիս որպես հեղափոխական, այլ՝ որպես մասնագետ: Մինչև այսօր էլ կարծում եմ, որ դա շատ կարևոր էր: Ցավում եմ, որ մասնագետները քիչ են արել իրենց գործը: Ես վերադարձա Երևան և օգտագործեցի առիթը. սկսեցի ռադիոյով պատմել կոնգրեսի մասին: Առաջին ժուռնալիստը, որն ինձ տվեց այդ հնարավորությունը, Տեր-Պետրոսյան Լուսյան էր: Նա սովետական ռուսերեն վարում էր այդ հաղորդումը: Հրավիրեց ինձ և ասաց. «Պատմիր այդ կոնգրեսից»: Ես սկսեցի պատմել: Հետո Լուսյան, կարծում եմ, դրա համար նկատողություն ստացավ: Պրոֆեսիոնալները նկրթին ազատության շատ մեծ դոզա ունեն: Եթե ես տեսնում եմ հնարավորությունը, ապա միշտ օգտագործում եմ այն. ինչ իմանաս՝ դրանից հետո ինչ կգա: Ես երբեք վարչական կառույցի մեջ տեղավորված չեմ եղել: Դրա առիթը ինձ համար պրոֆեսիոնալ խնդիր կատարելու մի հնարավորություն է: Այդ ռադիոհաղորդումները շատ կարևոր էին այն առումով, որ մենք մենակ չենք, սոցիոլոգները նամակ են գրել Գորբաչովին և դատապարտում են: Ժողովրդին քաջալերելու խնդիրը շատ կարևոր էր, քանի որ նրա մեջ հզոր վախ կար. մենք բոլորս ընդվզում

ենք, բայց մամ դեմ ենք ընդվզում, այս մեծ պետության: Դրա համար էինք միմյանց կողքին մեզ լավ զգում, դրա համար էինք կանգնած հրապարակում, որտեղ կար պատապարում, և մեր մշակութային օջախի կողքին մեր պատմությունն էր մեզ պաշտպանում: Կարծում եմ՝ պաշտպանվելու ինդիրը շատ հզոր էր այն ժամանակ: Մենք համ դիմում էինք այդ պետությանը, համ նրանից պաշտպանվում էինք: Ես այդ կոնգրեսի մասին պատմում էի, որ ժողովրդին քաջալերեմ: Դրանից հետո եկան խորհրդային սոցիոլոգները. կոնֆերանս էր: Ես փորձում էի նրանց ներկայացնել մեր պատմության սոցիոլոգիական մեկնաբանումը: Առաջին անգամ ես զգա մի բացատրություն, որը մինչ այսօր համարում եմ շատ հետաքրքիր: Երբ փորձում էի նրանց բացատրել, թե մենք ինչ ենք ուզում, ինչ ենք անում, քանի որ մենք տարօրինակ կենդանիներ էինք նրանց աչքում, ասացի. «Դուք երբևէ հարցրել եք ձեզ, թե հայերը Երկրորդ համաշխարհային պատերազմում ինչու են այդքան հերոսներ տվել: Մենք փոքր ժողովուրդ ենք վերջապես, պետք է համապատասխան բաշխում լինի: Դուք սոցիոլոգ եք և գիտեք, որ բոլոր պատահական երևույթները հավասարապես են բաշխվում հասարակության և ժողովրդի մեջ: Մեծ թվերի օրենքն էլ ասում է՝ եթե այսքան մարդ կա, ուրեմն՝ դրանցից այսքանը այսպիսին կլինի: Բայց այս բացառության բացատրությունը դուք ունեք»: Պարզ է, որ չունեին, իսկ ես ունեի, որը կարող է և սխալ էր, բայց համենայն դեպս բացատրություն էր: Ես ասում էի, որ Եղեռնը մեզ համար եղել է ազգային նսեմացում: Ես Եղեռն ապրած մարդու զավակ եմ, և ինձ համար կարևոր է այն, որ իմ հայրը փորձում էր պատմել Եղեռնի ժամանակ գործած հերոսությունների մասին: Նա պատմում էր Եղեռնից փախչելը, բայց այնքան հետաքրքիր երանգ էր դնում մեջը, նաև հերոսական այնքան պատմություններ էր դրա հետ պատմում, որ ես Եղեռնը հիշում էի հորս ռեակցիային համապատասխան, որ հայրս կարողացել է այդ նսեմացումը ինձ չհաղորդել, բայց ենթագիտակցորեն հասկանում էի, որ դրանով ուզում է հոգեբանորեն ծածկել նսեմացումը: Օրինակ, պատմում էր. «Գիտես ինչ, քո հորեղբայրը արաբական նժույգ ուներ և երբ գնում էր, թուրքերը բոլորը կանգնած նայում էին, թե՝ Լս Վահանը....»: Վահանին Սիբիրում գնդակահարեցին՝ որպես դաշնակցականի, Անդրանիկին ծառայած մարդու: Վահանի կերպարը՝ որպես հերոս, մեր ընտանիքում միշտ կար: Կամ պատմում էր. «Հասրաթը թուրքերի

ոստիկանները վզից կախած ման էր գալիս, գյուղի տղաներով նստում հաղթում էինք, թե քանի ականջ կար»: Հայրս սա դիտում էր որպես հերոսություն և ընդվզում: Ասում էր. «Իմ քեռի Կարոն այնպիսի նղունգներ ուներ, որ միայն քարով էր կարողանում տաշել, աժդահա էր»: Այսինքն՝ նա ուզում էր ստեղծել աժդահաների, հզորների կերպարները: Հայրս 1946 թ. համալսարանից հեռացվել է ընդվզման համար: Դրանից հետո Հայաստանում գյուղ չէր մնացել, ուր ընտանիքով չէր գնացել: Ամեն անգամ, որտեղ զգացել էր, որ ազգանունը կիմանան և կնույնացնեն Վահանի ու համալսարանից հեռացվածի հետ, և ինքը կդառնա հերթական գոհը, տան անկյունում միշտ պահում էր տաք շորերով ճամպրուկը, որ գիշերը իրեն տանելիս վերցներ: Այդ մարդը, որն ուզում էր ներկայացնել մեր հերոսական պատմությունները, դրսում չէր կարող դա անել: Գալիս պատկում էր բազմոցին և պատմում դրանք փակ դռան ետևում: Մեր բանկանների մեջ մի կին կար, նա գիտեր, որ հայրս այդպիսի պատմություններ է պատմում, ասում էր. «Հակոբ, ես քո երեխաներին եմ խնայում, որ դու չես աքսորվում»: Բայց հայրս շարունակում էր պատմել: Եվ նա նրան հարցնում էի. «Հայրիկ, դու պատմում ես այդ հերոսական պատմությունները, բայց չէ՞ որ դուք երկիրը թողեցիք ու փախաք»: Ասում էր. «Գիտես, բալիկ ջան, փախանք, դիմադրեցինք, բայց ուժը, որի առաջ մենք չկազմակերպված և խեղճ կանգնած էինք, շատ մեծ էր, և մեզ էլ կազմակերպողներ չեղան: Ու մենք այդպես թողեցինք երկիրը: Բայց մեկ է, քո երկիրը նա է, քո հայրենիքը Էրգիրն է, ու դու պիտի իմանաս նրա պատմությունը»: Հայրս գիտեր բոլոր սարերի, գյուղերի պատմությունը: Այսինքն՝ ես Եղեռնի կոլեկտիվ հիշողության կրողն էի, ունեի նաև հերոսականի գաղափարը: Սովետական սոցիոլոգներին ասում էի. «Եղեռնը ազգային նսեմացում է եղել, մենք պարտվել ենք, հետո որոշ էներգիա հավաքել ենք, բայց տեղ չենք ունեցել ցույց տալու, որ մենք այդ նսեմացումից հետո պիտի կռվենք: Եվ Երկրորդ համաշխարհային պատերազմը մեր առաջին կռիվն էր, և հաղթական կռիվ էր: Դա հայերի համար առաջին հաղթական պատերազմն էր, այստեղ գերմանացիները դրպ չունեն, ոչ էլ ռուսները կապ ունեն: Հայերի համար մի առիթ էր, դուշտ էր, դրա համար են այդ քանակությամբ հերոսներ տվել, ուզել են ցույց տալ իրենց բազուկը, ցույց տալ, որ կռվել գիտեն»:

Պատմում է ՀԱՄԱՋԱՍՊ ՀՈՎՍԵՓՅԱՆԸ, Երևան, 14.02.2006 թ.

Ծնվել եմ 1960 թվականին, Երևանում: Երբ 1988-ին սահմանի վրա սկսեցին մարտական գործողությունները, մենք՝ մի քանի ընկերներով, չկարողացանք հանգիստ նստել մեր տեղերում: Որոշեցինք մասնակցել պաշտպանական գործողություններին: Սկզբնական շրջանում Վիտյա Այվազյանի հետ էինք համագործակցում: Նա մեզ խորհուրդ տվեց գնալ քաղաքի այն շրջանը, որտեղ ես ապրում եմ և այնտեղի նոր կազմավորվող ջոկատներից մեկին զինվորագրվել: Ջոկատներից մեկի հրամանատարը Ավետիս Ավետիսյանն էր, որի գլխավորությամբ մեկնեցինք մասնակցելու Վայքի շրջանի պաշտպանական գործողություններին: Այդ ժամանակ այնտեղ Խաչիկ, Բարձրունի գյուղերի մարտական գործողություններն էին ընթանում, որոնց մենք չենք մասնակցել: Մեր առաջադրանքն էր պահպանել կոնկրետ Գյուլիստանի և Խնձորուտի տարածքները: Հետագայում Ավետիս Ավետիսյանը աշխատանքի անցավ Ներքին գործերի ծառայությունում: Ջոկատի հրամանատար դարձավ Արամ Գաբրիելյանը: Նա մեր ընկերներից էր, մենք միասին էինք կազմավորել այդ ջոկատը: Իսկ երբ կազմավորվեց Ազգային պետական բանակը, Արամ Գաբրիելյանը բանակում դարձավ գումարտակի հրամանատար: Դրանից հետո ես էի ջոկատի հրամանատարը: Իմ հրամանատարությամբ ջոկատը մասնակցել է մի շարք մարտական և պաշտպանական գործողությունների: Եղել ենք Շահումյանի, Մարտունու շրջաններում, Երասխի, Մեղրու պաշտպանական դիրքերում, Քարվաճառում:

Վայքից հետո եղել ենք Շահումյանի շրջանում՝ Մանասի Շեն, Գյուլիստան, Հայ Պարիս, Խարխափուտ: Այն ժամանակ՝ 1991 թվականին, մարտական գործողությունները թեժ չէին: Զավեշտական դեպք եմ հիշում: Կանգնած էինք Կարաչինար գյուղի կողքի «Տասներեք» դիրքում, որը Շեֆեկի մոտակայքում էր: Ադրբեջանցիների սահմանագծում շարժում նկատվեց: Շարժումն սկսեց մոտենալ դեպի մեր դիրքերը: Մեր ջոկատից Հուսիկ Սարգսյանը, որն իր էությամբ շատ անհանգիստ էր, առանց ինձ զգուշացնելու խրամատից դուրս եկավ և փորսող գնաց ընդառաջ: Ես ձայն տվեցի՝ «Ե՛տ վերադարձիր, ետ վերադարձիր», նա չլսեց: Նրա ետևից ես գնացի: Ես հասա այն պահին, որ նա շուռ եկավ և ձեռքով ինձ ազդանշան արեց, որ սուս մնամ: Պարզվեց, որ թուրքերի կողմից մի էշ էր առաջ եկել: Ետ վերադարձանք, տղաները ահագին ծիծաղեցին, որ էշը սահմանը անցել էր և լարված վիճակ էր ստեղծել: Բայց ես հասկացա, որ Հուսիկը այն տղան է, որը թույլ չի տա մարտական գործողության ժամանակ մեկը իրենից առաջ անցնի, ինչը մարտերի ժամանակ բազմիցս ապացուցվել է:

Մի զավեշտական դեպք էլ եմ հիշում: Կիրովաբադի դեսանտային գունդը շրջապատել էր Շահումյանի շրջանը և ուզում էր անձնագրային ռեժիմ անցկացնել: Մենք Երևանից գնացած տղաներ էինք, պարզ է, որ ադրբեջանական գրանցումով անձնագրեր չունեինք: Բարձրացանք Կարաչինարի վերևի «Տրմբատի» անտառները: Գիշերները իջնում էինք դիրքերը, բայց ցերեկները գյուղում չէինք լինում, որպեսզի Կարմիր բերետավորները մեզ չբռնեն: Մեխանիզացիայի աղմուկ լսվեց: Գետի վրա ինչ-որ լույսեր էին առկայծում: Բոլորը կարծեցին, թե ինչ-որ մեքենայացված (մոտորիզացված) ուժեր են առաջ գալիս դեպի անտառ: Լարված վիճակ ստեղծվեց: Ես Հուսիկին էի փնտրում, զգացի, որ նա չկա: Նկատեցի, որ մեկը դիրքից իջնում է ներքև: Ընդառաջ գնացի: Տեսա՝ Հուսիկն է: Գնացել է առաջ, որպեսզի բոլորից առաջ պարզի, թե ինչ է կատարվում: Ծիծաղելով եկավ և ասաց, որ գյուղի լուսավորություն տվող մեխանիզմն է աշխատում, ոչ մի լուրջ բան չկա: Հաջորդ օրը իմացանք, որ ազգային հերոս Լեոնիդ Ազգալդյանի մեքենան ռուս զինվորականները պայթեցրել են: Այնպես որ, ներքին անհանգստությունը պատահական չի լինում:

Բ.Կ.- *Որտեղ էին մեքենան պայթեցրել:*

Հ.Հ.- Ինչա գետի կողքով անցնելիս ռուս զինվորականները կանգ-

անցրել են՝ իբր ստուգեն, նռնակները գցել են մեքենայի մեջ, պայթեցրել: Լեոնիդը չէր վիրավորվել, բայց մեքենան՝ «ՈՒԱԶ»-ը, շարքից դուրս էր եկել:

Եղել ենք Մարտունու շրջանի Ճարտար գյուղում, որտեղ մնացել ենք մոտ տասը-տասնհինգ օր: Ռմբակոծության ժամանակ ռումբն ընկել էր արտաքնոցի վրա, պայթել:

Մենք առաջին լուրջ մարտերի հանդիպեցինք Արծվաշեն գյուղում:

Բ.Կ.- *Ինչքան մնացիք Արծվաշենում, ինչ կռիվներ էին տեղի ունենում, ինչու դուրս եկաք, ինչպես թողեցիք:*

Հ.Հ.- Արծվաշեն գյուղ մենք գնացել էինք, երբ վիճակը շատ սրվել էր: Արծվաշենը ի վիճակի չէր պաշտպանվելու:

Բ.Կ.- *Ինչու եք կարծում, որ անհնար էր պաշտպանել, ինչ դիրք էր, ինչ տեղ էր:*

Հ.Հ.- Երբ հայկական սահմանից անցնում են դեպի ադրբեջանական սահմանը, բարձունքի վրա ուղեկալ էր: Այդտեղից ճանապարհը իջնում է դեպի ներքև և ոլորաններով՝ մոտավորապես տասներկուսից տասնչորս կիլոմետր, հեռավորությունը հաստատ չգիտեմ, ընկնում է ադրբեջանական հողի խորքում: Արծվաշեն գյուղը ներս է ընկնում: Հարկավոր էր մոտ վեց-յոթ գյուղ գրավել, որպեսզի հնարավոր լիներ Արծվաշենը պահել, իմ հասկանալով, որքան ես նկատեցի տարածքը, կողքի գյուղերից հնարավորություն կար անընդհատ ուղիղ նշանառությամբ խոշոր տրամաչափի գնդացիրներով և «Գրադ» կայանքներով շատ դիպուկ հարվածներով ամբողջ գյուղը հողին հավասարեցնել:

Բ.Կ.- *Գյուղը նրանց նկատմամբ ցածր դիրքում էր:*

Հ.Հ.- Ու որպեսզի պահվեր գյուղը, այն տարածքները, որտեղից հնարավոր էր գյուղը գնդակոծել, պետք է գրավվեր: Իսկ այդ ժամանակ՝ 1992 թվականը, մեր նորաստեղծ հանրապետության համար շատ բախտորոշ ժամանակաշրջան էր: Կողքի գյուղերը մալականների գյուղեր էին, ազգային խտրականության շուրջ աղմուկ կբարձրանար, ինչի տակից մենք, երևի, այն ժամանակ չկարողանայինք դուրս գալ: Գյուղում մնացին մի խումբ հայրենասեր երիտասարդներ:

Կային և երևանցիներ, որոնց ես չէի ճանաչում: Գյուղում հիմնականում մնացել էին ծերերը, կանայք և երեխաները: Այդ կազմը դուրս չէր եկել, երևի, գյուղը չհանձնելու նպատակով: Երբ լսեցինք, որ Արծվաշենը

վտանգի մեջ է, Վազգեն Սարգսյանը կանչեց ջոկատներին, կոորդինացման աշխատանքները նա էր կատարում: Ասաց, որ Արծվաշենը վտանգի մեջ է, պետք է գնանք, եթե չենք կարողանա գյուղը պահել, գոնե ժողովրդին դուրս բերենք, որովհետև հազար հինգ հարյուր հոգի ծերեր, կանայք, երեխաներ կային գյուղում: Մենք մեր ջոկատով շտապեցինք այնտեղ, բայց չէինք կարողանում գյուղ մտնել, որովհետև ճանապարհը գտնվում էր ինտենսիվ կրակի տակ: 1992 թվականի օգոստոս ամիսն էր, մառախլապատ օր էր, անձրև էր ու ցուրտ: Ես մրսում էի: Եվ որ ասում են՝ օգոստոս ամիսն էր, ասում եմ՝ «Բա ինչու էի ես այդքան մրսում»: Ինչպես եղավ, որ մենք մտանք Արծվաշեն գյուղը: Այնտեղ տանկեր կային, գնդապետ Խաչատուրովն էր կոորդինացնում այդ աշխատանքները: Գլխավոր հրամանատարը նա էր: Հրաման տվեց, որ երկու տանկերը մտնեն, մենք էլ ետևից՝ մյուս տեխնիկաներով և մեքենաներով մտնենք գյուղ: Տանկիստներից մեկը շատ երիտասարդ և խիզախ տղա էր, միանգամից թափով առաջ գնաց, հավասարակշռությունը կորցրեց, տանկը թեքվեց կողքի վրա: Ջառիվայր էր՝ մոտ երկու-երեք կիլոմետր ներքև ուղեկալից, չկարողացավ տանկը գործողության մեջ գցել: Տանկի աշտարակի վրայի գնդացիրը հանեց, դիրքավորվեց և սկսեց կրակել դեպի թուրքերը: Դրանից ոգևորված՝ բոլորս միանգամից առաջ գնացինք: Դա առիթ հանդիսացավ, որ ժողովուրդը, կռվող զորքը, ազատամարտիկները իրենց մեքենաներով մտնեն գյուղ:

Մեր ջոկատից մոտ տասը-տասներկու հոգի էինք՝ Արամ Գաբրիելյանն էր, ես էի, Հուսիկ Սարգսյանն էր...: «Տիգրան Մեծի» տղաներից կային՝ Սմբատ Այվազյանն էր, Հարությունյան Յուրան էր՝ այն ժամանակ ԱԺ պատգամավոր էր, պաշտպանության խորհուրդն էր հանդիսանում, Տիգրանն էր: Իրար հետ մեքենաներով գնացինք, հասանք Արծվաշեն: Արծվաշենը գտնվում էր «Գրադ» կայանքի շատ ինտենսիվ հրաձգության տակ: «Գրադ» կայանքից արձակած արկից ես կոնտուզիա եմ ստացել: Այդ դեպքը դժվար հիշելի է և զավեշտական: Սոված էինք: Խանութ կար: Խանութի տարածքը մտանք, որպեսզի մի կտոր հաց ուտենք: Ասացինք՝ «Տեսնենք ինչ կա խանութում»: Խանութի նկուղից մեր ընկեր Հուսիկը մի արկղ «Тушонка» բերեց: «Գրադ» կայանքի արկը պայթեց հենց մեր կողքին: Բոլորս ընկանք գետնին: Ես հիշում եմ, որ Հուսիկը սկսեց ուժեղ գոռալ, ինձ մի պահ

թվաց, թե նա վիրավորվել է: Հետո ասաց՝ «Հո կանայք չեք՝ պառկել եք, վեր կացեք՝ մի կտոր հաց ուտենք, գնանք տեսնենք՝ էդ ժողովրդին ինչ ենք անում»: Վեր կացանք, այդ պահին երկրորդ արկը ավելի մոտ խփեց: Հիշում եմ, որ Արամ Գաբրիելյանը կողքի վրա ընկավ: Ես տեսա՝ նա ինչպես ընկավ: Ճիշտ է, բեկորային վիրավոր չկար, որովհետև արկերը մեր բախտից կոմուլյատիվ էին: Բայց մեր տղաներից մեկին հարվածը խփել բարձրացրել էր ծառի վրա: Նա ոսկորների կոտրվածքներ էր ստացել: Ամեն ինչ բարեհաջող էր, ջոկատից զոհ չտվինք: Սպասեցինք, մինչև մութն ընկնի: Հիշում եմ՝ սրտխառնոց ունեի, վատ էի զգում: Մի կերպ հասանք մեր մեքենային: Երբ մութն ընկավ, ժողովրդին ուղեկցեցինք, բերեցինք մինչև մեր սահմանը: Զոհեր ժողովրդի կողմից չեն եղել, որովհետև օպերացիան Խաչատուրովի կողմից կազմակերպվել է շատ լավ: Այն ժամանակ մեզ հետ էր ՄՀՕԶ-ի հրամանատար Ռուբոն, որը հետագայում զոհվել է Ղարաբաղում: Նրա տղաները պաշտպանում էին մեզ, ընդ որում՝ պրոֆեսիոնալ կերպով, որպեսզի հանկարծ չընկնենք թշնամու լարած ծուղակների մեջ: Այդպես բերեցինք ժողովրդին: Վիրավորներ կային: Հիշում եմ մի դեպք, որ բոլորիս մոտ ծիծաղ առաջացրեց: Գյուղացիներից մեկը՝ տարիքով մի մարդ՝ մոտ վաթսուն-յոթանասուն տարեկան, ասաց՝ «Ա՛յ տղաներ, որ իմանայի այսքան հեշտ դուրս ենք գալու այդ փակ տեղից, բա իմ խոզերը ինչո՞ւ չբերեցի»: Խոզերի համար էր դժգոհում: Մենք էլ ծիծաղեցինք, ասացինք՝ «Որ խոզերը բերած լինեիր, հիմա մի կուշտ խորոված կուտեիր, հորեղբայր»:

Բ.Կ.- *Զեզանից հետո այնպես ջոկատ մնաց:*

Հ.Հ.- Մեզանից հետո, երբ ժողովրդին հանեցինք, որոշակի ուժեր դեռ պաշտպանում էին, բայց կռիվը շատ օրհասական էր գնում:

Բ.Կ.- *Նրանք զոհվեցի՞ն:*

Հ.Հ.- Բավականին զոհեր են եղել այնտեղ: Ճիշտ է, ես իմ աչքով չեմ տեսել, բայց լսել եմ, որ բավականին զոհեր ենք ունեցել: Ընդ որում, մի «ԲՄՐ»-ի անձնակազմը՝ տասը հոգուց ավել մարդկանցով, իրենց հրամանատարի հետ, ընկել էր ծուղակի մեջ: Թուրքերը գրավել էին մեր դիրքը: Մերոնք գնացել են, թուրքերը հայերեն կանչել են՝ «Մոտ եկեք, մոտ եկեք, մենք ենք»: Մերոնք, կարծելով՝ հայեր են, հենց իջել են «ԲՄՐ»-ից, գնդացիրով բոլորին սպանել են: Այդ ժամանակ մեր նորաստեղծ բանակի առաջին զորակոչիկներն էին, որ մտնում էին մարտերի

մեջ: Նրանց մեջ հայրենասեր տղաներ կային:

Այդ թվականին՝ 1992-ին, եղել ենք նաև Երասխի դիրքերում: Վազգեն Սարգսյանն ասաց, որ դիրքերը գրավել են, բայց պաշտպանություն է պետք իրականացնել, պետք է գնանք, այնտեղ պաշտպանենք: Բարձրացել էինք դիրքերը: Ադրբեջանցիները մոտ երկու-երեք օր այդ դիրքերը ինտենսիվ կրակի տակ էին պահում: Ուզում էին ետ վերցնել, որովհետև դրանք ստրատեգիական նշանակություն ունեցող դիրքեր էին՝ Այունիքի հետ կապող ճանապարհը պահում էին կրակի տակ: Լավ չէր կազմակերպված, թե մոռացության էր տրված, մեկ-երկու օր սոված էինք և քնատ: Կապվեցինք, որ սոված ենք, հաց բերեն: Ոչխարի խաշլաման կտոպայով բերել դրել էին, որ հաց ուտենք: Չէր ստացվում, որովհետև անընդհատ կրակի մեջ էինք: Ականանետի ականը պայթեց, հողը լցվեց կտոպայի մեջ:

- Ա՛յ հրամանատար, բա մի կտոր հաց չուտենք, էդ խաշլաման փչացավ:

Մեր Հուսիկ Սարգսյանը շատ լավ թուրքերենին տիրապետում էր: «Վիոլա» ռացիաներ կային, որոնք նույն հաճախականության տակ էին, թուրքերի կապն էլ էր լսվում: Հուսիկը ռացիայով թուրքերեն ինչ-որ բան էր խոսում: Խոսեց վերջացրեց, կրակը մեր դիրքերի նկատմամբ դադարեց: Ասաց՝ «Եկեք, եկեք էս հողոտ խաշլաման մի քիչ ուտենք»: Նստեցինք, խաշլաման կերանք, վերջացրինք: Դարձյալ ռացիան վերցրեց, չգիտեմ՝ ինչ ասաց, բայց թուրքական հայհոյանքները հասկանում եմ, հիշում եմ, որ հայհոյում էր: Սկսեցին մեր դիրքին ուժեղ խփել: Հետո ասում եմ.

- Ա՛յ տղա, այդ ինչ արեցիր:

- Ես նրանց ասացի, որ ես թուրք եմ, ինձ գերի են բռնել, այս դիրքի վրա եմ գտնվում, մի՛ կրակեք, որ ես չզոհվեմ: Հավատացին: Հետո, երբ ուտելը վերջացրինք, ես սկսեցի հայհոյել նրանց, թե՝ «Ես ձեզ խաբել եմ, որ մի կտոր հաց ուտենք, այ շան որդիներ: Դե արի կրակենք իրար»:

Ես ուզում եմ պատմել Մարտակերտի Մատաղիս գյուղի մասին, որտեղ մենք գտնվել ենք բավականին երկար ժամանակ, հինգերորդ բրիգադի կազմում՝ Մանվել Գրիգորյանի հրամանատարության ներքո: Բայց եղել ենք ոչ պատերազմի ժամանակ՝ 1994 թվականից հետո, երբ պաշտոնապես զինադադար էր հայտարարված: Բայց փոխհրաձգու-

թյունները դեռ շարունակվում էին: Այնտեղ մնացել ենք 1995 թվականի ապրիլ ամսից մինչև օգոստոսը, երբ արդեն բրիգադը պետք է դուրս գար այդտեղից: Տարածքը հանձնվեց Լեռնային Ղարաբաղի պաշտպանության ուժերին: Այնտեղ հետաքրքիր դեպքեր տեղի ունեցան: Այն տարածքը, որը հանձնել էին մեր պաշտպանությանը, կոչվում էր «Զասադի» դիրք: Այսինքն՝ Երևանի գումարտակի դիրքերն էին: Դեմքով Լենինավան գյուղին էինք նայում: Աջ կողմում Լեռնարխի դիրքերն էին, ձախի վրա Երևանի գումարտակի դիրքերն էին:

Բ.Կ.- *Զորի՝ Զայլաղի մեջ:*

Հ.Հ.- Գետի ափին, սկսած Լեռնարխից մինչև այն բարձունքը, որը պահում էր Երևանի առաջին գումարտակը, այդ հատվածը տվել էին մեր պաշտպանությանը: Դիմացը ականապատված էր: Դե, այդքան վտանգ չէինք սպասում այդտեղից:

Բ.Կ.- *Սիֆոնից վերև էիք:*

Հ.Հ.- Հա, գյուղի և «Նասոնսի» կոչվող կայանի արանքում: Գիշեր էր: Մենք որոշել էինք երկու հերթափոխով իրականացնել ծառայությունը: Ալբերտ Բազեյանը՝ Երկրապահի փոխնախագահը, կանչեց: Զրուցեցինք: Ասաց, որ հարկավոր է ջոկատով գնանք այնտեղ, եռամյա վարժահավաքներին օգնենք, որովհետև տղաները անփորձ են, մենք՝ հին կովողներ ենք: Ջոկատի կազմը մեծացրինք: Մեզ հետ կային մարտերին չմասնակցած երկու-երեք հոգի տղաներ: Դիրքերում գիշերվա հերթապահությունների ժամանակ, եթե այդ տղաներն էին լինում, ես չէի քնում, որ նրանք հանկարծ չվախենան կամ ինչ-որ բան տեղի չունենա: Մի գիշեր դիրքերն ստուգելու ժամանակ ձախ թևի հերթապահը չկար: Փնտրում եմ նրան: Անունը Մայիս էր: Նա իմ ջոկատից չէր, տվել էին որպես օգնություն: Բրիգադի վարձու զինվորներից էր: Զայն եմ տալիս՝ պատասխան չկա: Մեկ էլ քնած մարդու խռմփոց եմ լսում: Նայեմ, տեսնեմ՝ խոտերի ու մացառների մեջ իր ավտոմատը գրկել է ու քնել: Մոտեցա, զգուշորեն ավտոմատի վրայից պահունակը հանեցի, որ չկարողանա կրակել: Որոշեցի նրան պատժել քնելու համար: Մի անգամ կրակեցի նրա կողքին, նա թափով վեր թռավ, զենքը պահեց ինձ վրա: Եթե պահունակը հանած չլինեի, երևի ինձ կխփեր: Նրան ասացի, որ ընկերների կյանքը վտանգի է ենթարկել, նրա պատճառով կարող էին բոլորիս սպանել: Ասացի՝ «Հիմա վազելով գնում ես խրամատները և ինքդ N1 տագնապ ես հայտարարում: Զենքդ վերցնում եմ: Քեզ կալանավորում եմ»: Նա վազելով գնաց: Ես նախօրոք պայմանավորվածություն ունեի իմ տեղակալի՝ Ղարիբյան Վարազդատի հետ: Խաղաղ ժամանակ, երբ կրակոց չկա, եթե ես երկու հատ կրակոց անեի, նշանակում էր՝ ես տագնապի ազդանշան եմ տալիս: Երկու անգամ կրակեցի: Զգացի, որ Լենինավան գյուղի դիրքերում, որտեղ թուրքերն են, լույսեր վառվեցին, շարժում սկսվեց: Մեր տղաներն էլ երկու կրակոցներով ինձ պատասխանեցին, որ արդեն ոտքի են: Սկսվեց մեր շարժը: Նրանք գիտեն N1 տագնապ հայտարարելու դեպքում ականանետողը որ դիրքում պետք է կանգնի, գնդացրորդները և ինքնաձիգները՝ որտեղ: Այդպես դիրքերում շարժ է սկսվում: Երևի թուրքերը գիշերային հեռադիտակներով նկատեցին մեր շարժը: Կասկածելով, որ կարող է հարձակում լինի, նրանք նույնպես իրենց մոտ տագնապ հայտարարեցին: Եվ հենց այդ տագնապի պահին աղրբեջանցիները իրենց իսկ տեղակայած ռումբերից մեկերկուսի վրա պայթեցին: Երևի շտապելուց էր կամ անփորձ էին: Լեռնարխի դիրքերից էլ ղարաբաղցի տղաները կարծեցին, թե մեր մեջ արդեն կռիվ է գնում: Վերևից սկսեցին մեծ տրամաչափի գնդացիրներով գնդակոծել թուրքերին: Մի հետաքրքիր միջադեպ էլ կար, որ ականի վրա պայթած աղրբեջանցիներից մեկը, որ վիրավորվել էր՝ ոտքը կտրվել էր, պառկած տեղից գոռում էր՝ «Армян, не стреляй, я не хочу воевать»: Ղարաբաղցին էլ ասում էր՝ «Ты думаешь я хочу ?»: Եվ կրակում էր: Երբ այդ ամեն ինչը դադարեց, վերջացավ, Զերմուկեցի Համոն, որ Երևանի գումարտակի հրամանատարն էր, ասաց՝ «Այդ ինչ է եղել, Համազ ջան, թազա կռիվ էիք սկսում»:

Բ.Կ.- *Իսկ պատերազմի շրջանում, 1993-1994 թվականներին որտեղ էր եղել:*

Հ.Հ.- 1994 թվականին, երբ մենք գտնվում էինք Քարվաճառում, մի դեպք տեղի ունեցավ: Մեր հակաօդային ուժերը արդեն կազմավորվել էին, ինչի մասին անգամ թերթերում տպագրեցին: Մեր ջոկատի Արամ Դաբրիելյանի հնարամտության շնորհիվ մենք գերի վերցրինք ազգությամբ թաթար մի օդաչուի, որին ռմբակոծության ժամանակ մեր հակաօդային ուժերն էին խփել: Նկատեցինք, որ օդաչուն պարաշյուտով ցած է իջնում: Շատ բարդ, սառած, ձյունապատ տարածքներ էին: Ճիշտ է, ոչ որ մեզ հրաման չէր տվել և հանձնարարված չէր դա կատարել, բայց

մենք ներքին հրամանով մեզ ստիպեցինք, որ պետք է բռնենք այդ օդաչուին: Նա վայրէջք էր կատարել չեզոք տարածքում՝ ոչ թուրքերինն էր, ոչ՝ մերը:

Բ.Կ.- *Որտեղ էր այդ տարածքը:*

Հ.Հ.- Մանրամասն չեմ կարող նկարագրել, որովհետև... սարեր են, էլի, ամբողջը սարեր են: Տեղերով չեմ կարող ասել, որովհետև մենք այնտեղ մոտ տասնհինգ օր ենք եղել: Դիրքի անունը չեմ հիշում, մոռացել եմ: Երբ իջավ այդ օդաչուն, մենք որոշեցինք գնալ, սարերով մագլցել, հասնել չեզոք տարածքը, օդաչուին գերի վերցնել: Մոտավորապես չորս-հինգ կիլոմետր սառույցների, ձյունների միջով գնացինք: Օդաչուն ընկել էր, բայց երևույթին ոտքը վնասել էր: Ու երբ հասնում էինք այդ օդաչուին, նստած էր ձյունների վրա: Երբ տեսավ, որ զինվորական հագուստով մարդիկ են մոտենում, նա իր ատրճանակը հանեց, «SS» մակնիշի ատրճանակ էր, և ռուսերեն ասաց՝ «Стой! Кто идет?»: Այդ պահին մենք երևի ոչինչ չկարողանայինք անել, որովհետև նա կամ իրեն կխփեր, կամ եթե կրակեր դեպի մեր կողմը, մենք էլ նրան կկրակեինք: Արամ Գաբրիելյանը մի հնարամտություն արեց, ասաց՝ «Брось оружию, это майор Сидоренко!»: Նրան թվաց, թե ռուսական զորքն է: Ասաց՝ «Сдаюсь!», և զենքը գցեց: Այդ պահին մենք մոտեցանք նրան, գերի վերցրինք: Նա ասաց՝ «Где майор, где майор»: Նրան հետաքրքիր էր՝ մայոր Սիդորենկոն որն է: Մեր տղաներից մեկը բավականին հետաքրքիր հարցադրում արեց՝ «Слушай, какой майор, где твои манаты?»: Նա ասել էր, որ ինքը վարձու զինվոր է, անունը Մարատ է, ինքը թաթար է, կռվում է ադրբեջանցիների կողմից: Դրա համար այդ տղան ձևը առնելով այդպես ասաց, որ եթե կռվում ես, բա փողերդ որտեղ են: Երբ համոզվեց, որ մենք հայեր ենք, արդեն ուշ էր: Նրան կալանավորեցինք, բերեցինք հանձնեցինք համապատասխան մարմիններին: Ազգային անվտանգությունից եկան: Հետո Աստվածատուր Պետրոսյանը մեզ բանավոր շնորհակալություն հայտնեց և ասաց, որ Ազգային անվտանգության տղաները շատ գոհ են, որովհետև պլանշետ-պայուսակի մեջ եղած գծագրերում և քարտեզներում շատ կարևոր տեղեկություններ կային: Այդ դեպքերի հետ կապված՝ ինձ և մի քանի տղաների պարգևատրել են մեդալներով, ես՝ «Մարտական ծառայության համար» մեդալով, Հուսիկ Սարգսյանը՝ «Գարեգին Նժդեհ» մեդալով:

Բ.Կ.- *Իսկ Քարվաճառի գրավման մարտերին չե՞ք եղել:*

Հ.Հ.- Ես անմիջական մարտերին չեմ մասնակցել: Ես ետ եմ եկել, տղաները մնացել են այնտեղ: Մեր տղաներից մասնակցել են: Բայց ես գոհ էի, որ զոհեր չունեցանք: Մենք զոհեր տվել ենք ամենասկզբից, երբ ջոկատները մեկ էին՝ «Շենգավիթի երկրապահ»: Հենց այդ անունը մեր ջոկատի վրա մնաց 1989 թվականից, երբ դեռ նոր կազմավորվում էին ջոկատները և բոլորս մի տեղ էինք հավաքվում: Կայարանի դեպքերը բոլորը հիշում են: Այդ դեպքերի ժամանակ բոլորը մեր ջոկատի տղաներն էին: Վեց հոգու կորցրինք, վիրավորվել են, ուղեղի ցնցում են ստացել:

Երբ գտնվում էինք Մարտունու շրջանի Ճարտար գյուղի պաշտպանական դիրքերում, Արամ Գաբրիելյանն ասաց, որ հանձնարարություն նոր ստացել, որպեսզի գնանք Ֆիզուլիի դիրքերի դիմաց, գործողություն իրականացնենք: 1992 թվականն էր: Հասանք այն դիրքերը, որտեղ գործողությունը պետք է իրականացվեր: Այն ժամանակ Ավոն՝ Մոնթե Մելքոնյանը, դեռ կենդանի էր, ինքն էր նախապատրաստել այդ դիրքերի վրա հարձակվելու օպերացիան: Կոնկրետ մենք չպետք է իրականացնենք այդ օպերացիան, մենք, հարձակվելով այդ դիրքերի վրա, պետք է ուշադրությունը շեղենք, որպեսզի կողքից օպերացիան իրականացնեին: Ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող դիրքը պետք է գրավեին, որպեսզի հետագա առաջխաղացումը ավելի հեշտ լիներ: Ամբողջ ցերեկը պատրաստվեցինք, որ լուսադեմին սկսենք հարձակումը: Մեր ջոկատի տղաներից մեկը՝ Աշոտ Սարգսյանը, քիչ էր մասնակցել մարտական գործողություններին: Որոշեցինք նրան չտանել մեզ հետ այդ գործողությանը: Ասացինք՝ «Աշոտ, դու կկանգնես այս դիրքում»: Մի հատ «SGM» մակնիշի գնդացիր էինք դրել, որը բավականին երկար հեռավորությամբ գնդակոծում է, նշանառության բանկով գնդակոծման հեռավորությունը մինչև երկուսուկես կիլոմետր էր: Ասացի՝ «Աշոտ, սա շատ լավ զենք է, հանձնում եմ քեզ»: «Ժիգուլիի» «շառավոյով» ոտքեր էի ասրքել: Նստեց, աշխատում էր չորս կողմի վրա: Մենակ պետք է պտտեր և ուղիղ նշանառությամբ կրակեր: Սովորեցրի, թե ինչպես պետք է կրակի: Ասացի՝ «Մենք որ գնանք, կապի մեջ կլինենք, դու արդեն կիմանաս, որ մենք ներքևում ենք: Ես քեզ ազդանշան կտամ, դու այդ վերևի դիրքերին կկրակես, որ նրանք գլուխները չհանեն, աղմուկը

չզգան, մինչև մենք բարձրանանք նրանց դիրքերը»: Ես նրան բացատրում եմ, իսկ նա անընդհատ հուզվում է, որովհետև մենք մեր կյանքը վստահում ենք նրան: Նրա հետ գնդացիրների վրա աշխատող մի քանի հոգի էլ կան: Նրանց ասում եմ՝ «Դուք պետք է այնպես պահեք թշնամու խրամատները, դիրքերը, որպեսզի նրանք գլուխները չկարողանան բարձրացնեն, ուշադիր չլինեն, մենք ներքևից կարողանանք բարձրանալ: Եթե անգամ մեզ նկատեն, չպետք է կարողանան մեզ գնդակոծել»: Ու Աշոտը անընդհատ հարցնում է՝ «Ո՞ւրտեղ եմ նշան բռնում, ինչ եմ կրակում, կլի ցույց տուր»: Մոտ հինգ անգամ ցույց տալուց հետո ես արդեն ջղայնացա: Տղաները քթի տակ ծիծաղում են, որ նա չզգա, չնեղանա: Վերջին անգամ ասաց՝ «Հրամանատար ջան, արի մի անգամ էլ ցույց տուր, տեսնեմ՝ ինչ եմ անելու: Ձեր կյանքը վստահել եք ինձ»: Արդեն որոշեցի այնպիսի բան անել, որ մի քիչ ծիծաղենք, լարվածությունը անցնի, տղաները նրան չծաղրեն: Ասացի՝ «Աշոտ ջան, արի, ուշադիր նայի»: Նրան այն դիրքով կանգնեցրի, որտեղից կրակած պարկուճները դուրս են թռչում: Ամառ էր, շոգ էր: Դոշը բաց էր, զինվորական հագուստը՝ կիտելը, գցած ուսերին: Այդպես եկավ, կռացավ: Ասում եմ՝ «Ա՛յ, այստեղից ուշադիր նայիր»: Ցույց եմ տալիս, թե ինչպես պետք է նշան բռնի, և կարճ կրակահերթ տվեցի: Եռման պարկուճները լցվեցին Աշոտի ծոցը: Հիմա նա գոռում է ու թափ է տալիս իրեն: Թևերը փակ էին, կոճկած էր: Պարկուճները լցվել են թևերի մեջ, վառում են: Վերջը, մի կերպ կիտելը հանեց, գցեց վրայից: Բոլորը ծիծաղում են՝ «Աշոտ, ինչ եղավ»: Ասաց՝ «Ի՞նչ պետք է լինի, բացատրեց՝ հասկացա»:

Պատմում են ռուս գրողներ ՎԱԼԵՆՏԻՆ ՕՍԿՈՑԿԻՆ, ԱՆԴՐԵՅ ՆՈՒՅԿԻՆԸ և ԳԱԼԻՆԱ ՆՈՒՅԿԻՆԱՆ (1990 թվականին ռուս մտավորականներ Թիմուր Գայդարը, Յուրի Չեռնիչենկոն, Գալինա և Անդրեյ Նույկինները, Վալենտին Օսկոցկին փորձեցին Լեռնային Ղարաբաղ գնալ: Ադրբեջանի ՕՄՕՆ-ը Ստեփանակերտի օդանավակայանից նրանց ետ ուղարկեց: Մոսկվա վերադառնալով՝ նրանք հիմնեցին «Ռուս մտավորականության Ղարաբաղ կոմիտեն» (КРИК)), Ստեփանակերտ, 1992 թ. օգոստոս:

Բ.Կ.- *Անդրեյ Ալեքսանդրովիչ, 1990-ից սկսած արդեն երրորդ անգամ եք Ղարաբաղում: Ի՞նչ փոփոխություններ են արձանագրվել այդ ընթացքում:*

Ա.Ն. - Առաջին այցելության ժամանակ ադրբեջանական ՕՄՕՆ-ը չթույլատրեց, որ մեր խումբը օդանավակայանից Ստեփանակերտ մտնի: Երկրորդ այցելությունը կապված էր Ելցինի ու Նազարբաևի դաշնաբաղյան առաքելության հետ: Այս մի այցելությունից հետո ես սթափվեցի, որովհետև տեսա ահավոր ավերածություններ, մեծ թվով հաշմանդամներ, սով, այն ամենը, ինչ իր հետ բերում է պատերազմը: Դժգոհում են մարդիկ, թե երբ է վերջանալու պատերազմը: Ոչ ոք չի էլ մտածում, որ հանկարծ այն կարող է վերջանալ ամոթալի խաղաղությամբ, որ իրենք կարող են շղթայվել Թուրքիայում կամ օվկիանոսից այն կողմ ստորագրված պայմանագրով: Սակայն ես տեսա ինքնավստահ. իրենց վիճակված խաչը մինչև հայրենի տան անվտանգությունը կրելու հաստատակամ պատրաստակամությունը: Հենց դա էլ թարմություն է հաղորդում Արցախ այցելողներին:

Վ.Օ.- Ես էլ եմ երրորդ անգամ լինում Արցախում, միայն այն տարբերությամբ, որ երկրորդ այցս առանձին էր, 1991-ի դեկտեմբերին: Այս

անգամ խիստ տպավորիչ էր 1991-ի դեկտեմբերին իմ տեսած ֆիդայական ջոկատների փոխարեն կարգապահ և ուժեղ բանակի գոյությունը: Համոզվեցի, որ Արցախի հայությունը ամենևին էլ չենթարկվելով կողմնակի ճնշումների, իր արյունով է նվաճել իր ճակատագիրը որոշելու իրավունքը:

Բ.Կ.- *Ո՞ւմ նկատմամբ ունեք:*

Վ.Օ. - Դրանք այն ուժերն են, որոնք կազմում են միջազգային հանրության կարծիքը, որոնք թելադրում են հաշտության պայմաններ՝ հաշվի չառնելով ժողովրդի ցանկությունը:

Բ.Կ.- *Իսկ հանրության այդ կարծիքի վրա ներազդելու լծակներ կան արդյոք:*

Վ.Օ.- Ես կարծում եմ, որ գլխավոր լծակը Արցախի ժողովրդի իր հզոր ուժի զգացողությունն է: Արցախցիների աշխարհընկալման մեջ ես տեղաշարժեր եմ նկատել: Հիշում եմ 1991-ի դեկտեմբերին Քոլատակի ջոկատի հրամանատար Օնիկի հետ իմ զրույցը: Նա ասաց. «Ես պատրաստ եմ զոհվել հանուն Արցախի ազատության»: Ես շոշափեցի, զգացի ինքնազոհաբերության ներքին այս կացությունը: Իհարկե, պատերազմ է, և այն պարտադրված է: Եթե այն ազգային ազատագրական բնույթի չլիներ, ապա ժողովուրդը հեշտությամբ եղեռնի, բնաջնջման կենթարկվեր: Հենց պատերազմելով ժողովուրդը պաշտպանեց ինքն իրեն: Անցյալ այցիս ժամանակ Շուշին, կախված Ստեփանակերտի վրա, ասես հրաձգարան լիներ. ամեն մի տուն թիրախ դարձրած կրակում էին բարձունքից: Շուշիի ազատագրումն այն անհրաժեշտ պայմանն էր, որը թույլ տվեց Ստեփանակերտին համեմատաբար հանգիստ ապրել: Իսկ առհասարակ հանգիստ լինել, քանի դեռ կար Աղդամի կրակակետը, անհնար էր: Այս իրավիճակում ես կոչ եմ անում ոչ թե արյունահեղության, այլ ուժին ուժով պատասխանելու, որն էլ կապահովի սեփական ճակատագրի պաշտպանությունը:

Գ.Ն. - Ես նկատեցի, որ ժողովուրդը հոգնել է պատերազմից: Ամենուր վիրավորներ են, կիսաքաղց մարդիկ, իհարկե, նաև հայության վիրավորանքի զգացումը: Նոր նբբերանգներ էլ զգացի, որտեղ արտահայտվում էր և խղճմտանք: Շատ զինվորներ ասում էին. «Ափսոսում ենք ադրբեջանցի զոհվող պատանիներին»: Փախստական ժողովուրդն էլ էր խղճում ադրբեջանցիներին, բայց չի ուզում նույն վայրում երբևէ ապրել նրանց հետ: «Ապրենք տարբեր վայրերում, բայց խաղաղ, առնտուր անենք, օգնենք իրար»,- ասում էին նրանք: Եվ քանի դեռ ժողովուրդը նկրտուստ պատրաստ է խաղաղությանը, ուրեմն և հասել է հաշտություն կնքելու ժամանակը: Մյուս կողմից, ամեն ինչ չէ, որ կախված է իր բնակավայրերն ու բարձունքները պաշտպանող զինվորից: Եվ այն, որ փաստորեն Ղարաբաղը մեծ ուժերի, մեծ պետությունների հարաբերությունների մեջ կարող է խաղաթղթի վերածվել, ինձ շատ է վիրավորեցնում:

Բ.Կ.- *Ի՞նչը նկատմամբ ունեք:*

Գ.Ն. - Չեմ կարող պատկերացնել, և որպես ռուս, կարծում եմ, որ Ռուսաստանում կան ուժեր, որոնց պետք է դա: Ռուս ժողովրդի մեջ՝ ոչ, սակայն պարոնայք զորականները, որոնք թշնամություն են սերմանում ժողովուրդների միջև, պետք է պատասխանատվության ենթարկվեն: Չգիտեմ էլ, թե ինչու է Պոլյանիչկոն հայտնվել խաղաղարարի, երկրի փոխվարչապետի դիրքում, երբ նրա ձեռքերը Աֆղանստանի ու դարաբաղցիների արյունով են թաթախված: Այ, դրա մասին մենք պետք է մտածենք Մոսկվայում: Ես տեսնում եմ, որ ԱՄՆ-ի մասնակցությունը ևս լավ բան չի խոստանում: Հայերն ու ադրբեջանցիներն ավելի շուտ իրար հետ ընդհանուր լեզու կգտնեին: Հիմա դա ավելի շատ է պետք ադրբեջանցիներին, քանի որ նրանց դրությունը շատ ծանր է: Նրանց կողմից հայրենարավոր անփորձ պատանիներ են զոհվում: Իհարկե, դա անհանգստացնում է և ադրբեջանցիներին: Մենք հանդիպել ենք ադրբեջանցի փախստականների հետ, ճիշտ է, նրանք լավ պայմաններում են գտնվում, բայց ահա մի քանի ամիս է, ինչ հայկական կողմը փորձում է նրանց փոխանակել Ադրբեջանում գտնվող հայ պատանդների հետ, սակայն ոչինչ չի ստացվում:

Բ.Կ.- *Որովհետև Ստեփանակերտում գտնվող փախստականները թրքեր են, իսկ ազգային փոքրամասնությունների նկատմամբ Բաքվում հատուկ վերաբերմունք կա:*

Վ.Օ.- Ռուսաստանում քիչ չեն այն ուժերը, որոնք ողբում են կայսրության անկումը: Նրանք երազում են կայսրության վերականգնումն իր նախկին սահմաններում: Ժամանակին ակադեմիկոս Սախարովն ասել է, որ կայսերական ինքնագիտակցությունը բազմաշերտ է, այն գոյություն ուներ ընդհանուր խորհրդային երկրի ծավալով և տեղայնացված ձևով՝ հանրապետությունների սահմաններում: Ահա և Ադրբեջանը կայ-

սերական ինքնագիտակցության ամենավառ օրինակն է, քանի որ Ղարաբաղի բնիկ ժողովրդի նկատմամբ Ադրբեջանի գործած եղեռնը հանդուգն ու մարդատյաց քաղաքականության արդյունք է: Ուստիև մեկընդմիշտ չենք կարող ասել, թե Ռուսաստանում բոլոր ուժերը հայերի կողմն են: Ու երբ խոսում եմ Ռուսաստանում Ղարաբաղի նկատմամբ համակրանքի մասին, ես նկատի ունեմ Ռուսաստանի ժողովրդավարական ուժերը: Եվ պատահական չէր, որ Գալինա Նոյկինան խոսեց Պոլյանիչկոյի մասին, Ռուսաստանի մտավորականությունը բողոքել է կառավարությանը, որը նման բայլերով իր հակումը դեպի ժողովրդավարություն կասկածելի է դարձնում:

Բ.Կ.- Ադրբեջանցիները հաճախ են խոսում հայկական ագրեսիայի մասին:

Ա.Ն.- Մենք եղել ենք Ղափանում և տեսել ադրբեջանական հարձակումների հետքերը: Նրանք անվերջորեն ռմբակոծում են, հայկական բաղաքները: Դա է ագրեսիան: Երբ խոսում են Ադրբեջանում ԼՂՀ-ի ագրեսիայի մասին, նախ պետք է ճանաչել այդ պետությունը՝ ԼՂՀ-ն, որը բանակ, կառավարություն և խորհրդարան ունի:

Բ.Կ.- *Նրանք ասում են՝ ագրեսիա Հայաստանի կողմից:*

Ա.Ն.- Հայաստանն օգնում է ԼՂՀ-ին: Բայց չէ՞ որ Թուրքիան էլ օգնում է Ադրբեջանին: Ինչո՞ւ է այդ մասին լռում միջազգային հանրությունը: Հայաստանի օգնությունը ագրեսիա չէ: Իսկ երբ խոսում են արցախցիների ագրեսիայի մասին, ծիծաղելի է: Անհասկանալի է, թե ինչու են միջազգայնագետ իրավաբանները նման որակում տալիս: Անտեղյակ ժողովուրդն ավելի շատ գիտի, իմաստուն է, քան այդ իրավագետները: Աշխարհն իրականում ոչինչ չարեց խաղաղության հասնելու համար: Ժողովուրդը սովորել է պատերազմել, պաշտպանվել, բայց այդ ամենը մազից է կախված, քանի որ շատ փոքր շրջան է ընդգրկում: Ջորի Բալայանի հետ հանդիպեցինք մարտիկներին, որոնք կանգնեցրել էին տանկերի հարձակումն ու շպրտել: Եթե չկանգնեցնեին, ապա դրանք մի քանի րոպեից կհայտնվեին Ստեփանակերտում: Այստեղ բանակի իմաստությունը հենց ժողովրդի իմաստությունն է: Իսկ Ադրբեջանում հավաքագրում են 16-ամյա պատանիներին և ուղարկում ռազմաճակատ: Գլխավերևում զնդակների սուլոցը լսելով՝ սարսափից թողնում են ինքնաձիգն ու փախչում: Հայ մարտիկներն ափսոսանքով են խոսում նրանց

մասին: Իհարկե, դա մնծահոգություն է, որ յուրահատուկ է հաղթողներին: Թույլ տվեցին, որ հակառակորդը հավաքի զոհվածների մարմինները: Մարտական ոգին Ղարաբաղում շատ բարձր է: Եթե միջազգային հանրությունը չխանգարի, չբռնի նրանց ձեռքը, ապա նրանք կարող են պաշտպանել իրենց անկախությունը: Եվ եթե նրանք որևէ նոր դիրք են գրավում, ապա այդ դիրքերը հակառակորդի կրակակետ էր ուղղված իրենց գյուղերի, քաղաքների վրա: Եթե արցախցիների ընտանիքների, բնակավայրերի անվտանգությունն ապահովվի, նրանք ոչ մի քայլ առաջ չեն գնա:

Բ.Կ.- *Դուք հանդիպել եք Ղարաբաղի կողմից կռվող ռուսներին:*

Վ.Օ.- Ցավոք, չեմ հանդիպել: Բայց Մոսկվայում ինձ հանդիմանում էին. «Դուք հայամետ դիրք եք գրավել, իսկ մենք անաչառ թերթի ներկայացուցիչներ ենք ու չենք կարող ձեր նյութը տպագրել մեր թերթերում»: «Լավ,- ասում եմ,- ես պահանջում եմ հավասար վերաբերմունք թե դահճի և թե զոհի նկատմամբ»: Եվ այդ կեղծ անաչառությունը ամուր է նստած շատ թերթերում:

Բ.Կ.- *Ձեր կարծիքով, ինչ է սպասվում առաջիկայում:*

Վ.Օ.- Անհրաժեշտ է հանրային կարծիք ձևավորել: Մշտական նենգասպառնալիքները, հիստերիան, որին դիմում են Բաքվի գործիչները, հանգեցնում են այն բանին, որ մամուլի որոշ օրգաններ գրեն խնդրի մասին: Կան և այնպիսիք, որոնք վաճառվել են ադրբեջանցիներին: Բայց ես չեմ կասկածում, որ հասարակական կարծիքը հայամետ է, չնայած կարդալով թերթերը, դիտելով հեռուստահաղորդումները, այլ կարծիք է ստեղծվում: Սակայն ժողովրդի կարծիքն անկախ է: Պոլյանիչկոյի հայտնվելը փոխվարչապետի, խաղաղարարի դերում բավականին խոսուն երևույթ է: Կարծում եմ, որ ռազմական հրամանատարությունը նախկին աֆղանցիների մի հսկա խումբ է հավաքել, որոնց ձեռքերը արյունոտվել են և Ղարաբաղում: Նրանք փորձում են կրկին հզոր բլոկ ստեղծել, որը կթելադրի ռազմական ոլորտում: Այնտեղ Սաֆոնովն է, Կրոմովը, Շատալինը: Ես չեմ հավատում, թե նրանք պատասխանատվություն կկրեն իրենց անցյալի համար: Պետք չէ մոռանալ, որ Ռուսաստանը ներքին զարգացում է ապրում, ու համոզված ենք, որ ժողովրդավարական ուժերն ի վերջո կհաղթանակեն: Հենց այդ ուժերի հետ էլ ես

մեծ հույսեր եմ կապում, քանի որ նրանք ոչ մի ուշադրություն չեն դարձնի այն կեղծ հայրենասերներին, որոնք բացարձակ ադրբեջանամետ, իսլամամետ դիրքերում են, եվրասիական նորանոր տեսություններ են մոգոնում՝ փորձելով շահարկել Ռուսաստանի ու մահմեդական երկրների սերտաճումը:

Ժողովրդավարության ամրապնդումը փաստորեն կապված է Անդրկովկասում, առաջին հերթին՝ Հայաստանում, ինչու չէ, նաև քրիստոնեական Վրաստանում մեր բարեկամական կապերի վերականգնման հետ: Ես հենց այստեղ եմ լավատես դառնում: Եվ ժողովրդավարությունը չի կարող երբևէ հաղթանակել Ռուսաստանում, եթե դավաճանենք ԼՂՀ շահերին: Իսկ հաղթանակը Լեռնային Ղարաբաղում կամրապնդի ժողովրդավարական գործընթացը Ռուսաստանում: Այս գործընթացները շաղկապված են իրար:

«ԱԶԱՏԱՄԱՐՏ», թիվ 29, օգոստոս, 1992 թ.

Պատմում է ԱՐՏԵՄ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԸ (1992-94 թթ. «Ազգային լեգեոնի» զինվոր), 03.02.2006 թ., Երևան

Ծնվել եմ Երևան քաղաքում, 1974 թվականի ապրիլի 12-ին: Տասներորդ դասարանում էի, երբ արդեն մեծ թափ էր ստանում Արցախյան շարժումը: Այդ ընթացքում հասցրի ավարտել Երևանի Ապրանքահումքային բորսային կից Բիզնես քոլեջի բրոկերական բաժինը: Դեռևս դպրոցական տարիներին անդամագրվեցի «Ազգային լեգեոն» ջոկատին, որը կազմավորվեց ինձ պես անչափահասներից: Թե՛ սպորտային, թե՛ ռազմական ուսումնական հավաքները կազմակերպում էին Աֆղանստանում ծառայած մեր մեծ եղբայրները՝ լուսահոգի Անկախ Անդոն, Տոզ Վարդանը, Մխոն, որոնք արդեն եղել էին պատերազմի դաշտում: Ջոկատը ղեկավարում էր Սմբատ Հակոբյանը: Երևանում չկար հավաք, երթ, որին ես չմասնակցեի:

Առաջին անգամ մասնակցեցինք Խոջալուի օպերացիային: Ոչ թե օպերացիան մշակողն էր լավ կազմակերպել, այլ՝ կոնկրետ կովողները: Հետո, երբ հակառակորդներին գերի վերցրինք, պարզվեց, որ նրանցից շատերը Աֆղանստանում ծառայած ադրբեջանցիներ էին: Մենք խաչմերուկից աջ գտնվող հատվածում էինք, դեպի Կարկառ գետի ձախ ափը: Խոջալուի պաշտպանության մյուս թևերում ճեղքեր կային, և մեր տղաները հեշտությամբ կարողանում էին մտնել այդ ճեղքերով: Հենց այդ ժամանակ ես զգացի, որ եթե ոգու կռիվ է, ապա մեր ոգին բարձր է: Այդ օպերացիայի ժամանակ «Ազգային լեգեոն» ջոկատն իր ամբողջ կազմով չէր, որովհետև մեր ղեկավարները գտան, որ ոչ բոլորն են պատրաստ առաջին մարտին: Այդ կրակոցները, գիշերային լուսավորումները մարդու հիշողությունից երբեք չեն ջնջվի: Դզոտը՝ երկաթբետոնյա ամ-

բացված կրակակետը, որտեղից անընդհատ կրակում էին, մենք գրավեցինք շատ մեծ դժվարությամբ: Մենք նույնիսկ մի քանի անգամ նոնակ նետեցինք մեջը, բայց հինգից յոթ րոպե հետո, երևի արդեն վիրավոր, նրանք շարունակում էին կրակել: Մեզ հաջողվեց գրավել բլուրը: Մենք զոհեր չունեցանք: Մեր պաշտպանությունը լավ էր կազմակերպած: Բլուրը գրավելը վերջին ակորդն էր: Մի քանի թեժ կետեր մնացել էին, դրանք էլ վերացրինք:

Մարտի ընթացքում հակառակորդը երկու-երեք անգամ խուճապի մատնվեց, ինչի արդյունքում էլ ահագին զոհեր եղան: Այնտեղ ծանոթացանք երկու ժուռնալիստների հետ՝ մեկը դանիացի էր, մյուսը՝ գերմանացի կամ հոլանդացի: Դանիացուն հարցրինք, որ եթե իր հայրենիքը վտանգի մեջ լիներ, նա մեր պես կգնար կռվելու: Դանիացին պատասխանեց, որ պետությունը թող բանակ ունենա, ինչու ինքը պետք է գնա: Նրա պատասխանը մեզ համար չոր, անըմբռնելի և անհասկանալի պետական մտածելակերպի պատասխան էր: Նստած՝ զենքերը մաքրում էինք: Տղաներից մեկը անփութություն արեց, և այնպես ստացվեց, որ կրակեց դանիացու ոտքերի տակ: Ամբողջ օրը ծիծաղելով մտածում էինք, որ եթե հանկարծ փամփուշտը կպներ դանիացուն, միջազգային մեծ սկանդալ կբարձրանար, և մենք, փաստորեն, մեր երկրի հեղինակությունը կգցեինք այդ պատմությամբ:

1992 թվականի մարտի վերջին ամբողջ ջոկատով գնացինք Շուռնուխ: Բոլորս տասնյոթ տարեկան էինք: Ապրիլի տասներկուսին լրացավ իմ տասնյոթ տարին: Երկու հոգի տասնչորս տարեկան էին: Տղաներից մեկը՝ Ռոբոն, տասնութ տարեկան էր, նա մեր երիտասարդական ջոկատի, այսպես ասած, «դեդն» էր՝ ավագը: Նա «Կալաշնիկով» զնդացրով էր, մենք՝ ավտոմատներով: «ԱՐՀ»-ը՝ ավտոմատ-նոնականետը, ես համարում էի արդեն ավանդական դարձած իմ զենքը: Շուռնուխում առաջին օպերացիան սկսեց հակառակորդը: Մենք պաշտպանվողի վիճակում էինք: Ինձ թողեցին գյուղում, մի տան մեջ՝ որպես հերթապահ: Նրանք շարժվեցին դեպի Թասի Գլուխ, Սեյթազի ուղղությամբ: Շուռնուխի դիմաց զազի կետ կար, երևի այդ տարածքի բաշխիչ գազահանգույցն էր: Այդտեղից հարձակվեցին: Ես հիշում եմ, որ գյուղում մնացել էին ՄՀՕՋ-ի տղերքից երկու հոգի: Լուր հասավ, որ նրանք Շուռնուխի հյուսիս-արևելյան մասն են նայելու, իսկ հակառակ ուղղությամբ՝ Բարձրավանի կողմը, որ գյուղի վերաբնակեցված հատվածն էր, նայելու

են ուրիշ երկու տղաներ: Ես շրջտվետի շենքի ետևի բարձունքից, որտեղ ուպատաժները բնական ամուր խրամատ էին ստեղծել, պետք է հակեի գազի կետին: Ստացվում էր այնպես, որ ես մի քիչ բարձր էի դիրքավորված, դիմացը բաց դաշտ է և այդ գազահանգույցն է: Նկատեցի, որ երկու հոգի իջան: Արդեն հասնում էին հարթ տարածքը և պետք է շարունակեին բարձրանալ դեպի իմ դիրքը: Այդ ժամանակ ես զգացի, որ մենակ եմ, ես եմ իմ հրամանատարը: Ե՛ս պետք է մտածեմ՝ նրանք քանի մեծ պետք է մոտ լինեն ինձ, թողնեմ ավելի մոտենան, որպեսզի կարողանամ ավելի դիպուկ խոցել: Մինչ ես մտորումների մեջ էի, նկատեցի, որ ես հինգ հոգի նրանց ետևից գալիս են: Կետը թողեցի և վազելով դուրս եկա: Հետո հասկացա, որ ես ռազմական սխալ եմ թույլ տվել: Ես չի՛ նայել, թե իմ դիրքի տակ մարդ կա՞ր: Միգուցե մեկ-երկու հոգի մարդ կար, և իմ դուրս գալուց հետո գային, այդտեղ դիրքավորվեին: Դիրքը փոխանցելուց բացի ես իմ կյանքն էի վտանգել՝ կամ գերի կբռնեին, կամ կսպանեին: Գնացի նոնականետի ետևից: Տղաները երկուսն էլ վերցրել էին Թասի Գլուխ գնալիս: Մենք ունեինք «Մոլսա» կոչվող միանգամյա կրակող նոնականետ: Դրանցից երկու հատ գցեցի ուսովս և վազելով գնացի: Իմ այդ քայլը շատ ճիշտ էր: Առաջին իսկ կրակոցից տեսա, որ երկու հոգի տապալվեցին, իսկ մյուսները, որ պատրաստվում էին շարքը կազմել, վիրավորներ ունեցան և իրար օգնելով ցրվեցին: Երկրորդը յատիսոսացի, կրակեցի: Չեմ կարծում, թե հակառակորդին ֆիզիկական վնաս տվեցի, բայց ռազմավարական առումով առավելությունը եղավ այն, որ առաջխաղացումը կասեցվեց:

Անցավ 10 օր: Շուռնուխի և Ղափանի միջև երկու գյուղեր կան՝ Վերին և Ներքին Զիբիխլիները, որոնց դեռ ձեռք չէինք տվել: Մեզ հասած նախնական տվյալների համաձայն տղաները այնտեղ օպերացիա էին արել, բայց չէին հիմնավորվել: Մյուս հիմնավոր կետը Սեյթազն էր: Սեյթազը Թասի Գլխի վերևում էր: Գիշերը շարքով՝ ինչպես մեզ սովորեցրել էին, գնացինք հետախուզության: Սկզբից գնում էին երեք հոգի, որոնք կոչվում էին «գոլովնոյ դազոր», այսինքն՝ նրանք գլխավոր պահակախումբն էին: Ետևից գնում էին երկու հոգի՝ թիկունքային պահակախումբը: Նրանք պետք է լինեին ֆիզիկապես ամենաուժեղները, որպեսզի վերցնեն նրանց զենքերը, ովքեր արդեն հոգնել են: Թիկունքային խմբի հեռավորությունը միջուկից տասնհինգից քսան մետր էր, իսկ առջևից գնացողները միջուկից տասից տասնհինգ մետր հեռավորու-

թյամբ էին գնում: Մենք իրար հետ խոսելու համար ազդանշաններ ունեինք: Գիշերային հետախուզության դեպքում ունեինք հատուկ այդ տակտիկայի համար ընդունված նշաններ: Ամենակարևոր պայմանը, որ մենք բոլորս պահպանում էինք, ոտքը դնել այն տեղում, որտեղ առջևից գնացողը դրել է, քանի որ այդ մասն արդեն փորձված է: Մենք հրաշքով ենք փրկվել, քանի որ արդեն հետախուզությունից վերադառնալուց հետո գորիսեցիներից իմացել ենք, որ այդ դաշտն ականապատված էր: Մեր հրամանատարը բարկացավ, վիճեց նրանց հետ, որ նրանք, իմանալով, որ այդ դաշտն ականապատված է, ինչու՞ են թույլ տվել, որ մենք, թեկուզ մեր նախաձեռնությամբ, գնանք այդ տարածքով: Մի քանի գիշերային և ցերեկային հետախուզություններից հետո որոշեցինք, որ Սեյթազ գյուղը պետք է այրվի, այն պետք է վերանա, քանի որ այնտեղ հենակետեր կային: Առավոտյան ժամը ութ-ինների կողմերը դուրս եկանք օպերացիայի: Ըստ հետախուզության տվյալների, օպերացիան իրականացնելը շատ հեշտ կլիներ: Օպերացիան սկսեցինք այսպես. գյուղում գոմ կար, որը շատ հաստ պատեր ուներ: Որոշեցինք այն ամունալով պայթեցնել: Քանի որ գոմը գյուղի եզրին էր, հեշտ մոտեցանք, ամունալը դրեցինք, պայթեցրինք, բայց պատը չփլվեց: Մեր ռազմական պատմության մեջ, թեկուզ դեռ սրի ու վահանի կռիվների ժամանակ, հակառակորդի մեջ խուճապ տարածելը ընդունված ձև է եղել: Այդ պայթյունները, կրակահերթերը խուճապ են առաջացնում ադրբեջանցիների մոտ: Հասավ այն պահը, երբ արդեն կարող էինք մտնել գյուղ: Մտանք գյուղ, ցրվեցինք գյուղով մեկ: Ամեն տուն մտնելուց առաջ կրակահերթերով՝ ինչպես ընդունված է, «մաքրում» էինք: Ես մտա մի տուն, որտեղ պատշգամբն ապակիներով էր: Այնտեղ արյուն տեսա: Հասկացա, որ այնտեղ մարդ է եղել, և մեր բացած կրակահերթերից վիրավորվել են, փախել: Մտածեցի, որ հավանաբար զոհ չի եղել, որովհետև չէին կարողանա դիակը հետները տանել: Երևանից այդ տարածքը պահելու հրաման չունեինք: Այդպես էինք անում, որպեսզի Շուռնուխում մենք հանգիստ լինենք: Եթե չավերեինք, նրանք նորից կգային-կնստեին: Եթե նախատեսված էր, որ այդ գործողությունն իրականացնելու համար հնարավոր էր, որ երեք զոհ տայինք, ապա մենք երեք քերծվածք էլ չենք ունեցել: Գյուղամիջում Մուկուչին տեսա: Նա ինձ մարդու գանգ տվեց: Այն չորացած էր, բայց ճակատոսկրի վրա կաշվի տեղեր կային: Ճակատին գրված էր՝ «зерке» կամ «ерке»: Հարցրի, թե որտեղից է գտել: Մուկուչն

ասաց, որ սեղանի վրա էր դրված, այնպես, որ հենց դուռը բացես, գանգը տեսնես: Այդ գանգը բերեցի, հասցրի Երևան: Սեյթազից երբ արդեն դուրս էինք գալիս, մեր ընկեր Սարգիսը «F-1» նռնակի օղակը հանել, շպրտել էր: Եթե օղակը նետած չլիներ, թերևս հնարավոր լիներ նռնակը խնայել: Հավաքվել ենք մեր երկու հրամանատարների շուրջը: Լյովան ասաց՝ «Ափսոս է, չնետես, գնա, գտիր օղակը»: Լյովան Արցախյան պատերազմից բացի ուրիշ երկրների պատերազմների էլ է մասնակցել: Իսկ Սմբատը մի հետաքրքիր խոսք ասաց, թե՝ «Թող տղան գցի, քանի տարի է հայը թուրքի տուն չի վառել»: Բոլորս ասացինք՝ ճիշտ է: Չնայած գյուղը վառվում էր, Սարգիսն այդ նռնակը նետեց: Գնացինք Շուռնուխ, որպեսզի պատրաստվենք Ջիբիխլի գյուղերի օպերացիային: Այդ օպերացիան ծանր էր, Սեյթազի նման չէր: Ջիբիխլին ուժեղ ռազմական հենակետ էր: Հետախուզական աշխատանքներից հետո որոշվեց սկսել օպերացիան: Ձմեռ էր, թաղվում էինք ձյան մեջ, հնարավոր չէր քայլել: Օպերացիան սկսվեց ժամը չորսին: Չորսն անց տաս բոլորս հագած-կապած, առաջին աստիճանի զինվածությամբ պատրաստ էինք գործողությանը: Մեքենաներով մեզ տարան գյուղից: Մեր «BMP-1»-ը՝ որպես դեսանտ, ցած իջավ: Ասել էին, որ Ջիբիխլի տանող ճանապարհն ականապատված է: Մեզ հետ էր տանկի ռուսական անձնակազմը: Նրանցից մեկը Մեղրիի կամ Ղափանի ռուս էր, հինգ տարեկան էր եղել, որ գնացել են Ռուսաստան: Մեր «BMP-1»-ը պայթեց: Այդ ժամանակ մենք արդեն «Արծիվ-4»-ն էինք, և մեր ջոկատին միացած սիսիանցի տղաներից մեկի ոտքը ամենավերևից կտրվել էր: Չկարողացան Գորիս հասցնել, ճանապարհին արյունաքամ էր եղել: Նա մեր առաջին զոհն էր: Նրա կողքին Մուկուչի հայրիկն է եղել: Երբ լուրը հասավ, որ «BMP-1»-ը պայթել է, Մուկուչի հայրը և այդ տղան եկան աչքներիս առաջ: Երկրորդ վիրավորը, այսպես ասած, տեխնիկական պատճառներով էր: Կրակել էր «Հաուբիցով», մեծ պարկուճը ետ էր խփել, կպել նրա աչքին: Զարմացել էինք, երբ կապվեցին և ասացին, որ այդ գյուղում ադրբեջանցիները շերտավոր խոզ էին պահում:

Միշտ առաջինը Լյովան էր գնում: Գյուղի հիսուն տոկոսը նա մենակ է վերցրել: Առաջին իջնող խմբին հրահանգվեց, որ այդ խոզերին դեպի ականապատված ճանապարհը ուղարկեն, որ պայթեն: Գյուղ մտնելիս հետաքրքիր դեպք էր պատահել: Լյովան ազգությամբ լեզգի մի երիտասարդի էր խփել: Կրակելուց առաջ Լյովան գոռացել էր՝ «Կանգնիր, ես

քեզ կյանք կնվիրեմ», նա չէր կանգնել, Լյովան կրակել էր: Քանի որ 5.45 մմ տրամաչափ ունեցող փամփուշտների ծանրության կենտրոնը խառն է լինում, փորից մտել, թոքը վնասելով՝ կրծքավանդակից դուրս էր եկել: Ես Սմբատի կողքին էի, երբ Լյովան ռացիայով կապվեց և ասաց՝ «Սմբատ, ջահել տղա եմ բռնել, պիտի տանենք Երևան վիրահատության»: Սմբատն ասաց.

- Մի թող տանջվի...

- Չէ, ես նրան կյանք եմ խոստացել,- ասաց Լյովան:

- Լավ, ասենք՝ մենք քո խոսք տվածը ուզում ենք անել, բայց նա կապրի մինչև Երևան:

Ես չգիտեմ, բժիշկ չեմ:

- Բայց քո նկարագրածով թոքն է, չէ:

- Հա:

Սմբատը ջղայնացավ, թե՝ «Շատ ես ուզում, կգրկես, կբերես»: Լևոնը այդ լեզգուն՝ Թառլանին, տանում է Ցուլի՝ Արմանի մոտ և պառկեցնում է: Օպերացիան շարունակվում է: Գնում են, մի ադրբեջանուհի «բաջի» են գտնում, որի ամուսինը անկողնում պառկած էր: Երբ Լյովան ներս է մտնում, ծերունին անկողնու միջից ուզում է որսորդական հրացանով կրակի, բայց տեղում սպանվում է: Լյովան թուրքերեն գիտեր, քանի որ նախիջևանցի էր: Տատիկին ասում է՝ «Ես քեզ կթողեմ, որ դու իջնես մյուս գյուղը, բայց մի պայմանով: Այս տղային էշով հետդ տար, թող տանեն Բաքու, վիրահատեն»: Ադրբեջանուհին ասում է՝ չէ: Վիճում է, փորձում համոզել, թե՝ քեզ փող կտամ: Տատին ասում է՝ «Չէ, ես իմ տան իրերն եմ տանում: Տանելու լինեի՝ իմ մարդու դիակը կտանեի»: Քանի որ ես «АГС» կրակող եմ, ես պետք է հեռվից կրակեմ, որ հետիոտնը մտնի: Հետաքրքիրն այն է, որ ես այդ խոսակցությունը ռացիայով լսում եմ: Լևոնը գալիս է, Մուկուչին ասում.

- Տեսնում ես այն պառավին, խփի նրան:

- Լյով, ախր տատի է, էյի, թող գնա: Էսօր կա, վաղը չկա, ինչու իմ ձեռքով գնա:

- Թառլանին չուզեց հետը տանել:

Օպերացիայից հետո ահավոր հոգնած էինք, իհարկե, սովից: Ուտելու ժամանակ չենք ունեցել: Արթնացել էինք գիշերվա չորսին, և մինչև ժամը վեցը-յոթը ոչինչ չէինք կերել: Փաստորեն տասնչորս ժամանոց գործողություն էր: Լուսահոգի Արմանը ինձ պատմում է, որ Թառլանին

վարձել է համոզել, որ մեռնելուց առաջ քրիստոնեություն ընդունի: Նրանք ռուսերենով են խոսել: Թառլանն ասել է.

Լսիր, քեզ մոտ կարող է հայկական ծխախոտ լինի, տուր, մի հատ ծխեմ, էյի: Ես կյանքում հայկական ծխախոտ չեմ ծխել:

Ինձ մոտ կա, բայց դու թոքից վիրավոր ես, ինչ ծխախոտի մասին է խոսքը:

Չէ, ոնց որ դու ես ասում՝ մնկ է, մեռնելու եմ... Ծխեմ, վերջացնեմ, ինձ սպանիր, չտանջվեմ, որովհետև արդեն չեմ դիմանում ցավին:

Արմանը տալիս է ծխախոտը: Մի անգամ ծուխը ներս է քաշում, թոքից արյան շիթ է խփում: Հետո Թառլանը Արմանին ասում է.

Դե սպանիր ինձ, մի տանջիր...

Չէ, իմ հրամանատարը քեզ կյանք է խոստացել, ուրեմն մենք էլ նրա խոստանում, քեզ պիտի տանենք: Մանավանդ, դու ադրբեջանցի չես, քեզ գորակոչել են, դու ծառայում ես:

Եվ դառնալիս, երբ արդեն մութ էր, Լյովան հիշում է Թառլանին: Արմանին հարցնում է.

Ո՞ւր է Թառլանը:

Թփերի տակ պառկած է:

Դե գնա, բեր:

- Ես չեմ կարող, սոված, ծարավ... Հազիվ զենքս եմ քարշ տալիս:

Արմանի ձեռքին ակնանետ կար, իրոք, դժվար էր տանել: Լյովան ասում է.

Ես քեզ հրաման եմ տալիս, գնա, կրակի՛ր: Բայց այնպես արա, որ նա չտեսնի քեզ:

Հետո Արմանը պատմում է, որ ինքը չի կարողացել զաղտնի կրակել: Երբ մոտեցել է, որ թաքուն կրակի, այն Թառլանը, որ խնդրում էր իրեն սպանել, այս անգամ ասում էր, որ չկրակի՝ «Не стреляй, ара, пожалуйста...»:

Նստում ենք, սկսում մեր արկածներից պատմել: Ես ասում եմ, որ սոնն անգամ առաջ գնալիս ինձ կոորդինատները սխալ են տալիս: Ասում եմ՝ «Մի օր ես մեկնումեկիդ խփելու եմ: Հասկացեք, ես ավտոմատով չեմ կրակում: Ես կրակում եմ մի զենքով, որը շախմատաձև է դրված, որպեսզի այդ տարածքը դատարկվի, և դուք կարողանաք առաջ գնալ: Մեկ միլիմետր տարբերությամբ սխալ նշան բռնեմ, կարող է ձեր գլխին գա»: Այդպես, տղերքից ամեն մեկն իր խնդիրներից է բողոքում:

Մեկ էլ տղերքից մեկն ասաց՝ «Սպասեք, տեսեք ինչ եմ բերել»: Հին սովետական մագնիտոֆոն էր մի ձայներիզի հետ: Միացրինք, ադրբեջանական «ռաբիս» երգեր էին, ու մենք բարձրացրել էինք ձայնը: Այդ էլ մեր Ջիբիխլի գրավելը:

Պատմեմ Լաչինի Գյուլիբերդից, որ ամիսներ շարունակ չէին կարողանում գրավել: Նույնիսկ մի սար ետ էին տվել: Առավոտյան գործողությունը արվել է, հենակետը ոչնչացվել է, և մենք ետ ենք եկել մեր հին դիրքերին:

1993 թվականի հոկտեմբերն էր: Մեր բազան տեղակայված էր Կոռնիձորում, իսկ ենթաբազան՝ Ղուշչուլար գյուղում: Ղուշչուլարից ահագին վերև՝ դեպի Գյուլիբերդ, դաշտ էր, հետո՝ լեռնոտ տարածություն, նորից դաշտ էր: Այդ աշխարհագրական դիրքը նպաստում էր ռազմավարական դիրք ընտրելուն, որտեղ կարող էիր մշակել թե՛ ստրատեգիա, թե՛ տակտիկա: «Արաբոյի» տղերքը ետևի կողմից՝ Կոռնիձորի տակով էին մտնելու, մենք՝ հենց Ղուշչուլարից: Մեր հրամանատարը մեզ դեռ նման հրաման չէր տվել: Մենք առանց հրամանի իջանք, որովհետև նա «Արաբոյի» տղերքի հետ իջել է նրանց ուղղությամբ: Մենք գնում էինք մեր հրամանատարին փրկելու: Մուշեղն ասաց՝ իջնենք, ու մենք իջանք: Այնինչ պլանն այնպես էր, որ նրանք պետք է ետևի կողմից վառելով գային, որպեսզի ադրբեջանցիները բարձրանային Ղուշչուլարի կողմը, մենք էլ այդ կողմից թույլ չտայինք, որ բարձրանան: Բայց այս անգամ մեր տակտիկայից մի քիչ հրաժարվել էինք, որովհետև երկու ջոկատով էինք և որոշեցինք նրանց երրորդ ուղղությունը տալ, քանի որ Գյուլիբերդը իր վարչական տարածքով Լաչինի շրջանի վերջին գյուղն էր, հաջորդը՝ Կուրաթլիի շրջանն էր: Մենք բաց էինք թողել կամրջի ավտոճանապարհը, որ այդտեղով նրանք գնան: Նրանք գնացել էին: Տղաները մնացել էին ժայռի վրա դիրքավորված, որպեսզի ավտոճանապարհը հսկեն: Այդտեղ բենզալցակայան կար, կողքը՝ ճաշարան էր: Ես ու Արտեմը մտանք և տեսանք, որ այդտեղ են պահված նրանց արկերը, փամփուշտները: Փաստորեն, ոչ այնքան մեծ զինապահեստ էր: Նրանք այդ ամենը թողել-գնացել էին: Տղաներին նկարագրեցինք իրավիճակը: Բոլորը համաձայնեցին, որ քանի որ այդ ամենը տանել հնարավոր չէ, հարկավոր է զինապահեստը վնասել: Եթե տարածքը գրավելու լինեինք, դրանց ձեռք չէինք տա, բայց քանի որ պետք է թողնենք, ետ դառնանք, ապա զինանոցը անվնաս թողնելն անիմաստ է: Մի քանի արկդ դուրս ենք հանում: Երբ նորից ներս ենք մտնում, «ԱԳՀ»-ի «ՎՕԳ-17»-ով կրակում են: Իսկ «ՎՕԳ-17»-ը սարսափելի արկ է, որը իր մեջ պարունակում է թևիկներով ասեղիկներ, որոնք 600 աստիճանի ջերմությամբ շիկացած, ցրվում են: Իմ զենքը հենց «ԱԳՀ»-ն է, որը ես ինձ հետ չէի վերցրել, քանի որ այդ անգամ վերևում՝ տղերքի մոտ լինելու փոխարեն ես իջել էի: «ԱԳՀ» զենք ունեցողները միմյանց վրա են կրակում, որպեսզի կրակակետը նկատեն: Այդ պատճառով նա հատուկ տակտիկա ունի, որ յուրաքանչյուր երեսուն արկը, որը մի արկդ է կազմում, կրակելուց հետո յոթ մետր հեռավորությամբ պետք է տեղդ փոխես: Այդ խաղում հաղթում է նա, ով արագ է շարժվում: Հետագայում պարզվել է, որ տղաները ամեն անգամ գոռացել են, մենք չենք լսել: Բախտի բերմամբ մեզ չի կպել: Ինչ-որ վատ կանխազգացում ունեի: Ասացի.

- Արտեմ, հերիք է, սիրտս վատ բան է վկայում:

- Չէ, ինչ ես խոսում: Սա հետներս կբարձրացնենք, որ մեկ էլ չգնանք, հասնենք Լաչին փամփուշտ բերելու:

- Չէ, Տյոմ, արի վառենք, դուրս գանք:

Ման եկանք, մի հին ավել գտանք և ինչ-որ ստվարաթղթի կտորներ: Վառեցի այդ ավելը, կպցրի վարագույրներին: Քանի որ քարե շինություն չէր, հեշտ կայրվեր: Երբ տեսա, որ բոցերը ուժեղանում են, Արտեմի հետ դուրս եկանք, վազելով գնացինք ժայռի տակ պատսպարվելու: Հասնելն ու փորի, հետո՝ մեջքի վրա շուռ գալը մեկ եղավ: Այդպիսի տեսարան ես ֆիլմերում էի տեսել, երբ պայթում է և բոցը սունկի պես բացվում է: Հետո գլուխս բարձրացրի, կողքս Արմանը՝ «Ցուլն» էր կանգնած: Ասացի.

- Էս ես եմ արել...

- Արա, հո դուք չեք գժվել...

Պարզվում է՝ դուրս գալիս, երբ մենք այդ շինությանը դեռ մեջքով ենք եղել, չենք նկատել, որ տանկի արկն ընկավ զինանոցի վրա: Արտեմին ասացի՝ «Բա որ ասում էի, որ մի բան այն չէ»: Մեկ էլ տեսնենք՝ տանկը ճանապարհի վրա կանգնած՝ աշխատում է: Այսինքն՝ ետ են գնացել, նորից եկել, որ գյուղը պահեն: Լենինականցի «Զորնիի» ջոկատի տղաները, որոնք մեզանից տարիքով էին և կին, երեխա ունեին, այդտեղ էին: Հակատանկային նռնակ կար, որը իր ձևով և չափով շամպայնի շշի տեսք ուներ: Կրակելիս պարաշյուտի պես բացվում էր: Դրանից մի հատ վերցրի, ասացի՝ «Քանի օր է, ինչ եկել ենք Երևանից, այս նռնակը

ձեռքիս ման եմ գալիս: Վերջապես օգտագործելու պահը եկել է»: Ուզեցի վազել այդ ճանապարհով: Մի բան չէի նկատել: Լենինականցիները գոռացին՝ «Ծո, մի կերթաս»: Ջղայնացան ինձ վրա: Դու մի ասա՝ տանկը իջել էր, էլեկտրական սյան ետևից «RBK»-ով մեր ուղղությամբ աշխատում էր: Նռնակը ձեռքիս վազեցի: Կրակեց: Միայն բոցը տեսա: Շատ ինտենսիվ էր աշխատում, թույլ չէր տալիս, որ մոտենամ: Ետ վազեցի, քիթ-բերանի վրա ընկա բլրին: Այդ պահին չես մտածում՝ ոտքերդ իրար կպած լինի, թե բաց: Ոտքերս իրարից քիչ հեռու բացած էր: Շուռ եկա մեջքի վրա: Փամփուշտները թփթփալով չորս կողմերս էին ընկնում: Սարսափելի էր: Վերջ՝ ասացի...: Մեկ էլ, ասես վերելակով, ինձ բարձրացրին: Հաղթանդամ «Ցուլն» էր, որ բռնել էր օձիքիցս և վերև էր քաշում: Քաշեց և ետ շպրտեց: Արդեն նրա կրակելը իմաստ չուներ: Ջղայնացան, թե՝ «Որ քեզ ասում էինք՝ մի գնա...»: Բարձրացանք: Մուշեղը վիրավորվել էր: Երբ ադրբեջանցիները տանկով խփել են, արկը կպել էր ժայռին, որը մեզ համար բնական ապաստարան էր ծառայում, վերևից մի քարի կտոր ընկել էր Մուշեղի մեջքին և ողնաշարը վնասել: Մեզ հետ էր Սերյոգը, որ Աֆղանստանում տասը տարի ենթասպա է եղել: Նա ուկրաինացի էր: Մեզ սովորեցնում էր բորբոնած հաց ուտել: Նրա ասելով՝ պենիցիլին է: Ասում էր՝ «Ինձ հայրս է սովորեցրել: Տասը տարի Աֆղանստանում բորբոնած հաց եմ կերել վարակներից զերծ մնալու համար»: Մութը վրա է տվել: Գրավելու համար արագ իջնելն ուրիշ էր, հոգնած բարձրանալը՝ ուրիշ: Ասացինք, որ հոգնած ենք: Սերյոգն ասաց՝ «Ձահեղներ, կարող ենք պառկել, այստեղ քնել, եթե, իհարկե, ցրտին կդիմանաք: Բայց մի քանի հոգի պետք է արթուն մնան: Հետո՝ հերթափոխ կլինի: - Մտածեցինք, որ նա իրոք պրոֆեսիոնալ է: Շարունակեց, - կամ՝ շարունակում ենք դիմանալ մի ժամ ևս և հասնում ենք տեղ»: Ոչ ոք չհամաձայնեց այդտեղ գիշերելու նրա առաջին առաջարկին: Ասացինք՝ «Սերյոգ ջան, ասում ենք՝ հոգնած ենք, բայց հո չենք ասում՝ մնանք այստեղ»: Բայց հակառակորդին դեռ դաս չէր եղել: Այնտեղ, որտեղ մեր դիրքերն էին, լեռը վերջանում էր: Տակը ճանապարհ կար, որտեղից երևում էին անտառապատ Հադրութի լեռները: Երբ նրանք պտտվում են սարի տակով, այդ տանկը կարողանում էր և՛ Հադրութի ուղղությամբ խփել, և՛ մեզ՝ մեջքից: Խորհրդային տարիներին սարքած ճանապարհ էր, հնարավոր չէր այդտեղ դիրք դնել: Ուղղակի հարկավոր էր վերևից անընդհատ հսկել, որ այդտեղ տանկ չմտնի: Երկու հատ տեխնիկա ունեինք: Գրավելուց հետո շատ չէինք բերում: Երբ այդ տանկը պտտվեց, Լյովը ջղայնացավ, թե՝ «Գնում եմ այդ տանկը վերացնեմ, գամ: Մուկուչ, արի՛ ինձ հետ»: Գնացին: Անցած տասնհինգ րոպե՝ Մուկուչը եկավ՝ ականջի ետևը ուռած:

- Մուկուչ, ինչ է եղել:

- «Myxa»-ն ինձ տվեց, ասաց՝ «BTR»-ին խփիր, ես իջնեմ՝ տանկը վերացնեմ:

- Հը, խփեցիր:

- Հա, հերը անիծեցի:

- Բա ինչ է պատահել:

- Մոռացել էի բամբակ դնել ականջիս մեջ, ալիքը խփել է ականջիս:

Քիչ անց պայթյունի այնպիսի ձայն լսեցինք, որ չպատկերացրինք, թե ինչ տեխնիկա պայթեց: Մեկ էլ տեսնենք Լյովը, երեսի վրա արյուն լցած, եկավ: Ձեռքերով էր արյունը քսել, մատների տեղը երևում էր: Ձեռքին էլ փաթեթով քարտեզներ կային:

- Լյով, ինչ ես արել, ինչո՞ւ է երեսդ արյունոտ:

- Արյուն է, էլի, - ասաց նա:

Թուրքերից մնացած հին լամպ կար, որ նավթով էր վառվում: Այդ լամպի տակ գիշերը ես ու Լյովը մի գառով նարդի էինք խաղում: Գառը երկու անգամ Լիսք զլորում: Որոշեցինք, որ առավոտյան խմորից գառեր սարքենք: Այդ ժամանակ Լյովը պատմեց, թե ինչպես է տանկը խփել: Երբ իջնում է, մի գնդապետ գլուխը հանում է: Միանգամից հասկանում է, որ նա ադրբեջանցի չէ, այլ՝ ռուս: Լյովան մի անգամ խփում է, նա ընկնում է, բայց՝ ոչ տանկի մեջ: Ադրբեջանցիները խուճապի են մատնվում: Այդ կրակոցի վրա վարորդն արգելակում է: Եթե երկու վայրկյան ուշացնեի, դիակը ետ կքաշեին: Լյովը գնում է, ձեռքերը գցում, հանում ռուս գնդապետին: Ինքն էլ չի հիշում, թե ինչպես է վազելով բերել այդ գնդապետի մարմինը: Գնդապետի մոտ կարևոր փաստաթղթեր կային: Լյովան փողատակի գնդացիր ուներ: Դրանով խփում է տանկին այն պահին, երբ լյուկը բացվում է: Տանկը կանգնում է: Վազելով մոտենում է տանկին, նռնակը գցում մեջը, լյուկը փակում, ինքը՝ մի կողմ թռնում: Ասում եմ.

- Լյով, այդ գործը քեզ համար արհեստ է դարձել: Ինձ հինգ րոպե պետք կգար կողմնորոշվելու համար: Իսկ դու տակտիկան գիտես: Լավ, բա երեսդ ինչո՞ւ է արյունոտ:

- Երբ գնդապետին գլխից խփեցի, հետո փորին էլ եմ «մաղել»:

- Ինչու:

- Կարենին հիշեցի...

Կարենը Խոջալուի օպերացիայի ժամանակ մահացել էր: Նրան հակառակորդը չէր խփել: Գիշերը սխալ ճանապարհով գալու պատճառով սխալմամբ հարևան ջոկատից էին խփել: Մահացավ բժշկական սպասարկման ուշացման հետևանքով: Լյովան եղել է ՀՀ պարաշյուտի հավաքականի մարզիչը, ու Կարենը նրա լավագույն մարզիկներից էր: Լյովան Կարենին ասում էր՝ «Ախպերս...»:

- Կարենին հիշեցի, ձեռքերս զցեցի գնդապետի դիակի փորին ու տարա երեսիս:

- Լավ, առավոտյան կլվացվես: Թե չէ լամպի լույսի տակ արյունոտ դեմքով նստել ես դիմացս...

Բացվեց առավոտը: Արդեն ոչ Գյուլիբերդը կար, ոչ տանկը: Բայց բերեցին, լցրին, որովհետև գյուղի կեսն էր վառվել: «Արաբոյի» տղերքը կեսն էին հասցրել վառել, քանի որ ադրբեջանական տանկն սկսել էր աշխատել: Մնացել էր նաև զինանոցի դիրքը, որը ես և Արտեմը փորձել էինք վառել: Մենք տեղավորվեցինք վերևի տանը: Կարծեմ փետրվարի երկուսն էր: Մեր Պետոյի՝ Սողոյան Պետրոսի ծնողները Ախուրյանի Թավատուլլակ գյուղից են: Պետոն թթի մեջ էր խոսում: Ասաց.

- Հեսա դափամա եմ սարքելու:

- Ո՞նց:

- Իշիր այգին, կտեսնես:

Այդտեղ փետրվարին ծառերին դեռևս ընկույզ կար, հավաքում էինք: Իսկ մարգերին կանաչ լոբի կար: Ես այդպիսի բան չէի տեսել: Լոբին հավաքեց: Տներից մեկում ջուր տաքացրինք, որ լողանանք: Ինչքան ժամանակ էր՝ չէինք սափրվել, ամոթ էլ էր: Լողացանք եկանք, տեսնենք ձմռան կեսին զինվորական սաղավարտի մեջ տապակած կանաչ լոբի կար: Պետոն պնդում էր, որ դափամա էլ պետք է սարքի: Իշավ, դդումը պոկեց, բերեց, մեջը մաքրեց: Դափաման յուրահատուկ ուտելիք է, մարդ կա սիրում է, մարդ կա՝ չի սիրում: Ո՛չ մեղր կար, ոչ բրինձ: Բրնձի փոխարեն օգտագործում է մսով կաշաները, որ բաժանում էին մեզ: Մեղրի փոխարեն խատացրած կաթ է լցնում: Լցրեց, խառնեց, չգիտեմ՝ ինչեր արեց, թե՝ «Սա պետք է եփվի»: Ով եկավ-գնաց, ասաց՝ «Էս ինչ խոզի կեր ես սարքում»: Ով ինչ անուն ասես՝ կպցրեց: Պետոն իր սարքած «գունդը»

վերցրեց ու պատին՝ «Դըմբ...»: Պատն ամբողջությամբ լրոզվեց: Ասացինք՝ «Մերսի, Պետո ջան, շատ անուշ էր դափամադ»: Հետո եկանք քաղաք, Լյովան պտտվեց զինկոմիսարիատներում, մեր զինգրքույկները վերցրեց: Մինչ այդ Մալխալաֆում էինք: Ես Մալխալաֆից չպատմեցի, որովհետև գրավումներ չեն եղել, միայն դիրքեր ենք պահել: Մեր տնեղինները կապվել էին Լաչին, կանչել էին: Գնացել էի: Սովետական զինկոմիսարիատից ինձ դատախազի՝ Սուքիասյան Գագիկի, զգուշացմամբ ծանուցագիր էր եկել: Սուքիասյան Գագիկը հետագայում համալսարանում ինձ «Ֆինանսական իրավունք» առարկան էր դասախոսում: Լյովը ասաց՝ գնա: Գնացի, մտա Սովետականի զինկոմիսարիատ, որը այն ժամանակ Նորքի զանգվածում էր: Մի կին էր նստած: Ասացի.

- Էս ինչ եք ուղարկել:

- Տղա ջան, պետք է գնաս, ծառայես:

- Թող քո տղան գնա բանակ: Ես ինչու պիտի ծառայեմ:

- Գնում-գալիս, բոլորդ կպնում եք իմ երեխայից: Հազար ասացի՝ իմ երեխան հիվանդ է...

Ես հենց այնպես էի նրա տղայի օրինակը բերել, ես ոչ այդ կնոջն էի ծանաչում, ոչ նրա տղային: Իսկ ծանուցագիրը մինչև հիմա պահում եմ: Ասացի.

- Ես էլ եմ հիվանդ, չեմ գնա...

Նա ինչ-որ բան գրեց: Պարզվում է՝ ակտ գրեց, որ ուղարկի Ռազմական ատիկանություն: Երկու օր հետո գնում եմ Լաչին, որ հետո հասնեմ Մալխալաֆ: Ճանապարհին մի տեղ կար, որին «Նովոստրոյկա» էինք ասում, քանի որ այդտեղ նոր տներ էին սարքում: Քանի որ Երևան գնալիս զենքս թողել էի: Լաչինում պահեստապետները երկու նռնակ տվին, ասին՝ «Ճամփա է, էլի, թևկոզ մերն է, բայց ինչ իմանաս»: Ոտքով եկա: Դիշերը պետք է Լաչինում մնայի, տղերքի հետ շտաբում քնեի, նորմալ հաց ուտեի: Դե, այն ժամանակ նորմալ հաց ուտելը կարագով հացն էր՝ վրան շաքարավազ ցանած: Մեկ էլ կորած-մոլորած կովը, ոչխարը, որոնց կաթը եթե հաջողվում է ճաշակել...: Հասա «Նովոստրոյկա», իմացա, որ Մոնթեն իր տղերքով այդտեղ է եղել, բայց հենց այդ օրը գնացել է Մալխալաֆ: Լյովայի հետ հետախուզության պետք է գնային Գյուլիբերդի ուղղությամբ: Մնացի այնտեղ: Տղերքը հաց, թեյ տվեցին: Դա մեր հրետանու հենակետն էր, վերևում՝ «Կոբրան» էր, «Վան-1», «Վան-2» թնդանոթները: Հաջորդ օրը ճանապարհ ընկա: Մի «66» էր գնում դեպի

Մալխալաֆ: Դրանով գնացի, այն մտադրությամբ, որ Մոնթեին կտեսնեմ: Այնինչ Մոնթեն արդեն իր գործն արել, գնացել էր: Այդպես էլ Մոնթեի ջոկատի հետ չեմ հանդիպում: Անցել էր չորս օր: Նստած էի մեր դիրքի վերևի մասում: Երբ մեր դիրքից աջ կողմի ձորից նայում էիր՝ «Վաթսունվեց» դիրքն էր, որտեղ սիսիանցիներն էին: Այդ ձորը խորն էր: Մեկ էլ Լյովան կապվեց, թե.

- Ռազմական ոստիկանությունից մարդ է եկել ետևիցդ, Լաչինում է ու ինձ կանչել է:

- Ի՞նչ ես անելու, գնալու ես:

- Չէ, չեմ գնալու: Ասել եմ՝ վերևը նստած է, թե կարող եք՝ եկեք, տարեք: Այդ դեպքն էլ պատճառ եղավ, որ հենց ետ եկանք, Լյովան հավաքեց մեր զինգրքույկները: 1994 թվականի սեպտեմբերի 21-ը՝ մեր անկախության օրը, մեր զինգրքույկներում նշված է որպես մեր երդման արարողության օր: Իրավաբանորեն հաստատվեցինք: 1994 թ. Նոր տարին դիմավորեցինք Մարտակերտում: Հինգ օր մնացի Մարտակերտում:

Երևանից շարժվեցինք, հասանք Ստեփանակերտ ու միանգամից բարձրացանք վերև: Ես «Կամազի» վարորդի մոտ էի նստած: Հասանք Մոխրաթաղ: Վիրավորներ էին իջեցնում: Հետո գնացինք Մեծ Շեն, որտեղ հրամանատարը գեներալ Մանվել Գրիգորյանն էր: Հաջորդ օրը բարձրացանք դիրքերից ոչ հեռու մի տեղ: Առավոտյան պետք է դիրքավորվեինք և առաջ շարժվեինք: Այդտեղ մարտեր էին ընթանում: Երկու ժամ հետո առաջ գնալու հրաման եղավ: Շարժվեցինք: Իջանք ներքևի գյուղը՝ Հակոբ Կամարի, նախկինում Լյուլասազ էր կոչվում: Գիշերել ենք նախագահի տանը: Առավոտյան դուրս եկանք այդ տան դարպասներից աջ տանող ճանապարհով, իսկ ձախ տանող ճանապարհի վրա կոմբայններ կային: Այնպես էր ստացվել, որ գյուղի կեսը մերն էր, կեսը՝ ադրբեջանցիներինը: Այդպիսի դեպքի չէինք հանդիպել: Քաղաքային մարտի էր նմանվում: Դիրքեր գնացող պահուստային ուժերի հետ չորս օրվա մնոնդ պետք է ուղարկեինք, որպեսզի տեխնիկան դիրքերից չշարժվի: Ես երբեք նման վիճակում չէի հայտնվել: Կոմբայնների ետևում ծառեր կային: Այդտեղից սկսեցին կրակել մեր ուղղությամբ, ու թույլ չէին տալիս այդ ճանապարհը ոտքով անցնենք: Ժամ ու կես այդտեղ պառկեցրած պահեցին: Այնքան էի ասֆալտին պառկած մնացել, մտածեցի՝ մի քիչ քնեմ: Աչքս կպցրի: Կողքս պառկած տղերքից մեկը գոռաց՝ «Ապեր, ապեր...», և ձեռքով շարժեց ինձ: Կարծել էր՝ մահացել եմ: Մեկ

էլ գոռացի՝ «Ապեր, թող քնեմ, ինչ ես ուզում»: Վախեցավ, ասաց՝ «Արա, էս ինչ ես սարքում գլխիս»: Ես էի, Մուկուչն էր, Արտեմը, «Ցուլն» ու Բորյան, որը բաքվեցի տղա էր, շատ ուժեղ շախմատիստ: Մասիսում մեզ հետ աչքերը փակ շախմատ էր խաղում: Պարզվում է, որ նա Բաքվում շախմատի դպրոց ուներ: Աշխարհի չեմպիոն Գարի Գասպարովի հետ նույն խմբից են եղել: Ասում էր, որ Գարիկին միշտ հաղթել է: Պատսպարվեցինք ճանապարհի տակ մի երկհարկանի կիսակառույց տանը: Առաջին հարկը շատ ցածր էր, ծառայելու էր որպես նկուղ: Ինձ մոտ էր մնոնդը, երկու արկղ «ԱԳՀ»-ը, ավտոմատը: «ԱԳՀ»-ը հանեցի, փողը դրեցի: Լևոնը առաջ շարժվեց, սկսեց կոորդինատները թելադրել: Կրակեցի: Մուկուչն ասաց՝ «Թող, մի հատ կրակեմ»: Արմանը իմ ետևում նստած՝ «ԱԳՀ»-ի տուփերն էր լիցքավորում: Ես կանգնած էի: Մուկուչը պպզած կրակում էր: Նրա գլուխը ոտքերիս արանքում էր: Բորյան Մուկուչի կողքն էր, նայում էր, թե ուր կպավ, ինչ եղավ: Մեր դիմաց ծառ կար: «ՎՕՀ»-ի մեմբրանային թաղանթը շատ բարակ էր՝ օդում հինգ հարյուրից յոթ հարյուր մետր աշխատելու դեպքում մինչև հազար յոթ հարյուր խփում է, տերևին էլ կպնի՝ կպայթի: Քանի որ մենք հնարավորություն չունեինք յոթ մետր հեռավորությամբ տեղափոխվեինք՝ ինչպես պահանջում է զենքի այդ տեսակով աշխատելը, նրանք հնշտությամբ հասկացան, թե մենք որտեղից ենք աշխատում: Կրակեցին, «ՎՕՀ»-ը անմիջապես մեր առջև պայթեց: Կամ Բորյայի փորը պիտի թափեր, կամ Մուկուչի գլուխը թոցներ: Այդ պահին թե ինչ շարժում ենք անում՝ կպնում է իմ թևին: Արկը բացված չի լինում, թերություն ուներ: «ՎՕՀ»-ի ասեղները խրձով մտնում են թևս: Այդ պահին ես չեմ զգացել, թե ինչ է կատարվել: Հիշում եմ՝ ուզում էի ծխել, ձեռքս չէի կարողանում բարձրացնել: Ուժ տվեցի, բարձրացրի, թացություն զգացի: Արյան երեք շիթ նկատեցի: Մուկուչին ասացի՝ «Մուկուչ, նայիր, կարմիր է՝ վիրավոր եմ»: Մուկուչը, վերքիս բացվածքը տեսնելով, վախեցավ՝ «Հո դու խելքո չես, վիրավորը մրն է ...»: Կասկածել է, որ կարող է թևս կտրված լինի: Ինձ տարել են Արմանի մոտ, այնտեղ ուշաթափ ընկել եմ: Գլուխս կպել է ջրի խողովակին, ու չեմ արթնացել: Հիշում եմ անուշադրի սպիրտի հոտը: Տղերքը ինձ արթնացրին: Ձեռքս արդեն կապած էր: Արտեմի ձայնն անընդհատ ականջներիս մեջ էր, ներարկիչը ձեռքին ասում էր՝ «Թող սրսկեմ, իմ մայրը բուժքույր է, ես սրսկելը գիտեմ»: Տարիներ անց, երբ արդեն Երևանում հիշել էինք իմ վիրավորվելու դեպքը, Արտեմը խոստովանեց,

որ ինքը սրսկել չի իմացել: Ասացի՝ «Դրա համար էլ չթողեցի, որ սրսկես»: Ինձ տարան Մեծ Շեն: Բժիշկը մի քանի հատ դեղահաբ տվեց, դրեցի լեզվիս տակ, հարցրեց.

- Ո՞վ է ձեռքդ վիրակապել:

- Ընկերս:

- Բժիշկ է:

- Չէ:

- Այնքան լավ է կապել, չեմ ուզում ձեռք տալ:

Ուղարկեցին Դրմբոն: Ամեն անգամ Դրմբոնի հոսպիտալ մտնելիս շարքաթ էին տալիս, խմում էի: Դրմբոնի բժիշկն ասաց, որ ինձ ուղարկեն Չլդրան, քանի որ այնտեղ ռենտգեն կա: Ուղարկեցին Չլդրան, որտեղ ռենտգենը փչացած էր: Ուղղաթիռով Ստեփանակերտ հասցրին: Շտապ օգնության մեքենան կանգնած էր: Ինձ հետ ուրիշ վիրավոր էլ կար: Նա Ստեփանակերտի տղա էր, ոտքից էր վիրավորվել: Այդ տղայի ծնողները, բարեկամները այդտեղ էին, նրանք էլ մեքենա նստեցին: Վարորդի քեֆը լավ էր: Հարցրեց.

- Ավպերս, շատ է ցավում:

- Չէ:

Խոսում ենք, ասես կորած ու իրար նոր գտած ախպերներ լինենք:

- Հաստատ չի ցավում:

- Չէ:

- Որտեղից ես:

- Երևանից:

- Մերդ որտեղից է:

- Գյումրեցի է:

- Հերդ որտեղից է:

- Ստեփանավանցի է:

- Ո՞նց, Ղարաբաղի հետ կապ չունե՞ս:

- Չէ:

- Քանի՞ անգամ ես Ղարաբաղում եղել:

- Խոջալուում եմ եղել, հիմա էլ՝ Մարտակերտում, առաջին անգամ:

- Ստեփանակերտ եղե՞լ ես:

- Մի քանի օր առաջ եկել ենք, չենք էլ մնացել:

- Քաղաքը չես տեսե՞լ:

- Չէ:

- Ո՞նց, «Ասկոլկայի» փողոցը չե՞ս տեսել:

- Չէ:

- Ախպեր, հիմա գնում ենք...

Գնում ենք, գնում, տեղ չենք հասնում: Մտածում եմ՝ «Հանրապետական հիվանդանոցը ինչ եղավ: Երևանից մեծ է Ստեփանակերտը»: Մեկ էլ եկանք, մի խաչմերուկ հասանք, մտավ աջ, կանգնեց մի շենքի առաջ, ասի՝ «Էս է հիվանդանոցը»: Ասում եմ.

- Ախպեր ջան, բայց մենք հինգ անգամ անցել ենք այդ խաչմերուկի կողքով, ինչու այն ժամանակ չմտար:

- Բա դու չասացի՞ր՝ քաղաքը չեմ տեսել: Ես քեզ Ստեփանակերտն էի պոյց տալիս:

- Հո դու տիպ չե՞ս: Այս տղան ծանր վիրավոր, ես էլի ոտքի վրա եմ...

Ստեփանակերտի բժիշկն ասաց.

- Դու Դրմբոնում, Չլդրանում չես թողել, որ շշերը մտցնեն, բայց ես պետք է անեմ: Ես քեզ խնդրում եմ՝ դիմացիր:

- Բա ցավազրկո՞ղ:

- Հիմա ես քեզ այնպիսի ցավազրկող կտամ... Նստի՛ր աթոռին:

Նստեցի, մեկ էլ երկու սիրուն, մեծ աչքերով, երկար մազերով աղջիկներ ներս մտան:

- Հը, ո՞նց է, ցավո՞ւմ է, կդիմանա՞ս:

- Հա, բայց ցավազրկող...

- Էս երկու աղջիկը քեզ համար ցավազրկող չե՞ն:

Բժիշկը տարիքով մարդ էր, ազգանունն էլ չէի հարցրել, չգիտեմ: Էս աղջիկները խալաթները քաշեցին վերև, ծնկները բացեցին, նստեցին երկու կողմերս, թևերս բռնեցին: Մի խոսքով, վիրակապեց: Երկու շշեր հակադարձ մտցրեց, մաքրեց: Ասացի.

- Վիրահատություն չի՞ լինելու:

- Ես չեմ կարող: Չեմ ուզում քեզ վատ բան ասել, բայց շատ բարդ գործ է:

Հետագայում երևաց՝ ոսկորս փտեց, հանեցին:

Երբ ասում են՝ «Հաց ուտելը մոռացել եմ», այդ ժամանակ իմ մաշկի վրա զգացել եմ: Գնացի պալատ, տեսնեմ՝ մի տղա է պառկած: Մի ոտքը վերևից կտրված էր, մյուս ոտքը երեք տեղից ջարդված: Ջարդված ոտքը գիպսի մեջ փաթաթած՝ վերևից կախած էր: Պալատում էին այդ տղայի մայրը, հայրը, քույրը: Այդ տղան Շուշիի տանկային գնդի հրամա-

նատարն էր: Ինձ հարցուփորձ էին անում, թե Երևանում որտեղ է գտնվում պրոտեզարանը: Մեկ էլ մայրն ասաց՝ «Հերիք է տղային հարցուփորձ անես, թող մի կտոր հաց ուտի»: Խաշլամա բերեց, բանջարով հաց, որին ժենգյալով հաց են ասում: Ասում եմ.

- Ես այսքանը չեմ կարող ուտել:

- Պետք է ուտես,- ասաց մայրը:

Ես փորձեցի մի ձեռքով ուտել, մայր ու աղջիկ մոտեցան, սկսեցին ինձ կերակրել: Իմացա, որ նրանք Ստեփանակերտում են ապրում: Տղայի աչքը կպավ: Քույրը եկավ, սրսկեց, այդ տղան քնեց: Հաց ուտելուց հետո հայրն ասաց՝ «Արի դուրս գանք, ծխենք»: Ես հենց վիրավորվելու ոռպեից ուզել եմ ծխել: Ասացի՝ «Ինչ լավ բան ասացիր»: Ծխում էինք, մեկ էլ կինը եկավ, թե.

- Ի՞նչ ես էրեխուն հանել դուրս: Բա թեյը ո՞վ պետք է խմի:

- Մորքուր ջան, ես թեյի սիրահար չեմ:

- Չէ, քեզ պետք է այդ թեյը, արի այստեղ: Էս հոնի մուրաբայով թեյը պիտի անպայման խմես:

Տարավ, զոռով խմել տվեց: Նորից դուրս եկանք ծխելու: Բժիշկը եկավ, ձեռքին՝ Երևան ուղարկող ուղեգիր: Ասաց.

- Կներես, բայց տեղ չունեմ պառկեցնելու: Երկրորդն էլ՝ ինչքան շուտ գնաս, այնքան՝ լավ:

Մեկ էլ գերմանական ավտոբուս եկավ, որի մեջ նստարան չկար: Բոլոր վիրավորներին պատգարակով շարեցին, որ տանեն ուղղաթիռի մոտ: Վարորդին հարցրի, թե կհասցնեմ գնալ հիվանդանոց: Ուզում էի այդ մարդկանց անունները իմանալ, շնորհակալություն հայտնել: Վարորդն ասաց.

- Կներես, բայց ես շարժվում եմ...

Պատմում է ՆԵԼԼԻ ՈՍԿԱՆՅԱՆԸ (1992-94 թթ. ԼՂՀ Գիտության, մշակույթի, սպորտի և ժողովրդական կրթության նախարար), Երևան, 25.02.2006 թ.

Ծնվել եմ 1952 թ., Բաքվում: 1971 թ. ԽՍՀՄ թեթև արդյունաբերության նախարարության ուղեգրով եկել եմ աշխատելու Ստեփանակերտի կոշիկի ֆաբրիկայում: 1992 թ. Պաշտպանության պետական կոմիտեի որոշմամբ նշանակվել եմ ԼՂՀ մշակույթի, կրթության և սպորտի նախարար: Նախարարությունների գլխավոր նպատակն էր պատերազմի պայմաններում, երբ թուրքերի կողմից օկուպացվել են հայրենի Մարտակերտի, Ասկերանի և Մարտունու մի շարք բնակավայրեր ու տարածքներ, պահպանենք ու ամրապնդենք իշխանության համակարգը: ՊՊԿ-ի ստեղծումը միակ ճիշտ քայլն էր: Աշխատում էինք մինչև ուշ գիշեր: Փաստորեն մենք առանց մանկավարժների ենք մնացել, քանի որ նրանց մեծ մասը ռազմաճակատ է մեկնել: Եթե ԽՍՀՄ-ում դպրոցների ուսուցչական կազմի մեծամասնությունը կանայք էին, ապա ԼՂ-ի գյուղերում մեծ մասը տղամարդիկ էին: Ուսուցչուհիների մի մասը բանակում էին: Հիշում եմ, Շուշիի գնդում մի դիպուկահար ուսուցչուհի կար: 1992 թ. ՀՀ Կրթության նախարարը Հայկ Ղազարյանն էր: Նա ԼՂՀ եկավ ինձ օգնելու: Նա ցանկություն հայտնեց լինելու մեր դպրոցներից մեկում: Այդ ժամանակ դասերը նկուղներում էինք անցկացնում: Այնտեղ կարող էին և երկու աշակերտ լինել, և տասնհինգ: Զգտում էինք երեխաներին առանց գիտելիքների չթողնենք: Ցույց տվեցի Շուշին, նորից ավերված Շուշին: Այդ ժամանակ Սարիբոբ լեռը թուրքերի ձեռքին էր: Մարգարիտա Սարգսյանը Մետաքսի կոմբինատի արտադրության կուսքարտուղարն էր ու միևնույն ժամանակ մաթեմատիկա էր դասավանդում

կոմբինատին կից երեկոյան դպրոցում: Մենք ականատեսն էին երկու հրամանատարների վեճին: Ամեն մեկն ուզում էր իր ստորաբաժանման մեջ ընդգրկել լավագույն դիպուկահար Մարգարիտային: Մենք եղանք ուսուցչուհիների կազարմում: Նրանք բոլորը զինվորական համազգեստով էին: Պատերին նրանց զոհված հարազատների լուսանկարներն էին: Մենք շատ հուզվեցինք: Հայկ Ղազարյանն ասաց.

- Մարգարիտա ջան, ես շատ եմ հուզված: Առանց նվերների եմ եկել, ինչ կուզեք, որ Նոր տարուն ձեզ համար Երևանից ուղարկեմ:

Մարգարիտան խնդրեց կանացի ներքնաշոր ուղարկել:

Ես միանգամից չընկալեցի, թե ինչու է այդպիսի բան խնդրում Մարգարիտան: Սակայն հետո նա ինձ բացատրեց, որ մարտի գնալուց առաջ կանայք ուզում են մաքուր ներքնաշորով լինել, որպեսզի զոհվելու դեպքում «ամոթով չմնան»: Նախարարն, իհարկե, կատարեց Մարգարիտայի խնդրանքը: Տարիներ անց, երբ ես Շուշիի շրջանի վարչակազմի ղեկավարի տեղակալն էի, 1998 թ. մի երիտասարդ դիմեց աշխատանքի տեղավորվելու խնդրանքով: Նա ասաց, որ ծառայել է նույն գնդում, որտեղ Մարգարիտան է ծառայել: Ես գիտեի, որ Մարգարիտան մարտերից մեկում զոհվել էր:

- Կարող ես մանրամասներ պատմել Մարգարիտայի զոհվելու համգամանքների մասին,- դիմեցի ես:

- Նրա մարմինը երեք օր մնացել էր աղրբեջանցիների հսկողության տակ գտնվող տարածքում: Ես իմ ընկերներով նրան դուրս բերեցինք այդտեղից: Նրա հագին շատ մաքուր ներքնաշոր էր...

Նա մահվանից հետո էլ ցանկացել էր կին մնալ...

Ես Երևան էի գնացել ԼՂՀ դպրոցների համար դասագրքեր տանելու: Ղարաբաղի դպրոցներում կավիճ չկար: Ոչ ոք լուրջ չէր ընդունում կավիճի համար խնդրանքս: Բայց պատկերացնում եք դպրոցն առանց կավճի: Ճանապարհին այն փոշու էր վերածվում: Օդակայանում ուղղաթիռի էի սպասում, որ կավիճն անվնաս տեղ հասցնեմ, հանդիպեցի մի հետաքրքիր երիտասարդի, որին Կամո-Զուգուն էին ասում: Երբ կավիճով արկղը տեղադրում էին ուղղաթիռի մեջ, շատերն ասացին. «Լավ չէր լինի կավճի փոխարեն երկու պարկ ալյուր տանեք Արցախ»: Կամո-Զուգունը չհամբերեց ու ասաց. «Դուք չեք էլ հասկանում, որ ուզում եք Արցախի երեխաներին զրկել սովորելու հնարավորությունից: Պատերազմն իր հերթին, բայց շատ կարևոր է երեխաների ուսումը»: Կավիճը նա պատերազմի ժամանակ ռազմավարական իր է: Մինչ ուղղաթիռի ժամանելը այդ տղայի հետ սպասում էինք օդակայանի սրճարանում, նա Չարենցից բանաստեղծություն արտասանեց. «Կուզեմ հիմի փչի զուռնեն, հարբած ըլիմ մինչև էգուց...»: Ես զարմացած էի. զինվորականի արտահագուստի տակ լիրիկական հոգի կար: Ես մտածում էի, որ պատերազմում ոչ միայն զինվորականներ ենք կորցնում, այլև հազարավոր պոետներ, ճարտարապետներ, մանկավարժներ, հրաշալի ինժեներներ, պետություն կերտող ղեկավարներ, գյուղատնտեսներ... Տարիներ անցան, ու ես բանաստեղծություն գրեցի Կամոյին նվիրված.

И было нам немного странно от того,
Что под мрачной формой его
Не угляделі мы всего.
Что там, под ней его душа
С Чаренцом, видимо, дружна.
Закрыв глаза забыла я,
Что это страшная война,
Забыла я, что в форме он.
И все лились его стихи,
Как льются слезы и мои,
И всех других матерей
Отправивших своих детей
Беречь страну.
И вот ему, как многим нашим сыновям,
Пришлось забыть семью и дом,
Чтобы потом, когда утихнет боль и гром,
Вернуться к миру и стихам...

Պատերազմի տարիներին հսկայական աշխատանք էին կատարում մշակույթի ոլորտի մարդիկ: Ինչքան հիշում եմ, Մարտակերտի շրջանի ազատագրումը սկսվել էր 1993-ի փետրվարի 5-ին: Երեկոյան ժամը 11-ին իր մոտ կանչեց Պաշտպանության պետական կոմիտեի նախագահ Ռոբերտ Քոչարյանը և ասաց.

- Ես նոր եմ վերադարձել ռազմաճակատի առաջին գծից, տղաների տրամադրությունը ինձ դուր չեկավ, իսկ առավոտյան մարտի են գնալու:

Ես կուզենայի նրանց տրամադրությունը տեղը լիներ:

Ես անմիջապես հավաքեցի այն մարդկանց, որոնք կարող էին երաժշտական գործիք բռնել ու անմիջապես մեկնել ռազմաճակատ: Երբ ես տեսա քարտեզի վրա կռացած Սերժ Սարգսյանին, Նորիկ Դանիելյանին, մյուս հրամանատարներին, պատկերացրի մեր դերը այս գործում: Նրանք նկատեցին ինձ: Ս.Սարգսյանն ասաց. «Քո խումբը մեզ շատ է պետք, շնորհակալություն»: Մինչև առավոտ նվագեցին երաժիշտները: Խմբի մեջ միակ կինը երգչուհի Լիդա Բասիլյանն էր, որը խնդրեց, որ ինքը մնա զինվորների մոտ, օգնի նրանց: Մի դեպք եմ հիշում: Վաղուհասում մի բարձունք կար, որը ձեռքից ձեռք էր անցնում: Հրետանու հրամանատար Ժորա Գասպարյանը տեսնելով ինձ, ասաց. «Եթե մի ջութակահար լիներ, ու զինվորները երաժշտություն լսեին, նրանց առաջ ոչ մի թշնամի չի դիմանա»: Հենց դա էլ առիթ հանդիսացավ, որ մշակույթի աշխատողները մշտապես լինեն առաջին գծում և իրենց արվեստով ներդրում ունենան մեր հաղթանակներում: Շատ բան արեցին նաև ՀՀ մշակույթի աշխատողները: Գալիս էին բոլոր մարզերից: Երբ ռմբակոծում էին Ստեփանակերտը, մեր նկարիչները Դրամատիկական թատրոնի շենքից դուրս էին տանում իրենց ստեղծագործությունները, որ փլատակների տակ չմնան, ֆրանսահայ գեղանկարիչ Արշակ Գառնիկը ցուցահանդես բացեց հենց թատրոնի ճեմասրահում: Իսկ Երևանից «Վերածնունդ» համույթը ներկայացնում էր Կոմիտասի երգերը:

Բ.Կ.- *Բարոնուհի Քերոլայն Քոկսի հետ ուշ երեկոյան վերադարձանք ռազմաճակատից և ներկա եղանք Դրամատիկական թատրոնի ներկայացմանը:*

Ն.Ռ.- 1992 թ. կար թատրոնը: Սակայն կոլեկտիվը Կիրովական մեկնեց ներկայացումների, ու չվերադարձավ: Երբ ստեղծվեց նախաբարությունը, առաջին հերթին ձեռնարկեցինք թատրոնի վերակենդանացման գործը: Դերասաններին առաջարկեցինք վերադառնալ: Մի մասը վերադարձավ: Իհարկե, ներկայացումներում բարձր չէր վարպետությունը, բայց դա լուրջ դեր կատարեց մարդկանց ոգին ամրապնդելու գործում: Շատերն էին քննադատում, թե պրոֆեսիոնալիզմը, արվեստը բարձր չէ, բայց այն, որ վարագույրը բացվում էր, որ թատրոնի կամարների տակ հավաքում էինք մարդկանց ու հավատ ներշնչում, որ կա և կլինի ԼՂՀ-ն,

որ եթե թափվող ռումբերի տակ գործում է թատրոնը, Պարի պետական համույթը, երաժշտական դպրոցները, այդ ամենը ամրապնդում են հավատը մարդկանց մեջ դեպի հաղթանակը: Պատերազմի, ազգային ազատագրական շարժման ժամանակ մշակույթի դերը ուսումնասիրության թեմա պետք է դառնա:

Բ.Կ.- *Ես հիշում եմ սրեփանակերտյան նկուղներում դերասանների մի փոքրիկ խումբ Շեքսպիրի «Համլետից», «Օթելլոյից» հատվածներ էր ներկայացնում ռմբակոծությունից պատսպարված բնակիչներին:*

Ն.Ռ.- Դա Քաջիկի՝ իսկական արտիստի նախաձեռնությունն էր: Նա նկուղից նկուղ էր անցնում, հուսահատության ճիրաններից փրկում մարդկանց: Մեր Բորիսին ու Վաչեին միթե կարելի է մոռանալ: Բորյան իր պարտքն էր համարում ամեն զոհվածի ուղեկցել իր ջութակի մեղեդիով: Նրան դրա համար ոչ ոք չէր վարձատրում: Մի անգամ, շատ ուշ նա ինձ տուն էր ուղեկցում: Իսկ այդ օրը ես մի կգ այուր ու երկու բուռ հնդկացորեն էի ստացել:

- Բորիս, ինձ ուղեկցում ես ու ստիպված ետ պետք է վերադառնաս:

- Էհ, տուն կվերադառնամ, իսկ երեխաներս սոված...

Նա չգիտեր, թե ինչ կա պայուսակումս: Անչափ մեծ դժվարությամբ կարողացա նրան համոզել, որ վերցնի պայուսակը. երկու բուռ հնդկացորեն ու մի կիլոգրամ այուր: Նրա աչքերը լցվեցին արցունքով: Ինչպես ընտանիք, երեխա ունեցող կնոջից վերցնի, մյուս կողմից նրան այնքան անհրաժեշտ էին այդ մի կիլոգրամ ցորենն ու երկու բուռ հնդկացորենի ալյուրը:

Բ.Կ.- *Ո՞ւր է նա հիմա:*

Ն.Ռ.- Ստեփանակերտում: Դասավանդում է երաժշտական ուսումնարանում: Շատ էին խոսում Նաիրա Ալավերդյանի մասին, տարբեր կարծիքներ էին արտահայտում: Նա լուրջ դեր ունեցավ Արցախում հայ երգի, մշակույթի պահպանման գործում: Իսկ պատերազմի ընթացքում դժվար է գերագնահատել նրա դերը: Չեմ հիշում մի դեպք, որ Նաիրուհին հրաժարվեր ռազմաճակատում ելույթներին մասնակցելուց: Այդ տարիներին մենք հիմնեցինք կամերային երգչախումբը, որ կա մինչև հիմա: Ստեղծել ենք «Արցախի բալիկներ» մանկական համույթը: 1993 թ. Մոսկվայում նշվում էր Գյուլիստանի պայմանագրի 180-ամյակը: Այնուա-

զարդ դահլիճում ելույթ էին ունենում Ռուսաստանի, Հայաստանի Հանրապետության և ԼՂՀ մշակույթի վարպետները: Բոլորին գերեց Նաիրուհի Ալավերդյանի ելույթը: Մեր խմբերը ելույթ էին ունենում Ֆրանսիայում, Ռուսաստանի քաղաքներում: Մենք աշխարհին ցույց էինք տալիս մեկ այլ Արցախ, որ պատերազմը պարտադրված էր մեզ, որ մենք կանք ու պահպանում ենք հայոց հզոր մշակութային ժառանգությունը, որը համամարդկային է: Իսկ ինչ դժվարությամբ կարողացանք պահպանել մեր գրադարանային ֆոնդը: Պատերազմ էր ամեն մի գրքի համար:

1992 թ. հոկտեմբերին Կրթության նախարարի առաջին հրամանագրով ստեղծվեց Երեխաների էսթետիկական դաստիարակության կենտրոնը, որի ղեկավարն էր Լյուդմիլա Բարսեղյանը: 1992 թ. հիմնադրվեց Արցախի պետական համալսարանը:

Բ.Կ.- *Ո՞վ էր առաջին ռեկտորը:*

Ն.Ո.- Արբատ Սանջանի Ավանեսյանը: Հիշենք սպորտի գործիչներին: Սամբոյի մեր թիմը Լևոն Հայրապետյանի գլխավորությամբ մասնակցեց Եվրոպայի և աշխարհի առաջնություններին ու բարձր տեղեր գրավեցին, բարձրացվեց ՀՀ պետական դրոշը, իսկ ԼՂՀ դրոշը տղաների ուսերին էր փողփողում:

Բ.Կ.- *Երբ Շուշիի, Աղդամի ու Խոջալուի կրակակետերից ոմբակոծում էին, որտե՞ղ էիք բնակվում:*

Ն.Ո.- Ինչպես բոլոր ստեփանակերտցիները, նկուղում: Ես լավ հարևաններ ունեի, որոնք ինձ փրկեցին: Նրանք ճաշ էին եփում և ստիպում, որ մի քանի գդալ ճաշակեմ այն: Իսկ որդիս 15 տարեկանից ռազմաճակատում էր:

Բ.Կ.- *Ո՞ր ճակատներում էր եղել:*

Ն.Ո.- Նա սկսեց Մուրադ Պետրոսյանի վաշտից: Հետո հակատանկայինների հետ էր, հրետանիում, ռադիոդիվերսիոն խմբում: Մի դեպք պատմեմ: Մարտակերտի ճակատից երաժիշտներին տուն ուղարկեցի, ու սկսվեցին մարտերը: Ինչ-որ զգացում ետ պահեց ինձ: Գուցե մայրական զգացումն էր: Ինձ ասացին, որ որդիս Մարտունու ուղղությամբ է կռվում: Ես Ծմակահող գյուղի ուղղությամբ եմ գնում: Հանդիպեցի Ժորա Գասպարյանին: Միացա նրան, ու շարժվեցինք Վաղուհասի ուղղությամբ: Նա հրետանու պատրաստությունն էր ստուգում, հրահանգներ տալիս: Հեռվում կրակ տեսա ու խնդրեցի հրետանու հրամանատարին

դեպի կրակը ընթանա: Տեսանք՝ ժամապահը նիրհել է կրակի մոտ: Ժորան հանգիստ բացեց դուռը: Զինվորները պառկել էին գետնին: Ցուրտ ձմեռ էր: Բոլորը քնել էին: Ձեռք տվեցի առաջին զինվորին: Հազի բուշլատը խոնավ էր: Նկատեցի, որ մեկի ոտքը մյուսի դեմքին էր: Զգուշությամբ տեղափոխեցի, որ չզարթնեցնեմ նրանց: Ու այդ պահին տեսա որդուս՝ Վիտալիի դեմքը: Կողքի ընկերը՝ Վահրամը, բացեց աչքերն ու դիմեց Ժ.Գասպարյանին. «Սիգարետ ունե՞ս, ախպեր»: Հրամանատարը կպցրեց սիգարետն ու դրեց զինվորի շուրթերին: Ես հանեցի տղայիս զինվորական կոշիկները, թաց գուլպաները: Երևի Աստված չի ների ինձ, որ ես միայն տղայիս եմ օգնում: Ժորան հանեց իր գուլպաներն ու տվեց իրենից ծխախոտ խնդրող զինվորին: Ամբողջ գիշեր մենք թեժացնում էինք կրակն ու չորացնում զինվորների բուշլատները: Մի պահ որդիս բացեց աչքերը, ու նրան թվացել էր, թե երազ է տեսնում: Կրկին փակեց աչքերը, բայց հասկացավ, որ ես իրական եմ, ու գոռաց. «Մամա, հինչը անում ստեղ...»: Ես էլ իմ հերթին հանգստացրի. «Հանգիստ կաց, քզեսի չրմ ստեղ եկալ»: Նա չէր ուզում ընկերների մոտ «մամայի բալա» երևալ: Հետագայում որդիս պատմեց. «Վահրամը առավոտյան արթնացել էր ու ասել. «Տղերք, երազիս Ժորին ըմ տեսալ, ինձ սիգարետ ա տվալ»: Զարմացել էինք, բոլորիս բուշլատները չոր էին»: Ինձ վրա մեծ տպավորություն թողեց Ժորա Գասպարյանը: Նա ոչ միայն հրաշալի հրետանավոր էր, այլև զինվորի նկատմամբ հոգատար հայր:

Մի դեպք էլ պատմեմ, բայց այս անգամ հիմար նախարարի դերում եմ հայտնվել: Մի անգամ ուշ, երեկոյան ժամը 12-ին հյուրերի էի սպասում, նիրհում եմ ու նստածս տեղը քնով անցնում: Ինձ արթնացրին երկու տղամարդ ու հարցրին. «Ո՞ւր է նախարարը»: Անհարմար զգալով պատասխանեցի, որ արդեն տուն է գնացել: Նրանք հեռացան: Հետո ես առաջին հարկ իջա ու դիմեցի հերթապահ ոստիկանին. «Ովքե՞ր էին այդ մարդիկ»: Պատասխանեց, որ Երևանի մանկավարժական համալսարանի ու Ճարտարապետության և շինարարության պետական ինստիտուտի ռեկտորներն էին: Նրանք Բերձորի միջանցքով էին Ստեփանակերտ հասել: Եկել էին օգնելու կրթության զարգացման ծրագրեր կազմելու գործում: Առավոտյան ռեկտորը ասաց. «Ձեր դեմքը ծանոթ է թվում»:

1993 թ. ցուրտ ձմռանը վաղ առավոտյան Ռոբերտ Քոչարյանը կան-

չեց ինձ ու ասաց, որ որպես պատիժ խիստ նկատողության հրաման է ստորագրում: Ասում եմ՝ որ մեղքիս համար, թե՝ «Քո պատճառով կես ժամ ուշացել եմ դասից: Առավոտյան երեխաներս ասացին, որ դպրոցում փայտ չկա, որ տաքացնեն դասարանները: Ստիպված երեք կապ փայտ եմ կտրտել, տվել երեխաներին, որ դպրոց տանեն: Ինչու՞ դպրոցում փայտի հոգս չեք արել»: Ես իրոք լուծել եմ դպրոցների համար փայտի հոգսը: Իսկ այն դպրոցը, որտեղ սովորում էին Քոչարյանի երեք երեխաները, անտառից բերած փայտը «Դրուժբա» սարք չլինելու պատճառով չէին կտրտել: Իսկ կացին բռնելու ունակ ուսուցիչները ռազմաճակատ էին գնացել:



Պատմում է ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԱԼԲԱԲՅԱՆԸ (ՀՀ ՊՆ Կապի Կապի վարչության պետ), Երևան, 12.07.2005 թ.

Ա.Բ. - Ծնվել եմ 1933-ին, Դաշքեսանի շրջանի Շահումյան գյուղում: 1940 թ. մահացավ մայրս, ու մեր ընտանիքը տեղափոխվեց Խանլար գյուղը: Հետո ես ընդունվեցի Կիրովաբադի մանկավարժական տեխնիկումը, ավարտելուց հետո աշխատել եմ Դաշքեսանի միջնակարգ դպրոցում որպես ուսուցիչ: Սակայն ես սպա էի ուզում դառնալ: Ընդունվեցի Մուրոմյան ռազմական ուսումնարանի կապի բաժինը: 1957 թ. նշանակվեցի Բաքվում դասակի հրամանատար: Բանակում լեյտենանտից հասա մինչև գնդապետի աստիճան: 1964 թ. Լենինգրադում ընդունվեցի Ռազմական ակադեմիա, ավարտելուց հետո նշանակվեցի գնդի հրամանատարի տեղակալ, ապա նշանակվեցի Բաքվի գնդի հրամանատար: 10 տարի եղել եմ այդ գնդի հրամանատարը: 1979 թ. Հայաստանի ԴՕՍԱԱՖ-ի նախագահ, գեներալ Բաղրամյանի պահանջով տեղափոխվել եմ Երևան, որպես նրա տեղակալ: Հայաստանի կառավարության միջնորդությամբ որոշվեց բացել Կապի ռազմական ուսումնարան: ԽՍՀՄ-ում նման ուսումնարան չի եղել: Այն ձգձգվեց, աշխատել եմ ՀՀ կապի նախարարությունում: Երբ սկսվեց շարժումը, 12 սպաներ գեներալ Դալիբալթայանի գլխավորությամբ ստեղծեցինք Պաշտպանության կոմիտե: Դա 1991-ին էր: Այն կարևոր դեր ուներ հետագայում բանակի ստեղծման գործում:

Բ.Կ.- *Ինչպե՞ս ծանոթացաք գեներալ Դալիբալթայանի հետ:*

Ա.Բ.- Անընդհատ շփման մեջ էինք կոմիտեում: Վեց ամսում մշակեցինք բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, բանակի կառուցվածքը, ինքս

զբաղվում էի կապի հարցերով: 1991-ի ավարտին արդեն գիտեինք, թե ինչ բանակ է մեզ անհրաժեշտ այն ժամանակի համար: 1992-ի սկզբին ստեղծվեց Պաշտպանության նախարարությունը: Ինձ առաջարկվեց դառնալ Կապի վարչության պետ: Մենք դաշտային կապի հիմնական համակարգ չունեինք: ԱՊՀ զորքերի կապի պետը Էդուարդ Օստրովսկին էր, որի հետ ծանոթ էի Կապի ակադեմիայից: Նրա և մյուս ընկերների միջոցով ինձ հաջողվեց անհրաժեշտ միջոցներ, սարքավորումներ բերել Հայաստան: Հետագայում ինձ շատ օգնեց Սերժ Սարգսյանը: Հիշարժան էր շուրջ 3500 կապի սարքերի ձեռք բերումը արտերկրից: Եթե խորհրդային հաղորդիչը 18-19 կգ քաշ ուներ, ապա այս միջոցը կշռում էր 0,5 կգ և տեղավորվում է գրպանում: Այս գործում մեր առավելությունը հակառակորդի նկատմամբ առավելության վերածվեց նաև կռվի դաշտում, քանի որ ապահովում էր մանևրների արագություն, շեշտակիություն:

- Կուզենայի պատմել Օմարի գործողության մասին: 1994-ի հունվարին թուրքերը Օմարի լեռնանցքում նեղեցին մերոնց: Ես արդեն Վարդենիսում էի, որտեղից ղեկավարում էինք թշնամուն տարածքից դուրս մղելու գործողությունը: Մենք կորցրել էինք ստորաբաժանումների հետ կապը: Եթե զորքերը հայտնվեին Զոդում, ողջ Սևանի շրջակայքի բնակավայրերի հետ տեղի կունենար այն, ինչ տեղի ունեցավ Շահումյանի, Մարտակերտի բնակավայրերի հետ: Երբ կտրվեց կապը, ես զեկուցեցի նախարարին, որ թույլ տա կապի սարքավորում տեղադրեմ բարձունքին, այնտեղից կապը վերականգնեմ և պարբերաբար զեկուցեմ իրեն: Նա թույլատրեց, և ինձ հետ եկան հրետանու պետ գեներալ Վոլոդյա Հայրապետյանն ու բազմափորձ գեներալ Ջինևիչը: Բարձունքում մենք հանդիպեցինք մրսած զինվորների, որոնք նահանջում էին: Իմ մեքենայի մեջ նստած սպաները կարծեցին, թե թուրքեր են: Ես դա բացառեցի և ընդառաջ գնալով հարցրի.

- Ո՞ւր եք գնում, ովքե՞ր եք:

- Մենք Վանաձորից ենք:

3-4 օր ոչինչ չեն կերել, 25°-30°C ցուրտ էր: Կապը վերականգնեցինք: Սարքավորումները տարա Ցանշակ: Ընդհանուր ղեկավարը գեներալ Յուրի Խաչատուրովն էր: Եթե սովորաբար ռազմական գործողությունները դադարում էին երեկոյան կողմ, ապա Խաչատուրովը երեկոյան

ժամը 9-ից սկսեց հարձակումը: Հարցրի նրան՝ ինչ հաղորդեմ Վարդենիս: Ասաց՝ ոչինչ մի՛ հաղորդիր, թուրքերը տագնապով ու ահաբեկված փախչում են: Եվ իրոք, լուսադեմին ժամը 4-ին հաղորդեցին, որ Օմարը ետ ենք վերցրել, թշնամուն դուրս շպրտել Քարվաճառի տարածքից: Իսկ այստեղ ես միացրի միկրոֆոնն ու բարձրախոսով հայտարարեցի.

- Թող լսեն մեր թշնամիները և մեր բարեկամները, մենք Օմարում ենք, ուռռա՜...

Դրանից հետո ժողովուրդը հանգստացավ Վարդենիսում:

Վերջերս կարդացի թերթում, Ռուսական բանակի գլխավոր շտաբի պետը գրում է, որ երկու կողմերում էլ հավասար էին զինտեխնիկան: Դա սուտ է: Ես ծառայել եմ Ադրբեջանում և գիտեմ նրանց երեք օդակայանները Շամխորում, Նասոսնիում և Կիրովաբադում, որոնք ամբողջությամբ՝ ինքնաթիռներով, սարքավորումներով տվեցին թուրքերին: Բաքուն ԽՍՀՄ ողջ հարավի հակաօդային պաշտպանության կենտրոնն էր:

Բ.Կ.- *Իհարկե, կարևոր գործոնը կազմակերպվածությունն է, որտեղ մենք առաջ էինք ադրբեջանցիներից:*

Ա.Բ. - Լրիվ համաձայն եմ: Երբ բերեցին «Օլինկա» կապի միջոցները, ես դեմ էի դրանց օգտագործելուն, քանի որ ամեն մի ձայն լսում էր թշնամին: Ստիպված էի թվային նշանների անցնել: Մենք էլ էինք լսում թշնամուն: Այդ տեխնիկական միջոցը քաղաքացիական կապի համար է:

Մենք Օմարում էինք ու հեռուստացույցով լուրեր լսեցինք, որ թուրքերը միտինգներ են անցկացնում հայերին ջարդելու մասին, գումարտակ են պատրաստում հայերի վրա հարձակվելու համար: Հրետանու պետը ես էի, հարցրի.

- Վոլոդյա, կարո՞ղ ենք հրետանիով խփել այստեղից մինչև Դաշբեսան:

Քարտեզով նայեցինք, ուղիղ հեռավորությունը կազմում էր 36 կմ, հրետանին կարող էր խփել 40կմ-ի վրա, նշանակում էր՝ կարող էինք: Դա մի տարբերակ էր: Անդրեասյանին զեկուցեցինք այդ մասին: Մյուս տարբերակն այն էր, որ առաջ գնանք մինչև Մինգեչաուրի ՀԷԿ, Եվլախի կողմերը ու ռմբակոծենք: Եթե Մինգեչաուրի ՀԷԿ-ը ռմբակոծեինք, Ադրբեջանի կեսը կվերանար: Ասում էին, որ իբր Սերժ Սարգսյանը դաշբեսանյան գործողության մասին զեկուցել է Տեր-Պետրոսյանին, նա էլ չի համոզվել: Դա միգուցե ճիշտ էր այն առումով, որ մեր թիկունքը շատ

թույլ կլիներ, չէին կարողանա այդքան մեծ ճակատով, քանակով իրականացնել այդ գործողությունը: Եթե ամեն տեղ դադարեցնեին մարտական գործողությունները և կենտրոնանային միայն դրա վրա, գուցե հաջողվեր:

Բ.Կ.- *Միակ ճիշտ տարբերակը այդ ժամանակ կլիներ այն, որ կարող էինք վերացնել արևելյան կողմից խոշոր թշնամուն Ադրբեջանին, բայց քանի որ չենք արել, այն ավելի ուժեղ է և գնալով ուժեղանալու է: Այդ սխալը կամ դիտավորությունը, որ արել են մեր ղեկավարները, որ թույլ չեն տվել, տեսեք, թե ինչքան թանկ է նստում մեր ժողովրդի վրա:*

Ա.Բ.- Արտաշատի գումարտակը ռուսներինն էր, համաձայնությունը տվել էին, որ մենք այն ընդունենք իրենցից: Ես աշխատում էի Կապի նախարարությունում, կոմիտեի անդամ էի, ինձ նշանակեցին նախագահ, որ գնամ ու ընդունեմ: Բոլոր ռադիոկայանները և այլն հանձնեցին, ես ընդունեցի: Մնում էին միայն փակ կապի սարքավորումները և ինչ-որ գլխավոր փաստաթղթեր, որ պետք է ընդունեի: Ասացին՝ ներսում ինչ-որ գործողություն է կատարվում: Շտապ դուռը բացեցինք: Պարզվում է, որ գլխավոր փաստաթղթերը վառել էին, իսկ սարքավորումներն էլ առանց այդ թղթերի չէին աշխատի, ընդ որում՝ դռան բանալիները միայն ես ունեի:

Բ.Կ.- *Դիտավորյա՞լ էին արել:*

Ա.Բ.- Այո, Մոսկվայի հրահանգով՝ գաղտնի սարքավորումները չհանձնել, կարևոր փաստաթղթերը վերացնել: Քանի որ չունեի այդ կարևոր փաստաթղթերը, ես ստիպված էի շտապ մեկնել Մոսկվա: Գնացի այնտեղի Կառավարության կապի դաշնային ծառայություն, որտեղից բերեցի այդ փաստաթղթերը, չնայած որ մեծ գնով, շատ թանկ էր, բայց դա հաջողվեց: Միգուցե սա կողմնակի մարդու համար հասարակ բան է, հրացան չի, ավտոմատ չի, բայց ավտոմատից էլ շատ մեծ բան է և առանց դրա անհնար է կազմակերպել:

Արայիկ Սարգսյան

Հովիկ Գրիգորյան

Բորիս Սաղյան

Պատմում են ԱՐԱՅԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԸ (Գետավանի գյուղխորհրդի նախագահ, Գետավանի ջոկատի հրամանատար), ՀՈՎԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ (գործարար, Չափարի ջոկատի հրամանատար), ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԳՍՅԱՆԸ (բժիշկ), ԲՈՐԻՍ ՍԱՂՅԱՆԸ (Երևանի պետական ֆիզկուլտուրայի ինստիտուտի դասախոս, մանկավարժական գիտությունների դոկտոր)

Արայիկ Սարգսյան - Ծնվել եմ 1955 թ., Չափար գյուղում, ավարտել եմ միջնակարգ դպրոցը, ընդունվել եմ Երևանի պետական մանկավարժական ինստիտուտը, հետո տեղափոխվել Կիրովականի պետական մանկավարժական ինստիտուտ, որը և ավարտել եմ 1981 թ.-ին, աշխատել եմ գյուղում 1984 թ.-ից որպես գյուղական խորհրդի քարտուղար, այնուհետև գյուղական խորհրդի նախագահ, հետո երբ Ղարաբաղյան շարժումը սկսվել է 1988-ին, այդ ժամանակվանից կազմակերպեցի ինքնապաշտպանական ջոկատներ, հաշվի առնելով, որ գյուղը շրջապատ-

ված է թուրքական բնակավայրերով, մի կողմից Իմերեթ Գյարավենդը, մյուս կողմից Զարեբտարը, Աղդարանը, և հարևանությամբ Քելբաջարի շրջանը, գետի մյուս ափում հայկական գյուղեր կան, որոնց ևս վտանգ է սպառնում, երևի թե Ղարաբաղում առաջին ինքնապաշտպանական ջոկատներից մեկը ստեղծեցինք մենք: 1988-ի վերջերից մենք արդեն կազմակերպված ջոկատներ էինք կառուցել, գիշերը պոստի էինք կանգնում, պահպանում էինք մեր բնակչության անվտանգությունը, ցերեկը թուրքերի հետ միասին գնում էինք աշխատանքի: Նախ անասնագողությունն էր շատանում նման պայմաններում, թուրքերը մեզ վրա էին գցում, մեզ մեղադրում, մենք իրենց վրա էինք դնում: Որպեսզի նման բաներ չլինեն, հերթապահություն սահմանեցինք, որը գիշերներն իրականացվում էր կամավոր հիմունքներով, մինչև անգամ 75 տարեկան մարդը պոստի էր դուրս գալիս: Ես ցուցակ եմ կազմել և՛ Զափար, և՛ Գետավան գյուղերի համար: Իմ հայրը 75 տարեկան մարդ էր, բայց պոստի էր գնում:

Բ.Կ.- *Ովքե՞ր էին ջոկատում:*

- Ամբողջ գյուղի երիտասարդությունը, նույնիսկ մեծահասակները, մինչև 65 տարեկան մարդիկ ընդգրկված էին ջոկատի մեջ:

Բ.Կ.- *Ի՞նչ զենք ունեին:*

- Զենք կարելի է ասել՝ չունեին, օրենքով գրանցված հաշվառված զենքերը ոստիկանության կողմից հանվեցին, դա 1989 թ. էր, ոստիկանապետն էր Ավագիմյան Վոլոդյան, հավաքեցին, հետո ես կանդրադառնամ այդ միջադեպին, որի հետ կապված Վոլոդյային հեռացնում են պաշտոնից, նրա փոխարեն նշանակում են Կիրովաբադից տեղափոխված միլիցիայի աշխատող Դանիելյան Էդիսոնին, որի ժամանակ այդ զենքերը պետք է ետ վերադարձնեին բնակչությանը, այդպիսի հրաման տրվեց, բայց չկատարվեց այդ հրամանը, չվերադարձրին, հետո տղաներով կազմակերպեցինք ու զինաթափեցինք Մարտակերտի ոստիկանությանը, ու զենքը բաժանեցինք ջոկատների տղաներին:

Բ.Կ.- *Ո՞վ էր շրջանի ընդհանուր հրամանատարը:*

Ա.Ս. Շրջանի հրամանատարը այդ ժամանակ Գալստյան Վազգենն էր, բայց շարժման ժամանակ ավելի ակտիվ գործունեություն էինք ծավալել Շիրինյան Վիգենի հետ: Վիգենը հետապնդվում էր պետական անվտանգության մարմինների կողմից, և երբ որ Վիգենը Գետավանում հանդիպվեց է գալիս մեզ հետ, ինֆորմացիան իսկույն հասնում է Մարտակերտ: Մի անգամ մի այսպիսի դեպք եղավ, Վիգենը եկավ Գետավան, ասացի դե բարձրացեք Արցախ տաղավարը, ես էլ հետս կբարձրանամ, գյուղսովետի գրասենյակում էի: Տասնհինգ րոպե հետո ԿԳԲ-ի ոստիկանակիցը եկավ թե՝ «Շիրինյան Վիգենը քեզ մոտ է եկել», ասացի՝ Վիգենն չկա այստեղ, ես էլ ճանապարհային տեսուչի հետ պիտի գնայինք տայգու այնտեղ, բայց քանի որ ԿԳԲ-ի աշխատողը եկավ, ասացի Սարգսյան Ռոբերտին, որ տանենք դրան Ցեվանն թաղումը հաց տանք, ճանապարհենք ու նոր գնանք Վիգենին հանդիպենք: Հետագայում սրան հայտնում են, որ Արսյիկը փաստորեն խաբել է:

Բ.Կ.- *Իր անունը ինչ էր:*

Ա.Ս.- Անվտանգության աշխատակցի անունը Մուսայելյան Գենտ էր, այն ժամանակ Մկրտչյան Վանիկն էր շրջանային ՊԱԿ-ի շեֆը, Գենտն վերջերս Մարտակերտի ՊԱԿ-ի պետն էր, հիմա թոշակի է անցել, հետո Գենտն ինձ մի նամակ է գրում մանրամասն ու խնդրում որ վերջում տոմակը պատռեմ, գրում է, որ ես իրեն իարել եմ, որ եթե ես Սարգսյան Սորիսի եղբայրը չլինեմ, ինձ հետ այլ կերպ կվարվեր: Հետո Վանիկին որ ազատել են, Գասումյան Վլադիսլավն է գալիս ԿԳԲ-ի պետ, անմիջապես ինձ ու իմ բարտուղարին կանչում է իր մոտ, որպեսզի ինչ-որ ինֆորմացիա գար, ցույց է տալիս Քյալբաջարի քրդերին ուղղված կոչ-թռուցիկը: Այն ժամանակ Երևանից թուրդ գրող Ալիխանե Մամեն է գալիս, որ կապ հաստատի քրդերի հետ: Կոչը, որտեղ դիմում ենք քրդերին, որ ապստամբեն Բաքվի իշխանությունների դեմ, քորդ վարորդների միջոցով ուղարկում ենք Շամիլ Մուալլիմին: Բայց քրդերից շատերը հենց բազիրովների, ալիևների քաղաքականության արդյունքում արդեն ազգրբեջանացվել ու թուրքացվել էին, դժվար է լինում այդ գործն իրականացնել: Ուզում էինք Ալիխանի հետ անցնենք Քյալբաջար, բայց չթողեցին: Ես նախապես պայմանավորվել էի Քյալբաջարի միլիցիայի հետ, որ հարցեր լինեին իրար հանդիպենք, հարցերը լուծենք: Բայց դա էլ չստացվեց: Դա սուտ էր: Արդեն լարումներ էին սկսվել քյալբաջարցիների հետ: Նրանց հիմնական կապը մեր շրջանով էր անցնում, ու հարկ եղած ժամանակ Մարտակերտում մերոնք կապում էին ճանապարհը: ՀՍՍՀ-ի պատգամավորների առաջադրումը սկսվեց, մեր տարածաշրջանն ընդգրկում էր Մեծ Շենից մինչև Զափար: Մեր գյուղից ես էի առաջադրվել, հետո ինքնարացարկ հայտնեցի ու պաշտպանեցի Վազգեն Դանիելյանին: Մեծշինացի Վիլենը մնաց, Բարմենը մնաց, բայց ընտրվեց Վազգենը: Վիգեն Շիրինյանին եմ ուզում անդրադառնալ:

Վիզենը մեծ կազմակերպիչ էր: Կոորդինացնում էր շարժումը: Երբ նա գոհվում է, Ստեփանակերտում, Վազիֆ Գալստյանը դառնում է շրջանի ռազմական դեկավարը, իսկ Բաղմանյան Հայկազը՝ շտարի պետը: Դրանից մի հինգ ամիս առաջ Կոմանդոսն էր եկել: Մեր գյուղում միայն Արսեն դայու կարաբինն էր, որը խորհրդային տարիներին Գրիշա Դանիելյանն էր նվեր տվել: Գիշերներն էինք պոստ պահում, իսկ ցերեկները դուրս էինք գալիս դաշտերը աշխատանքի: Ֆերմաները աշխատում էին: 1990 թ. օգոստոսին ադրբեջանական ՕՄՈՆ-ի տղաները եկան, ֆերմաներից հանեցին տարան թուրք և քուրդ աշխատողներին, ասելով, թե հայերի համար այլևս մի՛ աշխատեք: Լարվածությունը ավելի խորացավ: Մեր գյուղի առաջին զոհը եղավ 1991 թ. օգոստոսին:

- Մինչ այդ ձեր գյուղացի Շահենին էին կարել, չէ՞:

- 1991 թ. մարտ ամսին մեր գյուղի մի բնակչի իր յոթ տարեկան թոռան հետ Նարեշտարի թուրքերը տանում են, նրան սպանում են, անասունը քշում, տանում: Երեխան փախչում գալիս է, հայտնում մեզ, գյուղի երիտասարդներս գնում ենք, անցնում գետը, անտառով գնում, բայց չենք հասնում, քանի որ նրանք արդեն իրենց գյուղն էին հասել, իսկ մենք հանապատասխան զենք չունեինք, որ գյուղում խլեինք մեր անասունը: Ետ գալով, հայտնում եմ, որ գյուղի չորս թաղամասերում հերթապահություն սահմանվի, որպեսզի թուրքերը չկարողանան գողանալ անասունը: Շահեն Սարգսյանը դժգոհում է, թե թուրքն ինչ է, որ մարդ սպանի: Ու հենց նրան են ոչխարի հոտի հետ տանում: Ես գնացել եմ Շահենին առևանգողների հետքերով: Նա անտառի մեջ, Աբաստի Կածան ենք ասում, հետքեր էր թողել՝ ջարդելով ճյուղերը: Թուրքերը երկու ուղղության են ջոկվել: Շատ չարչարվեցինք, որ պատանդ բռնենք նրանցից ու փոխանակենք: Բայց թուրքերը զգույշ էին, գյուղից դուրս չէին գալիս: Մի տեղ բառատն ձի կար, քշեցինք, սպասելով, որ կգան ձիերի ետևից, բայց չեկան: Մեր գյուղի մեծահասակները աղմուկ բարձրացրին, բողոքեցին, թե թուրքերը հեսա կգան, մեր անասունը կտանեն, մեզ կմորթեն: Դե, քանի օր պետք է վախի մեջ ապրենք: Հետո դրանք ուղարկեցինք Շահումյանի ջոկատներին: Վազիֆը երկու հոգու է ուղարկում, որ մեր տղաների հետ մարդ բռնեն, բայց չի ստացվում: Ղոզլու տարածքում, որտեղ ճոպրոտ կա, զասադ ենք նստում, երկու թուրք են գալիս, բայց նկատում են մեզ, փախչում են: Հետո որոշում ենք, որ մեր զինված տղաները պահեն հոտը: Ինչ վերաբերում է Մամեդի գոմեշին, ես եմ

հանձնարարել, որ քշեն բերեն, մորթել ենք, ուղարկել Ստեփանակերտի մոտինգավորներին, որ ուտեն ու դիմանան անժամկետ հավաքին: Առաջին գենքը այսուրի պարկի մեջ են բերել: Իմ եղբայր Բորիսը առաջին սարքանակն է ուղարկել այսուրի մեջ: 1991 թ. առաջին ուղղաթիռը եկավ: Իսկ հարևան Գյաբավենդ գյուղը օրական մի քանի ուղղաթիռ էր իջնում: Մերոնք ասում են. «Երևանում ինչ են մտածում, գոնե ձևի համար մի ուղղաթիռ իջնի: Ուղղաթիռը պտտվում է թուրքի գյուղի շուրջը, Դանիելյան Սլավիկը ասում է, որ այդ պարկը տանեմ: ԿԳԲ-ի աշխատողները գալիս են, նստում ուղղաթիռը, որ իբր թույլ չտան զենք տեղափոխել: Խաչաղբյուրի տարածքից թուրքերն ուզում են քշեն անասունը, հավաքվում ենք, Գետավանից զինվորական զրահամեքենա է գալիս, երկու կրակահերթ տալիս, թուրք անասնագողերը թողնում, փախչում են: Իսկ Շահենի խնդրում տղաները չեն եղել: Թուրքերը ավտոմատներով են, մենք՝ որսորդական հրացաններով: Խաչաղբյուրից վերև Թուրքի Գյոռ ենք ասում, պահակակետ ունեինք: Մեր տարածքն է, բայց գերեզմանոցի հոդ ենք տվել թուրքերին: Նրանք գալիս են, այդ պոստից մեր գյուղի ինը տղաներին պատանդ տանում: Հետագայում մեր կուսշրջկոմի առաջին քարտուղար Վահան Գաբրիելյանը գեներալ Շատալինի միջոցով Քյալբաջարում ազատում են տղաներին: Բերում են Գետավան, հետո տեղափոխում են Ստեփանակերտի հիվանդանոց, այնտեղից Հադրութ ու Երևան: Մի անգամ հարևան Վերին Հոռաթաղ գյուղի հրամանատար Ռաֆոյի, Հովիկի, Սաղյան Արմենի, որին Ռեմբո ենք ասում, Սուրիկի հետ գնում ենք Աղդաբանի կողմը, որ մի վնաս հասցնենք, որ այլևս վախենան ու չգան տանեն անասունը: Ռեմբոն մի երկու մետր հասակ ուներ, գնդացիրը նրան էինք տվել: Ասում է. «Ինձ «Ռեմբո» եք կնքել, ու տանջում եք»: Իրոք, կարգին պատժում ենք: ՕՄՈՆ-ը 1991 թ. ամռանը սկսում է բնակավայրերում անձնագրային ռեժիմ անցկացնել: Ուղղաթիռներով իջնում են գերեզմանոցում, լցվում գյուղը: Սարգսյան Լևոնին են բռնում, ստիպում, որ կարդա ցուցակը, ասի նրանց տեղը: Սա էլ բարձրաձայն կարդում է անունները ու ասում, որ թաքնվեն, հետո ասում, թե ոչ ոքի չի ճանաչում, քանի որ ինքը այս գյուղից չէ: Հեռախոսով ինձ հայտնում են, որ գալիս են իմ ետևից: Վերցնում եմ «Տոզ» հրացանը, մտնում անտառը: Սարգսյան Հովիկին, Հրայր Դավթյանին ու Վալոյին բռնել են, տարել Գյաբավանդ: Ինձ էլ են բռնել: Բացատրեցի, որ երկու գյուղերի միացյալ գյուղսովետի նախագահն եմ:

Գյարավանդ գնալ չեմ կարող: Ռուս գնդապետին խնդրեցի, որ օգնի ազատելու տղաներին: Օգնեց: Երկրորդ անգամ, որ Լենը հայտնում է, գալիս են տան դեմը նստում: Գիշերվա մեկին շրջապատում են զրահամեքենաներով: Հորս են հարցնում, թե ուր է որդին, պատասխանում է, որ շրջանից են կանչել, գնացել է: Հորս տանում են: Զարնքտարցի մի տղա, որ հորս աշակերտն է եղել, վերադարձնում է անձնագիրն ու ետ տուն ուղարկում: Հենց Զարեբտարում մարդիկ կային, որոնք մեզ տեղեկություններ էին հաղորդում, որոնցից մեկը հենց Վալիդան էր: Լուր է ուղարկում, թե ծառներիս տանելու են, որ դրանց փոխարեն գնամ հանձնվեմ: Առաջին զոհերը մենք 1991 թ. սեպտեմբերին ենք տալիս: Հորս հոգի են զոհվում: Արկադի Տեր-Թադևոսյանը չի թողնում, որ այլ ջոկատներ գան մեզ օգնության: Մեզ օգնում են Վերին Հոռաթաղի, Բաղուջայի տղաները, Հովհաննիսյան Յուրան («26-ի Յուրան») իր տղաներով: Բայց մենք մտնում ենք Գյարավանդ, սկսում քշել թուրքերին: Այլ ելք չկար: Մի քանի տուն վառում ենք: Նրանք շրջապատում են մեզ ու թիկունքից կրակում: Մարտավարություն չիմանալու պատճառով ենք զոհեր տալիս: Մանգասարյան Ատուրը, որի տունը հետու չէր թուրքի տնից, հրացանն ուսին մտնում է հավաքունը, որ ձու վերցնի, դուրս գալիս կրակում են, սպանում, գալիս, հրացանը տանում են, մարմինը թողնում տեղում ընկած: Նույկինն, Օսկոցկին գալիս են Վահան Գաբրիելյանի հետ հուշարձանի մոտ, մասնակցում զոհերի հուղարկավորությանը: Յուրան վիրավորվում է ուրից: Մերոնք են չիմանալով կրակում մեզ վրա:

Հովիկ Գրիգորյան - Զափարի դպրոցից հետո ավարտել եմ Երևանի գյուղինստիտուտը, հետո աշխատել եմ Լենինականի ջրային տնտեսությունում, ապա վերադարձել Զափար, հիմնել կոոպերատիվ: Երբ սկսվեցին անասնագողությունները, Արայիկի հետ որոշեցինք ջոկատ հիմնել ու հրամանատարը ես պետք է լինեմ: Մկզբից ջոկատում 11 հոգի էին, երկու հրացան: Բանակում չեմ ծառայել, ինստիտուտի ռազմական կաֆեդրայում եմ դասընթացների մասնակցել: Մենք այն ժամանակ մտածում էինք, որ անասնագողության, մարդագողությունների դեմն առնենք, իսկ որ հետո պատերազմ կլինի, երբեք չէինք մտածում: Հետո չորս հրացան ձեռք բերեցի: Մեր կոլտնտեսության նախագահին ու տղաներին բռնել, Քյալբաջար էին տարել: Մեր գործողությունն սկսվեց նրանով, որ իբր գնում ենք Ստեփանակերտ, հոսպիտալից

վերադառնանք, բերենք գյուղ: Չորս հոգով գնացինք: Սարգսյան Վլասան ու Դավիթը ինձ անտուրջ մարդու տեղ դրեցին, ԿԳԲ-ն կրակի: Ես հիասթափվեցի ու վերսկսեցի գործարանով զբաղվել: Գուլպա, զուգագուլպա էինք գործում: Հյուրանոցում ծանոթացա Վիգենի հետ: Երկու ականանոց, հրացաններ բերեցի գյուղ: Ուղղաթիռով զենք էինք բերում: Զենքը տալիս եմ հասցրել: Կրկին ստանձնեցի ջոկատի հրամանատարությունը: Մի անգամ գյուղամիջում կանգնած էինք: Սպեցնազի հրամանատարը մոտեցավ, թե՝ ուզում եմ Սաղունց Թումբ տանես: Իմ նկարը ցույց տվեց, թե դա մասին ամեն ինչ գիտենք: Մի երեխա ուղարկեցի, որ զենք, զինամթերք թաքցնեն, մենք բարձրացանք: Տեսավ թումբը: Օգոստոսի վերջերն էին, Վագիֆն էլ եկավ, Վերին Հոռաթաղում ընկուզենիներ կային, դրանց տակ էինք հավաքվել տասնհինգ հոգի, պիտի որոշենք Ռոմուդյուի թե Գյարավանդի ճակատագիրը: Մեր գյուղը սեպաձև մտած է թուրքական գյուղերի մեջ:

Ռ.Կ.- *Հավաքված դրդանների անունները կարող ես հիշել:*

Ա.Ս.- Ես կհիշեմ: Վագիֆն էր, Մորուք Ռաֆոն, Ռադիկն էր...

Հ.Գր.- Չէ, այդ օրը դու չկայիր, որովհետև ինձ միայն պաշտպանել էր Հենոն: Ես ներկայացրի, որ ամենաձանր վիճակը մեր գյուղն էր, իսկ Ռոմուդյուի հարցը հեշտ էր: Ռաֆոն էլ էր, նրա խոսքն անցավ: Երբ որևէ տոիթով գալիս են իրր օգնության, մտնում են գյուղը նստում, թե՝ «Մենք ձեր թիկունքը պահում ենք, դուք առաջ գնացեք»: Մեր միջև մի հակակրանք էր առաջացել: Ինչ առաջարկում եմ, իսկույն դեմ է կանգնում: Իսկ թանի որ մեծ ջոկատ ունի, ամեն ինչով զինված, նրա կշիռն ավելի մեծ է ու նրա խոսքն էր անցնում: Որոշվեց, որ Ռոմուդյուի գործողությունը պետք է իրականացնեն: Ես հայտարարեցի, որ չեմ մասնակցելու այդ գործողությանը: Եկա գյուղ, ջղայնությունից ու հիասթափությունից սիրտս դուրս էր թռչում: Եղբայրս՝ Օնիկը, հարցրեց, թե Հաթերքի Սուրիկը թեզ չի՞ պաշտպանել: Գնացի Սուրիկին հանդիպեցի, ասում է՝ ձեռագրել ես, թե իրր չես ճանաչում, ես էլ վիրավորվել էի: Որոշեցինք միասին սկսենք գործողությունը: Սա սեպտեմբերի վեցն էր: Սուրիկը եկավ իր ջոկատով, Ռաֆոն էլ նկավ: Երեք կողմից շրջապատել էինք, միայն դեպի Քյալբաջար փախուստի ճանապարհ թողել: Երեք օր կռիվ էր գնում: Թուրքերը հեռացան: Երկրորդ օրը Կոմանդոսը նկավ, սկսեց հայհոյել, թողեց հեռացավ: Այդ օրերին Բորիս Ելցինը՝ Ռուսաստանի նախագահը, Ղազախստանի նախագահ Նազարբաևի հետ Ստեփանակերտում

էր: Չորրորդ օրը Դիրքի Թումբից ռուսները թուրքերի հետ կրակում են, մի երկնա ու երկու մարդ են սպանում: Մի մարդ էլ գնում է հավերին կուտ տա, այդտեղ են սպանում: Արիքլուի մասում նոնակը անփութորեն են նետում, կպչում է պատուհանին, պայթում, Մհերիկն այդտեղ է զոհվում: Հուղարկավորության օրը ղեկավարները, Սերժ Սարգսյանը գալիս են մասնակցում հուղարկավորությանը: Դա մեր կողմից կռվով ազատագրված առաջին գյուղն էր: Բայց տների քսան տոկոսն է վառած: Վագիֆը խնդիր է դնում, որ մյուս տներն էլ այրենք, որ չվերադառնան թուրքերը: Աղան ու Փարմանն են մնացել գյուղում: Բայց գյուղում ռուսական մի վաշտ կար: Հրամանատարին ասում եմ. «Ի՞նչ ես ուզում տամ քեզ, թույլ տաս գյուղը այրեմ»: Ասում է. «Ես էլ եմ համաձայն, բայց զամպալիտին էլ պիտի մասնակից դարձնել: Սա էլ թաթար էր, մահմեդական: Ասացի՝ իզուր ես խանգարում: Չի համաձայնվում: Մտնում ենք, մի երեսունն էլ վառում: Կոմբատը գալիս է, հանդիպում ինձ: Այդ ժամանակ մեր Վլաստեն Գագոն ներկայացնում է ինձ. «Կոմբրիգ Գրիգորյան»: Խեղճ փոխգնդապետի չոքերը թուլանում են: Հարցնում է՝ ինչ ես ուզում: Ասում եմ՝ Գյարավանդը չպետք է լինի, որ խաղաղություն լինի: Ասում է. «Դեկտեմբերի 19-ին ռուսական բանակը դուրս է գալու Ղարաբաղից: Ինչ ուզում եք, կանեք, ձեր գործն է: Մեր գյուղում զինվորական մի ջոկատ էլ կար: Մի զրահամեքենա, քսան զինվոր, երկու նոնականետ, գնդացիր: Քսանհինգ հազար ռուբլի են ուզում, որ զենքերը վերցնենք: Մեզ ասացին, որ ամբողջ գունդը պետք է զինաթափենք, եթե այդ փոքր ջոկատը վերցրինք, գործը կտապալվի:

Ա.Ս.- Այդ գնդի դիսլոկացիան Գետավանում էր: Մի չեչենի հետ խոսեցինք: ԱՍ սնաբյաղներ, պատրոններ առանք:

Բորիս Սաղյան - Համայնքը հավաքում ենք, որոշում ենք ինչպես օգնենք գյուղին: Գյարավանդցիները հավաքվել են հին Աղդաբանի տարածքում, Զարեքտարն ու Քյալբաջարը նրանց թիկունքում կանգնած են: Սպասվում է, որ պիտի փորձեն վրեժ լուծել Գներ գյուղից: Ակումբի երկրորդ հարկում ժողով գումարեցինք: Գյուղական մթնոլորտով ծրագիր ենք մշակում, թե ինչպես պաշտպանենք գյուղը հարձակումներից: Ժողովի ժամանակ զինվորականները եկան, թե՝ «Ո՞վ է Երևանից եկած դասախոս Բորիսը: Ռաֆիկը, թե՝ ես եմ: Ինձ ժողովից դուրս բերեցին, տարան Ռաֆիկենց տուն: Պարզվեց, որ մատնել են: Չորս արկը փամփուշտ էի գնել: Ստիպում են, որ ետ տանք: Մատնել էր Մուրադյան Արթուրը,

որը խաչած է եղել, մատնել է: Հետո գալիս են մեր տուն: Կրակում են եղբայրս՝ Յուրայի գլխավերևով, եղբայրս էլ ետ է վերադարձնում ցինկի տուփերը: Ստիպված հեռացանք:

Հ.Գ.- Գյուղի տարեցները մեզ չէին վստահում: Այդ գործողությունից հետո հավատացին, կանգնեցին մեր թիկունքին: 95 հոգի զենքի տակ մարդ ունեի, 74 հոգի էլ Արայիկի մոտ էին: Երբ զինվորները գնացին, Քյալբաջարից սկսվեց առաջին հարձակումը: Հզոր հարձակում էր: Դժվար չէր ետ տալը:

Բ.Ս.- Երևանում շատ էինք անհանգիստ: Գյուղական համայնքներով հավաքվել էինք «Ղարաբաղ» կոմիտեի շուրջը: Դանիելյան Գրիգորը, ես հավաքեցինք փոքր խումբ, Ռոմա Սարգսյանն էր, Դանիելյան Դրիշան, Աշոտ Սաղյանը, ստեղծեցինք կոմիտե, ի վերջո հավաքվեցին Հայաստանում ապրող չափարցիների 120 ընտանիք: «Ակվարիում» ռեստորանում հավաքվեցին 120 երիտասարդ: Առաջին ինքնաձիգ զենքը ինձ հաջողվել է ստանալ Վազգեն Սարգսյանից: Քանի որ Վազգենը մեր ֆիզկուլտինստիտուտի շրջանավարտ էր, որտեղ ես դասախոսում էլ, Գեորգի Պետրոսյանը օգնեց, որ հանդիպեմ նրան: Ասլանյան Մերվիկի հետ մտանք նախարարություն: Լավ ընդունեց, 12 հատ ավտոմատ տվեց, որից ութը մեր գյուղ հասավ: Վաթսուն հոգու բերեցինք գյուղ: Սաղյան Աշոտին ուղարկեցինք Մերձբալթիկա, որտեղից ձեռք բերեց հակաօդային «ԴՇԿ» չորս փողանի գնդացիր: Հասրինա գյուղ: Աշոտը ռուս մասնագետ է բերում:

Ա.Ս.- Երկու կայանք էր, մեկը Մարաղայի ջոկատի հետ փոխանակում եմ վեց ավտոմատի հետ, մյուսը տեղադրում ենք գյուղում: Համայնքը մեզ օգնություն էր ցույց տալիս սննդով, զենք, զինամթերքով, հագուստով: Ակտիվ էին Ռոման, Աշոտը, Սերգեյը, Բորիս Սարգսյանը, միլիցիայի մայոր Սուրեն Կարապետյանը, Վովան օգնում էր բենզինով: Ունինք մեր հաշիվը բանկում: Մենդամթերքը այնքան առատ էր գալիս ուղղաթիռներով, որ բաժանում էինք գյուղացիներին ըստ ցուցակի: Հիմա Մարաղայի դեպքերի մասին պատմեմ: Շտաբից Վագիֆը հանձնարարում է, որ թուրքերը գրավել են Մարգուշևանն ու Մարաղան, հասել են Ղարաբաղի փորձարարական բազա-ԿՆԵՔ, շուտ հասեք օգնության: Հարալ մնքենայով պիտի գնանք, Հայաստանից եկածներին արգելեցի գալ, մտածելով, որ փորձ չունեն, տեղանքին ծանոթ չեն, համ էլ զոհ լինելու դեպքում ավելի պատասխանատվություն ենք զգում, փորձում ենք

խնայել նրանց: Իհարկե, տարբերություն չկա՝ ծնունդով Զափար գյուղից է թե այլ վայրից: Արրամյան Ռուբիկը, որ ապա էր, թաքուն և բարձրանում: Վլադիմիր բազայում էր: Երկու օր մնացինք Մարաղայում: Ոլինդաժում երեխաներին ու կանանց թուրքերը կոտորել էին: Հրամանատարը՝ Ռոման, վիրավորվել էր մեջքից, պառկած էր Մարտակերտի հիվանդանոցում: Թուրքերից բավականին տեխնիկա վերցրինք: Տանկ էինք վերցրել, վերցրին տղաները: Մարաղայի դիրքերը պահեցինք, մինչև «Նաիրի» ջոկատի տղաները եկան փոխարինելու մեզ:

Բ.Կ.- *Մարաղայում ինչ էիք կրակել:*

Ա.Ս.- Ոլինդաժում ապաստանած երեխաների, կանանց դիակներ, անխնա կոտորել էին անզեն բնակիչներին: Այդ կոտորածը, անիմաստ զոհերը, պատանդները ինքնապաշտպանության վատ կազմակերպելու արդյունք էր: Երեք օր մեր ջոկատով պոստ էինք պահում, մի մարաղեցի չտեսա, հա, մեկը կար, հարրած էր, դրա համար էլ մնացել էր: Որ գնդակից գինու գործարանի չանը ծակվում է, լցնում է բիդոնը, խմում ու օրորվելով գալիս դեպի մեզ: Մենք էլ ծարավ կոտորվում ենք, ոչ էլ աղբյուրի, ջրի տեղ գիտենք: Հետո տեսանք Թարթառից եկող առուն, Ջոջառու են ասում մարաղեցիք: Սիմոնյան Խաչիկի ջոկատը եկավ մեզ փոխարինելու:

Հ.Գ. Սովորաբար ուրիշ տարածքներում ես կռվի չեմ մասնակցել: Ես էլ մանկեցի Մարաղա: Գինու գործարանի կողքով եմ Մարաղա մտել: Հաթերքի Սուրիկն էլ էր ինձ հետ: Երբ հասանք Մարաղայի վերջը, հասանք խրամատին: Խուճապի են մատնվել Մարաղայի ջոկատի տղաները, թողել գյուղն ու փախել: Թուրքն անարգել մտել է գյուղն ու կոտորելով առաջացել:

Ա.Ս.- Ցոթ թե ութ հոգի մարաղեցի բնակիչների ենք հանդիպել: Կենտրոնով էինք գրոհել, թուրքի շատ ենք հանդիպել, կոտորելով հասել են Միրբաշիրի սահմանը:

Հ.Գր. Մերոնցից ահագին բնակիչների ենք հանդիպել զոհված, բայց նրանցից էլ ենք կոտորել: Թալանչիներ էին, նաև զինվորներ: Արագ վերադարձել ենք Զափար: Թուրքերը 19 անգամ գրոհել են մեր ուղղությամբ: Նրանք մտածում էին, որ իրենց առաջխաղացման համար գլխավոր խոչընդոտը Զափարն է: Մի անգամ շատ հզոր էր հարձակումը: Մի պոստ նահանջել էր: Հենց մութը տվել էր, հարձակվել են: Մենք ունեինք ընդամենը 22 ավտոմատ, մի գնդացիր, ինքնաշեն նռնականետ,

մի քանի կարաբին, որսորդական հրացաններ: Իսկ թշնամին միայն գնդացիրներով էր կռվում: Եթե ամենահեռուն Դրմբոնն էր, պետք է քաոսում բոպեում հասնեին օգնության: Ոչ մի տեղից չեկան: Մեզ թողել էին բախտի կամ պատահականության քմահաճույքին: Վլադիմիրի ջոկատը Շահումյանից մեզ օգնության է հասել, Ներքին Հոռաթաղից Ռուբիկը հասել է օգնության, իսկ մեր կողքի գյուղերից չեկան: Սուրիկը միայնակ էր եկել կռվելու: Նա երիտասարդների ջոկատ ուներ, դե, երեխաներ էին: Թուրքերը Բալաշունյանց Քար են ասում, այդտեղից լուսանալով որ դեպի օդ են կրակում գիշերվա ժամը չորսին, դա նահանջի նշան էր, ետ էին քաշվում: Նրանք բավականին զոհեր էին տվել: Ասեմ, որ մուտակա գյուղերից եկել էին, Քաչալ Թումբ ենք ասում, պահկվել, սպասել, թե ինչ կլինի, երբ տեսել են թուրքերի նահանջի նշանը, նոր կրնացել են: Մեր ձորակում երկու գաղափարական ուղղություն կար: Մեկը Մորուք Ռաֆիկի ուղղությունն էր, մյուսը՝ Հաթերքի Սուրիկի ուղղությունը: Ես Սուրիկի կողմնակիցն էի, քանի որ Սուրիկը գենք, զինամթերք ստանալիս հավասար էր բաժանում, ու հատուկ ուշադրություն էր դարձնում մեր գյուղի դիրքին: Զինամթերքը պետք է Գետավանի դաստաբում պահեն: Մենք այդ օրն օգտագործել ենք ողջ զինամթերքը, ու ոչ մի զոհ չենք տվել:

Հ.Գր.- Ես Երևանում էի, երբ Հաթերքի Սուրիկը առանց իմ գիտության գալիս է, իմ ջոկատի տղաներից տանում Սրխավենդի կռվին, երկու զոհ տալիս: Մի կերպ են դուրս գալիս շրջափակումից: Երբ եկա, ընդհարվեցինք, նույնիսկ իրար վրա գենք քաշեցինք: Առանց իմ գիտության նա իրավունք չուներ իմ ջոկատից տղաներ տանելու: Սրխավենդի գործողությունն է սկսվում: Վլադիմիրի ջոկատը ներքևից և շարժվում, Ստեփանակերտի խմբերը Սրխավենդի վրա են գնում, «Ասկոլկա» Աշոտն էլ Զլդրանի ու Վաղուհասի տղաների հետ Բաշ Գյունեփայա գյուղի վրա և գնում: Մեր խմբերն էլ են գնում: Այդ օրը «օտրոյ» գնաց: Բաշ Գյունեփայա գյուղի ուղղությունը ղեկավարում է Ամարասի Արթուրը: Գետավանի կազարմայում ենք մնում: Հայտնում են, որ Աշոտի ջոկատը շրջափակման մեջ է հայտնվում: Քաշաթուխպ էր, հանկարծ տեսնում են, որ Սրխավենդում են հայտնվել: Աշոտը տասնմեկ զոհ է տալիս: Ինչ տեխնիկա գնում է, բոլորն էլ ականի վրա պայթում են: Արթուրը հրամայում է օգնել Աշոտին դուրս գալու շրջապատումից: Մի յոթ կմ ճանապարհ պետք է անցնենք անտառով: Մի թումբ պետք է անցնեն: Մենք

պետք է այնքան պահենք թումբը, որ նրանք գիշերը դուրս գան: Ես ուրիշ տեղ կովի տասնմեկ հոգու հետ եմ գնում: Երեք հոգու ետ տվեցի: Մնացինք ինը հոգի: Ցույց ենք տալիս, թե հարձակվում ենք: Մարդկանց կեսը դուրս եկան: Նորից հարձակվեցինք, մյուս կեսը դուրս եկան: Չորրորդ հարձակումից նկատեցինք, որ թուրքերը նահանջում են: Մնացել էինք զարմացած:

Հովիկ Սարգսյան - Դրան հակառակ կողմում էլ է կռիվ գնում: Այդ ձորի ղեկավարը Վիտալիկն է: Վանքում հակակարկտային հրանոթի կապի անունը «Կոունկ է: Լսվում է՝ «Վիտալիկը»՝ «Կոունկին», հրետանավոր Կարոն, որը անգրագետ մարդ է, պատասխանում է՝ «Կոունկը» «Վիտալիկին», Վիտալիկն ասում է՝ «Թխ, տեսնամ»: Կրակում է: Վիտալիկն ասում է՝ հեռու գնաց, հետո կոորդինատներ է թելադրում: Կարոն ասում է՝ ես կոորդինատ, ազիմուտ բան չեմ հասկանում, ասե՝ վերև, ներքև, աջ կամ ձախ: Վիտալիկն ասում է՝ քիչ վերև ու առաջ տուր: Կրակում է, Վիտալիկն ասում է՝ լավ է, մի հատ էլ տուր: Հետո հարցնում է՝ «Կոունկ», ինչ եղավ: Կարոն թե՝ կրակել եմ: Վիտալիկն ասում է՝ չի հասել, Կարոն պատասխանում է՝ սպասիր խողովակի մեջը նայեմ, հետո ասում է՝ «Պա, հորա արկը, ոչ ներսում կա, ոչ էլ դրսումը»:

Հ.Գր.- Ես կտրուկ արգելել էի իմ տղաներին թալան անել: Դա սկզբունք էր: Մտել ենք Բաշ Գյունեփայա, մի պահեստ ենք գտել դըպրոցում, էնքան զենք, զինամթերք կար, էլ չասած: Արթուրը հայտարարեց, թե ոչ ոք թալան չպետք է անի, ինչ գրավենք, հալալ կիսելու ենք: Չորս արկը փամփուշտ հասավ մեզ: Վանիկն էր ինձ հետ: Տեսնեմ մի էշ է բարձրացնում բեռնատար «ԿՐԱԶ»-ի թափքը: Թե՝ ինձ պետք է: Երբ Գետավան հասանք, ասաց. «Փալանի տակ մի կոստյում եմ դրել»: Հետո հերթը հասավ Աղդաբանին: Լեոնիդը պետք է կառավարեր: Ասում եմ՝ եթե Աղդաբանից հետո գնալու ենք առաջ, գալիս ենք, չնայած ինձ չէր հուզում այդ գյուղի գրավումը: Իմ հոգսը գյուղը, մարդկանց պահելն է: Չնայած թնդանոթով խփում են գյուղին, միևնույն է, մենք պիտի պահենք գյուղը: Շրջանում էլ էր երկու մոտեցում տիրում: Մի կողմում Լեոնիդն էր իր ազատագրական պայքարով, մյուս կողմում՝ Վագիֆը, որին ընտրել է ժողովուրդը, իր հասարակ զինվորների հետ: Ինձ ամեն կողմից առաջարկում էին մտնել այս կամ այն կուսակցություն: Ես հրաժարվում էի: Մեր նպատակը այստեղ ապրելն էր: Լեոնիդի նպատակը Աղդաբանից հետո թափով առաջ գնալն էր: Պատերազմում ամենամեծ

գործը տեղացիներն են կատարում: Աղդաբանի գրավումից հետո ինձ ասացին, որ հրետանին պետք է գրավենք: Բլինդաժը գրավեցինք, մայիս ամիսն էր, քիչ ձյուն կար: Երկու կետ ապահովեցի անվտանգությունը: Թուրքերը փախել են, Շամիլի գյոռի տեղամասում դիրքավորվել: Ճղաներին վերցրի, գնացի, գրավեցի այդ տեղը: Մեր ժողովրդին հանձնարարեցի անասունը գյուղ քշել: Տեսնեմ Վագիֆը եկավ: Լեոնիդն ասաց, թե որ Վագիֆը եկել է, ինքը հեռանում է: Ես քսանհինգ զինվոր ունեի, ես էլ գնացի: Լեոնիդն ինձ մեղադրեց, թե իրավունք չունես պոստերը թողնել հեռանալու, դրանք պահել է պետք, այլապես իմաստ չուներ այս մեծածավալ գործողությունը: Նեղացավ, գնաց, մեզ թողեց գնաց: Քսան հոգով ոնց պահեմ: Հետո թուրքերը եկան նորից իրենց դիրքերում նստեցին, ու մեզ նեղը գցեցին: Մեր գյուղի վրա տասնինը հարձակում է եղել: 19-րդ հարձակման ժամանակ տասնմեկ տեխնիկայով են գրոհել: Երեքը թողել են տեղում: Արայիկն ու Վլաստեն Գագոն ասացին, որ Արթուրը կանչում է: Թե՝ Ֆելիքսը կանչում է: Ասում է՝ «Եթե երեք տանկ տամ, կկարաս Հաթերքը ետ վերցնես», ասացի՝ հա: Գիշերը երեք տանկ եկավ: Մեկի աշտարակը չի գործում, մյուսի թնդանոթի փողն է լոկել, մեկն էլ արկ չունի: Եկան Գետավան: Իմ փոխարեն Նելսոնին եմ թողել՝ իմ եղբորը: Եկա տեսա Չափարի ժողովուրդը հավաքված Գետավանում, գլուխս պտտվեց: Նելսոնը թե՝ Ամարասի Արթուրն է հրամայել հանել ժողովրդին: Ստեփանակերտում Վիտյան եկավ իմ հետևից, թե՝ Կոմանդոսը կանչում է: Եկա Չլդրան: Կոմանդոսն ասաց, որ պոստ չպետք է պահեմ, միայն գրոհներին եմ մասնակցելու: Կազարմա են սարքում: Կոմանդոսը կանչեց, «Ղզարա հողում երկու պոստ կա, մի քանի հոգու տուր, թող գնան մի քանի ժամ պահեն, հեսա փոխարինողները կգան: Որոշ ժամանակ անց մյուսներին այլ տեղեր է ուղարկում պոստ պահելու: Չորս օր չեն փոխարինում տղաներին: Երեկոյան տղաները գալիս, հավաքվում են Չլդրանի սղոցարանի մոտ: Նստում ենք բեռնատարն ու գնում Ստեփանակերտ: Մի յոթ հոգի միացան ինձ, ետ եկանք, կռիվներին մասնակցելով հասանք Դրմբոն գյուղը: Ասացին, թե «Ամարասի» Արթուրը Վաղուհասից կանչում է: Թե՝ մինչև էգուց ձեր շենը պիտի ազատենք թուրքից: Գործողությունը խափանվում է, քանի որ կամուրջ կապող տեխնիկան չի աշխատում: Սելպոյում ալյուր կար: Մի գեներալ է գալիս, թե՝ ես հետախուզության գեներալ եմ, ուզում եմ ձեր գյուղը տեսնել: Ալյուրը տալիս եմ Լիսագորում մեր ժողովրդին: Մերոնց

ես տեղափոխում եմ Վարդենիս: Ուտելու ոչինչ չկա: Վարդենիսի հրամանատարը՝ Հենդոն, որ ընկերս է, որոշում ենք միանանք ու Քյալբաջարով գնանք մեր գյուղը ազատենք: Բայց ոչինչ չի ստացվում, եղբայրս բանակ է մտնում, իսկ իմ կռիվը պրծնում է, գալիս եմ Երևան:

Ա.Ս.- Աղդաբանի մասին եմ ուզում պատմել: Ես Ռոմա Մարգսյանի աջակցությամբ զինամթերք էի գնում: Ձենք-հանդերձանքով ուղղաթիռով գալիս ենք Գավառ: Գյուղ եմ հասնում, հաջորդ օրը սկսվում է գործողությունը: Լուրջ իրավիճակ կլիներ, եթե «Դուշմանը» չպայթեցներ զինվորներով լցված մեքենան:

Հ.Գ.- Մի անգամ Գրադով խփում են Վաղուհասին: Ձիերով գնում ենք գյուղով, հարցնում են՝ Էտ հուվա, ըսեցին՝ Չփարա Հովիկն ա: Մինն ասեց. «Դե վար Չփարա Հովիկը եկայ ա, ուրեմն ամեն հինչ լավ ա ինական»: Հասել ենք Կարմիր Քարը, մի ութհարյուր մետր հեռու թուրքերն են: Ես գիշերը վեց հոգու վերցրի, գնացինք որ խլենք գագաթը, տեսա բարձունքը դատարկ: Մեզ հավատում էին:

Ա.Ս.- Մենք միայն զինվորների վրա էինք կրակում, իսկ բնակիչներին չէինք սպանում: Աղդաբանը պահելու խնդիրն էր: Մարգսյան Գագոն թե՝ Չափարը քոչացնում ենք Ալիշան: Մերոնք գերհոգնած էին: Իսկ խորքերի գյուղերի տղաները ոչ մի դիրք չէին պահում:

Հ.Գ.- Վագիֆը վատ հրամանատար չէր: Գրադի Ժորային կանչել եմ մեր տուն, խնդրել, որ գա մեր գյուղը հրամանատար լինի, ես՝ տեղակալ: Ինձ չհավատաց:

Ա.Ս.- Երբ Շահումյանը տեղահան եղավ, մնացած գյուղերն էլ հետները նահանջեցին: Երբ Հաթերքից սկսեցին մեր գյուղին թուրքերը խփել, չէինք հավատում: Մարտիրոսյան Աբշենի հայրը թուրք է, մայրը՝ հայ: Ասացի սա ագենտ է: Փախչելիս կրակեցին, գցեցին: Մոուշավանին ասացի՝ քրոջդ տղան ընկած է քարի մեջ: Երկրորդ անգամ ուզում էինք գրավենք: Չստացվեց: ՄԱՋ ցիստեռնը կար, լիքը բենզին: Կոմրայնը նորոգել տվեցի: Ժորան մի կոմրայնավար ուղարկեց: Ամեն հոգու 450 կգ ցորեն բաժանեցի: Սկզբում մեր գյուղացիք Ջառին Բաղում են բազայավորվում: Օգոստոսի քսանհինգին նորից են թուրքերը հարձակվում: Օհանյանը հարցնում է ռադիոկապով՝ ո՞ւր: Ասում եմ՝ եկա Ջարդախաչ: ԴՇԿ-ն իջեցնում եմ, անտառում թաքցնում, քանի որ ծանր է, չենք կարողանում շալակած տանել: Արմոյի հետ Վերին Հոռաթաղի տղաներն են Խալաստոյ Ագոյի գլխավորությամբ: Գալիս ենք հասնում Բագյանց Դուգր, ասում է. Բա ինչ եղավ, ասում եմ՝ ինչ է պատահել, ասում է՝ փամփուշտ չկրակած գնում ենք: Շատոյին ասում եմ՝

- Տանկային դասակի հրամանատար ես եղել բանակում, մտիր տանկի մեջ ու նստիր դեկին:

- Իմ տեսածը բանակում S-54 է եղել,- պատասխանեց Շատոն,- իսկ սրանից գաղափար չունեմ, կոճակներով է կառավարվում:

Ստիպված դիմում եմ Վիտյային.

- Վիտյա, տանկը գործի գցի:

Թե՝

- Ես էս մի տանկով եկել եմ տեղաշորս տանեմ:

- Դե լավ, տեղաշորդ տար, - ասացի:

Նեսոյի եղբորը՝ Աբոյին եմ դիմում.

- Աբո, տար, գոնե անցկացրու, թուրքին չմնա տեխնիկան:

Աբոն էլ մտցնում է ֆերմայի սիլոսի փոսը: Սեյրան Օհանյանը ռացիայով կարգադրում է.

- Ջարդախաչում զասադ մտեք, թուրքի տեխնիկա է գալու, կկանգնեցնեք:

- Պարոն Օհանյան, ավտոմատով ո՞նց կարող ենք տանկ կանգնեցնենք:

- Բա ո՞ւր է քո նռնականետը:

- Չունեմ, ոչ էլ գոնե հակատանկային նռնակ ունեմ:

- Բա ինչ եք անելու:

- Ի՞նչ պետք է անենք, անցնելու ենք գետը:

- Լավ, մի հիսուն հոգի հավաքիր, դիմադրիր:

Բայց «Հայր Վահանի» ջոկատի տղաներին գյուղից դուրս եմ արել, ասել եմ՝ գնացեք, ձեր օգնությունը պետք չէ, քանի որ գյուղում սկսել են թալանով զբաղվել: Հրամանատարը՝ Վլեն, կարգին տղա է, իսկ ջոկատի անդամները նստած տղերք են, մի քիչ օրենք, բան չեն ընդունում: Էլեկտրականության ուղղությամբ անցնում ենք գետը: Ղափանցի Նորիկ կար, ջրից վախենում է, ասացի՝ օգնեք, տեսա Վլադիմիրի մնքենայով Օհանյանը, Կարապետյան Սամվելը՝ Օգանովսկին, գալիս են մեր դիմաց: Սամվելը թե՝

- Հիմա կկրակեմ:

Մարգուշա մորաքրոջ տղային խփում է: Օհանյանը հարցնում է.

-Ի՞նչ ես անելու:

- Տղաների հետ գնում ենք Վաղուհաս, դիրքեր կգրավենք:

Իմ ռադիոհաղորդիչի մարտկոցը նստել է, ես չեմ խոսում, որ լրիվ չնստի, միայն մերթ ընդ մերթ միացնում եմ, որոշ խոսակցություններ որսալու համար: Գրադի Ժորայի ձայնն եմ լսում՝ «Թուրքը կամուրջը վերցրել է, Զափարի տղաներն են, մնացել են այնտեղ, կապ չկա, որ հաղորդեմ դուրս գան, շրջափակման մեջ չմնան»: Ուղղակի տղաներին կարողացել եմ զգուշացնել, որ նահանջեն: Այդ պահին թշնամու տեխնիկան է գալիս: Օհանյանն ու Օգանովսկին մեքենայով շտապ հեռանում են, մենք էլ մտնում ենք անտառը: Տանկը, զրահամեքենաները գալիս են մինչև ասֆալտի գործարանը, ետ վերադառնում: Տղաներից մեկը նռնականետով փորձում է խփել տանկին, չի դիպչում: Անտառով գնում ենք Վերին Հոռաթաղ: Գասպարյան Ժորան այդտեղ էր: Ասում է.

- Գնա Վանք:

- Տղաներին կթողնեմ Քյաթուկում, կգնամ Ստեփանակերտ, ետ գամ:

Այդ ժամանակ ես իմ բոլոր կարևոր հարցերը Սերժ Սարգսյանի հետ էի լուծում: Ջառին Բաղում են գյուղացիք: Ժողովրդին տեղափոխում եմ դեպի Հայաստանի Հանրապետություն: Ջաբուխում տեղակայվել են Պարույր Հայրիկյանի տղաները: Հայրիկյանը, թե՝

- Գյուղացիներին տանում եմ Սոս գյուղը:

- Էստեղ վտանգավոր է,- ասում եմ,- իմ ժողովրդին տանում եմ:

Տեսնեմ Ստեփանակերտից եկան դեկավարներից: Ի վերջո, Ռոբերտ Քոչարյանը թույլ է տալիս, որ գնա ժողովուրդը: Իսկ Ջառին Բաղը օդից ռմբակոծում են, ջոկատի տղաներից հինգ հոգի վիրավորվում են, մեկը զոհվում է: Սեպտեմբերից բանակ է կազմավորվում: Ես բանակ եմ մտնում, հետախուզական վաշտի հրամանատարի տեղակալ են նշանակում ինձ: Ռադիոկապով հաճախ էի լսում թշնամու խոսակցություններ: Կապվում են իրենց գումարտակի հրամանատարի հետ, հարցնում են՝ որտեղ ես, հրամանատարի փոխարեն պատասխանում եմ, սխալ ուղղություն տալիս, սկսում են կրակել այդ գումարտակի ուղղությամբ, սրանք էլ պատասխանում են կրակով, կարծելով, թե հայերն են: Մինչև գլխի են ընկնում, արդեն իրար հասցրել: Դա տեղի էր ունեցել Մաղավուզ գյուղի գլխեզմանոցում: Հետախուզական գնդի հրամանատարը Էդիկ Առաքելյանն էր, վաշտի հրամանատարը՝ Արթուր Ավանեսյանը, իսկ ես տեղակալն էի: Հետո տեխնիկական հետախուզությունն պետն էի: Մարտակերտի մատույցներում Ներքին Հոռաթաղում առաջինը մենք ենք բազայավորվել: Մարտակերտի ազատագրման ժամանակ ամենամեծ աշխատանք կատարել են «Տարզանները»: Մտնում էինք Մարտակերտ, ականապատում: Լինում էր՝ աղվես էր պայթում, լինում էր՝ մարդ էր պայթում: Թարթառի տանկային գումարտակի հրամանատարին, որպես պատիժ, մտցրել էին հետախուզություն Մարտակերտում: Նախկին դեղատան մոտ մեր տեղադրած ականի վրա պայթում է: Դրա մարմինը տեղավորել ենք ավտոտնակի մեջ, իսկ ատրճանակը, վաստաթղթերը վերցրել ենք, հանձնել շտաբին: Հետո Վլադիմիրի ջոկատի տղաները ավելի ճարպիկ դուրս եկան, փոխանակեցին վառելիքի հետ: 1994 թ. հունվարի 4-ին մարտական հանձնարարություն ստացանք, պետք է մտնենք Նափռավանդի, Գյուլիջայի, Շովթանլուի տարածքը, ձախ կողմից պետք է աշխատի «Խարենի» գումարտակի Արթուրը իր վաշտով, աջ կողմից էլ պիտի աշխատեին «Ցորի» գնդի տղաները: Ջրանցքի բերանում մի կտրվածք կա, որտեղ մեր շտապ օգնությունն էր տեղակայված: Մեր վաշտից 24 հոգի այդտեղ ջրանցքն անցել ենք, սեպի նման խրվել թուրքական զորքերի խորքը, որ թիկունքից խփենք, ոչնչացնենք նրանց շտաբը: Մենք յոթ վիրավոր տվեցինք, որոնցից մեկը Կարոն էր՝ աղաբեկալինցեցի Գիրոյի վարորդը: Գիրոն վիրավորվել էր, տարել էին Ամերիկա բուժելու: Չորս հոգի իրար ետևից գնում էինք, Կարոն իմ առջևից էր գնում: Հանկարծ «Վայ մամա» կանչեց ու փռվեց գետնին: Պառկեցի կողքին: Կարոն չորս տեղից վիրավորվել էր, աղիքները թափվել էին: Մեջքից մտել էր, ժիլետը, որի գրպաններում փամփուշտակալն էր, նռնակները, գցեցի ցած, իր ավտոմատը վերցրի, իրեն էլ շալակեցի: Ասում է, ինձ թող, դու գնա, թե չէ քեզ էլ կխփեն:

Մեծ ջրանցքից մտանք փոքր ջրանցքը, որի մեջ մոշի թփեր էին աճել: Արդեն ուժերս սպառվել են: Դուրս եկա, որ հարթ տեղով գնամ: «Տարզան» Էդոն էլ ոտքից վիրավորված գոռացը գցած, գոռում է. մտի ջրանցքը: Ախր ջրանցքն էլ մամռակալած է, ոտքերս պլատում են, բետոնապատ թեքությամբ էլ ծանր մարմինը շալակած քայլել չի լինում: Մոտեցանք շլուզներին: Տեսնում եմ աղիքները նորից դուրս են թափվել, պառկեցնում եմ, լցնում փորի մեջ, բինտով կապում, նորից շալակում: Կյստեղ Կարոն ինչ-որ զգաց, որ ապրելու է, ուժ զգաց իր մեջ, թե՝ «Ցավդ տանեմ, ինձ չթողնես...»: Ոչ ոք չի էլ գալիս օգնելու: Կարոն ստիպեց, որ իրեն Ստեփանակերտ տանեմ: Մի ժամից տարան Երևան: Հիմա ամեն

հունվարի չորսին իր նոր ծնունդն է նշում: Այդ տարածքներում կրակակետերը, շտաբը ոչնչացնելուց հետո ազատագրեցինք հայոց այս հողերը: Հետո Օմարի ղեպքերն էին: Թուրքերը մեծաքանակ զորքերով ու գինտելնիկայով հասել էին մինչև թունելը: «Խալաստոյի», «Տարզան» Վազգենի և Իլիչի գումարտակներն էին, մեր հետախուզական վաշտի հետ հասեցին Սև լիճ: Այդտեղ Ասկերանի գունդն էր Վիտալի Բալասանյանի հրամանատարությամբ, Արշավիր Ղարամյանի գումարտակն էր, հիմնական գործն իրականացրել են Մարտակերտի երկրորդ, երրորդ գումարտակները: Վրանները տեղադրած, վառարանները վառած, սառում ենք: Մինչև գնում ենք ջուր վերցնենք ու վրան հասցնենք, ճանապարհին ջուրը սառչում է: Էնքան մարդկանց ուրքերն ու ականջները սառչեցին: Մեր քեռի Իգորն այդտեղ զոհվեց: Եթե բանակային կանոններ պահպանեինք, Իգորը կենդանի կլիներ: Սաղավարտը եթե գլխին պահեր, գանգոսկորին վնաս չէր լինի: Հոռաթաղից Նապոլեոնը զոհվեց: Երբ Օմարի լեռնանցքը փակեցինք, Մարտակերտի տարածքում Խաչենի գումարտակն ու Մանվելի բրիգադն էին հսկում: Թուրքերը մեծ զոհեր տվեցին: Մենք հիմնականում ռազմասավարով էինք կռվում: Զենք ենք վերցրել, յուղը վրան, չկրակած: Զինամթերքին, զինտեխնիկային չափ ու սահման չկար: Սոված կոտորվում ենք: Միայն ցամաք հաց ունենք: Արկադիայի որդին՝ Արայիկը, ասաց. «Հրամանատար, սպասիր, հիմա մի բան կճարեմ»: Տեսա քիչ անց երկու պահածո ու մի շիշ սպիրտ ձեռքին վրան մտավ: Կես ժամ անց երեք գերի բռնեցինք: Փախած գնում էին: Մինչև 94 թ. մեզ հետ պահեցինք դրանց՝ հետո Աղասարյանի կարգադրությամբ տանեցու: Լենքորանցի գերին խնդրում էր. «Ինձ մի հանձնեք թուրքի ձեռքը, գնդակահարելու են, մեզ խաբել բերել են Խանլար, զենքից խաբար չունեմ, իմ աչքի առաջ Ասադովը ատրճանակը հանեց ու երեք հոգու գնդակահարեց: Ես կռվող չեմ, ես քարտեզի վրա էլ Ղարաբաղի տեղը չեմ կարող ցույց տալ»: Քարվաճառի երկրորդ գործողությունը նրանց վրա շատ թանկ նստեց:

Հովիկ Սարգսյան, բժիշկ- Վրանը Ցեխի ձորում էր: Երկու գոսպիտալ կար ձորում, մեկում Օհանյանն էր գլխավոր բժիշկը, մյուսում Պավլիկն էր, Բունիաթյանը:

Բ.Կ.- *Ես այնտեղ Վալերի Մարությանին էի հանդիպել:*

Հ.Ս.- Մի վիրավոր գերի երեք մետր բոյ ուներ, Իրանի քաղաքացի էր, Ատրպատականից, ծնկից էր վիրավորվել, ուզում էինք վերը ծակել, յուրաքանչյուրից նկան՝ բան պատահի՝ հոսպիտալը կպայթեցնենք: Եկան շուտ ոտքոն: Օհանյանը մեծ գործ կատարեց գոսպիտալում:

Բ.Կ.- *Գյուղից դեպքեր հիշեք:*

Հ.Ս.- Վիտայից պատմեմ, իսկական անունը՝ Վոլոդյա Մարգսյան է: Մարը առանց տանկի վախենում էր պատերազմում, իսկ տանկով անվախ, քաջ զինվոր էր: Մի քիչ որ խմում էր, առաջը պահել չէր լինում: Մնում էր թշնամու խրամատը, տանկովրա անում, ետ գալիս: «Մորուքը» գանգում է, թե Հաթերքից տանկն ուղարկեք գա Սարսանգի պատնեշը: Ճանապարհին Վիտայի տանկի տակ երեք անգամ ական է պայթում, բանի տեղ չի դնում: Ստեփանակերտի ճանապարհին Մեհթիշեկով ցած տնսեմ մի տանկ կողքի ընկած, խրամատի մեջ ընկած, հետո տնում մեր Վիտյան բարին նստած: Ինձ որ տեսավ, ուրախացավ: Ասում եմ՝ ինչ ես անում, թե՝ ոչ մի կերպ դուրս չի գալիս: Տանկն էնքան է տնդամատոյտ արել, Վիտյան էլ՝ խմած: Ասում եմ՝ կարամ «Մոսկվիչովս» բերեմ հանեմ տանկը: Գնացի Բալուջայից հաց, ուտելիք բերեցի: Տեսանք Մերժ Սարգսյանը, գեներալ Գորգեն Դալիբալթայանն ու մի գնդապետ եկան մեր կողմը: Դալիբալթայանը ատրճանակը հանեց, ուզեց Վիտային, որ կրակի: Վիտյան բանի տեղ չի դնում, հանգիստ ուտում է: Սերժ Սարգսյանը մեծահոգի է, ամեն ինչ ճիշտ գնահատող, դիմեց գեներալին, թե՝ «Սպասիր, այ մարդ, կարող է ցանկացել է, որ տանկը փոսն ընկնի, - դիմեց ինձ, - դու ով ես»: Բացատրեցի, որ բժիշկ եմ, տանկիստը մեր գյուղից է, երեք օր սոված է, տանկի կողքը կտրած, ուտելիք եմ բերել, որ սովից չմեռնի: Ասում է՝ հաց չի գտել, բայց օղի գտել է: Ասաց, որ սպասի, ինքը քարշիչ կուղարկի, որ տանկը փոսից հանեն: Գնացել եմ Ստեփանակերտ, գիշերը մնացել այնտեղ, հետո ետ եմ եկել, հաջորդ օրը տեսել տանկը դեռ այնտեղ:

Ա.Ս.- Վիտյան ասում է. «Ինձ մի՛ ասա՝ ավտոմատը վերցրու, մարտի մեջ ենք մտնում, ինձ ասա՝ նստիր տանկը, գնում ենք կռվենք:

Հ.Ս.- Վիտյան մի ինքնաշեն ատրճանակ ուներ, կրակում է թուրքերի ուղղությամբ, ասում է. ոնց որ գնդակը չի գնում, եթե կրակեր, ոչ մի թուրք չէր մնա այնտեղ: Նայեմ, տեսնեմ մի երեսուն ծոմոտած փամփուշտներ թափած գետնին: Ռաֆոյին հիշում ես, «Դերը», դրա հետ երկու գնդացիր ու չորս ավտոմատ տանում եմ հանձնեմ Մարտակերտ: «ՕՒԱԶով» եկանք Ալածանի արխը, տեսանք մի բան դողդոջ, մի փող կրեաց: Մեքենան հրեց, զցեց փոսը: Տեսա տասնմեկ տեխնիկա, մի ռուս

մայոր: Ռաֆոն ասաց. դոխտուր, կասես, որ բժիշկ ես, քեզ բան չեն ասի: Ռաֆոն մի ոտքը վիրավոր էր, մայորը տեսավ, թե՝ թողեք գնա: Շրջվեցին ու գնացին: Ես էլ դողս բռնել էր վախից, չեմ կարողանում մեքենան գործի գցել:

Հ.Գր.- Մի անգամ եմ ահավոր ձևի վախեցել, ուրեմն էն ռուս փոխգնդապետը, որին ինձ որպես «կոմբրիգ» էին ներկայացրել, թե՝ կարող ես ինձ ծանոթացնես Ստեփանակերտի Ժաննայի հետ, ուզում եմ հետը խոսեմ: Ասացի՝ ինչո՞ւ չէ: Սեղան ենք գցել, էս սպան ասում է՝ ես պիտի խմելը շարունակեմ: Իրենք Իմերեթ-Գյարավանդում են տեղակայված: Պետք է Գառնիկը տաներ թուրքի շենը: Հայրը՝ Ժորա դային, ընկել է ոտքերս. «Ես քե մատաղ, բյորփաս դարկել մի գյուլլի բերանը»: Ես եմ նստել ղեկին: Ջրաղացի ձորով պիտի թեքվեմ դեպի Գյարավենդ, ավտոմատի փողը ուղղեց կողքիս, թե՝ «Ո՞ւր ես տանում ինձ, մենք այնտեղ չենք գնում»: Ասում եմ՝ Գյարավենդ ենք գնում: Թե՝ խաբում ես, ինձ ուրիշ տեղ ես տանում: Հարբած մարդ, մտածում եմ՝ վերջս եկել է: Երկու կիլոմետր սարսափի մեջ հասցրի թուրքի շենը: Տեսա դպրոցի շենքը լցված է արկերով: Մայոր Ժենյան՝ էն թաթարը, ինձ տարավ իրենց ԿՊԶ: Երբ փոխգնդապետը խելքի է գալիս, տեսնում է մեքենան բակում, թե՝ «Վովան ո՞ւր է, ուղեկցեք՝ տուն վերադառնա»:

Պատմում է ՆՈՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆԸ (բանաստեղծ, հեռուստալրագրող, 2008 թ. Արցախի հեռուստատեսության տնօրեն), Ստեփանակերտ, 29.10.2005 թ.:

1992 թ. դեկտեմբերի 26-ին էր, թուրքը հասել էր մինչև Զլդրան, Խաչենագետի կամուրջը վտանգի տակ էր, երթևեկություն չկար: «Ժիրոյի բատալիոն» կար, Շուշիում տեղավորված առանձին գումարտակ էր, որը վերահսկում էր Կիչանի, Սրխավենդի բարձունքները: Տղերքի հետ պիտի գնայինք առաջին գիծ նկարահանումների: Մեզ ուղեկցում էին վաշտի հրամանատարը՝ Անդրանիկ Մուրադյանը, և ապարանցի Պավլիկը: Հասնում ենք մինչև Բալուջա՝ այժմ Այգեստան գյուղը, մեքենան փչանում է: Բավական առատ ձյուն էր եկել, նաև քաղցած էինք, մոտ երկու ժամ կանգնել էինք: Հանկարծ դիմացի տան բակում սագեր են հայտնվում: Անդրանիկն ասում է. «Պավլիկ, դու միշտ գլուխ ես գովում, որ լավ կրակող ես, մազը միջից կիսում ես, դու հավատարիմ ես քո ասածին և չես ժխտում, եթե կարողանաս գոնե մեկը խփել, ուրեմն՝ մենք հավատում ենք քեզ»: Սագերը մեզնից 100 մ էին հեռու: Մեր կողքին նաև մի զինվոր կար ավտոմատով, Պավլիկը առանց ժամանակ կորցնելու վերցնում է ավտոմատը ու կրակում: Առաջինը չի դիպչում, բայց երկրորդը, երրորդը, չորրորդը դիպչում են, ու միանգամից 4-5 սագ փռվում են գետնին: Գյուղի մեջ դա բավական տգեղ երևույթ էր: Անդրանիկը 5000 ռ. հանեց, ասաց՝ «Տար, տուր տանտիրոջը, ներողություն խնդրիր»: Նա գնում է, կանչում, բայց մարդ չկար: Մոտ 15 րոպեից մի մարդ, որը գյուղի համայնքի ղեկավարն էր, մեծ հեղինակություն ուներ գյուղում, «Բուշ»

Լին ասում նրան, կնոջ հետ էր.. Հեռվից տեսնում էինք, որ հարձակումը մեզ է, ուղղված, ասացին՝ «Դուք ինչ իրավունքով...մեզ խայտառակեցիք գյուղամիջում, մարդիկ կմտածեն, որ սագերը մեզնից խնդրել եք, չենք տվել, սա խայտառակություն է, դուք պատասխան կտաք...»: Պավլիկը 5000 ռուբլին հանում է, ասում՝ «Ներողություն ենք խնդրում, այս 5000 ռուբլին վերցրեք սագերի փոխարեն, մեզ կներեք»: Նա էլ թե՝ «Այ մարդ, ինձ ես գարմացնում», և հանում է դրամապանակը՝ մեջը լիքը փող, զարմանալի էր, թե ոնց էր փակվում այդ դրամապանակը: Ասում է՝ «Արա ինչ փող, երբ մեզ գյուղում խայտառակել եք»: Պավլիկն ասում է՝ «Փողը չեմ վերցնում», թե՝ չէ: Պավլիկը փողը մանր կտրատում է ու գցում: Խոսում են, Պավլիկն ասում է՝ «Ձեր գյուղից էլ մեզ մոտ ծառայող կա»: Բուշը հարցնում է՝ ով է, Պավլիկն ասում է, նա թե՝ իմ տղան է: Փաթաթվում են իրար, մեզ հրավիրում են տուն: Մենք, բնականաբար, չենք գնում, միայն Պավլիկն է գնում: Պավլիկին տանում են տուն, ասում է՝ «կես ժամով մինչև Շուշիից օգնական մեքենան գա»: Անդրանիկը գնացել էր, որ Շուշիի հետ կապվի, մեքենա ուղարկեն: Անդրանիկը գալիս է, ասում.

Էս էշը ո՞ր ա:

- Պավլիկին տարել են...

Բա էս ինչ փող ա:

- Դե այն 5000 ն է:

- Որ ասում եմ էշ ա, չեք հավատում:

Անդրանիկը փողի կտորները սկսում է հավաքել, դնում է նատարա-նին, ասում է՝ «Ես կտանեմ բանկ, կփոխեմ»: Կես ժամից հայտնվում է Պավլիկը, հեռվից երգելով գալիս էին՝ Բուշը մի թևից բռնած, կինը մյուս թևից, պայուսակներն էլ Պավլիկի ձեռքին: Իրենք քեֆ էին արել, մեզ համար էլ բաժին էին ուղարկել. թթի օղի էր, հավ էր, դազերն էին, ասել էին՝ «Սա էլ կտանեք, տղերքի հետ թեֆ կանեք»: Այդ ժամանակ պաշտպանական շրջանի հրամանատարը Նորիկն էր: Ասել էր՝ դազերը որտեղից եք բերել: Պատմեցինք:

Դիրքերով գնում ենք նկարահանումների: Անդրանիկն ասում է՝ «Գնանք, մի կտոր բան ուտենք»: Բլինդաժի կողքով անցնում էինք, մի տղա էր կանգնած, կարծեմ, ջոկի հրամանատար էր, այն ժամանակ դեռ ուսադիրներ չկային, նոր-նոր հայտնվում էին, ասում է.

- Ո՞ր եք գնում:

Գնում ենք մի կտոր հաց ուտենք:

Դե եկեք մեզ մոտ:

Չէ, գնում ենք...

Ավտոմատը քաշեց մեզ վրա, ասաց.

Արա, եկեք մեզ մոտ հաց կերեք:

Թորքերը արդեն գրոհում էին մեր դիրքերը: Բավական դժվար վիճակ էր, ձմեռ էր, անտառի մեջ տեսանելիությունը շատ վատ էր: Պավլիկը մի ծառ է ընտրում, բարձրանում ծառի վրա: Նա գնդացրորդ էր, 5-6մ բարձրությունից գնդացրի ժապավենը կախում է ու սկսում է աշխատել: Նոր տղերքը պատմում էին, որ երկու բեռնատար է խփել՝ զինվորներով լիքը...Մարտից հետո մեր տղաներից մեկը գալիս, ներքևից նայում է՝ «Արա, էս ինչ բան է, կյանքում ամեն ինչ տեսել էի, բայց իշակապիկ չի տեսել»: Այսինքն՝ նա ապարանցի էր...

Միջանցքի մարտերն էին, միջանցքը ազատագրվելուց հետո թորքերը մի քանի անգամ գրավելու փորձ արեցին: Հոչազ սար կա, կարծեմ սրա սարի վրա էր, ձմեռ էր, ահավոր ձյուն, Պավլիկը նստած սպասում էր՝ շարժվող մի բան կա թե չէ: Հանկարծ սև կետ է երևում, մոտենում է, մոտենում է... Չի համբերում, որ մոտենա, նոր խփի: Այնքան էր մոտենում, որ հնարավորությունը թույլ էր տալիս խփել: Խփում է, ընկնելուց պարզվում է, որ էշի է խփել: Թերթում գրել էին. «Եղբայրասպանը...»:

1992 թ. գնում էինք Էղիլլու նկարահանումների: Ղազարյան Ժորան (Վարլգին) գնացել էր մի օր առաջ, ասացի՝ «Ես ուրիշ մեքենայով կգամ»: Գնացել եմ մինչև Հադրութի ճանապարհի խաչմերուկ, Աղդամը դեռ ազատագրված չէր, սարերով-ձորերով էի գնում: Հասել եմ խաչմերուկ, որ պիտի գնամ Էղիլլու: Երանք, Մանվելը դիրքում էին, կապվել եմ, որ մեքենա ուղարկեն, ուրիշ մեքենա չէր գնում, ցեխ էր, սառ եղանակ, ահավոր վիճակ էր: 4-5 ժամ մեքենայի եմ սպասել: Ինձնից բացի ուրիշ մարդիկ կային, զինվորներ, որ ինչ-որ բաներ պիտի տանեին: Մեքենան պիտի գնար Հադրութ, այնտեղից գար, մեզ վերցներ: Գնում ենք, փոքր մեքենա էր, ոչինչ չէր երևում, միայն զգում էի, որ վտանգավոր ճանապարհ է: Հասել ենք գյուղ, սպիտակ, մաքուր սպորտային կոշիկներով էի (բոթաս), ցեխի կտոր չկար վրան, մաքուր քաղաքացիական հագուստով էի: Մեքենայից իջա ու միանգամից ցեխ էր, շարժվելու տեղ չկար: Զինվորներն էլ էին նկատել իմ վիճակը, ոչ այն է՝ ծիծաղեին, ոչ այն է

ասեին՝ այս ինչ վիճակ է: Մեկը չդիմացավ, թե՝ «Ախպեր ջան, քեզ թվում է, թե այստեղ ամառ է, շոգ է...»: Ասում եմ՝ «Ճիշտն ասած, չգիտեի...»: Մի տղա կար, որը վաշտի հրամանատար էր, հետո՝ գումարտակի, զոհվեց Մատաղիսի ազատագրման մարտերի ժամանակ, անունը Մնիակ էր, հրաշալի տղա էր: Ամբողջ գիշեր խոսում էինք մեր պատմությունից, նա պատմության ուսուցիչ էր, զինվորագրվել էր, եկել էր երկիրը պաշտպանելու: Մոթն ընկավ, գնացինք, մի մեծ տուն կար... Զինվորներից բացի մեզ հետաքրքիր էին նաև գյուղի բնակիչները: Ժորան ասաց՝ «Մի մարդ կա, գնանք նկարենք»: Նա մի օր առաջ էր եկել, արդեն ահագին բան գիտեր: Գնացինք այդ տունը, նկարում էինք այդ մարդուն, ու միանգամից սկսվեց՝ թուրքերը խփում էին: Իմ աչքերով տեսա, թե ինչ է կատարվում գյուղում, բայց այդ մարդու «վեջը չէր», պատշգամբում նստած պատմում է, խոսում, ինձ ասաց.

- Դու հիմա զարմացած ես:

- Մի քիչ:

- Առավոտյան կգաս այս նույն տունը, այդ ժամանակ, երևի, ավելի կզարմանաս:

Առավոտյան ժամը 10-ին գնացի այդ տունը, նկուղային հարկում մոտ 20 երեխա նստած՝ պարապում էին, դա դպրոց էր նաև: Գյուղից ոչ մի երեխա ոչ մի տեղ չէր գնացել, ոչ մեկը գյուղից դուրս չէր եկել, այն դեպքում, երբ ճակատային գծից հեռու գյուղերից մարդիկ գնացել էին, ասենք, ծնողները, երեխաները: Զարմանալի բան էր, դրա համար էլ այդ գյուղը հաղթեց:

Բ.Կ.- *Այդպիսի գյուղերից էին նաև Քարինպակը, Ղզդպան, Խանաբաղը, Մանկասարը...*

Ն.Գ.- Առավոտյան գյուղի միջով քայլում էի ու մտածում, որ հիմա կլափեն, իսկ երեխաները իրենց համար խաղում էին, կանայք ինչ-որ կենցաղային գործեր էին անում, ոչ որ չէր մտածում, որ թուրքերը հիմա կլափեն: Ոգևորող էր նաև այն, որ իրենց կողքին զինվորներ կան:

Պատմում է ԱՐԹՈՒՐ ՀԱԿՈԲՅԱՆԸ, Քարվաճառ 10.10.2005 թ.

Ծնվել եմ 1958 թվականին, Շահումյանի շրջանի Վերիշեն գյուղում: Շարժմանը մասնակցել եմ հենց առաջին օրվանից՝ թե կազմակերպչական աշխատանքներին՝ սկսած ստորագրահավաքից, թե մինչև պատերազմի ավարտը:

Բ.Կ.- *Շահենի հետ ինչ կա ծանոթացել, ինչ է կապը եղել, ինչ կա կապվել շարժման հետ:*

Ա.Հ.- Շահեն Մեղրյանի հետ կապը կոնկրետ սկսվել է՝ հենց շրջան հայտնվել է դժվար իրավիճակում, երբ արդեն բոլոր բաղաքացիական մարդիկ պետք է զարտաղիր զինվորագրվեին: Այդ ժամանակ ես էլ զինվորագրվեցի Շահենի ստեղծած պաշտպանական ջոկատներում: Այն ժամանակ զորամիավորում չէր կարելի ասել ջոկատներ ստեղծելը: Վերիշենի ջոկատի կազմում, որ շրջանի ամենամեծ ջոկատն էր, ես մի փոքրի հրամանատար էի: Ընդհանուր հրամանատարը Արմո Գյուլումյանն էր: Ու այդպես, մեր իմացած ձևով սկսեցինք կազմակերպել պաշտպանությունը:

Բ.Կ.- *Ո՞ր ջոկատի կազմավորմանն եք մասնակցել:*

Ա.Հ.- Սկզբում շրջանի ինքնապաշտպանական ջոկատներն էին: Շահումյանի ամենամեծ գյուղի՝ Վերիշենի ջոկատի փոխհրամանատարն եմ եղել, հրամանատարը Արմո Գյուլումյանն էր:

Բ.Կ.- *Ինչպես եղավ, որ մտածեցիք ջոկատ ստեղծել:*

Ա.Հ.- Երբ հույսներս կտրեցինք ռուսների՝ Խորհրդային Միության զինությունից, ստեղծեցինք ինքնապաշտպանական ջոկատներ՝ Շահեն

Մեղրյանի գլխավորությամբ: Ընդհանուր շրջանում սկսեցին ջոկատներ կազմակերպել: Առաջիններից մեկը Վերիշենի «Գևորգ Չաուշ» ջոկատն էր: Սկզբնական շրջանում զենք-զինամթերք ինքներս էինք հայթայթում: Հետագայում ՀՅԴ-ն էր իր միջոցներով մեզ զենք հայցնում: Աստիճանաբար մեր ապառազինության հարցը կարգավորվեց, և պաշտպանությունը ավելի հեշտացավ՝ կոնկրետ զենքի առումով: Այդ ժամանակ մեր դիրքերը այցելեցին առաջին խորհրդարանի նախագահ Արթուր Մկրտչյանը և Վազգեն Մանուկյանը: Նրանք գոհ մնացին մեր կազմակերպած ինքնապաշտպանությունից: Մեր մեջ զինվորականները քիչ էին, բայց ստիպված էինք օրվա թելադրանքով պաշտպանությունը կազմակերպել, ասենք հակաօդային, հակատանկային և այլն: Մեր ջոկատը հիմնականում պաշտպանում էր Մանաշիր-Բուզլոխի դիրքերից մինչև Էրքեչ: Ջոկատին օգնում էր նաև աշխարհազորը: Մի քանի անգամ ադրբեջանցիների կողմից հարձակումներ եղել են, որ ետ են շպրտվել: Հիմնական մեր պարտությունները, երբ դիրքեր ենք հանձնել, եղել են այն դեպքում, երբ ռուսական բանակն էր թուրքերին օգնում, և առաջ էին անցնում: Մեզանից դիրքեր էին խլում տեխնիկայի, օդուժի միջոցով: Երբ ռուսները դուրս էին գալիս, դիրքերը նորից ետ էինք վերցնում: Այսինքն՝ մեր ուժերը ադրբեջանցիներին պատասխան տալու համար միշտ էլ հերիքել է: Շահումյանի անկումը ոչ թե այն պատճառով էր, որ ինքնապաշտպանական ուժերը ջլատվեցին, այլ միանշանակ կարող եմ ասել, որ քաղաքական հարց էր. մի տարի առաջ էր մեր ղեկավարությունը համաձայնության եկել Շահումյանը հանձնել: Շահեն Մեղրյանի հանմաության շնորհիվ այդ մի տարին երկարաձգվեց մինչև 1992 թ.: Երևի չկարողանային մեր շրջանը գրավել, եթե ժամանակին մեզ օգնական ուժեր, տեխնիկա ուղարկվեր: Նախօրեին, երբ պատրաստվել էինք Գեղտաշենն իր ենթաշրջանով ետ վերցնեինք ազերիներից, ես ծանր վիրավորվեցի, ութ օր առաջ վիրավորվեցի: Դիրքային մարտերի ժամանակ ազերիները մեծ քանակությամբ նավատորմի թնդանոթներ էին բերել: Շրջում էի դիրքերում և տղաներին բացատրում, թե դրանք ինչ են իրենցից ներկայացնում, որ մյուս թնդանոթների նման դրանից հնարավոր չէ պաշտպանվել: Դրանք առանց ակոսների փողով թնդանոթներ են, արկը ուղիղ է գնում, ոչ թե մյուսների նման ֆոռալով, այսինքն՝ արձակելուց մի վայրկյան հետո այստեղ իջնում էր: Իսկ մյուս թնդանոթները որ վա-

ռում էին, բոցը երևում էր, հասցնում էինք պաշտպանվել, մտնել թաքստոցները: Բոլոր դիրքերում շրջելուց հետո վերադառնալիս՝ այն նույն արկը, որի մասին ես բացատրում էի, կպավ ինձ: Զախ երիկամս հեռացրին, երկու ամիս հետո Մեղրյանի հրամանով ես նորից վերադարձա դիրքեր, նույնիսկ այդ վիճակով: Ջոկատի դրությունը այնքան էր վատացել, որ սկսվել էին պարտիզանական կռիվները: Սկսել եմ Հաթերքի վերևի անտառներից: Այդ ժամանակ արդեն տարածքը լրիվ ադրբեջանցիների հսկողության տակ էր, հասել էին մինչև Խաչենագետի սահմանը:

Բ.Կ.- *Պարտիզանական օպերացիաներից ինչ եք հիշում:*

Ա.Հ.- Մի դեպք, որին ես չեմ մասնակցել, կարող եմ մեր հրամանատարի պատմածով ներկայացնել: Նա զինվորական կրթություն ունեցող սովետական բանակի սպա էր՝ Զալյան Սերգեյը: Շահեն Մեղրյանից հետո նա էր հրամանատարը: «Մեծ ոռս» անունով օպերացիա էր կազմակերպել: Այդ ընթացքում ադրբեջանցիները 300-ից ավելի զոհ են տվել, ահագին տեխնիկա ենք գրավել պարտիզանական շրջափակման մեջ գտնվելու ժամանակ: Այսինքն՝ եկել բերքահավաք էին անում Գյուլիստանի տարածքում, որտեղ կարտոֆիլի լիքը դաշտեր կային, բերքը՝ դրանված, պատրաստ հավաքելու համար: Մարդիկ չէին հասցրել հավաքել, տեղահանվել էին: 16 մեքենա, այնպես էին կազմակերպել, ոնց որ սրա են անում ռուսի բոլոր օրենքներով, կազմակերպված փակել էին դեպի Խարխափուտ իջնող ճանապարհը և երեք կետերում սկսել ոչնչացնել փախչող զանգվածին: Ահագին թուրք էին կոտորել: Ամբողջ բերքը տեղում մնաց: Վալերան, որպեսզի զենքը չվնասի, թուրքի հետ կռիվ էր բռնել: Մոտիկ տարածությունից կարող էր խփել և սպանել թուրքին, բայց վախեցել է զենքին կպնի, փչացնի: Մի աժդահա թուրք է եղել, ինքը նրա բոյի կեսն էր: Թուրքը Վալերային բռնել, դրել է տակը, որ խեղդի: Տղաներից մեկը վազել է, որ թուրքին խփի: Զեռքը հաշմանդամ է, թուրքը խփել է, երեք մատը կծել է: Հետո հրամանատարը՝ Արմոն է վազում թուրքին կրակում, սպանում, թե չէ երկուսին էլ դրել էր տակը, խեղդում էր:

Իմ մասնակցությամբ Սարսանգի ճանապարհին կատարված օպերացիան էր: Այդ ժամանակ պաշտպանության նախարարը Վազգեն Մանուկյանն էր: Մեր զորամասին հրաման էր տրված՝ ցանկացած գնով ճանապարհը փակել, սպասենք մինչև Ղարաբաղի թեը առաջանա, այդ

հատվածը մաքրենք: Քելբաջարում դեռ թուրքական զորքը կար, անցման միակ ճանապարհը Սարսանգի ճանապարհն էր: Պայմանավորված ժամկետում երեք օր ճանապարհը փակել ենք, չենք թողել, որ զենք-զինամթերք հասնի, ասենք, Քելբաջար և Մարտակերտի ճակատ: Ցավոք սրտի, Մարտակերտի ճակատը այդ ժամանակ այդպես էլ չառաջացավ, բայց հասցրինք մեծ վնասներ պատճառել թուրքերին, ահագին տեխնիկա ոչնչացրինք՝ 16-17 միավոր մարտական տեխնիկա և փոխադրամիջոց, ահագին թվով զինվորների, իրենց գոված «Գորշ գայլեր» գումարտակը համարյա ամբողջությամբ ոչնչացրինք: Որոշել էինք զենք-զինամթերքով, զինվորներով բեռնված մեքենան առհասարակ թույլ չտանք անցնել: Ճանապարհը ականապատում էինք: Եղել է դեպք, այդ տղաներից մեկը հիմա ողջ է, մյուսը մահացել է, մեր ջոկատի բժիշկն էր՝ Վահեն, Վանիկը, որը մեր երկրացին էր, բայց Աբուլյանում էր ապրում, եկել, մեր ջոկատին էր միացել: Երկուսով իջնում են ճանապարհ՝ ուսումնասիրելու: Այդ ժամանակ խմբերով էին գործում: Մի խումբը մտնում էր, գործ անում, հետո տեղերը փոխում էինք, ուրիշ շրջադարձի վրա սկսում գործ անել, մենք քիչ քանակությամբ էինք: Նրանք իջնում են, ես՝ վերևում սպասում: Ռացիայով կապը պահպանում էինք: Ներքևից հաղորդում են, որ ես մի շարասյուն է գալիս: Ասում եմ՝ «Տեսնում եմ, երեք մեքենա է, չթաշվեք, ականները դրեք, մի շտապեք, մինչև նրանք այդ թեքությունը անցնեն, մենք կհասցնենք»: Ասում են՝ «Չենք հասցնում, ձայնը մոտ է»: Ասում եմ՝ «Ես տեսնում եմ, մի շտապեք, հակատանկային ականը դրեք, նոր դուրս եկեք»: Ուզում են ականը դնել ասում են՝ չի բանդվում: Ասում եմ՝ «Փոսերի մեջ դրեք, վրան մի քիչ հող լցրեք»: Հիմա էլ ասում են, թե հող չկա, ձմեռ էր: Զինվորական սպիտակ ներքնաշորեր կային: Ասացի՝ դրանցից մեկը գլոլի մեջ թրջեք, դրեք վրան: Շորը ցեխոտում, գցում են: Առաջին մեքենան՝ բարձած զինամթերքով, գալիս, ականի վրա պայթում է: Հաջորդ մեքենան տղաներն են խփում: Երրորդ մեքենային էլ մենք ենք վերևից իջնում, խփում:

Այդ ժամանակ մենք գերի չէինք վերցնում, որպեսզի դրանով մեր տեղը ցույց չտայինք: Մեկն էլ մեղքս եկավ: Մեքենան նույն ձևով ճանապարհին պայթեցրինք: Կաբինի աջ դուռը բացվեց, մոտ 30 մ օդ բարձրացավ, ալիքը վարորդին բացված դռնով դուրս շպրտեց, ողջ մնաց առանց մի քերծվածքի: Բռնեցինք: Տղաներին չթողեցի սպանեն նրան:

Մեռոսում բազա ունեինք, անհրաժեշտ էր յուղ, բենզին տեղափոխել, որպեսզի էլեկտրաշարժիչները աշխատեցնեինք: Բարձել ենք այդ թուրքի վրա, տեղ հասցրել: Դրանից հետո էլ թույլ չտվի, որ սպանեն: Կանները ձյունից մաքրում էր, փայտ էր ջարդում, կապած պահում էինք: Սարը մահացել էր, չկարողացա թաղմանը մասնակցել, քանի որ միայն ռադիոթիոներով էր հնարավոր տեղափոխվել մի վայրից մյուսը: Հորս «բուսատունքին» եմ գնացել, թուրքին հետս վերցրի, հանձնեցի ռազմական ոստիկանությանը: Այդ թուրքը հետագայում հեռուստատեսությամբ նույնը է, ունեցել, ասել՝ «հայերը ձեր ասած վայրենիները չեն, չգիտեմ, թե որ զորամասում եմ եղել, բայց ինձ նորմալ, մարդավարի պահել են»: Մեզ հոգնոց մի ընտանիք էինք գերի վերցրել, ռադիոթիոով բերել Երևան: Ընտանիքի հայրն էր, երկու տղաները, փեսան, վարորդը, մյուսը ինչ-որ բարեկամ էր: Նրան ճանաչեցինք. Շահումյանում հարևան գյուղի կոլխոզի նախագահն էր:

Բ.Կ.- *Առաջինը ինչ գործողություն, ինչ դեպք է պատահել:*

Ա.Հ.- Առաջինը 1990 թվականի, եթե չեմ սխալվում, հունվարի 12-ին էր, որ թուրքերի ՕՄՕՆ-ականները տարածքի լայնամասշտաբ հարձակում գործեցին Մանաշիդ գյուղի ուղղությամբ: Կոնկրետ այդ մարտին ես մասնակցել եմ:

Բ.Կ.- *Ավելի մանրամասն, այդ մարտից ինչ եք հիշում, ինչ նրավ:*

Ա.Հ.- Դրևմն, մենք, գիշերը պաշտպանական դիրքերում գտնվելուց հետո, առավոտյան տղաների մոտ սիգարետը վերջացել էր: Ես այդ ժամանակ Շահումյանի «ՈՄ-165»-ի շինարարական կազմակերպությունում էի աշխատում: Ու մեր կազմակերպության «ԳԱԶ-66» մեքենայով մեր աշխարհազորայիններին՝ այսպես կարելի է ասել, տանում էինք մի տեղ: Երկու օր մնում էինք, հետո գալիս էին ուրիշները, մեզ փոխարինում: Ու այդ գիշերը, որ մենք էինք հերթապահում Մանաշիդի տարածքում, առավոտյան շուտ տղաների սիգարետը վերջացել էր: Ես «ԳԱԶ-66»-ով գնացի, որ սիգարետ բերեմ: Մինչև ես կհասնեմ խանութի մոտ, որ սիգարետը բերեմ, իմ ետևից խաբարը եկավ, որ մեր դիրքերին վրա տվին: Նորից ետ եմ դառել առանց այդ սիգարետի, գնացել հասել դիրքերին, տեսել, իսկականից, տղաներին երեք կողմից արդեն շրջապատել են թուրք ՕՄՕՆ-ականները:

Բ.Կ.- *Ի՞նչ հեռավորության վրա էին, ինչով էին կրակում:*

Ա.Հ.- Այդ ժամանակվա համեմատ բոլոր տեսակի ավտոմատներով, գնդացիրներով էին, դիպուկահարի զենքեր ունեին: Իսկ մեզ մոտ տղաների մեծ մասը մահակներով էին, որսորդական հրացաններով:

Բ.Կ.- *Խրամատներ ունեիք, նորմալ փորած էր, խոնդ էր:*

Ա.Հ.- Չէ, այդքան էլ նորմալ չէր, սկզբնական շրջանն էր, տրակտորով մի քիչ հող էին բարձել, խրամատի նման տեղ էր սարքած՝ պաշտպանական դիրքեր: Ու այդ ընթացքում այնքան պահեցինք, որ թուրքերը չմտնեն մեզ շրջապատեն, մինչև Ստեփանակերտից կապիտան Սպիրիդոնովի գլխավորությամբ մի ջոկատ եկավ մեզ օգնության: Կապիտանը մարտի ժամանակ վիրավորվեց ձեռքից, բայց ետ շպրտեցին ՕՄՕՆականներին:

Բ.Կ.- *Խորհրդային բանակի ՕՄՕՆ-ն էր պաշտպանում ձեզ:*

Ա.Հ.- Միլիցիայի ՕՄՕՆ-ը Ադրբեջանի կողմից էր: Իսկ Սպիրիդոնովը Ստեփանակերտում տեղակայված ռուսական Հատուկ նշանակության ջոկատն էր (սպեցնազ): Յոթ թե ութ հոգով՝ իրենց զենքերով, հասան մեզ օգնության: Այդ ժամանակ մենք հասցրել էինք երկու-երեք թուրքերի խփել:

Բ.Կ.- *Ձեզնից զոհեր, վիրավորներ կային:*

Ա.Հ.- Մեզնից երկու վիրավորներ են եղել՝ թեթև վիրավորներ, բայց զոհեր, փառք աստծո, չեն եղել: Հետո ետ շպրտվեց ՕՄՕՆ-ը, ու արդեն այդ օրվանից իսկական պաշտպանություն սկսեցինք կազմակերպել: Մինչ այդ իմիջիայլոց էր, չէին սպասում, որ թուրքը այդպիսի մասշտաբային զրոհ կձեռնարկի, կհարձակվի, կսպանի, կկողոպտի: Ու այդ օրվանից արդեն մեզ համար հասկանալի եղան նրանց մտադրությունները: Սկսեցինք ավելի ամուր կառույցներ ստեղծել: Իհարկե, Շահեն Մեղրյանի գլխավորությամբ ամեն մի հրամանատարի առանձին հրահանգներ էին տրվում: Էլի ոչ զինվորական ձևով, բայց բոլոր պաշտպանական միջոցները ձեռնարկում էինք՝ թե խրամատներ, թե բլինդաժներ էինք կառուցում, որպեսզի կարողանանք պաշտպանել դիրքերը:

Բ.Կ.- *Հետո, պաշտպանության, ձևը գործունեության հաջորդ էտապը...*

Ա.Հ.- Հաճախ էին լինում այնպիսի դեպքեր, որ թուրքերը հարձակվում էին, աշխատում անցնել դիրքերը, ինչ-որ տարածքներ գրավել, մեզ այդտեղից հեռացնել: Ոչ թե գլուխ գովելու համար, այլ կարող եմ ասել, որ շատ ժամանակ, երբ ռուսները չեն մասնակցել թուրքերի հետ, այդ

դեպքում թուրքերը միշտ պարտություն են կրել: Եթե եղել էլ են դեպքեր, որ նրանք հաջողության են հասել ռուսների հետ մեկտեղ, թուրքերին թողել են գրաված դիրքերում, ռուսները հենց ետ են գնացել, մենք նորից ետ տարածքը ետ ենք գրավել: Այսինքն՝ ոչ մի դեպքում թուրքերը չեն կարողացել մեզ տեղից հանել, հեռացնել: Ու բազմաթիվ այդպիսի դեպքեր են եղել. թե Մանաշիդի, թե Բուզլուխի, թե Էրքեջի վրա հարձակումներ են եղել:

Բ.Կ.- *Ձեր գյուղը մեծ էր: Ձեզ մոտ ներքին փոխհարաձայնություն կամ, իրար հետ հաշվի էիք, թե երբեմն գարաձայնություններ էին լինում: Սովորաբար լինում է, երբ հայացքների բախումներ են լինում, ունց էր ձեզ մոտ:*

Ա.Հ.- Սկզբնական շրջանում այո, կար: Զինվորականները ավելի ուշ են պատկերացում կազմել, որ իսկականից նորից հայ-թուրքական կռիվ է սկսվել: Պատկերացում չունեին և չէին ուզում իրենց դիրքերից ինչ-որ ձևով տեղաշարժվեին: Ամեն քայլափոխի մեզ՝ պաշտպանությունը կազմակերպող տղաներին, գյուղխորհրդի նախագահը, շրջկոմի քարտուղարը, չինովնիկները միշտ խոչընդոտում էին:

Բ.Կ.- *Այսինքն՝ նրանք գվրյալ դեպքում կորցնում են իրենց դիրքերը, այդպիսի իմաստ կար:*

Ա.Հ.- Այո, սկզբնական շրջանում նրանք չէին պատկերացնում, որ սա արդեն վերջն է, ու թուրքերի հետ էլ չպիտի առնչվեին: Նրանք հույսեր էին փայփայում, որ էլի կճշտվի, էլի կոգվի, ու մենք նորից կմնանք թուրքերի տիրապետության տակ:

Բ.Կ.- *Այդ չինովնիկները նրանց կողմից են ստացել այդ պաշտոնները, բոլոր դեպքերում նրանց ձեռք էր գալիս այդ սիստեմում մնալ:*

Ա.Հ.- Բայց վերջում, երբ շրջանի ղեկավարությանը գերի տարան...

Բ.Կ.- *Ո՞նց եղավ, պեղյմկ եք, պիտի գնային Գետաշեն:*

Ա.Հ.- Պիտի գնային Գետաշեն, ընդհանուր շրջանի ղեկավարությունը կազմակերպված ձևով թաղմանը պիտի մասնակցեր: Թակարդ էին սարքել, շրջանի ընդհանուր ղեկավարությանը վերցրին պատանդ:

Բ.Կ.- *Այսինքն՝ նրանք գիտեին, որ գալու են:*

Ա.Հ.- Նրանք նախօրոք գիտեին, որ պիտի գան: Դե, այն ժամանակ լուր տվողներ շատ կային:

Բ.Կ.- *Ովքե՞ր էին, ով կար:*

Ա.Հ.- Հենց մեր հայերից շատ կային: Ու ճանապարհին թակարդը

սարքել էին և մեր տղաներին վերցրել: Մինչև անգամ կար այսպիսի հնարավորություն, որ մենք խանգարեինք, խոչընդոտեինք, թողնեինք, որ տղաներին տանեն: Նորից այս նույն ուժերին խոչընդոտեցին, որպեսզի մենք նրանց չխանգարենք:

Բ.Կ.- *Ո՞վ:*

Ա.Հ.- Հենց մեր կողմից, մեր ղեկավարության կողմից: Այդ ժամանակ այն վիճակը չէր, որ մենք չենթարկվեինք նրանց: Եթե չենթարկվեինք, ավելի վատ կլիներ:

Բ.Կ.- *Կոնկրետ ինչ գիտես:*

Ա.Հ.- Կոնկրետ անձը առաջադրանք է ստացել ու կատարել: Թե կոնկրետ որտեղից է այդ առաջադրանքը ստացել, դա արդեն ես չեմ կարող ասել, Հովասափյանը ավելի կոնկրետ կասի ու ճիշտ կլինի: Մենք հնարավորություն ունեինք կամրջի մոտ դեմները փակեինք, որ տղաներին չտանեին: Մեզ չթողեցին, որ մենք առաջանանք, փակենք, ես ներկա եմ եղել: Դրանից հետո արդեն մեր ղեկավար անձնակազմը մի քայլ ետ նահանջեց ու շատ տեղերում մեզ տեղ տվին, որպեսզի մենք էլ որոշումներ կայացնենք, այսինքն՝ ինքնապաշտպանության կազմակերպիչներին:

Բ.Կ.- *Ինչպես է եղել Շահումյանի թողնելը: Ո՞նց եք զգացել, ինչ եք դեսել, ինչ եղավ:*

Ա.Հ.- Նախ ասեմ, որ Շահումյանի անկման ժամանակ ես ներկա չեմ եղել, վիրավոր՝ հոսպիտալում պառկած եմ եղել: Ծանր վիրավորվել էի, ինձ տեղափոխել էին Երևան: Նախքան վիրավորվելս հակառակն էր: Ոչ թե մենք ինչ-որ տարածք պիտի տայինք, ինչ-որ շրջան պիտի հանձնվեր, այլ՝ ընդհակառակը, մենք պետք է Գետաշեն, Մարտունաշեն ընդհանուր տարածքները ազատագրեինք: Եվ առաջին հետախուզական ջոկատը, որ Գետաշեն, Մարտունաշեն ենք անցել, իմ ջոկատով եմ ես անցել, գնացել, տեղերը, ամեն ինչը ճշտել, որ իբր մենք պիտի հարձակվեինք: Հետաձգվեց, հետաձգվեց, խանգարվեց:

Բ.Կ.- *Ինչո՞ւ հետաձգվեց:*

Ա.Հ.- Նորից եմ ասում, պարոն Հովասափյանը ձեզ ավելի կոնկրետ տեղեկություններ կտա այս առումով, ես շարքային հրամանատար եմ եղել:

Բ.Կ.- *Շրջանի մասշտաբով պիտի որոշվեր, թե երբ հարձակվեք, թե դրսից ուրիշ ուժ կար:*

Ա.Հ.- Շրջանի մասշտաբով պիտի որոշվեր, բայց հենց շրջանում կատարվում էին այդ գործընթացը, թե պիտի սպասենք ինչ-որ տեղեկությունների և այլն: Ու այդպես էլ մինչև իմ վիրավորվելը չեղավ մեր հարձակվելու գործողությունը:

Բ.Կ.- *Այսինքն՝ ձեր հրամանատարությունը, շտաբը՝ Շահենը, Զապանը, նրանք այդպես մեղք ունեին, որ ձգվում էր:*

Ա.Հ.- Իհարկե՝ ոչ: Մենք կազմ ու պատրաստ սպասում էինք:

Բ.Կ.- *Ինչին էիք սպասում, Երևանից հրահանգի:*

Ա.Հ.- Երևի Երևանից: Ես կոնկրետ չեմ կարող ասել՝ ում էինք սպասում, ով պիտի այդ հրահանգը տար: Բայց մենք պատրաստ էինք, բոլոր ջոկատները՝ «Համար 1» վիճակում, որ ետ վերցնեինք թողած հողակտորները:

Բ.Կ.- *Ու դա կանխվեց ադրբեջանական, ռուսական բանակի ընդհանուր հարձակումով:*

Ա.Հ.- Մինչև հունիսի 12-13-ը կասեցվեց: Ու բանից պարզվեց, որ այդքան ժամանակ, որ կասեցվում էր, նրանք այդտեղից պատրաստվում էին, որ ռուսական զորքերը բերեին, տեխնիկա, ավիացիա և այլն, որ այդպիսի մեծ մասշտաբի հարձակում սկսեին: Ես, լսելով մեր ընկերների պատմածից, գիտեմ, որ միանգամից հինգ կողմից շրջան են մտել տեխնիկաները:

Բ.Կ.- *Դուք ուժ ունեիք, քո տեսանկյունից՝ կարող էիք դիմադրել նման հարձակմանը, թե չէ:*

Ա.Հ.- Սկզբնական շրջանում մենք պատրաստ չէինք այդպիսի հուժկու հարվածի, մեր ուժերը պատրաստ չէին: Ովքեր տեսել են, ովքեր տեղեկություն ունեն, ասում են, որ մոտ 130 տեխնիկա է միանգամից մտել շրջանի տարածք: 130 տեխնիկայի դեմը փակելը անիմաստ բան էր: Կարելի էր հետագայում թե պարտիզանական գործողություններով, թե բերված տեխնիկայով նրանց հետ հաշվեհարդար տեսնել տեղում: Բայց որ դիրքերի ետևում ծերեր ու մանուկներ էին, ժողովուրդը միանգամից ընկել է խուճապի մեջ: Ու խուճապը հաղորդվել է դիրքերին: Չէ՞ որ դիրքերում կանգնածների հարազատները, երեխաներն են մնացել այդ տանկերի առաջ: Ու ստիպված բոլորը ետ են քաշվել: Օրինակ, մեր Վերիշենի ջոկատը՝ Արմո Գյուլումյանի գլխավորությամբ, հունիսի 14-ի առավոտյան են դուրս եկել: Այսինքն՝ տեխնիկան անցել է թե Բուզլուխի,

թե Էրքեջի կողմով, թե Կարաչինարով և այլն, մեր տղաները մնացել են դիրքերում: Որից հետո գյուղից մի ձիավոր են ուղարկել Մանաշիդով, տղաներին ասել, որ ետ քաշվեն, էլ բան չկա պահելու: Այդպես է եղել:

Բ.Կ.- *Դուք դաշնակցական՝ն եք եղել, թե՞ չէ:*

Ա.Հ.- Ես անկուսակցական եմ եղել ու հիմա էլ անկուսակցական եմ:

Բ.Կ.- *Ո՞նց ես պեսնում այդ խնդիրը. կուսակցական լինելը խանգարում էր ընդհանուր պաշտպանության կազմակերպմանը: Սրեփանակերտում ուրիշ կողմնորոշում ունեին, ձեզ մոտ կուսակցական կողմնորոշում էր: Գաղափարախոսության մասին չեմ խոսում, այլ՝ մարդկանց, անձերի հարաբերությունների: Դա խանգարո՞ւմ էր պաշտպանության կազմակերպմանը:*

Ա.Հ.- Ընդհանուր գործին, քանի որ մեր երկրի ղեկավարները առհասարակ Դաշնակցություն կուսակցության չընդունողներն էին, իհարկե, խանգարում էր: Բայց հենց առաջին օրվանից մեր Շահումյանի շրջանում պաշտպանության կոնկրետ կազմակերպիչները դաշնակցականներն են եղել: Ջենք-զինամթերք, շոր, սննդամթերք և այլն, այդ ամեն ինչը նրանք են հասցրել մեզ շրջանում պաշտպանություն կազմակերպելու համար: Ու ես միշտ էլ այդ մարդկանց ընդունել եմ, կուսակցությանը ընդունել եմ՝ անկուսակցական լինելով հանդերձ: Ընդունել եմ, մինչև հիմա էլ ընդունում եմ:

Բ.Կ.- *Այսինքն՝ համակրո՞ւմ եք:*

Ա.Հ.- Այո, համակրում եմ: Ճիշտ է, շատ եմ տուժել նրա համար, որ համակրում եմ, բայց ես իմ կարծիքը փոխելու մտադրություն առհասարակ չունեմ: Էլի այդ մարդկանց ընդունում եմ:

Բ.Կ.- *Բայց այդ հակասությունները, հակամարտություն չասեմ, խանգարեցին պաշտպանության ավելի ռացիոնալ, ավելի լավ կազմակերպելուն, հա, թե՞ չէ:*

Ա.Հ.- Երևի: Ես այդ մանրամասները չեմ կարող ասել: Նախ՝ պատասխանատվության հարցեր կան, իմ իմացածը այն դոզման չէ: Շատ հնարավոր է՝ ես սխալվեմ, դրա համար ես չեմ կարող ասել: Բայց որ այդ կուսակցությունը մեր շրջանի պաշտպանության գործում մեծ դեր ունեցավ, դա անջնջելի փաստ է:

Բ.Կ.- *Իսկ գուցե ժամանակավոր նահանջ լիներ կուսակցական դիրքերից, ընդհանուր կազմակերպվեր: Գուցե դա կարող էր փրկել: Երևի կուսակցական կողմնորոշումը խանգարում էր:*

Ա.Հ.- Ճիշտ է, կուսակցականությունը խանգարում էր, տվյալ դեպքում՝ ոչ դաշնակցական կուսակցությունը, ուրիշ կուսակցություններն էլ խանգարում:

Բ.Կ.- Երևանում, Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը ՀՀԾ-ն էր, Ստեփանակերտում էլ արդեն նման կողմնորոշում կար, ձեզ մոտ՝ հիմնականում դաշնակցական: Դա հակասություն չէ՞ առաջացնում ինչ-որ տեղ:

Ա.Հ.- Իհարկե: Մեզ մոտ էլ կային ՀՀԾ-ից ուղարկված զինապմբեր: Նրանք շրջանում ոչ թե պաշտպանությամբ էին զբաղված, այլ՝ ուրիշ հարցերով, այլ գործերով: Օրինակ, Հատուկ գունդը մասնակցում էր շրջանի պաշտպանությանը: Ամենաքիչը երկու հարյուր մարդ ուներ այնտեղ: Երկու հարյուր հոգով ընդամենը երեք դիրք էին պահում: Այսինքն՝ այդ երկու հարյուր հոգին առնվազն 15-20 կիլոմետր տարածք պիտի պաշտպանեին: Ռեզևրվի նման նստած էին Խարխափուտում: Այդ երեք դիրքերն էին պաշտպանվում նրանց կողմից, մնացածը՝ Հայաստանի տարբեր տեղերից եկած ջոկատները:

Բ.Կ.- *Նրանք դիրքերը պահելուց բացի ուրիշ գործունեություն ունե՞ին:*

Ա.Հ.- Տարբեր խմբեր կային, մեկը խալի էր հավաքում, մյուսը՝ մեղր, մեկ ուրիշը ուրիշ բանով էր զբաղվում:

Բ.Կ.- *Խալին առնո՞ւմ էին:*

Ա.Հ.- Հա, ինչին գներով առնում էին: Ուղղաթիռը, որ հիմնական տրանսպորտն էր, միայն նրանք էին կարողանում օգտվել: Այդ ունեցվածքը բարձրում էին, բերում այստեղ: Ինձ թվում է նրանք ավելի շատ վնաս են պատճառել, քան օգուտ, իմ կարծիքով:

Բ.Կ.- *Նրանք շո՞ւտ թողեցին գնացին, հեռացան Շահումյանից, մինչև այդ դեպքերը:*

Ա.Հ.- Չէ, մինչև վերջ էլ մնացել են: Նրանք հենց Կարաչինարի ժողովրդի հետ դուրս են եկել անտառները, լեռները: Շատ դեպքերում, կարելի է ասել, ժողովրդից առաջ են դուրս եկել: Այդ օրվա ցերեկվա թեժ մարտից հետո, օրը կոնկրետ չեմ հիշում, Մանաշիդի դիրքերում էինք, դպրոցի դիմաց էր մեր բազան, շրջանից լուր ստացանք, որ թուրքերը լրացուցիչ 2619 հրանոթներ են բերել: Մյուս հրանոթներից կարողանում

էինք պաշտպանվել: Կայծր տեսնում էինք, 7-8 վայրկյան էր տևում մինչև արկը հասնում էր մեզ, հասցնում էինք պահվել, թաքնվել:

Բ.Կ.- *Սա շատ հեռվից էր կրակում:*

Ա.Հ.- Նույն տարածքից կրակում էր, բայց մի վայրկյանում արկը հասնում էր տեղ: Ու ես, դիրքերում տեղյակ պահելով, իջնում եմ: Տղաներին բացատրում էի, որ սա ուրիշ է, նավատորմի հրանոթ է, եթե ակոսավորի (նարեզնոյի) արկը մի քիչ ուշ է հասնում, սա շուտ է հասնում, զգույշ լինեն, պաշտպանված լինեն: Բոլոր դիրքերում բացատրելով՝ մինչև վերջ հասել եմ: Ետ դառնալիս կածանի վրա առաջին արկի բեկորը ինձ և կպել:

Բ.Կ.- *Չհասցրիք պառկել, ձեզ գետնին գցել:*

Ա.Հ.- Չէ, օդում պայթեց: Բոլորին բացատրելով եկա, եկա՝ ես ընկա այդ արկով: Երկու ամիս ավել պառկեցի հոսպիտալում:

Բ.Կ.- *Իսկ պարտիզանական շարժմանը մասնակցեցիք:*

Ա.Հ.- Այո, այդ ժամանակներում Մեղրյան Շահենը կանչեց ինձ, որ «Արդեն պարտադիր դու պետք ես այնտեղ, եթե մինչև հիմա գիտեիք, որ հնարավորություն չկա քեզ ուղարկելու՝ չես կարող, հիմա էլ ճար չունենք, պիտի գնաս»: Ես գնացի, իմ հրամանատարին՝ Գյուլումյանին, փոխարինեցի: Տղաները հյուծվել էին, հոգնել էին: Արդեն երկու ամիս ոչ մի բան չկար ուտելու, ուտելիք չկար:

Բ.Կ.- *Գնացիք որտեղ տեղակայվեցիք:*

Ա.Հ.- Արտատափ՝ Քաչալ սարի կողքին էր:

Բ.Կ.- *Որտեղ բազայավորված էիք:*

Ա.Հ.- Այո:

Բ.Կ.- *Ի՞նչ գործողությունների մասնակցեցիք, ո՞նց կազմակերպեցիք:*

Ա.Հ.- Սկզբում, երբ ՊՆ նախարարը Վազգեն Մանուկյանն էր, այսպիսի հրաման էին իջեցրել, որ մենք՝ մեր ջոկատով, Մարտակերտի ֆրոնտը սնող ճանապարհը, որը Սարսանգի վրայով էր անցնում, փակենք: Սկզբում մի անմիտ հրահանգ էին տվել, որ Սարսանգի ջրամբարը պայթեցնենք: Տեղում ուսումնասիրելուց հետո ես՝ որպես շինարար, Մեղրյանին բացատրեցի, որ անհնարին է այս ջրամբարը պայթեցնել, հասարակ հող չէ լցրած, որ մի տեղից շարժես, ջուրը մտնի, քանդի, քշի տանի: Այդ ժամանակ էլ ջրամբարը բերներերան լցված էր: Հաշվարկներ էին անում, որ ջրամբարի դեմը բացեն, թուրքերին քշի տանի, այսպիսի անմիտ բաներ: Հետագայում եկանք ընդհանուր եզրակացության, որ ոչ թե ջրամբարը պիտի պայթեցնենք, այլ ուղղակի հենց ճանապարհի պիտի տարբեր տեղերում փակենք ու ահարեկենք, այդ ճանապարհը չօգտագործվի նրանց կողմից: Ու այդ օրվանից սկսեցինք այդ ձևի գործողությունները: Առաջին օրը վեց մեքենաներ պայթեցրինք: Կարող եմ պատմել, թե առաջին օրը ոնց եղավ: Ցերեկը ճանապարհի վերևից իջնող մեքենաներին ձեռք չէինք տալիս, որպեսզի ներքևներում խուճապ չլինեն, տեղյակ չպահեն: Բարձած մեքենաներին էինք խփում: Այսինքն՝ վերևից իջնող մեքենաներին բաց էինք թողնում, ներքևից եկողներին խփում էինք: Կիրովաբադից գալիս էին, Մարտակերտով անցնում, այդ ընդհանուր զոնան ապահովում զինամթերքով, սննդով: Ցերեկը չորս մեքենա էինք խփել, մի վարորդի գերի էինք վերցրել: Արդեն մութ գիշեր էր, ճանապարհից դուրս ենք եկել, տեսնում ենք երկու բեռնատար մեքենաներ, երևում էր՝ ծանր բարձած, գալիս են: Նորից մի խումբ տղաներ իջնում են: Ես այդ ժամանակ բարձունքում նստած էի: Տղաների մոտ էլ ռացիա կար, ինձ մոտ էլ: Իմ տեղը ավելի բարձր էր ու լավ երևում էր: Տղաներին ասում եմ. «Գալիս է, մոտենում է ձեզ, մի տեղ ճարեք, այդ ականը տեղադրեք»: Տղաները փնտրում են, այդ ճանապարհը քարոտ տեղ էր, մի տեղ չեն գտնում: «Արա,- ասում եմ,- մի փոս գտեք, մի բան»: Վերջը, մի կերպ տղաները այդ ականը տեղադրում են, փոխանակ հող լցնեն այդ ականի վրա, շոր են գցում:

Բ.Կ.- *Ո՞վ է անում, ո՞ւմ գաղափարն էր դա:*

Ա.Հ.- Մեկը մեր ջոկատի բժիշկն էր՝ Բաղդասարյան Վահեն, որը զոհվել է: Մեկն էլ մեր աբովյանցի Ազանյան Վանիկն էր: Նա ծնունդով կիրովաբադցի էր, բայց Աբովյանում էր ապրում: Վերջը, այդ ականը տեղադրում են: Իրենց հագին եղած սպիտակ ներքնաշորը հանում են, գնչաջրի մեջ թաթախում, գցում ականի վրա, ճանապարհից դուրս գալիս: Կանչում եմ. «Մի վռազեք, դեռ ձեզ չի հասնում, հանգիստ դուրս եկեք»: Դուրս են գալիս, առաջին մեքենան գալիս է, ականի վրա պայթում: Ետևից եկող մեքենային էլ արդեն տղաներն են խփում: Այդ մեքենաների մեծ մասը տարել են, բայց էլի կան թափված մասեր ճանապարհին: Այդպիսի դեպքեր են եղել: Այդ օրը երեք մեքենաներ ականի վրա պայթեցրինք, չորրորդին ավտոմատավորները դուրս եկան, խփեցին: Ու ինչքան մեքենաներ կային, վառեցինք: Այն ժամանակ այդպես էր. մենք հնարավորություն չունեինք այդ մեքենաներից օգտվելու, միայն բենզի-

նը, յուղը վերցնում էինք ու վառում: Այդ ճանապարհին, փաստորեն, հետագայում, մոտավոր հաշվարկներով, թուրքերի 400-ից ավել մեքենա ու տեխնիկա են ոչնչացվել: Մի նոր տանկ, որ վախեցրել ենք, ընկել է ձորը, տանկիստը միջից փախել է: Հետագայում հանեցինք, հանձնեցինք բանակին: Մի շարք նորմալ վիճակում մեքենաներ հանձնվեց բանակին, նաև Մարտակերտի բնակչությունը քաշեց տարավ, օգտագործեց: Սոլյարկայով լիքը եկել է, պայթեցրել ենք: Սկզբում մի քիչ վառվել է: Հետո երևի օդը չի հերիքել բաքի մեջ, հանգել է: Այս վերջերս՝ մոտ երկու տարի առաջ, գյուղացիներից մեկը գալիս է ստուգում, տեսնում՝ մնջը չորս տոննա սոլյարկա: Այն վատ ժամանակները, որ սոլյարկա չկար, օգտագործեցին: Ականաբերդ գյուղում միրուքավոր Մերուժ կար, հենց նա է ստուգել, մեջի սոլյարկան գտել, վարուցանքը դրանով կատարել են այդքան տարիներ հետո, երբ ոչ մեկս չենք մտածել, որ կարող է մեջը մնացած լինի:

Մեր կազմակերպչական գործունեության ամենամեծ կազմակերպիչը Շահեն Հովասափյանն է եղել՝ թե ճակատում, թե թիկունքում, թե մեր ընտանիքների ապրելակերպը կազմակերպելու գործում: Այդ ամեն ինչի ծանրությունը նրա վրա է եղել:

Բ.Կ.- *Դու այնտեղ էիր, երբ ուղղաթիռին խփեցին:*

Ա.Հ.- Չէ, ես Երևանում եմ եղել:

Բ.Կ.- *Ի՞նչ են ասում այդ դեպքի մասին, ժողովուրդը ինչ էր պրամադրված:*

Ա.Հ.- Շատ դժվար հարց եք տալիս. ես այնքան տեղեկություն ունեմ, ինչքան բոլորը ունեն: Այսինքն՝ ուղղաթիռը բարձրացել է, օդում երկու ուղղաթիռների վրա խփել են, մեկը նորից վայրէջք է կատարել, մյուսը թռել է: Երկրորդը խփել են ու ընկել է: Միայն անհասկանալին այն է, որ տվյալ տեղից, որտեղից խփել են, անհնար էր, որ թուրքը գար, թափանցեր, հասներ այդտեղ:

Բ.Կ.- *Բայց այդտեղից ներքև թուրքական դիրքեր կային, հեգտ գործություն է եղել այդ դիրքերի վրա: Այդտեղից չէին կարող գալ:*

Ա.Հ.- Ինձ թվում է՝ չէ, որովհետև այդ տեղը մշտական մեր հսկողության տակ էր: Միշտ մերոնք էին իջնում այդ տեղը: Նրանք այդտեղ առհասարակ չեն երևացել:

Պատմում է ՍԵՄՅՈՆ ՏՐԵԳՈՒԲՈՎԸ (Ստեփանակերտի 166-րդ գնդի գնդապետ, ԼՂՀ բանակի կամավոր), Մարտակերտի ռազմաճակատ, 1993, փետրվար

- 1988 թվականից սկսած ինչ դեր էր վիճակված իրականացնելու ձեր գնդին և ապագա կազմին:

- Մեր առջև լուրջ հարց էր դրված: Ի՞նչ պետք է անենք. լինել այն մարդկանց հետ, ովքեր ազնիվ չէին և փակում էին աչքերն ու ոչինչ չէին տեսնում, կամ գործել խղճի թելադրանքով: Մենք տեսանք հայերի սկզբնամամբ եղեռնը թե Ադրբեջանում և թե Լեռնային Ղարաբաղում: Այդ իսկ պատճառով գնդի հրամանատարության կեսը տրամադրված էր օգնելու հայությանը, իսկ սպաների մյուս մասը տրամադրված էր ցանկացած ճանապարհով՝ նույնիսկ դավաճանության գնով, գունդը Ղարաբաղից տանել: Նրանք ծրագրել էին մեկուսացնել հրամկազմին, մարտերով հեռանալ և անցնել ադրբեջանցիների կողմը, որոնց իշխանությունների հետ, մեր հետախուզության տվյալներով, նախնական պայմանավորվածություն ունեին:

- Եվ ինչպես հաջողվեց ձեզ կանխել այն:

- Հիմնականում մեզ հաջողվեց սպաների մեծ մասին ճիշտ կողմնորոշել ստեղծված իրավիճակի նկատմամբ, նաև ապացուցեցինք, որ նենց տեխնիկայի դուրս բերելու փորձից էլ մեծ արյուն կհեղվի:

- Երբ Շուշիից ռմբակոծում էին Ստեփանակերտը, ինչ դիրքորոշում ընդունեց գնդի հրամանատարությունը:

- Քաղաքի բնակելի թաղամասերն ու մեր գնդի տարածքը ռմբակոծում էին Շուշիից, Խոջալուից, Մալիբեյլուից ու Ջանհասանից: Մենք բոլոր գրեցինք Ադրբեջանում տեղաբաշխված 4-րդ բանակի հրամանատար Պռոսովին (հետո նրան փոխարինեց Սոկոլովը), իսկ ռազմական օկրուգի հրամանատար Պետրիկևին զեկուցեցինք իրադարձությունների մասին: Երբ հետագայում մեզ այցի եկավ գլխավոր հրամանատարության ներկայացուցիչ գեներալ Վարենիկովը (հետո նա միացել էր

ԳԿՀՊ-ին), տեսավ իրավիճակը և թույլ տվեց կրակով լռեցնել այդ կետերը:

– Իսկ ինչ միջոցներով:

– Ադրբեջանի մամուլով մենք հետևում էինք մեր հակահարվածների արդյունքներին: Հենց ոչնչացվում էին կրակակետերը, սկսեցին պահանջել, որ գունդը հեռացվի, քանի որ այն մասնակցում է մարտական գործողություններին: Մենք օգտագործում էինք և զրահատեխնիկա, և հրանոթ, և հրասայլ: Նրանց համակարգերը դուրս էին բերվում ճանապարհի վրա և սկսում հրթիռակոծել: Մենք հենց այդտեղ էլ հարվածում էինք:

– Իսկ հատուկ շրջանի պարետ գեներալ Սաֆոնովը ինչպես էր վերաբերվում ձեր այդ քայլին:

– Սաֆոնովը կատարում էր ԽՍՀՄ ղեկավարության կամքը, որը ադրբեջանամետ էր: Խոջալուի օդանավակայանի հանձնումը ադրբեջանցիներին, ինչպես նաև հայկական գյուղերի ավերածությունները, խաղաղ բնակչության նկատմամբ ահաբեկչությունը նրա ձեռքի գործն են, ինչի համար էլ նա պետք է պատասխանատվության ենթարկվի: Նա կուրորեն կատարում էր նաև Ադրբեջանի իշխանությունների կամքը: Երևի հիմա էլ խիղճը չի տանջում կատարած ոճրագործությունների համար: Իսկ նրան դատել է պետք: Ինչպես ես հասկացել եմ, Ադրբեջանը վարձահատույց է եղել նրան: Ներքին զորքերը ակտիվորեն մասնակցություն են ունեցել այդ կեղտոտ գործերին: Իհարկե, ձգտել էին մեր մարդկանց ևս ներքաշել: Երկու վաշտ ետ էին վերադարձել՝ հրաժարվելով կատարել Գետաշեն մեկնելու հրամանը:

– Հավանաբար, առնչվել եք նաև Արկադի Վոլսկու, հետագայում՝ նաև Պոլյանիչկոյի հետ:

– Վոլսկու և Պլիսովի հետ հաճախ էի հանդիպում: Վոլսկին հոգով կողմ էր խնդրի խաղաղ կարգավորմանը, ինչը և փորձում էր իրականացնել: Բայց նա լրիվ չէր ընկալել Գորբաչովի քաղաքականությունը, որը ակնհայտորեն ադրբեջանամետ էր: Ադրբեջանական իշխանությունների պահանջով՝ Արկադի Իվանիչին ետ կանչեցին: Նրա փոխարեն ասպարեզ իջեցրին Պոլյանիչկոյին ու Ռադաևին: Պոլյանիչկոն իսկական ֆաշիստ ու սրիկա էր: Գետաշենի ու Մարտունաշենի իրադարձություններից հետո նրանք նպատակ ունեին նույն կերպ վարվել Մարտակերտի հետ: Մեր հետախուզության տվյալներով պարզվեց, որ փաստորեն սկսվել է Ղարաբաղի նվաճումը: Մենք ներս մտանք նրա գրասենյակում նոնակի հանրահայտ պայթյունից հետո: Նոնականետով կրակել էին դիմացի պուրակից: Սակայն կրակողը պրոֆեսիոնալ չէր եղել: Մենք հարցրինք. «Ի՞նչ պետք է անի գունդը», թե. «Ցանկալի է, Ռուսաստան տեղափոխեք ձեր ընտանիքներին: Գնդի հրամանատարը որոշեց փակել Ստեփանակերտ մտնող ճանապարհները: Հայտարարեցինք՝ ոչ մի պարետային ժամ, քաղաքը մենք ենք պաշտպանելու, իսկ Ստեփանակերտում հայերի ջարդ ու եղեռն չենք թողնելու: Ադրբեջանցիները պետք է Ստեփանակերտ մտնեն Խոջալուի, Մալիբեյլուի ու Շուշիի կողմից: Իսկ Ասկերանը պետք է խեղդեին Աղդամն ու Խոջալուն: Մենք ամբողջությամբ կատարեցինք մեր պարտքը: Այդ իրադարձություններից հետո գնդի հրամանատարին ու ինձ Ադրբեջանում մահվան են դատապարտել:

– Իսկ գնդի զինանոցը հերիք էր Ղարաբաղի պաշտպանության համար:

– Ողջ Ղարաբաղի տարածքում մարտական գործողությունների համար բավարար չէր, բայց եթե հրաման լիներ պահպանել Ղարաբաղի սահմանները, ապա նրա զինանոցն ու պրոֆեսիոնալիզմը կբավարարեին:

– Թերևս նաև շահագրգռվածություն չկար:

– Իհարկե: Երիտասարդ սպաներին հետաքրքրում էր նաև հարցի ֆինանսական կողմը: Սակայն հարցը ձգձգվեց ու լուծում չստացավ, և ողջ գունդը մեկնեց՝ բացառությամբ մի քանի կամավորների, որոնք կապված էին Արցախի ու նրա բնակչության հետ: Իսկ տեխնիկան թողեցինք:

– Ներքին զորքերի և ձեր միջև արդյոք լարում կար:

– Այո: Երբ մենք մի քանի հայկական գյուղ պաշտպանության տակ էինք առել, որոնց վրա հարձակման էին պատրաստվում ադրբեջանական գրոհայինները, դա դուր չէր եկել պարետ Սաֆոնովին: Մենք զինվորներին այս գործում չէինք ընդգրկել, իսկ սպաները կամավոր էին ներգրավվել: Ներքին զորքերը զբաղվում էին նաև առուծախով, խոշոր գումարների դեպքում ավտոշարասյուներ տեղափոխում: Ժողովուրդը ատում էր նրանց: Իսկ մեր հարաբերությունները բնակչության հետ շատ

բարեկամական էին: Մեզ հարգում էին ու «մեր գունդը» կոչում:

– Ինչպես եք գնահատում իրավիճակը ռազմաճակատում:

– Հիմա դիրքային մարտեր են մղվում, պարբերաբար գնդակոծվում է Ղարաբաղի տարածքը, բայց շատ ակտիվ մարտեր դեռևս չկան: Դա կապված է ձմեռային դժվարությունների հետ: Սակայն ադրբեջանցիները գարնանը կայծակնային ու հզոր հարված են պատրաստում:

– Եվ ինչ, դարաբաղցիները կարող են դիմակայել:

– Պաշտպանության մեջ կատարյալ կազմակերպվածություն և վառելիքա-զինանոցային լավ պաշար է անհրաժեշտ: Տեխնիկական միջոցները պետք է լրիվ նորոգվեն կամ փոխարինվեն նորով: Ինձ թվում է, որ մեկ շաբաթից հակառակորդը ետ կգլորվի: Նրանք սովորաբար շատ մեծ զոհեր են տալիս, իսկ շատերը չեն ուզում մնալ:

– Իսկ ինչպես եք գնահատում ռազմաարդյունաբերական համալիրի դերը այս պատերազմում:

- Կարծեմ՝ Լենինը Տրոցկուն բնութագրելիս նրան *քաղաքական* պոռնիկ է անվանել: Այստեղ ևս նույնն է: Նա զենք է վաճառում թե այս, թե այն կողմին: Ջինամթերքի քանակությունն Ադրբեջանում անվերջ չէ, ու հզոր համալրում են ստանում: Ամեն օր Ստեփանակերտի վրա 360 արկ էին թափում, ու մերոնք ոչնչով չէին կարողանում պատասխանել: Իսկ նրանք հարվածում էին խաղաղ թաղամասերին՝ նպատակ ունենալով խուճապի ու անկանխելիության տրամադրություն ստեղծել. կամ հանձնվեն, կամ հեռանան բաց միջանցքով: Ես խոնարհվում եմ Արցախի հերոսական ժողովրդի առջև, որը կարողացավ դիմանալ այդ հարվածներին: Իհարկե, մենք չկարողացանք կանխել թշնամու ռազմական օդուժից առաջացած խուճապը Մարտակերտում: Դա մեր մեղքն էր:

– Ադրբեջանցիները իրոք հզոր ավիացիա ունեն, որ 34 մարտական ինքնաթիռ ու 15 ուղղաթիռ են կորցրել:

– Ադրբեջանում է մնացել օդուժի դեսանտային 104-րդ դիվիզիան, որը տեղաբաշխված է Կիրովաբադում: Սպաները մասնակցում են Ղարաբաղի դեմ պատերազմին, իսկ դրա մասին ոչինչ չի ասվում: Դիվիզիայի ռազմական մատակարարումը իրականացնում է ԱՊՀ-ն: Ռազմատրանսպորտային ավիացիան ակտիվորեն գործում է այդ ուղղությամբ: Իսկ եթե գեներալ Գրաչովին հարցնենք, թե որտեղ է օգտագործվում այդ հզոր տեխնիկան ու ռազմամթերքը, երևի ոչ մի պատասխան չի ունենա: Փաստորեն, 104-րդ դիվիզիան Ադրբեջանին զենք մատակարարելու գործում որպես թողարկիչ միջոց է ծառայում:

Ադրբեջանցիները այս առճակատումը համարում են պատերազմ Հայաստանի դեմ, պահանջում են Ղարաբաղից դուրս բերել զորություն չունեցող հայկական էքսկլավիցիոն զորախումբը: Ինչպես եք մեկնաբանում դա:

- Մի ժամանակ Ադրբեջանը պահանջում էր, որ Ղարաբաղից դուրս բերվեն և գունդը, և ներքին զորքերը, որպեսզի կողմնակի վկաներ ու ականատեսներ չլինեն: Իսկ ներքին զորքերը մասնակցում էին Գետաշենի ու Մարտունաշենի հայերի դեմ ահաբեկչությանն ու կոտորածներին: Նրանք այդ անում էին իբր հայաստանցի գրոհայիններին դուրս հանելու համար: Նրանցից հետո եկան ադրբեջանցի թալանչիներն ու նույնն հավասարեցրին հայոց հինավուրց գյուղերը: Դա փաստ է: Ինչու՞ մենք փակում մեր աչքերը: Հիմա ոչ ոք այդ մասին չի խոսում: Երբ ես արձակուրդում էի, ռուսական հեռուստատեսությամբ ցույց տվեցին Ղարաբաղի տղաների պատրաստած «Ղարաբաղյան գարուն» ֆիլմը: Գլխ գեներալ Գրեկովը ժպիտը դեմքին կեցվածք էր ընդունում հեռուստաոսկրիկի առջև, այդ պահին թալանում և ոչնչացնում էին այդ գյուղերը: Բայց արուհու նկարած ֆիլմը, ի վերջո, արգելեցին ռուսական հեռուստատեսությունում:

Ադրբեջանը Ղարաբաղի դեմ է պատերազմում, թե Հայաստանի:

- Ես կասեի, որ պատերազմը Հայաստանի դեմ է: Այստեղ կարևոր չէ, թե Ղարաբաղը երբ են անջատել Հայաստանից և ով է Ադրբեջանին նվիրել: Կարևորն այն է, որ Ղարաբաղը Հայաստան է: Եթե Ղարաբաղն ընկնի, ապա դժվարանում եմ կանխագուշակել հետագա իրադարձությունները: Երևի նրանք կծավալվեն դեպի Նախիջևան: Միայն ողջ հայության միասնականությունը, միայն միացյալ ճակատը կարող է դիմակայել Ադրբեջանին:

«ԱԶԱՏԱՄԱՐՏ», թիվ 6, փետրվար, 1993 թ.

Պատմում է ԱՐԹՈՒՐ ՋԻՎԱՆՇԻՐՅԱՆԸ, 04.03.2006, Երևան

Ծնվել եմ 1958 թվականին, ԼՂ Ասկերանի շրջանի Ղարաբուլաղ գյուղում: Ես Երևանում տուն ունեի, բայց գյուղում էի ապրում, որպեսզի իմ փոխարեն թուրք չգար և բնակվեր: Մեր գյուղում միշտ միայն հայեր են ապրել: Գյուղը Քիրս սարի ստորոտին է, Քյոնդալան գետի ափին: Իսկական հայկական գյուղ էր՝ տունը տան վրա, սարերի մեջ: Գյուղում աշխատում էի որպես գյուղատնտես: Մասնագիտությամբ գյուղատնտես եմ, ավարտել եմ Գյուղինստիտուտը: Երբ սկսվեց շարժումը, 1988 թվականի հենց նոյեմբեր ամսից սկսեցինք հեռագրեր ուղարկել Գորբաչովին: 1988 թվականի հունվար-փետրվար ամիսներին սկսեցին միտինգները, ինչը շղթայական ռեակցիայի պես տարածվեց ամբողջ Ղարաբաղում: Ղարաբաղի շուրջբոլորը, որտեղ թուրքեր էին ապրում, միշտ դեպքեր, պատահարներ էին լինում: Ամարասի տարածքի համարյա երեսուն տոկոսը մեր գյուղերն են: Այնտեղ թուրքի գյուղեր կային՝ Ներքին Յաղլենդ, Դիվանլար, Ղաջար...: Շատ գյուղեր կային, որտեղ թուրքեր էին ապրում, բայց դրանք մեր տարածքներն էին: Սկսեցին վառել մեր խոտի դեզերը: Գյուղացիներն այնտեղ հերթապահություն էին անում: 1989 թվականին տեղափոխվեցի Երևան, որտեղ գրանցված էի: Դեպոյում էի աշխատում: Դեպոյում ակտիվ կազմակերպություն կար: Այն ժամանակ ՀՀՇ-ն նախաձեռնող խումբ ուներ՝ Վիտյա Այվազյանի գլխավորությամբ: Լոկոմոտիվային դեպոյի, երկաթգծի մեր տղաները այդ խմբի՝ «Ղարաբաղ» կոմիտեի մեջ էին մտնում: Ես էլ ընդգրկվեցի կոմիտեի մեջ և միշտ միտինգներին մասնակցում էի: 1990 թվականին հունվար, փետրվար, մարտ ամիսներին՝ երեք ամսվա ընթացքում, երեք դասակ հավաքվեց: Երրորդ դասակի հրամանատարը ես էի, Սարիթա-

դում՝ սպորտդպրոցում, պարապում էինք: Այնտեղ մի քանի մարզիչներ կային, մեկը դարաբաղցի էր՝ Նիկիտան, որը Ավանում էր ապրում: Հետո Օրջոնիկիձեի շրջանում ՀՀՇ-ի հիման վրա կազմեցինք «Գարեգին Նժդեհ» ջոկատը: Ընդհանուր հրամանատարը դարձավ Բարսեղ Ղահրամանյանը: Մեր կոլտնտեսության նախագահը եկավ ինձ համոզեց, որ ես դուրս գամ, գնամ գյուղ և դառնամ գյուղի համայնքի նախագահը: Բայց չստացվեց, քանի որ ջոկատով գնում էինք սահմանները: Եղել ենք Գետաշենում, Գյուլիստանում: Միշտ նրանց հետ էի, միշտ առաջին դիրքերում: Մայիսին Սովետաշենում դեպքեր եղան: Այն ժամանակ մենք պետք է ուղղաթիռով թռչեինք, մի քանի օր ուշացավ մեր թռիչքը: Մայիսի վերջին գնացինք Գետաշեն: Ժողովուրդը շրջափակման մեջ էր: Նրանք ազնվամորի (малина), մոռ, մորի էին աճեցնում: Թուրքերի հետ էին առևտուր անում, բայց արդեն նրանց հետ առևտուր չկար, պետք է Հայաստան բերեին: Այն ժամանակ կոոպերատիվների նախագահը՝ Ալբերտ Հովհաննիսյանը, եկավ այնտեղ: Ուղղաթիռներով հատապտուղները տանում էին Հայաստան: Մենք էլ հերթապահում էինք Մարտունաշենում: Կողքը հայկական գյուղեր էին, որոնք արդեն վաճառված էին թուրքերին՝ Ազատը, Կուշչի-Արմավիրը, Կամոն: Մարդիկ եկել են, տները վաճառել, գնացել: Իսկ Մարտունաշենում Սարմեն անունով մի ռուսիկան՝ կապիտան էր, թե մայոր: Այդ ժամանակ Մարտունաշենում ՀՀՇ-ի ջոկատներն էին, որից մեկը մերն էր, մյուսը՝ ապարանցի Արոյինն էր: Արոյին ուղարկել էին որպես մեզ վրա վերադաս: Լաչինի զինկոմն էր այնտեղ՝ Սայադը: Երկու ամիս միասին մնացինք, հետո Սպիտակի տղաները եկան մեզ փոխարինելու: Հերթապահում էինք գիշերը ժամը տասնմեկից մինչև առավոտյան ժամը վեցը-յոթը:

Մի անգամ Մարտունաշենում մի թուրք բռնեցինք: Վերևից նայում էինք, տեսանք, որ մեքենա եկավ: Չկարողացանք տարբերել: Գետաշենից Ափո անունով մի տղա կար, տարիքով մարդ էր: Եկան, բռնեցինք այդ թուրքին, անունը Ջիվանշիր էր: Այդ խեղճ տղային տարան, այնտեղ «մշակում» էին, թե՝ ինչու է եկել: Մոտեցա, ասացի. «Ջիվանշիր, մի ազգից ենք, էլի, ես էլ պարսիկ եմ, ինչ է եղել, քո անունն էլ է Ջիվանշիր, իմն էլ, գրի՝ ինչ ասում են, տանենք, քեզ բաց թողնենք»: Ջիվանշիրը գրեց, որ ալյուր է բերում ժողովրդի համար, ուզում է բարեկամություն անել հայերի հետ: Բայց նա Ադրբեջանի Ժողճակատից էր, խորամանկություն

էր անում. ուզում էր ժողովրդին համոզել, որ իզուր են ուզում Հայաստանի հետ կապվել: Ջիվանշիրին Մարտունաշենից բերեցինք Գետաշեն: Այնտեղ յուղարդ կոմբինատում էին հարցաքննությունը վարում: Հետո, երբ բերեցինք Մարտունաշեն, ժողովուրդը ուզում էր մեզ սպանել: Կանայք հարձակվել էին մեզ վրա, ասում էին. «Դուք գիտեք, որ երբ դուք գնաք, ձեր ետևից թուրքերը մեզ ինչ կանեն»: Մարդիկ գիտեին՝ ինչ է լինելու, յոթ-ութ հոգի ֆիդայիներով չէինք կարող այդ բոլոր գյուղերը պահել: Ճիշտ է, գյուղացիներն էլ էին մեզ հետ, բայց նրանք գյուղացի մարդիկ են, չեն պատկերացնում, որ կարող է թուրքը մտնել, նրանց բոլորին կոտորել, ինչպես եղավ 1991 թվականին: Մայիսին թուրքերը մտան Գետաշեն, Մարտունաշեն: «Արաբոյի» տղաներն էին այնտեղ, Թաթուլ Կրպեյանի դաշնակցական ջոկատը: Ահագին զոհեր տվինք: Գյուղացիները այդքան էլ ուժեղ չէին ուզում պայքարել, այնպես՝ իմիջիայլոց էին մասնակցում: Մտածում էին, որ մի հայաստանցի կարող է հազար թուրք կոտորել: Թուրքերն էլ էին մեզանից վախենում: Օրինակ, հայն ու թուրքը իրար հետ հանդիպում էին... Արդեն ծանոթություն էին ստեղծել, նրանք այլուր էին բերում, մերոնք գինի էին տալիս, այդպես՝ ընկերություն էին անում: Նրանք ասում էին. «Մեզ մոտ՝ Ժողճակատում, երեսուն հոգի մարդ կա», հայն էլ ասում էր. «Մեզ մոտ վեց հոգի ֆիդայիներ կան»: Իսկ եթե վեց հոգի ֆիդայիներ կան, նշանակում է՝ մեզ վրա առնվազն վեց հարյուր հոգի թուրք պետք է գա: Նրանք կարծում էին՝ մենք մարդ ուտող ենք, բայց նորմալ տղերք էինք՝ հանգիստ, սուսիկ-փուսիկ: Հետո մենք տեղափոխվեցինք Գյուլիստան: Անտառներով եկանք այնտեղ: Այդ ժամանակ ես վերադարձա Երևան: Վազգեն Սարգսյանը հրաման էր տվել, որ այն ջոկատները, որոնք ուզում են զենք ունենալ, պետք է անպայման մտնեն պետական կառույցի մեջ: Պետական կառույցն էլ Հատուկ գունդն էր: Յուրաքանչյուր շրջանից մի-մի վաշտ հավաքվում էր այնտեղ: Հետո Գետաշենում դեպք եղավ: Մենք ուղղաթիռով թռանք այնտեղ: 1990 թվականի սեպտեմբերի սկիզբն էր: Նրանց ՕՄՕՆ-ը ուզում էր մտնել: Ժողովուրդը զենք էր ուզում: Յուրաքանչյուր տղայի հետ երկու հատ զենք էին ուղարկում: Ուղղաթիռով գնացինք, որ Գետաշենում իջնենք, չկարողացանք, վիճակը լավ չէր: Գյուլիստանում իջանք: Այդպես, մոտ երկու ամիս մնացինք սարերում: Այդ ընթացքում Էրքեջում դեպքեր եղան. անասուններ էին ուզում գողանալ, գնացինք, դեմները փակեցինք: Թողեցին, փախան: Մտանք Հատուկ գունդ: Դրանից հետո ըստ հրամանի էինք աշխատում, ոչ թե՝ ինչպես խելքներիս փչի: Հատուկ գունդը սեպտեմբերի 20-ին է ստեղծվել: Հատուկ գնդի հրամանատարը գնդապետ Սերգեյ Առաքելյանն էր, տեղակալը Քեռին էր՝ Արփիից, շտաբի պետը Գզողյան Ֆելիքսն էր, որը հիմա գեներալ է: Մի գումարտակի հրամանատարը Մուրադն էր, մեր գումարտակի հրամանատարը Եղիազարյան Սամվելն էր: Մելքոնյան Գագոն Էջմիածնի վաշտի հրամանատարն էր, Բարսեղ Ղահրամանյանը «Նժդեհի» վաշտի հրամանատարն էր, առաջին վաշտի հրամանատարը ազգային հերոս Աբրահամյան Ջիվանն էր:

Լաչինից Կոռնիձորին շատ էին նեղում, 1990 թվականի վերջին մեզ տարան Կոռնիձոր: «Նժդեհի» դիրքեր կան, մենք այնտեղ էինք: Մեր վաշտից ութ հոգի էինք: Մենք ուզում էինք մարտական մկրտություն ստանալ, որ մեր ոգին բարձր լիներ, կարողանայինք տղաներին ոգևորել: Լաչինի դիրքերում դրոշ կար, գնացինք հանեցինք: Մեկ ամիս մնացինք Լաչինի և Կոռնիձորի արանքում: Հետո մեզ ուղարկեցին Շահումյան: Այդ ժամանակ ոստիկանությունը չէր աշխատում: Միտինգների ժամանակ մարդիկ մաքուր էին, գողացած ապրանքը տանում ետ էին տալիս: Հետո նորից բանդիտիզմի պոռթկումը սկսվեց: Քաղաքում շատ մարդիկ ֆիդայինի անվան տակ՝ զինվորական շորեր հագած, իրենց համար «ֆոֆոում» էին, և ինչքան դժվար ճարվող դեֆիցիտ ապրանք կար՝ հափշտակում էին, շուկայում վաճառում:

Հունիսի տասից հետո Շահումյանի դրությունը շատ վատացել էր: Նորից մեր՝ Երևանի գումարտակը, ուղարկեցին Շահումյան: Գումարտակի հրամանատարը Ջիվան Աբրահամյանն էր: Գումարտակի հրամանատարներ կային, որոնք դիրքեր չէին գնում, և դիրք գնացող տղերքից մեկին նշանակում էին հրամանատար: Օրինակ, Ղահրամանյան Բարսեղը եղել է Ջիվանի տեղակալը: Երբ հասնում ենք Շահումյան, գումարտակը բաժանվում է երկու մասի: Մի մասը բարձրանում է դեպի Շահումյանի հյուսիսային կողմը, մյուս մասը՝ հարավային: Հյուսիսային մասում հրամանատարը Ջիվանն էր: Այնտեղ Վերիշենն էր, Էրքեջը, Բուզլուխը, Մանաշիդը, Հայ Պարիսը: Մենք էլ իջանք ներքև՝ Կարաչինար, Դախստուկ գյուղերում էինք: Գյուլիստանում իջանք: Մեզ հետ երկու հոգի ԳԽ պատգամավորներ կային՝ Երջանիկ Աբգարյանն էր, դե, Բորի-

սին բոլորը ճանաչում էին: Մենք մի գիշեր մնացինք Գյուլիստանում: Մյուս օրը Ջիվանը տղաների մի մասին վերցրեց, գնացին հյուսիսային կողմը: Մենք նախագահի տանն էինք մնում, նա երեսուն հոգու հարգեց պատվեց: Սուրհանդակ է գալիս, որ Կարաչինարում դեպք է եղել, պետք է գնանք: Բրիգադիրին, թե բրիգադում աշխատողներից մեկին թուրքերը տարել էին: Կարաչինար և Շեֆեկ գյուղերը իրար կպած են: Գյուղի բրիգադիրը բարձրանում է աշխատելու: Թուրքերի հետ սկսում է զրուցել: Մի քիչ զրուցելուց հետո գալիս են նրան բռնում, տանում: Քառասուն հոգով գինված գնում ենք, գյուղի ժողովուրդն էլ՝ մեզ հետ: Կարաչինարի կողքով անցնում ենք, Շեֆեկ ենք մտնում: Պայման ենք դնում՝ եթե մեկ ժամից այդ մարդուն չբերեք, մտնում ենք գյուղ: Մեկ ժամից ետ են բերում: Պատմում է, որ ծանոթ տղերք են եղել, տարել են Նավթալան, այնտեղից էլ՝ Գերանբոյ: Ասել են. «Ստրուկ ենք ծախում, հայ ենք ծախում, շան տեղ կարող եք պահել»: Ոչ ոք չի առնում: Մի քանի անգամ ծեծում են, բերում ետ են տալիս: Սկսում ենք հերթապահություն անել: Գախտուկ, Կարաչինար, Մանասիշեն գյուղերը միասին Կարաչինար էր կոչվում: Մենք Մանասիշենում էինք հերթապահություն անում: Շատ վտանգավոր էր ռուսների այդտեղ լինելը, քանի որ նրանք պարետային ժամ էին անցկացնում: Տեղային ղեկավարության հետ մի անգամ վեճի մեջ մտանք: Նրանք դժվար ճարվող (դեֆիցիտ) ապրանք էին տեղափոխում Հայաստան: Ղարաբաղի և Շահումյանի արանքով Ինջա գետն է հոսում: Հերթապահության ժամանակ մերոնք բռնում են, չեն թողնում:

Բ.Կ.- *Ի՞նչ էին փանում:*

Ջ.Ա.- «08»-ի, «09»-ի ավտոմեքենաների պահեստամասեր էին տանում:

Բ.Կ.- *Որտեղից էին գալիս:*

Ջ.Ա.- Կարաչինարի խանութներից:

Բ.Կ.- *Կարող է թուրքերի հետ կապ ունեին:*

Ջ.Ա.- Չէ, թուրքերի հետ կապ չունեին: Բերում էին Երևան, թանկ գնով վաճառում: Երևանում այդքան թափ չունեինք: Մանասիշենում նրանց ջարդ տվինք, հասկացան, որ այդպես չի կարելի: Հետո Խաչատուրանց Աշոտը եկավ, որը հիմա Մոսկվայում է: Իր եղբոր տղայի հետ եկավ, մեր ընկերն էր, անտառներում միասին եղել ենք: Ասաց. «Ձեր ցավը տանեմ, պրոբլեմ չունեք, բայց ապրանքը մնալու է»: Թե հետո ինչ է

եղել՝ իրենց գործն է: Մի հետաքրքիր բան կար. այն ժամանակ մի «ԶԻԼ» բեռնատար կար, գնում էր թուրքերի մոտ, այնտեղից ապրանք բերում, ռեստորաններում վաճառում: Երբ մենք հերթապահում էինք, տեսնում էինք, որ դիրքը անցավ, գնաց, եկավ:

Բ.Կ.- *Հայերը էին:*

Ջ.Ա.- Հա, ժողովրդին ապահովում էին լիմոնադով, ուտելիքով: Ջիվանը եկավ, նա ընդհանուր հրամանատարն էր: Մեզ հետ նստեց, զրույց արեց, ասաց. «Գործ չունեք ներքին գործերի հետ, դուք միայն սահմանը պահեք, այդպիսի բաներ չանեք»: Մյուս օրը, չեմ հիշում՝ հունիսի քանիսն էր, եկան ասացին, որ Ջիվանը զոհվել է: Վերիշենի վերևում, որտեղ «Արցախի» վաշտի տղաներն էին եկել՝ Ջանոյի գլխավորությամբ, Ջիվանի եղբայրն էր եկել, «Տիգրան Մեծի» տղաներն էլ էին եկել: Թուրքերը «ԲՄՐ»-ներով հարձակվում են, մերոնք բարձրանում են պաշտպանության, և Ջիվանն այդտեղ զոհվում է: Տղաները մինչև հիմա հիշում են, ինչպես էր Ջիվանը գոռում՝ աջով, ձախով, հետո ինքն էր գնում առաջ: Գնացել ենք հիվանդանոց՝ Ջիվանին տեսնելու: Ոտքը այնպես էր ջարդվել... «ДШК»-ով էին խփել: Չէինք կարողանում մեզ զսպել՝ երեկ մեզ հետ էր, այսօր՝ չկա: Մեկ ամիս մնացինք, հետո մեզ փոխարինեցին: Հետախուզում էինք Շեֆեկը, տեղային կրակոցներ էին լինում: Մի ռուս էինք խփել: Կարաչինարի և Շեֆեկի արանքում մետաղյա ցանկապատ կար, այդտեղ սեփական տներ կային, յուրաքանչյուրն իր այգին ցանկապատում էր: Աղասի անունով մի մարդ կար, նրան Աղասի դայի էինք ասում, «Եղնիկների» մոտ ավագ էր գնացել, բայց յոթանասունն անց մեծ մարդ էր: Հենց նրա տան և թուրքերի արանքով է ռուսը անցնելիս եղել: Կարելի է ասել՝ թուրք էր՝ ռուսի դեմքով: Հայ Պարիսի և Ռուս Պարիսի արանքով էլ են թուրքերը մի քանի անգամ եկել:

Չալյան Սերգեյը շտաբի պետն էր և հրամանատարի տեղակալը, իսկ հրամանատարը Մեղրյան Շահենն էր: Ասում էին, որ Շահումյանը «ծախել» են, բայց այդպիսի բան չկա:

Բ.Կ.- *Շահենի հետ հանդիպել էիք, ծանոթ էիք:*

Ջ.Ա.- Շատ չենք հանդիպել, մի քանի անգամ, երբ հրամանատարական հավաքներ են եղել: Ես Ղահրամանյան Բարսեղի (Բորյայի) տեղակալն էի, նա արդեն գումարտակի հրամանատար էր: Նա առանց ինձ տեղ չէր գնում: Պուճուր Շահեն կար՝ Հովասափյան Շահենը, նա թի-

կոնքի գծով տեղակալ էր, մատակարարում էր՝ ինչով պետք էր: Պարե-
տը Շարոն էր՝ Մանուչարյանի վարորդը: Շահումյանի հանձնման ժա-
մանակ ես այնտեղ չեմ եղել:

Երբ Լաչինի ճանապարհը բացվեց... Դե, ամեն մի թռիչքի ժամանակ
մտածում էինք, որ դա կարող է վերջինը լինել: Կարող է բարձրանայինք,
և սպանեին: Գիտեինք, որ ետ չենք դառնալու, այդ միտքը միշտ էլ եղել է:
Մենք մի լավ կովող տղա ունեինք՝ Աբրահամյան Սամվելը, որին Ափոն
էինք ասում, սպիտակցի էր: Հետաքրքիր բնավորություն ուներ. նա տա-
րիքով մարդու տեսք ուներ և իր տարիքի կանանց աղջիկ էր ասում՝ «բա-
լիկ ջան...»: Իրենից քսան տարի մեծերին ասում էր՝ հարս ջան, մոտ վաթ-
սուն տարի մեծերին ասում էր՝ քույր ջան: Ինքն իրեն պառավ մարդու տեղ
էր դնում: Երբ թռնում էինք, Ափոն միշտ դեպի 16-րդ թաղամաս էր նայում,
աչքերը լցնում. որդին մեկ-երկու տարեկան էր, ասում էր՝ Դավիթիկս...

Մի զվարճալի դեպք եղավ: Մեր տղաներից մեկը պիտի ամուսնա-
նար, բայց այստեղ ամուսնացած էր: Այնտեղ էլ մի լավ աղջիկ կար, ու-
զում էր ամուսնանալ: Ասացի. «Բազմակնությունը թույլ եմ տալիս»:
Գնացինք խնամախոսության: Դե, իմ դեմքը դարաբաղցու դեմք էր,
նրանց նման էի: Նրանք դեպի իմ կողմն են գալիս, թե. «Էս, որ եկել է
ամուսնանա, լավ տղա է», ասում եմ. «Հա, ձեր աղջիկը երեխա ունի,
բայց նա երեխա չունի»: Ուզում եմ ասել, որ նա կին չունի: Որ լավ խմում
ենք, ընկերս՝ մեր հրամանատարը, ասում է. «Ափոյի Դավիթի ծնվելու
գործին իմ մատն էլ է խառը»: Ես զարմացած նայում եմ, թե՝ ինչ... Նա
թե. «Հա, ես Ափոյին ասել եմ, որ երեխա ունենա, հայերը շատանան»:
Ափոն, թե. «Սպասիր, իմ Դավիթիկս քո Անիից մեծ է, ...»: Հիմա աղջկա
կողմը ինձ են նայում, թե. «Ո՞նց, նա երեխա ունի»: Ասում եմ. «Անին ու-
րիշի երեխա է»: Հարբած ենք: Ափոն էլ շատ միամիտ տղա է:

Բ.Կ.- *Վերջը, ամուսնացմա՞ ձեր ընկերը:*

Զ.Ա.- Չէ, այդպես ձև էինք թափել, որ այդ օրը խորոված ուտենք:
Շահումյանցիների լավն այն էր, որ նրանց մոտ կանայք են խորոված
անում: Մանասի շենում «Ֆաբուստի» Միշա կար, միշտ նրանց տանն
էինք հաց ուտում: Նրա կինը, աղջիկները խորոված էին անում, մենք
նստած՝ նարդի էինք խաղում: Ասում եմ՝ «Արա, մեր գյուղում տղամար-
դիկ են խորոված անում, ձեր գյուղում՝ ընդհակառակը՝ կանայք»: Ես
այնպիսի հնդկահավի խորոված էին անում... Ասում էին. «Որ դուք գալիս

կր Շահումյան, մենք հանգստանում ենք»: Քանի անգամ մենք գնացել
ենք Շահումյան, նրանք հանգստացել են, որովհետև հենց այնպես չենք
կրակել դեպի թուրքերը: Թե չէ՝ տղերքը գալիս են՝ գրո, գրո, գրո՝ կրա-
կում դեպի թուրքերը, նրանք էլ այնտեղից՝ գրո, գրո, գրո ... ու մի դեպք
պատահում էր: Ժողովրդի վրա էր դեպքը գալիս, նրանց ոչ մի բան չէր
լինում: «ԱՐՀ»-ով խփում էին, նռնակն ընկնում էր գյուղի մեջ: Երեխանե-
րը խաղում էին, և մոտ յոթ-ութ հոգի գռիվել են: Դե, պատկերացրեք, եթե
դու չես հրահրում, նրանք հանգիստ են մնում: Եթե ուզում ես խնդիր լի-
նի, մեկ-երկու անգամ կրակիր՝ նրանք անընդհատ կկրակեն: Այդ ժամա-
նակ խորհրդային իշխանության շրջան էր, և մեծ մասշտաբի հարձա-
կում չի եղել:

Քանի անգամ ես գնացել եմ Պյատիգորսկ, քույրս այնտեղ է ապ-
րում, Հայաստանում մի դեպք պատահել է: Երբ վերջին անգամ գնացի
և վերադարձա, հունիս ամիսն էր, գիշերը տաքսի նստեցի, որ գամ տուն,
նկատեցի, որ տաքսու վարորդը տխուր է: Ասում եմ. «Մ՛յ հորեղբայր, ինչ
է եղել, ինչու ես այդպես վատ»: Ես գիտեմ, որ մի քանի օրից պետք է
գնամ, որ Գետաշենը, Շահումյանը գրավենք: Ասաց. «Շահումյանը
հանձնել են...»: Ինչ որ սառը ջուր լցնեին ինձ վրա: Մենք գնում ենք Մեծ
Շեն, նահանջը սկսվել էր, ժողովրդին օգնում էինք: Մեր գնդից շատերը
Չլդրանով գնում են Կիչանի, Սրխավենդի կողմերը, թուրքերը եկել էին,
այնտեղ կռիվներ են լինում: Ես ուշ եմ տեղ հասնում: Հետո Արծվաշենը
հանձնում ենք: Թյուրիմացություն էր հանձնելը. այնքան լավ էինք, չգի-
տեմ ինչու, ասացին՝ ետ գնացեք: Կարող էինք պահել, և այդ ուղղու-
թյամբ ամբողջ տարածքը վերցնել: Քաղաքականություն էր, և պետք
չէր, որ մենք դրանով զբաղվեինք, մենք հրաման էինք կատարում:
Խաչատուրովը Վազգեն Սարգսյանի հրամանով ընդհանուր հրամանա-
տարությունը վերցրել էր իր վրա: Մեր գումարտակի հրամանատարը
Ղահրամանյան Բորիսն էր: Խաչատուրովից հետո եկավ Կիրակոսյան
Մուրադը՝ մեր նախկին գումարտակի հրամանատարը: Երբ Մուրադը
եկել էր, Արծվաշենը արդեն հանձնել էինք: Վազգեն Սարգսյանը եկավ,
գնացինք Արծվաշեն: Արծվաշենում լավ էր կազմակերպված հարձակում-
ը. Հայաստանում ինչքան լավ ուժեր կային, այնտեղ էին հավաքված՝
մեր գումարտակը, որ արդեն ՆԶ-ում էր, Երևանի կայազորից, Սպիտա-
կի տղաները...

Բ.Կ.- *Քեզ թվում է, որ կարող էիք պահել:*

Զ.Ա.- Իհարկե: Թուրքերը փախել էին: Դեպի վերև էլ կարող էինք «բացել», դեպի ներքև էլ:

Բ.Կ.- *Խաչատուրովն ասում է, որ անհնար էր պահել:*

Զ.Ա.- Արծվաշենը չէինք կարող պահել, շատ խորն էր մտած թուրքական գյուղերի մեջ, բայց թուրքական գյուղերը՝ Մութուդարան և մյուսները, կարող էինք պահել: Խաչատուրովը կարող է ասել. «Кто он такой, какой-то подполковник, я генерал»:

Բ.Կ.- *Հերթը Մարտակերտի խնդիրն էր, այն ժամանակ Կարապետյանն էր:*

Զ.Ա.- Կարապետյանը մեր գնդի հրամանատարն էր, երբ մենք Լաչինում էինք: Մոտ մեկ ու կես ամիս մնալուց հետո մեզ փոխարինեցին Ալավերդու, Կիրովականի, Հրազդանի տղաները, որոնք մի գումարտակ էին: Նրանց գնդապետ Վոլոդյա Կարապետյանը բերեց: Նա Վազիֆի հետ վատվեց: Մենք Լաչինի միջանցքում էինք, որովհետև նոր էինք եկել, հոգնած էինք: Այնտեղ Կարապետյան Տիգրան կար, նա և իր վարորդը գնում են հետախուզության, Մեծ Շենի, Մաղավուզի ճանապարհներին պայթում են ականի վրա: Դա մեր դրած ականն էր, որի տեղը չեն իմացել, պայթել են:

Բ.Կ.- *Ասում են, որ Հատուկ գնդում տղաներ կային, որոնք մտել են գյուղերը՝ Չայլու, Մաղավուզ, և ասել. «Ժողովուրդ, փախեք», իսկ իրենք մտել են տները, թալանով զբաղվել: Այդպիսի բան նկատել եք:*

Զ.Ա.- Հատուկ գնդի տղաները Չայլուում, Մաղավուզում չեն եղել: Հատուկ գնդի տղաները եղել են Շահումյանում: Հետո, երբ շղթայական խուճապով բոլորը փախչում էին, նրանք մյուսների հետ դուրս են եկել, ժողովրդին հանել են: 1992 թվականի հունիս ամիսն էր: Նրանք Չայլուում չեն եղել, նրանք անտառներով են եկել հասել Ստեփանակերտ: Նրանք անտառով դուրս եկել Դրմբոն, էլ չեն մտել Չայլու, չէին կարող մտնել: Չայլուն այն ժամանակ պաշտպանում էին Ղարաբաղի ուժերը՝ Գուրգենն էր, որ հիմա թիկունքի պետն է:

Ես մի անգամ Հասանղայա գյուղում էի: 1992 թվականի մայիսին ես պետք է գնայի մեր գյուղը: Այն ժամանակ մեքենա չկար, բենզին չկար: Իջանք գյուղը: Լավ գյուղեր էին՝ բարդիներով, սոճիներով: Ես չասացի, որ ղարաբաղցի եմ, սկսեցի ժողովրդի հետ զրուցել: Նրանց դուր էր գա-

լիս, որ Հայաստանից գոնե մի մարդ լինի, հարյուր հոգով կհավաքվեն տարեր, գիտեին, թե նրանք անխոցելի են: Միտինգ արեցի, այնքան լավ միտինգ արեցի, որ ես էլ էի զարմացել, թե ինչքան լավ եմ խոսում: Զանկ տղերք էին, ինչպես ասում են՝ թրով քաշած: Ասացի. «Բոլորս էլ կարող ենք Անդրանիկ դառնալ: Մի փախեք: Միևնույն է, բոլորս էլ այստեղ ենք, եթե զոհվելու լինենք, բոլորս էլ կզոհվենք, բայց մեր ազգի պատիվը կպահենք»: Նրանց «ոգին» բարձրացավ, լավ էին զգում տղերքը: Բայց 1992 թվին Հացավանն ու Արծվաշենը (Մեսրոպան և Յարոմջա) հանձնվեց, չէ:

Հնարավոր չէ, որ Հատուկ գունդը ասեր՝ ժողովուրդ, փախեք: Դա Հատուկ գունդը չէր, դրանք ուրիշ ջոկատներ էին, որովհետև Հատուկ գունդն այդ ժամանակ Շահումյանում է եղել: Իսկ երբ Շահումյանի ժողովուրդն ուզում էր փախչել, չէինք թողնում: Այն ժամանակ՝ 1991 թվականին, «Կոռնիձոր» ջոկատ կար, Մոնթե Մելքոնյանն էր այդ ջոկատի մեջ, մալական կար՝ Արայիկը: Յերեկը ուղղաթիռն էին պահում, որ ժողովուրդը չփախչի, գիշերը հետախուզության էին գնում, «Ալազանով» խլում էին թուրքերին: Պահում էին դիրքերը:

Բ.Կ.- *Գուցե թուրքերն են արել:*

Զ.Ա.- Եթե թուրքը մտնի հայերի մեջ, կկոտորի: Հնարավոր է՝ անհատ մարդիկ գնան, Հատուկ գնդի անվան տակ խուճապ տարածեն:

Բ.Կ.- *Ուրեմն, հատուկ թալանչի ջոկատներ էին:*

Զ.Ա.- Հատուկ գունդը չէր կարող թալանել, ինչով պետք է թալանը բերեին. նրանց մեքենաները հրամանատարության կողմից ստուգվում էր, մաքսատուն կար, ոչ մի բան չէին կարող անցկացնել:

Բ.Կ.- *Թալան անողներն ասում էին, որ իրենք Հատուկ գնդից են:*

Զ.Ա.- Եզդիները, վրացիները, քրդերը, թուրքերը Ռուսաստանում վատ բան են անում, ասում են՝ հայ ենք: Դրա համար հայերը բոլորի աչքին ընկնում են: Կարող է՝ նույն բանն այդտեղ է եղել: Շատ դեպքերում ժողովրդի մեջ զոհվածների մասին խոսում են, թե հայն է խփել, չեն ասում, որ թուրքն է խփել:

Դեպի Շուշի գրոհի օրը՝ ամսի յոթին, ետ եմ եկել Շահումյան: Քանի որ նախկինում Գզողյան Ֆելիքսը մեր շտաբի պետն էր, հանդիպեց... Ես, դա գաղտնի էր, ոչ ոք չի իմացել: Ասացի. «Մնանք մի քանի օր», ասաց. «Դուք շուտ գնացեք, Շահումյանում պետք եք, այնտեղ ուժ է հար-

կավոր, գումարտակի հրամանատարը եկել է Ղարաբաղ, չի լինի»: Երբ նկանք, մյուս օրր մերոնք հարձակվեցին դեպի Շուշի և Լաչին: Իսկ Մարտակերտի ճակատում մերոնց հարձակումը եղել է Շուշիի ազատագրումից հետո, երբ «Արաբոյի» տղերքը զոհվեցին, հետո վնճ եղավ: Դա եղել է Շահումյանը հանձնելու ժամանակ: Նրանք այդ ժամանակ հրամանը չկատարող մարդիկ էին, պետական կառույց չէին: Նրանք կարող էին կռվել և ասել. «Մենք մեր փայը կռվել ենք, գնում ենք Երևան»: Նրանք կարող էին չենթարկվել և գեներալին, և գնդապետին: Այդ դեպքից տեղյակ եմ մի թեթև, խորը չգիտեմ: Իսկ այն ժամանակ, երբ «Արաբոյի» տղաները զոհվեցին, Ավետիսյան Ավետիքը, որը մեր ջոկատից էր, դարձավ «Արաբո» ջոկատի մի փոքր խմբի հրամանատարը:

1991 թվականին Ղափանում շատ լավ գործողություն կազմակերպեցինք: Շուռնուխ-Ղափան ճանապարհի հատվածը նախկինում անցնում էր ադրբեջանական սահմանով: Այդտեղ թուրքերը միշտ գալիս էին, մեր մնքենաներին խփում, մարդկանց պատանդ տանում կամ սպանում: Տարբեր վաշտերից հավաքած մի լավ գումարտակ ուղարկեցին այդտեղ: Հրամանատարը Բորիսն էր, ես նրա տեղակալն էի: Ոսկանը ՀԱԲ-ի վաշտի հրամանատարն էր: Նրա վաշտը այդպես էինք կոչում, որովհետև այնտեղ հավաքված էին ՀԱԲ-ի և Աբուլյանի տղաները: Այդ անտառի փեշին Ոսկանն էր հերթապահում: Այդ «դայլաղները» նորից գալիս են: Գալիս ենք հասնում, շրջապատում: Փոս էր, այնպես ենք անում, որ թուրքերը մտնում են այդ փոսի մեջ: Նրանք շատ էին՝ մոտ քսան հոգի: Մոտ քառասուն հոգի էլ մենք էինք: Նրանց մեջ տասը հոգի ռուսներ կային, նրանցից մի կապիտան զոհվում է: Այնտեղ մի խոզարած կար, ստացվում է, որ մեր միջի մարտիկը նա էր: Գնաց բերեց նրա ավտոմատը, ատրճանակը, զրահաբաճկոնը: Մյուս օրը Վազգեն Սարգսյանը եկավ Ղափան: Տղերքը ուրախ նստած էին: Եկավ հերթափոխում (развод) արեց, շնորհակալություն հայտնեց: 1991 թվականի ապրիլ ամսին էր: Այդ օրր ես Վազգենի հետ նստ եկա: Գնացինք այդ խոզարածի մոտ, ավտոմատը նստ վերցրեց: «АКС» էր՝ փողատակի նոնականետով: Այն ժամանակ միայն մեր հրամանատարը՝ Բորյան, ուներ դրանից: Ճանապարհին «Լրաբերի» աշխատակիցները մեզ նկարահանեցին: Մենք ոստիկանի համազգեստով էինք:

Երբ Կոռնիձորում էինք՝ 1990 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, Խորհրդային Միության ՆԳ նախարարի տեղակալը եկավ Կոռնիձորի կայերի մոտ և ասաց. «Այ, սա նորմալ է, թե չէ ծայրահեղական պրոհայիններ կան, որոնք առանց զինվորական համազգեստի պատերազմում են...»: Մենք ոստիկանի համազգեստով կամ աֆղանկայով էինք, որը նրան շատ դուր եկավ: Գիտեին, թե մենք ոստիկան ենք: Թեկուզ Հատուկ գունդը Ներքին զորքերին առընթեր էր: Մեր տղաներից մեկը՝ Մահակյան Սամվելը՝ երկրորդ դասակի հրամանատարը, որը հիմա Ավիացիայի վարչությունում է ծառայում, ասաց. «Դուք իզուր եք եկել պատեղ մեզ օգնելու, մենք կարող ենք մեր հարցերը լուծել»: Գեներալ լեյտենանտը թե՝ ինչ թե...

- Հենց այդպես, պարոն գեներալ, դուք մեզ միայն խանգարում եք, չեր թողնում մենք մեր հարցերը լուծենք:

Պատմում է
ՄԱՐՏԻՆ ԵՍԱՅԱՆԸ,
Ստեփանակերտ,
03.12.2005 թ.



1988-90 թթ. ծառայել եմ Խորհրդային Միության բանակում: 1990 թվականին շատ մեծ դժվարությամբ, ռուսական զորքերի օգնությամբ միայն կարողացա գյուղ վերադառնալ: Հինգ օր անց գյուղի ջոկատի հրամանատարը՝ Թեմուր Ռոստոմյանը, առաջարկեց անդամագրվել պարտիզանական ջոկատում: Գյուղում զենք չկար, շատ դժվար էինք ճարում, բայց գյուղը պաշտպանում էինք, այն շրջապատված էր ադրբեջանական 13 դիրքերով: 1992 թ. մարտի 4-ին առավոտյան ժամը 8-ին թշնամին մեծ ուժերով հարձակվեց գյուղի վրա: Չորս կողմից գնդակոծում էին: Թեմուրը բլինդաժից դուրս եկավ, գոռաց, որ գոնե գյուղի արևմտյան մասը վերցնենք, խաղաղ բնակչությանը տեղափոխենք: Երկրորդ մարդն էի, որ վազեցի Թեմուրի ետևից: Առավոտից մինչև ուշ գիշեր կրակոցները չէին դադարում, լսվում էին մարդկանց, վիրավորների գոռոցները: Մի պահ կեսօրին մոտս 4 փամփուշտ կար, որոշել էինք բարձրաձայն պատրոն չասել, որ ազերիները չհասկանան: Շատ ծանր օր էր մեզ համար: Անընդմեջ գնդակոծում էին: Այդ օրը գյուղում առաջին զոհը 18-ամյա Առուշանյան Մանվելն էր, հետո՝ Վազգենը: Նրանք թշնամու զորքերից ահագին կոտորել էին, հետո փամփուշտները վերջացել էին, վերջինը պահել էին իրենց համար: Նորիկը տեսել էր, որ Առուշանյանը վիրավոր է, օգնության էին կանչել: Սամվել Հայրապետյանը և Վոլոդյա Եսայանը այդ դիրքից ահագին վնասազերծեցին թշնամուն: Բայց երկրորդ օրը ստիպված էինք գյուղը թողնել: Մեկ շաբաթ հետո օպերացիա կազմակերպեցին, վերևի ադրբեջանական գյուղերը վերցրին: Վլադիմիր Բալայանի, Լեոնիդ Ազգալդյանի ջոկատներն էին մասնակ-

ցում: Հետախուզության արդյունքում պարզեցին, որ գյուղի վերևի մասում ադրբեջանական ուժերը շատ են, տղաները այդտեղ պետք է իրենց բոլոր հնարավորությունները ներդնեին: 11 հոգի կարծեմ այդտեղ զոհվում են, ետ նահանջելիս չէին տեսել, որ այդտեղ գնդացրի կետ կա, և ինկան գնդակոծման տակ: Բայց մեծ կորուստներ էին պատճառել թշնամուն, ահագին վնասազերծել էին: Դրանից հետո որոշվեց հետախուզություն կազմակերպել և ետ վերցնել Ղազանչի գյուղը: Թեմուրը, ես ու մի քանի տղաներ ելանք գյուղի բարձունքը, որտեղից ամբողջ գյուղը շատ լավ երևում էր: Բոլոր տվյալները, թե որտեղ են տեղակայված թշնամու դիրքերը, քանի հոգի են, ինչ տեսակի զենքեր են և այլն, նշեցինք, տվեցինք Վլադիմիր Բալայանին ու Լեոնիդ Ազգալդյանին: Երկու օր հետո հարձակվեցինք: Միայն մի դիրքից ազերիները շատ թույլ դիմադրություն ցույց տվեցին: Հենց առաջին կրակոցներից փախան, գյուղը ետ վերցրինք: Ես ֆիզիկական ու ռազմական պատրաստվածությամբ մեր մյուս տղաներից տարբերվում էի: Ցատկելիս Ազգալդյանը ինձ նկատեց, առաջարկեց մտնել իր ջոկատ և տղաներին սովորեցնել, թե ինչպես պետք է իրենց պահեն մարտի դաշտում: Գնացի Վլադիմիր Բալայանի տուն և ասացի, որ ես իր ջոկատն եմ մտնում: Մայիսի 10-ին նորից հարձակվել էին Մարաղայի վրա, մենք գտնվում էինք Աղաբեկալինջ գյուղի շտաբային գրասենյակում: Հրաման ստացանք անմիջապես պատրաստվել մարտի: ԲՄՊ- 2-ով և «Ուրալ» մեքենայով մենք շարժվեցինք: Մեքենան, Երրորդ սովխոզ չհասած, թողեցինք ճանապարհին: Գյուղը պաշտպանող տղաները նահանջել էին, գյուղի կեսից ավելին թշնամու ձեռքն էր անցել: Սկսեցինք հակահարված տալ: Կես ժամ չանցած՝ տղաներից Մուշեղը գլխից ծանր վիրավորվեց: Շատ ծանր մարտ էր: Նրանք տանկերով էին: Ճանապարհի աջ կողմում մի շենք կար, մտել էին ներս ու բոլոր պատուհաններից կրակում էին մեր ուղղությամբ: Մոխրաթաղցի Գարիկի մոտ ավտոմատ «Կալաշնիկով 5,45» կար: Վազեցի, վերցրի, կրծքավանդակս դիրքից մի քիչ վեր բարձրացավ: Ազգալդյանը գոռաց. «Պառկիր, հիմար, այդպես պետք չէ, կկրակեն»: Պառկեցի: Հետո Գիրոն գնդացրով կրակահերթ բաց թողեց շենքի ուղղությամբ, ու այդպես շարժվում էինք առաջ: Ասացին, որ ձախ թևը թուլացել է, ուժերը պակասել են, բայց թշնամին անցնում է մեր թիկունքը: Մեր դիրքի ետևի մասով ջրատար խողովակ էր անցնում: Վլադիմիրն ու Ազգալդյանը հրա-

մայնցին դիրքավորվել խոդովակի ետևում: Այնտեղից էինք կրակում, մի քանիսին սպանեցինք, ովքեր փորձեցին անցնել պատի մյուս կողմը: Մայիս անունով մի տղա կար, նրա արձակած գնդակները կպան խոդովակին, թռան ինձ վրա: Արյունը գլխիցս հոսում էր, սրբեցի, շարունակեցի կռիվը: Երբ մտանք գյուղ, բավական թվով թշնամու զինվորներ սպանված ընկած էին: Հասանք գյուղի տակը, գոռացին, թե՝ ձախ թևի վրա մի քանիսը մնացել են, փախչում են: Գիրոն սկսեց նրանց վրա կրակել: Պառկեցին: Այդ պահին մոտ 2 կմ հեռավորությունից դեպի մեզ էր գալիս նրանց տանկը: Տանկի ետևում շտապօգնության մեքենան էր: Մեր հրամանատարները պատվիրեցին շտապ ԲՄՊ-ն բերել այդտեղ: Բայց մինչ այն տեղ կհասներ, նրանք իրենց վիրավորներին շտապօգնության մեքենայով տարան, տանկը մի անգամ կրակեց մեր ուղղությամբ: Քանի որ նռնականետի արկը 500 մետրից ավելի չի թռչում, չկարողացանք խփել նրան: Թշնամին այդտեղ շատ կորուստներ տվեց: Գյուղում մի մարդ կար, որի ընտանիքի բոլոր անդամներին ազերիները դրանից մի ամիս առաջ դաժանաբար սպանել էին: Նա գյուղի վերջում՝ ճանապարհին, թշնամու դիակները հերթով շարել էր: Կռվի հենց առաջին պահից, երբ Մուշեղը վիրավորվեց, որպեսզի հանկարծ չհուսահատվենք, մեր հրամանատարը սկսեց ոգեշնչել մեզ, վարակել այն գիտակցությամբ, որ պատերազմում ամեն ինչ էլ լինում է, բայց պիտի ոչնչի առաջ կանգ չառնենք, ջարդենք նրանց, որ այլևս չկարողանան մեր ժողովրդին կոտորել ու խոշտանգել: Գյուղի ջոկատից մի տղայի, որ վախից դողում էր, Ազգալդյանը կանգնեցրեց, ասաց. «Տղա ջան, հանգըստացիր, զենքդ կարգին բռնիր ու տղամարդավարի իմ զինվորների հետ կռվի անցիր, հաստատ մենք գյուղը ետ ենք վերցնելու»: Այդ ոգով կռվելով՝ բոլոր մարտերում մենք 30-40 հոգով թշնամու հարյուրավոր զինվորների ու ռազմական հզոր տեխնիկայի դեմ էինք դուրս գալիս: Գյուղը վերցնելուց հետո երեկոյան վերադարձանք զորանոց՝ դիրքերը թողնելով տեղի ջոկատի հսկողության տակ: Դրանից հետո մեր ջոկատով շատ մարտերի մասնակցեցինք, որոնցից մեկի ժամանակ էլ զոհվեց Վլադիմիր Բալայանը: Այդ մարտում ես չեմ եղել, ուղեղի ցնցում էի ստացել: Տղաները պատմում են, որ խրամատից գլուխը բարձրացրել, հեռադիտակով թշնամու դիրքերն էր նայում: Գրադը պայթել է և նրան գլխից վիրավորել: Մինչ խրամատից կհասցնեին դուրս բերել, մահացել էր:

Հրաման ստացանք, որ պետք է մեր ջոկատով (Վլադիմիրի ջոկատն էր) մասնակցենք Սարսանգի ջրամբարի գրավմանը: Հրամանատարը Սուրիկ Գալստյանն էր: Տղաներով շարասյուն կազմած՝ գնում ենք հանձնարարված վայրը: Մեծ Շեն գյուղից մինչև ջրամբարի դիրքերը թշնամու ձեռքին էին: Գիտեինք, որ «Եղնիկների» տղաները իջնում, նրանց մեքենաների տեխնիկան վնասազերծում էին: Եվ երբ պատրաստվում էինք դիրքավորվել ու անցնել մարտի, տեսնում էինք, որ ճանապարհին թափված էին թշնամու ահագին թվով դիակներ, վառված զրահատեխնիկա: Կանգնեցի ձորի բերանին ու տղաներին կանչեցի, որ գան, տեսնեն: Այդ պահին մեր գլխի վրայով սկսեցին արկեր թռչել, շուտ վերադարձանք դիրքեր: Աջ կողմից Ստեփանակերտի գումարտակի տղաներն էին, ձախ կողմից՝ միայն մենք: Իմ ձեռքին գնդացիր էր, կողքիս Լևոնն էր, նա սնայպերով էր: Հրաման տրվեց կրակ բաց անել: Առաջին կրակոցներից թշնամին դիրքերը թողեց, փախավ: Ձորից դուրս եկավ մի ավտոբուս, «Տ-72» տանկ, «ԲՄՊ» զրահամեքենա: Ամեն կողմից գնդակոծություն սկսվեց, վառվեց ավտոբուսն էլ, տանկն էլ: Ուզում էին բլուրը բարձրանալ, բայց չհասցրին վերև հասնել, բոլորին կոտորեցինք: Ինձ մոտ երկու պարկ փամփուշտ կար, անընդհատ կրակում էի, կողքիցս ծուխ էր բարձրանում, հոտը քթիս մեջ էր: Լևոնի ձեռքին ռացիա կար, նրանց խոսակցությունները լսում էինք. մեկը մյուսին ասում էր. «Լավ է, լավ է, էդպես էլ պահեք», գոռգոռում էին, անուններ էին տալիս, թե՝ խփեցին, ընկավ: Այդ պահին մեզ շատ մոտ մի արկ պայթեց, ես վիրավորվեցի: Ինձ տարան Դրմբոն, այնտեղից՝ Չլդրան, հետո տեղափոխեցին Ստեփանակերտ: Ժամը 4:30-ին արդեն բոլոր դիրքերը մեր կողմից գրավված էին: Այդ ամբողջը ռուս հեռուստաժուռնալիստ Ալեքսանդր Նևզորովը նկարահանել էր: Ադրբեջանցիները այդ մարտում հսկայական զոհեր ու կորուստներ տվեցին: Նրանք էլ էին ասում, որ այդքան մեծ ուժերով չկարողացան կոտրել մեր փոքրաթիվ զորքի դեմ:

1990 թ. ամռանը գյուղապետը ինձ կանչեց և պատվիրեց նոր ստացած մեքենայով գնալ Մարտակերտ՝ խաղողի բերքահավաքին: Առավոտյան ճանապարհ եմ ընկնում, պիտի անցնեմ ադրբեջանական Ղարափիրիմլի և Փափռավանդ գյուղերով: Ճանապարհին ձերբակալեցին: Ինձ մի ռուս զինվոր էր ուղեկցում, նրա զենքերը վերցրին, մեքենան քշեցին Ղարաբաղ: Ճանապարհին ադրբեջաներեն հայհոյում են, թե՝ սա

ղազանչեցի է, պիտի սպանենք: Նրանց պատասխանեցի, զարմացան, որ ադրբեջաններն գիտեմ, բայց որ ղազանչեցի եմ, հաստատ չգիտեին: Ինձ մի ամբողջ օր պահեցին Ադդամում, երևի ոստիկանությունում, աչքերս կապած էին, ես ոչինչ չէի տեսնում: Նստեցրել էին աթոռին, ձեռքերս կապել: Հարցրին՝ «Ձեր գյուղում գրոհայիններ չկան Հայաստանից եկած»: Ասացի՝ ոչ: Գլխիս փայտի ուժեղ հարված զգացի: Փայտը երկու կես եղավ: Մինչև առավոտ 27 հոգի ինձ ծեծեցին: Հաշվում էի, թե քանի մարդու ձեռք է ինձ կպնում: Մի քանիսն էլ եկան քացով խփեցին, ապտակեցին, գնացին, իրենք էլ էին հոգնել: Ցաքատով խփեցին, ձեռքով պահեցի, սուր մասը մտավ ձեռքս: Մտածել էին՝ այլև չեմ դիմանա, կմեռնեմ: Առավոտյան մի չաղ մարդ եկավ: Ենթադրեցի, որ ոստիկանության պետն է կամ տեղակալը: Պատվիրեց ինձ ձեռք չտալ, արյունը մաքրել: Մի ռուս փոխգնդապետի էլ էին ձերբակալել, վախենում էին, որ կգան, ինձ այդ վիճակում կտեսնեն: Ռուսը եկավ հարցրեց թե՝ ծեծել են: Չպատասխանեցի: Բայց տեսնում էր, որ կիսամեռ վիճակում եմ, ինձ ոտքի վրա չեմ կարողանում պահել: Թել տալու պատրվակով տարան ուրիշ սենյակ ու նորից սկսեցին հարցաքննել: Ասացի, որ մեքենայով ընդամենը աշխատանքի էի գնում: Բաց թողեցին, հանձնեցին Մարտակերտի ոստիկանությանը: Մի ամբողջ օր պառկեցի հիվանդանոցում: Երբ գյուղ վերադարձա, Թեմուր Ռոստոմյանից ավտոմատ խնդրեցի, որ գնամ վրեժս լուծեմ: Ընկերոջս ու քեռուս տղայի հետ գնացինք, իջանք ձորը: Մոտ 60 տարեկան մի մարդ ոչխարներն էր արածեցնում: Սպանելու միտք չունեի, ուզում էի ոչխարները քշել, բերել գյուղ: Գոռացի, թե՝ հրացանդ գցիր: Նա շրջվեց, հրացանը կտրուկ բարձրացրեց և ուզեց կրակել: Ես հասցրի ավելի շուտ ավտոմատով երեք անգամ կրակել: Փամփուշտներից մեկը կպավ ոտքին, ընկավ: Առաջ գնացի, 7-8 մետր հեռավորությունից մնացած 27 փամփուշտները կրակեցի գլխին ու մեջքին: Ոչխարներն էլ ընկերս կոտորեց: Հրացանը վերցրինք եկանք գյուղ: Գյուղացիները վախեցել էին շատ, որ իբր գնացի, մեղվի բույնը բզբզեցի, հիմա կգան, իրենց կկոտորեն, նույնիսկ ծնողներիս վրա կոիվ եկան: Հրամանատարը սաստեց նրանց, որ միևնույն է, արդեն պատերազմն սկսվել է: Եվ որպես պատիժ այդ երեքիս ուղարկեց գյուղի վերևի դիրքերը պահելու: Բայց դա ինձ համար ոչ թե պատիժ, այլ խիղճս թեթևացնելու միջոց էր: Դրանից հետո ուղիղ 8 անգամ մահվան վտանգից եմ

ազատվել: Ճանապարհներին մեքենաս մի քանի անգամ գնդակոծությունն տակ ընկավ: Հայրս միշտ ասում էր, որ այդ մեքենայով վտանգավոր է, կսպանեն ինձ: Մի անգամ տուն վերադառնալիս տնից ընդամենը 150 մետր հեռավորության վրա փորձեցին ինձ բռնել: Մոտ 60 փամփուշտ օգտագործեցի՝ պաշտպանվելու համար, վիրավորվեցի այդ ժամանակ: Տեսան, որ չի հաջողվում ինձ վերցնել, նոնակ նետեցին գյուղի վրա: Գյուղում ռուս զինվորներ կային, որոնք կրակ բաց արեցին թշնամու ուղղությամբ: Դրանից հետո միայն սկսեցին փախչել:

Գյուղապետը ինձ ուղարկեց Կիչան, գյուղի համար վառելիք բերելու: Գյուղի ռուսական զորքի հրամանատարի ուղեկցությամբ հասանք Կիչան, մի տակառ բենզին, մի տակառ սոլյարկա վերցրինք ու վերադառնում ենք: Ճանապարհի կեսին ռուս հրամանատարին ասացի, որ վնանը լիցքավորի, որովհետև վտանգավոր գոտիում ենք, ամեն րոպե կարող ենք գնդակոծության տակ ընկնել: Ասաց՝ չէ, ոչ մի վտանգ էլ չկա: Մեր հետևից այդ պահին երկու կողմերից սկսեց կրակ տեղալ մեզ վրա: Գնդակներից մեկը կպավ մեքենայի ռադիատորին, ջարդեց, ջուրը թափվեց կարբյուրատորին, մեքենան կանգ առավ: Հրամանատարին ասում եմ՝ կրակեք: Նա չի հավատում, որ ադրբեջանցիներն են, կարծում է, հայերն են: Գնդակներից մեկը մեքենայի ապակին ջարդելով՝ կպավ նրա գլխին: Արյունը հոսեց, նոր միայն սկսեց կրակել: Մեքենան մի կերպ շարժի գցեցի, մի քիչ առաջ անցանք, մի երկար կրակահերթ բաց թողեցին: Մանիքլու, Բաշ Գյունեփայա, Օրթա Գյունեփայա ադրբեջանական գյուղերի արանքով էինք անցնում: Ռուս հրամանատարը ասում էր, որ դրանք հայերն էին: Ասում եմ՝ հնարավոր չէ, իմ մեքենան մերոնք լավ ճանաչում են: Մեծ դժվարությամբ գյուղ հասանք: Մի քանի օրից լուր ստացանք, որ Ռուսաստանում մեր գյուղացիներից մեկը մահացել է, պետք է դիակը բերենք, գյուղում թաղենք: Նախագահը ինձ պատվիրեց գնալ Ստեփանակերտ և դիմավորել, որովհետև ուրիշ ոչ մի վարորդ չէր համաձայնվում: Դիակը վերցրինք, եկանք Կիչան, տղաների մի մասը այնտեղ էին մնացել: Չորս հոգով՝ ամենքս մեքենայի թափքի մի կողմում, ավտոմատները ձեռքներիս, գալիս ենք գյուղ՝ հաստատ համոզված լինելով, որ ճանապարհին գնդակոծության միջով ենք անցնելու: Ճանապարհի երկրորդ շրջադարձին սկսում են տարբեր կողմերից կրակել: Պատասխան կրակ բաց արինք՝ մինչև վերջին փամփուշ-

տը: Երկու հոգի մերոնցից վիրավորվեցին: Մինչև հիմա հավատս չի գալիս, որ կենդանի դուրս ենք պրծել այդտեղից:

Մանուկը խիզախ տղա էր: Մառախլապատ օր էր, վրանի մոտ թուրքերը ծխախոտ էին վառել: Մանուկը նռնականետով խփեց: Ինձ մոտ էլ «ՌՊԳ-5» էր ու նռնականետով «Կալաշնիկով»: 45 հատ փամփուշտ իրենց վրա թողեցի: 20 մետր էր հեռավորությունը: Հանեցի նռնակը, գցեցի, կպավ ճյուղին: Ասացի՝ «Տղերք, փրկվեք»: Դա «ՌՊԳ-5» նռնակ էր, եթե «Ֆ-1» լիներ, բոլորիս կկոտորեր: Գլուխս մի քիչ թափ տվեցի ու կրակեցի: Գիրոն էր, Աբարատ անունով մի տղա: Երբ ես ուզում էի նռնականետով կրակել, այդ նույն ծառի ուղղությամբ մի արկ եկավ, կպավ ծառին ու պայթեց: Հետո ոչինչ չեմ հիշում, քանի որ վիրավորվեցի: Ալիքը ինձ էլ տարավ, քաշել-գցել էր մի փոսի մեջ: Հետո հանել էին փոսից ու տարել: Ասում են՝ ուղղաթիռով են տարել: Գլխից ու ձեռքից էի վիրավորվել:

Պատմում է՝ ՊԱՎԵԼ ՍԱՀԻՅԱՆ (1988-89 թթ. ԼՂԻՄ-ի Մարզային խորհրդի պատգամավոր, «Ամարաս» բարեգործական հիմնադրամի խորհրդի անդամ), Ստեփանակերտ, 19.12.2006 թ.

1988-89 թթ. ժամանակահատվածի համարյա բոլոր նստաշրջաններին մասնակցել եմ: Քանի որ ես բանվոր դասակարգի ներկայացուցիչ էի, աշխատում էի շինարարությունում՝ որպես էլեկտրիկ, ինձ էին դիմում, որպեսզի հարցադրումներով բարձրացնեի ամենասուր խնդիրները: Ես վախ չունեի, համարձակորեն խոսում էի մեր պահանջների մասին, քանի որ պաշտոն չունեի, որից կարող էին հանել: Առաջին նստաշրջանը՝ կապված Ղարաբաղի՝ Ադրբեջանի կազմից դուրս գալու և Հայաստանին միանալու հարցի հետ, 1988 թ. մարտի վերջին էր: Մինչ այդ՝ փետրվարի 13-ից, միտինգներով էինք արտահայտում մեր պահանջը: Նստաշրջանին ներկա էին Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Բագիրովը, արհկոմի աշխատողներից, իսկ Կևորկովը չէր եկել: Մեր ղեկավարությունը, նաև՝ Կևորկովը, դեմ էին, պնդում էին, որ այդ գործը գլուխ չի գա: Նստաշրջանի ժամանակ փորձում էին համոզել, որ լավ կլինի, ասում էին, որ այսքան օգնություն են տվել, տարածքային ընդարձակում, կարգավիճակի բարձրացում և այլն: Ես հիշեցրի կոնկրետ տեղերում կատարված անարդարությունների մասին: Հարցադրումները, նստաշրջաններում դրանց բարձրացնելը ղեկավարում էր պատգամավոր Արկադի Մանուչարովը: Մի անգամ էլ պատրաստվում էինք նիստի, պատգամավորների ճանապարհը ադրբեջանցի ոստիկանները, զորքերը փակել էին. պատգամավորների 52 տոկոսի բացակայության դեպքում քվորում չէր լինում: Տղաները անտառներով, զարտուղի ճանապարհներով տեղ հասան, ներկայացան նստաշրջանին: Մեզ հաջողվեց նիստը գումարել և որոշումը ընդունել: Այնուհետև խզեցինք կապերը Ադրբեջանի հետ:

«Ամարասի» ստեղծման գաղափարը շատ ճիշտ էր: «Հաղթանակի» հրապարակում ցույցի ժամանակ առաջինը ես եմ մարդկանց զինվելու

կոչ արել, որովհետև միայն միտինգներով մեր հարցը չէր լուծվի: Ադրբեջանցիները արդեն զինվում էին, իսկ մեզ լրիվ զինաթափ էին արել, նույնիսկ որսորդական հրացան չէին թողել: Արթուր Ալեքսանյանը զենքը ուղարկում էր, ես օդանավակայանում ընդունում էի: Իր օգնականը՝ Լյովան, առավոտից երեկո այնտեղ էր: Այն արկղը, որի մեջ զենքն էր, խաչով նշան էր արված: Ամենադժվարը օդանավակայանից հանելն էր: Սկզբում, երբ ռուսներն էին, ավելի հեշտ էր: Պարետին կաշառում էինք՝ փող, գինի, օղի էինք տալիս, որ չնայի, չտուգի: Հետո, երբ ադրբեջանցի օմոնականները եկան, որևէ բան դուրս բերելն անհնարին էր: Մի անգամ նույնիսկ բռնվեցինք, բայց ռուսների ժամանակ էր: Պարետը փոխվել էր, հավանաբար մատնել էին: Ավտոբուսը բերեցինք, որ զենքը հանենք, վարորդն ինձ ասաց, որ դուրս գանք օդանավակայանից: Ես այդ մարդուն շատ լավություններ էի արել, նա էլ ինձ փրկած լինելու համար զգուշացրեց: Դուրս եկա, ճանապարհին մեքենաս շրջապատեցին: Բարեբախտաբար մեծ քանակության գործ չէր՝ մեկ կարաբին էր, 2 որսորդական և փամփուշտներ: Չնայած այն ժամանակվա համար դա մեծ բան էր, թուրքերը նույնիսկ մեծ դանակներն էին հավաքել: Մեր ոստիկաններն էլ քանի անգամ եկել են ծեծել, թե՝ պահած զենք ունեք, հանեք: Պարզվում է, որ դեռ Երևանում ասել են, որ ինքնաթիռում ինչ-որ բան կա: Մատնիչները հիմնականում ոստիկաններ էին, փողով մատնում էին: Պատերազմն սկսվելուն պես մատնիչները փախան, գիտեին, որ իրենց սպանելու են: Գրիգորի անունով մեկը կար, նրան ասել եմ, որ իմ ձեռքով է գնալու: Հիմա փախած է, չկա:

Զենքը ինձ մոտ էլ էի պահում, Մուրադին էլ էի տալիս: Բաժանում էինք շրջաններում, գյուղերում, որտեղ կռիվ կար: Մի անգամ մեքենայով ինձ հետապնդում էին: Կրկժանում թեժ մարտեր էին գնում: Մեքենաս բռնագրավեցին օմոնականները, բայց զենքը հետս վերցրի ու փախա: Զենքը թաքցրի, զանգեցի Ռոլեսին, ասացի, որ իր մեքենան պետք է: «24» մակնիշի մեքենա էր, տվեց, զենքը տեղափոխեցինք և ցրեցինք:

Մեզ հետ Արգումանյան Վովան էր, Ամուլյան: Արթուրը մի քանի կետերի զգուշացնում էր, թե՝ «Մակարոն եմ ուղարկում, դիմավորեք»: Ես գիտեի՝ որ մեքենայում են խաչով արկղերը:

Դրմբոնի կռվին եմ մասնակցել, որտեղ մեր տղերքից 4 հոգու կորցրինք: Շրջապատման մեջ էինք ընկել: Բոլոր կողմերից խփում էին՝ տանկով, ինքնաթիռով: Թուրքերը հզոր տեխնիկա ունեին: Իմ երկու տղաներն էլ կռվի մեջ էին:

Պատմում է ՎԱԼԵՐԻ ՆԱՆԱԳՈՒԼՅԱՆԸ, Մոսկվա, 11.07.2006 թ.

Էդիկի տղան՝ Բաղրյան Նելսոնը, որը դպրոցի զինղեկավարն էր, կանչեց և ասաց, որ պետք է ջոկատում սակրավորություն անեմ: Բանակում որպես ականազերծող եմ ծառայել: Ռադիկի ջոկատից մի տղայի հետ Պուշկին Յալում պիտի ականապատեինք: Ինձ հետ երկու տղա էր տվել, մի զենք, որը Նելսոնի ձեռքին էր: Ականները տեղադրեցինք, եկանք: Արմենին օգնական ենք վերցրել: Խումբը չորս հոգուց էր կազմված: Բազան Չլդրանում էր: Կիչանի ճանապարհը փակ էր: Սուրիկի հետ ենք: Դուրս եկանք Կիչան: Վլադիմիրի տղաների մոտ ենք: Հինգ հոգով գնում ենք երկու ական դնում: Ժամը հինգին առավոտյան ետ ենք գալիս: Արջաձորի ջոկատը պետք է բարձունքի վրա հարձակվեր, Արջն ու Վլադիմիրը՝ Սրխավենդի վրա: Առավոտյան ժամը 6-ին էր օպերացիան: Արթնացա, ոչ ոք չկար: Դուրս եկա: Տեսնեմ «Ալազանով» են խփում: Ետսա՝ արկը մնացել է, լռվել: Մեկն էլ ընկնում է ետևի վրա, պայթում: «Կամազի» վրա են գնդացրով կրակում: Թուրքերը բարձունքը տվել են, ուզում են Կիչանը ետ վերցնել: Դա մինչ Խոջալուի գրավումն էր: Մաքսիմ գնդացիրներով տղաներ եկան: Առաջին տեխնիկան խփեցինք: 15 օր մնացի այդտեղ: Հրկիզող փամփուշտներով վառում էին Կիչանի տները: Չլդրանի ջոկատների հարձակումն էր Բաշ Գյունեփայա գյուղի վրա: Ցանհինգ օր մնացի այդտեղ: Նելսոնը տանն է եղել, ասաց, որ մերոնց մոտ ամեն ինչ լավ է:

Ստեփանակերտի զորամասից ինը տեխնիկա տվեցին: Նորմալ անցան, հասան Մարտակերտ: Նելսոնը տանկով առանձին է գալիս: Տանկը անտառի ճանապարհին լռվում է: Մի կերպ գործի ենք գցում: Նելսոնը մրսում է: Մարտակերտի ֆերման, որ Փափռավանդի մոտ է, ականները Նելսոնի հետ պետք է դնենք, 12 հատ հետևակային է, կեսը՝

ինքնաշեն, մնացածը՝ սովետական, հին: Տրաքոց եկավ: Նելսոնը պայթում է: Դուրս ենք բերում:

Մանիքլուի վրա ենք գնում: Մի կողմից Վլադիմիրի ջոկատն է, հետո Ռադիկի ջոկատը, քիչ այն կողմ Բեկոր Աշոտն է մտնում, Հաթերքի տղերքն էլ են գալիս: Միջանցք էր թողնվել, որ թուրքերը դուրս գան: Վլադիմիրի ԲՄՊ-ն պայթում է: Վագիֆը դեռ կար: Մանիքլուի մոտ են ինձ ուղարկում: Երեք ական եմ հանում: Թուրքերը խփում են: Մանիքլու գյուղ ենք մտնում: Տեսանք գյուղի մոտ թուրքերի երկու շարասյուն, որը պետք է գնա դեպի Նարեշտար: Ճանապարհը բաց է, բայց ինչ-որ բանից վախեցած՝ կանգ են առել: Տեսա մի թուրք պառկած: Մոտեցա: Ասում է՝

- Գյուղսովետից փախչողների վրա կրակում են: Կնոջս դրել ենք բեռնատարի մեջ, ուղարկել:

- Ո՞վ է օգնել:

- Գնացել են:

- Ձենքդ տուր:

- Ձենք չունեմ:

Ձենքը կողքին է: Վերցրի ձեռքից: Մանուկը գիշերը գնացել էր ականապատել: Բայց պարզվեց, որ մեքենաներ պետք է անցկացնեինք, նոր միայն ականապատենք: Ստիպված ճանապարհը ականազերծեցինք, մեքենաները անցկացրինք, նորից ականապատեցինք: Մտել ենք բանկը: Մանուկն ասում է՝ բացենք սեյֆերը, լիքը փող կա մեջը: Մի կերպ բացեցինք: Զորսն էլ դատարկ էին, մեկի մեջ կոշիկի դատարկ արկղ կար: Տրակտորիստը, որը լալ էր, պետք է հետը Բաշգյունեփայա գնանք, ճանապարհը կարգի բերենք: Սոյարայուղը վերջանում է: Այդ լալի հետ մնում եմ գիշերը տրակտորի մեջ: Միայն երրորդ օրը սոյարայուղ ենք բերում: Գիշերը լալը կենդանիների նման ձայներ է հանում: Աշխատանքի ժամանակ ականը պայթեց: Տրակտորի շերեփը ցրիվ եկավ:

Հիմնականում Վլադիմիրի ջոկատն էր: Բոլորի ուշադրության կենտրոնում հետախուզությունն էր:

- Ձենք չունեցող մարդկանց վրա չկրակեք, - զգուշացնում էր Լեոնիդը:

Գիշերը մնում են ծմակում, չի թողնում, որ կրակ վառեն: Թուրքի դիրքերում ինը հոգի էին: Երեքին խփում են, վեցը փախչում են: Ես, Վլադիմիրն ու Ղուկասյան Արթուրը դեպի Աղդաբան իջնելիս հանում

ենք առաջին տանը, ընդունված էր, որ պետք է մի երկու տուն հրկիզես, ծուխն էլ հերիք է, որ հակառակորդին սարսափ պատի, ու այլևս չդիմադրի ու փախչի: Իսկ փախուստի ճանապարհ դեպի Քյալբաջար թողել ենք: Մեքենան շրջվեց: Թուրքերը ամեն կողմից կրակում էին: Ll հոգու գերի ենք վերցնում: Թուրքերի մեջ մի չափարեցի կին էլ է զոհվում: Երկու մեքենա Գրադի հրթիռներ ենք վերցնում, «Ալազանի» կայանք ենք վերցնում: Դրա հաջորդ օրը թուրքերը Միրբաշիրի կողմից հարձակվում են Մարաղայի, Մարգուշեվանի վրա, ահագին մարդիկ կոտորում, գերի տանում: Շտաբում չգիտեին, որ թուրքը Մարաղա է մտել: Ես, Արմենչիկը, Սուրիկը, էլի մի տղա գնում ենք Լենինավան: Տեսանք մերոնցից երեսուն հոգի մի տեղ նստած: Թե՝

- Թուրքերը Մարաղա են մտել, մի՛ գնացեք:

Տեսնենք Մարաղայի տներն այրվում են: Ճանապարհին, քիչ հեռվում ջրանցքի մեջ տեսա մարդիկ են շարժվում: Ասում եմ՝

- Ովքե՞ր են:

- Թուրքերի պոստն է:

- Ու հանգիստ նստել եք:

- Բա ինչ անենք:

Մարաղայի ջոկատի հրամանատար Ռոման շուտ էր մեքենայով փախել: Ոչ ոք չուզեց կռվել: Մարգուշեվանի գինու գործարանի կողքով անցնում ենք, տեսանք հենց առաջին տան պատշգամբում մարդ կա, որը ինչ-որ բանի է սպասում:

- Թուրք ա, - ասացի ես:

- Կարմիրավանի տղերքն են, մզանավ շուլուղրն անում, - ասաց Արթուրը:

Համոզված էի, որ թուրք է, կրակեցի: Ուսին կպավ: Ուսից բռնած փախավ: Մյուս տներից էլ դուրս թափվեցին թալանի եկած թուրքերը, փախան: Արյան հետքերով գնացինք: ԲՏՌ-ներ են գալիս: Թողնում ենք, որ մոտենան: Տղաներից մեկին ուղարկում եմ Մարտակերտ, որ նռնականետ բերեն՝ զրահամեքենային խփելու համար: Բայց մինչև նռնականետը գալը, զրահամեքենան հեռանում է: Արդեն ll հոգի ենք: Տեսնենք թուրքերի մի հսկա ամբոխ է գալիս: Ջոկատի հրամանատար Արմեն Նավթալյանն ասում է՝ թողնենք մոտենան, նոր սկսենք կրակել: Ասում եմ՝ նրանք շատ են, մարտի բռնվելու դեպքում կպարտվենք, մեր դիրքն էլ հարմար չի: Ավելի լավ է մի երկու կրակահերթ թողնենք: Իրոք, մի

կրակահերթից հետո թուրքերը կանգնում են, հետո ետ դառնում: Նրանք եկել էին իրենց սպանվածներին տանելու: Մենք գրավում ենք մեր պոստերը: Երկրորդ անգամ են հարձակվում: Հայկազը, որը շտաբի պետն է, հայհոյում է, թե քո տեղադրած ոչ մի ական էլ չի պայթել: Բայց ոնց կարելի է այդպես ասել, տանկ, զրահամեքենաներ, ավտոներ են պայթել: Ասում է՝ նռնականետով են խփել: Բայց ես ապացուցում եմ, որ ականի վրա պայթելուց հետո են խփել տղաները: Գնացել են պոստը, որտեղ 20 ականներից 19-ը պայթել են: Ավտոբուս, «Երազ» մեքենա, զրահամեքենաներ են պայթել: Հակահետևակային ականներն էլ են պայթել: Տեսանք մի տեղ թուրքի գրոհայինը մեջքը դեմ տված փշալարերին, ձեռքին պինդ բռնած ձեռքի գնդացիրը, ոտքեր չունի, այդպես մահացել է: Պետք է տղաների ոգին բարձրացնել, բայց վայրենի հրամանատարների հետ ինչ անես: Մեր զրահամեքենայի վառելիքն է վերջանում, երկու եղբայրները մեջը: Նռնականետով խփում են, հրկիզում, եղբայրները այրվում են:

- Մարտակերտի կողմից յայնամասշտաբ հարձակում էր նախապատրաստվում, որը խայտառակ պարտությամբ ավարտվեց:

- Գեներալ Հարությունովը կանչում է, թե ստորագրություն տվեք, որ կամավոր եք գալիս կռվելու: Ասում եմ, տնաշեն, որ եկել ենք, ուրեմն մեր կամքով ենք եկել, թե չէ՝ չէինք գա, մեզ ոչ է ստիպում: Թե՝ գնացեք փոքր ջրանցքի կամուրջը պայթեցրեք: Բայց երեք կամուրջ կա, երեքն էլ պետք է պայթեցնել: Ասում եմ՝ խնդիր չկա, կարող ենք պայթեցնել, բայց ոչ մի իմաստ չունի պայթեցնելը, քանի որ փոքր ջրանցքով ամեն տեխնիկա էլ անցնում է: Երեք հոգի ենք: Ահագին պայթուցիկ նյութ է պետք տանել: Հետո՝ մեր թիկունքը պահել է պետք: Իսկ գինու գործարանում արդեն թուրքերը դիրքավորվել են, ջրանցքի կամուրջը 150 մետր է այդտեղից հեռու: Ասում եմ՝ հարձակվելու դեպքում ինչու՞ ենք անպայման կամրջով անցնում, որը, հնարավոր է, ականապատած լինի: Մի խոսքով, անկազմակերպ հարձակում է: Հասանոյայի, Փափռավանդի, մյուս ուղղություններով պիտի հարձակվենք: Նանագուլան Սամվելն էլ է շտաբում: Զրահամեքենա ենք նստում, գնում: Մառախուղ է: Տեսնում ենք մեր ետևում մարդիկ կան: Թուրքերն են: Կրակում են մերոնք: Նռնականետ աշխատեց: Չկպավ, մեր ետևում պայթեց: Լենինավանի ջոկատը դեռ չկար: Տեսա՝ ուշացած եկան: Ասում եմ՝ Սերգեյ, ինչու՞ եք ուշանում, դուք մեզանից ավելի շուտ պիտի գայիք: Թուրքերը, տեսնելով

մեր յայնամասշտաբ հարձակումը, «Գրադ» կայանք են տեղադրել, բոլոր կողմերից վրա են տալիս: 30 մետր հեռվում է պայթում: Թադևոսյան Կիրարն է իմ ետևից գալիս: Թուրքերի ավտոբուսներն անընդհատ զինվորներ են բերում: Մեր տանկը գալիս է, հենց էնպես կրակում: Մեր ռակետները չեն աշխատում: Թե ինչ էր դա, չհասկացա: 80 մ փոքրող ենք գնում: Տեսնում ենք մարդ չկա: Գրադի արկը պայթել է, մեկը զոհվում է, մյուսը՝ վիրավորվում: Մի զրահամեքենա եկավ, ասացին, թե Հասանդայի մոտ «Արաբո» ջոկատի անդամները լրիվ կոտորվել են: Թուրքերը նոսրացել են, դիմավորել: Մարտակերտից մի տղա կար, Զանգեզուրի ուղղության հրամանատարն էր, մտնում է թուրքի խրամատը, բոլորին քշում, բայց փամփուշտը վերջանում է: Էդպես էլ չկարողացան ոտնձգել մարմինը: Թուրքերը չտվեցին: Բոլոր ուղղություններով պարտություն կրեցինք: Թուրքերը ամեն տեղ ապատում էին: Իսկ Լեոնիդ Ազգալդյանի կազմակերպած օպերացիաներում զոհեր չէին լինում: Այսպերն՝ վերևներից մատնություն կար:

Լեոնիդ Ազգալդյանի զոհվելու հետ դու մեկ այլ տարբերակ ունեիր:

Դաստագիր գյուղն էր գնացել, Շահումյանից փախած մարդիկ կան, պիտի տեսներ նրանց, եթե մեջքները զինվորներ լինեին, պիտի ռակետներով համապատասխան ազդանշան տար, որ տղաները գան, տեղափոխեն: Ետ գալիս անտառում պատահում է այդ դեպքը: Տեսնում ենք՝ մի հոգի հատեց անցավ ճանապարհը, մի հոգի էլ կանգնած էր ծառի տակ, բարձրում: Պավլիկը՝ վարորդը, ետ է տալիս մեքենան, որ փախչեն, իզուր մարտի չբռնվեն: Տեսնում է, որ բացվել է Լեոնիդի կողմի դուռը, ինքն էլ արագ դուրս է նետվում ու փախչում: Ինքը չգիտեր, Լեոնիդը դուրս էր եկել ավտոյից, թե ոչ: Ետևից կրակել են, մի բիչ քերծվել էր: Պայթյուն էր լսել: Կարծում էր, որ նռնականետով են խփել: Իսկ որ մենք տեսել ենք, մեքենային ոչինչ չէր եղել: Լեոնիդի կողմից դուռը բաց էր, թերը մեքենայի մեջ, նռնակը ձեռքին, ավտոմատը ձեռքին, մահացած: Սրտին էր կպել գնդակը:

Հիմա գանք Մարտակերտի ինքնապաշտպանության ղեկավար Վագիֆ Գալստյանի հետ պատահած դեպքին:

Վագիֆի վարորդը ղեկավարի անունից ասում է, որ Մատաղիսից դեպի Մաղավուզ տանող ճանապարհը ականապատեմ: Կապի Վիգեն կար, նրա մեքենայով պիտի գնայինք: Ականապատում ենք, բայց նաև նշանակ կար, որ ամեն ականապատած վայրում պետք է պոստ լինի,

որ Զայլուից, Մատաղիսից փախչող մարդիկ չպայթեն մեր դրած ականների վրա: Գնացել տեսել եմ, որ ոչ մի մարդ էլ չի մնացել այդ պոստերում: Ատավոտը ժամը վեցին Վալերիկը գալիս է իմ ետևից, թե տանկը գալիս է դեպի Լուլասազ /Հակոբ Կամարի/ շտապ պետք է գնամ ականապատեմ ճանապարհը: Առավոտյան իրենց «ՌԱԶ» մեքենայով Վագիֆը Կարապետյանի հետ այդ ականի վրա պայթում է, քանի որ ոչ որ չկար, որ զգուշացներ ականապատած տեղի մասին: Իհարկե, իր՝ Վագիֆի, հրամանով եմ ականապատել: Վիգենը գիտեր, որ պոստ կա, մարդ կա տեղում, որ զգուշացնի, իսկ կոնկրետ ականապատման տեղը չգիտեր: Երեք հոգի զոհվում են: Ստեփանակերտից եկած «Ուրալ» մեքենան էլ է պայթում մեր ականի վրա: Ստացվում է, որ ականապատման հրամանը սխալ էր: Հույսները հերթապահությունն էր, որը չկար, քանի որ փախեփախ էր ընկած, ամեն մեկն ուզում էր իր ընտանիքը շուտ տեղափոխեր: Երևանում կանչեցին, կարծում էին, թե դիտավորյալ Վիգենի ետևից որս էր արվում: Բացատրեցի, որ դա անհնար է:

70-ամյա թալիշեցի մի կնոջ թուրքերը սպանել են, հետո այրել մարմինը:

Գիշեր, ցերեկ ցեխի, ջրի մեջ...: Վլադիմիրի անունը «Օսեփ» էր: «Դուխով» տղա էր: Եթե ինքը գնում է մի ուղղությամբ, բոլորն էլ գնում են ետևից: Իսկ Լեոնիդը խիստ էր: Դա երբեմն դուր չէր գալիս տղաներին:

- Հավատում ես, որ Լեոնիդին խփած լինեն:

- Չեմ հավատում: Նա քեզ հետ ինչ-որ հարց ուներ:

- Հա, նոր էի վերադարձել Ղարաբաղյան ռազմաճակատից, երեկոյան զանգեց Լեոնիդը, թե՝ Բակուր, առավոտյան ժամը 6-ին Ղարաբաղ ենք գնում, պետք է գաս, քո կարիքը կա այնտեղ: Ասացի՝ Լեոնիդ, ես հենց նոր եմ վերադարձել, պետք է նյութեր հանձնեմ «Ազատամարտ» թերթին, որի արցախյան բաժնի վարիչն էի, ու ասացի՝ «Ժամը 8-ին կարող եմ գալ»: Ասաց, որ ժամը փոխել չեն կարող, բայց երկու օրից եր կգա, նոր միասին կգնան, քանի որ իմ կարիքը շատ ունի, մի հարցում պետք է օգնեմ իրեն: Հավանաբար, հարցը վերաբերում էր Վագիֆի հետ հարաբերություններին: Ինձ հայտնի էր, որ ոչ մի կերպ նրանց հարաբերությունները չէին ստացվում, որից տուժում էր ընդհանուր գործը՝ հայրենի եզերքի ազատագրումը:

Պատմում է ՇԱՎԱՐՇ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ (կինոօպերատոր), Երևան, 01.05.2006 թ.

Ծնվել եմ 1950 թ: Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել եմ Համամիութենական կինոյի ինստիտուտի օպերատորական ֆակուլտետը: Ավարտելուց հետո աշխատել եմ «Հայֆիլմ» կինոստուդիայում, նկարահանել եմ գեղարվեստական և վավերագրական ֆիլմեր: Երբ սկսվեց հայոց համազգային շարժումը, ես զինվորագրվեցի իմ տեսախցիկով, մեկնեցի Ղարաբաղ, Հայաստանի տարբեր շրջաններ և նկարեցի այդ պատմական կարևոր պահերը: Մասնակցել եմ պատերազմական շատ գործողությունների, շատ տեխնիկա եմ փչացրել այդ ճանապարհին, բայց կարևոր արխիվ եմ ստեղծել հետագա սերունդների համար՝ մոտ 1500 ժամ նյութ:

1992 թ, ապրիլի 29-ին, այն ժամանակ մեր զորքերի ղարաբաղյան ճյուղի հրամանատարը Արկադի Տեր-Թադևոսյանն էր, «Հարսանիք լեռներում» օպերացիան էր, մինչ Շուշիի գրավումը հարկավոր էր ստուգել թշնամու ուժերը: Ես չգիտեի, թե ինչ է նշանակում «ստուգել», ես պարզապես նկարում էի: Կոմանդոսին խնդրեցի, որ Շուշիի գրավման օրը կարողանամ հարձակվող զորքերի հետ բարձրանալ, ավելի հետաքրքիր, կարևոր կադրեր նկարելու համար: Նա խոստացավ օգնել, բայց դեռ օրը պարզ չէր, անընդհատ ձգձգվում էր: Ես Ամարասի Արթուրի հետ բարձրացա «26-ի» դիրքերը, որտեղ հրամանատարը Հովհաննիսյան Յուրան էր՝ «26-ի» Յուրան: Ամարասի Արթուրի հետ ծանոթացել եմ 1988 թ. մարտի 8-ին, երբ առաջին անգամ գնացի Ղարաբաղ: Արկադի Մանուչարովը Սումգայիթի զոհերի հուշաքարն էր պատրաստել տվել:

Սգո օր էր, կանայք հավաքվել էին հուշաքարի մոտ, ռուս զինվորները տղամարդկանց չէին թողնում մոտենալ: Ես՝ որպես լրագրող-օպերատոր, տեսախցիկը ձեռքիս մտա կանանց մեջ ու սկսեցի նկարել: Ներանք կարծեցին, թե ռուս եմ, քանի որ շեկ էի: Որոշ ժամանակ անց խոսքերով հարձակվեցին ինձ վրա, իրենց բողոքը զարհուրելի խոսքերով էին արտահայտում: Ես ամբողջ ժամանակ նկարում էի: Տեսա, որ ռուս գնդապետը ինձ մատնացույց անելով՝ իր տեղակալներին պատվիրեց արգելել նկարահանումը: Վախենալով, որ կհասկանան հայ եմ և կձերբակալեն, կանանց ասացի՝ ես հայ եմ, այնպես արեք, որ ինձ չբռնեն: Կանանց մեջ Վարսիկ անունով շատ ակտիվ կին կար, նա Ուզբեկական փողոցի վրա՝ Արթուրենց տան մոտ, խանութ ուներ: Այդ կինը ասաց՝ «Վայ, հայ ես, քոռանամ ես»: Կանայք ինձ փակեցին իրենցով ու սկսեցին դուրս բերել: Ռուսները չէին կարողանում մոտենալ: Կանայք ինձ բերին Ուզբեկական փողոց, Վարսիկը մի քանի ժամ պահեց իր խանութում: Մի փոքրահասակ, կուզը դուրս եկած մարդ մտավ խանութ: Վարսիկը ասաց՝ «Հիմա քեզ կտամ նրան, ինքը կպահի»: Մտածում էի, թե այս ում են ինձ տալիս, ուր եմ գնում: Այդ մարդը՝ Այեքսանյան Արտուշ Պետրոսիչը Արթուրի հայրն էր, ինձ տարավ իր տուն: Ծանոթացա ընտանիքի հետ: Կինը ասաց՝ գիտեմ իմ տղան էլ է հեղափոխական: Երկու օր հետո Արթուրը եկավ, ինձ բախտ վիճակվեց իր տանը ծանոթանալ նրա հետ: Ինձ փրկեցին նրա ծնողները և դրանից հետո ընդունեցին որպես իրենց մեծ տղան, ինչքան ես Ղարաբաղ եմ գնացել, անպայման նրանց տանն եմ մնացել:

«26-ի» Յուրայի հետ ծանոթացա, երբ բարձրացա «26-ի» դիրքը: Ներկայացա հրամանատարին՝ Յուրային, ասացի, որ ժուռնալիստ եմ, եկել եմ նկարելու: Ինձ շատ լավ ընդունեցին, ծանոթացա տղաների հետ, մի քանի գիշեր նրանց հետ անցկացրի: Ես սպասում էի, որ կենտրոնական գծից պիտի հարձակվեն: Բայց Յուրան գիշերը ժամը մեկին եկավ ու հայտարարեց, որ ժամը 5-ին հարձակվելու են, օպերացիան սկսվում է, ապրիլի 29-ին էր: Ափսոսում էի, քանի որ Կոմանդոսը խոստացել էր ինձ կենտրոնական գիծ տանել, բայց ստիպված Կրկժանի ուղղությամբ գնացի: Առավոտյան ժամը 5-ին շարժվեցինք առաջ, իջանք դիրքեր: Ադրբեջանական դիրքը կոչվում էր «13-րդ պոստ»: Այդ դիրքը

շատ հետաքրքիր ձևով գրավվեց: Ես հեռու մնացի, որ դիրքը տեսնեմ, բայց մութ էր, չկարողացա նկարել: Առանձնապես գործողություններ չիրականացվեցին: Արթուրը առաջնորդում էր ջոկատը, որի հետ ես գնում էի: Արթուրը երկու հոգով մոտեցավ դիրքին, նոնակը գցեց մեջը, ու ոչինչ չլսեց: Այսինքն՝ մի քանի վայրկյանում գրավեցին դիրքը: Դրանից հետո գնացինք մեկ այլ դիրք, որտեղից արդեն փախել էին: Սպասում էինք լույսը բացվի: Երբ լույսը բացվեց, տեսանք, որ ընդհանրապես չարժ չկա: Որոշ ժամանակ անց մեր ուղղությամբ Շուշիում տեխնիկա է կենտրոնացվում, Ջանհասանի կողմից «ՌՏՌ»՝ «ԴՇԿ»-ով բերին կանգնեցրին, տանկ, տեխնիկա: Հասկացանք, որ շրջափակման մեջ ենք ընկնում, բայց գիտեինք, որ հարձակումը Շուշիի վրա հիմա սկսվելու է: Բայց ես նայում էի ու զարմանում, որ մյուս կողմից շարժ չկա, գիտեի, որ Բարինտակից, Շոշից էլ պիտի հարձակվեն, բնական է, որ Շոշի կողմից, որտեղ ես էի, չէր երևում, իսկ կենտրոնական գիծը երևում էր, բայց հարձակում չկար: Մոտ երկու ժամ-հետո Շուշիի և Ջանհասանի կողմից սկսվեց հրետանու կրակոցը: Արթուրի ջոկատում 150 հոգի էին: Ականանետի արկը կախվում է ուղիղ մեր տղաների վրա: Մենք զենքից կամ հապաստի կտորներից լինք իմանում, թե ով զոհվեց, շատ ահավոր էր, արկը ընկնում էր հենց խրամատի մեջ: Ես մեջս պայթում էի, թե ինչու մեր ինքնաթիռները օգնություն չեն ուղարկում, չեն կրակում, միայն ավտոմատներով ու գնդացիրներով ինչ պիտի անենք դրանց դեմ: Ընկել ենք փակուղու մեջ ու չգիտենք ինչ անենք: Այն, ինչի մասին ուզում եմ պատմել, հայ կնոջ կերպարն է ներկայացնում: Դիրքերում երկու կին կային՝ Աղավնին ու Մելսիդան, երևանցի աղջիկներ էին: 150 հոգուց 7-ը զոհվեցին այդտեղ, վիրավորներ էլ եղան: Բոլորը պառկած էին փորի վրա: Մեկը գոռում էր՝ «ապից սպիշկա», այսինքն՝ աջից կրակը եկավ, արկը գալիս է: Գոռում էին, որ համ բերանները բացեին, որպեսզի «կոնտուզիա» չստանային, համ էլ, ասված գիտե, թե ում վրա կընկնի: Ես կանգնել չէի կարող, պրոկիետն արկերը թռչում էին: Մեջքի վրա պառկեցի, ձեռքերս բարձրացրի ու սկսեցի նկարել, գոնե խփելուց ձեռքերիս խփի: Այդ պահին ինչ տեսա. մենք վախենում էինք ոտքի կանգնել, բայց այդ երկու կանայք՝ Աղավնին ու Մելսիդան «նասիլկով» վիրավորներին էին հանում՝ առանց վախենալու, անգամ պպզելու, արկերը նրանց կողքին պայթում

էին, ցավում եմ, որ այդ նկարահանված կադրերը ինքնաթիռի մեջ վառվեցին: Կարծես տղամարդու թասիբը մեջս խոսեր, վեր կացա ու տեսախցիկը միացրած՝ սկսեցի աղջիկների հետ վազել: Մելսիդան առջևից էր բռնել, Աղավնին՝ ետևից: Արկը շատ մոտ պայթեց, լանջը թեք էր, բեկորները ոչ թե վերև թռան, այլ տարածվեցին աջ կողմի վրա, դրանց հարվածից Աղավնին գլորվեց ձորը, նասիլկան ընկավ: Մելսիդան, որը արյան մեջ թաթախված էր, այնքան էին վիրավորներ տեղափոխել, թռավ ու պառկեց կիսամեռ վիրավորի վրա: Զարմանալի էր՝ արդեն մեռնող մարդու ինչը պիտի փրկեր: Վազելիս այնպիսի խոսքերով էր մխիթարում վիրավորին, թե՝ չես մեռնի, քեզ կփրկենք, ամեն ինչ լավ կլինի: Ես ամենուրեք հայտարարել էի՝ հիշեք, որ ես գոյություն չունեմ, եթե տեսախցիկը ցած դնեմ և ձեզ օգնեմ, ուրեմն ես պրոֆեսիոնալ չեմ, նույնիսկ եթե մեռնում ես, պիտի նկարեմ, թե ոնց ես մեռնում, նույնիսկ տեսախցիկը չեմ անջատի, մի բաժակ ջուր տամ: *(Բակուրի ռեպլիկը՝ Շուշիում անջատեցիր...)* Մելսիդան աչքերը հառեց վրաս՝ հասկացնելով՝ բռնիր նասիլկեն, այն աղջիկը ընկավ, ինչո՞ւ ինձ չես օգնում տանենք: Երևի հիշեց իմ խոսքերը, որ ես չեմ օգնելու: Նրա հայացքը երբեք չեմ կարող մոռանալ, կարծես զնդացրով խփեին ինձ այդ պահին: Զինվորական բաճկոնը հանեց, արյունոտված կրծքերը դուրս էին ընկել, խելագարվածի նման (բաճկոնով) կապեց նասիլկան, որ վիրավորը ցած չընկնի, ու մենակ սկսեց քարշ տալ: Ես նկարելով նրա ետևից գնում էի: Նա մինչև վերջ հասցրեց, բայց ճանապարհին այդ տղան մահացավ: Երբ հասա այնտեղ, ադրբեջանցիները արդեն հարձակվում էին, մերոնք սկսում էին ետ նահանջել, փախչում էին, վիրավորները թափված էին այնտեղ: Գյումրեցի բժիշկը, կարծեմ անունը Բագրատ էր, շատ լավ տղա էր, դուրս էր եկել, գլխին խփում էր, գոռում՝ «Ո՞ւր եք տղաներին թողած փախչում, վիրավորները պառկած են, այս ինչ եք անում»: Այնտեղ մի փայտից խրճիթ կար. Արթուրի ու Յուրայի նախաձեռնությամբ էին սարքել՝ վիրավորներին առաջին բուժօգնություն ցույց տալու համար: Մեքենայի մարտկոցներ ու փոքր լապտերներ էին տեղադրել, որ այնտեղ կարողանային նույնիսկ վիրահատություններ կատարել: Երկու դպրոցական աղջիկներ էին եկել, որոնցից մեկը սիրահարվել էր Լոլոյին: Բինտ չկար, այդ աղջիկները մաղլան մկրատով կտրում, անգամ վարագույրի

կտորներից բինտ էին սարքում: Երբ բժիշկը գոռում էր, թե՝ ուր եք փախչում, տեսախցիկը ձեռքիս մոտեցա, սկսեցի հայհոյել՝ հիմա ձեզ նկարելու եմ որպես ազգի դավաճաններ, տանելու եմ ցույց տամ և այլն: 20 հոգու վերցրի, ետ տարա: Ալեքսանյան Ալիկը, որ այդ գծի կապավորն էր, մի գետնափոր տեղում էր նստած, նույնիսկ գլխի չէր ընկել, որ թուրքերը վրայով անցել են, ետ դարձել: 20 հոգու հետ վերադարձանք, ես տեսախցիկով էի, նրանք՝ զենքով, որ գնանք դիմակայենք թշնամուն: Մինչև հասա դիրքերը, նրանք փախել էին, մենակ էի մնացել: Մտա Ալիկի մոտ, ասացի՝ «Գիտեմ, որ թուրքերը մի անգամ անցել, ետ են գնացել»: Փառք աստծո, Բեկորը իր խմբով եկավ, հակառակորդին ետ շպրտեց:

Բ.Կ.- *Իսկ Արթուրը ինչ էր անում, երբ տղաները նահանջում էին:*

Շ.Վ.- Նա ուրիշ ճար չուներ, հո մենակ չէ՞ր մնալու: Նույնիսկ նահանջելը պիտի գրագետ լինի, երբ խուճապի մեջ ընկած փախչում են, հիմնականում զոհեր են տալիս: Իսկ այդ պահին անգրագետ նահանջ էր, ուժեղ խուճապ էր առաջացել: Երբ Կոմանդոսին տեսա, կոպիտ խոսքերով հարձակվեցի վրան՝ «Տո դու ինչ մարդ ես...»: Բայց նա համբերատար ինձ մի կողմ տարավ, բացատրեց, որ այս օպերացիան Շուշի քաղաքի ուժերը ստուգելու համար է, որովհետև Շուշին գրավելը շատ դժվար է, մենք կարող էինք ամբողջովին զոհ գնալ, եթե այս փորձությունը չլիներ: Ես էլ կատակով ասացի՝ «Տնաշեն, մի զինվորական օպերատոր ունես, այն էլ ուզում էիր սպանեիր, գոնե զգուշացնեիր»:

«26-ի» Յուրային այդ մի քանի օրերին եմ ճանաչել, նա գիտեր՝ ուր է գնում և ինչի համար, բոլորը նրան հարգում էին ու սիրում, շատ գրագետ մարդ էր: Արթուր Ալեքսանյանը զինվորական գրագիտություն չուներ, բայց նա ֆանատ էր: Եթե Արթուրի նման 50 հայ ֆանատ ունենանք, համոզված եմ, որ Արևմտյան Հայաստանն էլ կգրավենք: Այդպիսի հայրենասերները հազվադեպ են լինում: Լոլոն երկար ժամանակ միշտ Արթուրի հետ էր լինում: Երբ թուրքերը Քարինտակից բարձրանում էին, ես գլուխս բարձրացրի, որ տեսնեմ, թե Արթուրն ում վրա է կրակում: Ուզում էի առաջ գնալ, Արթուրն ինձ ետ հրեց, թե՝ առաջ մի՛ գնա, թուրքերը բարձրանում են, դրանց վրա եմ կրակում: Թուրքերը նոնակ գցեցին, Լոլոն վերցրեց ու ետ շպրտեց: Մյուսը որ ընկավ, Լոլոն չհասցրեց ետ շպր-

տել, պառկեց վրան: Մեր կյանքը Լոլոն փրկեց, ես աչքովս եմ տեսել, Լոլոն այդտեղ պայթեց: Մտածեցինք, թե մեռավ, նույնիսկ Պարգև սրբազանը եկավ, աղոթեց, հասցրինք հիվանդանոց: Բայց նա ողջ մնաց: Իսկ ես Լոլոյի պատճառով վիրավորվեցի: Նա գիտակցությունը կորցրած ինձ ասում է՝ «Դու պիտի ինձ տանես Երևան»: Արդեն Շուշին գրավել ենք, Լաչինով պիտի դուրս գանք, լրիվ նկարենք: Ասում եմ՝ «Լոլո ջան, ցավդ տանեմ, ես ուղղություն ունեմ, չեմ կարող, ախպերներդ թող տանեն»: Նրա եղբայրները՝ Մուշեղը, Շմայսը, այնտեղ էին, բայց ինքը պնդում էր, որ ես տանեմ իրեն: Գիտեի, որ մեռնելու է, մտածեցի՝ եթե չտանեմ, ամբողջ կյանքս ինձ նախատելու եմ, ջհանդամը, Շուշին նկարել եմ, հերիք է: Լոլոյին դրեցինք ինքնաթիռը, 17 վիրավոր կային: Գրադը սկսեց խփել, մտածեցի՝ «քառակուսու մեջ ենք, վերջ», իմ ամբողջ տեխնիկան, նկարահանած նյութերը ինքնաթիռի մեջ էին: Վազեցի դեպի ինքնաթիռը, որ վիրավորներին և տեխնիկան դուրս բերենք, այդ ժամանակ արկը ինձ տարավ, այդտեղ ես դարձա ոչնչություն:

Բ.Կ.- *Որտեղից էին խփում:*

Շ.Վ.- Աղդամից էին խփում: Ինքնաթիռը վառվեց, վիրավորներից մեկը տեղում մահացավ, մյուսներին կարողացան իջեցնել, փրկել: Այն աղջիկը Լոլոյին մի շատ գեղեցիկ բրդյա նասկի էր տվել: Երբ ես վիրավորվեցի, Լոլոն այդ նասկիները ուղարկել էր ինձ, որովհետև երբ վիրավորվում են, սահավոր մրսկան են դառնում, մարմինը դող է ընկնում, շատ շոր պիտի հագնես, որ տաքանաս: Այդ նասկիները ինձ հետ բերի Երևան, բայց չեմ հիշում՝ վերադարձրի Լոլոյին, թե ոչ: Լոլոն, որ նռնակի վրա էր պառկել, հետո ավելի լավ էր զգում իրեն, քան ես, որ ոտքից էի վիրավորվել: Լոլոն շարժմանը նվիրված տղա էր, համարձակ, հազվադեպ այդպիսի մարդիկ կային, նրանք էլ տարել են պատերազմը: Եթե 1000 հոգի պատերազմ են գնում, ուրեմն այդ 1000-ից երկուսն են հաղթողը, մյուսները ետևից քանակ ստեղծող զանգված են, եթե մեկը գոռում է «ուռռա» ու վազում է, մյուսները անկախ իրենցից են գոռում «ուռռա», այլ հարց է, թե ով է խփվում, ում ճակատին ինչ է գրված: Ինձ թվում է, որ պատերազմը անհատներն են հաղթում:

Մի դրվագ պատմեմ 26-ի հետ կապված, ցավում եմ, որ այդ կադրերը կորան, ժապավենները վառվեցին: Ամսի (ապրիլի) 27-ին էր, կարծեմ

տանկը գալիս էր 26-ի դիրք, տանկի վրա նստած էին լիքը տղաներ ու Տեր Գրիգորը: Տեր Գրիգորին ասում եմ՝ «Ուստա Գրիգոր, էս ո՞ւր ես գնում»: Ասաց՝ «Գնում եմ տղաներին դիրքերում կնքեմ»: Ասացի՝ «Ինձ էլ տարեք, հրաշք բան ես անում»: Բարձրացել եմ, նրանց հետ նստել ու նկարում եմ: Տեր Գրիգորի ձեռքին գիրքն էր, խաչը, տղաները ավտոմատներով էին, իսկ Գրիգորի փարաջայի տակից ավտոմատը միշտ կախված էր: Հասանք դիրքերը, սաղավարտները հանեցինք, կտորը պոկեցինք, մեջը ձյուն լցրինք, կրակի վրա հալեցրինք, քանի որ այնտեղ ջուր չկար, մեռոնը կաթեցրեց սաղավարտների մեջ ու դիրքերում տղաներին կնքեց: Դրանից տղաների ոգին բարձրանում էր: Պատահում էր, որ կնքվելուց հետո տղաներից դիրքերում խփվում էին, բայց դե ճակատին գրվածը գրված է, ինչ կարող ես ասել: Տեր Գրիգորը մարտի ժամանակ կնքում էր, որ քրիստոնյա մեռնեն:

Ամբողջ ռազմի դաշտում Ղարաբաղի տարածքում մենք առաջին անգամ գեներալ տեսանք՝ Գուրգեն Դալիբալթայանին: Տղաները հավաքված էին, քարտեզը գցած է գեներալի առաջ, ասում է՝ «Մի խոսքով, տղաներ, այս գյուղը վերցնել և ոչնչացնել, այս մեկը նույնպես վերցնել և ոչնչացնել, այս գյուղը նույնպես վերցնել և ոչնչացնել»: Ասում են՝ «Պարոն գեներալ, դա հայկական գյուղ է, ինչ ոչնչացնենք»: Ասաց՝ «Լավ, սա թողեք»: Նոր էր եկել, չգիտեր, թե որը որն է, կարծում էր ռուսական մեծ, հզոր բանակն է, այդքան հեշտ է վերցնել և ոչնչացնելը: Դալիբալթայանին մինչև հիմա ես համարում եմ իմ պապը, ես նրան չեմ ասում «գեներալ», նա էլ է զինվորական, ես էլ, ասում եմ՝ «դեդո»: Նա չի նեղանում, պատերազմի ժամանակ եմ նրան ասել, որ դու իմ պապն ես: Ես սիրահարվեցի այդ մարդուն, տեսա, թե իսկական գեներալը ինչ է լինում: 1991 թ. վերջերին, 92-ի սկզբներին Շահումյանում՝ Վերիշենում, կանգնած ենք, դիմացից թուրքերը մեզ խփում էին: Մենք բոլորս գլուխները պահել ենք, քանի հր գնդացրով խփում էին, բայց Դալիբալթայանը հասակով մեկ կանգնել էր: Հարցրինք՝ չե՞ս վախենում, որ կդիպչի: Ասաց՝ «Ես գիտեմ, թե որն է իմ գնդակը, ամեն գնդակից չեն կգում»: Դրանից հետո ես հասկացա, որ գեներալ լինելու համար այդ մարդու նման պիտի լինել:

Շահումյանում էին, Շահենն էր, ջոկատի տղաները, Երևանից գենե-

ռալ էր գալու, Գյուլիստանի անտառում պիտի հանդիպեինք: Մտածում էի, թե ինչ գաղտնի հանդիպում է: Տղաները գնացել տեղերը (տեղանքը) մաքրել էին, որ հանկարծ օտար մարդ չլինի: Միայն ինձ էին թողել, ես էլ եկել, նկարում էի նրանց խորհրդակցությունը: Մեծ սալ քար էր դրած, կողքին՝ փոքր քարեր: Նստած էին գեներալը, հրամանատարները: Ետևից փոքր ջրվեժ էր, շատ հետաքրքիր բնապատկեր էր: Նկարում էի մեր առաջին ծանոթությունը գեներալի հետ: Ընդմիջում տրվեց: Նա չէր սիրում, որ նույնիսկ բնության գրկում իր ներկայությամբ ծխեն: Տղաները խնդրեցին ընդմիջում անել, որ ծխեն: Ընդմիջման ընթացքում շուռ եկավ դեպի ինձ, ասաց՝ «Դու ո՞վ ես, ի՞նչ ես անում այստեղ»: Ասացի՝ «Պարոն գեներալ, ոչ մի բան, տղաները կռվում են, ես էլ նկարում եմ»: Ասաց՝ «Շատ լավ ես անում, սրանից հետո կնկարես, կբերես, որ նայենք, մեր սխալները ուղղենք»: Մեր առաջին հանդիպման ժամանակ նա ինձ տարօրինակ մարդ թվաց, բայց երկրորդ հանդիպմանը, երբ տեսա, որ գնդակներից չի թաքնվում, մտածեցի, որ նա իսկական մարդ է, իսկական գեներալ է:



Պատմում է ՎԱՍԻԼԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԸ (ԼՂՀ, Քարվաճառի վարչակազմի ղեկավար), Քարվաճառ, 30.10.2005

Ծնվել եմ 1945 թ., Գետաշենում: 1988 թ., երբ Գարդման աշխարհի բոլոր հայկական գյուղերը՝ սկսած Չարդախլուից, սկսել էին հայաթափվել, բոլոր գետաշենցիներով, որոնք ապրում էին Երևանում և Գետաշենում, որոշեցինք կազմակերպել Գետաշենի ինքնապաշտպանությունը: 1988 թ. ստեղծվեց մի կորիզակ, որի կազմում էին պաշտոնաթող գնդապետ Իսահակ Կարախանյանը (երեք աստիճան «Փառքի աստիճանի ասպետ»), նրա որդին, Նորայր Մայիլյանը, Միսակ Սեյրանյանը, Գագիկ Աթանեսյանը և ես: 1988-ին սկզբում չորս, այնուհետև հինգ հոգով մեր խորհուրդը՝ շտաբը, որոշեց դիմել կառավարությանը՝ ուղղաթիռների հարցը լուծելու և մի փոքր օդակայան սարքելու համար: 88 թ-ից սկսվեցին ուղղաթիռների թռիչքները: Գետաշենի պաշտպանության համար առաջին հարցը կապի ապահովումն էր: Նորայր Մայիլյանը Հայկական ավիաուղիներում էր աշխատում, իր տղաների հետ գեներատորներ տեղափոխեցին, ռադիոկայան դրեցին, Հայաստանի հետ անմիջական կապ ստեղծեցին: Անրաժեշտ էր նաև փոքր կապի միջոցներ ունենալ, որպեսզի նախ կապ լիներ դիրքերի հետ:

Բ.Կ.- *Դիրքերը որտե՞ղ էիք դրել:*

Վ.Ն.- Կարմիր քար կար գյուղի ծայրին, որ Կուշչի Արմավիրի կողմն էր նայում, Սպիտակ ջրի, գերեզմանոցի մոտ դիրքեր ունեինք, Մարտունաշենից ներքև մարտունաշենցիներն էլ իրենց դիրքերն էին արդեն դրել, որովհետև Կուշչի Արմավիրն արդեն հանձնել էին:

Բ.Կ.- *Ի՞նչ ջոկատ էիք ստեղծել:*

Վ.Ն.- Գետաշենի ջոկատն էր, սկզբում ամբողջ Գետաշենը՝ մեծ ու փոքր, հերթով դիրքերն էին գնում, պատահում էր, որ կին էր գնում, քանի որ տղամարդիկ չէին հերիքում:

Բ.Կ.- *Քանի դիրք ունեիք:*

Վ.Ն.- 12 դիրք, 12-ն էլ գիշեր-ցերեկ աշխատում էին, ամբողջ գյուղի տղաները հերթով գնում էին, երևանաբնակ տղաներ կային, որոնք գյուղում ծեր հայր ու մայր ունեին, նրանք էլ էին եկել: Հետաքրքիրն այն էր, որ առաջինը Իգոր Մուրադյանի հետ կապ ստեղծեցինք, ամեն ինչ նրա հետ էինք կազմակերպում: Մեզ հետ էին նաև Մանկավարժական ինստիտուտի դասախոսներ Սիսյան Բենիկը և Ղուլղազարյան Գուրգենը, Մայիլյան Նորայրն էր, Աթանեսյան Գագիկը, որն այդ ժամանակ Գյուղնախարարությունում բաժնի վարիչ էր: Կորիզակին միացավ Մարտունաշենի Սարմենը իր եղբայրների և ընկերոջ՝ Սաքոյի հետ, որը հիմա Լաչինում է գտնվում, շրջվարչակազմի ղեկավարի տեղակալն է: Այսինքն՝ մնացել էին երկու գյուղ՝ Գետաշենն ու Մարտունաշենը: Առաջին կապը դրեցինք 1988 թ. երկրաշարժի օրը: Ես արդեն 8 ռադիոկայան տեղափոխել էի գյուղ: Ռադիոկայանը տեղադրել էինք, որ պիտի կապ հաստատեինք, այդ օրը երկրաշարժը եղավ: Կիրովաբադի Տեր Հորն էլ էին բերել, այնտեղից պիտի տեղափոխեինք Շահումյան, հետո՝ Ստեփանակերտ, այնտեղից էլ՝ Երևան: Ես գնացի Շահումյան, տղաներն ինձ ասացին՝ «Կգնաս կդիմես Ասկերանի միլիցիայի պետ Աղաջանյանին՝ Վոլոդյա Աղաջանյանի եղբորը»: Եկանք Ասկերան, Աղաջանյանն ինձ երկու միլիցիոներների հետ ուղարկեց Ստեփանակերտ, որ ես ինքնաթիռով թռչեի: Ինքնաթիռը չթռավ: Հաջորդ օրը 6 մեքենա տվեցին, Ղարաբաղի պետավտոտեսուչները բերին մինչև Կիրովաբադ, Կիրովաբադից արդեն Ռոստովի պետավտոտեսչությունը մեզ վերցրեց՝ որպես ուղեկցորդ: Երեկոյան հասանք Ղազախ: Ղազախում ռուսական զորքը կանգնած էր, չէին թողնում առաջ շարժվել: Արդեն մութն ընկնում էր, տղաներով որոշեցինք իջնել, չէին թողնում ավտոբուսներից իջնել: Մտածեցինք, որ այստեղ մի բան լինելու է: Մի մայոր կար, տեսավ, որ երիտասարդությունը կամաց-կամաց իջնում է՝ սոված-ծարավ: Երեկոյան մոտավորապես ժամը 8-ն էր, մութն ընկել էր: Մեզ ուղեկցեցին, Դիլիջանում ժողովուրդը կազմակերպված, անհամբեր սպասում էր, որովհետև Ստեփանակերտից ասել էին, որ դուրս ենք եկել, բայց ահագին ժամանակ էր՝ տեղ չէինք հասել: Այդտեղից բաժանվեցինք...

1988 թ.-ից սկսվեց Գետաշենի ինքնապաշտպանությունը: Դիրքերում 300-ից ավելի տղաներ են կանգնել: Մենք պիտի նրանց զենքով ապահովեինք, բայց 88-89 թթ. մեծ դժվարություններով էինք կարողանում անել դա, քանի որ խորհրդային իշխանության Պետական անվտանգությունը դեռ գործում էր, հազար ու մի արգելքներ կային: Չնայած դրան՝ մեր տղաները գործարաններում՝ Չարենցավանում, Աբովյանում, Երևանում ինչ-որ կարողանում էին, սարքում էին, որպեսզի պաշտպանությունը ապահովեինք:

Բ.Կ.- *Թուրքերի հետ դեպքեր արդեն կային:*

Վ.Ն.- Մի անգամ թուրքերը գալիս են, որ մտնեն գյուղ, թույլ չենք տալիս. այն ժամանակ դեռ սովետական իշխանությունն էր: Նրանք Լաչինի կողմից էին գալիս, ճանապարհը հիմնականում այդ կողմից էր: Ազատ գյուղում նրանց ճանապարհը մի քանի անգամ փակվեց, այդ ճանապարհի վերևով պիտի գնային Թողանպի: 1988-89 թթ. մարդկանց չէինք կարող արգելել, որովհետև բանակն էլ էր գործում: Դիմեցինք խորհրդային իշխանության բարձրաղիր մարմիններին: Սկզբում Բելոռուսիայից ջոկատ ուղարկեցին. տղաները լավ օգնում էին մեզ այդ ուղղի, մինչև անգամ իրար հետ զինված գնում էինք Երևան և ետ դառնում: Ազատի կողմից մի անգամ թուրքերը գրոհեցին, ահագին կոտրված տվեցին: Դիմացը մեր տղաներն էին, ջոկատ չկար այդ ժամանակ, հիմնական ջոկատները եկել են 1991 թ: Մինչ այդ պաշտպանությունը կազմակերպվում էր գյուղի տղաների միջոցով, և Խորհրդային բանակի ինչ որ խմբեր էին ուղարկում: Ազերիները տեսան, որ Բելոռուսիայի տղաները մեզ են պաշտպանում ու «վերևից» փոխեցին նրանց: Մի ուրիշ ջոկատ մտավ, դրանից հետո ՕՄՕՆ-ի հետ խառը մտան իրենք՝ իբր թե բանակն է, բայց բանակը չէր: Ծանր օրեր էին, Ազատի ընդհարումից հետո ոչ ոք չէր կարողանում դուրս գալ, մեր հույսը ուղղաթիռներն էին: Դրանից հետո մի անգամ էլ ՕՄՕՆ-ը Մարտունաշենի կողմից մտավ, ծուղակն ընկանք, տասնյակներով փրթեցին. հիմնականում նրանց զինված ուժիկանությունն էր: Մարտունաշենում մեկին սպանել էին: Տղաները Շահումյանից պիտի գային, որովհետև դրանից առաջ ուղղաթիռը մեզ մոտ վթարի ենթարկվեց, 12 հոգի զոհվեցին: Մեղրյան Շահենը Պետրոսյան Վոլոդյայի հետ կազմակերպել էր թաղման համար դագաղներ, սնունդ: Պիտի գային «քառասունքին», այնտեղ մի մարդու էին սպանել: Զորքը կանգնած էր: Այդ զորքի հետ Սարմենի բեռու տղան՝

Յարիշ Արմենը, գնաց: Ռոլորին պատանդ վերցրին: Գյուղի ճանապարհը ներքևից՝ Չիրքեսից փակեցինք: Շահումյանի դատախազը եկավ, խնդրեց, թե՝ «Եթե դուք մի բան անեք, տղաներին կվնասեն: Խոստացել են բոլորին ազատել»: Հենց մենք ետ քաշվեցինք, Շահենին, մյուս տղաներին տարան: Դրանից հետո հրաման ստացանք թուրքերին գերի վերցնել, որպեսզի տղաների հետ կարողանանք փոխանակել: Երկու հոգու գերի վերցրինք, մեկը Թոլստանովի գյուղսովետի նախագահի տղան էր, մյուսը՝ նրա ընկերը: Այդ երկու տղաները մեծ դեր խաղացին Մեղրյան Շահենին փոխանակելու հարցում:

Մնանք էինք տեղափոխում, պատրաստվում էինք ուղղաթիռները բարձել, լուր հասավ, թե՝ «Ձեզ հետևում են, բոլորիդ կվերցնեն», Երևանի «Էրեբունի» օդակայանում էինք: Իսահակ դային դեռ ողջ էր, սկսեց գոռալ՝ «Տղաներ, գնացեք ճանապարհը փակեք...խրամատ կփորեք...», կարծես պատերազմի դաշտում լիներ, ասացինք՝ «Ա՛յ Իսահակ դայի, սուս արա», թե՝ «Ի՞նչ սուս անեմ...»: Ուղղաթիռը բարձրացավ, եկանք Արզնի, մնանքը վերցրինք: Այդ ժամանակ թուրքերը Սարիսուից և Հաջիքենդի լեռնանցքից հակակարկտային թնդանոթներով սկսել էին կրակել գյուղի վրա: Մեզ մոտ էլ տղաների սարքած միջոցներ կային, բերինք-իջեցրինք: Մենք գյուղի վերևում՝ Արսեն պապի՝ Աթանեսյան Արսենի տանն էինք մնում: Կամուրջին կանգնած՝ տղաների հետ խոսում էի, մեկ էլ՝ պայթյուն: Բայց ինչ փոքրարկում. երկրորդ արկը («բոլվանկա» էր, իսկական արկ չէր, որ բենզորային խփեր) խփեց, Արսեն պապի տան կտուրը ծակեց, կողքը քանդեց, տղաներից էլ 12 հոգի տան մեջ էին, ու մեր պահեստի պատը քանդեց: 15-20 բոպև հետո ռուսական ուղղաթիռները եկան: Մենք արդեն կապվել էինք Մոսկվայի հետ: Մեծ, ծանր ուղղաթիռներ էին, կեսը Մարտունաշենում՝ կաղամբի դաշտում իջան, երկուսն էլ՝ մեր կանգնած տեղից 1 կմ հեռու: Դե գյուղի տղաներ էին, հրացանները ձեռքներին՝ վազում էին դեպի ուղղաթիռները՝ իբր թե դիմավորում են: Ասում եմ՝ «Ա՛յ տղա, կուսն-կկոտորեն, նրանք ինչ գիտեն, թե մենք ովքեր ենք, հրացաններն էլ՝ ձեռքներիս, սպասեք»: Եկան կանգնեցին, ասացի, որ հակակարկտային թնդանոթներով են խփում, երևում էր, թե որտեղից են խփում, բանի որ ուղիղ նշանառությամբ խփում էին: Ասացին.

- Мы не имеем право уничтожать эти пушки, мы должны так взят, целыми...

- А зачем вы пришли, чтобы защищать, или просто около нас стоять? Если взять —давай, совместно пойдем и возмем эти пушки.

Ասացին՝ մեզ տեղավորեք, մենք դեռ կորոշենք: Ազատի կողմից երկրորդ հարձակումը այդ երեկո եղավ, «ԲՏՌ»-ն եկավ, սկսեց խոշոր ատրամաչափի գնդացրով կրակել: Շահումյանից Ռուսլանն էր մեզ հետ: Ռուսական ավտոմատներ էինք տարել, Երջանիկ Արգարյանը եկավ, թե՝ «Ձենքերը հանեք, թող տեսնեն»: Ասում եմ. «Ա՛յ Երջո՛, դու հասկանում ես՝ ինչ ես ասում, սրանք Ռուսաստանի Պետանվտանգության ոստաններն են, հետախուզություն են անցկացնում՝ տեսնելու, թե ինչ զենք ունենք, ինչ՝ չունենք: Ընդհակառակը, պիտի զենքերը պահենք, դրսորդական հրացանները ցույց տանք»: Դրանից առաջ էլ էր Երջանիկի հետ սոսկալի խոսակցություն եղել. Գետաշենցիներին հավաքել էի Թաղանյանի արձանի մոտ, այդ ժամանակ Գանձակի հայությունը արդեն դուրս էր եկել: Երջանիկը մի քանի տղայի հետ եկավ, թե.

Նալբանդյան, եկեք միանանք, մենք էլ ձեզ կօգնենք:

Ինչով պիտի օգնեք, ովքեր են այդ տղաները:

Այդ տղային հարցրի.

- Որտեղից ես:

- Բագում Սարովից:

- Բագում Սարովը չկա, հանձնել ենք, Գանձակը չկա, դու «Գանձակ» ընկերությունն ես ստեղծում, Երջանիկ: Այսօր Գետաշենի ինքնապաշտպանության հարցն է...

Օգնկիս՝ պիտի զենքով գան օգնեն:

Մի թեթև ընդհարում էլ դաշնակցության տղաների հետ եղավ 1990 թ.: Գրանք զենք ունեին: Մեզ մոտ Թաթուլի ջոկատն էր, ու «Ալաշկերտի» ոստաններն էին, «Արարատի», «Տիգրան Մեծ» ջոկատները Մարտունաշենում էին, բայց կապը կար: Լավ տղաներ էին, վատը չկին, բայց պիտի կուսակցության մեջ մտնեիր, որ զենք տային: Իսկ եթե պիտի կուսակցությունով հայրենիք պաշտպանենք... այդպես չի լինի, մարդիկ՝ ընտանիքներով գյուղում են, ուրեմն՝ ես պիտի կուսակցության մեջ մտնեմ, որ նոր զենք տաք՝ կռվեմ:

1989 թ. միացավ Սարմենը: Մարտունաշենում մի քիչ դժվար էր, և հետո Սարմենը այնտեղ մեծ հարգանք-պատիվ ուներ, բոլորն էին նրան սիրում, և Սարմենի հետ կազմակերպեցինք Մարտունաշենի պաշտպանությունը: Այսինքն՝ երկու գյուղ՝ Գետաշենն ու Մարտունաշենը, միա-

ցան, ու սկսվեց պաշտպանությունը: Դանը օրեր շատ եղան: 1990 թ. սեպտեմբերի 1-ին երեխաները պիտի դպրոց գնային, տղաները Երևանից հագուստ, գրենական պիտույքներ բերեցին: Դրանք տարանք Մարտունաշենի և Գետաշենի երեխաների համար: Այդ ժամանակ Յագովը եկավ. մենք ինչ իմանայինք, որ Յագովը մի քանի տարի Ադրբեջանում դիվիզիայի հրամանատար, կորպուսի հրամանատար է եղել: Իր թիկնապահների հետ մտավ գյուղ, երեխաները սիրուն հագնված՝ դպրոց էին գնում: Ասաց՝ «Չեմ հասկանում, Գանձակում դպրոց չկա, Խանլարում, ադրբեջանական գյուղերում երեխաները դպրոց չեն գնում, բայց տես՝ այստեղ ինչքան երեխաներ են դպրոց գնում»: 1200-ից ավելի երեխաներ էին սովորում, ու այդքանը առավոտ շուտ սիրուն հագնված՝ գնում էին դպրոց: Ապա Յագովն ասաց՝ «Մենք ձեզ կպաշտպաննենք, չվախենաք...»: Շան տղան գնաց ու կատեգորիկ արգելեց ուղղաթիռների թռիչքները: 15 օր մնացինք առանց ուղղաթիռի: Ժողովուրդն էլ նայում էր երկնքին, թե երբ պիտի ուղղաթիռ իջնի, իսկ ուղղաթիռ չկար: Կապը միայն Շահումյանի հետ էր, Շահումյանից էլ տղանները, որքան հնարավոր էր, օգնում էին սննդով:

Մինչև «Կոլցո» գործողությունը Սարմենը գոհվեց: Այդ ժամանակ չորս կողմից տանկերով մտան գյուղ, հիմնականում ռուսական զորքն էր, ետևից՝ ՕՄՕՆ-ը: Սկզբում կրակում են գյուղի վրա, թե՝ դուրս եկեք, գյուղը պիտի դատարկենք, թե չէ բոլորին կկոտորենք: Կուշչի Արմավիրի, Մարտունաշենի կողմից մտան: «Տիգրան Մեծի» Դեղը գոհվեց այդտեղ, տանկով խփեցին: Թաթուր նռնակը վերցրեց, ասաց՝ «Ձորքով դուրս եկեք»: Պիտի դուրս գայինք գյուղից, բարձրացանք վերև: Հիմնականում հրամանատարներին խփեցին՝ Սեյրանին, Թաթուլին, Հրային, Վալերիկին..., 12 հոգու խփելուց հետո գյուղը տեղահանեցին: Կեսին տարան Ստեփանակերտ, մյուս կեսին՝ Կիրովաբադ, լցրին ավտոբուսները տարան: Մինչև 1991 թ. մայիսի 8-ը Գետաշենը լրիվ դատարկվեց, մայիսի 8 ին վերջին մարդը դուրս եկավ: Երեք հոգի էին մնացել այնտեղ՝ Զոյան, Դավիթը և «Բոնդրոն»: Հետո լսեցինք, որ իբր երեքին էլ կախել են: «Կոլցոն» պիտի պտտվեր, մտներ Շահումյան: Շահումյանի ինքնապաշտպանության ժամանակ իմ ջոկատով եկա այդտեղ: 25 հոգի էին իմ ջոկատում, Աթանեսյան Գագիկն էլ էր: 1992 թ. հունիսի 13-ին Շահումյանը սկսեց դատարկվել: Մի օրում Շահումյանը դատարկվեց: Մենք Բուզլոխ գյուղում էինք՝ 21-րդ դիրքում, Ջամբազում Կարոտի ջոկատն էր, Ալավերդու ջոկատը, Բուզլոխի ինքնապաշտպանության ջոկատը՝ Գեղամն ու Համլետն էին այնտեղ:

Բ.Կ.- *Հնարավոր էր պաշտպանել Շահումյանը, Գետաշենը:*

Վ.Ն.- Եթե Հայաստանի կողմից լավ աջակցություն լիներ, շատ հնարավոր էր: Ռուսական բանակի դեմ էլ կարելի էր պաշտպանություն կազմակերպել: Շահումյանն էլ կարելի էր պաշտպանել: Բուզլոխից կլսում էր Հաջիքենդի լեռնանցքը, ես Զալյանին ու Մեղրյանին ասում էի, որ գրադներ, տանկեր են տեղափոխում: Ասում էին՝ մերոնք օգնելու են: Ես զգացի, որ «մերոնք օգնելու» բան չկար: Մեր ջոկատը գնացել էր այնտեղ, մենք պիտի նրանց տանեինք գյուղ՝ մինչև Հաջիքենդի լեռնանցքը՝ տեղանքին ծանոթացնելու: Տղաները երկու անգամ հետախուզության գնացին, իսկ հետախուզության հաջորդ օրը պիտի մտնեն՝ ցուցացնեն: Շահումյանի հանձնման համար ասում էին՝ հակատանկային ականները հանեցին: Այդպիսի բան չկա. Շահումյանի բոլոր կողմերից տանկերը ազատ կարող էին մտնել, հազարավոր ականներ էին պետք այնտեղ ականապատելու համար: Մի ճանապարհի վրա մի երեք ական էին գցել, հետո հանել, բայց հանեն-չհանեն. վազելով էլ կարելի է հակատանկային ականների վրա ման գալ: Դրանք լրիվ սուտ բաներ են, Շահումյանն ու Գետաշենը պիտի հանձնեին և՝ վերջ, արդեն կան փաստեր, որ դա քաղաքականություն էր: Ես մի անգամ Հայաստանի առաջին ալիքով լսելիք ունեցա, ասացի, որ այդ ծանր լուծը՝ Շահումյանի ու Գետաշենի անկումը, ընկնում է նախկին ղեկավարության, կուսակցական լիդերների վրա: Սա խաղ էր, որ խաղացին: Եկել էի այն եզրակացության, որ թեկուզ մեծ ու փոքր էլ փրթեին՝ աշխարհի հանրությանը ասեին, որ թուրքերը բարբարոս են՝ առանց հաշվի առնելու, որ Գետաշենից միայն 1200 դպրոցական երեխա է դուրս եկել...

Մեր ջոկատը Շահումյանի ընկնելուց հետո Բուզլոխից ոտքով Լուսաձորով, Մատաղիսով դուրս է եկել: Տղաներից երեք-չորս հոգի, կանանց ու երեխաներին ուղեկցելով, հասան մինչև Մատաղիս, որտեղից ժողովուրդը սկսեց ցրվել՝ Տոնաշենով, Երիցմանկանց վանքով, Ջրաբերդով ... Շահումյանի գաղթը ավելի սարսափելի էր, քան Գետաշենինը:



Պատմում է ՎԼԱԴԻՄԻՐ ԴԱՎԹՅԱՆԸ, (ՀՀ Տնտեսագիտության պետական համալսարանի դասախոս) Վերին Հոռաթաղ, 15.08.2006 թ.

Շարժման սկզբում ծնունդով մարտակերտցի մտավորականներն ու տեղաբնակները հավաքվեցին, և ստեղծեցինք «Զրաբերդ» հայրենակցական միությունը: Սկզբնական շրջանում միության հիմնական նպատակն էր շրջափակման մեջ գտնվող մեր շրջանին օգնել սննդով, հետագայում՝ զենքով ու ջոկատներով: Վերին Հոռաթաղում «Զրաբերդ» հայրենակցական միությունը ստեղծել էր բազա, ունեինք ուղղաթիռային օդակայան և ընդունող-հաղորդող ռադիոկայան: Ռադիոկայանը մոտ մեկ ու կես տարի գտնվում էր Երևանում՝ իմ բնակարանում: Դրանով կապ էինք պահում Վերին Հոռաթաղի շտաբի հետ, որտեղ հրամանատարը Ռաֆիկ Սահյանն էր՝ Մորուք Ռաֆոն: Հայթայթված զենք-զինամթերքը տեղափոխվում էր Վերին Հոռաթաղի բազա, այնտեղից՝ Հաթերք, Չայլու, ներքին գյուղերը, Մարտակերտի գոտի: Մարտակերտի հրամանատարը այդ ժամանակ Վագիֆ Գալստյանն էր: Երբ պատերազմը թեժացավ, անհրաժեշտ էր ջոկատներ կազմավորել և օգնության հասնել տղաներին: Ջոկատները կազմավորվում էին կամավորական հիմունքներով և նախնական ռազմական պատրաստություն էին անցնում: Կազմվեցին մի քանի գումարտակներ: Առաջին ջոկատներից էր «Զափար» ջոկատը, որի հրամանատարն էր Սերժ Ասլանյանը, նա հետագայում «Արծիվ-23»-ի հրամանատարն էր: Առաջին ջոկատների կազմում ներգրավեցինք «Գրադի» Ժորային: Նա եկավ Զարդախաչ գյուղից՝ որպես կամավոր, այդ ժամանակ մայոր էր: Մենք Գեորգի Պետրոսյանցի միջոցով նրան ծանոթացրինք Կոմանդոսի հետ:

Առաջին անգամ մասնակցել եմ 1992 թ. հուլիսի 19-ի Հաթերքի ազատագրման օպերացիային: Մեր գյուղի ջոկատը բաժանվեց երկու ենթաջոկատների, մի խմբի հրամանատարը Մորուք Ռաֆոն էր, ես մյուս ջոկատի կազմում էի, հրամանատարը Վալենտին Գրիգորյանն էր: Օպերացիան հիմնականում կազմակերպել էր հաթերքցի Սուրիկը: Նրա ջոկատը տեղակայված էր Դրմբոնում, մերը՝ մեր գյուղում: Պայմանավորվել էինք առավոտյան ժամը 5-ին «Ճախինանց» տեղից տարբեր ուղղություններով հարձակում սկսել: Մեզ օգնում էր նաև Սևանի Սուրիկի ջոկատը: Օպերացիան լավ էր կազմակերպված: Մեզ հեռվից հրետանիով աջակցում էր «Գրադի» Ժորան: Մտանք գյուղ, մենք Ծաղկունք տեղամասից առաջին մտնողների հետ էինք: Այնտեղ հանդիպեցինք թուրքական չկազմակերպված թալանչիների խմբի, վեց հոգու սպանեցինք, մի երիտասարդ թուրքի գերի վերցրինք, որը պիտի մեզ տաներ այնտեղ, որտեղ թուրքերը դիրք էին դրել: Սուրիկն իր ջոկատով ներքևի՝ Զարդախաչի կողմից էր գալիս, մենք՝ մյուս կողմից: Թուրքերը չէին սպասում, որ հայերը ետևի կողմից կմտնեն: Մենք կտրեցինք Զագլիկի, Հաթերքի ճանապարհը: Թուրքերը խուճապի էին մատնվել: Դիրքի տեղն իմանալուց հետո թուրքերի հետ այդտեղ մարտի բռնվեցինք: Նրանց դիրքը Հաթերքի գերեզմանոցի կողքի տան մոտ էր: Թուրքերը, հանկարծակիի գալով, փախան դեպի Օմարի կողմը: Սուրիկի ջոկատից Կաոլեն անունով մի տղա զոհվեց, ես և Մորուքի ջոկատից Վագիֆ Ավանեսյանը վիրավորվեցինք (Վագիֆը հետո Օմարի լեռնանցքում զոհվեց): Օգնության են հասնում մեծ ուժեր, և Հաթերքը առաջին անգամ ետ ենք վերցնում: Ինձ տեղափոխեցին Չլդրանի հոսպիտալ, մի ամսից ապաքինվեցի ու վերադարձա: Գերի վերցրած թուրք երիտասարդին պահում էինք, ուզում էինք փոխանակել Նապոլեոնի հետ, որին թուրքերը վերցրել էին, և մենք երկար ժամանակ չէինք կարողանում ազատել: Մեր ջոկատի տղաները ևս երկու թուրքի են գերի վերցնում. նրանցից մեկին բռնում են Զագլիկից փախչելիս, չգիտեր, որ մենք ճանապարհը կտրել էինք, «ԲՄՊ»-ի վարորդ էր, դաղստանցի թուրք էր, Շամիլ էր անունը, մյուսն էլ ծնունդով Քելբաջարից էր՝ Էլիսան անունով: Այդ երեքին տանում ենք Նապոլեոնի հետ փոխանակելու: Բայց մեր տղաները այնտեղ մեկին գտնցան, որ տանեն ծախեն, զագլիկեցի մեկը կար, տանում թուրքի հետ ծախում, փող էին վերցնում և այլն: Այդ երկու թուրքին մեզ հաջողվեց 7-

8 ամիս Վերին Հոռաթաղում պահել՝ որպես մասնավոր գերի: Հետագայում Կարմիր խաչը պահանջեց նրան, տարան Ստեփանակերտ:

Մորուք Ռաֆոն հանրահայտ դարձավ «Ջրաբերդ» հայրենակցական միության շնորհիվ: Սովորական տղա էր, գնաց Երևան, ինժեներ էր, բազմանդամ ընտանիք ուներ՝ 4 երեխա, բայց երբ շարժումը սկսվեց, նա ինքնամոռաց նվիրվեց այդ գործին: Մենք գնում-գալիս էինք կամ Երևանում էինք գործում, իսկ նա հարմար գտավ մնալ միայն այնտեղ: Տարաձայնությունների, չենթարկվելու խնդիրը հետևյալն էր. երբ դեռ ջոկատներ էին, Գյարավանդի թուրքերը անհանգստացնում էին Չափարի ժողովրդին: Մեր պարտքն էր՝ օգնության հասնել նրանց: Վազգեն Սարգսյանը պատվիրել էր ոչ մի պատերազմական գործողություն չձեռնարկել այդ գյուղի դեմ: Մորուքը չենթարկվեց այդ հրամանին, որովհետև թուրքերը մտնում էին Չափար, տները վառում: Այդ հողի վրա օդակայանում Վազգենը Ռաֆոյի հետ վիճեց. Վազգենն ասաց՝ «Ես քեզ արգելում եմ...», նա էլ թե՝ «Դու չես կարող, դալաթ ես անում...»: Մորուքը ոչ թե չէր ուզում ենթարկվել, այլ բնավորության գիծ է. այդ պահին ինչը ճիշտ է համարել, այդպես էլ վարվել է, ջոկատային սիստեմ էր՝ ճիշտը այդ պահին ինքն է: Եղել է դեպք, երբ երկու փամփուշտի պակաս ենք զգացել հենց Չափարի ժողովրդին պաշտպանելու համար: Խնդրեցինք, որ մեզ զենք-զինամթերք տան, Ալիկ Պետրոսյանն ասաց՝ «Մորուքին ասեք, թող դաշնակ Ազոյից վերցնի», ու չէին օգնում: Մորուքը առաջիններից էր, որ հասկացավ՝ կուսակցական խաղը պատերազմում կործանիչ է, իր կաշվի վրա զգաց՝ դաշնակցականն ասում է՝ «այս զենքը ես եմ տվել, տեղիցդ չշարժվես, մինչև չասեմ»: Դա մեզ ձեռք չէր տալիս: Ռաֆոն ռազմական ընդունակությունների տեր մարդ չէր, բայց կազմակերպչական ջիղ ուներ, կարողացավ ջոկատներին համոզել, որ կամավոր մտնեն բանակի կազմի մեջ: Բայց թուլություններ էլ ուներ. չկարողացավ ջոկատը միասնական պահել, չպիտի կողմնապահություն աներ, օգնություն էր գալիս՝ մեկին շատ էր հասնում, մյուսին՝ քիչ: Նա պիտի վեր կանգներ նման կենցաղային հարցերից, ինչը նրան չհաջողվեց:

Երբ ապաքինվելուց հետո վերադարձա գյուղ, թուրքերը նորից հարձակվում էին Հաթերքի կողմից, խուճապ էր առաջացել, և Հաթերքը նորից տվեցին: Թուրքի տանկերը Գետավանի կողմից հասան մինչև գյուղի տակի ճանապարհը: Ջոկատները խուճապահար փախան, միահամուռ, կազմակերպված ճակատ չկար, թեև այդ ժամանակ Մարտակերտի ընդհանուր հրամանատարը Սեյրան Օհանյանն էր: Մեր գյուղում էր նաև «Գրադի» Ժորան, Հաթերքի տղաները փախան անցան մեր գյուղ, նույնիսկ այդտեղ չսպասեցին, անցան Դրմբոն: Վերևում Սերժիկ Ասլանյանի ջոկատն էր, նրանք էլ փախան Զլդրան: Այդ ժամանակ օգնության եկան Մարտունու ջոկատները՝ Նելսոնի գլխավորությամբ, Վաղուհասի կողմից թուրքերը ուզում էին մտնել, բայց տղաները պահում էին: Գյուղին օգնության եկան նաև Հայաստանից, բայց շատ անկազմակերպ էին, ոչ ոք չգիտեր՝ ինչի համար է եկել, ում հրամանատարության տակ է մտնելու, որն է իր գործը... Մորուք Ռաֆոն այդ ժամանակ վիրավոր էր, հրամանատարությունը ժամանակավորապես Խալաստոյ Ազոյի վրա էր: Առաջարկեցի, որ Ազոն կազմակերպի, և միասին գնանք Մարտունու տղաներին օգնության, Հարությունագոմերի տակով գնանք և Գետավանի ճանապարհը փակենք, որ թուրքերը չմտնեն: Մարտի մեջ մտանք, Վաղուհասից նահանջող տանկերը եկան, մենք այնտեղ լավ դիրքավորված էինք, այնքան էլ լավ տեխնիկա չունեինք, բայց թշնամուն կարող էինք լավ «դիմավորել», ունեինք հակատանկային ֆագոտներ, ավտոմատներ, նռնականետներ: Տանկը թաքցրինք այնպիսի մի տեղ, որ եթե թշնամու տանկը գա անցնի, մեր տանկը կարողանա ետևից խփել: Տանկիստը Հաթերքից Ասլանն էր: Ես ակամա կազմակերպիչ դարձա: Մեր դիրքը շատ անապահով էր, նրանք բարձունքում էին, մենք՝ փոսում, թշնամին մեր բոլոր գործողությունները տեսնում էր: Մեր ֆագոտի առաջին կրակոցը դիպուկ չէր, երկրորդը կպավ «Շիլկային», 6 թուրք անմիջապես սպանվեցին: Թուրքերի տանկից տեսան, թե որտեղից է կրակոցը, ուղիղ նշանառությամբ խփեցին մեր ֆագոտին՝ սպանելով ֆագոտչիկին, որը երիտասարդ տղա էր, մի ստեփանակերտցի տղայի ոտքը կտրվեց, Հայկազ Բաղմանյանին խփեց-շպրտեց մի կողմ, Սերժ Ասլանյանին՝ մյուս կողմ, «կոնտուզիա» ստացան, տղաները մի պահ իրենց կորցրին, խուճապ առաջացավ: Մեր զոհի դիակը չթողեցինք փախանք, թաքցրինք մոշուտում, որ գիշերը վերցնենք: Երբ ետ եկա և տեսա, որ թուրքի տանկը անցել է, հասկացա, որ մեր տանկի անձնակազմը վախից փախել էր: Վերադարձանք գյուղ: Գիշերը դիակը բերինք, միևնույն ժամանակ տղաները զբաղվեցին զենք-զինամթերքի հարցով: Մեր խփածների վրայից 6 ավտոմատ են վերցնում, բայց «Շիլ-

կան» հնարավոր չի լինում բերել, արդեն շարքից դուրս էր եկել: Որոշում ենք առավոտյան գալ թիկունք՝ իմանալու, թե մեր հրամանատարությունը ինչ է մտածում: Սպասում էինք, որ Մարտունու տղաները ետ գան, բայց նրանցից էլ լուր չունեինք: Լուսադեմին Դրմբոնի տակը մեր դեմը կտրեցին: Կրակում էինք՝ չիմանալով, թե ովքեր են: Ձայներից հասկացանք, որ հայերը հայերի դեմ են կռվում. Յուրա Հովհաննիսյանի ջոկատն էր: Նրանց ճիշտ ինֆորմացիա չեն տվել, որ այդտեղ մերոնք են, նրանց ասել էին, որ ետևը լրիվ թուրքեր են, այնտեղ հայ չկա: Մեր բախտը բերեց, որ թուրքերը անփորձ էին, թե չէ բոլորիս այդտեղ կոտորելու էին: Յուրան ասաց, թե՝ ետ ենք դառնում, բայց ես ուզում էի հրամանատարությանը տեսնել, որովհետև չէր կարելի տղաների կյանքի հետ խաղալ: Սեյրան Օհանյանի հետ վիճեցի.

- Դու ի՞նչ հրամանատար ես, կարող ես ասել, թե քո առաջին գիծը որտեղ է, երկրորդը որտեղ...

- Ի՞նչ ես մեծ-մեծ խոսում...

- Մեծ-մեծ չեմ խոսում, հրամանատարը դու ես, դու պիտի լինես առաջին գծում, ոչ թե պատահական մարդիկ:

Այդ վեճը նա մինչև հիմա հիշում է, ասում է՝ «Մի դոցենտ Երևանից եկել, ինձ այստեղ բան է սովորեցնում...»: Այս վիճակը, մթնոլորտն էր տիրում 1992-ի օգոստոսի վերջին. Մեծ Շենը, Մաղավուզը արդեն ետ էինք տվել, հիմա էլ Դրմբոնն էինք տալիս: Զգացի, որ եթե մեծամտություն անեմ, հնարավոր է թիկունքիցս կրակեն, այդպիսի դեպքեր լինում էին: Երբ դրությունը Մարտակերտում ծանրացավ, և Վազգենը կազմեց «Մահապարտների» ջոկատը, մենք՝ նախկին մարտակերտցիներս, նույնպես որոշեցինք կամավոր «մահապարտների» հավաքել: «Զրաբերդ» հայրենակցական միությունը նվիրվեց կամավորական ջոկատներ ստեղծելու գործին՝ միևնույն ժամանակ նրանց ընտանիքներին նյութական օգնություն ցույց տալով: Ստեղծեցինք «Արծիվ-23» վաշտը՝ իրար փոխարինող ջոկատներով: Այդ ջոկատներին հիմնականում ուղարկում էինք Մարտակերտ՝ Ումուդլու, Զագլիկ և այլն: Ջոկատների կազմավորման ժամանակ «Արցախ» հայրենակցական միություն եկավ մի ռուս տղա և հարցրեց հաթերքցի Մարկոսին, ասաց՝ «Ինձ ասել են, որ ջոկատների կազմավորմանը մասնակցում է Մարկոսը, ես Ռուսաստանից եմ, ուզում եմ ընդգրկվել Ղարաբաղ մեկնող ջոկատների կազ-

մում»: Հարցուփորձ արեցի իր մասին: Այդ տղան Կուրսկի մարզի Ռիլսկ քաղաքից էր: Ծնողները մահացել էին, քրոջ հետ էր ապրում: Իրենց երեքսենյականոց տունը բնակեցնում են Խոջալուից փախած թուրքերով, բերում են թուրքերին, թե՝ պիտի նրանց ժամանակավոր պահեք: Պատմում է, որ մի օր աշխատանքից վերադառնում և իմանում է, որ թուրքը բռնաբարել է դեռահաս քրոջը և ընտանիքով փախել: Քրոջը տանում է Ուկրաինա՝ մորաքրոջ տուն, որոշում է գնացքից իջնելուց հետո միանգամից գալ Ղարաբաղ: Նրա պատմությունը ճշմարտանման էր, բայց կասկածի տեղիք էր տալիս: Ստուգելու համար՝ նրան վերցնում ենք, որպեսզի կռվի: Լավ մոտոհրաձիգ էր, Աֆղանստանում էր կռվել. մեզ այդպիսի տղա պետք էր: Դրամական օգնություն առաջարկեցինք, մերժեց, թե՝ «Ես եկել եմ կռվելու և ոխս հանելու համար»: Այդ տղայի անունն էր Վլադիմիր Միխայլով: Նրան ընդգրկեցինք ջոկատում՝ տալով ընդամենը մի քանի տուփ ծխախոտ: Պաշտպանության նախարարությունից զենք, հանդերձանք ստացավ՝ իր անունով գրանցված: 1993 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներն էին, պատրաստվում էինք Մարտակերտի ազատագրմանը Պուշկին Յալի ուղղությամբ: Վոլոդյան Սերժ Ասլանյանի ջոկատում էր: Հրամանատարը մեր գյուղից Ժորիկ Վանյանն էր, ես նրան խնդրել էի այդ տղայի հետ ընկերություն անել, միևնույն ժամանակ հետևել՝ նա եկել է կռվելու համար, թե մեզնից ինֆորմացիա տանելու: Բայց շատ լավ կռվում էր, հենց առաջին մարտերին ակտիվ մասնակցում էր: Տղաները երկու թուրքի գերի վերցրին: Նա դանակով սպանում է գերիներին, թե՝ սա քրոջս համար, սա էլ՝ Ղարաբաղի: Պուշկին Յալի օպերացիայի ժամանակ, երբ մերոնք հարձակման են անցնում, մեր տղաներից մեկը խրամատում վիրավորվում է: Վոլոդյան գնում է, որ վիրավոր ընկերոջը դուրս բերի, բայց ականը պայթում է, և նա զոհվում է: Ռուս տղային պատվավոր թաղեցինք Ստեփանակերտի եղբայրական գերեզմանոցում, հիմա նրա անունով տապանաքար է դրված: Ինձ տանջում է այն միտքը, որ նրա քույրը մինչև հիմա չգիտե, թե իր եղբայրը որտեղ է, որովհետև նա գնացքից իջել և չի ասել, թե ուր է գնում:

Պատմում է ԱԼԵՔՍԵՅ ՏՐՈՅԱՆՈՎՍԿԻՆ
(կամավոր Կիև քաղաքից),
Ստեփանակերտի ռազմական հոսպիտալ, 1992, հուլիս

- Ինչպես եք Լեռնային Ղարաբաղում հայտնվել:

Կամավոր եմ եկել: Գիտեի, թե ինչ է կատարվում Ղարաբաղում, առիթի էի սպասում, որ գամ, 24 տարի Բաքվում եմ ապրել, ադրբեջանցիներին շատ լավ գիտեմ:

- Իսկ գիտեք, որ ադրբեջանական բանակում քիչ չեն վարձու ռուս զինվորները:

Այո, լավ գիտեմ, դրա համար էլ ուզում եմ ռուսական անձնակազմով տանկ այրել:

- Ի՞նչ գործողությունների եք մասնակցել:

- Կիչանում եմ կռվել: Իսկ Զայլոի մոտ վիրավորեցին: Զսռացվեց, որ նորմալ կռվեմ:

- Իսկ ինչով եք բացատրում ադրբեջանցիների հաջողությունները Մարտակերտի ճակատում:

- Նրանք վերակազմավորել են իրենց բանակը: Վարձկան սպաների են հավաքագրել, հրամանատարները վարձկաններ են, իրենց գործի մասնագետներ: Երբ ադրբեջանցիներն են կրակում, կարելի է հանգստանալ ու ծխել, միայն մոլորված գնդակը կարող է կպչել: Իսկ երբ ռուսն է կրակում՝ պրծում չկա: Դուք ինձ պատասխանեք, ինչպես կարելի էր Մարտակերտը հանձնել: Չէ՞ որ 3 օր առաջ տղաներն անհնարին էին անում:

Շատերը բացատրում են նրանով, որ բանակային կառուցվածք չկար:

- Ի՞նչ բանակ, պարտիզանություն էր: Ահա Արամոյի խումբը հենց շտաբականների սխալների պատճառով ահագին կորուստներ կրեց: Ոչ նաև գործի իսկական մասնագետների բացակայության պատճառով

- Նոր տանկի դղրդյունը լսում են, ձիու պես են փախչում:

Ո՞ր ջոկատում էիք կռվում:

Ներքին Հոռաթաղի: Ես մինչև հիմա հավատում եմ, որ Սատանայատն են հանձնել: Այդ գյուղին մոտենալ նույնիսկ չէին կարող: Եվ ինչն չպայթեցրին գինու գործարանը: Կարկի էր կանգնեցնել, տանկով անգամ շպրտել, եթե տեխնիկա ունենայինք:

- Իսկ ինչն նրանք ռազմական տեխնիկա ունեն, իսկ մենք՝ ոչ:

Չգիտեմ: Տ-80 տանկեր Անդրկովկասի զինվորական օկրուգում չի եղել: Ասում են՝ Ուկրաինայից են ստանում: Մեր տղաներից տեսա մեկը ձեռքին փախչելիս: Ասում եմ՝ ուր, թե՝ ռուսերեն չենք հասկանում:

- Ո՞րն է եղը:

Տղաներին ոչ թե պետք է ավտոմատ քանդել հավաքել սովորեցնել, այլ տանկ պայթեցնել, որ տանկ տեսնելիս չվախչեն: Դիրք ես գրավել՝ այն մինչև վերջ պետք է պահել, մինչև արյան վերջին կաթիլը: Իմ կրտսեր եղբայրը՝ Սերգեյ Նալբանդյանը, նման ազատամարտիկ էր:

Դուք 24 տարի Բաքվում եք ապրել: Ինչն եք ադրբեջանցիների հետ բաժանարար գրամադրված:

Բաքվում աշխատում, կառուցում էին հայերն ու ռուսները: Իսկ իրենք չէին սիրում աշխատել:

Լավ, իրենց երկրում չեն աշխատում, աշխատեցնում են մյուսներին, այսօր պատերազմ է, կրկին ուրիշների են իրենց փոխարեն պատերազմ ուղարկել: Ուրեմն կարողանում են իրենց գործը կարգավորել:

Իրենց կորուստների մասին նրանք ոչինչ չեն հայտնում: Իսկ մեր կողմում զոհվում են ամենահամարձակները, քաջերը: Ուկրաինա կգնամ, կրուժեմ ռուս ու նորից ետ կգամ կռվելու: Իմ պատերազմը չի վերջացել:

«ԱԶԱՏԱՄԱՐՏ», թիվ 28, հուլիս, 1992 թ

Պատմում է ԲԵՆԻԿ ԿԱՐԱԽԱՆՅԱՆԸ (հեռուստաօպերատոր), Ստեփանակերտ, 25.10.2005 թ.

Ծնվել եմ Լեռնային Ղարաբաղի Հադրութի շրջանի Խծաբերդ գյուղում: Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումն ավարտելուց հետո տեղափոխվել եմ Բաքու և մինչև բանակ գնալս աշխատել եմ «Ազերֆիլմի» կինոստուդիայում: 1973 թվականին տեղափոխվել եմ Ստեփանակերտ:

Ես Բաքվի կինոստուդիայում աշխատում էի որպես երկրորդ օպերատոր: Առաջին օպերատոր լինելու համար պետք է ազգությամբ թուրք լինեի, ուստի միշտ երկրորդ էի: Նկարահանել եմ երկու ֆիլմ: Երբ առաջինը հանձնել եմ, տեսել եմ, որ տիտրերում իմ ազգանունը Կարախանյանի փոխարեն գրվում է՝ Կարախանով: Դիմել եմ տնօրենին՝ «Այս ինչ է կատարվում», ասել է՝ «Երևի սխալվել եմ»: Երկրորդ ֆիլմը, երբ նկարահանել ենք և հանձնել, նույն պատմությունն է կրկնվում: Մտնում եմ տնօրենի մոտ, կոիվ եմ սարքում: Բացատրում է.

- Милый мой, это азербайджанский фильм, что ты хочешь, чтобы в азербайджанском фильме в титре пошла Караханян? Такого не будет...

Ասել եմ, որ եթե այդպես է, չեմ ուզում այդտեղ աշխատել: Իսկ նրանք ինձ գնահատում էին որպես լավ մասնագետի: Կինոստուդիայում 900 մարդ էր աշխատում, որից 4-ը հայեր էին, բոլորս էլ լավ մասնագետներ էինք: Սիլանյան Ռոբերտն էր, բայց տիտրերում Սիլոն էր գրվում, օպերատոր էր, Արտյոմ Արությունովն էր և Գրիգորյանը: Այդ պահին Բորիս Կևորկովը մտնում է տնօրենի առանձնասենյակը: Տեսնելով ինձ

տնօրենի հետ վիճելիս՝ հարցնում է՝ «Ի՞նչ է եղել»: Ես ոչինչ չեմ պատասխանում, դուրս եմ գալիս: Այդ նույն օրը՝ երեկոյան, ինձ հայտնում են, որ Կևորկովը կանչում է: Մեքենան ուղարկում է իմ ետևից: Հարցնում է, թե ծնունդով որտեղից եմ, պատասխանում եմ, որ Ղարաբաղից եմ: Նա ինձ ասում է, որ ինքը տեղափոխվելու է Ղարաբաղ՝ որպես կուսմարզկոմի առաջին քարտուղար և հարցնում է, թե ես կգնամ Ղարաբաղ աշխատելու: Ասում եմ.

- Գամ Ղարաբաղ ինչ աշխատեմ:

- Այնտեղ հեռուստատեսություն ենք բացելու, կգաս այնտեղ աշխատես:

- Հարց չկա, եթե դա իրականություն է:

Երկու ամսից նա գալիս է Ղարաբաղ, տեղափոխման թուղթ է ձևակերպում: 1973 թվականին ես Բաքվից տեղափոխվում եմ Ղարաբաղ: Հեռուստատեսությունը դեռ չէր բացվել: Սկզբում աշխատում եմ թերթում՝ որպես ֆոտոթղթակից, ֆաբրիկայում՝ որպես դիսպետչեր, մի խոսքով, գլուխս պահել եմ մինչև 1988 թվականը: 1988 թվականին Ղարաբաղում բացվում է հեռուստատեսությունը: Առաջին իսկ օրից անցնում ենք աշխատանքի: Երևանից մասնագետներ էին հրավիրել՝ Դավթյան Նիկոլային, Սիմոնյան Գագոյին, Մկրտչյան Գագոյին: Հեռուստատեսությունն ինձ համար նորույթ էր, այն տարբերվում է կինոյից: Գրիգոր Սողոմոնյանի գլխավորությամբ սկսում ենք հեռուստատեսությունը սարքել:

- *Հիշում եք առաջին նկարահանումները:*

Բ.Կ.- Թուրքերը սկսեցին զինված հարձակումները: Քաղաքում ռուսները սպանեցին Հակոբյան Արմենին: Հասանաբադում թուրքերը Սպարտակին սպանեցին: Նկարում էինք ջարդած մեքենաները, «Իկարուսները»: Այդ ամենը տեսնելով՝ բոլորիս մեջ վրեժի զգացում էր մտել: Երբ թուրքերը Արփագյաղուկ են մտել, հայերին կոտորել, ռուսներն այստեղից պետք է գնային, դիակները բերեին: Ասել եմ՝ «Եկեք մեկնումեկս՝ որպես օպերատոր, գնանք հետները, տեղում նկարահանենք այրված տները, նրանց արած մյուս վայրենությունները: Ես Հադրութի շրջանից եմ, գնանք, ասենք, որ իմ բարեկամն այնտեղ է, ուզում եմ գնալ այնտեղ, նրան բերել»: Փոքր, սև կամերա կար, գցել եմ պայուսակի մեջ, նրանց հետ նստում եմ «BTR»-ը, գնում ենք: Անցնում ենք Հադրութը, մտնում Ցոր, ապա Բանաձոր, Առաքյոլ գյուղերով անցնենք: Այն ժամանակներն

էին, երբ Հաղրութի շրջանի 16 գյուղերը թուրքերը, ռուսների հետ միասին «մաքրել» էին հայերից, ժողովրդին տարել Գորիս, այնտեղից էլ բաց թողել: Նայում եմ՝ տեսնեմ «Ջիլ» է կանգնեցրած, ճանապարհը փակած: Հրամանատարը, որը գնդապետ էր, իջավ, ասաց, որ ճանապարհը բացեն: Ես կամերան հանեցի, որ նկարահանեմ: Սպա ուղեկիցս գլխի ընկավ և զգուշացրեց, որ եթե կամերան տեսնեն, թույլ չեն տա շարունակել ճանապարհս: Ասում եմ՝ «Իմ սեփական կամերան է»: Չեմ ասում, որ ես հեռուստատեսությունից եմ: Բարձրանում եմ, մի քանի կադրեր նկարում: Երբ հրամանատարը վերադառնում է «BTR», կամերան թաքցնում եմ: Թուրքերը մեքենան քաշում են, ճանապարհ տալիս: Հաջորդ գյուղն անցնելիս տեսնում ենք՝ ճանապարհին ինչ է կատարվում: Թուրքերը, հայերի տները թալանած, մոտոցիկլետների, ձիերի, էշերի վրա բեռնած տանում եմ: Մոտոցիկլետն այնքան բեռնած էր, որ բեռնատար մեքենան չէր կարող այդքանը տանել: Կամերան հանում եմ, «BTR»-ի ճեղքից նկարահանում: Հրամանատարը տեսնում է, ասում.

- Что ты делаешь?

- Снимаю.

- Зачем снимаешь?

- ?!...

- Ну и что, что творится?... Я такое много увидел, не первый раз. Я в Чернобиле увидел такое!

Ասացի, որ Չեռնոբիլի դեպքն ուրիշ էր, այնտեղ աղետ էր, իսկ այստեղ մարդիկ տարիներով ապրել են, տուն-տեղ դրել, դուք նրանց ստիպողաբար հանել եք, թուրքերին ասում՝ եկեք, թալանեք: Նա սպառնաց, որ հիմա ինձ կիջեցնի և կգցի ադրբեջանցիների ձեռքը: Ասացի՝ «Միայն փորձիր»: Հետո խնդրեցին, թե՝ կամերան քաշի: Դադարեցրի նկարելը: Գալիս ենք, հասնում Արփագյադուկ: Այդտեղ նորից կամերան հանում եմ, հանգիստ նկարում: Հետո այդ նյութը բերում եմ, եթեր ենք տալիս: Հիմա, ցավոք, այդ նյութից մի կադր անգամ չկա: Հեռուստատեսության շենքը պայթել է, ամեն ինչ այրվել է: Երբ կռիվը դեռ չէր սկսվել, գնացել էինք Կարաքենդ՝ նկարահանումների: Նկարել ենք Կարաքենդի թանգարանը: Ետ դառնալիս Աղդամով ենք եկել: Մենք հեռուստատեսության անցաթուղթ ունեինք, որ իրավունք ունենք այդ գյուղերում նկարահանումներ անել: Աղդամի վերևում պոստ էր դրված: Ռուսները կանգնեցնում են, թե՝ որտեղից եք գալիս, ո՞ւր եք գնում: Ասում եմ, որ գնում

ենք Ստեփանակերտ, անցաթուղթը հանում, ցույց ենք տալիս: Անցնում ենք, Ասկերանի տակ էլ էր պոստ դրված: Այդ ժամանակ կինո էի նկարում, կինոկամերա էր ինձ մոտ: Այդ պոստում էլ են կանգնեցնում, վարորդը չի կանգնում: Ասում է, որ եթե կանգնեինք, կբռնեին, նկարելիս կամերան տեսել էին: Մեզ ասել էին, որ չի կարելի ռազմական դիրքերը նկարել: Ասկերանից դուրս գալիս ճանապարհը փակել, չէին թողնում դուրս գանք: Ես նկարում եմ նրանց: Գալիս են, դուռը բացում, թե՝ «Դուրս եկեք, ինչո՞ւ եք պոստերը նկարում»: Ասում եմ՝ «Ես պոստ չեմ նկարել, ես ամրոցն եմ նկարել»: Թե՝ «Ի՞նչ ամրոց... Ձեզ պետք է տանենք»: Մեր մեքենան շրջում են, տանում Ասկերանի պարետատունը: Մինչև կհասնեինք պարետատուն, ես հասցնում եմ ժապավենը կտրել, կամերայի միջից հանել, գցել մի սև տոպրակի մեջ: Կամերան նորից միացնում եմ, հենց այնպես նկարում է: Տասը րոպե ժապավենս հենց այնպես նկարում է: Տեղ ենք հասնում, կամերան վերցնում են, թե՝ «Ի՞նչ ես նկարել», ասում եմ՝ «Ուզել եմ բերդը նկարել, թույլ չեն տվել»: Ժապավենը վերցնում են, ուղղաթիռով ուղարկում Կիրովաբադ, այնտեղ հայտածում են: Բոլորին բաց են թողնում, ինձ պահում են: Երեք ժամ անցնում է, մինչև Կիրովաբադից զանգում են, ասում, որ ոչ մի բան չեն նկարել: Բաց են թողնում: Գալիս եմ, իմ թաքցրած ժապավենը հայտածում եմ և եթեր տալիս, ցույց տալիս, որ այսինչ կետերում պոստեր են դրված: Նրանք գժվել էին: Գալիս են հեռուստատեսություն, թե՝ «Դու ասել էիր, որ չես նկարել», ասում եմ՝ «Միգուցե ուրիշն է նկարել, դու վերցրել էիր իմ նկարած ժապավենը»: Այդպես էլ չեն կարողանում ապացուցել:

Գորբկոմի շենքում, որը գտնվում էր հեռուստատեսության շենքի հարևանությամբ, խորհուրդը պետք է հավաքվեր, ես էլ հեռուստատեսությունում էի, երրորդ հարկում: Պատուհանով նայում եմ, տեսնում, որ եկան, շենքը շրջափակեցին: Կամերան վերցնում եմ, սկսում նկարահանել: Ներքևից մեկը տեսնում է, որ նկարում եմ: Վեց հոգով մի գնդապետի հետ մտան շենք և բարձրացան ուղիղ երրորդ հարկ, թե՝ «Ո՞վ էր նկարում երրորդ հարկից»: Երբ ես տեսա, որ բարձրանում են, կասետը փոխանցեցի ռեժիսոր Դավթյան Կոլային: Նրանք հարցնում են՝ «Ո՞վ է նկարել....», երեխաներից մեկը ծախում է, որ ես եմ եղել: Հարցնում է՝ «Ի՞նչ ես նկարել», ասում եմ՝ «Օբյեկտիվն էր փչացել, ստուգում էի՝ աշխատում է, թե՝ ոչ», թե՝ «Ո՞ւմ ես խաբում... Քեզ տանում ենք»: Տանում են պարետ Սաֆոնովի մոտ: Քանի որ ես արդեն մի քանի անգամ եղել էի

Սաֆոնովի մոտ, նա ասում է՝ «Ահա, եկել ես, վերջ, դու կգնաս Ռոստով», ասում եմ՝ «Մեծ հաճույքով, ընկեր գեներալ մայոր, դուք ինձանից կհանգստանաք, ես՝ ձեզանից»: Դուրս էինք գալիս, որ գործ անենք, մի քայլ էինք անում, բռնում էին: Ասում է. «Որտեղ է ժապավենը, ինչ ես նկարել, ինչո՞ւ ես նկարել, քեզ ասել էին, որ չի կարելի նկարահանել»: Ասում եմ՝ «Ես չեմ նկարել»: Սողոմոնյանը, մյուսները խառնվում են: Այն ժամանակ մամլո քարտուղարը՝ Բրրկին Վադիմն էր, մոտ էինք իրար հետ: Գալիս է, թե՝ «Ի՞նչ է եղել», բացատրում եմ: Մտնում է, Սաֆոնովի հետ խոսում է, թե՝ «Ընկեր գեներալ, եթե նա իրականում չի նկարահանել, ինչո՞ւ եք այդպես անում»: Այդ անգամ էլ են բաց թողնում:

Բերդաձորից երեխաները հեռագիր էին ուղարկել, իբր մի աղջիկ հղի է, պետք է ծննդաբերի: Բերդաձորում իրավիճակը ծանր էր, թուրքերը գյուղը շրջափակել էին: Մտածում էինք, թե ինչպես անենք, որ այնտեղ նկարահանումներ անցկացնենք: Դարձյալ կամերան վերցնում եմ, գցում պայուսակի մեջ, խալաթ եմ հագնում՝ իբր բժիշկ եմ և գնում եմ օդակայան, որ ռուսների ուղղաթիռով գնանք: Օդակայանում մի խոջալվեցի թուրք ինձ ճանաչում է, ասում է, որ ես բժիշկ չեմ, թղթակից եմ: Տեղում ինձ բռնում են, տանում պարետատուն, Սաֆարովի մոտ: Նա էր թուրքերի հրամանատարը, գրպաններս թափ են տալիս, անցաթուղթս, այլ փաստաթղթեր հանում, որ վերջ, արդեն պետք է տանեն Կիրովաբադ: Պարետատանը գնդապետ Մաքսիմով կար, մտնում է, թե՝ «Ի՞նչ է եղել»: Պատմում են, որ խաբել եմ՝ իբր բժիշկ եմ, բայց իրականում թղթակից եմ: Այդ պահին հաջողացնում եմ, պայուսակս տալիս եմ Մարության Վալերիկի տղային՝ Արթուրին, ասում՝ «Արթուր, կամերան պահիր, նա որ ինձ տեսել է, հաստատ տանելու են: Դու կամերան վերցրու, եթե կարող ես, մի քանի կադր նկարիր»: Արթուրը կամերան վերցնում է, ինձ ուղղաթիռով տանում են: Ինձ մոտ կամերա չկար, ոչ մի բան չեն կարողանում ապացուցել: Մինչև ինձ հանելը Խոջալուի դպրոցի տնօրենն է մտնում, ինձ ճանաչում էր: Հարցնում է, թե ինչ է եղել, իմ պատմությունն եմ անում: Նա թե՝ «Լավ ապրում էինք, այդ ինչ արեցիք», ասում եմ՝ «Բայց մենք ինչ ենք անում, մենք իրավունք չունենք մեր հողում հանգիստ ապրել»: Այդպես խոսում էինք, գնդապետը մտնում է, թե՝ «Ի՞նչ է եղել»: Տնօրենը թե՝ «Ոչ մի բան, խոսում ենք, նա թղթակից է, հատուկ գալիս է ձեզ հետ, որ նկարահանումներ անի»: Նա էլ թե՝ «Հա՛, այդ դեպքում դու կթռչես ետ՝ Ստեփանակերտ»: Նստեցնում են «ՈՒԱԶ», ետ ուղարկում Ստեփանակերտ: Արթուրն էլ չի կարողանում որևէ բան նկարել, թուրքերը շրջապատել էին: Մի քանի օրից Սողոմոնյանը գնում է պարետատուն, խոսում, կամերան ետ վերցնում: Այս ամենը մինչև պատերազմը սկսվելն էր:

- Իսկ ջոկատների կազմավորման ժամանակ ինչ նկարահանումներ եք արել:

Բ.Կ.- Հենց առաջին օրից նկարահանել ենք դիրքերը՝ սկսած Կրկժանից: Մեր հեռուստատեսությունում ջոկատ էր ստեղծվել: Քաղաքի շուրջբոլորը դիրքեր էին: Քրմնքարի ֆերման, որի դիմաց թուրքական գյուղ կար, պահում էին հեռուստատեսության տղաները: Ես էլ եմ մի քանի անգամ գնացել հերթապահության և միշտ կամերան վերցրել եմ ինձ հետ: Հրաշալի օպերատոր ունեինք՝ Համբարձումյան Սեգոն: Թեև նա Պոլիտեխնիկական ինստիտուտն էր ավարտել, բայց ծնվել էր օպերատոր լինելու համար: Այն ժամանակ վեց օպերատոր տղաներ էինք, բայց Սեգոն, իր արած նկարահանումներով, առանձնանում էր բոլորից: Նա ոչ թե օրերով, այլ ժամերով էր աճում: Երբ շարժումն սկսվել է, նա կամերան դրել է մի կողմ, թե՝ «Ձենք պետք է վերցնենք, զենքով պաշտպանենք»: Ինչքան եմ փորձել համոզել, թե՝ «Այ տղա, սա էլ է զենք», ասաց՝ «Չէ, դու կամերայով պետք է գործ անես, ես՝ զենքով»: Չկարողացա նրան համոզել: Խոջալուի դիրքերում էինք: Նկարահանումներ էինք անում, Մոկվայից զանգել էին, նյութ էին ուզել: Կրկժանում բախում էր եղել: Պարետի հետ նստել եմ «BTR»-ը, բարձրացել Կրկժան, մեր երեխաները այնտեղ էին: Գևորգյան Բորյան էլ էր ինձ հետ, հիմա նա Մոսկվայում ինչ-որ լրատվական ծառայությունում է աշխատում: Գնդապետին խնդրել եմ, որ մի զինվոր ինձ ծածկի, ես մտնեմ, երեխաներին տեսնեմ, գամ: Մի հիմար ուզբեկ կար, նա թե՝ «Ես կծածկեմ»: Դուրս է գալիս, ավտոմատը ձեռքին կանգնում, բացատրում եմ, որ տուն պետք է գնամ: Փոխանակ ինձ ծածկի, ավտոմատը ձեռքին սկսում է վազել տան ուղղությամբ, ես էլ կամերան ձեռքիս վազում եմ նրա ետևից: Այդ պահին թուրքերը սկսում են մեզ վրա կրակելը: Արագ մտնում ենք դարպասներից ներս, ծառերի ճղները թափվում են գլխներիս: Սեգոն ցղայնանում է մեզ վրա, թե՝ «Այս ինչ եք անում»: Ասում եմ՝ «Նրան ասել էի, որ ինձ ծածկի, ծածկելը այն է դառել, որ իմ դիմացից սկսել է վազել, ես էլ ինչ կամերան չմիացնեի, նրա ետևից վազեի»: Այդ ժամանակ էլ փորձեցի Սեգոյին համոզել, որ կամերան վերցնի, սկսի աշխատել, չհա-

ջոդվեց: Խոջալուի օպերացիայից հետո «չիստկայի» ժամանակ Սեգոն զոհվեց:

Ես և Վ.Բաղիրյանը գնացել էինք Մեծ Շեն նկարահանումներ անելու համար, որ բերենք, եթեր տանք: Հասել ենք Մեծ Շեն,Գրիգորյան Մանվելի մոտ: Նա մեզ ընդունել է, նկարահանել ենք, հարցազրույցներ ենք վերցրել: Մանվելն ասաց՝ «Տղերք, լավ եք եկել, վաղը Թալիշը խփելու ենք, կուզեք նկարահանել», ասել ենք՝ «Հարց չկա»: Գիշերը մնացել ենք նրանց մոտ: Գումարտակի մասիսցի հրամանատար կար՝ Լյովան, առավոտյան նրա գումարտակի հետ գնում ենք, որպեսզի օպերացիան սկսենք: Հասել ենք առաջին գիծ, որտեղից պետք է գրոհն սկսեն, թուրքերը սկսեցին մեզ խփել ամեն տեսակի զենքերով, տանկով, նռնականետով: Ես նկարահանում էի: Մերոնք սկսեցին գրոհը: Շատ հետաքրքիր կադրեր են ստացվել: Այդ տեսակերիզը, որը պահպանվել է, շատ արժեքավոր է՝ և կենցաղային, և մարտական կադրեր կան: «KPPG» կար, տղերքը ուզում են խփել, մուշկան չի աշխատում: Թալիշի ազատագրումը նկարահանել ենք: Նյութը պետք է հասցնենք քաղաք: Տղերքն էլ զբաղված էին: Գումարտակի հրամանատարը մի մասին ուղարկել էր հետախուզության, մյուս մասը պետք է «սաներեր» աներ: Մնացել ենք երկու լրագրողներով կանգնած: Լյովային դիմեցի, որ մի զինվոր մեզ ուղեկցի, որպեսզի նյութը հասցնենք քաղաք, եթեր տանք, մարդիկ իմանան, որ Թալիշը մերն է: Լյովան ասաց, որ այն ճանապարհով, որով եկել ենք, կարող ենք հանգիստ ետ դառնալ, միայն ֆերմայի կողքի ձորը շրջանցենք, քանի որ ականապատած էր: Այդպես էլ անում ենք, նույն ճանապարհով ետ ենք դառնում: Ֆերմայի մոտ բաց տարածություն էր, թուրքերը մեզ տեսնում են: Սկսում են ականանետով խփելը, գնալով ականները մեզ մոտ էին ընկնում: Մտածում ենք մտնել ձորը, որ մեզ չխփեն, բայց ձորն էլ ականապատած է: Ուղեկցիս առաջարկեցի կամերան մնա ինձ մոտ, ինքը վերցնի տեսաերիզը, ինձանից տաս-քսան քայլ ետ գնա և իմ ոտնահետքերով իմ ետևից գա: Շաղոտ օր էր, ոտք դրած տեղը երևում էր: Այդպես իջանք ձորը: Արկի ձայնը լսելուն պես պառկում էինք: Մի անգամ էլ Վարդգեսը, որ բոյով, ջանով մարդ էր, պառկեց ինձ վրա: Առում եմ՝ «Այ մարդ, չմ ասել՝ ինձանից տաս-քսան քայլ ետ գնա, մեր օգուտը որն է, երկուսս էլ կզոհվենք»: Բախտներս բերում է, այդ ձորից դուրս ենք գալիս, ականի չենք հանդիպում: Ներքևում «BMP-2» էր կանգնած, որ պետք է ետ դառնար Մատաղիս: Տղերքն

ասում են, որ պետք է գնան Մատաղիս, խնդրում եմ, որ մեզ էլ տանեն: Նստում ենք զրահամեքենան, գալիս Մատաղիս, այնտեղից մերենայով գնում Մեծ Շեն, որտեղից Մանվելը մեզ ուղարկում է Ստեփանակերտ: Եթեր ենք տալիս, ժողովուրդը ոգեշնչվում է՝ իմանալով, որ Թալիշն ազատագրված է:

Երբ հեռուստատեսության շենքը պայթեց, հեռուստատեսությունը փակվեց: Ես աշխատում էի ԱԺ լրատվական ծառայությունում՝ որպես օպերատոր, նյութեր էի պատրաստում նաև դիրքերից: Նյութեր էի պատրաստում նաև Ռուսական ՕՐՏ, ՐՏՐ, ինչպես նաև արտասահմանյան հեռուստալիքների համար: Նյութերը ուղարկում էի Երևան, այնտեղից հասցնում էին այդ հեռուստալիքներին: Գեղամ Բաղդասարյանի հետ որոշում ենք գնալ Սարսանգի ջրամբար, նկարահանումներ անել և ցույց տալ, որ այն ազատագրված է, մեր զորքերի հսկողության տակ էր: Հասնում ենք Դրմբոն: Այնտեղ մի կին կար՝ Սիրան աքան, որը մնացողով Հաթերքից էր, բայց Սումգայիթում էր ապրել: Սումգայիթի դեպքերից հետո եկել էր Ղարաբաղ, զենքը ձեռքին կռվում էր: Այդ կնոջ մասին հետաքրքիր նյութ եմ պատրաստում: Սիրան աքան էլ էր գնում Սարսանգի ջրամբար, նրանց հետ միասին նկարահանումներ անելով գնում ենք դիրքեր: Սարսանգի ջրամբարում վաթսունն անց մորուքով մի տղամարդուց՝ Բաբկենից էլ ենք հարցազրույց վերցնում: Բաբկենը ուշանում էր: Երիտասարդ կովողների էլ ենք խոսեցնում: Հարցազրույցի ժամանակ թուրքական տանկը մոտենում է, խփում և գնդացիրը (շիլկոն) վառում: Կամերան միացրած էր, ամեն ինչ նկարում էր: Թմբից կրնում էր, որ թուրքերը գալիս են: Շրջափակման մեջ էինք ընկել, դուրս գալու տեղ չկար: Ջրամբարի ամենավերևը ութ հոգով կանգնած էինք, տանկը նորից խփում է, ալիքը բոլորիս շպրտում է: Կանգնում եմ, ինձ հետ ոչինչ չէր կատարվել, միայն կամերան էր անջատվել: Ուզում եմ միացնել, չի ստացվում, փչացել էր: Կամերան դնում եմ մի կողմ, սկսում վիրավորներին օգնել: Բաբկենը՝ զազիկեցի նշանառուն, ծանր վիրավորվել էր: Թևը պոկվել, մի կողմի վրա կախվել էր: Շարֆովս ձեռքն եմ կապում: Աչքը ցրիվ էր եկել, աչքն էլ եմ կապում: Սկսում եմ վիրավորներին հանել: Սևանից եկած ջոկատ կար: Նրանց տղաներին ասացի, որ իրենց հրամանատարին հանեն: Սիրանը ոտքից էր վիրավորվել: Գեղամը նրան օգնում, հանում է: Մոտ 250 մետր վիրավորներին պետք է տանենք: Քարքարոտ ճանապարհով պետք է իջնենք ջրամբարի

մոտ, այնտեղից էլ բարձրանայինք մեքենայի մոտ:

Մի հաղորդաշար կար, կոչվում էր «Հին իրեր»: Ռեժիսորը Հարությունյան Գայանեն էր, ինչյունային ռեժիսորը՝ Ֆարամազյան Կարինեն: Նկարել ենք Կարմիր գյուղը՝ «Կարմիր շուկան»: Այդ օրը նկարահանումներ անելու թույլտվություն չունեինք: Ավտոբուսով ետ ենք դառնում: Պոստը շրջանցել, անցել էինք: Ետ դառնալիս որոշել ենք Մալիբեյլու գյուղով գնալ: Եկել ենք, որ մոտենանք Մալիբեյլուին, տեսնենք դիրք դրած, ռուսները կանգնած: Կանգնեցնում են մեքենան, մոտենում, հարցուփորձ են անում, տեսնում են, որ մեզ հետ կամերա կա: Երեխաները հանում, անցաթուղթ են ցույց տալիս, նրանք թե՝ «Պետք է թույլտվություն լիներ»: Հանում եմ, իմ անձը հաստատող թուղթն եմ ցույց տալիս՝ «Союз журналистов СССР», բացատրում, որ նկարահանումներից ենք գալիս: Այդ անցաթուղթը տեսնելով՝ հանգիստ են թողնում: Նրանք հարցնում են, թե ես Մոսկվայից եմ եկել: Չեն հասկանում, որ ես այստեղից եմ, ուղղակի Լրագրողների միության անդամ եմ: Ասում եմ՝ «Հա, հատուկ առաջադրանքով Մոսկվայից եկել ենք, նկարահանում ենք, հիմա պետք է գնանք Ստեփանակերտ, այնտեղ պետք է նկարահանենք»: Զգուշացրին, որ չենք կարող գյուղով անցնել, այնտեղ ազերիներն են կանգնած: Ասում եմ՝ «Բա ինչ անենք», նա թե՝ «Լավ, հիմա...»: Երկու ավտոմատավոր զինվորների է դիրքից վերցնում, կանգնեցնում պատուհանների կողքերին, ավտոմատները պատուհաններից հանում, ինքն էլ կանգնում է մեջտեղում, այդպես շարունակում ենք ճանապարհը: Իսկապես, գյուղում՝ ճանապարհի աջ և ձախ կողմերում, կանգնած էին թուրքերը՝ քարերը ձեռքներին: Տեսնելով, որ Ստեփանակերտի ավտոբուսն է, պատրաստվում էին քարկոծել ավտոբուսը, տղերքը մի-երկու անգամ կրակահերթ բացեցին: Մալիբեյլուով անց են կացնում, հասցնում մինչև ներքևի կամուրջը, այդտեղից ետ դառնում: Հասել ենք քաղաք, մեզ ասացին, թե՝ «Ի՞նչ եք հաստագլխի գործեր արել՝ Մալիբեյլույով եք ետ դառել: Որտեղով գնացել էիք, այնտեղով ետ դառնայիք»: Մենք չէինք կարող նույն ճանապարհով ետ դառնալ, քանի որ անձրև էր եկել, ճանապարհը անանցանելի էր դարձել:

Պաշտպանության նախարար, գեներալ Յազովը գալիս է Ստեփանակերտ: Իմանալով նրա ժամանման մասին՝ գնացինք Խոջալուի օդակայան: Կամերան ձեռքիս էր: Ինձ հետ էր նաև Դավթյան Կոլյան և, եթե չեմ սխալվում, Ստեփանյան Սլավիկը: Օդակայանում ահագին մարդ էր

հավաքվել, թուրքեր էլ կային: Անցաթուղթը ցույց ենք տալիս, մտնում օդակայան: Սաֆոնովը եկավ: Մեքենայից իջավ, մոտեցավ, ձեռքը մեկնեց, բարևեց: Դա այն դեպքից հետո էր, երբ ինձ պետք է ուղարկեր Ռոստով: Ասաց.

- Դե, ինչ եք անում այստեղ:

- Եկել ենք, որ Յազովին նկարենք:

- Ես մյուսներին չողջունեցի:

- Այո, այդպես է:

- Քեզ ձեռքով բարևեցի:

- Այո:

- Հիմա հավաքիր քո խումբը, և բոլորդ այստեղից գնացեք: Ոչ ոք չմնա այստեղ:

- Ինչու:

- Ասված է, ուրեմն հրամանը կատարեք, առանց առարկությունների:

Բոլորս դուրս եկանք օդակայանից, բայց այդ տարածքից չհեռացանք, ինչպես կարող է լրագրողը այդպիսի իրադարձությունը բաց թողնել: Կամերան միացրած էր: Ուղարկեցին մի լեյտենանտի, նա մոտեցավ, թե՝ «Ընկերներ, կամերան անջատեք և դրեք գետնին»: Ասում եմ՝ «Խնդիր չկա»: Բացատրում եմ, որ կամերան գետնին դնել չի կարելի, իջեցնում եմ, դնում ոտքերիս արանքում: Տեսնում եմ, որ ուղղաթիռներն արդեն եկան: Կռանում եմ, իրը ոտքս եմ քորում, կամերան միացնում, ամեն ինչ նկարում՝ ինչպես ուղղաթիռները վայրէջք կատարեցին, Յազովի ուղղաթիռից դուրս գալը: Ափսոս, չէի կարողանում «նաեզդ», «օտյեզդ» անել: Կոլյան ասաց՝ «Արա, քո ետևում կանգնած են ոստիկանները», ասում եմ՝ «Ի՞նչ եմ անում, կամերան ոտքերիս արանքում դրած՝ կանգնած եմ»: Նյութը եթեր ենք տալիս: Սաֆոնովը գալիս է ստուդիա, թե՝ «Ամեն դեպքում, ինձ պատմիր, ինչպես, երբ կարողացար նկարահանել: Ես երկու սպա էի ուղարկել, որ հետևեն քեզ, ինչպես կարողացար...»: Պատմեցի, ինչպես եմ հաջողացրել նկարահանել:



Պատմում է ԴԱՎԻԹ ՈՍԿԱՆՅԱՆԸ (ազատամարտիկ)
Մարտակերտ, 20.10.2005

1988 թվականին, երբ շարժումն սկսվել է, ուսանող էի: Մանկավարժական ինստիտուտում էի սովորում: Ստեփանակերտում ուսանողական ջոկատ ենք կազմել, գնացել Բերդաձոր, Ղարաղշլաղ: Այդ ժամանակ այնտեղ, եթե չեմ սխալվում, Առնոն էր և Անդրանիկը: Խմբերով իրար փոխարինելով՝ գնում էինք այնտեղ: Այդ ժամանակ զինված էինք հրացաններով: Ամենալավ զենքը երեսուներկու տրամաչափի հրացանն էր:

Բ.Կ.- *Անդրանիկի հետ ինչ գործողություններ եք արել:*

Դ.Ո.- Գործողություններ չեն եղել, ուղղակի դիրքեր ենք պահել: Զորս դիրքեր են եղել:

Երբ երկրաշարժը եղել է, գնացել ենք Կիրովական, ինստիտուտը փոխել եմ այնտեղ: Հետո ետ ենք եկել: Կոիվը արդեն ավտոմատով էր: Մի լավ ընկեր տղա ունեի: Հիմա նա այստեղ չէ, թողել գնացել է Ռուսաստան: Նա զենք էր սարքում, լավ էլ զինագործ էր: Մի որոշ ժամանակ մեր թաղում՝ Մարտունու փողոցում ջոկատ ենք ստեղծել: Հրամանատարը Գարիկն էր:

Մեր դասակը Մեհտիշենով է Խոջալու մտել: Մեզ հետ Միքայելյան Սասունի և Սուրիկի ջոկատներն են եղել: Սասունը Հրազդանից էր, Սուրիկը՝ Սևանից: Նրանք շատ լավ տղաներ են: Մեր դասակից մի զոհ ենք տվել օդակայանում: Խոջալուի գործողություններից հետո ես գնացել եմ, արդեն «26»-ում եմ եղել:

Բ.Կ.- *Խոջալուի մարդից կարող եք դեպք հիշել:*

Դ.Ո.- Կոնկրետ բան չեմ կարող ասել: Կարող եմ պատմել այն, ինչը անձամբ ինձ հետ է կապված: Ես զենքի հետ գործ ունեի, զենք էի սարքում, զենքից գաղափար ունեմ: Մեր դասակում մի տղա կար՝ Հակոբը: Նրա զենքը չի կրակում: Գիշեր էր, մութ էր: Ասում է.

- Զենքս չի կրակում:

Վերցնում եմ: Փամփուշտը մնացել էր փամփշտակալում: Փականը բաշում եմ հանում, փամփուշտը դուրս է գալիս:

Խոջալուում հինգհարկանի շենք կար: Ներքևում թուրքեր կային: Մինչև առավոտ մենք այնտեղ նայել ենք, բայց ոչինչ չի պատահել: Թուրքերին այնտեղից հանելիս մարտեր են եղել, բայց մենք այնտեղ չենք եղել: Խոջալուից հետո բարձրացել ենք «26»-ը: Այնտեղ յոթերորդ վաշտն էր: Երբ թուրքերը հարձակվել են «26»-ի վրա, շատ զոհեր, վիրավորներ են եղել: Այդ ժամանակ ես տանն եմ եղել, մենք հերթապահ չէինք: Հետո բարձրացել եմ վերև: «26»-ում երկու ուղղություններ կային՝ ներքևից «04», «05», «06» դիրքերն էին, վերևից՝ «01», «02» դիրքերն էին: Ներքևով գնացել ենք: Վերջը, նորից գրավել ենք մեր տեղերը, ետ վերցրել: Շուրիկի հետ մինչև Շուշիի գործողությունը «26»-ի դիրքում եղել է հետախուզամարտ: «26»-ում հրամանատարը Յուրա Հովհաննիսյանն էր: Այնտեղ Ամարասի Արթուրի հետ միասին էինք: Արթուրը կազմակերպում էր, խրամատներ սարքում: Մարտերի ժամանակ կրռվում էր: Մի խոսքով, ձեռքից եկածով օգնում էր: Մի պահ թուրքերը համարյա հասել էին մինչև «15» դիրքը: Հետո, երբ արդեն մթնում էր, «Ասկոլկայի» վաշտն է օգնության եկել, կարողացել են ետ գրավել: Ահագին զոհեր, վիրավորներ ենք ունեցել: Շուշիից ռմբակոծում էին: Ձեռքիս ինքնաշեն ատրճանակ կար, որ ընկերս էր սարքել: Այդտեղ այդ ատրճանակը կորցրել եմ, ձեռքիցս ընկել է: Հետո շղթաս եմ այդտեղ կորցրել: Լավ հիշում եմ, որ մենք ձախ կողմից էինք: Մեզ հետ էր նաև Շավարշ Կարապետյանը: Նա ամեն ինչ նկարել է: Մեր կողքին է եղել: Մենք ավտոմատներով էինք, նա կամերայով էր: Բայց Խոջալուում ինքնաթիռին խփել են, ժապավենները վառվել են:

Բ.Կ.- *Այդ ժամանակ է եղել, որ երբ զինվորները փախուստի են դիմել, նա նկարահանել է և ասել, որ նրանց խայտառակ է անելու:*

Դ.Ո.- Չգիտեմ, չեմ կարող ասել: Գիտեմ, որ նա մեր կողքին է եղել,

նկարահանել է: Սասունն է վիրավորվել, մեզանից մոտ հարյուր-երկու հարյուր մետր հեռու էր: Գնացել էին այդ գնդացրային կրակակետը վերցնելու, չեն կարողացել, ետ դառնալիս վիրավորվել է: Շուշիի գործողությունը հաջող է եղել, գնացել ենք ամեն ինչ վերցրել:

Բ.Կ. *Ո՞ր ուղղությամբ եք գնացել:*

Դ.Ո.- Բյոսալարում էինք, Շուշիին զուգահեռ: Նրանք այդտեղ շատ ուժեր էին կենտրոնացրել: Դա Շուշիի գործողության մի մասն էր: «Ցորի» Սլավիկն էլ է Ցուրայից հետո կարճ ժամանակով՝ մոտ մեկ ամիս, «26»-ում հրամանատար եղել: Հետո Շուշին վերցրել ենք:

Բ.Կ.- *Շուշին վերցնելու հետ կապված ինչ ես հիշում:*

Դ.Ո.- Մենք Բյոսալարում ենք եղել: Շուշին վերցնելիս ես չեմ եղել: Շուշի մտել եմ, երբ արդեն գրավել էին: Մի որոշ ժամանակ՝ մոտ մեկ շաբաթ, տասը օր, դադար է եղել: Հետո Ժիրոյի գումարտակն է եղել: Շուշիի գործողությունից հետո Լիսագորսկում մարտեր են եղել: Ես և Արթուրը Շուշիի գործողությունից հետո գնացել ենք Լիսագորսկ: Ժամը վեցի-յոթի կողմերն էր, մթնում էր: Արթուրի մայրը Բերդաձորից է: Արթուրն ասաց. «Պիտի գնանք, Բերդաձորը վերցնենք»: Այնտեղ շատ բերդաձորցիներ կային: Ասացի. «Դե մի տասը-տասներկու հոգի մարդ վերցնենք, իջնենք»: Բերդաձորցիները որոշեցին, որ տասը-տասներկու հոգի չէ, բոլորն էլ գալիս են: Դե, այնտեղ չորս գյուղեր են: Ասել ենք՝ հարց չկա, եկեք: Ես էի, Արթուրը, մի վարորդ կար՝ Վովան: Նա հետո մեր նեղից մեքենայով եկավ: Մեզ հետ մոտ քառասուն-հիսուն մարդ՝ Բերդաձորի չորս գյուղերից: Մութն ընկնում էր, ճանապարհով իջնում ենք: Երբ հասնում ենք «Տասը վերստ», արդեն մութ էր: Այդտեղ մոտ տասը-տասնհինգ բոպն փոխհրաձգություն է եղել: Թուրքերը թողել են հեռացել: «Տասը վերստում» չորս-հինգ հոգու թողել ենք, բարձրացել դեպի Մեծ Շեն, հետո գնացել ենք Հին Շեն: Մեծ Շեն գնալու ճանապարհին Արթուրը վատացավ, նրա առողջությունը թույլ է: Մի ձեռքից բռնած, նրան ինձ հենած, այդպես՝ Արթուրին վերցնում եմ, գնում ենք: Երբ հասանք Մեծ Շեն, նստեցինք, ասացի. «Արի կես ժամ հանգստանանք, հետո էլի առաջ գնանք»: Նստում ենք հանգստանալու: Ճիշտն ասած, այդտեղ լավ բան չի լինում: Կես ժամը դառնում է մի ժամ: Ասում եմ. «Դե հերիք է էլի, տղերք, առաջ գնանք: Վեր կացեք, գնում ենք»: Այդ մարդկանց մեծ մասը Մեծ Շենից էր: Ասում են.

Մենք եկել ենք, մեր գյուղը տեսել:

- Ես ընդհանրապես կապ չունեմ ձեր գյուղի հետ, ես Ստեփանակերտից եմ եկել, բայց ես ասում եմ՝ գնում ենք:

Հին Շենից երեք-չորս հոգի էին: Մնկը Ստեփանակերտում ավտոբուսի վարորդ էր՝ Այոշը: Այնտեղ մի քիչ վիճեցինք: Հետո տասը-տասնհինգ հոգի վեր են կենում, գալիս են: Բարձրանում ենք Հին Շեն: Գյուղի առաջին տան լամպը վառվում էր: Մտնում ենք տուն, տեսնում ենք՝ թավան տաք-տաք դրած: Բայց թուրք չկար, արդեն թողել գնացել էին: Մնկ ժամ էր մնացել լուսանալուն: Արթուրն այդտեղ նստում է, շատ հոգնած էր: Ռացիան վերցնում եմ, երեք հոգու հետ գնում Այվազ, որը Բերդաձորին կպած թուրքական գյուղ էր: Ամպամած օր էր: Բարձրանում ենք՝ տեսնենք ինչ ենք անելու, մեր առջևում ինչ կա: Թեթև հեռախուզություն էր: Կածանով գնում եմ, տեսնում՝ ուսապարկեր են թափված՝ մեջը մթերք: Թուրքերը հեռանալիս թողել-գնացել են, որ ծանր բեռ չտանեն: Բարձրանում եմ գյուղի վերևը, այնտեղ ամբողջությամբ մաքրապատ էր, ոչինչ չէր երևում, ձայներ էինք միայն լսում: Ռացիայով կապվում եմ Գզողյան Ֆելիքսին: Ասում եմ, թե որտեղ ենք և որ այդտեղ ոչ մի բան չկա, մառախուղ է, ոչինչ չենք տեսնում: Ռացիան «նստում» է, այդտեղ մարդիկ ենք թողնում, մենք Արթուրի հետ ետ դառնում, գալիս Մեծ Շեն: Ինքնաթիռով, «Գրադ» կայանքով, թնդանոթով թուրքերը սկսում են Մեծ Շենի վրա խփել: Զորքի մեծ մասն արդեն Մեծ Շենում էր: Ասելու իմաստը նրանումն էր, որ Լաչինում հասցնեն քոչել: Երբ թուրքերը գրավել էին Մեծ Շենը, կարելի է ասել՝ վնաս չէին տվել: Գյուղում ինչպան ավերածություններ են եղել, այդ օրվա ընթացքում՝ ռմբակոծության ժամանակ է եղել: Մենք Լաչինի գրավմանը չենք մասնակցել: Արդեն երկար ժամանակ էր, ինչ տնից դուրս էինք եկել: Արթուրի հետ որոշեցինք, որ գիշերը գնանք լողանանք, գանք: Երեկոյան ժամը ութին-ինսին դուրս ենք գալիս, գնում լողանում, հաջորդ օրը՝ առավոտյան, ետ դառնում: Զորքը արդեն առաջ էր գնացել: Լաչինի մուտքի կամուրջը թուրքերը պայթեցրել էին: Կարենն ու Վարդգեսն էին, մեկը Ֆելիքսի վարորդն էր, մյուսը՝ Սեյրան Օհանյանի: Զորով անցնելիս նրանց «ՈՒԱԶ»-ը շուռ են տալիս: Բերդաձորցի տղա կար, թուրքի մոտոցիկլետ է վերցնում, դրանով ենք մի քիչ գնում: Ամենալավ պահը, երբ ես ինձ ամենալավ եմ զգացել, այն ժամանակ էր, երբ Զաբուղի կամրջին կանգ-

նած Լինք, Հայաստանի համարներով մեքենաներ եկել են: Գրկախառնվել ենք: Այդ օրը գնացել ենք Գորիս, զարեջուր խմել: Առաջինը, որ հայկական պետհամարանիշի մեքենայով մտել է Ստեփանակերտ, Արթուրն է եղել: Հետո ես եմ Տեղ գյուղից մի բնակչի «ՈՒԱԶ»-ով նրանց հետ մտել քաղաք: Այդպես, ճանապարհն արդեն բացում ենք: Որոշ ժամանակ անց Արթուրի հետ գալիս ենք Մարտակերտի երեք ձորակները: Հաթերքի հրամանատարությունը հանձնարարում են Արթուրին: Գալիս ենք, մոտ ութ-ինը օր մնում Գանձասարում: Այնտեղ ես և վարորդը՝ Վովան, կնքվում ենք: Արթուրը կնքահայր է կանգնում: Սրբազանն էլ էր այնտեղ, բայց Տեր Հովհաննեսն է կնքում: Այդտեղից գնում ենք Գետավան, այնտեղ ժողով ենք անում: Մինչև թուրքերի հարձակվելը գնում ենք, որ Աղդաբանը վերցնենք: Զոհեր ենք տալիս, բայց չենք կարողանում Աղդաբանը վերցնել: Հետո ետ ենք դառնում, թուրքերն են հարձակվում: Այդ ժամանակ կամրջի մոտ Լինք: Մենք Նարեշտարի և Գետավանի ուղղությամբ էինք, Հաթերքի ուղղությամբ «Դուշման» Աշոտն էր: Մեկ «ԲՄՊ» է գալիս, խփում ենք: Չեմ հիշում՝ ով էր, բայց տեղացի էր: Նռնականետով խփում է, զրահատեխնիկան պայթեցնում: Թուրքերն այդտեղից չեն հարձակվում: Երևկոյան թուրքերը Հաթերքը և Զափարը վերցնում են, մնում է Գետավանը: Արթուրը կապվում է Մեյրան Օհանյանին, նա էր ղեկավարում այդ գործողությունը: Ասում է, որ Հաթերքը և Զափարը վերցրել են: Ասում է. «Մի քիչ սպասեք, գալիս ենք»: Գիշերը գալիս է, ասում է, որ հնար չկա, պետք է թողնենք, դուրս գանք: Առավոտյան կամուրջը պայթեցնում ենք: Տանկ ենք կանչում: Տանկը գալիս է, բայց աշտարակը չէր պտտվում: Երկրորդ տանկն ենք կանչում, սրա էլ սոլյարկան է վերջանում: Առաջին տանկի սոլյարկան վերցնում ենք, լցնում երկրորդ տանկը: Գետավանի կամրջով մտնելիս մի ճանապարհ Վաղուհաս է տանում, մեջտեղով էլ ճանապարհ կար: Տանկը բարձրանում է այդ ճանապարհով, փողը իջեցնում, կամրջի պատերի վրա խփում: Յոթերորդ կամ իններորդ կրակոցով կամուրջը փլվում է: Մենք արդեն բոլորին հասել էինք: Ետ ենք դառնում Դրմրոն: Նույն օրը «Նիվայով» ես, Արթուրը, Վովան, ևս երկու հոգի, գնում ենք Վաղուհաս, տեսնենք՝ այնտեղ ինչ կա: Գնում ենք տեսնում թուրքերը Խունգութալա գյուղը վերցրած՝ արդեն գետի մյուս անկյունում են: Այնտեղ վաղուհասցիներ են լինում: Նրանք Մարտակերտից ներքևում՝ Երրորդ սովխոզում, զոհեր տված են լինում, նրանց հրամանատարը սպանվել էր: Երանցից տասնչորս հոգի մարդ կար գյուղում: Ասացինք. «Մի քիչ դանգնեք այստեղ, գնանք Դրմրոն, այնտեղ զորք կա, բերենք»: Ասում են. «Մեր գյուղին ոչ մի բան պետք չէ»: Ետ ենք դառնում: Մոտ մեկ ժամից Արթուրը վերցնում է Ստեփանակերտի հինգերորդ վաշտը և Մարտակերտից Կարենի՝ «Ֆաուստի» եղբոր՝ Աշոտի ջոկատը, որի նշանաբանը «Թիմ» էր, գնում է, այդ գիշեր պահում Վաղուհասը: Հաջորդ առավոտյան Խունգութալան դարձյալ ետ են վերցնում: Հետո Արթուրը գնացել էր, ես էի մնացել: Կռիվ է գնում, վերակազմավորվում են: Երևկոյան մութն ընկնելիս մեկ «ԲՄՊ» է գալիս Հաթերքի ավտոճանապարհով: Մենք ծմակի ուղղությամբ էինք գնացել, որովհետև Հաթերքը թուրքի ձեռքում էր, ավտոճանապարհով հնարավոր չէր գնալ: Գիշերը «ԲՄՊ»-ն բարձրանում է: Կռիվ է գնում: Մերոնք երեք հատ արկ են խփում «ԲՄՊ»-ի վրա, ոչ մեկը չի կպնում: Արդեն մոտենում է: Զայնս լսում եմ. «Եթե փողը դեպի Հաթերք է ուղղված, մի՛ խփեք, եթե մեզ է ուղղված՝ խփեք»: Սերգեյ կար՝ ռուս տղա էր: Ուղղորդող էր: Նա եկավ, վերևս ընկավ ու սկսեց լացել: Ասում եմ.

- Ի՞նչ է պատահել, Սերգեյ:

- Եթե դու չգոռգոռայիր, ես նռնականետով «ԲՄՊ»-ն հաստատ շաղ էի տալու:

Դե, նա լավ նռնականետող էլ էր: «ԲՄՊ»-ից իջնում է Արմիկը: Մի անգամ էլ ես եմ այդ իրավիճակում հայտնվել: Չէր կարողանում տեղը կանգնել, ոտքերը դողում էին: Արդեն չենք կարողանում այդ տարածքը պահել, ետ ենք դառնում: Հաթերքի ձորակն էլ ենք տալիս: Հետո գալիս ենք Վանքի ձորակով անցնում: Մենք Վաղուհասից վերև էինք: Վաղուհաս-Վանք ուղղությունը Արթուրինն էր:

«26»-ի Յուրան Երևանից իր հետ մի տղա էր բերել, անունը Դավիթ էր: Նա առաջ էր գնացել, ես նրա ետևում էի: Գալիս եմ, որ Դավթի մոտ գնում: Ռացիայով կապվում եմ, թե. «Դավիթ, որտեղ ես»: Ամառ էր, խոտի դեզեր կային շարած: Մեր դիրքն անցնելիս, որտեղ տղերքը նստած էին, ասում եմ. «Դավիթ, այսինչ տեղում եմ, դու դրանից առաջ ես»: Նա թե՝ հա: Ասում եմ՝ «Դե իջնեմ»: Կոճողոտի և Հոռաթաղի արանքում էր՝ ձնակում, որտեղ՝ Վերին Հոռաթաղում, ուղղաթիռների վայրէջքի համար նախատեսված հրապարակ կար: Ջառիթափ ճանապարհ էր: Ան-

տառի ճանապարհին էր: Օգոստոս կամ հուլիս ամիսն էր: Ես սպորտային բոթասներով էի, ավտոմատն ու ռացիան ձեռքիս: Զրահաբաճկոն ունեի, երկու հատ նռնակ և փամփշտակալ: Մինչև իջնելս... Աղավնին, որը բուժքույր էր, հորոսկոպ-գիրք ուներ, հարցրեց, թե որ օրն եմ ծնվել, որ ամսին: Իջնելուցս մոտ կես ժամ առաջ էր: Ասաց, որ Աստված ինձ պահում է: Իջնում եմ: Երկու ճանապարհ կար, կարող էի և կանաչ ճանապարհով գնալ: Ինչ-որ մեկը կարծես ինձ հուշի, որ կանաչ ճանապարհով գնամ, մյուսը սահուն ճանապարհ է, կսայթաքեմ: Կանաչ ճանապարհով գնացի, որի վերջում անտառն էր: Անտառի վերջում քարեր կային: Տեսնեմ՝ մոտ վեց-յոթ մետրի վրա յոթ հոգի կանգնած են: Մեկի համազգեստը մեր համազգեստների պես կամուֆլյաժ էր, մյուսները՝ խորհրդային միատոն համազգեստներով էին: Դեռ չեմ ջոկում՝ որտեղ եմ: Ասում եմ. «Դավիթն այստեղ է»: Կամուֆլյաժ համազգեստովը մատով ինձ կանչեց: Արդեն հասկացա, որ թուրքեր են դիմացս կանգնած: Դե, ինչ անեմ: Մտածեցի՝ նռնակներիս օղակները հանեմ... Մեկ էլ շրջվում եմ ու փախչում: Զառիթափ էր, հետո ուղղվում էր ու նորից զառիթափ: Նռնականետի կրակոցն է գլուխս տաքացնում, մեկ էլ փամփուշտն է՝ վըզզ, ոտքիս կողքից մտնում: Բարձրանում եմ, թե ինչքան է անցնում՝ չգիտեմ: Մտածում եմ՝ զենքս և զրահաբաճկոնս թողնեմ, որ լավ վազեմ: Երբ զառիթափը վերջանում էր, հարթ տեղ էր, որից հետո նորից սկսում էր զառիթափը: Ես հասել էի հարթ տեղին: Գլուխս աշխատեց, որ արդեն ինչքան էլ խփեն, չի կպնելու: Նստում եմ հանգստանամ, որ նորից շարունակեմ ճանապարհս: Երևի երկու վայրկյան եմ նստել, բայց ինձ թվացել է՝ օրերով հանգստանում եմ: Բարձրանում եմ, մեկ էլ մերոնք են խփում: Խոտի դեզ կար, դրա կողքը կանգնում եմ, ռացիայով կապվում, որ ես այսինչ տեղով գալիս եմ: Ասում են. «Հա, արի»: Գալիս եմ մեր դիրքը անցնում: «26»-ի Յուրային եմ հանդիպում, ասում է. «Ի՞նչ է պատահել, Դավիթ»: Պատմում եմ: Ասում է. «Այդ կրակոցները քո պատճառով էր»: Ասում եմ՝ «Դե, այդպես է ստացվում»: Ասում եմ. «Յուրա, մի սիգարետ տուր, ծխեմ»:

Տալիս է, վերցնում եմ, որ նրա ծխախոտից իմ ծխախոտը վառեմ, չեմ կարողանում ուղիղ բռնել: Շուռ ու մուռ եմ տալիս սիգարետները, չեմ կարողանում իրար մոտեցնել: Յուրան ասում է.

- Վախեցած ես, բայց ուզում ես մեզ հետ գալ: Եթե գաս, վախդ հաղթահարելու ես, որ մնաս, մնալու է մեջդ:

- Չէ, գալիս եմ:

Ես էի, Յուրան, Աղավնին: Արթուրը ուզում էր գալ, բայց Յուրան չթողեց. կարող էր վազելու, փախչելու պահ լինել: Եթե չեմ սխալվում, Վալենտինն էլ է լինում, հրամանատար էր: Մութն ընկնելիս իջնում ենք: Մի ուղղությամբ Համոն էր՝ Կոճողոտի խմբով, մեկ էլ՝ մենք: Որտեղով որ պետք է գնայինք, այդտեղով չենք գնում, ձորով ենք գնում և տեղը կորցնում: Գնում ենք ընկնում քարերի արանքը: Արդեն մութն ընկնում է, քարերը չենք կարողանում անցնել: Ետ ենք դառնում: Դրանից հետո գալիս եմ մի շաբաթ տանը մնում: Հետո գալիս եմ Վանք՝ Վանք-Վաղուհաս ուղղության վրա: Այդ ժամանակ Վազգեն Սարգսյանը «մահապարտներին» հավաքել էր: Նրանք գալիս եմ մեզ մոտ: Նրանց հրամանատարը Ալիկ Պետրոսյանն էր: Լավ եմ հիշում, որ գնացել էինք Վաղուհասից վերև՝ Կարմիր քար կոչվող բարձունքը վերցնելու: Երկու ուղղության կար, մեկով մենք ենք գնում, ձախով՝ Գիրոն էր՝ իր հետախուզական խմբով: Թե այդ ժամանակ ինչ էր կոչվում նրա ջոկատը, չգիտեմ, բայց հետագայում Մարտակերտի գնդի հետախուզությունն է դառնում: Բարձրանում ենք: Թուրքերը փախչում են, բայց մի թուրք էր գնդացրով մնացել, չէր թողնում, որ բարձրանայինք: Մյուս ուղղությամբ էլ Գիրոյենք ականապատված դաշտ են ընկնում, Գիրոն վիրավորվում է: Այդտեղ շատ կոիվներ են եղել: Վանք-Վաղուհաս ուղղությունը դժվար ուղղություններից մեկն էր: Հետո վերցնում ենք:

Գետավանում էինք, պետք է անցնեինք գետի մյուս ափը: Դալիբալթայանն էլ էր եկել այնտեղ: Կանգնած զրուցում էինք: Ասաց. «Ի՞նչ եք մտածում, ո՞նց պետք է գետը անցնենք»: Գետի ամենավարար ժամանակն էր: Այնտեղ էր Համոյի մեծ եղբայրը՝ Զարմիկը՝ Կոճողոտից: Զարմիկը խփում է, կաբելը կտրում, կամրջից մի ձող էր մնացել: Կաբելը գետի մի կողմից մյուս կողմը կապում է: Կաբելից և ձողից բռնած՝ անցնում են: Մոտենում եմ, որ անցնեմ, գետը վարար էր, ասում եմ. «Չէ, ես այստեղով չեմ անցնի»: Տղերքը անցնում են: Գնդացիր, ավտոմատներ են բերում: Թուրքերը թողել, փախել էին: Պանտոն էլ են բերում: Պանտոնը բերելիս «ԿՌԱԶ-ը» գալիս է կանգնում: Ամբողջ գիշեր գործ է անում: Երբ «ԿՌԱԶ-ը» կանգնում է, բարձրացնում է պանտոնը, որ պիտի արդեն գցի գետնին, գետի մյուս ափից խփում են: Նրանք թողնում են գա-

լիս: «ԿՌԱՋ-ը» ամբողջ գիշեր գործ է անում, մենք էլ տեղյակ չէինք: Հետո պանտոնը ցած ենք գցում, պանտոնով անցնում:

Հաթերքն արդեն գրավել էինք: Երկու անգամ ենք գրավել, բայց չեմ հիշում՝ որը երբ է եղել: Հաթերքից մտնում ենք, որ գնանք Զարդախաչ, այդտեղից էլ՝ Զափար: Զարդախաչ մտնելիս ռացիայով կապվում եմ Ժորային, որը զարդախաչեցի է: Ասում եմ.

- Ժորա, մտնում եմ ձեր գյուղը, ձեր գյուղի առաջին տան մոտ կանգնած եմ:

- Սիրտդ ինչ է ուզում:

- Մեղր:

Մեղրի ժամանակն էր: Զարդախաչում թուրք չկար: Մտնում ենք Զափար: Մի լավ տղա կար, անունը Արթուր էր: Զափարում թուրքերը «BTR» թե «BMP» էին թողել: Հայաստանցի տղաները մտնում են մեջը: Մեջը «լարած» նռնակ կար, որը պիտի պայթեր: Այդ տղան նռնակը գլորում է, երեք հոգու կյանքը փրկում: Մտնում ենք, ազատ գնում, թուրք չկար: Հաջորդ առավոտյան ետ ենք դառնում: Հաթերքի Սուրիկենց տանն ենք լինում: Առավոտյան մի հոգու հետ եկավ՝ երկու ձեռքով մեղրի չեչը բռնած, երեսները կծոտած:

Հետո նորից Աղդաբանի վրա գնացինք: Էլի չկարողացանք վերցնել: Հետո Արթուրը գալիս է Ժորայի մոտ, կարծեմ՝ որպես շտաբի պետ: Ես էլ գալիս եմ հետախուզության բաժին:

Մինչև Քելբաջարի գործողությունը հետախուզությունը բերում ենք Վանք-Վաղուհաս ուղղության վրա:

Եղբայրս՝ Վրեժ Ոսկանյանը, Կուսապատում սպանվում է: Նա շատ լավ ականանետող էր, ականանետը նրա մոտ պայթում է... Մոտ քսանքսանհինգ օր ես տանն եմ լինում:

Այդ դեպքից հետո, կարելի է ասել, ես ավտոմատը ձեռքիս ոչ մի մարտի չեմ մասնակցել: Հետո Ֆելիքսն է գալիս: Զինկոմը՝ Գաբրիելյանը, ոչ պաշտոնապես փոխհրամանատարն էր: Մենք էլ Մարտակերտի ուղղությունն ենք սպասարկել: Մարտակերտի գունդը մեր ինստիտուտի տղաներով՝ ընկերությունով ենք սարքել:

Երբ Գիրոն վիրավորվում է, Հովսեփը, որը ջոկատի հրամանատարն էր, լացում էր, շատ ծանր տարավ Գիրոյի վիրավորվելը: Հովսեփը Գիրոյին տարավ Ֆրանսիա, Ամերիկա՝ բուժելու նպատակով: Այդ

դեպքը մեր կողքին է եղել: Թուրքին թերագնահատելն էլ ճիշտ չէ: Դեպք է եղել, որ մի թուրքը կարողացել է մի գնդացրով տարածքը պահել, և մենք չենք կարողացել բարձրանալ:

Մի անգամ էլ՝ Մարտակերտը վերցնելիս, ԳԷՍ-ի՝ Սարսանգի ջրամբարի մյուս կողմում երեք թուրքեր, հասկանալով, որ ոչ մի բան անել հնարավոր չէ, իրար գրկել են, նռնակը պայթեցրել: Փորները ցրիվ էր եկել: Մտածում էի՝ մեզ նման մարդիկ են, թերագնահատելը ճիշտ չէ:

Բ.Կ.- *Իսկ հիշում ես՝ ինչպես են Մարտակերտը տվել:*

Դ.Ռ.- Ես Մարտակերտում չեմ եղել, մենք վերևում ենք եղել: Բայց եկել ենք Մարտակերտ, գնացել: Զրույցներից հասկացել եմ, որ Մարտակերտը առանց կռվի են տվել: Ճիշտն ասած, Հաթերքն էլ է առանց կռվի տրվել: Եթե կռիվ անեին, դժվար կվերցնեին: Այնտեղ Զափարն էր, որ թուրքերը վերցրել էին: Գետավանի վրա, երբ ճանապարհից «BMP»-ն խփել ենք, զորքը փախել է: Բայց մենք այնտեղից դուրս չենք եկել, որովհետև Հաթերքում թուրքերն էին: Այդ գիշեր Հաթերքի Սուրիկը, որը տասնութ տարեկան զորակոչիկների ջոկատ էր ստեղծել, վերցնում է հինգ թե վեց հոգու, մտնում են Հաթերք: Ժորային ուղղորդում է, Ժորան «BMP», տանկ է խփում:

Վանքի և Վաղուհասի արանքում Տզամա Ղաշն էր: Մեր ականանետողները պահում էին: Դրա կողքից ես և Արթուրը տանկը բարձրացնում ենք Վերին Հոռաթաղի վերևը: Տանկի հրամանատարը Ատդուշչիկն էր, ուղղորդողն էլ Մատաղիսում էր ծառայել, անունը Սարմեն էր: Այնտեղ աղրբեջանցիները գումարտակ ունեին: Առավոտյան հերթափոխի ժամանակ տանկը խփում է, արկն ընկնում է զինվորակույտի մեջ: Մարդիկ բարձրանում են օդը: Տանկի մի արկից ահագին մարդ է մեռնում: Արթուրի մոտ է այդ միտքը առաջացել, որ տանկը բարձրացնի, այդտեղից խփի:

Պատմում է ԲՈՐԻՍ ԾԱՏՈՒՐՅԱՆԸ, Շուշի 29.10.2005 թ.

Ծնված Շուշի քաղաքում, 1961 թվականին:

Երբ Շուշիից տեղափոխվել ենք Ստեփանակերտ, այնտեղ մի լավ ընկեր ունեի՝ Սարգսյան Ալիկը, որը զոհվել է: Սկսում ենք Կրկժանում ջոկատներ ստեղծել: Ջոկատի հրամանատարը Ալիկն էր: 1990 թվականի նոյեմբեր ամսին էր: Ջոկատն ստեղծելուց հետո սկսում ենք զենք բերել: Մեր ընկերությունը ուսուցողական ավտոմատները վերափոխում է մարտականի և սկսում գործեր անել: Ես ռուսական բանակում ծառայել էի: Սկզբից պարտիզանական գործեր ենք անում:

Երբ Կրկժանի դիրքերում կանգնած էինք, սկսում ենք ուսումնասիրել թուրքերի դիրքերը, թե ինչպես կարելի է դրանք գրավել: Դրանից հետո մեզ ուղարկում են Ասկերանի Աղբուլաղ գյուղը: Վեց հոգով գնում ենք այնտեղ: Դիրքեր ենք պահում: Հետո գալիս ենք Կրկժան: Ընկերս զոհվում է: Կրկժանում տասնվեց հատ տուն ենք վառում: Հաջորդ օրը, երբ տղաները հանգստանում էին, ռուսները գալիս են «ԲՄՊ»-ով, խփում, չորս հոգի զոհվում են: Պատճառաբանել էին, թե իբր կարծել են թուրքի տուն է: Դրանից հետո տաս-տասնհինգ օր ես տնից դուրս չեմ գալիս: Ընկերս զոհվել էր, ես որոշել էի այլևս չկռվել: Բայց իմ ջոկատի բոլոր տղաները ասել են, որ իրենց հրամանատարը պետք է Բորյան լինի: Ստեղծում ենք իմ անունով ջոկատ՝ «Բորիս» և շարունակում գործը: Որտեղից կանչել են, գնացել ենք, կռիվներին մասնակցել: Իմ ջոկատում քանվեց տղաներ կային: Բարձրանում էին, Կրկժանի ետևում գործեր անում: Երբ Կրկժանը գրավել ենք... Քսանվեց հոգով բարձրացել ենք, «ԲՄՊ»-ն չի կարողանում բարձրանալ:

«ԲՄՊ»-ի համար ճանապարհ ենք բացում, որ Կրկժանը գրավենք:

Կրկժանի տարածքում օրական երկու զոհ էինք տալիս: Շան տղերքը երկու նշանառու հրացաններով խփում էին: Որոշում ենք երեք հոգով բարձրանալ, թուրք նշանառուներին գտնել և ոչնչացնել: Երկու կարաբին ունեինք և մեկ նշանառու հրացան: Նրանք նստած, թեյ էին խմում, նշանառու հրացաններն էլ գործ էին անում: Դասավորում ենք, խփում, նրանց նշանառու հրացանները ցրիվ տալիս: Դրանից հետո այդ նշանառու հրացանը չի աշխատել:

Երբ ասել են, որ մտնենք, Կրկժանը գրավենք, «ДШК», զենքի ուրիշ տեսակներ էին ուղարկել: Բարձրացել ենք վերև, և ինչքան ջոկատներ կային, բոլորով մտնում ենք Կրկժան, ցրիվ տալիս: Երկու կողմերն էլ ահագին զոհեր են տվել: Դրանից հետո վաշտեր են ստեղծվում: Ես չորրորդ վաշտի հրամանատարն էի, հետո հրետանու հրամանատարն էի:

Կոմանդոսը հրաման է տալիս, որ այդ գիշեր՝ փետրվարի 26-ին, պետք է մտնենք, Խոջալուն գրավենք: Մենք ռացիա չունեինք, բայց զենքեր՝ ավտոմատներ, ստացել էինք: Կոմանդոսի հետ ես Ստեփանակերտում էի ծանոթացել: Շատ մոտ էինք իրար հետ: Ռացիա չկար: Գիշերը ժամը մեկին մտել ենք Խոջալու և սկսել ջնջել: Մեր ջոկատի տղաները Ալի անունով թուրք գերի են բռնում, բերում զորանոց: Իմ ջոկատից երկու հոգի ոտքերից վիրավորվել են:

Բ.Կ.- *Ո՞ր կողմից եք մտել Խոջալու:*

Բ.Ծ.- Հասանաբադի ֆերմայի կողքով եկել ենք և մտել Խոջալու: Մեր վաշտը չորս տեղ կիսվել է: Չորս դասակ է եղել, որոնք տարբեր տեղերից մտել են: Երբ պետք է ֆերմայի կողքով անցնեինք, մի փոքր արտ կար: Թուրքերը երկաթգծի կողմից երեք կողմով խփում էին: Հրաման եմ տալիս, որ իրարից հինգ մետր հեռավորությամբ անցնենք արտը: Վերջում ես եմ գնում: Ես եմ, Ներսիկը, Ռոման: Ես կրակը վերցնում եմ ինձ վրա, պատասխանում եմ, որ տղաները անցնեն: Մի կարաբինով և երկու ավտոմատով էինք խփում: Թուրքերը թողնում են, փախչում: Ցաքի չափար ենք վառում, նաև՝ կրակի հետագծով գնդակներ ենք բաց թողնում, դա նշան էր, որ այդ մասն արդեն մեր ձեռքն է: Գալիս ենք շտաբը գրավելու, տեսնում ենք այնտեղ մարդ չկա: Մի հիսուն-վաթսուն արկղեր կային՝ լցված նռնակներով, փամփուշտներով: Հիսունհինգ տարեկան թուրք կար, բռնեցին, բերեցին: Գրպանից մի փոքր դանակ հա-

նեցինք: Ասաց, որ այստեղից թուրքերը փախել են: Ասացի, որ նա խաբում է, զգույշ լինենք: Դիմում է ինձ, որ իրեն տանեմ իրենց տուն: Ես ենթադրեցի, որ նրանց տանը զինված մարդ կա թաքնված: Երբ Օհանյան Արթուրը վիրավորվել էր, պետք էր մեքենա բերեինք, շտապ տեղափոխեինք Ստեփանակերտի հոսպիտալ: Ճանապարհին Մայիսին, որ գնացել էր մեքենա բերելու, այդ տնից կրակում են, ու ևս մեկ հոգու վիրավորում: Տվյալները մեզ է հասնում, որ այդ տանը թուրքեր կան: Վերցնում ենք նռնականետներ, գնդացիրներ, ավտոմատներ, գնում, այդ տունը ցրիվ տալիս: Չորս հոգի թուրքեր կային, նրանց էլ կոտորում: Դրանից հետո վիրավոր տղաներին ուղարկում ենք Ստեփանակերտի հոսպիտալ: Շտաբում թուրքերը «ԲՄՐ-Մ» էին թողել՝ զինամթերքով, ամեն ինչով, բայց առանց վառելիքի: Խոջալուն գրավում ենք առանց զոհերի, միայն այդ երկու հոգին էին վիրավորվել: Հայաստանից Հրազդանի ջոկատն է գալիս, Կոմանդոսը, Վլադիկը: Մոտենում է, թե.

- Ո՞վ է այս տարածքը գրավել:

- Իմ ջոկատը: Շտաբում մի հատ «ԲՄՐ-Մ» կա, պետք է հետս տանեմ:

- Քեզ նվեր:

Ասում եմ, որ մեջը բենզին չկա: Առաջարկում է իր մեքենայից բենզին վերցնել: Այդպես էլ լինում է: Կոմանդոսի մեքենայից բենզին եմ վերցնում, լցնում զրահամեքենայի բաքը, կպցնում մի «Զիլ»-ի, քարշ տալիս, բերում: Նրա ասածով փամփուշտները հանել, թողել եմ շտաբում, իսկ տեխնիկան տարել զորանոց: Թուրքին էլ ենք մեզ հետ տանում զորանոց: Մի քանի օր պահում ենք: Հայրս գալիս է, թե՝ «Ցավդ տանեմ, սրանից օգուտ չկա: Ջահել լիներ՝ կարելի էր պահել: Մի նամակ գրեմ, դնեմ ձեռքին, փոքր եղբորդ և ջոկատի տղաներից մեկի՝ Ներսիկի հետ ուղարկենք Վիտոյի՝ Ասկերանի հրամանատարի մոտ: Վիտոն կկապվի թուրքերի հետ, կտանենք, բաց կթողնենք: Բայց նամակը պետք է անպայման տանի, հասցնի թուրքերին»: Եվ հայրս թուրքերենով գրում է՝ «Այս անգամ հաղթանակը հայերինն է, մերն է»: Նամակը տալիս է թուրքին, տանում, բաց են թողնում: Թուրքը վախենում էր, որ կարող է նրան սպանեն:

Խոջալուի ժողովուրդը՝ կանայք, երեխաներ փախել են Նախիջևանիկի ուղղությամբ: Գնացել են Փիրջամալ: Սամվել Բաբայանը

ինձ հրամայել էր, որ այդտեղից փախած մոտ յոթանասուն թուրքերին թույլ չտամ թալանել գյուղը: Այդտեղ էին Օգանովսկի Սամվելը, վաշտի հրամանատար Կուճի Գագոն, լենինականցի Մանվելը: Մտնում ենք ֆերման, տեսնում ենք ոտաբոբիկ կանայք, երեխաներ: Զրուցել ենք հետները, թե՝ «Զգիտեիք, որ մենք պետք է Խոջալուն գրավենք»: Պատասխանեցին, որ իրենց հույս են տվել, որ հայերը երբեք չեն կարող Խոջալու մտնել: Տասնհինգ հոգու լցնում ենք մեքենայի մեջ, տանում, փոխանակում գերի ընկած մեր տղաների հետ:

Բ.Կ.- *Իսկ ինչ կասես Խոջալուի կոտորածի մասին, որ թուրքերը ֆիլմում ցույց են տալիս:*

Բ.Ծ.- Այդպիսի կոտորած իրականում չի եղել, բայց փախչողների մեջ զինված ՕՄՕՆ-ականներ են եղել, որոնք խփել են մեր տղաներին: Ֆերմայում պատսպարված կանայք մատնել են նրանց: Իսկ մասսայական կոտորած մեր կողմից չի եղել, ու դա բացառվում էր, քանի որ հրաման կար՝ թույլ տալ բնակչությանը հեռանալ Լեռնային Ղարաբաղից:

Բ.Կ.- *Ֆիլմում սպանված, սառած երեխաների են ցույց տալիս:*

Բ.Ծ.- Ֆիլմ է, ամեն ինչ կարելի է սարքել: Մենք երեխաների վրա ինչպես կարող ենք կրակել, ես ինքս երեխաներ ունեմ: Ու ոչ մի հրամանատար չի կարող ստիպել, որ ես երեխաների վրա կրակեմ: Պատանդներին, որ գոմում վերցրել ենք, խոզի խորոված ենք տվել, ախորժակով ուտում էին: Բայց տվել ենք ոչ թե նրանց մահմեդական սովորույթը ծաղրելու նպատակով, այլ որովհետև դա էր մեր ունեցածը: Նրանց բոլորին փոխանակել ենք գերի ընկած մեր զինվորների հետ: Մի մեծահասակ թուրք կար, փոքր երեխայի հետ, նրանց էլ էինք կերակրել ու տարել փոխանակելու նպատակով: Նրան հարցնում էի՝ «Բա չէ՞ որ խոզի միսը արգելված է մահմեդական օրենքով», ասաց՝ «Ոչինչ, կարևորը՝ երեխան բան ուտի, սովահար չլինի»:

Բ.Կ.- *Հորդ մասին պատմիր:*

Բ.Ծ.- Արսեն Գրիգորի Ծատուրյան, ծնվել է Քարինտակ գյուղում: 1948 թվականին եկել է բանակից և բնակվել Շուշիում: Նա հայրենական պատերազմին էլ է մասնակցել: Այս տունը և մեր հին տունը նա է կառուցել: Երբ շարժումն սկսվել է, հայրս այստեղ աշխատում էր: Քանի անգամ ուզել են, որ հորս տանեն, սպանեն, չի ստացվել: Շատ ուժեղ մարդ է եղել: Թուրքերը ժողով են արել, թե՝ «Ուզում են Ղարաբաղը տան Հա-

յաստանին, ստորագրեք, որ դուք համաձայն չեք»: Հայրս կանգնել է և ասել՝ «Ես այս հողվածի տակ եմ ծնվել: Հայ ծնվել եմ, հայ էլ պետք է մեռնեմ»: Դրա համար էլ ամեն ինչ արել են, որ տանեն, հորս գլուխը կտրեն: Քանի անգամ ուզել են իրը գործով ուղարկել Լաչին, ես չեմ թողել, որ գնա: Երբ Շուշիի խժդժություններն սկսվում են 1988 թվականի սեպտեմբերին, թուրքերը և ռուսները գալիս են մեր տները ստուգումների, մենք իջել էինք Ստեփանակերտ, հայրս մնացել էր տանը: Շուշիից հեռանալիս մեզ այնքան են քարկոծել, ջարդել մեքենաները: Մինչև հիմա այդ ձայները, սարսափելի տեսարանը չեմ մոռացել: Ճանապարհի եզրին՝ ամբողջ երկայնքով քարակույտեր էին շարված, դա նշանակում է, որ նախապես էին պատրաստվել քարկոծելու հայերին: Ես էի, մայրս և մորաքրոջս աղջիկը, իսկ հայրս մի ամիս մնացել էր Շուշիում: Քանի որ տնից դուրս չէր գալիս, վտանգավոր էր դուրս գալը, նախապես չոր հաց էր պահել: Դրանով պահում էր իր գոյությունը, մինչև մենք կարողացանք փոխանակել մեր տունը Կրկժանում ապրող թուրքի բնակարանի հետ: Մի տունը ես էի պահում հարձակումից, մյուսը՝ հայրս: Նա ինձ պատվիրել էր կրակել միայն գրոհային թուրքերի բակ մտնելու դեպքում: Գիշեր-ցերեկ չէինք քնում: Մեր տանը ես և հորեղբորս տղան էինք՝ Այոշան: Գիշերվա ժամը չորսին թուրքերը բենզին էին լցնում տների վրա և հրկիզում: Երեք տուն այրել էին, չորրորդը մերն էր: Առավոտյան ժամը չորսին պատից մեր կողմն էին անցել, պատրաստվում էին բենզին լցնել և հրկիզել տունը: Բակի լույսերը վառեցի: Տեսնելով, որ չեն կարող հրկիզել, սկսում են քարերով ջարդել պատուհանները: Հայրս աղմուկի վրա գալիս է օգնության, հրկիզաձիգները փախչում են: Հետո գալիս են զրահամեքենաներով ռուսները: Քարկոծելուց երեխա էլ է զոհվել: Իսկ ռուս զինվորները ոչնչով չէին օգնում մեզ: Խոջալուից հետո մի քանի ամիս շարունակ Կոմանդոսը մեզ լարվածության մեջ էր պահում, անընդհատ հետաձգում էր Շուշիի գրոհը: Վերջապես այն տեղի ունեցավ մայիսի 7-ին, երբ Մեհտիշենի մոտից հրթիռներ ուղարկեց դեպի Շուշիի բարձունքը: Երեք հատ թնդանոթ Կրկժանի վերևն էր տեղադրած, իսկ ականանետները Մազի կամրջին: Ականանետներով ռմբակոծելուց հետո իմ ջոկատի տղաներին ասում եմ՝ «Ով ցանկանում է, թող ինձ հետ գա: Ես Շուշի եմ գնում»: Մենք ճանապարհով էինք բարձրանում, մեզանից առաջ հետևակը տարբեր տեղերից արդեն Շուշի էր

մտել: Բայց մենք տեսնում ենք, որ Շուշի չհասած ֆերմայից խփում են մեր տղաներին: Մենք «ДШК» գնդացիր վերցրած գնացինք դեպի ֆերման: Մի հինգ հոգի թուրքեր անընդհատ շարժման մեջ էին ֆերմայի մեջ: Ոչ մի կերպ չէինք կարողանում ոչնչացնել նրանց: Կապվեցի շտաբի պետ Ֆելիքս Գզողյանի հետ, բացատրեցի իրավիճակը և զրահամեքենա խնդրեցի: Մեր նետած նռնակները, գնդացրային կրակահերթերը ոչնչով չէին օգնում: «ВМР»-ի հարվածից զոհվում են չորս հոգին, հինգերորդը բերում է, նրանց մարմինները մի տեղ կուտակում, ու երբ նա էլ է վիրավորվում, պառկում է այդ չորս հոգու մոտ: Մինչ այդ ես նրանց դիմել էի, որ հանձնվելու դեպքում նրանց կփոխանակենք գերիների հետ, սակայն նրանք հրաժարվեցին հանձնվել: Երբ մենք կռվում էինք այդ ֆերմայի թուրքերի հետ, մի ռուս ժուռնալիստ՝ Նիկոլայը, բարձրահասակ, մորուքով, տարիքով մարդ էր, ասաց՝ «Ձենք տվեք, ես ուզում եմ թուրք սպանել»: Նա իրեն Նիկոլա էր անվանում: Մի պահ նա անհետացավ: Մեկ էլ տեսանք, որ նա ֆերմայի պատուհանից դուրս է գալիս, փորից բռնած, արյունլվա, ու մի կերպ գալիս է մեր կողմը: Գնդակը երկաթին էր կպել և շեղվել դեպի իր փորը: Գնդակի ծայրը երևում էր, բայց չէինք կարող հանել: Ես բամբակը թաթախում եմ յոդի մեջ, հանում եմ գնդակը, տալիս իրեն: Նա խնամքով փաթաթում է, դնում պայուսակի մեջ, ասում, որ նա այն կտանի, ցույց կտա երեխաներին: Արգելում եմ նրան առաջ գնալ մեզ հետ, սակայն նա հրաժարվում է ենթարկվել, ասելով, որ ինքը իր պատերազմն ունի թուրքերի հետ: Նիկոլան Շուշիում ծանր վիրավորվում է, շտապ հասցնում են Երևան, սակայն չի հաջողվում փրկել, մահանում է:

Երբ մայիսի 9-ին ավարտված էր Շուշիի գրավումը, ես ընկերոջս՝ գնդացրորդ Կոյլայի հետ մտնում եմ մեր բակը: Այդ ժամանակ ադրբեջանական մի ինքնաթիռ էր պտտվում Շուշիի վրա: Օդաչուն նկատել էր մեզ և գնդացրով սկսեց կրակել մեզ վրա: Երբ նա անցավ, Կոյլան գնդացրով, ես՝ ավտոմատով, սկսեցինք կրակել նրա ետևից, բայց դե ուր... Մայիսի 17-ին առավոտյան վեցին պետք է գրոհեինք Բերդաձորի վրա: Շտաբի պետ Գզողյանը հայտնում է, որ թուրքերը Լաչինից էլ են փախել: Սակայն նրանք հեռանալուց առաջ պայթեցրել էին կամուրջը: Մերոնք ռազմական կամուրջ (պանտոնի մոտ) են տեղադրում, որը, սակայն, մետրուկես կարճ էր: Փորձում ենք լցնել այդ մասը փայտերով,

երկաթներով, բայց չի հաջողվում: Ստիպված շրջանցում ենք Կոնսիձորը: Գալիս ենք Լաչին, որտեղ հասել էին Զանգեզուրից եկած զորամասերը: Դա էլ իսկական միացումն էր:

Հաջորդ գործողությունը Աղդամն էր: Ես Աղդամում աշխատել էի 1986-87 թվականներին, մնում էի քարհանքի պետ Գասիմ Քարիմովի տանը: Մտնում ենք նրա հարևան Յուսուֆի տունը: Երբ արդեն Աղդամը վերցրված էր, այդ ակումյատրշիկ Յուսուֆը գալիս է մեր ուղղությամբ: Պարզվում է, որ նա հարբել էր, քնով անցել և չէր հասցրել հեռանալ Աղդամից: Գալիս է, ծխախոտ է ուզում, տալիս եմ ծխախոտը, նստեցնում մեքենայի թափքին, մի տասնհինգ օր պահում եմ: Նախընտրում է, որ իրեն չփոխանակենք, չուղարկենք ադրբեջանցիների մոտ, քանի որ նրան կգնդակահարեն: Նա գողանում է թթի օղու բալոնը, թաքցնում այն: Տեսնում եմ՝ ամեն առավոտ հարբած վիճակում: Հետևում եմ, մի առավոտ տեսնում՝ բաժակը ձեռքին, որը չէր հասցրել լվանալ և օղու հետքերը կորցնել: Խոստովանում է, որ գողացել է օղու բալոնը: Նրան և մի քանի թուրքերի փոխանակում են գումարտակի հրամանատար Արշոյի հետ:

Եղել եմ Մարտունու շրջանի Հացի գյուղում: Այնտեղ երկու զոհ եմ տվել: Նրանց նկարները պահում եմ, մեկը Սամվելն էր, ամուսնացած չէր, մյուսը՝ Արելն էր:

Երբ Շուշին գրավել ենք, տասը հոգի գերի էինք բռնել՝ աղջիկներ, տղամարդիկ: Նստեցրել ենք մեքենաները: Կոմանդոսը մեքենան եկեղեցու առաջ կանգնեցնում է: Ամբողջ եկեղեցին արկերով լիքն էր: Գրադի արկերը, որ լցված էր Ղազանչեցոց եկեղեցին, Կոմանդոսը հանձնարարեց մեզ լցնել մեքենաները, տանել, հանձնել և ետ գալ: Շուշիում մի սպորտդահլիճ կար՝ լցված արկերով: Տասն օր դատարկել ենք: Այնքան շատ էր, որ տարել ենք Ստեփանակերտ:

Մայիսի 9-ին մտել ենք Շուշի, 1-ին՝ ծնունդս է եղել, նստել ենք, քեֆ արել:

Պատմում է ԱՐԱՅԻԿ ԲԱԲԱՅԱՆԸ, Տոնաշեն, 20.10.2005

Ծնվել եմ 1957 թ., Ստեփանակերտում:

Բ.Կ.- *Որպես ականատես՝ պատմեք աղդամցիների 15.000-անոց ամբոխի հարձակման մասին:*

Ա.Բ.- 1988 թ. փետրվարի 20-ին ես աշխատում էի Ասկերանի Գազի շահագործման գրասենյակում՝ որպես գլխավոր ինժեներ, մի քիչ ուշ աշխատանքի եկա՝ մոտավորապես ժամը 10-ին: Գրասենյակում միայն հավաքարարուհին էր, նա ասաց, որ բոլոր աշխատողները շրջկոմի մոտ են, և այնտեղ հիմա կարևոր միտինգ է: Ես նույնպես գնացի միտինգին մասնակցելու: Որքան հիշում եմ, միտինգի էությունն այն էր, որ Ստեփանակերտից Ադրբեջանի կոմկուսից մարդիկ պիտի գային՝ հանդիպելու Ասկերանի վարչակազմի հետ և համոզելու, որ Ասկերանում Ղարաբաղի՝ Ադրբեջանի կազմից դուրս գալու որոշում չընդունվի: Ժողովուրդը բողոքում էր, թե՝ «Նրանց մուտքը շրջան թույլ չենք տա...»: Կեսօրին նկատեցի, որ միտինգի հավաքված մարդկանց մոտեցավ մի տղամարդ՝ արյունլվա, գլուխը ջարդած, գլխից արյուն էր հոսում: Երբ շրջանի միլիցիան մոտեցավ այդ մարդուն, նա սկսեց ինչ-որ բան բացատրել: Ժողովուրդը ուզում էր մոտենալ, ոստիկանները չթողեցին: Մի քանի րոպեից միլիցիան հավաքեց ոստիկաններին, և մեքենաներով գնացին դեպի Ասկերանի կողմը: Ժողովուրդը մոտեցավ ծեծված մարդուն, որը կարծեմ պահակն էր: Նա պատմեց, որ, ադրբեջանցիների մի մեծ ամբոխ շարժվում է դեպի Ասկերան, ավան չհասած, որտեղ բենզինի մեծ պահեստներն էին, սկսել է ամեն ինչ ջարդել: Ասաց, որ ամբոխը գալիս է ամեն

ինչ ջարդելու, ոչնչացնելու, գոռում էր՝ երեխաներին փրկեք...Մարդկանց մի մասը շտապեց իրենց երեխաների ետևից: Հետո կազմակերպեցին, ժողովուրդը միանգամից շարժվեց հակառակորդ ամբոխին ընդառաջ: Գազի շահագործման գրասենյակի և պետավտոտեսչության կետի միջև Ասկերանի սահմանն էր: Մոտ 250-300 հոգի էինք: Ես կարճ ճանապարհով իջա՝ ձորով դեպի մեր գրասենյակը: Տեսա՝ հավաքարարուհին նստած լաց է լինում, ասաց. «20- 30 հոգի մտան, գրասենյակը ավերեցին, ինձ ոչ մի բան չարեցին, միայն ասացին՝ այստեղից փախիր...»: Հարցրի՝ ո՞ւր են այդ մարդիկ: Թե՝ ետ գնացին: Գրասենյակում ամեն ինչ ավերված էր, ջարդած, նկարները, փաստաթղթերը լրիվ ցրված... Ժողովուրդը հավաքվել էր գարեջրի գործարանի դիմաց: Մեր հիմնարկից մոտ 10 մ ներքև՝ պետավտոտեսչության մոտ, ոստիկաններն էին կանգնած, 2-3 հրշեջ մեքենաներ էին: Ժողովրդին չէին թողնում սահմանը՝ Գազի գրասենյակի կողմն անցնել: Մեզնից մոտ 300 մ հեռու երևում էր ադրբեջանցիների ամբոխը, որը գոռում-գոչյուններով մոտենում էր: Իրարից 80-120 մ հեռավորություն էր մնացել: Ամբոխի առջևում միլիցիոներներ էին երևում: Մեր առաջ կանգնած էին մեր միլիցիոներներից մի քանի հոգի, իսկ արանքում հրշեջներն էին: Այդ ժամանակ Ասկերանի շրջկոմի երկրորդ քարտուղարը ադրբեջանցի էր, որքան հիշում եմ, Միքայելովը: Նրան ուղեկցեցին դեպի ադրբեջանցիների կողմը՝ նրանց հետ բանակցելու համար, որպեսզի իմանան, թե նրանց պահանջն ինչ է, ինչ պիտի անեն: Ադրբեջանցիների հարայ-հրոցն ավելի ուժեղացավ: Ամբոխի ծայրը չէր երևում՝ ոչ ճանապարհին, ոչ թփուտների մեջ. անվերջ էին, հնարավոր չէ ասել, թե քանի հազար էին, իմ աչքին 20.000 էին երևում, մի քանի մեքենաներ էին երևում: Մենք չէինք ուզում առաջ գնալ, բայց մեր ոստիկաններին ապացուցում էինք, որ մեր սահմանն անցել են, կոխկրտում են, մեր գրասենյակները, գույքը փչացնում... Ասում էինք. «Կամ դուք նրանց ետ ուղարկեք, մենք նրանցից ոչինչ չենք ուզում, միայն թե գնան, մեր ունեցածը չփչացնեն, եթե դուք չեք գնում, թույլ տվեք՝ մենք գնանք, իսկ եթե թույլ չտաք, մենք պիտի մեզ պաշտպանենք...»: Ամեն րոպե մեր ղեկավարներին լսում էինք: Այնտեղ էր Ասկերանի կուսշրջկոմի առաջին քարտուղարը՝ Վաչագան Գրիգորյանը, ամբողջ ղեկավարությունն այնտեղ էր: Մոտ մեկ ժամվա ընթացքում Ասկերանի շրջանի գյուղերից էլ ժողովուրդը եկավ: Ջինվել էինք՝ ինչով կա-

ող էինք՝ քարով, բահի պոչով, բահով և այլն: Հրացաններ էլ կային, ես անձամբ տեսել եմ: Եթե այդ հրացանների կրակոցները չլինեին, թուրքերը ոչ թե ուժով, այլ քանակով մեզ կոխկրտելով կանցնեին:

Բ.Կ.- *Ո՞ւմ եք տեսել հրացանով:*

Ա.Բ. - Շատ վաղուց էր, դժվար է հիշել...Գեննադի Աղաջանյանն էր, Ջաբին՝ Յուրան... Ես երեք տեղից եմ կրակոցներ լսել. երկհարկանի շենքից էին կրակում...

Բ.Կ.- *Վիտոն էլ էր...*

Ա.Բ.- Հնարավոր է, նա կազմակերպիչներից մեկն էր, առաջին շարքում էր...Մյուս տեղերում եղած կրակոցները ես չեմ լսել: Գեննադիի զենքը ես եմ բարձրացրել, ասել եմ. «Մի՛ կրակիր, նկարում են, տեսնում են...»: Վախենում էի... այդ ժամանակ գիտակցությունս այդքան էր: Կրակոցները նրանց կանգնեցրին, ստիպեցին վախենալ և ետ գնալ, թե չէ մեզ տրորելով կանցնեին, մի հոգին 30-40-ի դեմ չէր կարող դուրս գալ: Թուրքերի գնալուց երկու-երեք ժամ հետո, երբ նայում էինք, թե նավթի բազայում, պետավտոտեսչության կետում, գրասենյակում ինչ ավերածություններ են գործել, և արդեն նկարում էին, Ստեփանակերտի Ներքին զորքերի մի դասակ եկավ՝ մարզային ղեկավարության հետ: Մոտ 25 հաղթանդամ տղաներ թմբուկ զարկելով գալիս էին, իրենց ուժն էին ապացուցում: Եկան-անցան, գնացին դեպի թուրքերը: Այդ դեպքից հետո Ասկերանի և շրջկոմի շենքում ամեն օր հերթապահություն էր սահմանվում, և ժողովուրդն էր պահակություն անում, կանգնում էին Խրամորթի խաչմերուկում, Խանաբադի տարածքում:

ԳԻՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳՐՔԻ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Զորի Բալայան 245
2. Յուրի Խաչատուրով 281
3. Լևոն Մելիք-Շահնազարյան 285
4. Իվան Ղուկասով 313
5. Նարինե Աղաբայան 315
6. Հանս Շտուգելբերգեր 320
7. Վոլոդյա Ղույյան 322
8. Գեղամ Բաղդասարյան 329
9. Լևոն Հայրապետյան 343
10. Ռազմիկ Հակոբյան 353
11. Տեր Հովհաննես քահանա Հովհաննիսյան 366
12. Վահան Արսենյան 370
13. Վալերի Մարության 379
14. Սամվել Շահինյան 383
15. Ալեքսեյ Ֆյոդորով 406
16. Նիկոլայ Բլոխով 408
17. Գառնիկ Արզումանյան 411
18. Համլետ Գրիգորյան 415
19. Սարգիս Հացպանյան 421
20. Վոլոդյա Հուսնունց 446
21. Սերգեյ Շահվերդյան 453
22. Վահան Շիրխանյան 456
23. Դավիթ Պետրոսյան 468
24. Պետրոս Մեղրյան 477
25. Վաչագան Ավանեսյան 485
26. Հակոբ Պողոսյան 489
27. Տիգրան Պետրոսյան 502
28. Սամվել Միրզոյան 510



Պատմում է ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆԸ (գրող, հրապարակախոս), Երևան, 30.03.2006 թ.

1937 թվականին, երբ ես երկու տարեկան էի, չարաբաստիկ, հրեշավոր 58-րդ հոդվածով հորս՝ ԼՂԻՄ-ի մարզխորհրդի լուսավորության բաժնի վարիչին, տարել են Սիբիր, ու այն տանելն է, որ տարել են: Հետո էլ տասնութ կանանց հետ միասին, բոլոր նրանց, ում ամուսիններին 30-ականներին ձերբակալել էին, ուղարկել Սիբիր կամ գնդակահարել Շուշիում, «ժողովրդի թշնամու ընտանիքի անդամ կամ կին» կոչվող հոդվածով, մորս էլ են աքսորել Սիբիր: Եվ տասը տարի Սիբիրում մնացել է: Այս ֆոնը շատ կարևոր է ինձ համար, այն առումով, որ ես փոքր ժամանակից տեսել եմ, թե ինչ է կատարվում և, չգիտեմ ինչու, շատ սուր եմ ընդունել այս ամենը: Մեր դպրոցում՝ ռուսական դպրոցում, եղել է մեկ ադրբեջանցի: Մեր դպրոցի կողքին՝ հայկական դպրոցում, մեկ դասարան է եղել: Պատերազմից հետո բացել են ադրբեջանական դասարան: Տարբեր տեղերից էին գալիս, հատկապես՝ Կրկժանից, որը, փաստորեն, փոքր քաղաք Ստեփանակերտի թաղամասերից մեկն էր: Եվ մենք մեր աչքի առաջ տեսել ենք ոնց է ամեն տարի աճում այդ թաղամասը: Հետո ես գնացի, ծառայեցի ռազմածովային ուժերում: Չորս տարի հետո վերադարձա, տեսա, որ արդեն ոչ թե դասարան, այլ ադրբեջանական դպրոց կա: Կարծես, ոչ մի վտանգավոր բան չկա այստեղ: Բայց այն ժամանակ զգացել եմ, որ հատուկ ավելացնում են ադրբեջանական դպրոցները: Տարբեր գյուղերից մեքենաներով բերում են, որ սովորեն Ստեփանակերտում, որպեսզի այդտեղ ադրբեջանցի մտավորականության՝ տնօրենների, ուսուցիչների թիվը ավելանա: Եթե Ղարաբաղի

շրջաններում նոր ադրբեջանական գյուղեր էին ծնվում, դրանց հիմքը հովիվների ընտանիքներն էին: Մեկ-երկու ընտանիք տասական երեխաներով մի բանի տնակ են կառուցում, ու անմիջապես դպրոց են բացում: Եվ այդպես, Խորհրդային Միության ժամանակ որոշել են գրավել հայկական Ղարաբաղը «խաղաղ» ճանապարհով: Երբ ես որպես բժիշկ էի աշխատում Կամչատկայում, շատ հաճախ գալիս էի հայրենիք: 1969 թվականին ես երկար ժամանակով արձակուրդ էի վերցրել, և գրող Լևոնիդ Հուրունցի ու Շահեն Մկրտչյանի հետ ճանապարհորդել եմ Ղարաբաղում: Մի դրվագ պատմեմ, որի մասին թչերը գիտեն: Գաղափարական գծով երկրորդ կամ երրորդ քարտուղարը՝ Հարությունյանը, որը, եթե չեմ սխալվում, Նորագյուղից էր, խնդրեց, որ մենք մասնակցենք մի հանդիպման: Գնացինք՝ չմտածելով, թե ինչն է դրա պատճառը: Ճաշ էին պատրաստել: Հուրունցի հետ գնացինք: Մինչ այդ մենք երեքով եղել ենք բոլոր եկեղեցիներում, եղել ենք Դադիվանքում: Մեր աչքով տեսել ենք՝ ինչ է կատարվում, ինչպիսի վայրագություն... Եվ աշխարհը լուռ էր: Նույնիսկ պայթեցված եկեղեցիներում բաքվեցի գիտնականները պեղումներ են անցկացրել: Այդպիսի տպավորության տակ գալիս ենք այդ ճաշկերույթին, որտեղ երկու ադրբեջանցիներ կային: Մեկը, Ադրբեջանի լուսավորության նախարարի տեղակալն էր, մյուսը՝ կուսակցական աշխատակից: Կենացներ էին ասում: Ես էլ շշմած լսում եմ. չէի պատկերացնում՝ ինչ է կատարվում, ինչու ենք հավաքվել: Առաջին բաժակից հետո ես արդեն չկարողացա հաց ուտել: Հարցը ինչումն էր. ուրախացրել են հայերին, ասել են, որ լենինյան ինտերնացիոնալիզմի դրոշի տակ Ադրբեջանը ուզում է հոգուտ հայերի Բաքվի ինստիտուտը, որը АПИ էր կոչվում (Азербайджанский педагогический институт), տեղափոխել Ստեփանակերտ: Գլխիս խփեց: Առաջին հարվածն այն էր, որ Բաքվում արդեն փակում են, այնտեղ հայ մտավորականության տունը քանդում են: Այդ ինստիտուտում, որը շատ հայտնի էր նրանով, որ տասնյակ տարիներ աշխատել, դասավանդել են շատ հայտնի մարդիկ: Ի վերջո, Բաքվի հայությունը հայկական դպրոցներ էր գնում՝ իմանալով, որ հետո հնարավորություն են ունենալու Բաքու քաղաքում, որտեղ ապրում է քառորդ միլիոն հայ, շարունակելու ուսումը: Մի սարսափելի նենգություն կար, անշուշտ, Հեյդար Ալիևի կողմից: Բուհը տեղափոխում են Ստեփանակերտ, դարձնում են իսկական ինստիտուտ, և, անշուշտ, պետք է ադրբեջանական ֆակուլտետ ունենա: Տեսեք՝ ինչպես են մտածում. պետք է Ստեփանակերտում գրանցվեն ադրբեջանցի պրոֆեսիոնալ դասախոսներ, տարբեր մասնագիտության գիտնականներ՝ իրենց ընտանիքներով: Ինչքան խորամանկ, մտածված, բառիս բուն իմաստով ռազմավարական միտք էր՝ ուղղված դեպի ապագան՝ ինչպես միշտ անում են նրանք: Ես արդեն զգացի՝ ինչ է կատարվելու: Այդ տարի Ալիևը վերջին հույսին, ազգանունը չեմ հիշում, հանեց Դաշքեսանից, որը հայոց հինավուրց Գարդմանքի մարզում էր, և տեղափոխեց Ստեփանակերտ՝ որպես երկրորդ կամ երրորդ քարտուղար: Իսկ նրա տեղում ադրբեջանցու նշանակեց, որ Գարդմանքը մնա իրենց հսկողության տակ: Այսպես էր արդեն կուտակվում ամեն ինչ: Հետո սկսել եմ խորանալ, հատկապես նորագույն պատմության էջերը սկսեցի ուսումնասիրել, այն, ինչ որ իմ աչքերով եմ տեսել, իմ ականջներով եմ լսել, իմ սրտով եմ զգացել: Ամեն դարուն Բաքվից եկած պատվիրակությունը քարոզչություն էր անում, որ ովքեր վերջացրել են դպրոցը, գնան ընդունվեն Բաքվի ինստիտուտները, այնտեղ 14-16 ինստիտուտներ կային, որպեսզի հայերը գնան, այնտեղ սովորեն: Այստեղ էլ ռազմավարական խորամանկություն կար. ովքեր վերջացնում էին ինստիտուտը, երբեք թույլ չէին տալիս, որ վերադառնան Ստեփանակերտ: Ամեն ինչ անում էին, որ տեղ չտան, կամ ուղարկեն Ադրբեջանի շրջաններից մեկը, կամ թողնեն Բաքվում, միայն թե Ստեփանակերտ չգնան: Նույնը անում էին բանակի առումով. ծառայությունից հետո գալիս էին, տեղ չէին գտնում: 40-ական թվականների վերջերը, 50-ականների սկզբները ծանր ժամանակներ էին: Ինքս 1953 թվականին եմ վերջացրել դպրոցը: Ես 11 տարի եմ սովորել: Սկզբում հայկական դպրոցում էի սովորում, հետո ինձ հանեցին, տարան ռուսական դպրոց: Ռուսական դպրոցում աղջիկներն ու տղաները միասին էին, իսկ հայկականում՝ բաժանել էին: Այդպես ամբողջ երկրում էր: Ստեփանակերտի 366-րդ գնդի ռուս սպաների երեխաները սովորում էին ռուսական դպրոցում: Տատս մտածեց, որ սարսափելի սխալ է կատարվում, որ աղջիկները տղաների հետ միասին չեն: Նա վտանգավոր բան էր տեսնում՝ հոգեբանական առումով: Եվ այդպես, շատերին տեղափոխեցին: 1949 թվականին Հայաստանի և Ղարաբաղի ամբողջ մտավորականության սարսափելի արշավ էր սկսվել դեպի Ալթայ, Սիբիր: Վերջին սերունդն էր, արդեն բան չէր մնացել: Մեր դպրոցի տնօրեն Համազասպ

Վարդանովիչին եմ հիշում, աչքերը երբեք չեմ մոռանա: Ուսուցիչներ կային, որոնք իմ հոր հետ աշխատել են: Եվ այդ խմբերում մենք երբեք չենք տեսել ադրբեջանցու, թեկուզ այդտեղ արդեն ադրբեջանցիներ էին ապրում: 1937-1953 թվականներին, երբ ստալինյան ցուցակներով «պլաններ» կատարում էին, միայն հայերին էին տանում: Այդպես էլ 1943-1945 թվականներին զորակոչիկները, գնում էին հատկապես կամավորները: Միայն հայերի մոտ էին տանում այդ քարոզչությունը, որ կամավոր գնան: Եվս մի բան՝ «Великие стройки коммунизма», որը պատերազմից հետո է սկսվել. ամբողջ Խորհրդային Միությունում կառուցում էին ՀԷԿ-եր, կոմբինատներ, արդյունաբերական ձեռնարկություններ: Այստեղ էր Մինգեչաուրի ՀԷԿ-ը: Այստեղ ստեղծվել էր քիմիայի «մայրաքաղաք» Սումգայիթը: Ամբողջ Ղարաբաղում գալիս հավաքում էին, այնպիսի քարոզչություն, այնպիսի հեքիաթներ էին պատմում, թե ինչ է իրենց սպասվում. «Ունակարան եք ստանալու, բնակարանում ամեն ինչ կլինի, ջուր կլինի, լողանալու համար ամեն ինչ կլինի, խոհանոց կլինի: Ձեր երեխաները կառվորեն»: Նկատի ունենալով, որ հայերը լավ շինարարներ են, հազարավոր մարդկանց տանում էին, որ Մինգեչաուրի կամ Սումգայիթի կառույցները ավարտեն: Այն ժամանակ թերթում էինք կարդում, «Новости»-ով, «Время»-ով ամեն շաբաթ ֆիլմ էին ցույց տալիս, որ «Ժուռնալ» էր կոչվում: Եվ չեմ մոռանա այն խոսքը. «В Сумгаите рабочий язык строителей - армянский»: Դա եղել է մոտ 1945 1951 թվականներին: Սա բաղաքականություն էր: Ինչու եմ այս բոլորը պատմում. իմ սերունդը մնացել է՝ սրդեն գիտակցելով, թե այս ամենը դեպի ուր է տանելու: Հետո, երբ ես տասը տարի ծառայեցի Կամչատկայում՝ որպես բժիշկ, մինչ այդ ծովում էի ծառայել, ավարտեցի Ռյազանի բժշկական ինստիտուտը, սկսեցի ճանապարհորդություն կատարել և Ղարաբաղում, և, հատկապես, Նախիջևանում: Ես արդեն տեսա, որ Ղարաբաղին սպասվում է Նախիջևանի ճակատագիրը: Եվ ես մենակ չեմ եղել, այդպես եղել են իմ բոլոր սերնդակիցները: Ես հնարավորություններ եմ ունեցել՝ լինելով «Литературная газета»-ի թղթակիցը երկու տասնյակ տարիներ, անընդհատ գրում էի դրա մասին: Մենք պայքարը տանում էինք հատկապես գրողների՝ Սիլվա Կապուտիկյանի, Սերո Խանզադյանի, Հրաչյա Հովհաննիսյանի, Գևորգ Էմինի, այդ առումով հանճարեղ Լևոնիդ Հուրունցի, որը դրանով էր ապրում, Բոգդան Ջանյանի հետ՝ Բագրատ

Ուլուբաբյանի գլխավորությամբ: 1965 թվականին նրանք սկսեցին առաջին հանդիպումները. Խորհրդային Միության օրոք նրանք առաջին ստորագրություններն են հավաքել: Միայն այդպես կարելի էր փրկել Ղարաբաղը, որպեսզի խաղաղ, նորմալ վերանայեն այն, ինչ որ եղել է 1921 թվականի հուլիսի 4-ին և 5-ին, զոռով, Թուրքիայի ճնշման տակ՝ ինչպես եղել է Մոսկվայի, Ղարսի պայմանագրերից հետո:

Բ.Կ.- *Ե՞րբ վերադարձաք Ղարաբաղ:*

Զ.Բ.- 1974 թվականին ես արդեն հայկական անձնագրով էի: Ուշքս ու միտքս Ղարաբաղն է եղել: Արդեն ամուսնացած էի, կինս ղարաբաղցի էր, մայրս Ղարաբաղում էր: Երկու երեխաներս Ղարաբաղում են ծնվել, մեր բոլոր գերեզմանաքարերը այնտեղ են: Երբ մենք պայքարը սկսել ենք, չի եղել մեկը, որ չհավատար, որ մենք արդյունքի ենք հասնելու: Եվ չի եղել մեկը, որ հավատար. սա էլ կար, որովհետև այդ հզոր պետությունում... վերջիվերջո, դժվար էր պատկերացնել, որ այդ սարսափելի պատը կարելի էր գլխով խփել և քանդել: Թեկուզ զգում էինք, որ այդ պատը ծուռ է, պիտի փլուզվեր: Հատկապես, որ անընդհատ սոցիալական «երկրաշարժեր» էին տեղի ունենում, մենք պիտի պատրաստ լինեինք:

Բ.Կ.- *Բագրատ Ուլուբաբյանի հետ երբ ծանոթացաք:*

Զ.Բ.- Բագրատ Ուլուբաբյանի հետ ծանոթացել եմ մինչև այստեղ գալը՝ դրանից մոտ 7-8 տարի առաջ: Վերջին տասը տարին աշխատել եմ Կամչատկայում, և վերջին յոթ տարում մենք անընդհատ նամակագրություն ենք ունեցել: Նրա նամակները ինձ համար դարձել են ցուցումներ: Հետո նա գրքեր էր ուղարկում: Նա նույնիսկ պատվերներ է տվել՝ ինչի մասին գրեմ: Ես մնոր ունեմ՝ կապված ռուսերեն լեզվով բանաստեղծությունների հետ: Բանաստեղծություն եմ գրել, որը նա կատակով ասվանում էր կոչ կամ հիմն: Նա ինձ համար և դրոշակակիր էր, և դրոշ էր, նաև՝ փարոս: Այն 13 հոգին, ովքեր Բագրատի հետ էին, բոլորն էլ պատժվեցին և պատմության մեջ մտան: Նրանց վոնդեցին այնտեղից՝ ցույց տալով, թե ինչ է սպասվում յուրաքանչյուրին, ով այդպիսի գործերով կզբաղվի: Բագրատի հետ անընդհատ կապի մեջ էի, գիտեի արդյունքները: Ես այնտեղ էի, երբ 1967 թվականին Ղզոլայում ադրբեջանցի այն սրիկան երեխային սպանել էր՝ մեխը գլխին խփելով և աչքերը հանելով, և դատարանը այնպես չէր տանում գործը, ինչպես պետք

էր: Սադրանք արեցինք, և կրակ սկսվեց: «Չկա չարիք առանց բարիքի»՝ այսպես կվերնագրեմ մի էտապ. դա Կոորկովի Ղարաբաղ գալն էր: Առհասարակ, թուրքերը, այդպիսի բայերի դիմելով, կարծում են՝ իրենք շատ խորամանկ են, բայց չգիտեն, որ հակառակ արդյունքն է լինելու: Կոորկովը լավ արթնացրեց մեզ, եթե ոչ առանձին մարդկանց, ապա ամբողջ ժողովրդին: Բագրատին, նրա թիմին կամ մեր ներկայացուցիչներին պետք չէր արթնացնել, բայց ժողովուրդն արդեն իմացավ, որ այստեղ պետք է մի բան արվի: 1975 թվականի ապրիլյան պլենումը, որը, անշուշտ, մշակված էր Բաքվում և անձամբ Ալիևի կողմից, ուղղված էր նրան, որ ոչնչացնեն, ջարդուփշուր անեն մտավորականության ողնաշարը: Եթե մինչ այդ 13 հոգուն իրենց ընտանիքներով ուղարկել են, և բոլոր նրանց, ովքեր նրանց բարեկամները, զինակիցներն են եղել, այստեղ արդեն համապատասխան ցուցակ է եղել, միայն տասներեք հոգի չեն եղել: Եվ այդ պլենումը անց են կացրել ոչ միայն Ստեփանակերտում, այլև բոլոր շրջաններում: Այդ թվում և սարսափելի հարված էր ինձ, իմ հրատարակմանը, որը եղել է խոշորագույն հանդեսում՝ մի քանի միլիոն տպաքանակով, որը կոչվում էր «Дружба народов»՝ «Ժողովուրդների բարեկամությունը»: Այնտեղ ես գրել եմ մի ակնարկ՝ ղարաբաղյան ճանապարհորդությունը, այդպես էլ կոչվում էր՝ «Коникулярные тропы»՝ ինչ է տեղի ունենում, ինչ է եղել, ինչից է սկսվել, ինչով է վերջանում այն, ինչ կատարվում է Ղարաբաղում: Ասեմ, որ երկու տարի հետո՝ 1977 թվականին, երկու, այսպես ասած, միջազգային կոմունիստներ՝ մեկը Հնդկաստանից, մյուսը Արաբական աշխարհից, հանդիպում են Կոորկովի հետ: Մի հոդված եմ տպագրում, միգուցե Գինեսի գրքի մեջ մտներ. երեսուներկու լեզուներով չգիտեմ բանի երկրներում տարածվում է: Պրահայում լույս տեսնող մի հանդես կար, որը կոչվում էր «Проблемы мира и социализма», զաղափարական ուղղվածություն ուներ, որը քարոզչություն էր տանում, որ սոցիալիզմը ամենալավ բանն է: Եվ այդտեղ սևով սպիտակի վրա գրված էր, որ Ղարաբաղի առաջին դեմքը՝ ինչպիսին էր Կոորկովը, ասում է, որ երբեք հայերը չեն ուզել լինել Ադրբեջանից դուրս: Ղարաբաղը և Հայաստանը տարանջատված են սարերով: Կարծես, եթե վերցնենք Սիբիրը և Եվրոպական Ռուսաստանը, որ Ուրալի սարը անցնում է, դա արգումենտ է, որպեսզի հեռու լինեն իրարից: Մենք անմիջապես պատրաստեցինք մի բաց նամակ: Այդ ժանրը շատ հետաքրքիր է: Հիմա ձեռ են առնում, բայց դա հետաքրքիր բան է: Այդ հոդվածի հետ կապված բաց նամակը ստորագրեց Սերո Խանզադյանը: Ի դեպ, ասեմ, որ շատերը չեն ուզել ստորագրել, միայն նա ստորագրեց: Նամակը ուղղված էր Բրեժնևին: Բրեժնևյան ամենաաբսուրդի ժամանակն էր: Նամակը չորս էջ էր, չորս էջ էլ՝ մեկնաբանություն, որ շատ բաներ հասկանալի լինեն մեր ընթերցողին, որը տեղյակ չէ՝ ինչ է Ղարաբաղը: Դա, անշուշտ, ուղարկում ենք Բրեժնևին, բայց մեզնից «անկախ» նամակն ընկնում է արտաահման: Սկզբում տպագրում է «Զարթոնքը», հետո արտատպում է Բեյրութի դաշնակցական թերթը՝ «Ազդակը»: Հետո՝ բոլոր երկրների դաշնակցական պարբերականները: «Ամերիկայի ձայնը» ամեն օր այդ նամակը հայերենով հատված առ հատված և ինչեցնում էր, և մեկնաբանում: Սկսեցին մտահոգվել: Բոլոր դեսպանատներին անընդհատ նամակներ էին գալիս Մոսկվայի ՊԱԿ-ի համապատասխան մարմիններից, որ ուշադրություն դարձնեն տվյալ տեղում՝ լինի Լոս Անջելեսում, Սիրիայում, Բեյրութում կամ այլ տեղ, այսպիսի բան լ. տեղի ունենում Սերո Խանզադյանի նամակի շուրջը: Հիշում եմ, որ Դեմիրճյանը սկզբում կանչել է Սերոյին, Սերոն իմ անունն է տվել, ոչ թե ծախել է, այլ իմացել է, որ մեկ է, նա գիտի: Հետո ինձ է կանչել: Ասացի. «Ինչո՞ւ եք դրանով զբաղվում, Կարեն Սերոբովիչ, չէ՞ որ այս հարցը պիտի լուծել, ոչ թե մտածել, թե ով է գրել, ինչպես են տարածել: Ծիտը եթե թռչում է վանդակից, ապա դժվար կկարողանաս վերադարձնել: Քարը եթե նետում ես, ապա օդից ետ չի գալու»: Ասաց. «Ծիտը եթե թռավ, պիտի ետ վերադարձնենք»: Ասացի. «Չի ստացվելու»: Բայց նորմալ էր խոսում, չարություն չի եղել: Երբ ես ասացի, որ մի փրկություն կա՝ Սերոյին «Ոսկե աստղ» տան. դրանով հարցը կլուծվի, կիմանան, որ, ի վերջո, այստեղ ոչինչ էլ չկա: Իրենից է կախված, մեկ-երկու տարի կանցնի, կտա: Եվ ասեմ, որ 1984 թվականին Սերոյին ներկայացրին Աշխատանքային հերոսի կոչման: Դրա համար ամեն ինչ արել է Դեմիրճյանը: Բոլորս գիտեինք, որ առանց առաջին քարտուղարի ոչ կարող էր մեդալ կամ նույնիսկ սպորտային կրծքանշան ստանալ: Սերոն միակն էր գրողներից, որ հերոսի կոչում ստացավ: Թեկուզ Դեմիրճյանը ուզ չի դրել Ղարաբաղում, այդպիսի հարցերում շատ զգույշ էր... Չեմ ուզում վատ բան ասել: Բայց լավն էլ կար: Ասացինք, որ այսօր պետք չէ հարց բարձրացնել, որ Ղարաբաղը միացնեք Հայաստանին, որովհետև ձեզ մոտ չի

ստացվի: Դա ուրիշ ճանապարհով պիտի լինի: Բայց Ղարաբաղում երեխան միացնում է հեռուստացույցը՝ Բաքուն է խոսում, ռադիոն է միացնում՝ Բաքուն է խոսում, մինթ, վերջիվերջո, Խորհրդային Միությունը իր լենինյան ազգային քաղաքականությամբ չի կարող այդ հարցը հենց իր դեմագոգիայով լուծել: Երկու օրից ինքը զանգեց: Ասաց, որ կանչել է այստեղ Սոցիալիստական աշխատանքի հերոս, Լենինյան մրցանակի դափնեկիր, ակադեմիկոս, Հայաստանի ԳԱ վիցե-պրեզիդենտ Անդրանիկ Ղևոնդովիչ Իոսիֆյանին: ԽՍՀՄ-ում երրորդ դեմքն էր տիեզերքի նվաճման գործում: Գագարինի թռիչքից հետո երեք հոգի ստացել են Աշխատանքային հերոսի կոչում՝ Կորոլյովն էր, Միշինն էր, երրորդ աշխատանքային հերոսը եղել է ինքը՝ Անդրանիկ Ղևոնդովիչը: Հիմա պետք է ուսումնասիրենք, թե ինչպես անենք, որպեսզի լուծեն Ղարաբաղի հեռուստաշտարակի խնդիրը: Որոշել են արդեն, որպեսզի Ղարաբաղը կարողանա դիտել Երևանը, պլանավորած կար, Երևանի հեռուստաշտարակը տանում են Լենինական, Լենինականինը բերում են Գորիս: Իոսիֆյանը պետք է գտներ՝ որ սարի վրա տեղադրեն, որ Քիրս սարը չխանգարի: Այդպիսի գիտական հարցեր կային: Վերջիվերջո, մինչև շարժումը դա եղավ: 1988 թվականի փետրվարին շարժումն սկսվել էր, մայիսին Ստեփանակերտում և ուրիշ վայրերում նայում էին Երևանի պիրը: Այս աշխատանքը տարվել է: 1987 թվականը, առհասարակ, ինքը՝ բուն վերակառուցումը, բացի ամեն ինչից, մեզ բոլորիս ցույց տվեց, որ եկել է Ղարաբաղի և Նախիջևանի հետ կապված ժամանակը: Ամենամեծ սխալը այն էր, որ Ղարաբաղի հարցը բարձրացրել ենք առանց Նախիջևանի: Բոլոր նրանք, ովքեր դեմ են եղել, ես համոզված եմ հարյուր տոկոսով, որ սխալ են եղել: Չեմ ուզում պիտակներ դնել, բայց այդ երկու հարցերը միասին պետք է լուծվեին: Մտածել, թե այնտեղ հայություն չկա կամ քիչ է մնացել, սխալ է: Այդտեղ արդեն ծագեց այն գաղափարը, որ Ղարաբաղը կամ Նախիջևանը զուտ հոդակտոր չէ, այլ հայրենիք է:

Բ.Կ.- *Այսօր, օրինակ, պահանջում են, որ փախստականներին բերեն, ուրեմն, թող նախիջևանցի հայերին էլ եր բերեն:*

Զ.Բ.- Սկսեցինք այն, ինչ կատարվեց, ինչը ես համարում եմ ամենաճիշտը՝ նոր հանրաքվեն: Ինչեր լինք անում... «Литературная газета»-ի սենյակում տղաները պարկերով էջեր էին բերում՝ ստորագրություններով: Սովորական ստորագրություններ չէին. անձնագրի համարներն ու հասցեներն էին: Ութսուներկու հազար ստորագրություններ, ութսուներկու հազարը ութ հատոր էր, և յուրաքանչյուր էջում գրված էր. «Ղարաբաղը և Նախիջևանը միացնել Հայաստանին»: Այդ տասը հատորները, որ Աստվածաշնչի չափ գրքեր էին, ուղարկել ենք քաղբյուրոյի անդամներին: Ես հիշում եմ, որ Գրողների միությունում միշտ կուսակցական դպրոցից ժողովներ էին անցկացնում, հատկապես՝ վերակառուցման ժամանակ, ես ելույթ ունեցա: Սեղանին դրված էին այդ հատորները: Ասացի, որ դրանք բոլորն էլ ուղարկված են: Մեր կոլեգաները նայեցին և տեսան, որ լուրջ աշխատանք է կատարված: Հազարավոր մարդիկ են դու հավաքել, Նախիջևան են գնացել, Ջնաբերդ, Ցղնա, Ազա, Բիստ, Բարվանիս և մյուս այն գյուղերը, որտեղ հայեր կային: Հատկապես Ղարաբաղի բոլոր գյուղերում են ստորագրություններ հավաքել: Եվ այդ ամենը մենք ուղարկել ենք: 1987-ի ամառն էր: Աշնանը արդեն սկսեցին միտինգները: 1987 թվականին բոլոր թերթերում, հատկապես նրանք, ովքեր կապված էին «Литературная газета»-ին, որովհետև հայաստանյան թերթերը միշտ արտատպում էին, ամենաշատ հոդվածները էկոլոգիայի մասին էր՝ Սևանի, Երևանի մասին: Առանց այդ էլ դա պլանավորված եղել է, բայց այդ էկոլոգիայի շարժման տակ սկսեցինք միտինգներ անել, հատկապես, որ վերակառուցումը հնարավորությունը տվել է, որ այդ շարժմանը թափ հաղորդենք՝ կապված Սիբիրի և տեղի խնդիրների հետ: Բալկանյան շարժում սկսեցինք՝ Սևանի, Բայկալի, Նևայի խնդիրների հետ կապված: Միջազգային կազմակերպության համանախագահ դարձա: Այդ միտինգներին սկսեցին շատ մարդիկ հավաքվել, հատկապես՝ Օպերայի հրապարակում: Իգոր Մուրաղյանն այդտեղ իր գործն էր տանում: Տասը տարի անընդմեջ Իգորը, Սուրեն Այվազյանը, այդ տղաներին երբեք չի կարելի մոռանալ, պրակտիկ գործ էին անում: Էկոլոգիայի մասին միտինգը գնում էր, Իգորը գալիս էր իր խմբով համապատասխան լոզունգներով՝ «Ленин-Партия-Горбачев» և այն, ամեն ինչ մտածված: Արդեն ուրիշ նյութ է մտնում. էկոլոգիայի մասին միտինգի ժամանակ հանկարծ մեկը հարթակից խոսում է Ղարաբաղի մասին: Եվ դա արդեն սովորական է դառնում: Նոր նյութ է, թարմություն է, և անսպասելի բոլորի համար: Տեսնում էինք, որ հաջորդ անգամ էկոլոգիայի համար հավաքվում են, բայց արդեն ոչ թե տասը տոկոսն է խոսում Ղա-

բարեղի մասին, այլ՝ հակառակը: Վերջում, գիտենք, դա ինչի հասավ: Ղարաբաղում անընդհատ աշխատանքներ էին իրականացվում: Այնտեղ այնպիսի խմբեր ենք ունեցել: Վալերի Մարությանի բանջարանոցում ամեն օր հավաքվում էին Ստեփանակերտից եկած մարդիկ: Ոչ որ չէր էլ պատկերացնում, թե ինչով ենք այնտեղ զբաղված: Հատկապես ինքը՝ Իգորը, որն իր խմբերով գնում էր գյուղերը, քարոզչություն էր տանում, որ պետք է պատրաստվենք: Մինչ այդ Իգորը մի մեծ խմբի հետ, որտեղ ընդգրկված էին Սոցիալիստական աշխատանքի հերոս, Խորհրդային Միության Գեր պատգամավոր, ուսուցիչ, զինվորական, մեկնեցին Մոսկվա: Այնպես արեցինք, որ Մոսկվայում պատվիրակությանը ընդունի Կենտկոմում ազգային հարցերով զբաղվող Միխայլովը: Ուզում եմ ասել՝ այդտեղ ֆոն ստեղծվեց, և տեղի ունեցավ ապրիլի 20-ը:

Բ.Կ.- *Դուք ինչպես եք բացատրում, որ Մոսկվան այդպես ընդունում էր Արցախից եկած պատվիրակություններին և ասում էր. «Գնացեք իրագործեք ձեր պահանջը, որը ընդունելի է»:*

Զ.Բ.- Ինչքան էլ բարկոծեն, այդ շան տղան, վերջիվերջո, բացել է դրները: Ապրիլյան պլենումով, երբ 1985 թվականի ապրիլի 23-ին հայտարարվեց վերակառուցումը, որը ունեցել է լոզունգներ՝ «Гласность», «Ամեն ինչ թափանցիկ լինի» և այլն, բացվեց ամբարտակի ջուրը, որովհետև ճեղքվածք տվեց: Մի կողմից շատ էր վարարում, արդեն երևում էր, որ պիտի բանվի: Այդ ֆոնը ստեղծեց Կենտկոմում նոր բացված ազգային հարցերով զբաղվող ենթաբաժինը:

Բ.Կ.- *Դուք հանդիպել եք Գորբաչովին, պատմեք այդ հանդիպման մասին: Այսօրվա հայացքով նայելիս՝ ինչ մարդ էր նա:*

Զ.Բ.- Այսօրվա հայացքով էլ, այն ժամանակ էլ... այդ հանդիպումը իմ աչքերը բացեց, որ ոչ մի բան չի լինելու նրա կողմից:

Բ.Կ.- *Ինչպես գնացիր նրա մոտ, ճիշտը՝ ինչպես է դա տեղի ունեցել.*

Զ.Բ.- Երբ մենք այստեղ արդեն որոշել ենք, որ փետրվարը պետք է լինի այդ հարցի վերջին ամիսը, ես հնարավորություն եմ ունեցել, և օգտագործեցի այդ հնարավորությունը: Շատ հայտնի մարդ կար՝ Խաղաղության կոմիտեից Գեննադի Բաբարիկը, որը միջազգային լրագրող էր: Նա վերակառուցման դրոշի տակ կազմակերպել է ժողովրդական դիվանագիտություն Ամերիկայի հետ: Հարյուր հոգի հայտնի մարդկանց՝ գիտնականներ, դերասաններ, տիեզերագնացներ, գրողներ և այլն, տարբեր հանրապետություններից պետք է ցրվեին բոլոր քաղաքներով խորհրդով, ընտանիքներով, ելույթներ ունենային: Այդ ամբողջ խմբին պետք է ընդուներ Ռեյգանը: Ինձ ընդգրկել էին այդ խմբի մեջ: Դա եղել է 1988 թվականի հունվարի 25-ին: Առաջին անգամ Վիսոցկու մասին խոսել են մի հաղորդման ժամանակ: Նրա 50 ամյակն էր, նա 1938 թվականի մեռնող էր: Բոլորը զարմացած էին, որովհետև դա արգելված էր: Լսում եմ այդ օրը՝ հունվարի 25-ին, մենք թռանք: Ամբողջ խումբը փետրվարի 10-ին վերադարձավ տուն, իսկ ես մնացի այնտեղ: Լուիզ Սիսան Մանուկյանը և Նաջարյան ամուսինները Լոս Անջելեսում հանդիպումներ էին կազմակերպում ինձ հետ: Բոլոր տեղերում ես պատմում էի, թե ինչ է տեղի ունենում վերակառուցման դրոշի տակ, ինչ է մեզ մոտ տեղի ունենում, շուտով, շատ շուտով պետք է պատրաստ լինենք: ՄԱԿ-ում աշխատում էր Սևան անունով մեկը, հավաքեց մոտ երեսուն երկրներից մարդկանց: Այդտեղ ես ելույթ ունեցա: Վերակառուցման մասին եմ խոսել, որ այստեղ ազգային հարցերն են լուծվելու, և Ղարաբաղի խնդրի մասին: Հետո կապի մեջ եմ եղել ակադեմիկոս Աղանբեկյանի հետ, որը պետք է գար, ելույթներ ունենար: Գորբաչովը նրան Նովոսիբիրսկից բերեց Մոսկվա, պաշտոն տվեց: Բայց մինչ այդ՝ մի քանի ամիս առաջ, նա մեկ խնդրանքով Ֆրանսիայում ելույթ էր ունեցել և ասել էր, որ Ղարաբաղի հարցը կլուծվի վերակառուցման դրոշի տակ՝ «... В разделе «экономических преобразовании», ու այդ հարցը պետք է լուծվի: Ինձ պետք էր, որ այդ մակարդակով այդ խոսքն ասվեր: Եվ դա ցնցեց: Հետո նա գնաց այնտեղ ելույթ ունեցավ: Ես այնտեղից թռա ամսի 20-ին: Պարոնհատ Իգոր Մուրադյանի հետ կապի մեջ եմ եղել, տեղյակ էի, որ արդեն սկսված է: Դիմավորում ենք Աղանբեկյանին: Նա այնտեղ սկսեց այդ արշավը: Ամեն տեղ Ղարաբաղի անունը տալիս էր և ասում էր՝ ինչ է պետք անել: Երբ վերադարձա, արդեն ամբողջ օդակայանում բոլորը Ղարաբաղի մասին էին խոսում: Մենք փետրվարի 21-ին հասանք: Հետո կապվեցի, ասացի. «Իգոր, դե եթե արդեն սկսվել է, ես պետք է այստեղ հանդիպեմ մարդկանց հետ, ընդհուպ վերև՝ պաշտոնատար անձանց հետ»: Գնացի՝ օգտագործելով «Литературная газета»-ի թղթակցի հնարավորությունները:

Շահնազարովի հետ ծանոթացրեց Հայաստանի նախկին երկրորդ

քարտուղարը՝ Տեր-Ղազարյանցը: Ասացի. «Չի լինի, սա չենք կարողանալու հանգցնել: Ե՛վ Ղարաբաղում, և՛ այնտեղ, և՛ աշխարհով մեկ աճել է այն թիվը, որի մասին լուրեր եք ստացել: Բոլոր տեղերում արդեն լուցկին թափ են տվել: Նյու Յորքում Բրոդվեյի փողոցում փակել են ճանապարհը. ինչ է կատարվում՝ Ղարաբաղ, Ղարաբաղ... Եվ ճիշտ կլինի, եթե ընդունի Յակովլևը»: Ասաց. «Ինձ համար ավելի հեշտ է միջամտեմ, որ Գորբաչովը ընդունի, քան Յակովլևը»: Ասացի. «Չէ, սկզբից պետք է Յակովլևի հետ հանդիպենք: Յակովլևի հետ հանդիպումը ինքս կանեմ»: Մենք գնացինք Սերգո Միկոյանի մոտ: Յակովլևի ավագ օգնականը՝ Կուզնեցովը, Սերգո Միկոյանի աներձագն էր: Միկոյանի կինը մահացել էր, բայց շատ մոտ բարեկամներ էին մնացել: Նա խոսեց Յակովլևի հետ: Յակովլևն ասաց, որ վաղը ընդունելու է: Ես շտապ զանգեցի Սիլվային, չուզեցի մենակ գնալ: Հետո գիտեի, որ Սիլվան մի քանի տարի առաջ Կանադայում հանդիպել էր Յակովլևի հետ, որտեղ նա դեսպան է եղել: Դա մտածել էի, ասել եմ. «Մենակ պիտի չգնամ, դա շատ կարևոր է ինձ համար, որովհետև կին է, վերջիվերջո, շատ հայտնի է, և իմաստ ունի»: Սիլվան ոչ մի բան չհասկացավ: Տղաները եկան՝ նրա տոմսը վերցրած, հեռախոսով է ամեն ինչ եղել: Ես չեմ կարողացել նույնիսկ նրան դիմավորել, անընդհատ նրանց հետ եմ եղել: Սիլվան գալիս է, նույն երեկոյան հանդիպում ենք Յակովլևի հետ: 4 ժամ Յակովլևի հետ խոսում ենք: Պատմեցինք: Սիլվան իր հետ Թուրքիայում տպագրված քարտեզ էր բերել, որը դասավանդում էին իրենց դպրոցներում: Ամբողջ Խորհրդային Միության տարածքը կանաչ գույներով էր, ամբողջ Անդրկովկասը՝ կանաչ, միայն Երևանն էր մի դեղին, պստիկ կետ՝ վրան գրած՝ Երևան, Հայաստան անունը չկար նշված: Մենք արդեն գիտեինք, որ Շահնազարովը պատրաստում է Գորբաչովին: Ամենաշատը ինձ վրա տպավորություն է թողել Յակովլևը: Նա ուշադիր էր լսում: Ասաց. «Գիտեմ, զգացել ենք, որ այդպիսի բաներ են տեղի ունենում: Բայց այն, ինչ որ դուք ասում եք, չեմ էլ պատկերացնում, որ դա խորհրդային իշխանության օրոք եղել է»: Ասում եմ. «Գիտեք, ես Ղարաբաղի մասին չեմ ուզում այստեղ խոսել, Նախիջևանի մասին եմ ասում: Մենք գտնվում ենք սահմանի վրա: Եվ, հատկապես, այդ սահմանի վրա 20-ական թվականների վերջերին Թուրքիան Պարսկաստանից հատուկ առել է մի հողակտոր, որպեսզի կապ ունենա Նախիջևանի հետ և մեր ամբողջ հանրապետությունը սահմանային ռեժիմի տակ է դրվել»: Եվ նա դա հասկացավ:

Բ.Կ.- *Իսկ նրա հնարավորությունները:*

Զ.Բ.- Դե, նա եղել է կոմկուսի գաղափարախոսը: Նրա հնարավորությունները մեծ են եղել: Մեկ-երկու ժամից նրան զանգեց Գորբաչովը: Հոգեմանավորված են եղել: Երբ նա լսափողը վերցրեց, ես իմացա, որ Գորբաչովն է, որովհետև Յակովլևը, լինելով Քաղբյուրոյի անդամ և Կենտկոմի քարտուղար, որևէ մեկը չէր կարող առանց Կուզնեցովի նրա հետ կապի մեջ մտնել: Այդպես կարող էր միայն Գորբաչովը: Խոսելու ժամանակ ասացի. «Սիլվա, մենք պիտի դուրս գանք»: Ընդունված չէր, սովետական Գորբաչովի հետ խոսելու ժամանակ մենք ներկա լինի, այդպիսի բաներ ես արդեն գիտեի: Սիլվան չհասկացավ, տակայն վեր կացավ տեղից: Նա բարի աչքերով նայեց, որ մենք հասկացանք: Լսափողը ձեռքով փակեց, ասաց. «Ես ձեզ անմիջապես կկանչեմ»: Մենք դուրս եկանք: Կուզնեցովը մեզ թեյ հյուրասիրեց: Երկար ենք խոսել: Նա արդեն բացատրել էր, որ այս մարդիկ լուրջ մարդիկ են, այն, ինչ այնտեղ կատարվում է, մեկ է, պիտի պայթի: Եվ Նախիջևանի մասին է ասում, որ միայն Ղարաբաղի հարցը չէ: (Հետագայում Նախիջևանի հարցը հանվեց՝ մեր տղաների պատճառով, հատկապես՝ Լևոնի, ՀՀԾ-ի ամբողջ խմբի պատճառով): Ասել էր, որ իրենք պետք է զբաղվեն դրանով, որ մեզ ընդունելու է: Գորբաչովն էլ ասել էր, որ վաղը, ժամը տասին մեզ ընդունելու է: Այ, այսպես է սկսվել: Հետո կանչում է, մենք նորից մտնում ենք նրա մոտ: Նորից թեյ են բերում, որովհետև շատ երկար ենք մնում: Եվ պատմում ենք Ալիևի արածի մասին, բոլորը նրան պատմեցի: Նա լուռ լսեց: Մենակ էր: Նշումներ էր անում: Ասաց. «Ես դրանով կզբաղվեմ»: Եթե չլիներին Գորբաչովի լոթի-մոթի գործերը, եթե միայն նա լիներ, և նա ուներ այդ հնարավորությունը, ուրիշ ընթացք կլիներ: Վերջում ասաց. «Դե, Գորբաչովը վաղը, ժամը տասին ձեզ ընդունելու է»: Գնում ենք «Ռոսիա» հյուրանոց՝ Սիլվայի սենյակը: Արդեն մոտ տասը հոգի մարդ կար այնտեղ: Ովքեր գնացել էին դիմավորելու, արդեն գիտեին, որ Յակովլևը ընդունելու է: Իգորը զանգեց: Գիշերվա ժամը երկուսն էր: Ասաց.

- Ջորի Հայկովիչ, ես չեմ կարողանում ժողովրդին պահել: Արդեն կլկլվում են խոսքերը, դա արդեն ձանձրալի է դառնում: Բոլորը գիտեն, որ դուք այդտեղ հանդիպում եք, շուտ պիտի գաք:

- Սպասիր, այնպես չանես, որ ժողովուրդը ցրվի: Վաղը, ժամը տասին Առաջինը մեզ ընդունելու է, ետ ենք գալու:

Այս ամենը ռուսերեն ենք ասում. Իգորը ռուսերեն էր խոսում: Հաջորդ օրը, ժամը տասին, մտնում ենք առանձնասենյակը: Սկզբում Սիլվան է մտնում: Գորբաչովը սեղանի ետնից դուրս է գալիս, մոտենում է ես տեսա, որ նրա մոտ՝ ձախ կողմում, նստած են Շահնազարովը և Յակովլևը: Զգացի, որ մենք էլ աջ կողմում պետք է նստենք: Շուրջբոլորս ուշադիր նայում էի, «կոմպյուտերս» աշխատում էր: Սա Սիլվային ասում է. «Ես և Ռաիսա Մաքսիմովնան, երբ ուսանողներ էինք, ձեր բանաստեղծություններն էինք անգիր անում...»: Եվ Սիլվայի ուսի վրայից նայում է ինձ՝ շատ չար հայացքով: Ես ձեռքս մեկնեցի: Սիլվան մի քիչ առաջ գնաց, նա ինձ ձեռք տվեց և ռուսերեն ասաց. «Այ, սա նույն Զորի Բալայանն է, որին այս գիշեր, ժամը երկուսին, զանգել է Իգոր Մուրադյանը, և նա Իգոր Մուրադյանին ասել է, որ սպասի, ժողովուրդը թող չցրվի...»: Նա այդպես ասում է ինձ, ես շշմած լսում եմ նրան: Ասացի. «Михаил Сергеич, я очень рад, что силой своей великой державы все под контролем, что у нас такое мощное государство. Вам все правильно передали, но суть не правильно сказали, это совсем о другом было»: Բնականաբար, ամեն ինչ չի ասվելու: Բայց պիտի ասեմ, որ իննսուն տոկոսը նա է խոսել: Այդ մարդը չի կարողանում լսել: Ես շատ խոսել եմ Նախիջևանի մասին: Ինձ շատ ձեռնտու էր, որպեսզի լայնացնեմ, ֆոն ստեղծեմ, օրինաչափություն լինի, հասկացնեմ, որ միայն Ղարաբաղով չի լինի: Նայում ես Ղարաբաղի տարածքի սահմանները, որ ամեն պահի փոխվել են, Ղարաբաղը կղզի էր դարձել:

Բ.Կ.- *Դա ընդհանուր հայկական հարցի մեջ է:*

Զ.Բ.- Երբ երկու օր հետո Քաղբյուրոյում Սումգայիթի մասին խոսում էր, այդտեղ նա բառացիորեն կրկնեց այն, ինչ ես նրան ասել եմ Նախիջևանի մասին: Նիստի ժամանակ ասաց. «Վերջիվերջո պետք է սրան վերջ տանք: Վերցրել են ամբողջ հանրապետությունը՝ հինգ հազար հինգ հարյուր քառակուսի կիլոմետրը, անձնագրային ռեժիմի տակ են դրել: Եվ մարդիկ գնում են սովորելու, չեն կարողանում վերադառնալ առանց անձնագրի, կնիքի, առանց ոստիկանություն մտնելու չեն կարողանում հարազատներին հողին հանձնեն: Եվ ոչնչացնում են հայկական ամեն ինչ,- այն ժամանակ է ասել՝ 1988 թվականի փետրվարի 20-ին,

ասում էր. «Նախիջևանի գերեզմանաբարերը ոչնչացնում են, ինչը ազդում է նրանց ազգային զգացմունքների վրա»: Այն ժամանակ է ասել այդ ամենը, և լսում էին: Պատկերացրեք, եթե այդ բառերը հետո մենք ենթադրեինք... Այն ժամանակ հինգ հազար հարցեր են եղել: Եթե Ղարաբաղի հարցի հետ Նախիջևանի խնդիրը բարձրացնեինք և համառորեն տանեինք, հազար ու մի բան կարող էր լինել: Սիլվան շատ ուժեղ թեմա պահեց: Ասաց. «Դուք ոնց եք ուզում, որ մենք գնանք կանգնեցնենք, հրդեհ է սկսվել, իսկ դուք, կարող է, մի դույլ ջուր էլ չտաք, մի բան լսենք»: Նա էլ իր էշն էր քշում. «Քաղբյուրոն գրաղվում է, քարտուղարությունը հատուկ հանձնաժողով է ստեղծելու...»: Ասում եմ. «Լենինի ասացվածքը դուք, հավանաբար, շատ լավ գիտեք»: Ասաց. «Շատ լավ գիտեմ՝ ինչ ես ուզում ասել: Լենինն ասել է. «Եթե ուզում եք գործը տապալվի, ստեղծեք կոմիսիա»: Մենք այդպես չենք անում, սա սովորական կոմիսիա չէ»:

Բ.Կ.- *Նա խնդրեց, որ դուք կանգնեցնեք հանրահավաքները, այդպիսի բան եղել է:*

Զ.Բ.- Չէ, նա ամենակեղտոտ բանն ասաց: Փաստորեն, նա շանտաժի դիմեց: Զգացել էր, որ սա կանգնեցնել չի լինի: Եվ ահա 1988 թվականի փետրվարի 29-ի Քաղբյուրոյի նիստում Գորբաչովը, դիմելով Վիկտոր Միխայլովիչ Չեբրիկովին՝ ՊԱԿ-ի նախագահին, հարցնում է. «Что ты там делал с пограничной полосой, Виктор Михайлович, он мне сказал, что в Нахичеване проходит граница, у пограничников есть своя полоса пограничной зоны, и глубина ее определяют местные органы, в данном случии республиканский»: «Եվ ինչ որոշում է կայացրել», - հարցնում եմ ես: Չեբրիկովը պատասխանում է. «Ամբողջ Նախիջևանը ընդգրկվել է սահմանային գոտու մեջ, ազատ մուտքն այնտեղ արգելված է»: «Այնտեղ են գտնվում նրանց գերեզմանները, այնտեղ կար 90 կոթողային հուշարձաններ, որոնցից մեկն է փրկվել միայն, և ոչ ոքի չեն թողնում այնտեղ մուտք գործել, թե իբր սահմանային գոտի է» ,- այդ ամենը Գորբաչովն է ասում:

Ես արդեն մտածել եմ՝ ոնց պիտի մենք սա օգտագործենք: Եվ մի դրվագ էլ, որը ոչ մեկը, չգիտեմ ինչու, չի հիշում: Այդ օրերին արդեն զեկուցել էին՝ ինչ է կատարվում Սումգայիթում: Սկզբում ՊՆ նախարարն է նրան պատմել, թե ինչ է տեղի ունեցել Սումգայիթում մեկ օր առաջ, նույնիսկ՝ նույն օրը:

- Պատմիր, Դմիտրի Տիմոֆեյիչ (ՊՆ նախարար Յազովի մասին խոսքը), ինչպես են սպանում, - հարցնում է Գորբաչովը:

Սա ֆոնոգրամա է:

- Մերկ կանանց կրծքերը կտրել են, - ասում է Յազովը, - մեկի գլուխն են կտրել: Իսկ աղջիկներին մաշկազերծել են: Ահա այդպիսի վայրենություն: Որոշ կուրսանտներ, տեսնելով, ուշաթափվել են:

Սա մոռացված է: Գորբաչովի հետ հանդիպումը շատ կարևոր էր ինձ համար, որ նա կնիքը դրեց, հատկապես՝ իր պահվածքով, որ այդպիսի բան է, ասում Քաղբյուրոյում, ինչը շատ գաղտնի է եղել: Դա հետո տպագրվեց Խորհրդային Միության անկումից հետո: Բացեցին, և ես տպագրել եմ ամբողջ տեքստը: Նա Սումգայիթին չտվեց ոչ քաղաքական, ոչ իրավական գնահատական, նույնիսկ ցավակցություն չհայտնեց: Արդեն հայտնի էր՝ ինչ է իրենից ներկայացնում Գորբաչովը՝ որպես մարդ: Հույսը դնել նրա վրա... Արդեն փոխվեց և՛ մեր, և՛ ամբողջ ժողովրդի մտածելակերպը:

Բ.Կ.- *Զորի Հայկովիչ, դուք ասաք, ճիշտն ասած, կանգնեցրիք հանրահավաքները: Դուք կարծում եք ճիշտ էր դա, թե սխալ:*

Զ.Բ.- Ես համոզված եմ եղել, որ Իգորը ճիշտ է եղել, որ ասել էր. «Անհնար է արդեն պահել ժողովրդին», որովհետև, փաստորեն, արդեն ասելիք չունեն, գործ էր պետք: Եթե չկանգնեցնեինք, կդառնար շիլա:

Բ.Կ.- *Իգորը ասելիք չունի, դա իր անձնական գործն է: Սումգայիթը եղավ, եթե ժողովուրդը մնար, այդպես մեկ միլիոն մարդ կհավաքվեր...*

Զ.Բ.- Պատմությունը չի ընդունում այդպիսի «եթե»-ները: Ստացվել է այնպես, ինչպես եղել է, և դա բերել է հաղթանակի: Հիմա ես մի դրվագ կպատմեմ: Երբ ես եկել եմ Մոսկվայից, ինձ տուն չեն տարել, այլ ՊԱԿ են տարել: Մինչ այդ ես և Միվան ելույթ ենք ունեցել հեռուստատեսությամբ: Իմ ելույթը ցույց չեն տվել հեռուստատեսությամբ: ՊԱԿ ասելով՝ ես պիտի ասեմ, որ այնտեղ ոչ թե Մարիուս Արամիչ Յուզբաշյանն է եղել, այլ՝ Խորհրդային Միության ՊԱԿ-ի նախագահի տեղակալ, գեներալ գնդապետ Ագեևը: Նա պատմեց, թե ինչ կարող է լինել: Ես իմացա, որ սա նրանց սադրանքն է լինելու: Ասաց, որ այնտեղ ադրբեջանցիներ կան, և պրովոկացիա է լինելու: Ես էլ լսում եմ. «Ինչու են այդպիսի բաներ ասում ինձ, որեմն իրենք են ուզում պրովոկացիա անել»: Նա կարող էր վերցնել մի նռնակ, նետել գլխից վեր՝ մոտ քսան մետր

այն կողմ, որ իրենից հեռու լինի, որտեղ, ըստ մեր տվյալների, խիտ կենտրոնած էր ժողովուրդը, և այդտեղ կսպանվեր մոտ 30-40 մարդ, էլ չեմ ասում վիրավորների թիվը: Դա մտածված էր, սարսափելի բան էր, սխալավոր էր: Բայց այստեղ մի ուրիշ բան էլ կար. շարժումը լրիվ կտապալվեր. զորքը պատրաստ էր դրան: Այնտեղից գալիս եմ, արդեն սիրտս թփթփում է՝ այս ինչ են ասում, այս ինչ սարսափելի բան է: Կանգնած էր գեներալ լեյտենանտ, մեր ՆԳ նախարար Հայկազ Սրապիոնիչ Շահինյանը՝ боевой офицер, фронтавик: Երևին գույն չկար՝ սպիտակ, սրան գույն էր: Հարցնում եմ. «Ի՞նչ է պատահել»: Կողքին կանգնած էր մի հսկա մարդ՝ ռուս էր, քաղաքացիական հագած: Պահվածքը սարսափելի էր: Ծանոթացնում է. «Խորհրդային Միության ՆԳ նախարարի առաջին տեղակալ»:

Բ.Կ.- *Այդ մարդուն փետրվարի 27-ին մենք միասին առաջին անգամ ստրուդիայում հանդիպեցինք, երևի մինչ այդ դեպքը:*

Զ.Բ.- Ես Օպերայի հարթակի մոտ եմ հանդիպել, մինչև ամբիոն բարձրանալը:

Բ.Կ.- *Որեմն մոռացել եք, ստրուդիայում միասին էինք: Ամսի 27-ին ես Ղարաբաղից ուղիղ եկա ստրուդիա, այդ մարդը՝ Տրուշինը, այնտեղ էր: Այդ մասին ես գրել եմ իմ «...Եվ նրա շուրջը» գրքում: Նա ասում էր, որ իրը Ակերանում իրար հանդիպել են 15 հազարական հայ և ադրբեջանցի ու մեծ ջարդ է եղել: Ես նրան ասացի, որ սուտ է ասում, որ սխալ նկարահանել եմ ամենը...*

Զ.Բ.- Նա Շահինյանին ասում է. «У нас нет другого выхода, только силой и только боевым...»: Չեմ հասկանում ինչ է ասում: Սարսափելի էր, ամբոխը կանգնած... Հազիվ եմ մտել այդտեղ: Եվ շատ լկտի էր, աչքերը... ամեն ինչն էր լկտի: Շահինյանն ասաց. «Только через мой труп»: Այդ հոգեվիճակով բարձրացել եմ այդտեղ, պատկերացրեք՝ ինչ եմ վերցրել ինձ վրա: Հետո թող ափեղ-ցփեղ չխոսեն, Իգոր Մուրադյանը, ոմանք ինչ մտածված, իմացել է, որ այստեղ պետք է ընդմիջում լինի հանրահավաքներում: Մարտի երկուսին ինձ, Միվային, Իգորին, ևս երկու հոգու կանչել են Դեմիրճյանի առանձնասենյակ: Այնտեղ էին ԽՍՄԿԿ Կենտկոմի բարտուղար Լուկյանովը, Քաղբյուրոյի անդամության թեկնածու, Կենտկոմի քարտուղար Պ.Դոլգիխը: Նա ասաց. «Дождались?»: Դրանով սկսեց: Մենք ոչ մի բան չգիտեինք Սումգայիթի մասին: Ու սկը-

սեց. «Սումգայիթում սպանվել են 14 հոգի մարդ, 20 բռնաբարություն, այ
րել են 200 տներ, մեքենաներ, խանութներ և այն»: Այստեղ մենք կատա-
ղեցինք: «Եվ դա ասում եք դուք՝ հզոր պետության, այսպես ասած, տեր
ու տիրականը, այդպիսի բան է տեղի ունեցել, իսկ որտեղ եք եղել դուք»:
Նա զգաց, որ մենք հարձակվում ենք: Իգորն ասաց. «Չեք հասկանում,
որ այս պարագայում միայն ու միայն մի ելք կա. Ղարաբաղի հանրաքվե-
ությունը վերցնի Ռուսաստանը, Մոսկվան, Կրեմլը: Դուք տեսնում եք, ին-
չի է տանում այդ ամեն ինչը»: Իսկ երեք օր առաջ՝ իմ ելույթից հետո, երբ
արդեն տեսնում ենք, որ պիտի ցրվեն, Իգորն ասաց. «Այսօր ամսի 26-ն
է, մենք մարտի 26-ին հավաքվում ենք»: Հիմա դա մոռանում են, նշանա-
կում է, ամեն դեպքում, պլանավորած է եղել, որ մենք հավաքվելու ենք:
Եթե չհավաքվեինք, ոչ ոք ոչինչ չէր կարող անել, չէր լինի «Ղարաբաղ»
կոմիտեն, ի նկատի ունեմ այն, որպեսզի նրանք չգան իշխանության:
Բայց երկու օր հետո Իգորի հետ մի քանի օր անընդմեջ հավաքվում ենք
Գրոդնների միությունում, Կինոյի տանը: Այսինքն՝ իրավիճակը փոխվում
է: Ամսի 2-ին իմացանք, թե Սումգայիթում ինչ սարսափելի ջարդ է տեղի
ունեցել: Ամսի 8-ին ես, Սիլվան, մյուսները հավաքվում ենք, մեր լոզունգ-
ները տանում Ծիծեռնակաբերդ: Եվ չի նշանակում, որ մենք ցրել ենք և
վերջ: Ամեն ինչ մտածված է եղել: Ես համոզված եմ, որ բացարձակա-
պես ամենաճիշտ ուղին ենք ընտրել, որը բերել է հաղթանակի:

Բ.Կ.- *Իգորին դուրս մղելը «Ղարաբաղ» կոմիտեից. ինչ եղավ և ինչ չի այդպես եղավ:*

Զ.Բ.- Ես արդեն իմացել եմ, որ այս տղաները երկնքից չեն ընկել: Իգորը դա հետո է իմացել: Հատկապես, ես իմացա, որ պանթուրքիզմի մասին ունեցած ելույթս ինչ արձագանք ունեցավ. հատուկ միտինգ են անում իմ դեմ այդ ուղղության՝ պանթուրքիզմի հետ կապված, երկրորդը՝ Նախիջևանի դեմ, ինչ որ մենք բարձրացրել էինք: Եվ իմացել են, որ հնարավորությունը նկել է, փլուզվելու է երկիրը, խելոք էին և պետք է հասնեին իրենց նպատակին: Մեզանից ոչ մեկի մտքով չի էլ անցել, որ պիտի գան իշխանության՝ ոչ իմ, ոչ Իգորի, ոչ Բագրատ Ուլուբաբյանի: Եվ խանգարողը Իգորն էր, որը ամենապոպուլյարն էր՝ որպես անհատ քաղաքական գործիչ: Նրան իրենց կողքին պահելով՝ կվարկաբեկվեին: Իգորն էլ այդ հնարավորությունը տալիս էր. օրինակ, զենք վերցնելու կոչ էր անում, ինչը շատ կարևոր էր, ինչ-որ մեկը պետք է այդպիսի բաներ

ասեր: Այրում էր աղրբեջանական դրոշը, ռմնատակ էր անում, թափում էր և ամբիոնում էր անում այդպիսի բաներ: Եվ նրանք գնացին ամենակեղտոտ քայլին, ի դեպ, նրանք, ովքեր շողոքորթում էին նրան: Շարժումը, որը բերել է հաղթանակի, պետք չէ, որ մենք սկսենք մեկին բարձրացնել, մյուսին իջեցնել:

Բ.Կ.- *Սրանք ուղղակի պատմության դասեր են:*

Զ.Բ.- Բայց պետք է զգույշ լինել: Լևոն Տեր-Պետրոսյանին ես համարում եմ մեր ամենասարսափելի հակառակորդը: Այն, ինչ արել է, հետո՝ ինչ որ արեց Դաշնակցության դեմ, Շահումյանը և Մարտակերտը հանձնեցինք: Հաղթող բանակի արշավը գնում էր դեպի հյուսիս, և բոլոր այդ գյուղերը դատարկ էին, չթողեց, որ առաջ գնան, ինչի մասին հուզմունքով է խոսում Սամվել Բաբայանը:

Մինչև Մոսկվան... Այդ տարին վերջացրել ենք երկրաշարժով: Ամբողջ ամառը մեծ աշխատանքներ ենք տարել, որպեսզի ներքաշենք ոնոններ: Ես շատ լավ իմացել եմ, որ սևիական ափսեում տապակվելով՝ ոչ մի բան չի ստացվելու: Եվ, հատկապես, իմանալով ռուս մտավորականության և Սախարովի դիրքերը՝ ամեն ինչ արեցինք, որ Սախարովի դեկտեմբերին, երկրաշարժից երկու շաբաթ անց նախ գնաց Բաքու: Դա էլ ենք Յակովլևի և Գալինա Ստարովոյտովայի միջոցով արել: Եվ Յակովլևի առաջարկությամբ Սախարովն իր խմբով գնաց Ադրբեջան, ոնտեղից էլ՝ այստեղ: Պլանավորած չի եղել, որ այստեղից էլ պիտի գնան Ղարաբաղ: Ես անընդհատ կապի մեջ եմ եղել Ելենա Գեորգիևայի հետ: Մենք պայմանավորվեցինք և Սախարովի, Ստարավոյտովայի ու երեք էթնոգրաֆների հետ, Յուրի Ռոատը «Литературная газета»-ից, գնացինք Ղարաբաղ: Ջանգեցի Վոլսկուն, ասացի, որ մենք գալիս ենք, պայմանավորվել էի, որ մեզ ընդունի, Մոսկվան թույլ է տվել: Հետո նրանք այդտեղից գնացին Շուշի: Անշուշտ, ես և Ստարովոյտովան ուզում էինք գնալ նրանց հետ, սակայն Վոլսկին չթողեց՝ իմանալով, թե ինչ կարող է լինել: Եկան Շուշիից: Սախարովն իմացավ, որ սա սովորական բան չէ: Երբ այնտեղ է եղել, պատմել են, որ տասներկու տարեկան մի հայ երեխայի սպանել են նրա հասակակիցները: Հիվանդանոցում՝ նրրորդ հարկում, արդեն շարժումն սկսված, թուրք երեխան էլեկտրական հասանքով խփում է հայ երեխային, և նա գցել է իրեն պատուհանից, գոհվել է: Երբ Սախարովը եկավ, ասաց. «Я еще не знаю, кто жертва

больше - мальчик, который бросился в окно, или те, которые это сде-
лали»: Դա ինձ համար դարձավ բանաձև, որ մենք, ամեն դեպքում,
պետք է, լինենք Շուշիում, որպեսզի այդ հայաբերություններում զոհ
չդառնանք:

Հետո նույն օրը Սախարովի հետ վայրէջք կատարեցինք աղետի գո-
տում: Այնտեղ շատ հետաքրքիր դեպքեր են տեղի ունեցել: Հետո, երբ
սկսվեց համագումարը, մենք պատգամավորներ էինք՝ Սախարովը,
Աֆանասևը, Սոբչակը... Հետո մենք օգտագործեցինք Ռուսաստանի
գլխավոր միության ամենադեմոկրատական թևը՝ Նույկինը, Չերնիչենկոն, Օսկոցկին, Գայդարը և այլն: Եվ այդ բոլորը մեզ համար դարձան
գինակիցներ, բարեկամներ: Ի՞նչ հոդվածներ էին տպագրում «Известия» ում, «Московские новости»-ում: Հատկապես, երբ Նույկինը դարձավ
Դումայի պատգամավոր, ինչքան օգտագործեցինք այդ հանգամանքը:
Ինչքան հոյակապ գործեր տարանք, պատերազմի ժամանակ ինչքան
մարդիկ այցի եկան Ղարաբաղ: Ուզում եմ ասել, որ ամեն ինչ արել ենք,
որպեսզի մենակ չմնանք, որովհետև շատ դժվար է եղել հատկապես
Պոլյանիչկոյի և Սաֆոնովի՝ այս երկու չար երևույթների ժամանակ, ովքեր փոքր, շքանշանը, մեքենան՝ որպես նվեր, ոսկին ստանում էին Բաքվից, և դա կոչվում էր «խաղաղարար ուժ»: Առաջ ընկնենք, այսօր խոսում ենք խաղաղարար ուժերից, այդ «դասը» մենք արդեն անցել ենք,
վեց հազարանոց զորքը մեր տունը քանդում էր: Եթե անկում չապրեր
Խորհրդային Միությունը, ես պատկերացնում եմ, թե ինչ կլիներ մեր վիճակը: Այ, այստեղ պետք է ասենք՝ եթե..., սա է կարևորը՝ այս «եթե»-ն,
եթե մենք ընդհատակում չմնայինք, այդ պայքարը չտանեինք, որովհետև հաղթանակը մենք այնտեղ ենք տարել: Եթե մենք հանձնվեինք, եթե
մենք չսկսեինք, եթե այս անկումը լիներ, և մենք ոչինչ չանեինք, ես պատկերացնում եմ՝ կիրականանար այն քարտեզը, որ մենք ցույց ենք տվել
Գորբաչովին, և նա զզվելով նայեց այդ քարտեզին, ասաց. «Бред какой-
то»: Ասացի. «Бредовые идеи очень часто претворяются в жизни. Бредовые идеи у Гитлера тоже были. Не обратили внимание, и потеряли 60 милионов. Это произойдет, это, к стати, произашло. Сегодня вся Средняя Азия - это зеленый цвет, Азербайджан - это зеленый цвет, а что касается Поволжье, где тоже зеленый цвет был, смотри, сейчас что творится в Чечне»:

Եվ ուզում եմ ասել, որ շարժումը քո աշխատանքում պետք է երևա՝

որպես փրկարար, որպես նոր Ավարայր: Մենք ճիշտ ենք անում, որ
ասում ենք. «Դա XX-XXI դարի Ավարայրն էր»: Դա շատ կարևոր է: Եվ
այն աշխատանքը, որ դու տանում ես, ես կարծում եմ, որ դու Ստարարոնի
տեսակ մեկն ես լինելու: Հարյուր տարի հետո հենվելու են քեզ վրա, որովհետև քո արածը հայրենապատում է. Слово современников всегда является документом:

Սկսվեց համագումարը: Ես մի շատ կարևոր միտք ասեմ: 1989 թվական, մայիսի 25, Կրեմլի Համագումարների դահլիճ: Առաջին պահն սկսվեց ըստ Խորհրդային Միությունում ստեղծված ռճի՝ հիմնով, առաջին խոսքը ասում է նախագահը, հետո ընտրում են նախագահություն,
որ յուրաքանչյուր հանրապետությունից մեկը լինի: Մեզանից եղել է
Վիկտոր Համբարձումյանը: Հանկարծ մեկը, չգիտեմ ով էր, իմ գրքերում
գրել եմ, առաջինը խոսք է ուզում: Բարձրանում է ամբիոն և խոսում է
Թբիլիսի մասին, այն, ինչ եղել է մեկ ամիս առաջ՝ 1989 թվականի ապրիլի 9-ին: Ստեղծել ենք հանձնաժողով և հոտնկայս հարգել Թբիլիսի զոհերի հիշատակը: Անհասկանալի էր, բայց բոլորս ոտքի ենք կանգնում, այդ թվում և նախագահությունը: Որոշ ժամանակ հետո Իգիթյանը,
ուիտի ասեմ, որ նա այդ առումով շատ մեծ գործ է արել, ոմանց դուր է
գալիս, դուր չի գալիս, դա չէ կարևորը: Ինձ համար ամենասարսափելին
ոչ մի բան չանելն է: Բարձրանում է, ամբիոն և նույն բանն է ասում՝ Սումգայիթ: Հենց այդտեղ արդեն երևաց. Թբիլիսի հետ կապված ոչ ոք չբողոքեց, Սումգայիթի հետ կապված՝ Ադրբեջանի կոմպակտ խումբը ոտքի
է կանգնում, գոռում, լաչառություն անում: Երկու-երեք ելույթից հետո
բնդմիջում էր: Մոտ չորս ժամ հետո գալիս եմ նյութանոց: Նոր էին
սիրտս վիրահատել, մեկ ամիս էլ չէր անցել, հազիվ էի քայլում: Վաչիկ
Երիզոբյանին ասացի. «Վաչիկ, այս երկիրը անկում է ապրելու, շատ
շուտ, և սկիզբը արդեն դրված է այսօր: Շատ մոտակայում համագումարներից մեկը կնքելու է և վերջ է տալու»: Հինգ օրից համագումարը՝
1991 թվականի սեպտեմբերի 4-ին, 5-ին, 6-ին, փաստորեն, վերջ դրեց:
Եվ այդտեղ շատ մեծ գործ տարան Հայաստանի և Ղարաբաղի երկու
պատվիրակությունները: Մեր հնգյակը այդ աշխատանքն այնտեղ տարել է: Ես տեսա, թե ինչ բան է, երբ թեկուզ մի պստիկ դեմոկրատիա կա:
Երբ դու հնարավորություն ես ունենում ելույթ ունենալ, արգումենտով
խոսում ես, և ֆոնն էլ ես պատրաստում: Միշտ մինչև ելույթ ունենալը

Սոչչակն էր ինձ մոտ լինում, Ստարովոյտովան, բոլորը գալիս էին: Հատկապես հացադուլից հետո բոլորին հավաքում էինք և ասում, որ այս թեմայով կույսը ենք ունենալու, պետք է մեզ աջակցեք, համապատասխան խոսք ասեք:

Ռ.Կ.- *Գորբաչովի դերը որոշ դեպքում մեծ էր մեր այս ընթացքում:*

Զ.Բ.- Օբյեկտիվորեն, անշուշտ, եթե Գորբաչովը չլինեք, ԽՍՀՄ-ը կմնար, կգնար Չինաստանի ճանապարհով, բայց, եթե լինենք շատ օբյեկտիվ, Հայաստանը չէր լինի: Չէր լինի այն առումով, որ այստեղ կլինեին հինգ հարյուր հազար, եթե ոչ մեկ միլիոն թուրք: Ամասիայի շրջանը կլիներ, որտեղ 90 տոկոսը թուրքեր էին ապրում: Ամասիայի շրջանը Թուրքիայի հետ սահման ունի, որը բնական սահման չէ: Բնական ասելով՝ ի նկատի ունեմ ռելիեֆի առումով՝ ոչ գետ կա, ոչ սար կա, ոչ ձոր կա: Այդտեղ ընդամենը ֆուտբոլային դաշտ է՝ փշալարերով անցկացրած, որ մկրատով կարելի է կտրել: Ստալինգրադի անկումից հետո, անշուշտ, արդեն Թուրքիան մտնում է պատերազմի մեջ, ինչը նշանակում է՝ մտնում է Հայաստանի մեջ: Պատկերացրեք, ինչ կլիներ մեր վիճակը: Այդտեղ թուրքերը բաժան-բաժան են արել: Սրանք հեքիաթներ չեն, այդ ամենը հայտնի նյութեր են: Ես պատկերացնում եմ, թե ինչով մենք կզբաղվեինք այստեղ, նրանով, ինչ կատարվում է այսօր Պաղեստինում և Իսրայելում: Բայց Իսրայելը, վերջիվերջո, ունի մի ժողովուրդ, որը պահում է իրեն, և նա բարգավաճում է նույնիսկ այդ վիճակում: Իսկ մենք կլինեինք սարսափելի վիճակում: Սահմանամերձ գյուղերում ոչ մեկը չէր լինի, Զանգեզուրը, Մեղրին չէին լինի: Կլիներ այն դեղին կետը, որը նրանք ցույց են տվել՝ Երևանը, որտեղ կլինեին թուրքերի բաղնիքները, հայերն էլ կոպտարկեին նրանց, ինչպես եղել է մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը: Սա է, եկեք ազնիվ լիենք և մտածենք «եթե»-ների մասին, միգուցե չմտածենք, որովհետև հաղթել ենք, և «դատապարտված» ենք եղել հաղթանակի:

Հիմա արդեն պատերազմի մասին ենք խոսում: Ես համոզված եմ, որ պետք է միշտ նկատի ունենանք, որ պատերազմն սկսվել է հանրահայտ որոշման երկրորդ օրը՝ փետրվարի 20-ից: Փետրվարի 21-ին Ադրբեջանը հրաման է տվել, որպեսզի Աղդամից սկսեն հարձակումը: Քանչորս ժամվա ընթացքում հավաքվել են մոտ տասնհինգ հազար մարդ, և ամսի 22-ին արդեն սկսվեց այդ արշավը՝ բացարձակապես հաստատված, որ «սրբելով» գալու են վերցնեն Ակերանը, ջարդուփշուր են անելու, ոչնչացնելու են Նորագյուղը, և Խոջալուից ավելացնելով էլ մի հազար մարդ՝ այդտեղից էլ գալու են Ստեփանակերտ, ոչնչացնեն, ջարդուփշուր անեն միտինգավորներին: Այ, այդպես համոզված են եղել: Սակայն ընկնելով ասեմ, որ հետո է փոխվել ադրբեջանցիների մենթալիտետը, որովհետև նրանք դեռ դպրոցից գիտեին, որ հայերը, ինչպես իրենք են ասում՝ խաշած հավ են: Պճղում են, ուտում, ու նրանք ծպտուն չեն հանում: Սրանում նրանք համոզված են եղել: Բայց արդեն ամսի 22-ին, երբ 48 ժամ հետո մարգխորհրդի հանրահայտ որոշումը կայացրել են Ստեփանակերտում, հակահարված ստացան բուն Ակերանում՝ կորցրեցնելով մեկ մետր էլ առաջ անցնել: Հետո պլովոկացիա արեցին, իրենք երկու հոգու սպանեցին և աղմուկ բարձրացրին աշխարհով մեկ: Հանրահայտ Կատուսև կար, որը եղել է գլխավոր դատավորի տեղակալը: Նա Բաքվում հայտարարեց, որ երկու ադրբեջանցիների սպանել են հայերը: Այդտեղից սկսվեց նրանց վայնասունը աշխարհով մեկ: Նրանք սկսեցին պատրաստվել Սումգայիթին: Ուզում եմ ասել, որ պատերազմը սկսվել էր էն գլխից: Եվ ինչն է կարևոր ինձ համար: Սկզբում եղել է բարև պատերազմ. երեխաները բարով էին խփում, և, անշուշտ, դա սովորեցնում էին հենց մեծերը: Հետո սկսեցին բերդանկաներով՝ խրթնաշեն թվանքներով: Հետո անցան ավտոմատների: Եվ տեսան, որ ստոպտոիժ անցնում է ամեն ինչ: Եթե Խորհրդային Միությունը ուզեր, էն գիսից կարող էր ամեն ինչ կանգնեցնել: Բայց բոլորը տեսնում էին, որ ամեն ինչ անպատիժ է մնում:

Ռ.Կ.- *Արդեն դուք զգացիք, որ Գորբաչովը դա չի կանգնեցնելու:*

Զ.Բ.- Նույնիսկ՝ մինչև Սումգայիթը:

Ռ.Կ.- *Իսկ զգացիք, նա կառավարում է երկիրը, թե չէ:*

Զ.Բ.- Երբ ես աշխատում էի «Литературная газета»-ում և շատ ասիրներ էինք ստանում, որոնք սովորական մահկանացուները, եթե կարելի է այսպես ասել, չգիտեին: Մենք զգացինք, որ սա անտեր է դառնում:

Ռ.Կ.- *Գիտեք ինչու եմ այս հարցը տալիս. երբ հանդիպեցի Վասիլի Պետրովին, նա պատմեց. «Ես եղել եմ Գորբաչովի հետ, մի քանի ժամ խոսել եմ և եկա այն եզրակացության, որ ինքը չի կառավարում երկիրը, այլ խմբեր կան, որոնց մասին ինքը գաղափար չունի»:*

Ջ.Բ.- Դե, որովհետև ինքը չի ընտրվել: Վերջիվերջո, նրան ընտրեց Մարգարետ Թեթչերը՝ Արևմուտքը: Նրանք պատրաստում էին: Հետևեցին նրան, որպեսզի Գորբաչովը փոփոխություն մտցնի արդեն 1988 թվականի նոյեմբեր ամսին: Գորբաչովը փոփոխություններ մտցրեց Սահմանադրության մեջ՝ կապված ընտրությունների հետ: Այդ փոփոխությունների շնորհիվ ես պատգամավոր դարձա, առանց դրա ես չէի կարող Ադրբեջանում պատգամավոր դառնալ: Արևմուտքը գիտեր, որ այդտեղից է սկսելու անկումը: Գորբաչովը նոմինալ ղեկավար չէր: Բեֆ էր ամեն ինչը, իներցիայով էր գնում: Նրա խոսքը արդեն չէր անցնում: Բանակն այդ ժամանակ սկսեց գենք վաճառել... Պատկերացնում եմ, երբ ես ծառայում էի բանակում, մի փամփուշտ կորցնեինք, ինչ կանեին քեզ: Այստեղ թուրքերը ամեն օր գնում էին արաղով կամ մի քանի կոպեկով...

Բ.Կ. *Մենք էլ էինք ձգտում գնել:*

Ջ.Բ.- Մենք էլ էինք գնում, բայց ուզում եմ ասել, պետական բան էր, բանակը պետական կառույց է:

Բ.Կ.- *Քո կարծիքով Ղարաբաղում ով էր իշխում, ով էր հսկում այդ իրավիճակին, ով էր կառավարում:*

Ջ.Բ.- Երբ պատերազմը սկսվել է, արդեն այդտեղ եղել են զորքերը, մինչև օֆիցիալ հայտարարվեց, որ պիտի գա Վոլսկին: Վոլսկին եկել է 1988 թվականի մարտ ամսին, թեկուզ նրա մասին մենք իմացել ենք և որոշում ենք ներկայացրել, բայց նա արդեն այնտեղ էր: Սաֆոնովը այնտեղ եղել է արդեն ամռանը: Ոչ ոք չգիտեր, թե ինչով են զբաղված, որովհետև նրանք Ադրբեջանին էին ենթարկվում, այդ թվում և դատախազությունը, բանակը, ոստիկանությունը: Ո՞վ գիտեր՝ ինչ է այնտեղ կատարվում: Եվ ընդհատակը արդեն այդտեղ սկսվել է: Այս ընդհատակը շատ կարևոր է: Դրա մասին բոլորը լռում են, որովհետև չգիտեն: Ճիշտ է ասել Սերժ Սարգսյանը, երբ մենք սկսել ենք զբաղվել այդ հարցով, և պետք է դա պատմությանը հանձնենք, ասաց. «Գիտեք, այնպես է ստացվել, որ Ստեփանակերտը իրենն է ունեցել, Մարտակերտը, Շահումյանը, թեկուզ ամենաուշն է սկսել, Հադրութը, Մարտունին և այլն՝ իրենցը»: Տղաները աշխատում էին: Հանդիպում էին համագործակցելու համար, բայց որոշումները տեղում էին կայացնում, որովհետև սպեցիֆիկ էր: Չես կարող կենտրոնում իմանալ, թե ինչ է այնտեղ կատարվում: Բայց գլխավոր դեմքերը այդտեղ եղել են, դա արդեն հազար անգամ ապացուցված է, Ռոբերտ Քոչարյանը և Սերժ Սարգսյանը: Եվ այն երիտասարդ տղաները՝ Սամվել Բաբայանը, Արկադի Կարապետյանը...

Բ.Կ.- *Բայց սկզբից սկսվեց «Կոմսկով»:*

Ջ.Բ.- Դա ուրիշ բան է: Դա արդեն քաղաքական բան ես ասում: Առաջին օրից «Կոմսկը» սկսեց Մանուչարովը: Այդտեղ մտան բոլոր այն տղաները, ովքեր շարժման մեջ էին, ովքեր և՛ այդտեղ էին, և՛ ընդհատակում: Սրանք էմոցիոնալ բաներ էին, որովհետև սրանք համախմբում էին մարդկանց, ինֆորմացիաներ էինք հավաքում, նյութեր էինք տպագրում, որովհետև այդ պարագայում պետք էր լուսավորություն, լուսավորչական աշխատանք:

Բ.Կ.- *Նաև՝ մտածելակերպի ձևավորում:*

Ջ.Բ.- Անշուշտ: 1988 թվականի ամռանը քանի անգամ ես, Բագրատ Ոլոբաբյանը, Միրվա Կապուտիկյանը, Մոս Սարգսյանը գնացել ենք Ղարաբաղ, ընդհատակում էլ ենք խոսել, կոլեկտիվներում էլ: Այդ բոլոր աշխատանքները տարվել են: Դա շատ կարևոր էր: Մարդիկ պիտի հավատային, որ սկսել ենք, սա երկարատև է լինելու, և մենք պետք է հաղթանակենք:

Բ.Կ.- *Ես ձգտում էի հեռուստատեսության միջոցով կամրջի դեր կատարել մեր ժողովուրդների երկու հատվածների միջև:*

Ջ.Բ.- Հատկապես քո արածը... Այն ժամանակ չէին պատկերացնում, թե ինչպիսի միջոցներով էիր դու տեսակցիկը գտնում: Այն ժամանակ դա թանկ էր, յուրաքանչյուրը չուներ, հիմա է, որ տարածված է: Ինչպես էին քեզ օգնում: Ամեն տեղ հասել ես. Կիրովաբադում նկարահանել ես, Սումգայիթը նկարահանել ես, պատերազմի ժամանակ բոլոր այդ գործերը արել ես... Դա էլ է տարեգրություն:

Բ.Կ.- *Բացի այդ, ես կապի մասին եմ ասում, որ ժողովուրդը անմիջապես պետք է տեղյակ լիներ և իրար հետ կապված լիներին:*

Ջ.Բ.- Անշուշտ, դա շատ կարևոր է: Կպարտվեինք և չէր լինի ապագա հաղթանակը, եթե չլիներ այդ ընդհատակը: Հսկա աշխատանք են տարել: Չենք թողել շունչ քաշի անգամ Պոլյանիչկոն՝ իր վեց հազար հոգանոց զորքով: Պետք է եղել՝ կամուրջն են պայթեցրել, պետք է եղել՝ մարդ են ապանել, նկատել են, որ մարդկանց բռնում են, հանձնում Շուշիում, և մենք հետևում էինք, որպեսզի տակից դուրս գանք: Սա շատ կարևոր է եղել: Դա մի պարագա է՝ կապված ընդհատակի հետ: Մենք դրա

մասին շատ նյութեր ունենք, ֆիլմ ենք նկարահանում հիմա: Եվ երկրորդը՝ անհրաժեշտությունը: Քարե պատերազմը, բերդանկայի պատերազմը, ավտոմատի պատերազմը անցավ արդեն «Այազանի»: Դա արդեն հրթիռ էր, կարկուտի դեմ էր, բայց դա օգտագործում էին: Շուշիից, Մալիբեյլուից կամ Խոջալուից խփում էին Ստեփանակերտի շենքերին: Մարդ էր սպանվում, տուն էր քանդվում: Հետո՝ դեռ Խորհրդային Միության օրոք, դեռ Գորբաչովը նստած էր առանձնասենյակում, մինչև «Պուտչը», երբ անցան «Գրադին»: Այստեղ արդեն տրամաբանությունն էր թելադրում՝ ինչ պիտի անեմ: Եթե կրակակետը չես ոչնչացնում, ինչպիսին Խոջալուն է, որ սրա մասին պիտի աշխարհին իմանա, որովհետև Խոջալուն այսօր դարձրել են զոհ, ապա դու պիտի պարտվեիր, և պիտի ասանին մեզ: Որովհետև Խոջալուն գտնվում էր մի այնպիսի ճանապարհի վրա... Հատուկ են այն ժամանակ այդտեղ այդ գյուղը հիմնել: Հայկական հինգ տուն ենք ունեցել, և այդտեղ դարձրին ռազմականացված հենակետ: Ամեն տեղ, որտեղ ճանապարհ կար, որտեղ մի տուն կար, այդ տունը դարձրել են հազար տուն, որպեսզի այդ ճանապարհը շրջափակեն: Մենք իմացել ենք, որ մինչև Խոջալուն չվերցնենք և ճանապարհը չբացենք մինչև Ասկերան, այնտեղից էլ՝ Մարտակերտ, ոչ թե մնալու էինք Ստեփանակերտում բլոկադայի մեջ, այլև՝ պաշարման մեջ: Խոջալուից հետո ծագել է մյուս տրամաբանական խնդիրը՝ Շուշին: Եվ այդ բոլորը ծրագրված էր արվում: Ասեմ, որ համատեղ են գործել և Երևանի ղեկավարությունը՝ սկսած նախագահից: Ես չեմ ուզում քաղաքական նրանգներ մտցնել՝ մեր հակասությունները: Վազգեն Սարգսյանը, հատկապես Ռոբերտ Քոչարյանը և Սերժ Սարգսյանը իրար հետ կապի մեջ են եղել: Փաստորեն, նրանք ՀՀՇ-ական են եղել այդ առումով: Ինչքան էլ ուզում են ասեն, որ ՀՀՇ-ի անդամ չեն եղել, դա ինձ համար նշանակություն չունի: Նրանք այնքան սթափ են եղել և հասկացել են, որ այստեղ ընտրված է, նախագահն է Լևոն Տեր-Պետրոսյանը: Կամ համատեղ պետք է անեին, կամ ինքնավարություն կլինեի: Այդ աշխատանքը միասին էին տանում, ընդհուպ ընդհատակի հետ: Քանի անգամ մենք Վազգենի հետ ռազմական ուղղաթիռով գնացել ենք և ընդհատակի հետ Ստեփանակերտում հանդիպել, որ մտածենք, թե որը պիտի լինի հաջորդ քայլը:

Բ.Կ.- *Եղել է դեպք, որ դուք սրիպված լինեիք երկու կողմերին հաշտեցնել, ի մի բերել:*

Զ.Բ.- Երբ առաջին անգամ մենք թռել ենք Ստեփանակերտ ռազմական ինքնաթիռով, գնացել էինք հաշտեցնելու համար: Այնտեղ արդեն իրարանցում էր: Խնդիր կար ընդհատակի լիդերների հետ կապված: Ասիս բուն իմաստով ընդհատակում՝ մի սենյակում, մենք հանդիպել ենք: Հավաքել, կանչել ենք բոլոր կողմերին, Շահումյանից էլ Մեղրյանն էր եկել, և հաշտեցրել ենք:

Բ.Կ.- *Զգացվում էր, որ Շահումյանը չէր ենթարկվում Ստեփանակերտին, կուսակցական գործոնն էլ էր գործում: Ես համոզված եմ, որ դրա գոհն էր Շահումյանի, Մարտակերտի խնդիրը:*

Զ.Բ.- Ես համաձայն չեմ դրա հետ: Կուսակցությունը չէր կարող խանգարել: Մեղավորը Լևոնն էր և իր շրջապատը: Մենք անպայման պիտի դա նկատի ունենայինք: Ես դեմ եմ եղել, որ Շահումյանն ամբողջությամբ լինի մեկ կուսակցության կառավարման տակ: Շրջանն արդեն կոչվում էր դաշնակցական: Բայց այստեղ մի որիշ հարց էլ կար: Շահումյանը այն ժամանակ, նույնիսկ 1990 թվականին, արդեն պիտի զինված լիներ, կամ այն ժամանակ մենք արդեն ամեն ինչ կորցրած կլինեինք: Լևոնն այն ժամանակ չի ունեցել ոչ մի ավտոմատ: Դաշնակցությունը բերել է, թիվն էլ հիշում եմ, հիմա կարելի է ասել, երեսունութ հատ ավտոմատ: Դա արդեն հերիք է եղել, որ այն երիտասարդ տղան, որը չի էլ իմացել, թե ինչ է իրենից ներկայացնում անդրանիկ կուսակցությունը, օրինակ՝ հնչակյանը, երկրորդը՝ դաշնակցությունը, երրորդը՝ ռամկավարը և այլն, իմացել է, որ ով ավտոմատ է տվել, նա էլ թելադրողն է: Ես չեմ ուզում պարզունակ դարձնել հարցը, պրիմիտիվորեն մոտենալ: Ուզում եմ ասել, որ սա նորմալ երևույթ է եղել, և մենք պիտի նորմալ մոտենայինք: Բայց պատերազմ հայտարարել մի ամբողջ կուսակցության դեմ... Նույնիսկ պատերազմի թեժ ժամանակ այդ պատերազմը՝ կապված Լևոն Տեր-Պետրոսյանի և դաշնակցության հետ, գնում էր: Դա պիտի չլիներ: Վերջիվերջո, դաշնակցությունը ինչ էր ուզում, կարող է բացի հաղթանակից որիշ մի բան և բացի նրանից, որ միայն զենքով, այդ նրը միշտ էլ մնացել է՝ որպես ամենագլխավորը:

Օրինակ, ինչու եմ ես դեմ եղել, որպեսզի նախագահ ընտրվի Արթուր Մկրտչյանը: Ես շատ էի սիրում այդ տղային: Նա իմ սանիկն էր: Բայց այստեղ մի հարց կար: Երևանում գտնվում էր անկախ Հայաստանի պետությունը, նախագահը և բոլոր ինստիտուտները: Այնտեղ պատե-

ռազմ է գնում, և սպասում ենք թեժ պատերազմի՝ իմանալով, որ մեկ է, դա լինելու է: Հանկարծ մենք ընտրում ենք մեկին, որին չի ընդունում Լևոն Տեր-Պետրոսյանը: Աչքիդ լույսն է, աչքիդ լույսը չէ՝ տվյալ դեպքում նշանակություն չունի, կա ռեալ կյանքը. չի ընդունում: Եվ ընտրում ենք՝ իմանալով, որ չի ընդունելու: Այդտեղ ես հիշում եմ Սերժ Սարգսյանին, որը պատգամավոր չէր, նա չէր կարող պատգամավոր լինել, որովհետև այն ժամանակ, երբ ընտրությունների էին պատրաստվում, նախընտրական արշավն էր, դեկտեմբեր ամիսն էր՝ ամենաթեժ ժամանակը, Սերժն էլ այդտեղ ղեկավարում էր: Եվ հիշում եմ Ժուկովին, որը եղել է վերջին պարետը: Դեկտեմբերին, երբ ոստիկանության գնդում մենք, փաստորեն, պատանդ վերցրինք, շրջապատեցինք, չէինք թողել, որ վերջին եղած զենք-զինամթերքը տանեն Աղդամ: Ես՝ որպես պատգամավոր, Մոսկվայից զանգում եմ Ժուկովին, ասում եմ. «Валентин, то что там у вас творится- то, что до меня дошло, я сегодня же поднимусь на трибуну и все это буду говорить. Дай мне нормальную информацию». Նա ասում է. «Товарищ депутат, Зори Гайкович, вы не по адресу. Ситуацией здесь владеют Серж Саркисян и Роберт Кочарян»: Մատս կծեցի: Ասում է. «Здесь все не так просто»: Այդ ժամանակ նա դեռ չէր ընտրվել և այդպիսի գործով չէր զբաղվել: Բայց նա եկավ և ելույթ ունեցավ խորհրդարանում և բացեց կյանքը, իրական իրավիճակը: Ասաց, թե ինչ կարող է մեզ սպասվել, եթե հակասություններ լինեն:

Բ.Կ.- *Ո՞ր խորհրդարանում:*

Զ.Բ. Ղարաբաղի խորհրդարանում: Առաջին օրերն էին: 1992 թվականի հունվարն էր, ցուրտ էր: Պատերազմն արդեն սկսված էր, Խոջալուն վառված և այլն: Կրակում էին: Անընդհատ 366-րդ գնդին էին կրակում: Խորհրդային զինվորներին սպանում էին՝ անպատիժ մնալով Շուշիից: Դա այդ ժամանակ է եղել: Եվ ասաց, թե ինչ է մեզ սպասվում: Եվ մենք ընտրեցինք Արթուր Մկրտչյանին: Եթե տեսնեիք, թե Մկրտչյանն ինչ վիճակում էր... Լաց էր լինում, հատկապես երբ մենք ուզեցինք գնալ կոմպրոմիսի և առաջին տեղակալ ընտրել Ռոբերտ Քոչարյանին, որ թեկուզ այդ ձևով կապ ունենայինք Երևանի հետ: Այդպես էլ չստացվեց: Կեսգիշերին հանդիպեցի Արթուրի հետ, թե ոնց պիտի անենք, ինչ պիտի անենք, որպեսզի անպայման ինքը ընտրվի: Ասաց. «Եթե չընտրվեց Ռոբերտը, ես հրաժարական եմ տալու»: Ասացի. «Եթե դու հրաժարա-

կան տաս, Լևոն Տեր-Պետրոսյանը կիմանա, որ իր պահվածքով հաղթել է»... Պահվածքն այն էր, որ առաջին օրը չի զանգել, երկրորդ օրը չի զանգել, չի շնորհավորել, հինգերորդ օրը չի զանգել: Արթուրն այնքան ազնիվ է եղել, ասաց. «Եթե նա չի ուզում ինձ հետ խոսել, ապա մենք տանուլ ենք տալու: Պատերազմ է գնում, և ամեն ինչ Երևանից է կախված»: Վերջիվերջո, մարդը մտածող է եղել: Եվ Ռոբերտին էլի չընտրեցին առաջին տեղակալ: Էշություն ենք արել: Թե ինչով դա վերջացավ, բոլորս գիտենք: Բայց, ես ինչ եմ ուզում ասել՝ պատերազմը պատերազմ է: Առաջին հերթին պետք է մարեինք Խոջալուի կրակակետը: Եվ այն վայրասունը, որ բարձրացրել են, իբր այդտեղ ցեղասպանություն է եղել, թուրքերին ինչ օրն են գցել... Այնպիսի սարսափելի թվեր են բերում՝ հինգ հազար հոգու սպանել են, այդքան երեխա է եղել, այսքան կանայք և այլն: Այդտեղ ընդամենը հազար հարյուր ընտրող է եղել:

Բ.Կ.- *Իմ զրույցներից պարզվել է, թե, իրոք, ինչ է տեղի ունեցել: Ադրբեջանական կրակակետերի կրակի տակ են ընկել, նրանք կարծել են, թե հայերն են եղել:*

Զ.Բ.- Դա ապացուցված է: Ես ուզում եմ ասել, որ թվերը բերում են... Ինձ ժողովրդական պատգամավոր են ընտրել Ասկերանի 729-րդ օկրուգից, որի մեջ մտնում է Խոջալուն: Ինձ Խոջալուն է ընտրել: Ճիշտն ասած, նրանք չեն ընտրել, նրանք ինձ ձայն չեն տվել. 1200 հոգի ջնջել են, 180 հազարը ձայն են տվել: Սա այն ժամանակ հեշտ թվաբանություն էր, պարզ էր: Այդքան են եղել նրանք, երեխաները չհաշված:

Բ.Կ.- *Ժողովուրդ չկար այնտեղ, քիչ էր:*

Զ.Բ.- Մնացել էին 400 հոգի: Երբ մենք Խոջալուն ազատագրել ենք, մարել ենք այդ կրակակետը: Նորից եղել է տրամաբանությունը՝ Շուշին պետք է ազատագրենք: Շուշիից հետո մենք իմացել ենք, որ ոչ մի բան չի ստացվելու, մինչև Լաչինը չազատագրենք, ճանապարհը չբացենք: Ամեն ինչ եղել է տրամաբանված: Այն, որ Լաչինից հետո ազատագրվել է Քելբաջարը, Քելբաջարից՝ Կուբաթլուն, Կուբաթլուից՝ Զանգելանը և այլն, 1994 թվականին վերջնականապես Ջեբրայիլն էր և Ֆիզուլին, ամեն ինչ եղել է տրամաբանված: Բացի նրանից, որ արդեն Շուշին ազատագրելուց հետո, երբ մտել ենք Աղդամ, ոչ մի թուրք այնտեղ չի եղել: Մեր տղաները այնպես են պատերազմը տարել, որ, փաստորեն, թուրքերը քիչ են զոհ տվել: Չգիտեմ, թե այդ թվերը որտեղից են վերց-

նում: Չի եղել ձեռնամարտ, չի եղել, որ մեկը մեռնի քո աչքի առջև ավտոմատից: Բայց ազատագրված և արդեն դատարկված Միրբաշիրի և Բարդայի մասին պետք է նստես, խոսես Սամվել Բարայանի հետ: Կպատմի, թե ինչպես է եղել, որ ինքը ստիպված պետք է հրաման տար, կանգնեցներ հաղթող գինվորին, երբ նա կարող էր առանց գոհի ազատագրել ամբողջ հյուսիսը, Շահումյանի շրջանը: Վերջիվերջո, վերցնել այն, ինչը կարելի էր դարձնել առևտրի առարկա: Դա ողբերգություն է մեզ համար: Այդ պատերազմում ամեն ինչ եղել է տրամաբանական: Այսօր էլ տրամաբանական է, որ մենք խոսում ենք այդ ազատագրված հողերից, որը մեր և թուրքերի համար դարձավ անվտանգության գոտի: Սա շատ կարևոր է նույնիսկ նրանց համար: Այստեղ նրանց ամբիցիայի հարցը պետք է հանվի: Եվ ամբողջ աշխարհին, նրանց, ովքեր զբաղվում են այդ հարցով, պետք է բացատրես դրա տրամաբանությունը: Ամենազլխավորը տրամաբանությունն է: Այստեղ ռազմավարական տրամաբանություն կա: Եթե հանձնես հողի մի թիզ, դա անպայման դառնալու է կրակակետ, նորից ամեն ինչ սկսվելու է:

Բ.Կ.- *Գանք Շուշիին: Դուք այնտեղ ներկա էիք, ով էր հիմնականում ղեկավարում ռազմական գործողությունները, ով էր փեր-փիրակալը:*

Զ.Բ.- Լավ կլինի, որ դա իր շրթունքներով ասի ինքը՝ Արկադի Տեր-Թադևոսյանը:

Բ.Կ.- *Խոսել եմ նրա հետ:*

Զ.Բ.- Նա պիտի ասած լինի, որ այդտեղ ղեկավարը եղել է Սերժ Սարգսյանը:

Բ.Կ.- *Չի ասել:*

Զ.Բ.- Ուրեմն, ես ցույց տամ, որտեղ ինքը դա ասում է:

Բ.Կ.- *Դուք պատմեք այն, ինչ տեսել եք:*

Զ.Բ.- Գլխավոր հրամանատարը եղել է Արկադի Տեր-Թադևոսյանը: Նա հմուտ ռազմավար է: Նա ոչ թե, այսպես ասած, գերազանց վերջացրել է ռազմական ուսումնարանը, այլ ծառայել է արտասահմանում:

Բ.Կ.- *Ծառայել է Գերմանիայում, Աֆղանստանում չի եղել:*

Զ.Բ.- Միայն Գերմանիայում չէ, ուրիշ տեղ էլ է եղել: Եվ փորձ արդեն ունեցել է նաև Մարտակերտի շրջանում:

Բ.Կ.- *Դուք գիտեք Մարտակերտում ունեցած պարտությունը:*

Զ.Բ.- Ничего страшного, դա փորձ էր, միգուցե ամենակարևոր

փորձն էր: Մարտակերտի պարտությունը եղել է Շուշիից հետո:

Բ.Կ.- *Մինչև Շուշին եղել է Խոջալուն:*

Զ.Բ.- Ոչ միայն Խոջալուն, Խոջալուում նա չի եղել գլխավորը, այլ, օրինակ՝ Տողը:

Բ.Կ.- *Խոջալուում ով էր գլխավորում:*

Զ.Բ.- Խոջալուում եղել են և՛ ընդհատակը, և՛ Սամվել Բաբայանը, և՛ Խալիբալթայանը: Որպես դասական՝ տղաներին բացատրում էր, որ որպես հարձակվող՝ մենք պետք է 40 տոկոս զոհ տանք, որի դեմ տղաները բողոքեցին: Հարցը նրանում չէ, թե ով է եղել, ինչպես են ընտրել:

Բ.Կ.- *Ինձ Շուշիի խնդրում մի բան է հետաքրքրում: Արկադի Տեր-Թադևոսյանն ասում է, որ իրենք չէին սպասում, թե կարող է գրավեին Շուշին: Ասում է, որ այդպիսի ծրագիր չի եղել, ուղղակի պիտի պաշարեին. սա էր հիմնական ծրագիրը: Վերցրել էինք և չէինք սպասում, չէինք հավատում, որ այդպես հնարավոր էր վերցնել Շուշին: Սա էր հետաքրքիր ինձ համար:*

Զ.Բ.- Քանի՞ օրով պիտի պաշարես: Ի՞նչ ուժով պիտի պաշարես, օրինակ՝ մեկ շաբաթ, երբ ամբողջ պետությունը քո դեմ էր, և այդ պետությունը ուներ խորհրդային 4-րդ բանակը: 75-րդ դիվիզիան, որը Նախիջևանում է եղել, իրենցն է եղել: Երեք էսկադրիլիա, Կասպից նավատորմից հանած բոլոր հրանոթներով խփում էին: Շուշին պիտի վերցվեր, քանի որ ուրիշ ելք չունեինք, ինչքան էլ դա լիներ անպատկերելի, անտանելի, նույնիսկ՝ անհեթեթ, որովհետև դա անմատչելի բերդ էր համարվում: Բայց ես գիշեր-ցերեկ տղաների հետ եմ եղել: Փակ նիստերը Դադամյանի ավտոբազայի շտաբում էին լինում: Այդտեղ էր քարտեզը կախած պատին, և վեճերը այդտեղ էին լինում: Սամվել Բաբայանի և Վալերի Բալայանի վեճն էլ այդտեղ է եղել: Ճիշտ կլինի, որ իրենք պատմեն, որովհետև նրբություններ կային՝ կապված չորրորդ ուղղության հետ: Չորս ուղղություններ կային՝ Քարինտակի ուղղությունն է եղել, Լիսագորի, Շուշքենդի, բուն Շուշիի մայր ճանապարհով, «26»-ի Ցուրան է եղել: Վեճը գնացել է Լիսագորի ուղղության շուրջը, թե ինչ պիտի ձիերով անցնեն, այդ ժամանակ ձյուն էր: Շատ սարսափելի վեճ է գնացել: Լավ կլինի, որ իրենք պատմեն: Վալերի Բալայանը շատ մեծ գործեր է արել, հատկապես՝ Տողում: Լինելով խորհրդարանում՝ որպես Պաշտպանության հանձնաժողովի նախագահ՝ շատ գործ է արել: Ուզում եմ ասել, որ

այդ բոլորը ղեկավարում էր, անշուշտ, Արկադի Տեր-Թադևոսյանը: Բայց Պաշտպանության խորհրդի նախագահ Սերժ Սարգսյանն էր: Նրա առանձնասենյակը եղել է գործկոմի հինգերորդ հարկում: Այդտեղ է եղել գերշտաբը, ոչ թե՝ գլխավոր, գենշտաբը, այլ՝ գերշտաբը: Այդտեղ էին գտնվում ամբողջ կապի միջոցները՝ և խորհրդային այն ծանր ռադիոսարքերից, և նոր «Ալինկոներ» էինք բերել, որը փրկեց մեզ: Վարդգես Նաջարյանը այդ «Ալինկոները» ժամանակին ուղարկել էր մեզ: Եվ այդտեղ նստած քանի օր, Սերժ Սարգսյանը՝ անթրաշ... Բոլոր զեկուցումները, բոլոր ցուցումները ստանում էին այնտեղ: Երբ մենք եղել ենք հրամանատարական կետում, որտեղից բոի վրա երևում էր Շուշին... Գիշերը գաղտնի, առանց լույսերի մայիսի 7-8-ին գնացել ենք այդտեղ Արկադի Տեր-Թադևոսյանի հետ: Այդտեղ էին Դալիբալթայանը, կապի պետ Փափազյան Աբթուրը և մյուսները: Եվ կապը անընդհատ պահել են Սերժի հետ, որովհետև նա ուներ կապը արդեն բոլոր ուղղությունների հետ: Ամենաուժեղ կապի միջոցները նրա մոտ էին: Օրինակ, եթե ուզեիր Շուշիից Մարտակերտի հետ կապվել, չէիր կարող, «Ալինկոյով» էլ չէր լինում: Իսկ նա ունեցել է: «39-69»-ով զանգում էինք, նա նրա հետ կապվում էր, հետո քեզ ինֆորմացիան տալիս էր: Նա անընդհատ կապվում էր Երևանի հետ, ուղղաթիռը պիտի գար, բերեր, տաներ, նորից բերեր, վիրավորներին տաներ: Այդ ամբողջ աշխատանքը մի բարդ պրոցես էր: Ամեն ինչ պիտի ֆիքսվեր՝ ով է գալիս, ով է գնում, ինչ է տանում, ինչ հետքերով պիտի գա, ինչն է պակաս, հատկապես վառելիքը: Չէ որ մինչև ազատագրումը ամեն ինչի սով է եղել՝ սկսած շաքարից, հացից, վերջացրած վառելիքով: Հիշենք այսպիսի խոսակցություն. «Արկադի, ինչ է պետք, որ մենք, վերջիվերջո, Շուշին վերցնենք»: Ասաց. «Ամենաքիչը պետք է 400 տոննա վառելիք՝ տանկի, գրահամեքենաների, մեծ մեքենաների համար»: Եթե ինքնաթիռը վերցնում է ընդամենը երկու տոննա, ուղղաթիռը երկուսուկես տոննա է վերցնում: Էլ չեմ ասում ինչքան «Գրադ» կայանք, կենդանի ուժ, հաց և այլն: Նա կարդում էր, ինձ ցույց էր տալիս, ամեն ինչ գրված էր, պլանավորված՝ ինչքան պիտի գնա, ինչքան գա և այլն: Զբաղվում էր հոսպիտալի հարցով: Ամսի 3-ին ձյուն եկավ, նստեց, լրիվ քանդվեց հոսպիտալը: Նորից նորը պիտի դնեինք: Դժվար էր, այն ժամանակ հնարավորությունները ուրիշ են եղել: Եվ ամեն ինչը կապում էին Սերժ Սարգսյանի հետ: Բայց Շուշիի գրավման

գործողության կենտրոնում, անշուշտ, Արկադի Տեր-Թադևոսյանն էր: Բոլոր հրամանները տալիս էր ինքը՝ հայհոյելով: Ամբողջ եթերը նրա հայհոյանքներն էին: Նրա պատասխանը տալիս էին, նա նորից հրաման տալիս էր: Կողքին կանգնած՝ քո ականջներում ամբողջ պատերազմն էր: Եթե հանկարծ մեկը մի քանի րոպե դուրս չի գալիս կապի, և նա չգիտի, թե այնտեղ ինչ է կատարվում, ափերից դուրս էր գալիս, մինչև լուր կստանար, որ հասկանա, թե ոնց պիտի վարվի, ինչ պիտի անի: Ի դեպ, Փափազյանն էր բոլոր հրամանները տալիս: Արկադին Փափազյանին էր ասում, որովհետև հրամանները հայերեն պիտի տային: Շատ հաճախ ինքն էլ էր վերցնում, ռուսերեն էր խոսում: Ամբողջը գնում էր Փափազյանի ձայնով: Պատերազմական այդ երեք օրվա ընթացքում իմ ականջներում Փափազյանի ձայնն էր: Կապվում էին նրա հետ, նա կապվում էր ռազմական ուժերով: Արկադիի ծածկանունը «17»-ն էր, Վալերի Բալայանը այդպես էլ եղել է՝ «Վալերի», Պարգև սրբազանը եղել է «Պարգև», ես եղել եմ «Կոմիսար», «44»-ը եղել է Սամվելը: Մի քանի օր, հատկապես ամսի 8-ին, իրավիճակը շատ թեժ էր, ինչ էր կատարվում բոլորիս աչքերի առջև: Հատկապես, երբ ինքնաթիռները եկան խփեցին: Առաջին անգամ կեսօրից հետո արդեն պատերազմի որակը փոխվեց: Ինչպես ասում են, մենք մեր մասը կծեցինք: «ՄԻԳ-21» էր կամ՝ «ՍՈՒ-25»: Փորձեցին Ստեփանակերտի վրա, եկան Շուշի, Շուշիին չխփեցին: Հետո գնացին Քարինտակ: Երկու ուղղաթիռներ եկան և խփեցին մեր դիրքերի վրա, այնտեղ, որտեղ գերեզմաններն են: Կեսօրից հետո այդտեղ էինք գնացել, այդտեղ էին խփել հրթիռներով: Հետո ետ գնացին Աղդամ: Այդ ժամանակ փոխվեց պատերազմի որակը, մենք հակաօդային, հակահրթիռային ոչ մի բան չունեինք:

Ամսի 9-ին՝ առավոտյան ժամը վեցին, ես, Դալիբալթայանը, շտաբի պետ Ֆելիքս Գզոզյանը Շուշի էինք մտնում: Արդեն տղաներից շատերը կային: Հասանք այնտեղ, որտեղ տանկ են խփել: Մեր աչքի առաջ են տանկը խփել: Տեսանք, թե ինչպես է գմբեթը թռնում և այդտեղից մարմինը՝ բոցի մեջ: Երեք հոգի էին, երկուսը զոհվել են, մեկը դուրս է մնացել: Ջինվորները մեզ կանգնեցրին: Բոլորը հագնված էին ֆիդայիների պես՝ «աֆղանկայով» էին, քաղաքացիական հագուստով ոչ ոք չկար: Ասացին, որ ամբողջ ճանապարհը ականապատված է: Հակատանկային ականներ էին՝ ճանապարհի վրա դրած, չէին փորել: Պետք է իջնես և

ոտքով քայլելով գնաս: Այդտեղ շատ բաներ ենք մենք տեսել: Մեր աչքի առաջ մարդ վառեցին: Հասանք, մտանք քաղաքը: Մի քանի դիակներ կային, երևում էր, թե այդտեղ ինչեր են կատարվել: Վերջիվերջո, դա նրանց գործերն էր և իրենք էլ պիտի ուտեին: Եվ գերիներ կային: Ես մի քանի հոգու հետ զրուցել եմ: Բոլոր շուշեցիները թողել, փախել են նախօրոք: Զարմացել էին, որ տղաները եկել էին դրոշով՝ Հայաստանի դրոշով, это же штрих гениальный: Ես առջևից էի գնում, մյուսները իմ ետևից էին գալիս: Ոտքով զառիթափը բարձրացանք: Լացում Լինք, երբ տեսանք, թե Սուրբ Ղազանչեցոց եկեղեցին ինչ վիճակում է: Կողքին մոտ երկու հազար հատ «Գրադ» կայանքի երեք մետրանոց արկղերն էին: Հետո մեկը բարձրացավ և դրոշը դրեց այդտեղ: Тут же мы не сдержали слезы: Նկարահանեցինք: Բայց մենք տանուլ տալու ընավորություն ունենք: Ոչ մեկի մտքով չի անցել, որ կարող է թալան սկսվեր: Ես անմիջապես զանգեցի և Սերժին, և Արկադիին: Առաջինը Արկադիին զանգեցի, ասացի. «Արկադի, մի բան ուղարկի այստեղ: Հասկանում եմ, թալանը պետք է, թող մտնեն, չես կանգնեցնելու դա: Բայց զենք-զինամթերք կա: Նկուղներում գիտես ինչեր եմ տեսնում, զենք-զինամթերքը թափած է: Մանավորը չպետք է վերցնի իր ձեռքը»: Անմիջապես Սերժն ու Արկադին կազմակերպեցին, որ գան... Ռազմական ոստիկանություն չի եղել, բայց մարդիկ, ովքեր դրանով զբաղվում էին, մեքենաներով եկել էին: Շատ բան ենք այդտեղից վերցրել: Եկանք հոսպիտալ՝ նրանց հիվանդանոցը: Նույն օրը Վալերի Մարությանը դաշտային հոսպիտալը, որը վրանի տակ էր, բերեց այդտեղ, դարձրինք իսկական հիվանդանոց: Երկու օր հետո այդտեղ սեղանի վրա զոհվեց Ավետ Գրիգորյանը: Երեք երեխատեր էր: Հիշում եմ, սեղանի վրա մնաց: Կտոր-կտոր էին արել, զուգարանից դուրս գալիս դուռը բացել են և տեղնուտեղը շրխկացրել: Այստեղ երկու գյուղերից պետք է խոսենք, որը շատ կարևոր է, դա Խնաբադ և Քարինտակ գյուղերն են: Ես դրանց անվանում էի Կրոնշտադտ: Կրոնշտադտը Պետրոս Առաջինը հատուկ է կառուցել, որպեսզի Սանկտ-Պետերբուրգը պահի: Եթե չլինեին հոնվարի 27-28-ի հերոսական պայքարը, մարտը, որ տվել են քարինտակցիները... Տասներեք զոհ ենք տվել: Եվ եթե այդտեղ հաղթանակ չտանեին, ամեն ինչ այլ ելք կունենար: Տասից ավելի տանկ, զրահամեքենաներ են այդտեղ ոչնչացրել: Հյուսիսից Խնարադը, որը, փաստորեն, դռշ է տվել Ադդամից եկող բոլոր ուժերին և այդտեղ կանգնեցրել: Ասկերանի մասին չեմ խոսում: Դրանք շատ կարևոր են: Անշուշտ, Վաղուհասը, մյուս գյուղերը իրենց գործը տարել են: Նույն պահին գնացել ենք Մարաղա, տեսել ենք վառած մարմինները, և Լեդի Քոկսը նկարահանել է: Ես այնքան մեղք ունեմ... Վերջերս լույս է տեսել Արցախի ազատագրական պատերազմի մասին հանրագիտարանը: Գաղափարը իմն է եղել, բայց դրանով ես չեմ կարողացել զբաղվել: Պետականորեն զբաղվել են Ղարաբաղի և Հայաստանի կազմակերպությունները: Եվ այնքան բաներ կան բաց թողնված: Պատկերացրեք իմ վիճակը, երբ ես, այսքան իմանալով Խնաբադ գյուղի մասին, տեսնում եմ, որ գրքում «Խնաբադ» բառն անգամ չկա: Кошмар для меня: Մոտ քսան օրինակ ունեմ, չեմ ուզում ոչ մեկին տալ: Չեմ էլ կարողացել, ուղղակի գաղափարը տվել եմ, օգնել, որ նյութերը հավաքեն: Այնպես եմ արել, որ բոլոր զոհվածների անունները վերցում լինեն: Ստուգեցինք, դրանով եմ զբաղվել: Բայց այդպես չի լինի:

Բ.Կ.- *Մենք չորս գյուղեր ունենք, որոնց կարելի է նույնիսկ հերոսի կոչում տալ:*

Զ.Բ.- Ես կարծում եմ Մաճկալաշենն էլ, Խնաբադն էլ, Ղզոլան էլ (Աղջկա բերդը)... Ասկերանն էլ, որ միշտ հարվածի տակ է եղել: Գյուղեր կան, որ դիմացել են:

Բ.Կ.- *Ղզոլայում ընտանիքներից ոչ որ չի հեռացել, երեխաները մնացել են, ու տղաները պահել են:*

Զ.Բ.- Շատ տեղերում է այդպես եղել: Մինչև պատերազմը Քարինտակում եղել են 700 հոգի մարդ, 150 հոգի մարդ է մասնակցել պատերազմի ժամանակ:

Բ.Կ.- *Ու Քարինտակը պահել են:*

Զ.Բ.- Չի կարելի նրանց մոռանալ, պետք է գնալ, նրանց ոտքերը լվանալ, ջուրը խմել: Մենք այնքան ապուշ ենք... Ախր այն, ինչ տեղի ունեցավ Մարաղայում, Լենինավանում, այդ սարսափելի դեպքը... Ի դեպ, ռուսներն այդտեղ մեղք ունեն... Այդտեղից ընդամենը մեկ կիլոմետր է մինչև Միրբաշիր: Լուր ենք ստանում, որ մտել են տանկով, զրահամեքենայով, ետևից զորքն է, ՕՄՕՆ-ականներն են, նրանց ետևից էլ՝ թալանչիները՝ էշերով: Եվ սկսել են փրթել, վառել, վիզը կտրել, դիակները վառել, նույնիսկ վիզը կտրած մարմիններն են վառել: Քոկսը այնտեղ էր: Ասացի. «Վերջ, գնում ենք այնտեղ: Ինչ էլ որ մեզ հետ պատահի, մենք

գնում ենք այնտեղ»: Առավոտյան դուրս ենք գալիս: Ամսի 11-ն էր: Երեք օրից հետո Արթուր Մկրտչյանը իրեն պիտի խփեր: Շենքի աստիճանների վրա իրար հանդիպում ենք, համբուրվում ենք: Ինչպես ասում են, երեսին գույն չկար, ինչ էր պատահել՝ չգիտեմ, երևի ընտանեկան խնդիրներ ուներ: Գնում ենք այդտեղ: Ես եմ, Քոկսն է իր խմբով՝ հինգ հոգի մարդ՝ լուսանկարող, հեռուստատեսային նկարահանող՝ ԲիԲիՍի-ից և այլն: Երեք-չորս կիլոմետրից վառած մսի և ոսկորի հոտ էր գալիս: Ծուխը մինչև հիմա աչքերիս առաջ է: Եվ ժողովուրդը այդտեղ էր, փախել, եկել էին: Ինչ լաց ու կոծ... Ամենափափուկ հողը դպրոցի բակում էր, փորել են: Ջինամթերքի արկղերում վառած, տապակած մարմնի մասեր կային: Թաղել ենք, որպեսզի հոտի վրա շները չգան: Ամեն ինչ վառել էին: Հիսուն հոգու էլ գերի էին վերցրել, որոնց մեջ երեխաներ կային: Նրանց ճակատագիրը մինչև հիմա էլ հայտնի չէ: Մի մարդ կար, որի ականջը կտրած էր, պատմում էր, թե ինչ է եղել, ոնց է եղել: Քոկսն ու նրա խումբը նկարահանում էին նրան: Աղմուկ բարձրացրինք: Հաջորդ օրը եկան Վարդգես Նաջարյանը և դոկտոր Գեյլը: Նրանց տարա, ցույց տվեցի: Ուղերձ ուղարկեցինք աշխարհով մեկ: Հետո լռեցին Մարաղայի մասին: Սակայն Լևոնի ժամանակ արգելքներ էին դրված, նա ամեն կերպ խանգարում էր մեզ: Նա ամենը արգելափակեց:

Պատմում է գեներալ լեյտենանտ ՅՈՒՐԻ ԽԱՉԱՏՈՒՐՈՎԸ (1998-2006 թթ. ՀՀ Պաշտպանության նախարարի տեղակալ, 2006-ից ՀՀ բանակի Գլխավոր շտաբի պետ), 02.11.2006 թ.

Բ.Կ.- *Ինչպես եք միացել շարժմանը:*

Յու.Խ. - Դա երկար ճանապարհ էր: Ես ծառայում էի Բելոռուսիայում որպես հրետանու բրիգադի հրամանատար: Առաջին անգամ Հայաստան եմ եկել 1990 թ., երբ Ղարաբաղում ընդհարումներ էին տեղի ունենում: Առաջարկեցի իմ հնարավորությունները, պատրաստ էի որպես շարքային ծառայել: Ինչ-որ չինովնիկների ներկայացրին, անկետաներ լրացրի Նորքի զանգվածի երաժշտական դպրոցում: Մի գնդապետ հաղորդեց.

- Պետք լինի՝ կկանչենք:

Պաշտոնատար անձանց հետ ոչ մի հանդիպում չկազմակերպեցին: Կարելի է ասել՝ բանի տեղ չդրեցին: Բայց անարդյունք չէի ուզում հեռանալ: Երեք երեխա ունեի, պետք է որոշեի, թե որտեղ եմ աշխատելու: Վազգեն Սարգսյանի մոտ մտնել չէին թողնում: Դիլետանտ, անփորձ մարդիկ էին որոշում մեր ճակատագիրը: Այն գնդապետը, որը հասարակ գյուղացու տպավորություն էր թողնում, ասացի.

- Լսիր, դու չգիտես էլ, որ ես հրետանու բրիգադի հրամանատար եմ, որի ձեռքի տակ միջուկային զենք կա:

- Հեռացիր,- ասաց նա:

Հետո 1992 թ. ապրիլին Հայաստանի կառավարությունը դիմեց հայազգի սպաներին գալ հայրենիք՝ ազգային բանակ ստեղծելու համար: Ես իսկույն եկա և ներկայացա Պաշտպանության նախարարություն: Ինձ շատ լավ ընդունեցին: Ինձ տվեցին 10 օր ժամանակ, որի ընթացքում

հանձնեցի բրիգադը ու ընտանիքիս հետ եկա Հայաստան՝ շարունակելու ծառայությունս: Ինձ նշանակեցին որպես գնդի հրամանատար: Գունդը նոր պետք է կազմավորվեր: Մի քանի սպաներ կային, մի քանի ավագներ ու 20 զինվոր: Մայիսին իրականացրինք առաջին գինակոչը, հավաքեցինք առաջին հազար զինվորը, ստեղծեցինք երկու ամբողջական գումարտակ, որոնք հունիսին պատրաստ էին ռազմական գործողություններ իրականացնել, մեկը Կապանի, մյուսը՝ Մեղրու շրջանում:

Կապանում ծանր դրություն էր ստեղծվել: Թուրքերը կրակում էին հրանոթներից, ռմբակոծում: Նրանք զինատեխնիկայի ու ռազմամթերքի զգալի գերակշռություն ունեին: Նրանք ուժով վերցրել էին խորհրդային 4-րդ բանակը, իսկ մենք սպասում էինք, թե մեզ պաշտոնապես երբ կտան Հայաստանում տեղակայված բանակի զենք-զինամթերքը: Ինձ նշանակեցին Կապան-Մեղրու ուղղության գլխավոր հրամանատար: Դա 1992-ի հուլիսն էր:

Քիչ ռազմամթերքով հրկիզեցինք Կուբաթլուի նավթի բազան, որը մեծ ռեզոնանս ունեցավ Ադրբեջանում: Նրանք արդեն հազվադեպ էին կրակում: Հիշում եմ, մենք ընդամենը 20 հատ «Ժ30» տիպի արկ ու «Գրադի» 16 հրթիռ ունեինք, բոլորն էլ միանգամից արձակեցինք ու ծածկեցինք բազան: Մենք հասկացանք, որ նշանակետին ենք խփել:

Մի ամիս Կապանում սովորեցնում էի հրետանավորներին, դասընթացներ անցկացնում, որպեսզի մարդիկ առանց ինձ կարողանան պաշտպանվել: Երբ թուրքերը շրջափակել էին Արծվաշենը, պատրաստվում էին որնչացնել այն, նախարարը զանգահարեց և ասաց, որ ինձ նշանակում է Գրիգոր Դանիելովիչի փոխարեն Սահմանային զորքերի գծով իր տեղակալը: Կարգադրեց միանգամից Կրասնոսելսկ մեկնել: Սեյիմի լեռնանցքով Մարտունի մեկնեցի, հետո՝ Վարդենիս, լճով՝ Կրասնոսելսկ, զորքերի հրամանատարությունը վերցրի ձեռքս:

Բ.Կ.- *Հնարավոր էր պաշտպանել Արծվաշենը:*

Յու.Խ.- Արծվաշենը մեր սահմանից 22 կմ ընկած է Ադրբեջանի տարածքում: Միանգամից ճանապարհը թեքվում է ցած, մինչև Արծվաշեն:

Գյուղը մեծ փոսի մեջ է: Լավ հող է: Այն պահելու համար 3-4 հազար զինվոր է պետք: Իսկ մենք 20 հոգի ունեինք, ևս մի վաշտ, ապա 4-5 ջոկատ, որոնց կեսը փախան:

Բ.Կ.- *Պահելն իմանալ չուներ:*

Յու.Խ. - Բացարձակապես ոչ մի իմաստ: Այսինքն՝ ողջ ուժերը պետք է հանեինք Արցախից մի Արծվաշենի համար: Ամենաճիշտ որոշումը այնտեղից մարդկանց դուրս հանելն էր: Հակառակ դեպքում բոլորին կկոտորեին: Հետագայում, երբ գերիներ էինք վերցրել, նրանք պատմում էին, որ մի քանի օրից պետք է հարձակվեին Արծվաշենի վրա: Ասում էին Խոջալուի նման մի բան անեին: Մենք պաշարումը ճեղքեցինք և մի գիշերվա ընթացքում դուրս բերեցինք բնակչությանը: Ուզում էինք պաշտպանել գյուղը, սակայն մեր ՄՀՕՋ-ի տղաները առանց թույլտվության թողեցին ու փախան:

Բ.Կ.- *Ո՞վ էր ՄՀՕՋ-ի հրամանատարը:*

Յու.Խ.- Ինչ-որ մայոր, 80 հոգի ուներ: Նրանք մեր զինվորների հետ հաջողությամբ ճեղքեցին օղակը, մի վիրավոր տալով գրավեցին բարձունքը, ամեն տեղ ճանապարհի երկայնքով դրեցին իրենց մարդկանց, գիշերը ավտոբուսներ տրամադրեցին բնակիչներին:

Բ.Կ.- *Զեզանից հետո ոչ որ չէր մնացել:*

Յու.Խ.- Մնացել էին միայն 3-րդ գնդի զինվորները բրիգադի հրամանատարի տեղակալ մայոր Էդիկ Մարտիրոսյանի հրամանատարությամբ: Նա Աֆղանստանի պատերազմի փորձ ուներ: Ես էլ էի կռվել Աֆղանստանում: Ծանր իրավիճակ էր ստեղծվել: Ես այնտեղ թողեցի կամավոր զինվորների, որոնք միայն 3 ամիս է, ինչ զորակոչվել էին, ոչ մի փորձ չունեին: 40 հոգի էին: ՄՀՕՋ-ն էլ պիտի մնար, բայց չմնացին: Օգնության եկած Երևանի ու Արագածի ջոկատները ստացան իրենց առաջադրանքը, իսկ առավոտյան ինքնակամ հեռացան, փախան: Ես առաջադրանք տվեցի մնացյալներին ու մեկնեցի Կրասնոսելսկ, որպեսզի այնտեղից կապվեմ նախարարի հետ ու իր խոստացած լրացուցիչ ուժեր ուղեմ: Ճանապարհին հանդիպեցի նախարարին: Նա գիտեր մեր հաջողության մասին ու նկարահանման խումբ էր բերել, որ նկարեն և ցույց տան հեռուստատեսությամբ, հանգստացնեն ժողովրդին: Այն ժամանակ լուրեր էին պտտվում, թե Արծվաշենն ուզում են ծախեն թուրքերին:

Մի տեղ մենք հազիվ փրկվեցինք:

Բ.Կ.- *Ինչպես դա պատահեց:*

Յու.Խ.- Երբ խրամատը մտանք, թուրքերը հասկացան, որ մեքենան կանգ է առել, իսկույն սկսեցին հրանոթներով, տանկերով, ականանետներով ռմբակոծել: Ուզում էի, որ նա պառկի խրամատում, նա պատասխանեց, որ այդ դեպքում զինվորները կփախչեն: Բայց և անիմաստ էր կանգնած մնալ ու ցույց տալ, թե չենք վախենում: Ուզեց Արծվաշեն մըտնենք: Ասացի՝ կսպանեն: Եթե խփեն նախարարին, ո՞վ պետք է կառավարի բանակը: Նա համառեց, ու մենք Արծվաշեն մտանք: Իմ մեքենան

թշնամու կրակի տակ հայտնվեց, իսկ տանկի մեխանիկի ականջը գնդակը տարավ: Վ.Սարգսյանը զրուցեց Էդիկ Մարտիրոսյանի, զինվորների հետ, շնորհակալություն հայտնեց խիզախության համար, ու ետ վերադարձանք: Նա ինձ խոստացավ կամ թույլ տալ հեռանալ, կամ թե հաջորդ օրը ուղարկել ևս 800 զինվոր: Երկու օր ժամանակ ուզեց: Ասացի, որ երկու օր չենք դիմանա: Թուրքերը գիտեն, որ ուժեր չունենք: Ես փորձեցի կապվել Արծվաշենի հետ: Ուզում էի Արագածի ջոկատի դիրքերը մտնել, սակայն նրանք լեռներով էին հեռացել, որպեսզի չհանդիպեն ինձ: Թուրքերը նստեցին այդ դիրքերում ու փակեցին ճանապարհը: Ինձ մոտ 20 մարդ էր մնացել: Ուզում էի լեռներով անցնել, գնալ Արծվաշեն, սակայն անհնար էր: Հանկարծ հայտնվել էր մեր զրահամեքենան, որի վրա 12 հոգի կային նստած: Թուրքերը հայերեն խոսեցին: Մեքենան կանգ առավ: Թուրքերը գնդակահարեցին տղաներին: Զրահամեքենան մարտի բռնվելով, հեռացավ: Այդպես կորցրինք Արծվաշենը: Ո՛չ մարդիկ եկան, ՝ոչ էլ համապատասխան տեխնիկա կար: Հետո խոսում էին, որ Արծվաշենը ծախել ենք: Վիրավորական էր: Երբ թուրքերը գալիս էին, մենք դիմադրում էինք, իսկ արծվաշենցիները, որոնց զենք էինք տվել, փախան դեպի Երևան: Թերթերը գրում էին, թե Սարգսյանն ու Խաչատուրովը յոթ կգ ոսկի են ստացել Արծվաշենի համար: Երբ ինձ դիմեցին, ես ջղայնացած պատասխանեցի, որ ոչ թե 7, այլ 705 կգ ենք ստացել:

Հետո 3 ամիս բարձունքների համար էինք կռվում, հատկապես Գետաբեկի ուղղությամբ: Ի վերջո, դրանք մնացին մեզ: Հետո Վազգեն Մանուկյանը դարձավ նախարարի պաշտոնակատար: Նա իր բնույթով, ինչքան հասկացա, ավելի ագրեսիվ էր: Մի տարի ես նրա տեղակալն էի: Նա ինձ Կապանի ուղղությամբ գործողության հրաման տվեց: Բարձունքից ավտոմատի կրակոցներով թուրքերը կոտորում էին մարդկանց: Թաքնվելու տեղ չկար: 1992 թ. դեկտեմբերի 10-ին հաջող գործողության շնորհիվ մենք ազատագրեցինք 11 գյուղ, 15 կմ առաջ գնացինք: Երկու բնակավայրից դուրս եկանք, քանի որ դիրքն անհարմար էր ամրանալու համար: Դա՝ Արծվաշենի ու Մարտակերտի հանձնումից հետո, երբ Վազգեն Սարգսյանը կորցրել էր բանակի կառավարման ղեկը, ու ավտոմատներով կրակում էին Լաչինի միջանցքի վրա, փաստորեն բեկումնային նշանակություն ուներ: Այդ պահին Մանուկյանն ինձ հարձակման հրաման տվեց:



Պատմում է ԼԵՎՈՆ ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԸ (1992-1998 թթ. ԼՂՀ Ազգային ժողովի պատգամավոր, Արտաքին կապերի հանձնաժողովի նախագահ, անկախ քաղաքագետ), Երևան, 08.05.2006 թ.

Ես Ղարաբաղը չեմ տեսել մինչև 1988 թիվը: Ավարտել էի Տաշքենդում և աշխատում էի Տաշքենդի Նիզամիի անվան Պետական մանկավարժական ինստիտուտում: 1988 թվականին Պատմության ֆակուլտետի փոխդեկանն էի: Ճիշտն ասած, գոհ էի կյանքից, ունեի ընտանիք, երեխաներ, ունեի ապրելու միջոց և մնացած հարմարանքները: Բայց հունվարի 22-ին կամ 23-ին թերթում «Безпорядки степанакертцы» վերնագրով կարճ հոդված էր տպագրվել, որտեղ գրված էր, որ Ստեփանակերտում մի խումբ էքստրեմիստներ ինչ-որ բաներ են պահանջել: Անհասկանալի էր, բայց զգացի, որ ինչ-որ մի բան կատարվում է: Մանկավարժական ինստիտուտում, որտեղ ես աշխատում էի, կար Ղրիմ-թաթարական ֆակուլտետ, կորեական ֆակուլտետ: Նրանց ազգային խնդիրների հետ շատ էի շփվում, հատկապես՝ ղրիմ-թաթարների, որոնք պահանջներ ունեին: Ներքուստ նույնիսկ մի քիչ նախանձում էի, ինչու՞ նրանք անում են, մենք, որ պակաս խնդիրներ չունենք աշխարհի հետ, դրանով չենք զբաղվում: Եվ այդ փոքր ինֆորմացիան ամեն ինչ շրջեց, որովհետև նույն օրը ես գանգեցի Երևան: Հինգ հորեղբայրներ ունեմ, մորաքույրներս էին ապրում Երևանում: Զանգեցի, ասացի. «Ի՞նչ է կատարվում», ինձ ասացին. «Չես էլ պատկերացնում, այստեղ միլիոնավոր մարդիկ են հավաքվում...»: Բա ո՞նց կլինի՝ միլիոնավոր հայեր են հավաքվում, իսկ մենք դրսում ենք մնում: Մի երիտասարդ կար, Բաբախանյան Վալերիկը, որ այդ տարի եկել էր Երևան և իր հետ ջարդած գե-

ռեգիմանաքարերի լուսանկարներ էր քերել:

Արագ կերպով՝ ընդամենը 2-3 օրում, այնպես ստացվեց, որ ես հայտնվեցի հայության էպիկենտրոնում, հավաքող կորիզն էի դարձել: Սեազին օգնում էր Վալերան: Ուրիշ տղաներ էլ էին օգնում. իմ ուսանող Սահակյան Սլավիկն էր օգնում, Հայկազ կար, նա էր օգնում: Վալերն էլ, իհարկե, շատ էր օգնում, բայց նա, իր անձնական բիզնեսի հետ կապված, մի քիչ հեռվից էր գործում: Կենտրոնում ես էի: Հետո իմացանք Սումգայիթի դեպքերի մասին: Իմացանք, որ նույն օրը Կիրովաբադում է ջարդեր եղել: Կապվեցի հեռախոսով Իգոր Մուրադյանի, Ջորի Բալայանի հետ, ծանոթացա: Վալերիկն էր հեռախոսները բերել: Ասացի. «Ինչով կարող եմ ես օգտակար լինել, պետք է գամ, մնամ այդտեղ»: Համենայն դեպս, Խորհուրդն այն ժամանակ անտեսում էր, հիմա հասկանում եմ, որ այնքան էլ կարևոր չէր, բայց, այնուամենայնիվ, ասացին, որ լավ կլիներ, եթե Ուզրեկստանի հայերը նույնպես ցույց տան, որ իրենք մտահոգ են, պատրաստ են պաշտպանել, և եթե Ղարաբաղը տան Հայաստանին, նաև վերադառնան, գան ապրեն Ղարաբաղում՝ դրանով իսկ մի քանի տնտեսական հարցեր լուծելով: Փորձեցի առաջին ցույցը անել: Տաշքենդում Գորկու անվան պուրակ կար, «Հայկական պուրակ» էին նաև ասում, այդտեղ պետք է լիներ ցույցը: Բայց դեռ ցույցը չսկսած՝ ինձ կալանավորեցին: Հետո մարդիկ էին շատ քիչ հավաքվել, երևի հիսուն հոգուց ոչ ավել: Երեք անգամ ավել ոստիկանություն էր եկել: Ինձ եկան տարան: Այդ մարդիկ ամուր դուրս եկան, կանգնեցին ասացին. «Մինչև Լևոնին բաց չթողեք, մենք ցրվողը չենք»: Ինձ բերեցին, խնդրեցին, որ ես ժողովրդին դիմեմ, որ ցրվեն: Ես էլ օգտվեցի այսահից, ճիշտ է, շատ կարճ՝ մոտ հինգ բոպե, պատմեցի իրականությունը, ասացի՝ ինչումն է հավաքվելու նպատակը, որից հետո մենք ցրվեցինք: Ու այդպես երեք անգամ ցույց էինք արել Տաշքենդում: Բայց շատ շուտ ես համոզվեցի, որ այդ ցույցերը ընդհանրապես որևէ իմաստ չունեն, հատկապես վաղուց Տաշքենդ եկած և լավ տեղավորված հայերը կտրուկ դեմ էին դրան, թե. «Ձեր պատճառով հիմա մեզ էլ վատ աչքով կնայեն, գործից կգրկեն»: Վերջին ցույցին ես կոչ արեցի բոլոր ղարաբաղցիներին տեղափոխվել Ղարաբաղ ու ասացի, որ ես՝ որպես օրինակ բոլորի համար, մեկնում եմ: Եկա Հայաստան: Ղարաբաղը ես առաջին անգամ տեսել եմ 1988 թվականի մայիսի 2-ին: Բայց մինչև այդտեղ գնալը... Եթե հիշում եք, Ադրբեջանը որոշել էր «բարեկամության» գնացք ուղարկել Երևան՝ գիտնականներով, մտավորականներով, որ պիտի բարեկամության ձեռք մեկնեն հայերին: Եվ այստեղ հենց ԳԱԱ-ի շենքի առաջ ցույց եղավ. դեմ էին այդ գնացքի գալուն: Այդ ցույցի ժամանակ ելույթ ունեցա: Մոտ երկուկես հազար մարդ էր հավաքվել, ոչ ավել: Տաշքենդի միտինգներից հետո այդ երկու-երեք հազարը շատ մեծ զանգված էր թվում: Ռուսերեն էի խոսում: Հիմա էլ հայերենս շատ բարվոք վիճակում չէ, այն ժամանակ դեռ ավելի վատ էր: Վերջը, գնացի Ղարաբաղ: Ղարաբաղ գնացինք մայիսի 2-ին, ինքնաթիռով, Իգորի հետ: Այնտեղ ընդունեցին մեզ, ուրախացան: Մինչ այդ ես երկու նյութ էի գրել Ղարաբաղի թերթի համար: Այդ թերթում տպագրվել էի:

Բ.Կ.- *Ո՞ւմ հանդիպեցիր այնտեղ:*

Լ.Մ.-Ծ.- Հանդիպեցի «Կոմսկ» կոմիտեի բոլոր անդամների հետ:

Բ.Կ.- *Ի՞նչ կրպակորություն ստացար, ինչ մարդիկ էին:*

Լ.Մ.-Ծ.- Հիմա եթե անկեղծ խոսենք, տպավորությունս այնքան էլ լավը չէր: Ես հիասթափված էի Մանուչարովից, որը հեռվից շատ ավելի ազդեցիկ էր երևում: Ասեմ՝ ինչու: Մանուչարովի հետ հանդիպել էի Երևանում, մինչև Ղարաբաղ գնալը: «Անի» հյուրանոցում էինք: Տարավ մեր պատշգամբ, ասաց. «Այնպիսի բան պիտի ասեմ, որ այստեղ կարող է լսեն»: Եվ պատշգամբում առաջարկեց մի շատ հետաքրքիր և, իմ կարծիքով, կատարյալ անգրագետ բան: Ասաց. «Եկեք մթերք, սնունդ առնենք, հետո հայտարարենք համաղարաբաղյան հացադուլ: Բայց որ տունից չմեռնենք, կուտենք»: Ես, ճիշտն ասած, դժվարությամբ էի զսպում ծիծաղս: Հետո Իգորին ասացի. «Սա է ղեկավարը, առաջնորդը»: Ասաց. «Հա, դե ուրիշները չկան, սա է»: Նույնը և Ղարաբաղում: Ես զգում էի հոսանքը, ցանկությունը, տղաների ավիրվածությունը, ոչինչ չեմ կարող դրա մասին ասել: Նույնիսկ՝ գուցե ավելին, քան ես սպասում էի: Բայց շատերի մեջ զգացվում էր նաև գավառական մտածելակերպը: Զգում էի, որ մի քանի տնօրենների ավելի ձեռնտու է, որ գործադուլները շարունակվեն, այլապես ֆինանսական ինչ-որ խնդիրներ պետք է ստուգվեր: Դա էլ էի զգում: Պետք է ճիշտը ասվի, եթե խոսում ենք անկեղծ՝ խոսում ենք անկեղծ: Ասում էի, որ так не пойдет, այսպես չի կարելի: Ամեն ինչ մոռացվում է և գնում է իր ճանապարհով, բայց եթե ուզում ես այդ ընթացքում լուծել նաև քո հիմնարկի կամ քո անձնական, ընտանեկան

խնդիրները, մի քիչ դժվար կլինի: Բայց հավանում էի: Ահագին մարդկանց հավանել էի, հատկապես երիտասարդ տղաներին, որոնք մի քիչ հեռացված էին ընդհանուր շարժումից, բայց շատ ավելի եռանդուն էին, նույնիսկ, կարելի է, ասել, գրագետ էին:

Բ.Կ.- *Հիշում ես անունները.*

Լ.Մ. Շ.- Այդ օրը, օրինակ, ծանոթացել էի Կարապետյան Արկադիի հետ, որին շատ-շատ էի հավանել: Ծանոթացել և շատ հավանել էի Ազարյան Ռուդիկին: Ռոլեսին էի շատ հավանել: Թեև մինչև հիմա Ռոլեսին մի քիչ հեգնանքով եմ նայում, բայց շատ սիրում եմ և նրա նվիրվածությունն եմ հասկանում: Դրանից հետո ես վերադարձա, քանի որ ընտանեկան խնդիրներ ունեի Տաշքենդում: Վերադարձա Տաշքենդ, այնտեղ ինձ անմիջապես տարան Անվտանգության վարչության աշխատակիցները: Այնտեղ ևս ծանոթացա Անվտանգության ուսանողական գծով աշխատողների վարչության պետի հետ: Ինչո՞ւ եմ ես դա նշում. նա ապառնում էր. «Սիբիրում կկորցնեմ, ընտանիքդ կոչնչացնենք...»: Ինչո՞ւ եմ նրան հիշում, որովհետև նա՝ Եվգենի Միխայլով Բոյկոն, հետո դառնում է ճակատագիր՝ Ղարաբաղի Անվտանգության վարչության պետը: Ուզբեկստանից էին նրան ուղարկել, իսկ մենք ծանոթ էինք այնտեղ և բավական լուրջ վիճել էինք իրար հետ: Հետո իմացա, որ ինձ գործից ուզում են հեռացնել, ամբիոնս էին փոխել: Ես առաջատար ամբիոնում էի աշխատում, Միջին Ասիայի առաջատար ամբիոնի դասախոս էի: Ամբիոնը փոխեցին, ֆակուլտետը փոխեցին, փոխդեկանի պաշտոնից հեռացրին: Բայց այդուն դա ինձ համար նշանակություն չուներ, որովհետև ես նկել էի՝ նպատակ ունենալով դիմում տալ, գործից ազատվել և գնալ Ղարաբաղ: Այդպես էլ արեցի: Եկա Ղարաբաղ: Եվ 1988 թվի ամբողջ ամառը հիմնականում Իզորի հետ, նա դեռ իմ առաջնորդն էր, պտտվում էինք և Հայաստանի, և Ղարաբաղի գյուղերով:

Բ.Կ.- *Իսկ կոտակցության՝ դաշնակցության հետ կապվեցիր:*

Լ.Մ.-Շ.- Այն ժամանակ՝ ոչ, դեռ՝ ոչ: Պտտվում էինք գյուղերով, ոգևորում էինք, ստեղծում պաշտպանական ջոկատներ: Փորձում էինք գենք ձեռք բերել նրանց համար, հիմնականում՝ ինքնաշեն: Էջմիածնի շրջանում տնետուն էինք ընկնում, դռները ծեծում, որսորդական հրացաններ էինք հավաքում: Վարդենիսում էինք նույնը անում, հայերի մեջ, այսինքն՝ փորձում էինք ինչով հնարավոր է օգտակար լինել: Թռուցիկներ

էի գրում Հայաստանում: Թռուցիկներից մեկը՝ «Голый король»-ը, բավականին մեծ արձագանք էր ստացել:

Բ.Կ.- *Ինչի՞ մասին էր:*

Լ.Մ.-Շ.- Հուլիսի 18-ին, երբ ընդլայնված ԳԽ-ի նախագահության ժողովը եղավ, որտեղ հրավիրել էին նաև հայերին, հիշում եք Գորբաչովի անհարգալից վերաբերմունքը. ես դրա մասին թռուցիկ գրեցի՝ «Голый король»: Եվ մյուս օրը Արտաշատի միտինգում ելույթ ունեցա, ասացի. «Պետք չէ նեղանալ Գորբաչովից, անդաստիարակ մարդ է...»: Կոպիտ բառեր էի ասում նրա մասին, տղաները խառնվել էին: Երևանը, լավ իմաստով, ավելի ազատամիտ էր այդ ժամանակ: Ամառը գործս դա էր, բայց ընտանիքս դեռ չէի բերել, մենակ էի: Սեպտեմբերին ես արդեն Ղարաբաղում ապրելու տեղ ունեի. ապրում էի ատադիոնում: Պետրոսյան Ռազմիկը ստադիոնի հյուրանոցում ինձ սենյակներ էր հատկացրել: Մոսեփանակերտ եկա այն օրը՝ 1988 թվականի սեպտեմբերին, որ հետո ասում էին «Нападение на прокуратуру»: Եվ այդտեղ, վերջը, նագանը ձեռքիս՝ ընկա կռիվների մեջ: Նույնիսկ հաջողվեց մի զինվորից նրա ձեռնափայտը՝ դուբինկան, խլել: Ամսի 18-ին Խոջալուի դեպքերը եղան, երբ կրակեցին մեր ժողովրդի վրա: Այդ օրն էլ մենք ցույց էինք անում՝ ի հիշատակ 1918 թվականի Բաքվի կոտորածների: Ճիշտն ասած, երբ տղաները գնացին Խոջալու՝ հարցերը պարզելու, մենք փորձում էինք թույլ չտալ, որովհետև չէինք հավատում, մինչև մեր աչքով չտեսանք: Ժողովրդին պահելը անհնարին էր: Թռան, բոլորը գնացին Խոջալու: Ես չգնացի: Ավելի շուտ՝ ինձ թույլ չտվին Ռոլեսը, մյուսները: Ասացին. «Բարբառդ ուրիշ է, կարող է մութ ժամանակ չհասկանան, որ դու մերն ես»: Բայց այդ գիշեր ևս, Ռազմիկը, Ռուսաստանից եկած Միրզոյան Ռաֆիկ կար՝ նա, Ռոլեսը զինված գնացինք Կրկժանում հերթապահելու, որովհետև վիճակը շատ լարված էր: Մութն ընկած ժամանակ գնացինք: Այդ գիշերը հանգիստ անցավ վերևում: Առավոտյան, երբ իջանք, պարզվեց, որ քաղաքում պարետային ժամ է մտցված: Ես արդեն Ուզբեկստանի գրանցումից դուրս էի եկել, իսկ Ղարաբաղում գրանցված չէի: Չեմ կարողանում տուն հասնել: Հենց դուրս եմ գալիս, բռնում են.

- Документы?

Նայում են, տանում են ոստիկանություն: Այնտեղ արդեն տղերքը՝ ոստիկանները, ճանաչում են, բաց են թողնում: Նորից ես տանում...

Վերջը, մեկ օրվա ընթացքում գրանցվեցի: Եվ գրանցվեցի ոչ միայն **ես,** այլև ամբողջ ընտանիքս, որ Ղարաբաղը չէր տեսել: Եվ այդպես **դարձա,** այսպես ասած, դարաբաղցի: Ես ծնունդով Կիրովաբադից եմ: Պապերս Խանլարի շրջանի Ոսկանապատ գյուղից են: Ոսկանապատը մելիքանիստ գյուղ է եղել, Մելիք-Շահնազարյանների գյուղն է եղել: Բայց **ծնվել** եմ քաղաքում, նույնիսկ հայրս է մեծացել քաղաքում: Եվ մենք այդ **գյուղում** տուն չունեինք արդեն: Մեր տունը հիվանդանոց էր սարքած, **դեռ** խորհրդային իշխանության ժամանակ: Բայց գյուղում գիտեին՝ ես ով **եմ:** Գյուղ գնում-գալիս էի, շատ չքնաղ տեղ էր: Նույնիսկ Իգորին տարել **էի** մեր այդ գյուղը, կողքի գյուղերը, ծանոթացրել էի տղաների հետ: Մինչև նոյեմբեր այդ գործով էինք զբաղված՝ պտտվել, քարոզչական աշխատանք: Նոյեմբերին գնացի, որ ընտանիքիս բերեմ: Մենք տոմսը գնել էինք նոյեմբերի 30-ի համար: Նոյեմբերի 21-ին՝ առավոտ շուտ, Կիրովաբադից ինձ զանգեցին տղաները և ասացին, որ թուրքերը մեծ հարձակում են սկսել քաղաքի վրա, ջարդուփշուր է սկսվել: Բառացիորեն **7-8** ժամ հետո ես հայտնվեցի Երևանում: Ընտանիքս չբերեցի, թռա եկա Երևան: Երևանում ԳԽ նիստ էր գնում, շենքի առաջ (հետագայում՝ Ամերիկյան համալսարան) ցույց էր. պահանջում էին Սումգայիթի ցեղասպանությունը ճանաչել: Եվ Վոլսկին էր գտնվում այդ նիստում: Ես եկա և ասացի, որ Կիրովաբադում ջարդեր են գնում: Ինձ ոչ ոք չհավատաց, անկեղծ ասած: Հետո դուրս եկավ չեմ հիշում ով և ասաց, որ քանի որ վիճակը լարված է Նախիջևանում, Կիրովաբադում... Պարզվել է, որ ոչ միայն Կիրովաբադում, այլև նույն ժամին, նույն օրը ամբողջ հայաբնակ և հայկական տարածքներում, որ Ադրբեջանի Հանրապետությունում էին գտնվում, ջարդեր են սկսվել: Նույն օրը մենք գնացինք, Իջևան հասանք: Չկարողացանք սահմանը անցնել: Ուզում էինք գնալ Կիրովաբադ, չստացվեց: Հետո ես եկա, տղաներին խնդրեցի, որ գենք տան, ես գնամ Կիրովաբադ: Զենք չկար: Արդեն բոլորին ճանաչում էի, բոլորի հետ շատ լավ էի: Վազգեն Մանուկյանն ասաց. «Դու զենքը գտի, մենք հետո փոդր կտանք»: Բայց ես Հայաստանում այն ժամանակ շատ քիչ ծանոթ ունեի, որ կկարողանային նորմալ զենք գտնել: Ինչ որ է: Գնացի օդակայան, այնտեղ խորհրդային ինքնաթիռներ կային: Խոսեցի նրանց հետ, խնդրեցի, ինձ տարան հասցրին Կիրովաբադ: Եվ նոյեմբերի 23-ին՝ լույս 24-ին, ես հայտնվեցի այնտեղ: Այն, ինչ ես տեսա այդ քաղաքում, որտեղ

ես ինքս եմ մեծացել, որտեղ իմ մանկությունն է անցել, դա աննկարագրելի էր, այն ժամանակվա համար դա շատ ծանր էր. ինչ իմանայի, որ հետո շատ ավելի ծանր բաներ եմ տեսնելու: Համենայն դեպս, ինչքան կարողացա, օգտակար եղա Կիրովաբադի տղաներին:

Բ.Կ.- *Ի՞նչ ես հիշում այդտեղից, ովքե՞ր էին:*

Լ.Մ.-Շ.- Այդտեղից արդեն շատ անուններ եմ հիշում, որովհետև բարեկամությունը մինչև հիմա շարունակվում է:

Բ.Կ.- *Ի՞նչ վիճակ էր:*

Լ.Մ.-Շ.- Հուսահատված էր ժողովուրդը: Վախեցած, հուսահատված էին, բացի տղաների, այսպես ասած, մի կորիզից՝ ովքեր ստեղծել էին պաշտպանություն, և պետք է ասեմ՝ բավական հաջող: Բայց ավելին՝ չգիտեի ինչ անել: Կար նաև կոմիտե, որը դե-յուրե ղեկավարվում էր բսահանայի կողմից՝ Տեր Սահակի, որը հետո դավաճանեց, փախավ և գնաց: Բառիս բուն իմաստով դավաճանեց, ես բառը ասում եմ իր արժեքով: Խաչիկն էր, Գրիշան էր, երկու Միշաներն էին, Վիտյան էր, Վոլոդյան, որը հետո զոհվեց դարաբաղյան պատերազմում, Մանվելյան Այոշան էր, Տեր-Ավետիքյան Հրայրն էր՝ հանրահայտ եգոր Տեր-Ավետիքյանի եղբոր թոռնիկը, Կամոն էր, հիմա Արտաշատում է ապրում, Ալիկն էր, որ վերջերս մահացավ: Այդ տղաների հետ սկսեցի և ակամա դարձա նրանց ղեկավարը:

Բ.Կ.- *Նոյեմբերի 24-ին, երբ ես ուղղաթիռով այնտեղ եմ եկել...*

Լ.Մ.-Շ.- Մենք չենք հանդիպել, բայց ես քաղաքում եմ եղել: Նույնիսկ դուք նկարել էիք մի թուրք կնոջ, որի ամուսինն էր հայ և փսխել էր, կրծքին խփում էր, քանի որ ամուսինը հայ էր, նրան էլ էին քշել այս կողմը: Բայց ես քաղաքում էի այդ օրերին: Մի քանի օր անց Խորհրդային բանակի ներկայացուցիչները իմացան, որ Երևանից ինչ-որ մարդ է եկել, անունը Լևոն է: Եվ նույնիսկ ինձ ասում էին. «Левон, вы знаете, какой-то Левон из Еревана приехал...»: Քանի որ ես քաղաքի երեխա էի, ինձ ընդունում էին որպես տեղացի: Ասում էին. «Ինչ որ Լևոն է եկել, լավ կլինի ասեք՝ այստեղից գնա...» և այլն: Ես էլ ասում էի. «Չէ, ուրիշ մարդ չի եկել, բոլորը մենք ենք»: Ինձ կալանավորեցին ի վերջո, դեկտեմբերի տասին: Բայց խնդիրներն սկսվեցին նրանից, որ քաղաք եկավ կոմունիստական կուսակցության կոմիտեի անդամ Կարագեիչը: Զանգեց մեր շտաբ և ասաց. «Ես ուզում եմ Լևոնի հետ զրուցել»: Արդեն գիտեին, որ

ես եմ: Ասաց. «Ձեզ հրավիրում եմ ոստիկանություն, եկեք գրուցենք»: Ասացի. «Անհնարին տեղ եք դուք ինձ կանչում»: «Լավ, - ասաց, - չեզոք գոտում հանդիպենք»: Ասացի. «Չէ, գրույց ունես, արի, ես այս պահին եկեղեցում նստած եմ»: Նա եկավ: Երկու «ԲՏՌ»-ներով եկան եկեղեցի: Ժողովուրդը հավաքված... Մեծ զանգված էր հավաքված: Մտավ, ասաց, «Ես ուզում եմ ձեզ հետ один на один խոսել»: Խնդիր չկա, թողեցի, որ միայն Ալիկը մնա: Զրույցի ժամանակ նա սկսեց սպառնալ: Վերջը, զրույցը հասավ նրան... ես երիտասարդ էի, մի քիչ տաքարյուն, ապտակեցի նրան՝ այդ Կարազևիչին: Ապտակեցի և հրելով դուրս հանեցի եկեղեցուց: Տեր Սահակը արդեն չկար, արդեն փախել էր: Ժողովուրդը տեսավ, որ ես սրան հրում եմ, հարձակվեցին, որ պատռեն դրան: Մի կերպ ժողովրդին հանգստացրի, ասացի. «Նստիր «ԲՏՌ»-ը, գնա»:

Բ.Կ.- *Ի՞նչ էր ասում:*

Լ.Մ.-Ծ.- Նրա ասածը սա էր. «Ես պատրաստ եմ ձեր բոլոր բարեկամներին, ձեր ազգականներին ուղղաթիռ տամ, Խորհրդային Միության ցանկացած վայրը տեղափոխեն: Դուք ինձ թողնում եք ձեր բոլոր անունները, որտեղ ինչքան զենք կա, և լքում եք քաղաքը»:

Բ.Կ.- *Ժողովրդի հարցը չեն լուծում:*

Լ.Մ.-Ծ.- Ժողովրդի հարցի մասին ընդհանրապես խոսք չկար: Խոսքը գնում էր մի խումբ տղաների մասին, որ հանեն քաղաքից կամ կալանավորեն, այդ էր ամբողջ նպատակը: Սակայն հետո, իսկապես, նրանք կամաց-կամաց սկսեցին իրենց նպատակին հասնել: Մեր պաշտոնական ղեկավարը Տեր Սահակի փախուստից հետո Օգանեզով Գրիշան էր, որը արհմիության աշխատող է եղել, հետո պահեստապետ է եղել: Նրան մեկ-երկու անգամ կանչել եմ: Երևում էր, որ շատ վախեցած էր: Մի օր ես գալիս եմ մեր շտաբը, մենք երկու շտաբ ունեինք, Թագա Շենի շտաբն էի գալիս: Կանայք ինձ տեսնում են, ասում են. «Շտաբում նիստ է լինելու, դու այնտեղ չես»: Ո՞ր շտաբը, առանց ինձ ո՞նց կարող է շտաբի նիստ լինի: Գնում եմ տեսնում Գրիշան ճառ է ասում. «Տղաներ, պետք է արդեն ցրվենք, ամենքս մեր հոգսը քաշենք»: Ես ասում եմ. «Անհնարին բան ես ասում, մեր վզին տասնյակ հազարավոր ժողովուրդն է, դա չի լինելու»: Գրիշան ասում է. «Չէ, չկարծես, թե վախեցել եմ»: Վերջը հասնում է նրան, որ ես ատրճանակը հանում եմ, դնում գլխին, ասում.

Գանգդ կքանդեմ, ոչ մեկս ոչ մի տեղ չենք գնում, մնում ենք այստեղ մինչև վերջ, կամ չանդամագրվեիք, կամ եթե անդամագրվել եք... հատկապես դու, մեր ղեկավարն ես կոչվում:

- Ես ղեկավար չեմ, ինչ դու ասել ես, ես որտեղի ղեկավար, ինչ ուզում, այն ես անում...

Մի քիչ լավը չէր այդ զրույցը: Համենայն դեպս, այդ օրը կարողացա կանխել: Ուղղակի մյուս օրը Բաքվից քսանվեց հոգի որոշել էին գնացքով գնալ Հայաստան: Նրանց Ղազախում բռնել էին, ծեծել, ջարդել էին, հետո զինվորները մի կերպ փրկել էին, ետ բերել Կիրովաբադ: Ջանգելին մեզ, մենք կարողացանք ոեյդով գնալ, ժողովրդին, բոլորին գողանալ բերել, փրկել Բաքվի հայերին՝ այդ քսանվեց հոգուն: Ու ինձ համար սա համոզմունք դարձավ, որ եթե մենք չլինեինք, ո՞վ պիտի դա աներ: Բայց երբ երկրաշարժը եղավ, ժողովուրդը, իսկապես, կոտրվեց, որովհետև շատ-շատերին, ում հանել էին Կիրովաբադից, հիմնականում տարել էին Սպիտակ, ոնց որ հատուկ մտածված լիներ: Մեր քաղաքի բնակչությունը տարբեր տվյալներով մոտ երկու հարյուր ինքնուն զոհ է տվել Սպիտակում: Եվ այդ խարդախության տակ, ամսի ութից սկսած, ինձ անընդհատ փորձում էր վերցնել Խորհրդային բանակը: Դեկտեմբերի տասին ժամը տասներկուսին եկեղեցու մոտ պետք է ցույց լիներ: 1988 թիվն էր: Ես գնացի այնտեղ՝ ցույցի, ահագին շուտ: Գնացի տեսա, որ ցույցն արդեն սկսված է: Գրիշան էր խոսում, որ վերջին անգամ ենք հավաքվում, այլևս չենք հավաքվելու: Հետո խոսեց քաղաքի կոմկուսի երկրորդ քարտուղարը՝ Կամիլա Արարատովնա Խոնդկարյանը, որ մենք պետք է ադրբեջանցի եղբայր ժողովրդի հետ ձեռք ձեռքի տված օգնենք երկրաշարժից տուժած մեր հայրենակիցներին: Ես եկա խլեցի միկրոֆոնը նրանց ձեռքից, ասացի, որ մենք այս պահին չունենք ավելի մեծ խնդիր, քան փրկել մեր երեխաներին: Երկրաշարժից ով արդեն զոհվել է՝ զոհվել է, ում կկարողանան, առանց մեզ էլ կարող են փրկել: Հիմա եթե մենք թողնենք, կկոտրվի նաև այստեղի ժողովուրդը:

Այդ զրույցի ժամանակ հրապարակ մտան մի քանի «ԲՏՌ»-ներով զինվորներ: Եկան ինձ ներկայացրին թուղթ՝ «Санкция на обыск», թե. «Խուզարկություն ենք անում, կամ գնանք և փորձեք ապացուցել: Մի գեներալ է եկել միլիցիայից, նա ձեզ հետ ուզում է հանդիպել, և դուք նրան ապացուցեք, որ դուք ճիշտ եք»: Ես զգացի, որ ժողովուրդը պատրաստ է

ինձ պաշտպանել, զգացի, որ եթե ընդդիմանամ, կարող է արյուն թափվի: Գնացի նրանց հետ, գնացի ու տարան: Գեներալի հետ խոսեցի: Միլիցիայի գնեռալ էր: Ռուս էր, Մոսկվայից էր եկել: Շատ հարգալից խոսեց: Վերջում դուրս եկավ, ասաց. «Я сейчас вернусь»: Նրա ետ գալու փոխարեն եկան, ձեռնաշղթաները գցեցին ձեռքերս: Ջրույցը ոստիկանությունում էր: Շենքի առաջ արդեն մի քանի հարյուր թուրքեր էին հավաքվել. եկել էին, որ իմ հարցը լուծեն: Ռուսները չկարողացան նույնիսկ ինձ մենակս ստեղծել: Ինձ, փաստորեն, ոստիկանությունից մինչև բանտ ուղով են տարել: Ճանապարհին զինվորները էին ինձ վահաններով պաշտպանում. թուրքերը բարեր էին նետում: Վերջը, բերեցին գցեցին բանտը: Այնտեղ ես ունեցել եմ երեք քննիչներ՝ երկուսը Մոսկվայից, երրորդը՝ Ֆրունզեից: Մոսկվայից следователь по особенно важным делам КГБ СССР գնդապետ Պանինն էր, և մի երիտասարդ լեյտենանտ, որի ազգանունը մոռացել եմ: Իսկ Ֆրունզեից следователь по особенно важным делам КГБ Киргизии Նիկովիչն էր: Ես այն ժամանակ զարմացա, ասացի.

- Как, как ?

- Нет, я белорусь.

Տեր Սահակի մասին ես պետք է ասեմ: Վեհափառը ամեն աստծու օր՝ առավոտյան վեցին, վեցն անց կես, զանգում էր և խնդրում, որ ես նրան պատմեմ, թե ինչ է կատարվում: Չեմ ժխտում, հնարավոր է, որ նա զանգում էր նաև Տեր Սահակին, չգիտեմ: Բայց ինձ հետ նա ամեն օր էր խոսում: Նոյեմբերի 28-ին կամ 29-ին Տեր Սահակն ինձ ասաց, որ Վեհափառը իրեն կանչում է: Ես ասացի.

- Տեր Սահակ, ես չեմ կարող քեզ բաց թողնել, որովհետև ժողովուրդը զալիս է քեզ մոտ, գալիս է եկեղեցի, դու այստեղ հոգևոր հովիվն ես, անհնարին բան ես ասում:

- Չէ, դա մեր եկեղեցական գործն է:

Ես էլ ասացի, որ ինքը ինձ զանգել է, կես բերան չի ասել, որ քեզ կանչում է: Ասաց. «Չէ, ես պետք է գնամ»: Վերջին արգումենտս նա էր, որ նրա կինը բժշկուհի էր՝ Էմման: Ասացի. «Ես ոնց Էմմային բաց թողնեմ»: Ասաց. «Չէ, մենք միասին պետք է գնանք»: Ասացինք. «Ոչ, Էմման պիտի մնա: Դա նաև նրաշխիք է, որ դու ետ կգաս»: Նրան ավտոբուս նստեցրինք, ուղարկեցինք Գետաշեն, Գետաշենից՝ Շահումյան, և այդ-

պես: Անցել է մեկ շաբաթ, ես չեմ կարողանում գտնել: Ամեն օր զանգում եմ Էչմիածին, ասում եմ. «Եկել է», ասում են՝ չէ: Պարզվեց, որ Ստեփանակերտում է գտնվում: Հիմա չգիտեմ եղանակը իսկապես վատ էր, թռիչք չկար: Պիտի ետ գար, բայց Երևան չէր հասել: Մոտ տասը օրից զանգեց Ստեփանակերտում, հետո ինքը գնաց, ես կալանավորվեցի: Դուրս եկա, առաջին հարցս սա է եղել. «Տեր Սահակը եկել է»: Ասացին՝ «Չէ, էլ չի եկել»: «Էմման այստեղ է»: Էմման մնացել էր: Կինը շատ տղա ասող կին էր, շատ ավելի տղամարդ, քան ինքը:

Բ.Կ.- *Ես Էմմային հանդիպել եմ, խոսեցրել եմ:*

Լ.Մ.-Շ.- Նույնիսկ ինքը իմ մասին պատմել է քեզ: Վերջը, Տեր Սահակը չեկավ: Բանտից դուրս գալուց հետո ես եկա Վեհափառի մոտ:

Բ.Կ.- *Ինչքան պահեցին քեզ այնտեղ:*

Լ.Մ.-Շ.- Ուղիղ մեկ ամիս, բայց ես դուրս եմ նկել 57 կիլո: Ես եկա Վեհափառի մոտ: Շատ ջերմ ընդունեց: Ձեռքի ժամացույցը հանեց նվիրեց ինձ: Շատ-շատ ջերմ ընդունեց: Ես իմ կոտրված հայերենով խնդրեցի, ասացի. «Վեհափառ հայրապետ, ես ուզում եմ Տեր Սահակին տեսնել»: Ճիշտն ասած, ես ուզում էի, այսպես ասած, երևսին թքել: Վեհափառը շատ խելամիտ մարդ էր, ասաց. «Մեծահոգի եղիր, պետք չէ»:

Բ.Կ.- *Ինքը հասկանում էր ուրեմն:*

Լ.Մ.-Շ.- Նա ամեն ինչ հասկանում էր: Ու այդպես էլ ես Սահակին չտեսա, մեր ճանապարհները բաժանվեցին: Եվ հիմա երբեմն զրում են, պատմում են՝ «Մեր օրերի Ղևոնդ երեցը». վիրավորական է, բոլոր կիրավաքաղցիների համար պետք է ասեմ, որովհետև բոլորը գիտեն՝ ոնց է եղել, ինչ է եղել: Ինքն էլ պատմում է. «Հրթիռանետ ատրճանակով կրակեցի, թուրքին սպանեցի...»: Առաջին օրը, երբ հարձակվել էին եկեղեցու վրա, ես քաղաքում չեմ եղել դեռ, Տաշքենդում էի, ինքը փակվել էր եկեղեցու մեջ: Դե, եկեղեցին էլ ամրոց է, ապահովության մեջ էր հայտնվել: Պոկել էին ոչ թե գմբեթի, այլ դռան կամարի վրա խաչ կար. այդ խաչն էին պոկել տարել: Մենք գիտեինք՝ ով է պոկել, որովհետև այդ մարդը ոստիկան էր՝ Լսանլար անունով, միլիցիայի կապիտան էր: Այնքան մեծ քաղաք չէր, ճանաչում էին նրան: Այդ խաչը հետո ետ են բերել, փոխել են գերի թուրքերի հետ: Բայց վերջերս Տեր Սահակը պատմում է. «Ես հրթիռանետ ատրճանակով ուղիղ գլխին կրակեցի, հետո իմացա, որ մեռել է» և այլն: Մի խոսքով, սիրուն բաներ չեն կատարվում, չարա-

շահումներ են կատարվում դրա շուրջը: Լավ, Տեր Սահակին թողնենք, Տերը նրա հետ: Մեկ ամսից հետո ինձ բաց թողեցին՝ երեկոյան ժամը ինն անց կես: Ես հրաժարվեցի դուրս գալ, որովհետև ֆիզիկապես շատ թույլ էի, իսկ բանտը՝ այդ մեկուսարանը, գտնվում էր շատ խորը թուրքական թաղամասում, և թուրքերը բոլորը ինձ գիտեին: Ես ասացի, որ չեմ կարող, առավոտյան կգնամ: Ասացին. «Եթե հիմա չգնացիր, за нарушение тюремного режима, պատժախուց ենք նստեցնում տասը օր»: Իսկ ես մի անգամ պատժախցում եղել էի և գիտեի, որ ֆիզիկապես չեմ դիմանա: Որոշեցի դուրս գալ, եթե ինչ-որ բան լինի, ետ կվազեմ, դուռը կծնծեմ, գուցե բացեն: Բայց պարզվեց, որ Այոշա անունով Կիրովաբադի ՊԱԿ-ում աշխատող ասկերանցի մի տղա մեր տղաներին զգուշացրել է, որ ինձ ուղիղ ինն անց կես բաց են թողնելու, դիմավորեն ինձ, որովհետև թուրք ոստիկանները թուրքերին ասելու են, որ այդ ժամին դուրս եմ գալու: Եվ ես հենց բանտից դուրս եմ գալիս, տեսնում եմ խումբ տղաների: Թեքվեցի, որ ինչքան հնարավոր է նրանցից հեռու գնամ, մեկ էլ այս խումբը վազեց՝ անունով ինձ կանչելով: Առոգանությամբ և ձայնով հասկացա, որ մեր տղերքն են՝ Խաչիկն էր, Վիտյան էր, Վիտյայի եղբայր Վալենտինն էր: Եկան գցեցին ինձ մեքենան և ինձ բերեցին հայկական թաղամաս: Ես այդ Այոշային այդպես էլ չեմ տեսել, բայց մինչև այսօր շնորհակալ եմ, որ նա կարողացել է գալ և տղաներին զգուշացնել:

Քաղաքում մեր տղաները, ես՝ քիչ, ավելի շատ ուրիշները, ցերեկներ հասցնները իմանում էինք, թե թուրքական թաղամասի որ նկուղում հայեր կան, գիշերը գնում էինք, երբեմն մեկ «ԲՏՌ»-ով, երբեմն՝ առանց «ԲՏՌ»-ի, «Պազիկ» ավտոբուսով, գնում էինք, այդ ժողովրդին ավտոբուսը լցնում, բերում հայկական թաղամաս: Ու մի անգամ... Ես ընդամենը երեք անգամ եմ գնացել, երևի երկրորդ անգամն էր, որ գնացել էի: Հինգհարկանի շենքի տակ երկաթյա դուռ ունեցող նկուղ էր: Չի լսվում, բայց ներքին զգացողությամբ զգում ես, որ այնտեղ մարդ կա: Հետո մեզ հասցեով ասել էին, որ կա, բայց դուռը ծեծելը վտանգավոր է. երկաթ է, ծեծես՝ շենքը կարթնացնես: Քերում ենք եղունգներով, ու ես Կիրովաբադի բարբառով, իմ մայրենի բարբառն է, ասում եմ. «Քույրիկ ջան, ախպեր ջան, հայեր ենք բացեք, ավտոբուսը սպասում է, գնանք հայերի թաղամասը»: Երևի մի քանի րոպե... Նույնիսկ հուզմունքից, գուցե մի քիչ էլ վախից, քնրվել էին մատներս, որ բերում էի: Դուռը բացվեց, ու այդ տեսարանը, որ բացվեց, ինձ համար երևի նախապատերազմի խտացված պատկերն էր: Երբ դուռը բացվեց, մարդ ու կին էին և երեք երեխաները: Մեծ երեխան վազելով եկավ ու ինձ փաթաթվեց: Նա տեսել է ծնողներին նկուղում թաքնված, արդեն ոնց որ վստահությունն էր կորցրել, թե փրկիչ էր տեսել այդ պահին, ես դժվարանում եմ բացատրել այդ երեխայի պահվածքը, բայց ինձ վրա դա շատ ծանր ազդեց: Նա վազեց փաթաթվեց ինձ, ես գրկեցի և վազելով գնացի դեպի ավտոբուսը: Տվեցի տղաներին, որ ավտոբուսում էին: Այդ երեխային ընդունեցին, ուզեցի ետ վազեմ ու տեսա՝ մայրն է վազում: Մի երեխան ձեռքից բռնած՝ վազում էր: Մյուս երեխան ընկել էր, մայրը վախից չէր նկատում, քարշ տալով վազում էր դեպի ավտոբուսը: Այդ վախը, այդ ցավը, այդ երեխաների աչքերը ինձ համար շատ... Մինչև այսօր ոնց որ աչքիս առաջ լինի, շատ ծանր էի տարել: Հետո, բնական է, շատ ավելի ծանր բաներ եմ տեսել, բայց պատերազմում իմ տեսածի գագաթնակետերից մեկը հենց այդ պահն էր:

Բ.Կ.- *Հետո կեսել ես, որ մեր ուղղաթիռի եղևից աղրբեջանական ուղղաթիռներ են դուրս եկել:*

Լ.Մ.-Շ.- Բացի ձեր ուղղաթիռից, երեք ուղղաթիռներ եմ ես տեսել: Բայց այն ժամանակ ես չեմ էլ իմացել, որ այնտեղ հայերն են, քանի որ ես քաղաքի մյուս ծայրում եմ եղել:

Բ.Կ.- *Մենք սկզբում գերեզմանոցում ենք իջել:*

Լ.Մ.-Շ.- Հետո եկեղեցու բակում:

Բ.Կ.- *Ինձ ասել էին, որ այդպիսի մի տեղ կա: Ասացի. «Ես կփորձեմ այնտեղ»: Սրտիպեցի մերոնց...*

Լ.Մ.-Շ.- Իմիջիայլոց, մյուս օրը ես առաջին անգամ մարդու վրա կրակել էի արդեն ատրճանակով: Պետրոսյան Ռազմիկն էր այնտեղ, ասաց. «Արա, դուք բոլորդ այստեղ խելագար եք: Էս Սովետը պրծել է ձեր համար»: Մեքենա էր մտել կրակելով և մի կին էր վիրավորել:

Բ.Կ.- *Ռազմիկը ինձնից հետո էր եկել:*

Լ.Մ.-Շ.- Հա, Ռազմիկը ձեզնից հետո էր եկել: Առաջինը Ստեփանակերտի Մանկավարժական ինստիտուտի դասախոս Աֆանասյան Գրիշան էր եկել Ղարաբաղից ռազմազգեստով, երկրորդը՝ Ռազմիկն էր, երկրորդ շարասյունը:

Բ.Կ.- *Իսկ «Московские новости»-ի թղթակիցը....*

Լ.Մ.-Շ.- Ես նրա հետ հանդիպել եմ բանտից հետո: Ես որ բանտից դուրս էի եկել, նա քաղաքում էր: Նա ուշ է եկել:

Բ.Կ.- *Մի հարց էլ է ինձ հետաքրքրում: Երբ ես եկա, ցույց տվի գինվորականներին, ասպետի հրամանատարությանը՝ Սամսոնովին, Սուրկովին, նրանք էլ պայմանավորվում են, կապվում են... որովհետև ինձ հետ նաև գինվորական կար, որը զեկուցել էր, դրա հիման վրա օկրուգը որոշեց, որ հնարավորություն տան ժողովրդին այնտեղից հանելու: Դա եղավ իրոք:*

Լ.Մ.-Շ.- Անկեղծ ասած՝ հա, իրոք, այդ օրը երկու ուղղաթիռ տային էին երեխաներին ու կանանց հանելու:

Բ.Կ.- *Մեր գնալուց հետո այդպես որոշվեց:*

Լ.Մ.-Շ.- Ես չգիտեմ ով էր կազմակերպել: Այդտեղ ստորագրություններ էին հավաքում ժողովրդից, որ պահանջ չունեն, կամավոր գնում են և այլն: Ու միշտ ասում էին, որ վաղը վերջին օրն է: Այսպես ասած, հերթի սինդրոմ էին սարքում:

Բ.Կ.- *Մեծ ուղղաթիռներն էին գալիս, չէ:*

Լ.Մ.-Շ.- Քսան տոննանոց ուղղաթիռներ էին տվել, լցնում էին ժողովրդին ու տանում:

Բ.Կ.- *Մենք հարց դրեցինք, որոշեցինք պահանջել:*

Լ.Մ.-Շ.- Եվ, իրոք, ձեր պահանջը կատարվել է: Համենայն դեպս, մեր կողմից չի եղել այդ պահանջը:

Բ.Կ.- *Որ ժողովրդին պետք է հանել, պահել չի կարելի արդեն, վտանգավոր է:*

Լ.Մ.-Շ.- Իմիջիայլոց, ես պետք է ասեմ, որ միայն նրանց էին թույլ տալիս գնալ, ովքեր ստորագրում էին այդ փաստաթղթերը: Մենք Միշա անունով տղա ունեինք, որին հանձնարարեցինք, և Միշան գողացավ այդ փաստաթղթերը: Վերցրեց փախավ այդտեղից: Հետո Միշային կալանավորել էին, և ես նրան բանտում էի հանդիպել: Բայց արդեն դուրս էր եկել Գորբաչովի հրամանը՝ «О незаконных действиях по выселению Азербайджана и Армении»: Ես Միշային դա պատմեցի, այսպես ասած, նախապատրաստեցի: Հիմա չգիտեմ, դա օգնեց, թե, ընդհանրապես, նրանք որոշել էին, որ Միշային մեկ ամսից բաց թողնեն, բայց բաց թողեցին նրան: Այդ թղթերի մեծ մասը ձեռքին է:

Բ.Կ.- *Ինձ մոտ ահագին այդպիսի փաստաթղթեր կան:*

Լ.Մ.-Շ.- 1992 թվականի գարնանը, եթե չեմ սխալվում մարտի 19-ին, Ղարաբաղ էր այցելել ՄԱԿ-ի գլխավոր նախագահի՝ Բուդրոս Բուդրոս Ղալիի անձնական ներկայացուցիչը՝ Սայրուս Վենսը, որը ժամանակին եղել է Ամերիկայի պետքարտուղարը: Մարդը եկել էր ուղղակի հետաքրքրվելու, իրավիճակին ծանոթանալու: Շուշին դեռ ադրբեջանցիների ձեռքին էր, մարտ ամիսն էր: Նրան բերել էին Գյանջա՝ Կիրովաբաղ, որտեղից «ԲՏՌ»-ով բերել հասցրել էին Աղդամ-Ասկերան սահմանը: Ես էլ գնացել էի դիմավորել: Ծեր մարդ էր, բնականաբար, հոգնած վիճակում, Գյանջայից մինչև այդտեղ, որ մի քանի հարյուր կիլոմետր է, «ԲՏՌ»-ով գալը դժվար է: Ես եկել էի մինչև նրանց տեղ հասնելը: Այնտեղ «ԲՄՊ-2»-ը փոսի մեջ նստած էր, միայն աշտարակն էր երևում: Բայց այդ աշտարակի առաջ էլ խոտ էին թափել, թեթև քողարկել էին: Երբ նրանք հասան սահմանին, նրանց կանգնեցրի: Բարևեցի ռուս մայորին, մայոր էր, թե փոխգնդապետ, լավ չեմ հիշում, դա չէր կարևորը: Այդ մարդը կանգնել է, ասում եմ. «Լավ, Սայրուս Վենսին տուր, շնորհակալություն, որ բերեցիք, հաջող»: Կանգնել է, ասում է.

- Չէ, ես հրաման եմ ստացել Վենսին հասցնել Ստեփանակերտ:

- Լսիր, իմ մնքենան «Վոլգա» է, լավ վիճակում է, մեղր է այդ մարդը, տուր տանեմ:

- Չէ, ես հրաման ունեմ:

- Այդ դեպքում դու երկու ընտրություն ունես, կամ հիմա դու վերադառնում ես այնտեղ, որտեղից եկել ես, իսկ Սայրուս Վենսը իմ մնքենայով հասնում է Ստեփանակերտ, քանի որ ես չեմ կարող թույլ տալ, որ օտար երկրի ռազմական մեքենա մտնի մեր տարածքը, կամ՝ դու մնում ես այստեղ վառված վիճակում, իսկ Սայրուս Վենսը իմ մնքենայով գնում է հասնի Ստեփանակերտ:

Ես կանգնած էի, կողքիս իմ օգնականներն էին: Նա նայում է իր «ԲՏՌ»-ին, ինձ է նայում. փտանգ, կարծես թե, ինձնից չեմ ներկայացնում: «Դե գիտես,- ասում է,- այստեղ ամեն ինչ որոշողը ես եմ»: Ձեռքս բարձրացրի, ձեռքով արեցի, մեր «ԲՄՊ»-ն փոքր մի բիչ բարձրացրեց: Ռուսը թե. «Վերցրեք Սայրուս Վենսին, ուր ուզում եք, տարեք»: Վենսին իջեցրինք: Իմիջիայլոց, «Պոսև» թերթը, որ տասնյակ տարիներ շարունակ Փարիզում էր լույս տեսնում, այդ թերթում դրա մասին գրել էին: «Պոսևից» ժուռնալիստ է եղել այդտեղ, հենց այդ բառերով էլ գրել էր:

Վերջը, Սայրուս Վենսին իջեցրինք, այդ ծերուկին բերեցինք մեր մեքենա, տարանք: Ստեփանակերտում նա հենց երկու-երեք քայլ արեց, տափակ փշալարեր կան, որ ռուսներն էլ օգտագործում են, մի կտոր կպավ շալվարից, դրա կպածն էլ կպնում է: Իմ օգնականներից մեկը կռացավ, որ անջատի նրա շալվարից, ու այդ նկարը թուրքական թերթերում տպագրել էին, թե. «Հայերը настолько подхалимничают, որ նույնիսկ Սայրուս Վենսի կոշկաքուղերն են կապում»: Բայց այդ խոսքը շատ լավ հիշվել էր, որ «Կամ դուք վերադառնում եք, Սայրունս Վենսը գնում հասնում է Ստեփանակերտ, կամ դուք մնում եք այստեղ վառված վիճակում, Սայրուս Վենսը գնում հասնում է Ստեփանակերտ»:

Առաջին անգամ Կոզերևն էր եկել Ղարաբաղ: Այն ժամանակ ես ԳԽ Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահն էի, ու քանի որ Արտգործնախարարություն չունեինք, նաև այդ գործերն էի անում: Եկել էր Ռուսաստանի Արտաքին գործերի նախարար՝ Անդրեյ Կոզերև Վլադիմիրովիչը՝ հակահայկական տրամադրվածությամբ: Ազգությամբ հրեա էր: Մենք գնացինք մեր, այսպես կոչված, օդակայան՝ տատիկ, ինքնաթիռի արձանի մոտ մի փոքր տարածք էր, դիմավորելու: Ուղղաթիռներով եկան, մի քանի ռազմական ուղղաթիռներ էլ կային: ԳԽ նախագահի պաշտոնակատար Գեորգի Պետրոսյանն էր եկել դիմավորելու և ես: Քանի որ մեր ԳԽ-ն էլ մեքենա չուներ, այդ երկուսն էին՝ Գեորգիինը և իմը, այդ երկու մեքենաներով էինք գնացել: Բայց շրջափակման մեջ ենք, Շուշին դեռ նրանց ձեռքին էր, Լաչինի միջանցքը չկար: 1992 թվականի գարունն էր: Բենզին չունեինք, վառելիք չունեինք, ինչ ասես օգտագործում էինք՝ էլեկտրակայանների յուղը, ացետոն, ինչ ձեռքներս ընկնում էր, ինչ կարող էր վառվել, լցնում էինք այդ մեքենաների մեջ: Եվ շատ տհաճ, տխուր վիճակում էին այդ մեքենաները: Եկան, բարևեցին, ներկայացանք: Նստեցին Գեորգիի մեքենան, ես էլ՝ ետևից, ճանապարհվեցինք դեպի Ստեփանակերտ: Այնտեղից էլ մինչև հրապարակ երեք կիլոմետր է, ոչ ավել: Գեորգիի մեքենան մի կիլոմետր չգնացած՝ փչացավ: Այն ժամանակ դա շատ բնական երևույթ էր մեզ համար: Իջանք, Գեորգին ինչ-որ ուրիշ մեքենա նստեց, Կոզերևին բերեցին իմ մեքենան: Նստեց, ասաց. «Ես Գեորգի Միխայլովիչից հարցրի, պատասխանը չհասցրի իմանալ, մեքենան փչացավ, Լևոն Գրանտովիչ, դուք ասեք, ինչ է այստեղ ռուսալեզու բնակչությունը»: Ասացի. «Ինչու եք

թեմա հարցնում, վարորդից հարցրեք»: Վարորդը մաքուր ռուս էր՝ Բարդուղին Նիկոլայ Սիդերովիչ: Այդ շան որդին էլ ռուսերեն լավ չգիտի, բայց ռուս է, ուրեմն, գլխով ռուս է: Ասաց.

- Вы, что, русский?

- Да, канечно, разве не видно, что русский.

- Не видно.

Բարդուղինին ասաց. «Փաստաթղթերդ տուր», վարորդական իրավունքը տվեց, նայեց, ասաց. «Действительно, русский!»: Հենց բաղաք մտանք, իմ մեքենան փչացավ: Էլ մեքենա չունենք, որ Կոզերևին տանենք, հրապարակ հասցնենք: Ստիպված ժորիկը՝ Գեորգի Պետրոսյանը, ես, ինքը՝ Կոզերևը՝ իր շքախմբի հետ, ուրեմն Կիրովի, հիմա՝ Ազատամարտիկների փողոցով բարձրացանք, եկանք, այդ բանակցությունները վարեցինք:

Բ.Կ.- *Ճանապարհին ինչ էր, ինչ տեսավ, ինչ էր վիճակը:*

Լ.Մ.-Ծ.- Ես պետք է մի բան ասեմ, այդ ժամանակ Գեորգին տեղապահն էր, Արթուր Մկրտչյանը դեռ կար: Ինչու դա հիշեցի, որովհետև մենք հարմարություն ստեղծեցինք, և Արթուր Մկրտչյանն ու Կոզերևը առանձին սենյակում մոտ 15-20 րոպե երկուսով զրուցել էին: Քաղաքը ավերված էր, շատ դաժան վիճակում էր, և Կոզերևը այդ ամենը տեսնում էր: Արդեն ծառերը հատված էին, որովհետև ցուրտ էր, ապակի հասկացություն Ստեփանակերտում չկար, ով կարողացել էր, պատուհանները ցելոֆանով ծածկել էր: Ամենաճարպիկները Ստեփանակերտի Էլեկտրատեխնիկական գործարանից լյումինեսցենցիոն կախովի երկար լամպերի ֆտորպլաստե ծածկերի մեջ կտորներ էին վերցրել, կտրել, ապակու տեղը դնում էին: Հենց այդ ճանապարհի վրա բավականին լուրջ ավերվածություններ կային, որովհետև կենտրոնական փողոց էր, բնական է, շատ էր տուժել: Եվ ինքը այդ ամենը տեսնում էր: Ոչ մի արձագանք չկար: Արդեն ներսում մեզանից մենակ ասաց, որ ոմբակոծում են, ասաց. «Հա, ես տեսա»: Ու էլի ոչ մի մեկնաբանություն: Ավելին, վերադառնալուց հետո նա հայտարարություն արեց, իբր իր ուղղաթիռի վրա հայերը կրակահերթ էին բացել, որ ուղղաթիռը գցեն: Բայց նրա գնալու ժամանակ նրանց ռազմական ուղղաթիռներից մեկը, օդաչուն խմել էր թե առհասարակ հիմար էր, բարձրացավ, իջավ, նորից փորձեց բարձրանալ, այնտեղ անասունների համար ցանկապատ էր սարքած, ի վեր-

ջո կպավ դրանց ու ընկավ այդ ուղղաթիռը: Բոլորը նորից իջան, կանգնեցին: Սկզբից կարծեցին, թե ինչ-որ կրակոց է եղել, բայց ոչ մի այդպիսի բան չէր եղել: Որոշեցին այդ ուղղաթիռը թողնել: Բայց մինչև թողնելը մուտք ուղղաթիռի ներսը, կրակեցին, ուղղաթիռից սարքեցին մնացուղաչարդվածք, ջարդեցին, փշրեցին: Դիմեցի Կոզերևին, ասացի. «Անդրեյ Վլադիմիրովիչ, լավ, հիմա եղել՝ եղել է, թող մնա, ինչո՞ւ եք այդպես անում, ինչո՞ւ եք մեր գործը բարդացնում, - վերջիվերջո, Խորհրդային Միության բանակը մեզ ոչինչ չի թողել, մենք էլ ենք չէ՞ Խորհրդային Միությանը ինչ-որ օգուտ տվել, մենք էլ ինչ-որ բան ունենք ստանալու: Պաշտոնապես չեք տվել, դեպք է, եղել է, թող մնա»: Բայց՝ չէ, կրակեցին, ջարդեցին, ոչնչացրին այդ ուղղաթիռը, նոր միայն թռան գնացին: Թվում է նկատի ունենին, որ ասել էին՝ կրակել են, որովհետև, իսկապես, կրակոց չի եղել: Հետագայում, երբ ես նրա հետ հանդիպեցի Մոսկվայում, նրան հիշեցրի, որ այդպիսի հայտարարություն են արել ու դա շատ վատ է ընկալվել մերոնց կողմից, որովհետև Ղարաբաղի ոչ մի զինվոր, ոչ մի հրամանատար չի կրակել ռուսական ուղղաթիռի վրա, մանավանդ որ այդ ուղղաթիռից չեն կրակել մեզ վրա, այլ, ընդհակառակը, եկել էր, որ միջնորդություն անի, օգնի և այլն: Բայց այդ երկու մեքենան մինչև հիմա անհայտ պես հիշվում է, որ ԳԽ-ն ընդամենը երկու մեքենա ուներ, երկուսն էլ այդ երեք կիլոմետր ճանապարհի վրա փչացան:

1991 թվականի հունիսին «Կոլցո» օպերացիան թափ էր առել Ղարաբաղով մեկ: Ղարաբաղից պատվիրակություն գնաց Մոսկվա՝ հանդիպելու կարևոր դեմքերի հետ, որ խնդրեն դադարեցնել այդ, բառիս բուն իմաստով, ջարդերը, կոտորածները գյուղերի և բնակչության: Ես էլ էի այդ պատվիրակության մեջ: Պատվիրակությունը ղեկավարում էր Պողոսյան Հենրիկը: Հանդիպեցինք ՊՆ նախարար Յազովի, ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղար Լուկյանովի հետ:

Բ.Կ.- *Գենրիխ Անդրեևիչը ինչ էր իրեն պահում, ինչ էր կողմնորոշվում:*

Լ.Մ.-Ծ.- Շատ վատ: Նախ, մինչև գալը մեզ այստեղ ընդունեց Լևոն Տեր-Պետրոսյանը և բավական լուրջ ձևով հանձնարարեց. «Գիտեք, կա դիվանագիտական արձանագրություն, ձեր ղեկավարը Պողոսյանն է՝ Գենրիխ Անդրեևիչը, նա խոսում է, դուք պետք է լռեք»: Մենք բոլորս պետք է միայն ֆոն ստեղծեինք նրա ասածի վրա: Լավ, եթե արձանագրությունը դա է պահանջում... մենք էլ գիտեինք այդ արձանագրության մասին: Ցավը նրանումն էր, որ ոչ Լևոն Տեր-Պետրոսյանը ասաց մեզ, թե ինչ պիտի ասվի... Փաստորեն, մենք գնում ենք այնտեղ՝ նպատակ ունենալով ինչ-որ ձևով դադարեցնել այդ ջարդերը, բայց ինչ ձևով, մենք չենք խորհրդակցում: Ասեմ, որ այդ հիվանդությունը՝ չպլանավորված, չնախաձրագրված ձևը, մինչև այսօր էլ մեզ մոտ կա: Եկանք հասանք Մոսկվա: Մեր առաջին հանդիպումը, եթե չեմ սխալվում, Լուկյանովի հետ էր, որը շատ սառն ընդունեց: Բայց ճառը, որ ասաց Գենրիխ Անդրեևիչը... Ամբողջ ճառի բովանդակությունը մոտավորապես սա էր, հիմա բառացի, իհարկե, չեմ հիշում. «Մենք ձեզ շատ ենք խնդրում, մենք աղաչում ենք ձեզ, կարգադրեք, որ դադարեցվեն ջարդերը: Մենք պատրաստ ենք մեզ Ադրբեջանում մշակութային ինքնավարության կարգավիճակով, միայն թե դա դադարեցրեք: Մենք ձեր բոլոր պահանջներին, պայմաններին համաձայն ենք»: Իրիկունը հյուրանոցում կռիվ սկսվեց իմ և Պողոսյանի միջև: Ես ասացի. «Այս ինչ է կատարվում, եթե մենք պիտի խնդրենք, կարող էինք այնտեղ էլ խնդրել, աղաչում ենք, լացում ենք...»:

Բ.Կ.- *Թուրքին խնդրենք, նա կգա, կկանգնեցնի ամեն ինչը:*

Լ.Մ.-Ծ.- Ամեն ինչ կաներ, կասեր. «Ներողություն ենք խնդրում մեր կատարածի համար»: Դրանից հետո ինձ ոչ մի հանդիպման չէին տանում: Նրանք հանդիպեցին Յազովի, Գեորգի Խոսրովիչ Շահնազարովի հետ, չգիտես ինչու՝ Վոլսկու հետ հանդիպեցին: Վոլսկին այդ ժամանակ ինչ-որ բան որոշելու համար այն թափը չուներ: Հերթական հանդիպումը պետք է լիներ Պուգոյի հետ, որը Խորհրդային Միության ՆԳ նախարարն էր: Գնացինք Պուգոյի հետ հանդիպելու, ես էլ գնացի այդ հանդիպմանը, փոշմանել էին երևի: ՆԳ նախարարության շենքը բարձրահարկ կառույց էր, տասնմեկերորդ կամ տասներկուերորդ հարկում էր նստում նախարարը: Մտանք, երկու գեներալներ կային ու ինքը՝ Պուգոն: Բոլորին ձեռքով բարևեցինք, նստեցինք: Պուգոն ասաց. «Ես ձեզ լսում եմ»: Գենրիխ Անդրեևիչը նույն ճառն սկսեց ասել, բայց այս անգամ ձևքերը շատ ավելի էին դողում. «Մենք ձեզ աղաչում ենք, - հենց այս բառերով, - ձեր ներքին զորքերը...» և այլն: Իմ դիմաց նստած էր Շատալինը, հետո նստած էր Պուգոն, հետո՝ գեներալ Ստարիկովը: Գենրիխ Անդրեևիչը խոսում է, Պուգոն ինչ-որ բան է ձեռքին խաղացնում, գրիչ

Էլ. ինչ էր։ Ու այնպան տհաճ էր այդ երեսյթը։ Պուգոն գրիչով է խաղում, գլուխն էլ չի բարձրացնում։ Մեր ցուցակն էլ նրա առաջ դրած էր։ Գենրիխ Անդրեևիչը մոտ յոթ-ութ բոպն ճառ ասաց։ Երբ վերջացրեց, Պուգոն ասաց.

- Все?

- Да.

- Спасибо, что проинформировали.

Վերջ, հանդիպումը դրանով պիտի վերջանար։ Ջահել էի, տեղիցս թռա, ասացի. «Թույլ տվեք...»։ Գենրիխ Անդրեևիչը սիրաշակիցս քաշեց։ Ասացի. «Генрих Андреевич, вы меня линдчак порвете»։ Ժպտաց Պուգոն, նայեց ցուցակին, ազգանունների հերթականությունից հասկացավ, որ Լևոն Հրանտովիչը ես եմ, ասաց. «Говорите, Левон Грантович»։ Ու ես սկսեցի, անկեղծ ասած, մի քիչ վախեցած. վերջիվերջո, գիտեմ՝ որտեղ եմ գտնվում։ Ասացի.

- Борис Карлович, я принадлежу к тем людям, которых вы называете неизвестные лицы армянской национальности. Я из тех, кто стреляет и будет продолжать стрелять в любого, независимо от цвета волос, кто с оружием в руках пойдет на мою землю. Я уполномочен моими друзьями передать вам, что мы научим стрелять своих жен, детей, соседей, друзей. Мы обьявляем вам войну.

- Мне?

- Вам, любому, кто придет к нам, если вы придете, и вам.

- Хорошо.

- Я прекрасно понимаю, что я могу не суметь теперь после всего этого выехать из Москвы, тем не менее, на одним будет меньше, но таких, как я, там более, чем достаточно. Вам так просто все это не сойдется.

Լավ չէ ասելը, բայց դեռ ճառս չվերջացրած՝ ես մնում եմ մենակ, մեր պատվիրակությունը ցնդում է։ Փաստորեն, ճառի վերջը մենակ եմ ասել։ Դա էլ է ինձ վատ վիճակում դնում, որովհետև... Ես չեմ ասում, որ ես կարող եմ ամեն ինչ անել, պահը շատ ծանր էր։ Բայց այդ էլ ասեմ, որ իմ ճառի կեսից բոլորը ոտքի կանգնած էին՝ և նրանք, և մենք, և դա հարմար պահ էր դուրս գալու համար։ Այնպես չէր, որ նրանք նստած էին, մերոնք վեր կացան փախան։ Ինձ մոտեցավ Պուգոն, ասաց.

- А много таких, как вы?

- Хватит, чтобы защитить родину, хватит.

- Ну, ладно, ладно, значит вы меня войну обьявляете?

Արդեն խրտնած ձի ես։ Ասացի.

- Да, мы вам обьявляем войну.

- Успехов вам.

Ասաց ու ձեռքը պարզեց։ Նրա ձեռքը սեղմեցի։ Ստարիկովը ձեռքը պարզեց, սեղմեցի, Շատալինը ձեռքը պարզեց, ասացի. «Ես ձեր ձեռքը չեմ սեղմի, ձեր ձեռքը թաթախված է հայկական արյունով, մինչև այն չմաքրվի, ես ձեզ իմ ձեռքը չեմ պարգևի»։ Գետաշենի ժամանակ նա է եղել։ Դուրս եմ գալիս, ու ինձ չեն ասում. «Մնա, կալանավորված ես, ձերբակալված ես», բան չեն ասում։ Դուրս եմ եկել, մարդ չկա, մենակ եմ։ Վերելակը կանչեցի, իջա, էլի մարդ չկա։ Ետ եմ նայում, կարծես թե հետևող չկա։ Տաքսի կանգնեցրի, նստեցի։ Աջ ու ձախ քշել եմ տալիս, անընդհատ ուզում եմ իմանալ՝ հետևող կա։ Ոչ ոք չէր հետևում։ Եկա հյուրանոց, ինձ ասացին, որ ես այլևս ոչ մի տեղ չեմ գնալու, վերջ։ Ես ասացի. «Ես էլ գնալու տեղ չունեմ, բացի Ղարաբաղից, ես արդեն գնում եմ Ղարաբաղ»։ Կամ այդ, կամ հաջորդ գիշերը թռա եկա Երևան, հետո գնացի Ղարաբաղ։ Մի քանի օրից նորից ինչ-որ գործով եկա Երևան, արդեն մոտ մեկ ամիս անցել էր այդ դեպքերից, վերադառնալիս իմացա, որ Հաթերքում իբր «Փառանձեմի» գունդն է, որը, իհարկե, չկար, իրա կանում մեր տղերքն էին արել։ Ես թռա եկա Հաթերք։ Բավական շատ մարդ էր հավաքված այնտեղ՝ Մոսկվայից գրողներ, լրագրողներ, Վազգեն Սարգսյանն էր, Սերժ Սարգսյանն էր։ Այնպես ստացվեց, որ ես բանակցություններին մասնակցեցի։ Ես ռազմական հագուստով գնացի։ Ստարիկովն էր եկել։ Երբ ես եկա, Ստարիկովին այդտեղ հանդիպեցի, նա խառնվեց, ասաց. «Լևոն Հրանտովիչ, ես չեմ հասկանում, մեկ ինտելիգենտ մարդ ես, մեկ էլ՝ անթրաշ, անպարկ։ Այս ինչ է, տեսքդ»։ Ասացի. «Ես ձեզ զգուշացրել էի»։ Ասաց. «Հա, դուք ձեր խոսքը պահել եք»։ Ինձ համար բարոյական բավականություն էր նրան այդտեղ հանդիպելը՝ մոտ մեկ ամիս առաջ Մոսկվայում նրան այդ ամենը ասելուց հետո։ Դեռ Արթուրը կար։ Դա մեր առաջին պաշտոնական դիվանագիտական հանդիպումն էր։ ԵԱՀԿ-ի, այն ժամանակ՝ СБСЕ էր կոչվում, պատվիրակությունն էր եկել, որը գլխավորում էր Չեխոսլովակիայի Արտաքին գործե-

րի նախարար Իրժի Դինսթբիրը: Ասում են, նա իր գրքում այդ հանդիպման մասին գրել է: Ինչումն էր նրանց նպատակը. մեզ համոզել, որ մենք մեր համաձայնությունը տանք СБСЕ-ի որոշմանը: Միայն այդ դեպքում մենք կարող էինք գնալ Հռոմ կամ Մինսկ, որտեղ կլիներ նիստը, մնալ ընդունարանում, նստում կլիներ նիստը, հետո նրանք դուրս են գալիս և մեզ հայտարարում են իրենց վճիռը: Եվ մենք պետք է համաձայնություն տանք այդ վճռին: Ճիշտն ասած, քանի որ դա առաջին հանդիպումն էր և՛ Արթուր Մկրտչյանի, և՛ իմ, և՛ բոլորի համար, շատ անկազմակերպ եղավ: Հենց մենք նստեցինք, որ պիտի խոսենք, նրանց պատվիրակությունը 10-12 հոգի էին, ինչքան պատգամավոր կար, բոլորը լցվեցին այդ սենյակ: Ու ամենքը մի տեղից գոռում են՝ «Это не хорошо, լավ չէ...»: Մի քանի անգամ շուտ եկա, որ. «Լռեք, չի կարելի այսպես, վերջիվերջո «շայկա» չենք այստեղ հավաքված»: Խոսում էր Արթուրը: Ու Դինսթբիրը ամեն անգամ ասում է. «Գիտեք ինչ, ես հասկանում եմ ձեր հայրենասիրական ձգտումները, բայց դուք էլ պետք է հասկանաք: Ի վերջո, Եվրոպան դարերով պետություն է ունեցել: Դուք դեռ պետություն չեք, շատ բան չեք հասկանում, օրենքներ չգիտեք: Դուք վատահեք մեր հավաքակազմ իսկերին»,- ասածի իմաստը դրանումն էր: Եվ, կարծես թե, ասածի մեջ ինչ որ տրամաբանություն երևում էր: Մենք նախօրոք գիտեինք, արդեն որոշված էր մեր մեջ, որ մենք պետք է մերժենք: Բայց մերժելը դառնում էր դժվար, որովհետև մենք, անկեղծ ասած, գիտելիքներով, փորձով այն ժամանակ այնքան զինված չէինք: Նստած էի, հանկարծ, ասես վերևից, հիշեցի. 1939 թվականին Եվրոպայի հզոր պետությունները՝ Գերմանիան, Անգլիան, Ֆրանսիան, հավաքվեցին և վճռեցին Չեխոսլովակիայի ճակատագիրը՝ առանց Չեխոսլովակիայի, որը պատմության մեջ մտել է՝ որպես «Մյունխենյան պայմանագիր» կամ «Մյունխենյան դավադրություն», երկու ձևով էլ ասում են, երկրորդը ավելի ճիշտ է: Արդյունքում Չեխոսլովակիան մոտ երկու միլիոն փախստական ունեցավ, մոտ մեկուկես միլիոն զոհ ունեցավ և ահագին տարածքներ կորցրեց սկզբից, հետո՝ ամբողջ Չեխոսլովակիան կորցրեց: Քանի որ Մկրտչյան Արթուրը շատ լավ պատմաբան էր, ես, համոզված լինելով, որ նա ինձ կհասկանա, և, իսկապես, նա ինձ հասկացել է, թղթի վրա գրեցի. «Արթուր, Մյունխեն, 1939 թիվ, Չեխոսլովակիա, Դինսթբիր»: Արթուրը կարդաց, շուտ եկավ, կողքը նստած էի, ինձ նայեց, ասաց. «Դու

սուս, նախագահն ես»: Մեկ էլ շուտ եկավ, ասաց. «Պարոն Դինսթբիր, մեր պարոն Մելիք-Շահնազարյանը հիմա ձեզ կպատասխանի»: Ու ես ոչնչի շատ հուզիչ ճառով մտա, ասացի. «Մենք բոլորս էլ պատմություն գիտենք, ինչպես և դուք»: «Մյունխենյան դավադրության» արդյունքներ պատմեցի՝ զոհերի, փախստականների մասին, Սուդետներ լեռների կորցնելը, հետո՝ ամբողջ Չեխոսլովակիայի, ի վերջո՝ պետականությունը կորցնելը, և ասացի. «Հիմա այս պահին ինձ համար անհասկանալի է, որ Չեխոսլովակիայի ԱԳ նախարարը,- այն ժամանակ Չեխոսլովակիան դեռ բաժանված չէր, անկեղծ ասած, ես չգիտեի էլ, թե նա ազգությամբ չեխ է, թե սլովակ, - գալիս է և մեզ առաջարկում է այն դաժան ճակատագիրը, որը իր երկրի հետ է եղել: Ո՞նց կարելի է՝ մենք նստենք, դուք մեր ճակատագիրը որոշեք: Լավ է, որ գոնե այդ մոտեցումն է, այն ժամանակ ձեզ չեն էլ հրավիրել: Մենք չենք կարող համաձայնվել, հատկապես, որ այդ առաջարկը անում է Չեխոսլովակիայի արտգործ նախարարը»: Հիմա էլ չգիտեմ՝ ինչ է եղել, այդ մարդը հարազատներ էր կորցրել այդ պատերազմում, բայց նա, իսկապես, հուզվեց, ասաց. «Դուք ճիշտ եք ասում: Մենք ձեր միտքը կհասցնենք հանձնաժողովին, բայց ես ուզում եմ ասել, որ երևի արդեն ստիպված եմ պաշտպանել ձեր տեսակետը»: Այդ պատասխանը մեզ համար, ասես, սառը ցնցուղ էր, շատ անսպասելի էր: Մարդը շատ անձնական ընդունեց, անձնական զորձոնը ներգործեց: Էլի եմ ասում, ես չգիտեմ, թե ինչ խնդիրներ կային նրա հոգու խորքում՝ հայրենասիրական, թե անձնական, ընտանեկան, բայց, ինչպես ասում են, попал в точку: Հետո, երբ նրանք գնացին, լրագրողները «հարձակվեցին» մեզ վրա: Չեխոսլովակիայից լրագրող կար, ինձ ասաց. «Կարո՞ղ եք նորից կրկնել այդ նախադասությունը», ասացի. «Իմաստը կարող եմ, բառացի՝ չեմ կարող»: Հարցրեց. «Բա դուք որտեղից գիտեք»: Ասացի. «Մենք կայսրության քաղաքացի ենք եղել, փայլուն կրթություն ենք ստացել ժամանակին: Հիմա է, որ դուք մեզ այս վիճակում եք տեսնում՝ դպրոցները փակ»: Չեխոսլովակիայի թերթերում գրեցին: Մի աղջիկ կար, որ Չեխոսլովակիայում էր սովորում, գնում-գալիս էր, ասաց, որ Դինսթբիրը իր հուշերի գրքում այդ դեպքը գրել է:

Բ.Կ.- *Այդ աղջիկը՝ Միլենան, թարգմանիչ էր:*

Լ.Մ.-Շ.- Էլի հումորային մի դեպք պատմեմ: ԱՄՆ-ում շատ լարված գրաֆիկ ունեի, ամեն օր հանդիպում էի չորս-հինգ հոգի կոնգրեսմեննե-

ի հետ, երեք-չորս հոգի սենատորների հետ: Գիշերները գալիս էի, հաջորդ օրը ում հետ որ պետք է հանդիպեի, Հայ Դատի հանձնաժողովից Արամ Ղամբարյանը ինձ տալիս էր նրանց բնութագրությունները՝ նրը ինչպես են քվեարկել մեր հարցերին, ընդհանրապես, նրանց բնավորությունը: Ինչ կարողանում էին, տղերքը հավաքում էին: Քանի որ այդ ամենը գրած էր հայերենով, առավել ևս՝ արևմտյան հայերենով, ամբողջ գիշեր ես չարչարվելով կարդում էի, որ հիշեմ, վաղվա հանդիպման ժամանակ օգտվեմ դրանից: Հիմնականում հանդիպումները բավականին լավ էին գնում: Կոնգրեսմեն Բիլլրեյ կար, որը Անվտանգության հանձնաժողովի նախագահն էր: Ընկերները ասացին, որ նրան հանդիպել պետք չէ, որովհետև նա շատ հակահայկական է տրամադրված: Ես էլ ասում էի, որ հակառակը, նրանց հետ է պետք հանդիպել: Նրանց, ովքեր արդեն մեզ հետ են, կարող ես մի նվերով, մի խաչքարով... տասը բոպեն բավական է: Բայց նրանց հետ պետք է հանդիպեմ: Գնացինք հանդիպելու: Այդ մարդն ասաց, որ ինձ կտրամադրի 15 բոպե: Մենք պայմանավորված ժամին մտանք: Քարտուղարուհին շատ սևամորթ, կինոյի հերոսուհու պես զարդարված կին էր: Ասաց. «Պարոն կոնգրեսմենը հիմա կգա, խնդրում եմ նստեք»: Նստեցինք: Մեկ էլ Բիլլրեյը մտավ՝ ձեռքերը սրբելով, թևերը բարձրացրած, փողկապը չկար, կուրծքը բաց: Մտավ, սրբիչը գցեց, ասաց. «Բարև ձեզ»: Մենք, բնականաբար, ոտքի կանգնեցինք, երբ նա մտավ, կոլտուրայի հարց է:

- Բարև ձեզ:

- Բարև ձեզ:

- Նստեք, լսում եմ ձեզ:

Ես վիրավորվեցի, ասացի. «Պարոն կոնգրեսմեն, շատ շնորհակալ եմ, որ ժամանակ գտար՝ դիմավորելու: Ես եկա հարգանքներիս մասին ձեզ ասելու, հիմա թույլ տվեք՝ մենք գնանք: Տեսանք, ուրախացանք, շատ լավ էր, ցտեսություն ձեզ»: Ասացի, շուտ եկա, գնացի: Իմ տեղում ստեղծված շքեղությունը, ամեն հանդիպման ժամանակ նորն էր ստեղծվում, նեղիցս դուրս կեան ու կպան ինձ. «Էս ինչ արեցիր, առանց էլ վատ էր տրամադրված, հիմա թշնամի դարձավ»: Ասացի. «Ես Լևոն Մելիք-Շահնազարյանը չեմ, ես ներկայացնում եմ Ղարաբաղը: Ուզում է Քլինտոնը լինի, Բուշը լինի, ով ուզում է լինի, ես չեմ կարող թույլ տալ, որ այդքան անհարգալից վերաբերվեն այն պետությանը, որը ես ներկայացնում եմ»: Երեկոյան զանգեց ինքը: Մեր տղաների միջոցով էր հեռախոսահամարը իմացել: Խոսեց Հայ Դատի հանձնաժողովի անդամներից մեկի հետ, ասաց, որ ուզում է հանդիպել ինձ հարմար ժամին, ինձ հարմար վայրում: Ես ասացի, որ մենք կգանք նրա մոտ, բայց վաղը չեմ կարող, իսկապես, զբաղված էի, մյուս օրվա համար պայմանավորվեցի: Գնացինք: Ներողություն խնդրեց իր պահվածքի համար: Բարևեցինք: Ասաց. «Եթե կարելի է, գնանք այն սենյակ»: Ես երկու անգամ նման սենյակում եղել էի՝ комната без прослушки՝ ձայնամեկուսացնող սարքերով սարքած: Նստեցինք, խոսեցինք մոտ երկու ժամ: Անգամ նա ասաց. «Դուք ձեր օգնականներին ասեք, թող գրեն ձեր նպատակները, ես ձեզ հետ եմ լինելու: Անկեղծ ասած, ես մի քիչ այլ կերպ էի պատկերացնում պրոսբաղցիներին»: Ես էլ ասացի. «Ես ծնվել, մեծացել, ամբողջ կյանքս ապրել եմ Ղարաբաղում», ճար չկար, այդպես պետք է ասեի: Շատ ջերմ ընդունեց: Վերջում տարավ, պոտեցրեց նախագահների արձանների մոտ:

- Այս նախագահին շատ եմ սիրում, պարոն Մելիք-Շահնազարյան, եկեք միասին այս արձանի մոտ նկարվենք:

Երևի մոտ հարյուր նկար ունեմ Բիլլրեյի հետ: Տարավ սրճարան, ալերգիա ուզեցին վճարել, թույլ չտվեց, ասաց. «Դուք իմ հյուրերն եք»: Մյուս օրը նրան ջերմ շնորհակալական նամակ ուղարկեցի: Ուզում եմ ասել, որ գնալ միայն բարեկամի, հարազատի մոտ, շատ կոպիտ սխալ է:

Բ.Կ.- *Բիսարկն, դա աշխատանք է:*

Լ.Մ.-Ծ.- Եվ մի գրույց չէ, որ ինձ մոտ հաջողվել է նրանց հետ այդ բազմաթիվ հանդիպումների մեջ: Հիմա ես կդժվարանամ ազգանունը հիշել, այն ժամանակ՝ 1994 թվականին, նա տարիքով ամենաերիտասարդ կոնգրեսմենն էր և ինչ-որ բիզնես ուներ, բավական փողատեր էր: Սկսելը ունեմ, դե, նրանք շատ են սիրում նկարվել: Այդ մարդը եկավ:

- Բարև ձեզ:

- Բարև ձեզ:

- Ինչով Ղարաբաղը կարող է օգտակար լինել Ամերիկային:

Մի քիչ ապշեցի: Ասացի.

- Գիտեք, եկել ենք, որ խոսենք դրա մասին:

- Բայց ինչ օգտակար հանածոներ ունի Ղարաբաղը:

- Գունավոր, կիսաթանկարժեք քարեր ունի...,- և այլն, ամեն ինչը չափազանցնելով, որովհետև չեմ հասկանում այդ մարդուն: Նա ուրիշ գլուխ բիզնեսմեն էր և կատարյալ անգրագետ քաղաքականության մեջ: Վերջում ասաց.

- Ծով ունենք նավահանգիստներով:

Կիսաթանկարժեք քարերը արդեն տանում ենք Ամերիկա: Ասացի.

- Դեռ չունենք:

- Ո՞նց չունեք:

- Գիտեք, մենք պատերազմում գտնվող երկիր ենք, սահմանները դեռ հստակեցված չեն, պատերազմը դեռ շարունակվում է:

- Բա ո՞ւմ հետ եք կռվում:

- Ադրբեջանի հետ ենք կռվում, մենք դեռ չենք լուծել այդ հարցը:

- Հա : Բայց Ադրբեջանի հետ Հայաստանն է կռվում, Ղարաբաղն էլ է կռվում,- պատգամավոր է խոսում: Այդպիսի անեկդոտի նման պատմություն էր:

Իսկ երբ պետք է հանդիպեի Ջորջ Քենեդիի՝ Ջոն Քենեդիի եղբոր որդու հետ (հետո նա մահացավ Ավստրիայում), ինձ ասացին, որ այդ մարդը շատ կատակասեր մարդ է, բայց շատ խորը կատակներ պետք չէ, կարող է չհասկանա: Ամերիկյան տիպի կատակներ են պետք: Եթե կարողանաս հաջող կատակ անել, կսիրաշահես նրան, կդառնաս նրա հարազատը: Բայց դժվար խնդիր է, նախապատրաստվել անհնար է: Մտքումս անընդհատ դա է պտտվում՝ ինչ կատակ անեմ, որ Քենեդին հավանի: Նստած ենք ցածր սեղանի շուրջ: Նրա ընդունարանը առաջին հարկում էր, դրսում ձյուն էր: Մարտ ամիսն էր, բայց ձյուն էր եկել: Ասում է.

- Տեսնում եք, մեզ մոտ էլ ձեր պես ցուրտ է:

- У нас холодно, но горячо.

Թարգմանիչը չհասկացավ. «Ի՞նչ է ասում՝ և՛ ցուրտ է, և՛ տաք է»: Ասում է. «Դե, կրքերը տաքացած են, շիկացած են, բայց եղանակը ցուրտ է»: Քենեդին տեղից թռավ, գնաց գրեց այդ կատակը: Ես մականունը «ֆուտբոլիստ» էի դրել: Երբ նա տեղից թռավ, բացվեց, թուղթը քաշեց, շքեղ հրատարակությամբ գիրք տեսա՝ «Архитектура Азербайджана». Մինչև նա գրում էր, բացեցի առաջին էջը: Ամերիկայում Ադրբեջանի դեսպանը, որ մինչև հիմա այնտեղ դեսպան է, նոր պետք է վերադառնա,

իր ձեռքով գրել էր. «Մեծարգո պարոն Քենեդիին»: Քենեդին ետ եկավ, ասաց.

- Լավ գիրք է, չէ:

- Հա, բայց նվիրողը անգրագետ է, չգիտեմ ով է, բայց անգրագետ է:

- Ինչո՞ւ:

- Ինձ մանկությունից սովորեցրել են, որ գիրքը մակագրելու և նվիրելու իրավունք ունի միայն գրքի հեղինակը: Իսկ այստեղ նայում եմ՝ գրքի հեղինակն ուրիշ է, ստորագրողն ուրիշ է:

- Ա՛, ես նրան կասեմ, - բայց չասաց՝ ով է:

- Լավ, կասես:

Նստած ենք, էլի մտածում եմ. «Էս շան որդու հետ ինչ կատակ անեմ, որ տպավորվի»: Մի կատակ էլ էի արել, չեմ հիշում, կարևորը վերջին կատակն է, որ, իսկապես, շատ հաջող էր ստացվել: Երբ հանդիպումը վերջանում էր, ընդունված է, պետք է կանգնես, ժպտաս, նկարվես: Ես էլ այդ պահին շատ վատ եմ զգում, ավելի ճիշտ՝ անհարմար եմ զգում: Ու երբ նա ասաց.

- Դե հիմա եկեք նկարվենք:

- Նկարվենք, իհարկե, բայց այնքան եք ամերիկացիներդ սիրում նկարվել, որ... ես չեմ դիմանում այդ ամենին:

- Է՛, եթե իմանաք՝ ճապոնացիները ինչքան են սիրում նկարվել:

- Ճապոնացիների հետ ես էլ եմ սիրում նկարվել:

- Ինչո՞ւ:

- Նրանց կողքին ես ինձ շատ մեծ եմ զգում:

Քենեդին ինձնից համարյա մի գլուխ բարձր էր: Բարձր ծիծաղեց, փախավ, բլոկնոտը բացեց, գրեց: Ու եկավ արդեն ոչ թե նկարվելու, այլ փաթաթվեց: Ու հենց այդ պահին նկարեցին: Ասում է. «Ես ձեր պես սրամիտ մարդու դեռ չեմ հանդիպել»: Իսկապես, սկսեց մեզ հետ բարեկամություն անել:

Մի հրեա սենատոր կար, նրա հետ պետք է հանդիպեինք Նյու Յորքում: Լուսահոգի Մեսրոպ Աշճյանն ասաց. «Լևոն ջան, այդ սենատորը շատ փառասեր, նյութապաշտ մարդ է: Արի մի՛ գնա նրա մոտ, արի դու նրան հրավիրիր ինձ մոտ: Մեկ է, նա ապուշի մեկն է, ինքը չգիտի՝ ուր է գալիս: Մենք նրան մեքենաներով կբերենք ու կասենք, որ սա քո աշխատանքային սենյակն է»: Դա մեր Արևելյան նահանգների թեմի առաջ-

նորդարանի նստավայրն էր: Բերեցինք, ոսկեգույն վազաներով զարդարեցին, գորգերը փռեցին, ինչքան թանկարժեք իրեր ուներ, Մեսրոպ Աշճյանը բերեց կախեց, գնացինք այդ հրեային բերելու: Հրեան մտել է այդ սենյակ, ամեն ինչ մոռացել, չի կարողանում խոսել: Ասում եմ. «Սրբազան Հայր, այս ինչ արեցիր, անջատվել է»: Ինձ հետ խոսում է. «Հա, այո, իհարկե...» ու նայում է վազային, երևի մտքում գնահատում, թե ինչ արժե: Նույնիսկ նկարներում էլ, մեր հայերն էլ շատ էին նկարել, այդ մարդը ոչ մի տեղ ուղիղ չի նայում, աչքերը կամ գորգերի վրա են, որ երևում էր, որ շատ հին են և շատ լավ պահպանված, վազաների վրա էր: Ստիպված եղա մի քանի օր հետո ել, որ կարիք կա ևս մեկ անգամ հանդիպելու: Ու էլի հանդիպեցի նրա հետ, որ արդեն նորմալ խոսենք:

Պատմում է ԻՎԱՆ ՂՈՒԿԱՍՈՎԸ (1992-94 թթ. ՀՀ բանակի գլխավոր շտաբի հետախուզության վարչության պետ, Հայ-կազակական Կոշի շտաբի պետ, գեներալ-մայոր), Մոսկվա, 13.12.2006 թ.

Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար, ապա և երկրի նախագահ Այազ Մութալիբովը հեռախոսով ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ Արթուր Մկրտչյանի հետ իմ ներկայությամբ խոսելիս հայտարարեց. «Ես չեմ կարողանում այստեղ տիրել ամբողջ իշխանությամբ, քանի որ ինձ վրա է տվել Ժողովրդական ճակատը»: 1992 թ. փետրվարի կեսին Ա.Մութալիբովը կրկին զանգել է Ա. Մկրտչյանին և ասել. «Թույլ տվեք, որ մենք Քարինտակ գյուղում հավաքենք մեր դիակները»: Դա Նոր տարվա շեմին էր, երբ նրանք երդվել էին վերցնել գյուղը, իսկ արդյունքում կորցրել էին իրենց տասնյակ զինվորների: Արթուրը պատասխանեց. «Մենք այդ դիակները կվերադարձնենք, մի՛ անհանգստացեք, բայց դուք ձերոնց հաղորդեք, որ դադարեն Շուշիից, մյուս ադրբեջանաբնակ բնակավայրերից «Ալազանով», «Կատյուշայով», հրանոթներով, տանկերով ռմբակոծել Ստեփանակերտը»: Մութալիբովը պատասխանեց. «Ես չեմ կարող խելքի բերել Ժողովրդական ճակատին: Այն ծարավ է իշխանության, ու աստիճանաբար նվաճում է այն ու վարկաբեկում երկրի նախագահին»: Ժողճակատը հանդես էր գալիս օրինական ընտրված նախագահի դեմ: Այն ուզում էր ակտիվ պատերազմ վարել, ու նա դա ստացավ: Երբ նրանք ակտիվորեն ռմբակոծում էին Ստեփանակերտը, մյուս բնակավայրերը, Գորիսը, Հայաստանի և ԼՂՀ իշխանություններին ոչինչ չէր մնում անել, բացի Ադրբեջանի կող-

մից ագրեսիվ գործողություններին դիմադրելուց, իր հողը պաշտպանելուց: Այդ պայմաններում իրականացվեց Մալիբեյլիի գործողությունը: Դա 1992 թ. փետրվարի11-12-ին էր: Ես այդ ժամանակ այնտեղ էի և գեներալ Դալիբալթայանի հետ մնում էի հյուրանոցում:

Բ.Կ.- *Պատմեք ձեր մասին:*

Ի.Ղ.- Ես ծնվել ու մեծացել եմ «ինտերնացիոնալ» քաղաք Բաքվում, որտեղ որևէ դիսկրիմինացիա չեմ զգացել: Այն ավանում, որտեղ ապրում էի, հարևանները և՛ հայեր էին, և՛ ադրբեջանցիներ, և՛ լեզգիներ, ռուսներ, գերմանացիներ, ու ապրում էինք խաղաղ, միասնական ընտանիքի պես:

Բ.Կ.- *Որտեղ եք սովորել:*

Ի.Ղ.- Դպրոցն ավարտել եմ Բաքվում, հետո ընդունվել եմ Խարկովի գվարդիական տանկային ուսումնարանը, ծառայել եմ Նախիջևանում որպես տանկային դասակի հրամանատար:

Պատմում է ՆԱՐԻՆԵ ԱՂԱԲԱԼՅԱՆԸ (Արցախի հեռուստատեսության մեկնաբան, 2009 թ. ԼՂՀ Մշակույթի նախարար), Ստեփանակերտ, 05.12.2005 թ.

Ինձ բախտ է վիճակվել լինելու Արցախի հեռուստատեսության առաջին հաղորդավարը և առաջինը ի լուր աշխարհի հայտարարելու՝ «Եթերում Արցախի հեռուստատեսությունն է»: 1988 թ. դա մեծ իրադարձություն էր, այսօրվա պես հիշում եմ այդ օրը. հունիսի 1-ին շարժման զարթոնքի ու վերելքի օրերին ժողովուրդը իր ավանդական երթով հասել էր հուշահամալիր, և հերթական միտինգն էր այնտեղ: Ես էլ՝ որպես ժողովրդի մի մասնիկ, հուշահամալիրում էի: Կարծեմ Ժաննա Գալստյանն էր, որ ելույթի վերջում հայտարարեց՝ «Ժողովուրդ, մենք այսօր մի քիչ շուտ ենք ավարտում, վերադարձեք ձեր տները և միացրեք հեռուստացույցը, այսօրվանից մենք կունենանք մեր սեփական՝ հայերեն հաղորդումները»: Ժողովուրդը մեծ ոգևորությամբ ընդունեց այդ լուրը, բոլորը ցրվելով՝ շտապում էին իրենց տները: Իսկ ես եկա ստուդիա, որովհետև ուղիղ եթերում պիտի վարեի առաջին հաղորդումը: Այդ ժամանակ բնականաբար ոչ ոք չէր ճանաչում ինձ, սովորական մի աղջիկ էի: Հաղորդման սկիզբը տեսագրել էինք տատիկ-պապիկի մոտ, իսկ շարունակությունը պիտի ստուդիայում ուղիղ եթերում լիներ: Առաջին հաղորդումը եթեր տվեցինք, և ես սկսեցի՝ «Ուշադրություն, եթերում Արցախի հեռուստատեսությունն է»: Դա իսկապես շատ մեծ իրադարձություն էր, քանի որ շարժման դրդապատճառներից մեկն էլ այն էր, որ զրկված էինք անգամ մայրենի լեզվով հեռուստահաղորդումներ լսելու հնարավորությունից: Քանի որ առաջին հաղորդումն էր, բնականաբար, շատ հուզված էինք: Ես և Ռուդոլֆ Մարտիրոսյանն էինք վարում հաղորդու-

մը, հուզմունքս այնքան մեծ էր, որ չէի կարող հետևել, թե մյուսներն ինչով են զբաղված...

Բ.Կ.- *Ինչպես եղավ, որ քեզ ընդունեցին:*

Ն.Ա.- Ես սովորում էի Մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետի առաջին կուրսում: Չեմ հիշում, թե դասախոսներից ով եկավ, ասաց, որ հեռուստատեսությունից կանչել են: Այդ ժամանակ դեռ հեռուստատեսությունը նոր-նոր էր գործում, թիմ էին հավաքում, որ աշխատանքը սկսեին: Ես ներկայացա հեռուստատեսություն, ինձ մտցրին ստուդիա, նստեցրին տեսախցիկի առաջ և խնդրեցին՝ ինչ-որ բաներ արտասանեմ, ձայնավորներդ արտարերեմ: Նրանք ստուգում էին, ես նույնիսկ չէի էլ հասկանում, թե ինչ է կատարվում: Փորձը ավարտվեց, կանչեցին, ես և Նինա Հայրապետյանն էինք, բայց մեզ առանձին-առանձին կանչեցին: Գլխավոր օպերատորը՝ Գագիկ Սիմոնյանը, նրան «կյաժ» էինք ասում, կանչեց ինձ, ասաց՝ «Դուք անցնում եք մրցույթը, և որպես հաղորդավար՝ մենք ձեզ աշխատանքի ենք վերցնում»: Բայց քանի որ նման ակնկալիքներ չունեի և չէի մտածել այդ ուղղությամբ, ասացի՝ «Գիտեք ինչ, ես չեմ ուզում, ես չեմ պատկերացրել իմ ապագան հեռուստատեսությունում, ես ուզել եմ մանկավարժ դառնալ»: Ասաց՝ «Լավ, չեմ ուզում քո կամքին հակառակված լինել»: Հետո ինձ կանչեց գլխավոր ռեժիսորը, սկսեց համոզել, ասաց՝ «Արի, եթե դուրդ չգա, կթողնես հեռուստատեսությունը, դու միշտ էլ այդ հնարավորությունը կունենաս, հետո կշարունակես աշխատել որպես մանկավարժ, մանավանդ դեռ սովորում ես»: Եվ ես մնացի հեռուստատեսությունում արդեն 17 տարի: Հունիսի 3-ին մի փոքրիկ սյուժե եթեր տվեցինք Սխտորաշենի 2000 ամյա սոսի ծառի մասին: Ես չէի գրել, հեղինակը ես չէի, ինձ ընդամենը տվել էին տեքստը կարդալու: Հիշում եմ, որ շատ հուզմունքով էի կարդացել, նույնպիսի տպավորություն էլ հեռուստադիտողների վրա էի թողել: Այն ժամանակ ինչ-որ եթեր էինք տալիս, ամենը մեզ համար նորություն էր, որիշ աչքերով էինք նայում մեր ամեն մի բարին, ծառին...ամեն ինչը մեզ համար հայտնություն էր: Հիշում եմ նաև մեր եթերային պատերազմները, երբ Շուշիում համարձակ ավազակային «ստուդիա» էին ստեղծել և հեռուստահաղորդումներով անընդհատ փորձում էին խանգարել մեզ, նույն ալիքի վրա եթեր էին տալիս և խափանում մեր հաղորդումները: Նման պայմաններում ժողովուրդը կլանված էր, բաց չէին թողնում ոչ մի հաղորդում, մանավանդ պատերազմի տարիներին

ռազմաճակատից անընդհատ հաղորդումներ էին լինում, դա ոգեշնչում էր մարդկանց:

Շուշին ազատագրվելուց հետո վերսկսվեցին Արցախի հեռուստատեսության ծրագրերը: Շենքը պայթեցրել էին, մենք տեղավորվել էինք Հեռուստառադիո կոմիտեի նախագահ Սողոմոնյանի կաբինետում: Շատ փոքր սենյակ էր, հիշում եմ պատուհաններին դրված ավազի պարկերը՝ ռմբակոծությունից փրկվելու համար, ներքնակներ էին շարած: Այդ փոքրիկ տեղից էինք եթերը վարում՝ հին սարքավորումներով, լամպերով: Պատահել է, որ ուղիղ եթերի ժամանակ լամպը վառվել է, և կայծերից շորս վառվել: Բայց ուղիղ եթերում էի և այդ վիճակից դուրս գալու համար, անմիջապես շորս փոխեցի հակառակ կողմը և շարունակեցի եթերը: Նման դեպքեր շատ էին լինում: Պոլյանիչկոյի ժամանակ կոմիտեից որ գալիս էին, նույնիսկ դիմահարդարը ամեն ինչ անում էր ներքին գայթույթը արտահայտելու համար, ասենք, շատ դիմափոշի էր ցանում, ամեն մեկն ուզում էր անձամբ ինչ-որ բան անել:

Բ.Կ.- *Այն ժամանակ մեծ հոչակ, ճանաչում ունեիր, ինչ էիր վերաբերվում, ժողովուրդը քեզ ինչ էր ընդունում:*

Ն.Ա.- Մինչև եթերը սովորական մարդ էի, գնացի ստուդիա, իսկ հաղորդումից հետո դուրս եկա փողոց, բոլոր անցորդները կանգնեցնում էին, շնորհավորում, արդեն որիշ աչքերով էին նայում, երեխաները ետևիցս կանչում էին՝ «Եթերում է Արցախի հեռուստատեսությունը», իսկ մեծահասակները կանգնեցնում ասում էին՝ «Էս էն «տելեվիզորի աղջիկն է»: Մինչև հիմա էլ շարունակվում է, բայց այն ժամանակ ավելի կարևոր էր, մարդիկ հետևում էին իմ ամեն մի բառին, ապասում էին այդ հաղորդումներին: Հիմա այդ հետաքրքրությունը չկա:

Ամուսնս՝ Էդմոնդ Բարսեղյանի հետ նույն ինստիտուտում էինք սովորում: Առաջին կուրսում, ստորագրահավաքի ժամանակ նրան գրակոչեցին, Խորհրդային բանակում էր ծառայում, բայց մի քանի ամիս հետո փախավ, եկավ: Սկզբում Ռիգայում էր ծառայում, հետո՝ Լենինգրադում: Այնտեղ մի սպա մի հիվանդ զինվորի անընդհատ նեղելիս է եղել, ամուսինս ծեծել է այդ սպային, ու փախել: Այդ ժամանակ դեռ ամուսնացած չէինք: Միայն ինձ էր զանգել, հարազատներին չէր ուզում ասել: Ուզում էր միանգամից անցնել ընդհատակյա գործունեության, գիտեր, որ շարժումը սկսվել է: Այնտեղից նամակներ էր գրում, որ հիմա ինձ մարգարեություն է թվում: Երբ գրում էր շարժման մասին, ասում էի՝

«Դու չգիտես, չես պատկերացնում, դու ինչ կարող ես այդտեղից իմանալ»: Բայց հետաքրքիր հայացքով որ նայում եմ, դրանք կարելի է մարգարեություն համարել: Նա եկավ այն նպատակով, որ միանա ընդհատակյա պայքարին, բայց Խորհրդային Միությունը դեռ կար, ռեժիմն ուրիշ էր, անընդհատ վախենում էի, որ նրան կբռնեն: Զգուշացրի ծնողներին, նրան տարան բանակ: Ավարտելուց հետո գնաց Կալինինգրադ՝ ուսումը շարունակելու: Հենց այստեղ սկսվեցին առաջին ընդվզումները, ու նա թողեց եկավ: Անդամագրվեց Դաշնակցության: Սկզբում Հաղբատի գյուղերը պաշտպանեցին, հետո տեղափոխվեցին Շահումյան, Շահումյանում դա առաջին ջոկատն է եղել, և նա այդ ջոկատում էր: Նրանց ջոկատը Վերին Շեն գյուղում էր: 10 օրը մեկ մեկ-երկու օրով գալիս էին: Մի անգամ թույլություն ունենա ասելու, որ՝ «Հերիք է, հիմա էլ թող ուրիշները գնան...», ասաց՝ «Քեզ չի սազում...» ու գնաց: Նրանից հետո (նրա մահից հետո) երեխան ծնվեց, նույնիսկ չհասցրեց տեսնել: Միշտ ասում էր՝ «Սա իմ վերջին մարտն է, գնամ-գամ, կսպասեմ՝ մինչև երեխան ծնվի»: Այսինքն՝ սպասում էր մինչև Շահումյանում վիճակը լավանա, ասում էր՝ «Եթե մենք Շահումյանը տանք, հաջորդ օրը Մարտակերտն ենք տալու, դրա համար պիտի Շահումյանը պահենք»:

Բ.Կ. *Քանի՞ տարեկան է երեխան:*

Ն.Ա.- Հիմա 14 տարեկան է, նրա անունն է՝ Էդմոնդ Բարսեղյան: Հիմա որ ասում են՝ արի հեռուստատեսություն...Ես ուրիշ գործի անցա սոցիալական պաշտպանության բաժնում: Ինձ որ հարցնում են, թե ինչու չես գալիս հեռուստատեսություն, ասում եմ՝ «Չեմ կարողանա դուրս գալ ուղիղ եթեր, ինձ համար դժվար կլինի»: Բայց հետո համոզեցին: Ես հավատում էի հոգու գոյությանը, այդ ժամանակ կարծես փորձում էի հաղորդակցվել: Գասպարյան Նորիկն էր ինձ անընդհատ ասում՝ «Նորից արի հեռուստատեսություն», ասում էի՝ չէ: Մի օր աշխատանքի էի գնում, մտածում էի խորհուրդ հարցնելով՝ «Եթե ես պիտի գնամ, այ, հիմա գնում եմ աշխատանքի, թող այսօր հանդիպեմ Նորիկին, նորից խոսք բացվի այդ մասին, և ես կգնամ»: Գնացի աշխատանքիս վայրը, պայուսակս կախեցի, ու Նորիկը մտավ: Քրոջ հարցերով էր եկել, քրոջ ամուսինը զոհված էր: Բայց դա ինձ համար նշան եղավ, որ ես պիտի գնամ: Վերադարձա, սկսեցի հաղորդումներ վարել: 1995 թ. ինձ ասացին՝ «Լավ կլինի, որ որպես խմբագիր սկսես աշխատել, ինքդ հաղորդումներ պատրաստես»: 1995 թվականից զբաղվեցի խմբագրական գործունեությամբ:

Բ.Կ.- *Երբ նորից եկար, այդ օրերից ինչ դիպված կարող ես հիշել, ինչ սանրվածք ունեիր, ինչ էր...*

Ն.Ա.- Ես երկար մազեր ունեի, առաջին եթերին այդպես դուրս եկա, երկրորդ, երրորդ անգամներն էլ նույն երկար մազերով էի եթերում (1988թ.), ափսոսում էի կտրել: Բայց ասացին, որ այնուամենայնիվ, մազերս պիտի կտրեմ, ինչ-որ սանրվածքի ձև տամ: Ստիպված հրաժարվեցի իմ մազերից, չորրորդ եթերից արտաքինով լրիվ փոխվել էի, բայց չեմ ափսոսում: Հաղբատի հարցում անընդհատ նոր բաներ էինք մտածում: Նույնիսկ ինչ-որ սվիտեր, որի վրա գրված էր, արդեն դա եթերի համար հարմար չէր: Ստիպված էի տեղավորվել իմ ունեցածի սահմաններում, լինում էր այնպես, որ պարզապես թարս էի հագնում, որ գրածը չերևա, տարբեր օձիքներ էի պատրաստում ու նույն շորի վրա ամրացնում, որ ուրիշ զգեստի տպավորություն թողնի, որովհետև ամեն օր կամ օրումեջ եթեր էի դուրս գալիս և անընդհատ պիտի թարմ տեսքով ներկայանայի: Ստիպված էի այդպիսի հնարքներ մտածել, մանավանդ որ վաճառքում չկար, մինչև շարժումը դրանք գտնելու ձևը «վաճառասեղանի տակից» էր, իսկ պատերազմի տարիներին դա էլ չկար:

Հայրս՝ Էդվարդ Աղաբալյանը, չարքաշ մարդ էր, ամբողջ կյանքում հնարավորություններ չի ունեցել, բայց միշտ աշխատում էր, փորձում էր ինչ-որ բան ստեղծել, թամահ երբեք չի ունեցել: Թալանի ժամանակ մարդիկ գնում, ինչեր էին բերում, մեր հարևանը նույնիսկ դույլերի մեջ շարած հավի ձու էր բերում: Իսկ հայրս Աղդամից հայերեն գրքեր էր բերել, այդ թվում՝ Խորենացու «Հայոց պատմությունը»: Այն ժամանակ Բաքվում կրքերը հանգստացնելու համար փորձում էին ինչ-որ ձևեր գտնել, հեռուստատեսության բացումն էլ նույն փորձերից էր, Կենտրոնական իշխանությունը փորձեց այդ կերպ լռեցնել: Բաքվից ուղարկեցին մեծ խմբաքանակով հայերեն գրքեր: Գնացքը հասավ Աղդամ ու կանգնեց, բեռը մինչև վերջ տեղ չհասավ, բայց վագոնները մնում էին Աղդամում: Եվ հայրս Աղդամի թալանից վերադարձավ գրքերի կապոցը ձեռքին: Ղարաբաղի մասին տարբեր գրքեր կային, Խորենացու «Հայոց պատմությունը» մի բանի օրինակ էր, ու ես հաճույքով նվիրում էի իմ ծանոթներին և ամեն գրքի առաջին էջում գրում էի՝ «Հիշատակ Աղդամի թալանից»:

Պատմում է ՀԱՆՍ ՇՏՈՒԳԵԼԲԵՐԳԵՐԸ (Քրիստոնեական համակամության միջազգային ընկերության նախագահ), Ստեփանակերտ, 1993 թ. փետրվար

- Հայր Շտուգելբերգեր, որոնք են Ձեր՝ Արցախ այցելելու շարժառիթներն ու նպատակը:

- Մեր այցելության առաջին նպատակն է՝ քրիստոնեական ոգով համակամություն և աջակցություն ցույց տանք Արցախին, համոզենք, որ մենք արցախցիների հետ ենք: Եկել ենք հոգևոր արժեքներ նվիրելու այս փոքրիկ երկրի տոկուն ժողովրդին: Երկրորդ նպատակը նյութական օգնությունն է, որն արդեն տեղ է հասցվել:

- Ի՞նչ գիտեիք Լեռնային Ղարաբաղի մասին:

- Գիտեի, որ Արցախը Հայաստան երկրի մի մասն է: Այս շրջանի ժողովուրդը շատ է տառապել մահմեդականների հալածանքներից: Այդ պատճառով էլ ազատագրական պայքար է մղում՝ թոթափելու լուծը:

- Իսկ ինչ եք կարծում, Արցախ-Ադրբեջան պատերազմը հավատքի առճակատում է, թե ազգամիջյան կամ հողատարածքի հիմք ունի:

- Ես պատմությունից գիտեմ, որ հայ ժողովուրդը՝ որպես ազգ, կազմավորվել է քրիստոնեական հավատքի վրա:

- Բայց ազգը դարեր առաջ արդեն կազմավորված էր:

- Գիտեմ, բայց նոր հավատքը ի մի հավաքեց և օգնեց ապրել: Իհարկե, այս առճակատումն իր մեջ ցեղային, ազգային, տարածքային, մշակութային հարցեր է պարունակում, բայց հիմքում կրոնական հարցն է:

- Ձեր ընկերությունը վաղուց է հետաքրքրվում Արցախով: Արցախի խնդրի հետ առնչվող ծրագրեր ունեք:

- Պետք է ձգտենք ձեր տագնապը, Արցախի խնդիրը ճշմարտացիորեն աշխարհին հասցնել, չնայած դա ամենևին էլ դյուրին գործ չէ: Կան և հասարակական կարծիքը մոլորեցնող հսկայական ուժեր: Հեռուստատեսությունը, ձայնասփյուռը, մամուլը, ընդհանրապես, հետաքրքրված չեն: Բայց մենք կաշխատենք Արևմուտքին ծանոթացնել այս հարցերին: Մենք շատ բան կարող ենք անել մանավանդ մեր շրջաններում: Մեր կազմակերպությունը մասնաճյուղեր ունի 15 երկրներում:

- Ձեր կազմակերպությունը տարբերություն դնում է քրիստոնեության տարբեր ճյուղավորումների միջև:

- Մեր կազմակերպությունը եկեղեցի չէ: Մենք անհատ քրիստոնյաներ ենք: Կաթոլիկ, բողոքական, առաքելական՝ տարբերություն չկա: Կարևորը Քրիստոսի հավատքն է:

- Իսկ ինչ տպավորություն ստացաք Արցախում:

- Ես ոգեշնչված եմ ձեր ժողովրդի քաջությամբ ու հաստատակամությամբ և հաջողություն ու հաղթանակ եմ մաղթում:

«ԱՋԱՏԱՄԱՐՏ», թիվ 5, փետրվար, 1993 թ.

Պատմում է ՎՈԼՈԴՅԱ ՂՈՒԼՅԱՆԸ, (ազատամարտիկ) Ստեփանակերտ, 04.12.2005 թ.

Վ.Ղ.- Զլդրանի ջոկատը ստեղծվել է 1988 թ.: Երկու տարի հետո, երբ ես 14 տարեկան էի, մտա Զլդրանի ջոկատ:

Բ.Կ.- *Դու 14 տարեկան տղա էիր, ինչ գիտակցություն ունեիր, ինչպես էիր գնահատում այն, ինչ կատարվում էր աշխարհում:*

Վ.Ղ.- Ես տեսնում էի մյուսները ինչ գործեր են անում ազգի համար, ոգևորվում էի, ուզում էի մի բանով էլ ես օգնած լինեի: Մինչև 1992 թ. սեպտեմբերի 28-ը ես ծառայել եմ մեր գյուղի ջոկատում: Թուրքերը մեր գյուղ առաջին անգամ մտել են օգոստոսին: Այդ ժամանակ ես գյուղում չեմ եղել, բայց ազատագրման կոիվներին մասնակցել եմ: Գյուղի զրոսայգում ավտոտնակ կար: Ադրբեջանցիներն այդտեղ էին դիրքավորվել: Մեր դիրքերը գերեզմանների մոտ էր: Ոչ մի կերպ չէինք կարողանում մոտենալ զրոսայգուն, որովհետև հարթ տեղ էր:

Երեկոյան կողմ պայմանավորվում ենք «ԲՄՊ-2»-ի ուղղորդողի հետ, որին «Զորնի վոլկ» էինք ասում, մի քանի անգամ խփում է, Կարմիր եկեղեցու մոտ հողաթումբ է գոյանում: Մենք առաջ ենք գնում: Իջնում ենք ձորը, շրջանցում, գալիս-հասնում ավտոտնակի ետևը, բայց թուրքերի դիրքը թողած՝ բարձրանում ենք, Կարմիր եկեղեցու մոտ բացված թմբի մեջ երկրորդ դիրք գրավում: «ԲՄՊ-2»-ը եկեղեցին ահագին վնասել էր: Մեկ զոհ տվեցինք՝ մեր գյուղացի Արայիկն էր: Մեր գյուղից 6 հոգի էինք՝ ես, Սպարտակը, որ ուրիշ կովում զոհվեց, Քաջոն, Ռուբիկը, Սպարտակը, որ զոհվել է, և Արայիկն էր: Մեզ հետ եկավ Սումգայիթի ջոկատը: Գիշերը մնացինք այդտեղ: Առավոտյան մեր գրաված դիրքում մնալ հնարավոր չէր. բաց տարածություն էր, թուրքերն անմիջապես կնկատեին և բոլորիս կկոտորեին: Լուսադեմին կապվեցինք մեր հրամանատար Վիտոյի հետ և ասացինք, որ առավոտյան ավտոտնակի դիրքի վրա կրակեն, մենք չենք կարողանում շարժվել: Վիտոն խոստացավ գիշերվա 6-ին մտնել գյուղ: Իրոք, գիշերվա 6-ից 8-ը ընկած հատվածում մտել են գյուղ: Ամբողջ գիշեր թուրքերի «ԲՄՊ-2»-ը և տանկերը աշխատել են: Առավոտյան մերոնք անցնում են հարձակման: Մոտ 15 բոպե կրակում են նրանց դիրքի վրա, բայց հետո պարզվում է, որ այդտեղ մարդ չկար. թուրքերը վախից թաքուն փախչում են, բայց տանկերը թողնում են միացրած, որպեսզի մեզ խաբեն, թե իրենք տեղում են: Նրանց թվացել էր՝ շրջափակման մեջ են ընկել, այնինչ մենք էինք շրջափակման մեջ: Ժամը 5-ի կողմերը տանկերի սոլյարկան վերջանում է, կես ժամը մեկ մեկը մյուսի ետևից հանգչում են: Տանկերը մնում են մեզ:

Այդտեղից առաջ ենք գնում, հասնում Երկար Հողեր:

Երբ Վիտոյենք հասնում են ավտոտնակի դիրքը, ասում են, որ մենք մեր տեղից առաջ գնանք, իսկ իրենք բարձրանում են Պողոսագոմերի ու Մեհմանա գյուղի խաչմերուկը, հետո գալիս-հասնում մեզ: Առաջ ենք գնում, տեսնում թուրքի տանկը կանգնած, մեխանիկը, հրամանատարը, ևս մի քանի հոգի նստած: Մեզ մոտ նռնականետ չկար: Մեր ետևից Ստեփանակերտի ջոկատն էր գալիս: Կապվեցինք նրանց հետ, ասացինք, որ նռնականետ ուղարկեն: Ուղարկեցին, խփեց, բայց վրիպեց: Տանկը փախավ դեպի խաչմերուկը, առանց իմանալու, որ մերոնք արդեն գրավել են այդ դիրքը: Այդ ժամանակ տղերքը «ԲՄՊ-2»-ով գալիս էին մեր ետևից: Տանկը և «ԲՄՊ-2»-ը հանդիպում են դեմ առ դեմ: Մենք ձայներ լսեցինք: Մեկ էլ տեսնենք ադրբեջանական տանկը փախչում է, մեր «ԲՄՊ-2»-ն էլ ետևից կրակելով գալիս է: «ԲՄՊ-2»-ի վրա իմ բաջանաղ Վիգենն էր, որ ուրիշ կովում զոհվեց: Խփեցին, տանկի յուղային ռադիատորը բացեցին: Տանկը հասավ իրենց դիրքի սահմանին, կանգնեց: Թուրքերը փախան, տանկը մնաց մեզ:

Ադրբեջանցիները դարձյալ իրենց դիրքերը առաջ բերեցին, հասցրին խաչմերուկի մոտ: Մեր տղաներից մեկը՝ Ղուլյան Դավիթը, մեր գյուղի գյուղապետն է, մեքենայով գնաց մթերք բերելու: Բասմաչայի մոտ թուրքերը նկատում են, վերևից ավտոմատներով, նռնականետով

կրակ բացում: Դավիթը ծանր վիրավորվում է: Ստիպված էինք մեր շտաբը, հոսպիտալը տեղափոխել, քանի որ դրանք մնացին թուրքերի մոտ: Մեզ էլ ասում են, որ այդտեղից դուրս գանք, բայց դուրս գալու ոչ մի հնարավորություն չկար: Մերոնք մեր տանկն ու «ԲՄՊ-2»-ը թողել էին: Ասկերանի Վիտոն չէ, ուրիշ Վիտո՝ կարճահասակ, կարմիր «Նիվայով» տղա էր, կապվեց մեզ, խնդրեց, որ օգնենք, տանկը վերցնենք: Ասացինք, որ մի հնար կգտնենք: Մեր գյուղի ջոկատի հրամանատարը Պոդոյան Վիտոն էր, որ գրադից վիրավորվել էր: 3 հոգով իջանք գյուղ: Այն պահն էր, որ թուրքերը նոր էին մտել գյուղ, տեխնիկան միացրած էր, շունը տիրոջը չէր ճանաչում: Նախկինում ես տանկի մեխանիկ եմ եղել: Տղերքին կանգնեցրի, ասացի, որ եթե նկատեն՝ մի բան այն չէ, թող կրակեն, բայց հենց մտա տանկի մեջ, թողնեն-փախչեն: Գյուղում միայն ադրբեջանական հրետանին էր եկել, նռանականետ չկար: Այդ առումով հանգիստ էի: Ընդհանուր խառնաշփոթության, աղմուկի մեջ ես մեր տանկը փախցրի: «ԲՄՊ-2»-ի մեխանիկն էլ գնաց, փախցրեց: Երկու զոհ, մի վիրավոր տվեցինք: Ճանապարհին տանկի սոլյարկան վերջանում է: Եղածն էլ քամում ենք, լցնում «ԲՄՊ-2»-ի մեջ, վիրավորներին տեղափոխում: Սկզբում որոշեցինք տանկը պայթեցնել, բայց մտածեցինք, որ հնարավոր է առավոտյան գյուղը ետ վերցնենք, իգուր տեխնիկան չփչացնենք: Բայց հարձակումը չհաջողվեց: 1992 թ. սեպտեմբերի 26-ին, երբ մեր գյուղը հանձնել ենք, ես մեր ջոկատից դուրս եմ եկել: Այսինքն՝ այսպես է եղել: Համարյա բոլոր ջոկատներում ջահել երեխաներ եղել են: Ես մանկության ընկեր եմ ունեցել. մենք իրար Մարտակերտից էինք ճանաչում: Երբ մեր գյուղը վերցնելիս 8 հոգով շրջափակման մեջ էինք ընկել, կապվել եմ Վիտոյի հետ, որ օգնություն ուղարկի: Վիտոն էլ կապվել է ջոկատների հետ, որ օգնության գան: Վիտոյի հետ ես մեր ջոկատի ծածկագրով չեմ կապվել, այլ հենց «Վոլոդյայով» եմ դուրս եկել: Ընկերս անունս լսում է, հետաքրքրվում: Ասում են, որ Չլոդրանի Վոլոդյան եմ, ճանաչում է: Ինքն է գալիս մեզ օգնության: Հենց շրջափակման մեջ էլ գրկախառնվում ենք: Այդ դեպքից հետո որոշում ենք կազմակերպել և ստեղծել երիտասարդական ջոկատ: Այդ հարցով դիմեցինք Նորիկ Դանիելյանին, որ գնդի հրամանատար էր դարձել: Ստեղծեցինք Ղարաբաղի երիտասարդական ջոկատը: Սկզբում 5 հոգի էինք, մինչև մեկ ամիսը դարձանք 43 հոգանոց ջոկատ: 14-18 տարեկան տղաներ

էինք: Հրամանատարը ես էի կամ Ռաֆոն էր, Նորիկն էլ ահագին օգնում էր: Դասակի հրամանատարը Այոշն էր՝ մանկությանս ընկերը:

Բ.Կ.- *Տարբերություն կա՞ ձեր և մեծերի ջոկատի կռվի, մոտեցման մեջ:*

Վ.Ղ.- Տարբերություն կար: Լավ էր, որ ջահելներով էինք, բայց հում էինք. համարձակ գնում էինք, բայց չգիտեինք ինչ պիտի անենք: Նորիկը մեզ շատ է օգնել: Ճիլոտից մինչև 15-րդ դիրք՝ Ծմակահող, դիրքեր չկային, ազատ էր, քանի որ մարդիկ չէին բավականացնում այդ տարածքը հսկելու համար: Մենք անընդհատ շարժման մեջ էինք: Նորիկը մեզ էր ուղարկում հետախուզության, որպեսզի հետքեր տեսնելու դեպքում զգուշացնեինք, ջոկատ ուղարկեին:

Փաստորեն, մեր ջոկատը հիմնականում զբաղվում էր հետախուզությամբ: Իսկ ջոկատն ստեղծելու գաղափարը չորսինս էր՝ իմը, Ռաֆոյինը, Անդրեյինը և մի Գայ կար, որը զոհվել է:

Նորիկը շատ լավ էր մեզ վերաբերվում: Շատ սիգարետ էր տալիս, մթերքը՝ կրկնակի: Մենք վստահ հետևում էինք նրա հրամաններին: Եթե մի ջոկատ հոգնած էր, չէր կարողանում դիմադրել, Նորիկը մեզ ուղարկում էր օգնության: Կարելի է ասել՝ պահուստային ջոկատ էինք: Նորիկին որպես հրամանատար շատ էինք հարգում: Նա ուժեղ հրամանատար էր, առաջին հերթին՝ կազմակերպչական առումով՝ թե՛ դիրքերում, թե՛ հարձակման, թե՛ հետախուզության ժամանակ: Պատահել է՝ դիրքի վրա հարձակվել ենք, Նորիկն ասել է, որ դուրս գանք: Ասել եմ՝ «Կարող ենք պահել», ասել է՝ «Պետք չէ, եթե պահենք, ավելի շատ կտուժենք, դուրս եկեք»: Եղել է, որ ասել է՝ պահենք, մինչև իրենք կհասնեն: Վստահում էինք նրան որպես հրամանատարի, ոիսկով կատարում նրա հրամանները: Իմ կարծիքով, միայն ես չէ, բոլորն են այդպես մտածում, մանավանդ՝ մեր ջոկատի տղաները:

Մեր ջոկատը մասնակցել է Պուշկին Ցալի, Տոնաշենի կռիվներին: Տոնաշենի կռիվներին, որ համարյա վերջին կռիվներն էին, ես չեմ մասնակցել: Այդ ժամանակ ես ոտքից վիրավորված էի, Երևանում բրոնշ մոտ 20 օր պառկած էի: Հրամանատարը Ռաֆոն էր: Երբ վերադարձա մեր ջոկատ, նոր մարդիկ կային, Գորիսից էին եկել: Կռվի ժամանակ 1-2 հոգի զոհվել են, բայց ես նրանց չգիտեի: «Եղնիկի» հետ կապ չունեինք:

1993 թ. հունվարի 6-ի (կամ 8-ի) կռիվը մեր ջոկատի ամենաուժեղ

կռիվն էր: Այդ ժամանակ մեր ջոկատում մոտ 40 հոգի էինք: Ադրբեջանցիները եկել-հասել էին Քերծի գլուխը: Իլիչի ջոկատն էր, Մայիսի «Պոդոսագումեր» ջոկատը և մենք: Ձախ անկյունից Մայիսի ջոկատն էր գնում, աջից՝ Իլիչի, դիմացից՝ մենք էինք գնում: Քերծի գլխին բարձունք կար, որը համարակալված դիրք չէր, ծմակ էր, տակը՝ դաշտ: Դաշտով ենք գնացել, որ բարձունքին խփենք ու վերցնենք: Պետք էր այդ բարձունքը վերցնել թուրքերի դիրքին խփելու համար: Երբ մենք գնացել ենք հարձակվելու դիրքի վրա, թուրքերն էլ են հարձակվել: Միանգամից ստացվել է շատ մոտ տարածությունից կռիվ: Խառնվել էինք: Մայիսի «Պոդոսագումեր» ջոկատը տալիս է 2 զոհ, Իլիչի ջոկատը՝ 2 վիրավոր, մեր ջոկատը՝ մեկ զոհ, մեկ վիրավոր: Երբ դիրքավորվել էինք, որ թուրքի դիրքը վերցնենք, Մայիսը կապվում է և զգուշացնում, որ այլևս չի կարողանում դիմադրել, 2 զոհ է տվել, ինքը ջոկատը դուրս է հանում, ձախ թևը նայեմ, ինքը բաց է թողնում: Իլիչը կապվում է և ասում, որ իրենք աջ անկյունով բարձրանում են: Իլիչը խաբեց, իհարկե, ոչ միտումնավոր, բայց այդպես է ստացվում: Երբ Իլիչն ասաց, որ իրենք աջ անկյունով բարձրանում են, համարյա հասել են բարձունքին, հարցրի, թե ինչ անենք, թե՝ դուք էլ ձեր տեղից բարձրացեք: Մառախլապատ օր էր, իրիկնադեմ: Ասացի, որ մի ճանապարհի վրա խփի՝ տեղն իմանանք: Ինքն ասում է, որ խփել է, բայց մենք չենք տեսել: Խփում ենք ու բարձրանում: Մեզ հետ Առաջաձորից երկու ուղեկցորդ կար, մեկը փախչում է, մյուսը՝ մի զառիթափի մոտ զոհվում: Բարձրանում ենք, համարյա հասնում բարձունքին: Այնպիսի պահ է ստեղծվում, որ ոչ թե մենք բարձունքը վերցրինք, այլ թուրքերը մեզ սեղմեցին ու անցան, մենք խփեցինք նրանց գնդացրորդին և հասանք գնդացիրի կետը: Երբ հասնում ենք բարձունքին, կապվում եմ Իլիչին, ասում, որ մենք արդեն բարձունքի վրա ենք, իսկ ինքը որտեղ է: Նա պատասխանում է, որ իրենք Քերծի վրա են, չեն կարողացել բարձրանալ, թե կարող ենք, դուրս գանք: Փաստորեն, կեսից ետ են գնացել այնտեղ, որտեղ Մայիսի ջոկատն էր: Մեր ջոկատը ցրվել էր: Մայիսն օգնություն էր խնդրել իր զոհերին դուրս բերելու համար, 30 հոգի ուղարկեցինք: Զոհերին դուրս բերելը ճիշտ է: Մեր երեխաներից մեկը վիրավորվել էր, Իլիչն ասաց, որ 2 հոգի էլ վիրավորին դուրս բերելու համար ուղարկենք:

Բարձունքից դուրս գալիս տղերքին ասում եմ, որ պիտի ցրվենք,

առանձին-առանձին փորձենք դուրս գալ, որպեսզի կարողանանք թուրքերի միջով անցնել: Կռիվ տալը ոչ մի իմաստ չունի, չենք կարողանալու սնգամ վիրավորներին ու զոհերին հանել: Այդպես էլ անում ենք, բաժանվում ենք երեք հոգանոց խմբերի. տարբեր տեղերից, ով ինչպես կարող է, պիտի դուրս գա: Ես Արմեն անունով մարտակերտցի մի տղայի հետ էի: Դա նրա առաջին կռիվն էր, բայց ջիգարով մինչև վերջ կռվեց: Մինչև հիմա Արմենի ծնողների տուն գնում-գալիս եմ: Այդ օրը Արմենը իմ ջոկատի միակ զոհը եղավ: Իջնելիս ձախ կողմից իմ ուղղությամբ գնդացրի կրակահերթ եկավ: Շրջվեցինք, որ փախչենք, ավտոմատի կրակահերթ բացեցին: Արմենը գոռաց՝ «Վայ, Վոլոդյա»: Գրկեցի: Տեսա, որ կրծքից մի քանի տեղից վիրավորված է: Կարճ կրակահերթ բացեցին, կպավ ուղիղ աչքին, հենց ձեռքերիս մեջ մահացավ: Պատահականություն էր, որ ինձ չկպավ: Ծռա, ինձ գցեցի թփի մեջ: Ձեռքիս զենք կար: Սպասում եմ, որ իմ ետևից կգան: Մի հաղթանդամ ավազ լցնենք եկավ, երկու մատով Արմենին բարձրացրեց, սկսեց գրպանները նայել: Մեր միջև եղած հեռավորությունը 2 մետր էր, ես ամեն ինչ տեսնում էի: Ծնողականն ու փողը գցեց, Կոստոս ծիսխոտը, լուցկին և ծալովի փոքրիկ դանակը վերցրեց, Արմենին բաց թողեց: Հետո շրջվեց, սկսեց զենքերը հավաքել: Նա ինձ տեսել էր: Ես անջատել էի կապը, անպարտ պառկել, որ ինձ մեռած կարծի: Դիրքս շատ անհարմար էր, հրացանը փորիս տակ էր: Զգուշորեն քաշեցի, փողը ուղղեցի նրա կողմը: Ավտոմատակայիս մեջ նայել չէի կարող, հույս ունեի, որ մեջը գոնե մեկ փամփուշտ կլինի: Հետո շարժվեց իմ կողմը: Մատս դրեցի ձգանին, 4-5 փամփուշտ կրակեցի: Վեր կացա ու փախա, բայց Արմենին թողեցի: Կապվեցի Մայիսի հետ, որպեսզի իմանամ՝ դեռ Քերծի գլխին են: Առաջ գնացի, հասա մի թմբի մոտ, տեսնեմ թուրքերը հավաքվել են, պատրաստվում են նոր դիրքեր վերցնելու: Նորից կապվեցի Մայիսի հետ, ասում եմ՝ «Մայիս, հիշում ես այն տեղը, որտեղից դու ձախ գնացիր, ես՝ ուղիղ, հենց այդտեղ թող գնդացիրը աշխատի», որպեսզի թուրքերը ցրվեն, ես կարողանամ անցնել: Գնդացիրը աշխատում է, ես անցնում եմ: Մի քիչ գնում եմ, կապիս էլեմենտը նստում է: Իմ զոհված եղբայրս էլ Հիլոտի դիրքում էր: Հասկանում եմ, որ Հիլոտից՝ K-12 դիապազոնից էլ են «Վոլոդյա-12»-ի հետ փորձում կապվել: Ես լսում եմ նրանց, բայց չեմ կարողանում պատասխանել, սեղմում եմ, էկրանը սևանում է: Նորիկն

էր խոսում, ասում, որ հրամանատարներից մեկը գերի է ընկել, ադրբեջանցիք կապը վերցրել են, զգուշացնում էր, որ ալիքները փոխեն: Մտածել են, որ գերի եմ ընկել: Միացնում-անջատում էի, որ հասկացնեմ գերի չեմ, բայց չեն հասկացել: Առաջ գնացի, հասա մի թմբի մոտ: Թուրքերն այդտեղ դիրքավորվել էին: Մթնշաղ էր, թուխպ: Տեսա, որ մեկը ծառի մոտ է կանգնած, մի ուրիշն էլ ավելի ներքև՝ ձորակում: Հանգիստ, առանց ինձ մատնելու գնում եմ նրանց ուղղությամբ: Նրանց թվաց իրենցից եմ: Դեռ չհասած նրանց՝ կրակահերթ բացեցի և առաջ վազեցի, հասա մի հարթ տեղ: Թաքնվեցի, սպասեցի, մինչև կամրջի գլխից թուխպը եկավ, ծածկեց այդ տարածքը ու ես աննկատ անցա: Առաջ գնացի, հասա մեր դիրքերին: Հեռվից նկատեցի ընկերոջս՝ Անդրեին, որ դասակի հրամանատարն էր: Տեսնեմ՝ թռավ գնդացրի վրա, հետո ինձ ճանաչելով ասաց՝ «Վայ, Վոլոդյա», ու գնդացիրը գետնովը տվեց: Հասանք դիրք, էլեմենտը փոխեցինք, կապվեցինք Նորիկի և գյուղի տղաների հետ՝ տեղեկացնելով, որ ես հասել եմ մեր դիրք:

Պատմում է ԳԵՂԱՄ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ, (1992-94 թթ. ԼՂՀ Գ 1-ին գումարման Լրատվական ծառայության պետ, 1994-95 թթ. «Ազատ Արցախ» թերթի գլխավոր խմբագիր, 2004-2009 թթ. «Դեմո» թերթի գլխավոր խմբագիր, 2005-2010 թթ. ԼՂՀ ԱԺ 4-րդ գումարման պատգամավոր, 2010 թ. «Անալիտիկում» ամսագրի գլխավոր խմբագիր), Ստեփանակերտ, 16.07.2006 թ.

Ծնվել եմ 1961 թ., Ասկերանի շրջանի Սարդարաշեն գյուղում:

Արցախյան շարժումն ինձ համար սկսվեց 1988 թվականից, այսինքն՝ մինչ այդ տեղի ունեցած իրադարձություններին ես չեմ մասնակցել և շատ քիչ բան գիտեմ՝ լսելով տարբեր մարդկանց պատմածները միայն: Սակայն ազգային, հայրենասիրական տարբեր միջոցառումների մասնակցել եմ դեռևս ուսանողական տարիներին: Ստեփանակերտում խմբակներ կային, ես դրանցից երկուսը գիտեի, իսկ մեկին անդամակցել եմ:

Բ.Կ.- *Ո՞ւմ եք հիշում:*

Գ.Բ.- 1980-ականների սկզբին քաղաքում հայրենասիրական մի խմբակ կար: Այն ժամանակ շատ դժվար էր նման գործ անելը: Ինձ խմբակում ներգրավեց Արմեն անունով մի երիտասարդ, որը հիմա աշխատում է պետական թատրոնում: Ի՞նչ էինք անում. հայատառ գրականություն էինք բերում Ստեփանակերտ, որը հիմնականում հայրենասիրական թեմաներով և արգելված գրականություն էր: Այսօրվա հայացքով՝ մեր արածները կարող են պարզ ու միամիտ թվալ, բայց դե, երիտասարդներ էինք՝ հայրենասիրական ոգով դաստիարակված: Շուրջ բան հոգի էինք, և արգելված փաստաթղթեր ու գրականություն տարա-

ծելիս շատ պարզունակ քայլեր էինք անում: Օրինակ՝ երբ թուրքերը Ար-
դամից գալիս, հայ աղջիկների հետ զվարճանում էին, մենք փորձում
էինք խանգարել: Ծիծաղելի է, բայց դաստիարակչական աշխատանք-
ներ էինք տանում հայ աղջիկների հետ, ասում էինք. «Ձեր արածը ճիշտ
չէ, մենք հայ ենք, մեր հայկականությունը պիտի պահենք»: Դե, այդ կար-
գի աղջիկներ էին, քմծիծաղով էին վերաբերվում:

Բ.Կ.- *Թուրք տղաները ապառնում էին:*

Գ.Բ.- Չէ, պարզապես հայ աղջիկներն էին մեզ ձեռ առնում: Հետ-
մտածելի, որ անարդյունավետ գործողություն է, մեր աղջիկների մեծ
մասը հեռու է այդ ամենից: Այդ կարգի աղջիկները այդքան էլ շատ չէին,
բայց կային, և անիմաստ էին մեր թայերը: Խմբակի հերթական նիստ-
ում ես դիտմամբ, որպեսզի դիսկուսիան բռնկի, ասացի. «Վերջին հաշ-
վով, ինձ համար տարբերություն չկա, թե այս պոռնիկը ում հետ է պառ-
կում՝ հայի, թե թուրքի»: Հետո ՊԱԿ-ի աշխատակիցները.... Մեր աշխա-
տանքը տնական եղավ՝ հիմնականում փաստաթղթերի, գրքերի, թռու-
ցիկների տարածմամբ: Կային երիտասարդներ, որոնք պատրաստ էին
իրենց նվիրել հայրենիքին, բայց մակարդակի թե փորձի պակասու-
թյունն էր՝ չգիտեինք ինչ անել: Հավաքում և տարածում էինք Սևակի,
Չիրազի և ուրիշների հայրենասիրական բանաստեղծությունները, երե-
կոներ էինք կազմակերպում ուսանողների, դպրոցականների հետ: Մի-
գուցե այդ ամենն ինչ-որ արդյունք տվեց: Հետո այդ խմբակի գործունե-
ությունը ընդհատվեց: Խմբակը եղել է 1970-ականների վերջին և 1980-ին
թթ.: Ես Խորհրդային բանակում ծառայելուց հետո վերադարձա Ղարա-
բաղ և անմիջապես աշխատանքի անցա «Սովետական Ղարաբաղ»
թերթում: Այն մարզկոմի ու մարզխորհրդի պաշտոնաթերթն էր: Խմբա-
գիրը Եղիշե Սարգսյանն էր, որը նախկինում մարզկոմի քարտուղարն
էր: Այդ ժամանակ լինում էին սուր հոդվածներ, բայց զուտ հայրենասի-
րական թեմաներով նյութեր շատ քիչ էին տպագրվում: Ես երկու զավեշ-
տական դնկպ պատմեմ նախաշարժումային ժամանակաշրջանից, երբ
տրամադրություններ կային, հայկական ոգին կար, բայց շատ ծանր
պայմաններում էինք աշխատում: Վլադիմիր Հակոբյանը երբ դարձավ
շավմատի պատանիների աշխարհի առաջնության չեմպիոն, ես գան-
գեցի նրանց տուն, խոսեցի հոր հետ: Վլադիմիրը Բաքվից արդեն եկել
էր Երևան: Պայմանավորվեցինք, որ ես գնամ Երևան՝ հարցազրույց վա-

թեմ: Գնացի խմբագրի մոտ, ասացի.

Պարզել եմ, որ նա արմատներով Ղարաբաղից է՝ Հադրութից,
վկային հաշվով, ղարաբաղցի է: Թերթի համար շատ հետաքրքիր կլինի:

- Դու լավ ժուռնալիստ ես, բայց քթածակ, քաղաքական հոտառու-
թյուն չունես:

- Ի՞նչ քաղաքական հոտառություն:

- Ադրբեջանցիները կգայրանան, թե՝ սրանք չեմպիոն ունեն, մենք
չունենք:

- Մենք հո մեղավոր չենք, որ նրանք չեմպիոն չունեն:

Այսինքն՝ այս աստիճանի ծայրահեղության ու զավեշտի էին հասց-
ված հայ-ադրբեջանական հարաբերությունները:

Երկրորդ միջադեպը կապված է ԼՂՀ այժմյան նախագահ Արկադի
Ռուկասյանի հետ: Նա խմբագրի տեղակալն էր, թերթի ռուսերեն տար-
բերակն էր խմբագրում, հիմնականում մարզական նյութեր էր գրում:
«Կրասնայա» ու «Նեֆթչի» ֆուտբոլային թիմերը խաղացին, «Արարատ»
1:0 հաշվով հաղթեց: Առաջին էջում այդ նյութը տպագրվեց: Խմբա-
գիրը կանչեց Արկադիին, ասաց. «Առաջին էջում այսպիսի նյութ... կխո-
սեն»: Արկադին խեղճ-խեղճ ասաց. «Դե ես ինչ անեի, ես հաշիվը չէի կա-
լող փոխել, գրել՝ 1:1»: Այդպիսի այլանդակ պայմաններում էինք աշխա-
տում. բնականաբար հնարավոր չէր թերթում լուրջ հայրենասիրական
հոդվածներ լուսաբանել: Շարժումն ինձ համար միանգամից սկսվեց, ես չեմ
մասնակցել նախապատրաստական աշխատանքներին:

Բ.Կ.- *Ագոյի հետ կապ չունեիք:*

Գ.Բ.- Կապ ունեի, իհարկե, բայց անձամբ լուրջ քայլեր չեմ արել:
Սասոն ամրապնդվեց՝ սկսած առաջին հանրահավաքից: Ես ամբողջու-
թյամբ ներգրավվեցի: Առաջին հանրահավաքը փետրվարի 13-ին էր:
Մենք գիտեինք, որ խմորումներ կան, և հանկարծ մարդիկ դուրս են գա-
լիս փողոց: Խմբագրի հրամանով խմբագրության դռները իսկույն փա-
կեցին, որպեսզի ոչ ոք դուրս չգա և չմասնակցի հանրահավաքին: Բայց
ով էր նայում փակված դռներին: Հինգ-վեց երիտասարդներով անմիջա-
պես դուրս եկանք, հենց առաջին շարքում կանգնեցինք: Փորձում էի մո-
ռանալ պատվանդանին և նույթ ունենալ, բայց ոստիկանները չէին թող-
նում: Մի քանիսին թողեցին. Աֆանասյանն էր, Ժաննան, Սերգեյ Շահ-
վերդյանը: Ես էլ ցանկացա մոտենալ, ինձ պահեց Վահան Հարություն-

յանը: Նա ինձ ճանաչում էր, իրեն համարում էր մեր ընտանիքի բարե-
կամը: Զեղքը զգեց ականջիս ու հայրաբար խորհուրդ տվեց՝ մի
խառնվիր: Ինձ ոչ թե նրա խոսքերը ետ պահեցին, այլ ոստիկանները մո-
տեցան, և ես չկարողացա առաջ գնալ: Մտադիր էի լրագրողների անու-
նից ինչ-որ բան ասել, չստացվեց: Եվ ես սկսեցի խմբագրությունում շատ
հետաքրքիր հայտարարություններ անել: Ես հասկանում եմ խմբագրի
վիճակը. կուսակցական թերթ էր, Կեորկովը տասը մեռոր այն կողմ էր
նստած, և Եղիշե Սարգսյանը չէր կարող միանգամից ժողովրդի կողմն
անցնել: Մի քանի համար շարունակ թերթը ծպտուն չէր հանում, կարծես
երկրում ոչինչ չէր կատարվում: Առաջին անգամ, եթե չեմ սխալվում, Լյու-
դա Ֆարսյանի փոքրիկ նյութն էր, որ արձագանքեց հանրահավաքնե-
րին: Կամաց-կամաց փոքր նյութեր սկսեցին տպագրվել: Եղիշե Սարգս-
յանը սկսում էր տեղի տալ կոլեկտիվի պահանջներին:

Բ.Կ.- *Կեորկովն արդեն չկա՞ր:*

Գ.Բ.- Չէ, կար, առաք-փառաք իր տեղում նստած էր: Մի կողմից
մենք էինք ճնշում խմբագրին, մյուս կողմից՝ մարզկոմն ու Կեորկովը:
Քիչ ու մեծ նյութեր թողնում էր տպագրել, բայց «Սովետական Ղարաբա-
ղը» միակ թերթն էր, որը քիչ բան էր գրում այդ մասին: Շատ լուրջ դեպք
կատարվեց մարզխորհրդի նստաշրջանից հետո: Նստաշրջանի որոշու-
մը ուղարկեցին թերթին, մենք էլ դրեցինք էջում: Խմբագիրը եկավ, թե.

- Սա պիտի հանվի, չպիտի տպագրվի:

- Ո՞նց թե, մարզխորհրդի որոշումն է:

Դե, արգելեցին, Կեորկովը արգելում է ....

Բայց էջերն արդեն ուղարկել էինք տպարան: Չեմ ուզում ասվեր
զգալ Եղիշե Սարգսյանի անվանը, նա շատ ծանր վիճակում էր այդ ժա-
մանակ, բայց փաստը մնում է վաստ: Կեորկովը նրան ուղարկեց տպա-
րան, որպեսզի նա թույլ չտա համարի լույս ընծայումը, համենայն դեպք
որոշումը էջից հանել տա: Մենք տպարանի աշխատողներին տեղյակ
էինք պահում, թե ինչ է կատարվում: Ի դեպ, «Սովետական Ղարաբաղ»
թերթի խմբագրությունը դարձել էր շտաբ, Արտաշես Գասպարյանի՝ տե-
ղական աշխատանքային շտաբի հիմնական սենյակն էր, ուր գալիս
էին Արկադի Մանուչարովը, Հենրիխ Պողոսյանը... բոլորը: Երբ Եղիշե
Սարգսյանը գնաց տպարան, երիտասարդ տղաները՝ կիսագրագետ,
անգրագետ, փակեցին խմբագրին մի սենյակում, ամբողջ գիշեր պահե-

ցին, մինչև թերթը լույս տեսավ և տարածվեց: Հիշում եմ Վալերիկին՝
կրտսակերպիչներից մեկին, որը հետո Ջանհասանում զոհվեց շատ դա-
ժան մահով, վառել էին նրան, նույնիսկ դիակը հայտնաբերելու խնդիր-
ներ կային, նա շատ ջիգյարով տղա էր: Նստաշրջանի որոշումը տպագ-
րելուց հետո, ինչպես ասում են, բացվեցին դռները: Սկսեցինք լուսաբա-
նել ամեն ինչ, ինչ որ կատարվում էր Ստեփանակերտում և շրջաններ-
ում, ինչպես նաև՝ ստորագրահավաքի մասին: Ես ստորագրահավա-
քին առաջին հանրահավաքի հաջորդ օրվանից մասնակցել եմ: Քանի
որ «Սովետական Ղարաբաղում» շտաբն էր, այն երիտասարդները,
ուսանողներ, որոնք անմիջապես նվիրվեցին այդ գործին, ամեն օր գիշեր-ցե-
րեկ այնտեղ էին լինում: Ասեմ, որ շատ դժվար էր, կոլեկտիվը կիսված
էր, մենք դեռ կոլեկտիվի մեծամասնությունը չէինք կազմում:

Բ.Կ.- *Խմբագիրը փոխվե՞ց:*

Գ.Բ.- Ավելի ուշ խմբագիր նշանակվեց Մաքսիմ Հովհաննիսյանը:

Բ.Կ.- *Շատ բան փոխվե՞ց թերթում:*

Գ.Բ.- Շատ բան փոխվեց, թերթը շատ հանրաճանաչ դարձավ,
պրանում Հովհաննիսյանի շնորհքն էլ կա, բայց սխալ կլինի ասել, թե դա
պատմանավորված էր նրա գալով: Առաջացել էր հզոր ալիք, Ղարաբաղը
դարձել էր հրատապ թեմա ամբողջ Խորհրդային Միությունում, և բնա-
կանաբար թերթի նկատմամբ, որը լույս էր տեսնում հայերեն և ռուսե-
րեն, վերաբերմունքը միանգամայն այլ էր: Տպաքանակը տասն անգամ
մեծացավ, շատ լավ տարածվում էր Հայաստանում, ռուսերեն տարբե-
րակը ուղարկում էինք Մոսկվա և այլ քաղաքներ: Մաքսիմ Հովհաննիս-
յանի օրոք այն իսկապես դարձավ հզոր թերթ, որի ոսկե կորիզն էր աշ-
խատում, լավագույն կադրերը: Հետո այդ կոլեկտիվը կիսվեց, մեկը
գնաց արտադրնախարարություն, մյուսը՝ մեկ այլ նախարարություն,
մեկը թերթ բացեց, մեկ ուրիշը՝ հեռուստատեսություն... Բայց այդ ժամա-
նակ լավագույն ժուռնալիստները «Սովետական Ղարաբաղում» էին հավաքվել: Սակայն մենք քիչ էինք: Յուրաքանչյուրի համար առանձին
ուսուցավարություն էինք մշակում, թե ում ուղարկենք այսինչի մոտ, որ
հանդիպի ստորագրել նամակի տակ: Կոլեկտիվը երիտասարդական չէր,
ուստ հարյուր հոգի էին աշխատում, որոնք հիմնականում ավագ սերնդի
ներկայացուցիչներ էին, կոմունիստներ, և շատ դժվար էր նրանցից ստորագրու-
թյան կորզելը: Ստորագրահավաքը մեզ համար այսպես սկսվեց. պատ-

բաստեցինք մի նամակ, որի տեքստը ես գրեցի լրագրողների անունից: Այն ժամանակ գրում էին գրողները, մտավորականները, Սոցիալիստական աշխատանքի հերոսները, դերասանները, տարբեր բնագավառի մարդիկ: Մենք էլ փորձեցինք լրագրողների անունից գրել և ստորագրահավաք սկսել «Սովետական Ղարաբաղից», ինչպես նաև ընդգրկել շրջանային թերթերը: Մի ստորագրություն կորզելու համար կարող է օրեր կորցնեինք: Շատ քիչ լրագրողներ համաձայնվեցին մասնակցել ստորագրահավաքին, հիմնական կորիզը յոթ-ութ հոգի էին: Հավաքվում էինք Արտաշես Գասպարյանի սենյակում: Այնտեղ էին լինում Գուրգեն Գաբրիելյանը, Հրաչյա Բեգլարյանը, Արկադի Մանուչարովը, Ժաննա Գալստյանը: Ամեն օր գալիս և ներկայացնում էինք, թե այդ օրը քանի ստորագրություն հավաքեցինք: Կամաց-կամաց գրաքննությունն անցավ: Արցախում նաև ժողովրդավարության պոռթկման փուլ էր, Խորհրդային Միությունում առաջինը, իսկ լրագրողների համար «Ոսկեդար» էր, տասնամյակների լռությունից հետո ինչ ուզում, գրում էինք: Հետո ժամանակները փոխվեցին, վատացան, պարետային ժամ մտցվեց, Պոլյանիչկոն եկավ...

Բ.Կ.- *Այդ ժամանակներից ինչ դեպք կարող եք հիշել:*

Գ.Բ.- Պոլյանիչկոյի օրոք «Սովետական Ղարաբաղում» հատուկ գրաքննիչ կար, առանց որի ստորագրության ոչինչ չէր տպագրվում: Այդ ժամանակ ծնվեց նոր լրատվամիջոց, որը ԽՄ-ում այդ տիպի առաջին լրատվամիջոցն էր. գաղտնի ռադիո: Ես ստեղծմանը չեմ մասնակցել: Մասնակիցներից գիտեմ Ավետին, որը զոհվեց Զաոիսլուում, նա Լյուդմիլա Հարությունյանի ամուսինն էր, և Աբել անունով տարիքով մարդու: Նրանք էին ստեղծողները: Ամեն անգամ տարբեր տեղերից էին եթեր տալիս, մի անգամ ինչ-որ շենքի նկուղից, հաջորդ անգամ որևէ բնակարանից: Ես էլ տեղը չգիտեի: Ստեղծեցինք մի խումբ. ես էի, Արմեն Դանիելյանը: Առաջին օրվանից մենք նյութեր էինք պատրաստում ու եթեր հեռարձակում: Հիշում եմ իմ առաջին նյութը. Պոլյանիչկոն ու Սաֆոնովը խմբագրության ու մարզկոմի շենքերի արանքում այժմյան նախագահական նստավայրի առաջ, իրար համբուրեցին, և իմ առաջին նյութը կոչվում էր «Քաղաքական սեքս»: Շատ համարձակ նյութ էր՝ ձեռ առնելու չափ:

Բ.Կ.- *Նյութերը միայն հայերեն էին տպվում, թե նաև ռուսերեն էին թարգմանվում:*

Գ.Բ.- Ռուսերեն էլ, բայց ոչ բոլոր նյութերը, ես ռուսերեն նյութերից անտեղյակ չէի, թե ով էր գրում: Հայերեն նյութերը, հաստատ գիտեմ, որ այդ երեքս էինք միայն պատրաստում: Աբել մականունով մարդը օրը մի անգամ գալիս էր նշանակված վայրը (ամեն օր տեղը փոխում էինք), ես նյութերը տալիս էի նրան և նույնիսկ չգիտեի, թե ուր է տանում:

Բ.Կ.- *Բայց ռադիոհամակարգին միացրած էր, տներում լսում էին:*

Գ.Բ.- Այո, մինչև որ գլխի ընկան, հակաթույնը գտան և խլացրին:

Բ.Կ.- *Ինչպես արեցին:*

Գ.Բ.- Թեկուզ այն ժամանակվա տեխնիկայով դժվար չէր խլացնելը կամ հաճախականությունը գտնելը, մասնագետներ կային: Բայց մի քանի ամիս աշխատեցինք այն դեպքում, երբ ինֆորմացիա չկար: Թերթում թաթնները դրել էին, միտինգներն արգելված էին, մնացել էր միայն ռադիոն, որին մարդիկ անհամբեր սպասում էին: Համեմատաբար հեշտությամբ Վոլսկու օրոք, բայց գրաքննություն դարձյալ կար:

Բ.Կ.- *Վոլսկին Պոլյանիչկոյից առաջ էր:*

Գ.Բ.- Երբ ինձ նշանակեցին Գերագույն խորհրդի լրատվական ծառայության ղեկավար, 1992 թ. հունվարն էր: Ես առաջին թեկնածուն չէի այդ պաշտոնի համար, առաջինը Ալեքսանդր Գրիգորյանն էր՝ նախագահի այժմյան մամլո ծառայության վարչության պետը: Արթուր Մկրտչյանի հետ ծանոթներ էին, և շատ կարևոր հանգամանք էր այն, որ Ալեքսանդրը տիրապետում էր անգլերենին: Չգիտեմ, թե ինչու Ալեքսանդրը չհամաձայնվեց: Ես, բնական է, չէի կարող մերժել այդպիսի առաջարկը: Շատ ծանր ժամանակ էր, բչերն էին աշխատում պետական կառույցներում, զգալի մասը իր գլխի ճարն էր տեսնում:

Բ.Կ.- *Արթուր Մկրտչյանի հետ աշխատանքային պահեր հիշեք:*

Գ.Բ.- Արթուր Մկրտչյանի հետ դա իմ առաջին հանդիպումը չէր, ես նրան ճանաչում էի մինչև շարժումը «Սովետական Ղարաբաղ» թերթում աշխատելու ժամանակ, երբ նա Հադրութի շրջանային թանգարանում էր աշխատում: Հետո նրա հետ առնչվեցի Ազգային խորհրդի համագումարում: Նա շատ ակտիվ մասնակցում էր, նույնիսկ ընդմիջմանը ինձ դիտողություն արեց. «Ինչու ես այդքան պասիվ, չես մասնակցում»: Ինձ համար անհասկանալի բաներ շատ կային: Մտերմություն չէի ասի, բայց միմյանց նկատմամբ փոխադարձ համակրանք կար: Մեկ-մեկ հանդիպում էինք: Այսինքն՝ մենք արդեն ծանոթ էինք, երբ նման առաջարկ

եղավ: Աշխատում էինք շատ ծանր վիճակում: Արցախում նրա ընտրվելուց հետո սկսվեցին երկիշխանություն ստեղծելու խմորումները: Լևոն Տեր-Պետրոսյանը չընդունեց Արթուր Մկրտչյանի և Դաշնակցության իշխանությունը Լաչինում, այլ շարունակում էր հենվել դեռ օրինական կառուցվածքի տնսք չունեցող ուժերի վրա՝ Ռոբերտ Քոչարյանի, Սերժ Սարգսյանի, Սամվել Բաբայանի: Հասական առումով երկիշխանություն էր: Ընդ որում, ուժեղ էր երկիշխանության մյուս թևը, ոչ թե օրինական կողմը: Հիշում եմ Արթուրի վրդովմունքը, երբ, ասենք, վառելիք էին ուղարկում, և վառելիքը ստանում էր մյուս թևը, ոչ թե օրինական իշխանությունը՝ Գերագույն խորհրդի նախագահը, որը այն ժամանակ երկրի գլուխն էր: Եվ երկրի ղեկավարը պիտի մյուս թևից բենզին խնդրեր, որ նրանք Գերագույն խորհրդին բենզին տային: Չգիտեմ՝ այդ թևի անունն ինչ էին դրել այն ժամանակ, ինչ կառուցվածք ուներ: Այն օրինական տնսք ստացավ 1992 թ. օգոստոսին, երբ ստեղծվեց Պաշտպանության պետական կոմիտեն: Բայց թե մինչ այդ ինչ անուն էին դրել, որ հետևանքը համագործակցում էին պետական մակարդակով՝ շրջանցելով օրինական իշխանությանը, ես չեմ հասկանում և մինչև հիմա չեմ ներում Հայաստանի իշխանություններին: Փաստորեն, Արթուրի նման ազնվագույն մարդուն դրեցին ծանր կացության մեջ: Երկիշխանության ժամանակ շատ դժվար էր ղեկավարելը, այն էլ՝ այդպիսի պայմաններում, երբ շրջափակում էր, տնտեսական ծանր վիճակ, պատերազմ, նույնիսկ մարդիկ աշխատանքի չէին գալիս: Արթուրը բարկանում էր. «Էս կոմունալ ծառայության պետը ո՞ր է, բա էս մեկը, մյուսը...»: Չէին գալիս գործի, և վտանգավոր էր, և քաղաքական ներքին պայքար կար: Արթուրի հետ կապված մի դեպք պատմեմ, որը երևի ոչ մի տեղ չկա գրված: Սովորաբար ասում են, թե նրա ուսերը շատ էին փխրուն նման դերի համար, իսկ ես միանգամայն այլ կարծիքի եմ. նա բավական լուրջ և ամուր դեմք էր: Խոջալուի դեպքից հետո մտածում էինք՝ ինչ անել, քանի որ ահագին աղմուկ էր և, բնականաբար, ոչ մեր օգտին: Աշխարհում եթե մինչ այդ համակրանքը միանշանակ մեր կողմն էր, դրանից հետո մթնոլորտը սկսեց փոխվել: Հարցը այսպես էր դրվել. ինչ աննենք, որ Խոջալուն մոռացվի կամ երկրորդ պլան մղվի՝ զուտ նկատի ունենալով լրատվական քաղաքականության դերը: Արթուրը հանկարծ ասաց. «Հարկավոր է արագ մի ուրիշ բնակավայր գրավել, որպեսզի սկսեն դրա մասին խոսել, Խոջալուի մասին լռելու ամենալավ ձևն է»: Մնացել էինք շշմած, Արթուրից նման բան չէինք սպասում: Տղամարդու պես վճռական իր խոսքը ասաց:

Այդ ժամանակահատվածի մասին ևս մեկ դեպք պատմեմ, մեկ այլ կառուցվածքի մասին, որը չգիտես ինչու, լռության է մատնվում, հավանաբար շատերին ձեռնտու չէ այդ կառուցվածքի մասին խոսելը: Արթուրը ամեն օր երազում էր Շուշիի ազատագրման մասին, ամեն օր խոսում, և մեծ անարդարություն էր, որ նա չտեսավ ազատագրված Շուշին: Հենց Արթուրի առաջարկով ու նախաձեռնությամբ ստեղծվեց մի մարմին՝ լրատվական համակարգող խորհուրդ, լրատվական քաղաքականությունը մշակելու և իրականացնելու համար: Ի պաշտոնե՝ ես նշանակվեցի այդ խորհրդի ղեկավար: Չորս հոգի էին խորհրդում. Արկադի Ղուկասյանը՝ այն մի թևից պատվիրակված, մյուսը Դաշնակցության ներկայացուցիչն էր՝ Սերգեյ Շահվերդյանը, և չորրորդը այդ գործի մասնագետ Վոլոդյա Պողոսյանն էր՝ ուղարկված Հայաստանի ՊԱԿ-ից: Մենք գլիշեր-ցերեկ աշխատում էինք: Մեզ ասում էին, թե ինչ գործողություն պիտի լինի, բայց հիմնականում Շուշիի գործողության համար էր, ինչը մի քանի անգամ հետաձգվեց: Ի՞նչ էինք անում. հող էինք նախապատրաստում այդ գործողության համար: Ինֆորմացիա էինք տարածում, օրինակ, այս բովանդակությամբ՝ ծնողատան շենքի վրա ռումբ գցեցին, և վեց նորածիններ զոհվեցին: Լուրերի հոսքը այդ տեմպով մուտքնում էինք ռազմական գործողության օրվան, որպեսզի պիկը լինի նախորդ օրը: Այսինքն՝ փորձում էինք միջազգային ասպարեզում այդ հոդը նախապատրաստել, ուրիշ ելք չկար, պիտի Շուշին չչեզոքացվի:

Բ.Կ.- *Քարոլայն Քոկսի խումբը եկել էր, մի հրթիռի շարժիչ էր եկել բնկել: Արտասահմանցիների խմբի հետ գնացինք նայեցինք, թե՝ տեսնք, ադրբեջանցիներն ինչ են ասել: Մերոնց ասածածն էր, ես պարզ գիտեի, որ հարուկ էր ասված:*

Գ.Բ.- Այդ մարմինը շատ լուրջ դեր ունեցավ, շատ լուրջ գործ արեց, բայց այդ մասին չի խոսվում: Դե, անդամներից մեկը երկրի այսօրվա ղեկավարն է, մենք էլ ընդդիմադիր ենք, բնականաբար ձեռնտու չէ խոսելը, և ոչ մի տեղ չկա այդ մասին:

ԳԽ-ի նախագահության նիստն էր: Ուրիշ մասնակիցներ էլ կային. ոստիկանապետն էր, Իգոր Մուրադյանն էր մասնակցում: Հանկարծ սկսվեց հրետակոծությունը: Արկերից մի քանիսը հրապարակում պայ-

թեցին, մեկը՝ մեզ շատ մոտիկ, և աղմուկից ապակիները փշրվեցին: Դե բնագդ է, մարդ ես՝ վախենում ես, վայրկյաններ են գոնե պետք, որ գիտակցաբար վախը հաղթահարես: Այդ վայրկյանին բոլորս պառկեցինք մի մեծ սեղանի տակ: Հենց վտանգը անցավ, ես գլուխս բարձրացրի և տեսա, որ բոլորն անխտիր պառկած են. կապ չունի՝ փորը մեծ է, փոքր է, տղամարդու համբավ ուներ մինչ այդ, թե չէ: Հիշում եմ, որ միայն Իգոր Մուրադյանն էր կիսապառկած վիճակում՝ ատրճանակը հանած, ինչը դարձյալ պաշտպանական ռեակցիա էր: Հանկարծ տեսա՝ Արթուրը ինչպես նստած էր եղել իր աթոռին, այդպես էլ մնացել էր, իսկ քաջարի համարվող տղաներս մտել էինք սեղանի տակ: Ուզում եմ ասել, որ նա իսկապես անվախ մարդ էր:

Հիմա աղրբեջանցիները, ասում են, չեն բանակցում Ղարաբաղի հետ, բայց ժամանակին մեզ հետ բանակցում էին:

Բ.Կ.- *Այդ մասին ավելի մանրամասն պատմեք:*

Գ.Բ.- Ես մի էպիզոդ կարող եմ պատմել: Այս կամ այն բնակավայրը գրավելուց հետո անընդհատ Բաքվից զանգում էին, ֆաքս էին ուղարկում: Այսինքն՝ անմիջական բանակցություն կար պաշտոնական Բաքվի և պաշտոնական Ստեփանակերտի միջև: Հիմա հարց է ծագում. պատերազմի ժամանակ, երբ ամենավճռորոշ ժամանակահատվածն էր, մեզ հետ հաշվի էին նստում, մեզ ճանաչում էին փաստացի, բանակցում էին, իսկ հիմա չեն ճանաչում: Իսկ այն ժամանակ Բաքվից որ զանգում էին, մենք շատ անգամ չէինք վերցնում հեռախոսը: Փաստաթուղթը, որն ուզում եմ ցույց տալ, թվագրված է՝ 1993 թ. օգոստոսի 17, Ալիևի նամակն է, որը ֆաքսով ուղարկվել է Գերագույն խորհրդին: Նամակում նա փոխվարչապետ Ռասուլ Գուլիևին հանձնարարում է հինգ օրվա ընթացքում նախապատրաստել Աղրբեջանի և Լեռնային Ղարաբաղի բարձրագույն ղեկավարության հանդիպումը:

Բ.Կ.- *Մերոնք հրաժարվեցին:*

Գ.Բ.- Չէ, հանդիպում եղավ, բանակցություններ էին: Միայն հանդիպումը չէր, կար հեռախոսային, փաստաթղթային կապ: Այդ ժամանակ մի անգամ Ռոբերտ Քոչարյանը մասնակցեց Ալիևի հետ հանդիպմանը: Ահա երկրորդ փաստաթուղթը. Ալիևն ու Գուլիևը խոսում են ձեռք բերված պայմանավորվածությունների մասին, մասնավորապես 1993 թ. հուլիսի 24-28-ի հրադադարի մասին: Մի քանի անգամ հրադադարի մասին պայմանավորվածություն ձեռք բերվեց անմիջապես Ղարաբաղի ղեկավարության հետ: Տվյալ փաստաթուղթը այդպիսի պայմանավորվածություններից մեկի մասին վկայությունն է:

Մի միջադեպ էլ պատմեմ, որը առհավատչյան է այն ժամանակվա ներքաղաքական բարդ իրավիճակի, որն էր՝ մի կողմից Ղարաբաղ-Հայաստան հարաբերությունները, մյուս կողմից՝ ներքին երկպառակությունը, երկիշխանությունը: Այն ժամանակ ուղղակի չէին կարողանում ընտրել ԳԽ նախագահ: Մի քանի անգամ ընտրություններ եղան: Ո՛չ Գեորգի Պետրոսյանն էր անցնում, ո՛չ Ռոբերտ Քոչարյանը: Մի անգամ նույնիսկ փորձ եղավ Շահեն Մնդրյանի թեկնածությունը առաջադրելու: Շահենը այդ երկու թեկնածուներից ավելի շատ ձայներ հավաքեց, բայց մի քանի ձայն չհերիքեցին՝ ԳԽ նախագահ ընտրվելու համար: Գեորգի Պետրոսյանը մնաց ԳԽ նախագահի պաշտոնակատար: Ներքին անհամաձայնությունը և պայքարը շարունակվում էին: 1993 թ. վերջին ինձ ներբակալեցին: Զնականորեն պատճառն իմ մի հոդվածն էր «Խաչեն» թերթում: Ես այդ հոդվածով մինչև հիմա հպարտանում եմ: Հիմա Արկադի Ղուկասյանը իրեն ժողովրդավարության հայր է անվանում, չգիտեմ, թե ինչ... 1993 թվականին՝ դեռ պատերազմի ժամանակ, ես հոդված գրեցի հետևյալ վերնագրով՝ «Նոր Սպարտա, թե նոր Արցախ»: Ես փորձում էի ապացուցել, որ ռազմապետությունը ապագա չունի: Բնական է, որ պատերազմի ժամանակ պետք է ռազմական ուժը գերակա լինի, բայց միայն արտաքին թշնամու հետ հարաբերություններում: Սակայն ուժի գործոնը տիրապետում է նաև ներքաղաքական կյանքում, երկրի ներսում: Եթե դու դագանակով թշնամու հետ ես խոսում, ես քեզ հասկանում եմ, բայց եթե դագանակով ինձ հետ ես խոսում, դա արդեն չեմ հասկանում, որովհետև ես քեզ հետ հավասար պայքարում եմ իմ երկրի ազատության համար, և իրավունք չունես ինձ հետ այդպես խոսելու: Ինձ ներբակալելը աբսուրդ էր, որովհետև ես պետության գերագույն մարմնի՝ ԼՂՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի լրատվական ծառայության ղեկավարն էի: Պետության ղեկավարը ի վիճակի չէր կանխել իմ ներբակալությունը: Իմ ներբակալությունը միայն մի դրական հետևանք ունեցավ: Որոշակի տարաձայնություններ կային նաև ԳԽ նախագահությունում, այն միաձույլ, միասնական մարմին չէր: Եվ իմ ներբակալությունը նպաստեց, որ ԳԽ նախագահությունը

կրկին միաձուլվի: Միակ հարցն էր, որ բոլորն էլ կողմ էին:

Բ.Կ.- *Ձերբակալության մասին մանրամասն պատմեք:*

Գ.Բ.- Ինձ տարան յոթ-ութ ավտոմատավորներ: Ես մտնում էի ԳԽ-ի շենք: Զգացի, որ երկու կողմից մի քանի մեքենա մեծ արագությամբ քշում են ինձ վրա: Հասկացա, թե դա մոտավորապես ինչ է նշանակում: Առաջին միտքը, որ գլուխս եկավ, այն էր՝ վազելով հասնել իմ սենյակ, որ ինձ ձերբակալեն ոչ թե փողոցում, այլ իմ սենյակում գործի ժամանակ, իմ պարտականությունները կատարելիս: Հասա մինչև դուռը, բանալիով բացում էի, նրանք վազելով հասան ինձ, սկսեցին մեջքիս խփել, ոտքերս իրարից հեռացնել: Ասացի. «Ձնոք եք ման գալիս, իմ զենքը սա է՝ գրիչը»: Ինձ տարան նստեցրին «Նիվա» մեքենայի մեջ, կապվեցին մյուս մեքենաների հետ, որ արդեն գործողությունն ավարտված է: Բերեցին Արմենավանի շտաբ, այնտեղից՝ Ստեփանակերտի մեկուսարան: Մոտ տասն օր նստեցի:

Բ.Կ.- *Ո՞նց էին պահում, ինչ էին խոսում:*

Գ.Բ.- Ինձ չէին ծեծում, չեմ ասում, թե հարգանք կար, բայց հասկանում էին, որ ինձ չի կարելի ծեծել: Սենյակում, որտեղ ինձ պահում էին, վեց հոգի էին՝ մարդասպաններ, գողեր, հանցագործներ: Դա էր ծանր, ինձ նման մարդու համար դժվար էր այդ միջավայրում մնալը:

Բ.Կ.- *Նրանց հետ հավասար ճաշում էիք, քնում, ինչպես էր:*

Գ.Բ.- Այո, ինչպես նրանք: Նրանց թույլ էին տալիս, որ երբեմն տնից ուղարկված հացը ստանան: Խորհրդային կարգերի ժամանակ էլ այդպես էր. քրեական բանտարկյալները ավելի լավ պայմաններում էին, քան քաղաքական: Ինձ մեկ-մեկ թողնում էին, որ տնից ինչ-որ բան ստանամ: Առանձնապես դաժան վերաբերմունք չի եղել: Ամեն օր գալիս ասում էին. «Ասա, որ սխալվել ես»: Եվ անունը դրել էին, թե իմ հոդվածը հակասում է պետական գաղափարախոսությանը: Բայց պետական գաղափարախոսությունը Գերագույն խորհուրդն էր մշակում, ոչ թե բանակը, իսկ ԳԽ-ից բողոք չկար հոդվածի դեմ: Ով էր դժգոհ՝ չգիտեմ: Նախագահությունը դարձավ միաձայն մարմին, իրենք էլ կատակով ասում էին. «Գեղամի ձերբակալությունը մեզ նորից միացրեց»: Եվ մի աննախադեպ բան եղավ. ԳԽ-ի նախագահությունը Գեորգի Պետրոսյանի գլխավորությամբ գաղտնի նամակ գրեց Լևոն Տեր-Պետրոսյանին՝ գրելով, որ երեք օր ժամանակ են տալիս ԳԽ լրատվական ծառայության դեմ

կավարին ազատելու, այլապես «մենք մեզ ազատ ենք համարում մեր գործողություններում և հետագա քայլերում»: Մի շարք միջազգային կազմակերպություններ ևս բողոքի նոտա հղեցին: Ես հիշում եմ, որ անընդհատ ձեռքերին թղթեր կային, թե՝ այսինչ կազմակերպությունից են ուղարկել՝ ի պաշտպանություն քեզ: Դե, բնական է, լրագրողի են ձերբակալել:

Բ.Կ.- Թուրքերը վախենում էին ինձ ձերբակալել, վախենում էին աղմուկից, բոնում և բաց էին թողնում: Իրենք էլ ասում էին, որ ինձ բռնելը վտանգավոր է, քանի որ ինձ ճանաչում են, անմիջապես աղմուկ կբարձրանա:

Գ.Բ.- Իսկ մերոնք գնացին այդ քայլին: Նամակն էր օգնել ինձ ազատելուն, միջազգային կազմակերպությունների բողոքները, թե՞ մեկ այլ բան ինձ ազատեց, չգիտեմ: Բայց դրա հետևանքն այն եղավ, որ ես չէի կարող նախկինի պես աշխատել, շարունակել կատարել իմ պարտականությունները: Հետո նրբ Բաբուրյանը նշանակվեց ԳԽ նախագահի պաշտոնակատար, ես լրատվական ծառայությունից դուրս եկա:

Բ.Կ.- *Ո՞վ փոխարինեց քեզ:*

Գ.Բ.- Ինձ փոխարինեց Գայանե անունով մի աղջիկ: Այն ժամանակվա լրատվական ծառայությունը պառլամենտի՝ մինչ այսօր եղած ամենալավ լրատվական ծառայությունն էր: Նախ՝ այն շատ ծանր պայմաններում էր աշխատում և հետո՝ իսկապես գործ էր անում: Հիմա նիստերի մասին ինֆորմացիա տալուց բացի՝ ուրիշ ոչինչ չկա: Իսկ այն ժամանակ մենք լրատվական քաղաքականություն էինք մշակում, մեզ վրա էր ընկած արտասահմանյան լրագրողների հետ աշխատանքը, ազատ ժամ չունեինք, անընդհատ ամերիկացի, ֆրանսիացի կամ այլ ազգության լրագրողի հետ էինք, այստեղ-այնտեղ էինք տանում նրանց: Եվ ինչն էր դժվարը. ուտելիք չկար, ես արդեն երես չունեի մեր տուն մարդ տանելու, երբ 3 կգ ալյուրը մեր ընտանիքի համար մեծ հաջողություն էր: Բայց ճար չունեի, ոչ մի ճաշարան չկար: Կամ ես էի մեր տուն տանում, կամ Կարախանյան Բենիկն ու Աղավնին էին իրենց տուն տանում: Պետությունն էլ հնարավորություն չուներ, այդպիսի մի տեղ չկար, որտեղ հյուրերին տանեինք մի կտոր հաց տայինք: Վառելիք չկար, մի կտոր բենզինի համար չգիտեմ որ էինք գնում, ինչ էինք անում, համոզում էինք... Այս մեկը հանուն արդարության պիտի ասեմ. Ռորերտ Քոչարյա-

նը, Սերժ Սարգսյանը այդ հարցում մեզ օգնում էին, նրանք հասկանում էին, որ լրագրողին պիտի ուղարկել, թեկուզ մի լիտր քիչ վառելիք ուղարկվի բանակ, քանի որ տանկի արժեք ունի նրա գրած հոդվածը կամ նկարահանումը: Ամերիկացի մի լրագրող «Լոս Անջելես թայմս» թերթից՝ Քրիստոֆեր Բելլը, արդեն առանց մեզ գնում բախում էր ցանկացած դուռ, և մի բառ էր սովորել՝ «կուշաց»: Տանտերը շատ լավ ընդունում էր, ինչ ուներ՝ դնում էր սեղանին, հյուրասիրում և ճանապարհում:

1993 թ. իրավիճակը մի քիչ փոխվեց, հեռուստատեսությունը սկսեց աշխատել, 92-ին հեռուստատեսություն չկար: 1992-ին ինչ որ Ղարաբաղում մեր՝ ղարաբաղցիների կողմից նկարահանվել է, հիմնականում լրատվական ծառայության արխիվն է: Դրսի մասին չեմ խոսում, դրսից գալիս նկարահանում էին, մենք մեր երախտավորներին գիտենք՝ Զեզանից սկսած, Հայաստանում տարբեր մարդկանց մոտ ահագին արխիվ կա: Մեր նկարահանումների տասնյակ ժապավեններ կան, որոնք Բենիկ Կարախանյանը մինչև հիմա էլ պահում է: Դրանք հազար անգամ օգտագործվել են մեր հեռուստատեսությունում: 1992-ի նկարահանումների առյուծի բաժինը լրատվական ծառայությանն էր, և ոսկե ֆոնդը մենք նվիրեցինք հեռուստատեսությանը:



Պատմում է ԼԵՎՈՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ, (ԽՍՀՄ սպորտի վաստակավոր մարզիչ և սպորտի վարպետ, ՀՀ սպորտի վաստակավոր գործիչ, ՀՀ Սամբոյի ֆեդերացիայի նախագահ, ՀՀ ԶՈՒ գնդապետ)
Երևան 02.05.2006

Հարկավոր էր Ղարաբաղի տարբեր շրջաններում ստորագրություններ հավաքել: Ինձ՝ որպես ստեփանակերտցու, այդ գործի իրականացման համար հանձնարարված էր Ստեփանակերտում իրականացնել ստորագրահավաքները: Իգոր Մուրադյանին, հաշվի առնելով նրա ցանկությունը, բաժին էր հասել Հադրութի շրջանը: Ստեփանակերտում ստորագրություններ հավաքելու երրորդ օրն էր: ՊԱԿ-ի պետի տեղակալը՝ Ռոբերտ Թումանյանը, իմ լավ բարեկամն էր, երեք տարի՝ 1963-1965 թվականներին, Բաքվի բանակի ՆԶ-ում միասին ենք ծառայել: Ռոբերտը զանգեց ինձ: Ռոբերտը, թե՝ «Արի հանդիպենք»: Աղդամ չհասած՝ աջ կողմում, պանդոկ կար: Պայմանավորվում ենք այնտեղ հանդիպել: Ես գնացի ՍՈՒ-ի պետ Իսրայելյան Ռուդիկի հետ, որն իմ հորեղբեր աղջկա ամուսինն է: Ես ներքուստ ինչ-որ բան էի զգում, կասկած կար, որ այստեղ միայն հաց ուտելու հարցը չէ: Ի վերջո նա ասաց, որ հատուկ է հանդիպման համար աչքից հեռու այդ տեղն ընտրել և որ նա գիտի իմ՝ Ստեփանակերտում գտնվելու պատճառը: Հասկանալի է՝ ՊԱԿ-ի պետի տեղակալն է, բայց առաջին երկու օրերը ես ստորագրությունները հավաքել էի իմ ծանոթների շատ նեղ շրջանակներից: Ասաց, որ հաջորդ օրը ես պետք է գնամ Ստեփանակերտից, որովհետև այդ ինֆորմացիան իր պետին, այնուհետև՝ Կևորկովին հասնելու դեպքում ես լուրջ խնդիրներ կունենամ: Առաջարկեց գործը իրականացնել հեռախոսի համարնե-

ի գրքույկի միջոցով, որտեղ գրանցված են բնակիչների անուն ազգանունները, հասցեները, մնում է ստորագրության հարցը: Մտածեցի, որ եթե արդեն երրորդ օրն է, և ՊԱԿ ի պետի տեղակալը ամեն ինչ գիտի, դժնեղությունը ընկնելու, գործը կլսատ-պատատ թողնելու փոխարեն կարելի է, այդ ձևով առաջադրանքը կատարել: Այն ժամանակ ես մարզադպրոցի տնօրեն էի: Հավաքեցի իմ կոլեկտիվին, երկու-երեք օրում գրանցեցինք հեռախոսահամարների գրքույկում եղած բոլորի անուն-ազգանունները՝ ողջ թե մեռած, հասցեները և լուծեցինք նաև ստորագրությունների հարցը: Այդ ամենի մասին չեն իմանում ոչ Այվազյանը, ոչ Ջորի Բալայանը: Տասը օր ես ընդհանրապես չեմ երևացել, այնինչ միայն երեք օր եմ Ղարաբաղում եղել, իսկ մնացած յոթ օրերը Սարի թաղում էի, իմ մարզադպրոցում: Տասն օր անց պատրաստ ներկայանում եմ: Սուրեն Այվազյանը զարմանում է, թե՝ «Դու արդեն եկել ես»: Տարվորիչ տոնով, այնպես, որ նա հավատա, ասացի՝ «Սուրեն Միխայլովիչ, հարցերը լուծված են, արել եմ»:

Բ.Կ.- *Ագոն չէր հասկանում:*

Լ.Հ. 1988 թվականին «Արցախ» հայրենակցական բարեգործական միության ծրագրի համաձայն մեր դատարկ գյուղերը պետք է համալրենք գյուղացիներով, որոնք վաղուց դուրս են եկել իրենց գյուղերից: Մտածեցի, որ ես կարող եմ զբաղվել Բերդաձորով: Այն իմ ծննդավայրն էր. գիտեի Հին Շենը, Մեծ Շենը, Եղնահողը, Տարսիվերսը, Կանաչ Թաղան, որոնք կիսադատարկ գյուղեր էին: Բոլորս էլ ուզում էինք, որ մեր գյուղերը գազիֆիկացվեն, ջրամատակարարման հարցերը լուծվեն, ստեղծվեն աշխատատեղեր: Ֆոնդ ստեղծվեց, մայրիկ փող էին հատկացնում այդ գործերի համար: Կազմակերպեցինք Բերդաձորի գազիֆիկացումը, գյուղի տղաները մեզ օգնեցին Թաթարյանի տրաստայից խողովակներ անցկացնելու, գողերը, սալիկները տեղադրելու հարցերում, որպեսզի գյուղի յուրաքանչյուր տուն գազ ունենար: Մեզ օգնում էին Հին Շենից Մկրտչյան Առնոն, Մեծ Շենից՝ Գազիկ Հարությունյանը իր տղաների հետ: Իգոր Մուրադյանի, մյուսների նախաձեռնությամբ Տարսիվերսում ոռոշչական աշխատատեղեր ստեղծվեցին: Մեզանից ոչ մեկի մտքով չէր անցնում, թե այդ ամենի վերջը ինչ պետք է լինի: Դրանք նախապատրաստական աշխատանքներ էին, որ արվում էին կայանալիք ռեֆերենդումի պատճառով: Մենք համոզված էինք, որ ռեֆերենդում լինելու է: Անվանական ասեմ՝ ում եմ ես գյուղ բերել: Տխուր

ասիթով Աբովյանում մեծ թվով բերդաձորցիներով՝ մոտ քառասուն-հիսուն հոգով, հավաքված էինք, ու ես հայտարարեցի «Արցախ» հայրենակցական միության ստեղծման մասին, բացատրեցի առաջին ծրագրի նիստական գործերը, որ հայաստանաբնակ բերդաձորցիները պետք է գնեն գյուղ, այնտեղ ապրեն այնքան, մինչև ռեֆերենդումը կայանա: Ասացի, որ իրենց ճանապարհածախսը, այնտեղ ապրելու հոգսերը հոգում է «Արցախ» միությունը: Մարդիկ նորմալ ընդունեցին իմ հայտարարությունը: Վերջում Սաֆարյան Էդիկը և մի խումբ հայաստանաբնակ բերդաձորցիներ որոշեցին մի քանի օրից հանդիպել ու քննարկել: Հավաքվել էր նախաձեռնող կորիզը: Այդ խմբի ղեկավար հանդես եկած Սաֆարյան Էդիկը հայտարարեց, որ ինքը, լինելով ՍՈՒ-ի պետ, ժամանակավոր թողնում է իր աշխատանքը և բնակություն հաստատում իր հայրենի գյուղում: Այդ օրը ցուցակներ կազմվեցին, ձևավորվեց գյուղ մեկնող ընտանիքների խումբը. Սաֆարյան Էդիկը և Էլզան իրենց բալիկներով, Հունանյան Էդարը, Իզդիսը, Լսանիշը, Խալիդան: Նրանց ազգանվանական անունները կրելը հետաքրքիր պատմություն ունի: Գրանցից առաջ ծնված երկու-երեք երեխաները մահացել էին: Պառավները խորհուրդ էին տվել, որ մյուս նորածնին թուրքական անուն տան, որպեսզի չմահանա: Այդպես էլ արել են, և թուրքական անուններ կրող երեխանները ողջ են մնացել: Մի խումբ, Հունանյաններից երեք ընտանիք, որոնք այստեղ ապահովված էին բնակարաններով, աշխատանքով, համաձայնեցին վերարտակվել Բերդաձորում: Ինչպես նաև Սաֆարյան Էդիկի եղբայր Թաթուլը իր ընտանիքով, Հարությունյանները, որոնք մեծ գերդաստան են: Ցուցակագրվեցին տասնութ ընտանիքներ, որոնք տեղափոխվեցին Բերդաձոր: Սաֆարյան Էդիկը դառնում է Մեծ Շենի կոլտնտեսության նախագահ: Լուրջ աշխատանքներ են կազմակերպվում: Նախագահության նիստերի ժամանակ ես ինձ լավ էի զգում, խոսելու տեղ ունի, որ կարողացել եմ տասնութ ընտանիք վերարտակեցնել Բերդաձորում:

Պատերազմի տարիներին Բերդաձորից երևանենք հոգի գոհվել են: Անուշավան Գրիգորյանը՝ իմ մորաքրոջ տղան, նույնպես զոհվեց պատերազմի ժամանակ: Նա մեր գումարտակի հրամանատարի՝ Կարեն Վլադիկի տեղակալն էր: Օպերացիա «Կոլցո»-ի ժամանակ թուրք ՕՄՈՆ ականների կողմից ապանվեց իր հղի կնոջ, երեխաների աչքի առաջ: Անուշավանը ապրում էր Սարի թաղում: Իմ հայտարարությունից

հետո հայրենիքի կանչով եկավ Բերդաձոր: Մեր մտքով չի անցել, որ կարող է պատերազմ լինել: Հետագայում՝ 1991 թվականին հայաստանյան բնակ բերդաձորցիները համալրեցին ջոկատները: Ձևավորվեց քսան հինգ հոգանոց երկու ջոկատ: Առաջին ջոկատի հրամանատարը Միշա Հովսեփյանն էր: Բերդաձորի համար ես էի պատասխանատու՝ որպես միության նախագահ: Մեր միությունը նույն իրավունքները, կնիքն ու կանոնադրությունն ուներ, բայց մենք հավաքված էինք Արցախի շուրջը: Սկսում եմ հավաքագրել երկրորդ ջոկատը: Ամեն շաբաթ և կիրակի հեռուստատեսությամբ հայտարարում էին հավաքի մասին մեր կոչը: Մեզ հաջողվեց երկու ջոկատներից բացի մասամբ կազմավորել նաև երրորդ ջոկատը, որի հրամանատար նշանակեցինք Գագիկ Շաբարյանին: Մեր երկու ջոկատներն էլ տարան Մկիթարաշեն: Բռնագաղթի լուրը առաջինը Գրիշա Հարությունյանն ասաց ինձ, որ Բերդաձորը, Հադրութի շրջանի գյուղերը թուրքերի ձեռքում է, ժողովրդին քշել են, Լաչինում, Շուշիում, Բաքվում ֆիլտրացիա են անում: Ժողովուրդը կարիքի մեջ է, այդ ցրտին ոչ մի բան հետները չէին վերցրել: Ասացի, որ երեք հարյուր հոգու համար տալիս եմ վրաններ, մատրասներ, ծածկոցներ, ապիտակներն, սպասք՝ այն ամենը, ինչով մեր մարզադպրոցի սաների համար ամառները ճամբարներ էինք կազմակերպում Լուսագյուղում, Սևանում, Ծաղկաձորում: Գրիշան մի «Կամազ» է ուղարկում: Անձրևոտ գիշեր էր: Ամբողջ գույքը բարձում ենք և ուղարկում Գորիս՝ որպես բռնագաղթածներին օգնություն: Հասանք Գորիս, մեզ տարան Տեղ գյուղ: Ժողովրդի մի մասը դպրոցի շենքում էր ապաստանել:

Բ.Կ.- *Ինչպես ստեղծվեց Հարությունյան Անդրանիկի ջոկատը:*

Լ.Հ.- 1990-1991 թվականներին, երբ գնացել էինք Հին Շեն, զինված էինք, բայց ոչ այնպես, որ պարծենանք, թե զինված էինք: Պտտվել եմ գյուղի չորսբոլորը, ոչ մի տեղ դիրք չկար: Այդ գիշեր ես ընկել եմ անձնագրային ռեժիմի տակ: Առավոտյան կողմ ռմբակոծել են: Ես ոչ մի տեղ պաշտպանական դիրք չտեսա: Թուրքը կարող էր հանգիստ մտնել, ժողովրդին վերացնել և գնալ: Բայց թուրքը չգիտեր, որ այդտեղ պաշտպանություն չկա: Երբ ժամը ութին իջնում էի գյուղամեջ, տեսա՝ երեք հոգի իջնում են աղբյուրի մոտ: Անդրանիկն առանց զենքի էր, մյուսը ծխում էր, միայն մեկի մոտ զենք կար: Կանգնեցինք, խոսեցինք, թե՝ «Լսել ենք, որ եկել ես»: Այդ օրը Մեծ Շենում դեպք էր կատարվել՝ մի հայ վարորդի էին մորթել: Այդ առիթով էինք եկել: Հաջորդ գիշեր սկսվեց «անձնագրային

ռեժիմը»: Անդրանիկին ասացի, որ շրջել եմ գյուղով մեկ և ոչ մի տեղ պաշտպանություն չեմ տեսել: Նա, թե՝ «Մեզանից վախենում են, ով գնում է ինչ-որ բան անի»: Բայց նրա ասածը ինձ համար համոզիչ պատասխան չէր: Նույն երեկոյան ես Գալստյան Ժաննային տեսա:

Բ.Կ.- *Ժաննան ինչ էր անում:*

Լ.Հ.- Ես չգիտեմ՝ Ժաննան ինչ էր անում: Նրանցից մեկը համարվում էր ջոկատի հրամանատար, բայց նրանց հրամանատարական գործունեությունը ես չզգացի: Ես իմ կարծիքն եմ հայտնում իմ գյուղի հետ կապված: Ժաննան ինձ ասաց այն ինֆորմացիան, որը ես էլ գիտեի՝ այն, որ առավոտյան կողմ ռուսների ՕՄՕՆ-ը հասնելու է գյուղ: Օպերացիա «Կոլցո»-ն սկսվել էր: Ես գիտեի, որ մի անգամ մտել են Ծորին հարթը կալատեղ, գենքերը տարել: Բերդաձորի ջոկատի զենքը այնտեղ էր պահեստավորված: Իհարկե, մատնել էին, որովհետև ուղիղ գնացել էին պահեստների վրա, հավաքել ամբողջ զենքը: Զինամթերքից բացի պահեստներից տարել էին տոննաներով ալյուր, հագուստ և այլն: Անդրանիկը, Ժաննան, այնտեղ առաջնորդող դեմքեր լինելով, այդպիսի դեպք էր կատարվել: Այդ երեկոյան ես Ժաննային խորհուրդ եմ տվել պահեստներում պահված ցրեն գյուղով մեկ: Ժաննան այդ հարցում հետևեց իմ խորհրդին: Ասել եմ նաև, որ նա՝ որպես ճանաչված կին, պետք է թաքնվի, որովհետև նրան կբռնեն: Ցավոք, նրան բռնել են: Ժաննայի բախտը բերել է, որ Կրիվոպուսկովն էր շտաբի պետը: Կրիվոպուսկովը, լինելով ռուսական ՆԶ շտաբի պետ, օգնում էր: Արդյունքում՝ Ժաննային չեն հանձնում ադրբեջանցիներին, բերում են Ստեփանակերտ: Գյուղում մի մարդ կար՝ Հովսեփյան Յուրիկը, որը մորս կողմից ինձ ազգական էր: Նա «Նիվա» ուներ: Խնդրեցի, որ Լշով, ձիով կամ ոտքով ինձ Կոռնիձորով անցկացնեն, հասցնեն Ստեփանակերտ: Կոռնիձորում ոչ ոք ռիսկ չարեց ինձ անցկացնել: Հովսեփյանն ասաց, որ իր մեքենայով ինձ կտանի: Նա Ճողունց ցեղից էր, նրանք հայտնի են իրենց խելառության հասնող համարձակությամբ, անվախությամբ: Գյուղում մեքենան կանգնեցնում են, թույլ չեն տալիս դուրս գանք: Այդ ժամանակ մերոնք Ասկերանի շրջանում թուրք էին սպանել: ՕՄՕՆ-ականները փակել էին ճանապարհները: Ասում էին, որ չենք կարողանալու հասնել Ստեփանակերտ: Յուրան պնդում էր, որ կկարողանա: Ես նրա վստահ խոսելուց, համոզվածությունից համարձակություն էի ստացել: Եկանք Մեծ Շեն, այստեղ էլ մեզ չկարողացան համոզել: Հասանք Ռուսի աղբյուրի

մոտ: Այնտեղ կանգնած էին ՕՄՕՆ-ականների մեքենաներ, ուշադիր նայում էին: Յուրիկն էլ բեղեր ուներ՝ իսկական թուրքի պես: Թուրքերեն էլ շատ լավ խոսում էր: Հասանք Լիսագոր: Այստեղ ՕՄՕՆ-ականները զինված էին: Ինձ մոտ ատրճանակ կար, թաքցրի: Երկու նոնակներն էլ գցեցի մեքենայի նստարանի տակ: Ճանապարհին Յուրիկին ասել էի, որ այդ զենքերը մի տեղ՝ մի քարի տակ թաքցնենք, հետո, երբ ճանապարհները կբացվեն, կվերցնենք, կարող է մեզ բոնեն: Բայց այդ ամենը մնաց մեքենայի մեջ: Լիսագոր մտնելիս Յուրիկին ասացի, որ ընթացքը դանդաղեցնի: Մեքենայի մեջ ռադիոընդունիչ կար, թուրքական մուզամ միացրինք, այնպես, որ մինչև երկու մետր ձայնը լսվի, և դանդաղ առաջ ընթացանք: Դիմացից թուրքերով լիքը ավտոբուս դուրս եկավ: Վարորդը Յուրիկին ճանաչում էր, ազդանշան տվեց, Յուրիկն էլ ազդանշանով պատասխանեց: Վարորդը ձեռքով արեց, Յուրիկը՝ նույնպես: Յուրիկի սուրբ աստվածը «կտրել» էր: Ասում եմ՝ «Յուրիկ, ինչո՞ւ պատասխանեցիր նրա ազդանշանին», թե՝ «Ձեռքս անկախ ինձանից գնաց»: Յուրիկը պատմեց, որ տասնհինգ տարի է, իրար ճանաչում են, ճանապարհների վրա միշտ հանդիպել են: Համոզված էինք, որ թուրք վարորդը մեր եռևից մարդ է ուղարկելու: Մեքենայի ընթացքը արագացրեց: Ես անընդհատ ետ էի նայում: Ահագին հեռացանք, արդեն Շուշիին ենք մոտենում, տեսանք, որ մեր եռևից ոչ ոք չեկավ: Յուրիկն ասաց՝ «Արա, երևի այն աղուհացը, որ այդ մարդու հետ կերել ենք, նա չի մոռացել»: Յուրիկին ասացի, որ պետք է Քարինտակով մտնենք, այնտեղ Շոշ տանող ճանապարհ կա, այդտեղով մտնենք և գնանք Ստեփանակերտ: Հասանք խաչմերուկի մոտ, որի ճանապարհներից մեկը տանում է Շուշի, մյուսը՝ Ստեփանակերտ, իսկ աջ կողմի վրա Քարինտակ տանող ճանապարհն է: Խաչմերուկի վրա թուրքերը մեքենաներով կանգնած էին: Եթե Քարինտակ տանող ճանապարհով գնայինք, մեքենայից անգամ հետք չէր մնա: Ասացի՝ «Ուղիղ գնա»: Խաչմերուկի վրա զինվորականներ են կանգնած: Հասանք արգելափայտի մոտ, որի երկու կողմերում ռուս զինվորականներ էին կանգնած: Թե՝ Յուրիկի հայացքն էր ազդեցիկ, թե՝ գերբնական ուժեր ազդեցին, արգելափայտը բարձրացրին: Միայն՝ հարցրին, թե որտեղ ենք գնում: Ասացինք՝ Աղդամ: Երբ այդ խաչմերուկն անցանք, խաչակնքեցի: Մենք փրկվեցինք: Աստծո մատն էր խառը: Ճանապարհին մի խումբ լակոտներ, քարակոյտեր հավաքած, կանգնած են՝ պատրաստ քարապրանուկ անելու: Մեզանից ժամ են հարցնում,

ծխախոտ են ուզում: Դնմքս թաքցրած ծխախոտի տուփը գցեցի և հանգիստ անցանք: Յուրիկը, կապը կտրած դանայի պես, այնպես գազ տվեց, որ մեքենան «խնդռուզին» տալով սլացավ: Յուրիկը հոգեկան անհավասարակշիռ վիճակում էր:

Արմեն Իսագուլովի և Ներքին զորքերի ստորաբաժանումների հետ Ֆիզուլիում էինք: Զորքի տեղակայումն այդտեղ էր: Սեյրան Օհանյանը շտաբի պետն էր, Իսագուլովը՝ ՆԶ ստորաբաժանումների հրամանատարը: 1993 թվականին Իտալիայի մրցումներից նոր Լի եկել: Ես պետք է գլխավորեի մեքենաների շարասյունը, սակայն «Շուլցը»՝ Արկադիան, ողջ շարասյան պատասխանատուն էր: Իմ «Նիվայում» նստում են սպաներ, որոնք Հայաստանից էին և ճանապարհը չգիտեին: Շուլցը ինձ ճանապարհը բացատրում է, որ Ֆիզուլիի կամրջից ձախ պետք է գնանք, ուղիղ գնալու դեպքում կհայտնվենք Հորադիզում: Մենք ապասում էինք, որ Շուլցը ճանապարհին մեզ պետք է հանդիպի, բայց մենք ավելի արագ ենք գնում, քան Շուլցը: Կամրջից ձախ թեքվելու և Ֆիզուլի գնալու փոխարեն ուղիղ ենք քշում: Սպաներին հարցրի, թե ուղիղ պետք է գնանք: Նրանք թե՝ «Մենք նոր եկածներ ենք, չգիտենք»: Քիչ էր մնում, որ մոտենանք Հորադիզին: Մեքենան կանգնեցրի, ասացի՝ «Տղերք, ճանապարհին մեքենայի ոչ մի հետք չկա, այստեղից Ֆիզուլիի հոտ չի գալիս»: Հիշում էի նաև Շուլցի ասածը, որ ճանապարհից դուրս չգանք, քանի որ ականապատած է: Շարասյան վարորդներին ասացի, որ սխալվել ենք, պետք է ետ գնանք: Հասանք կամրջի մոտ՝ Շուլցն այնտեղ էր:

Երբ Իսագուլովը Ֆիզուլիից գնում էր Ստեփանակերտ, ես մնում էի՝ որպես նրան փոխարինող: Այնտեղ էր նաև Շուլցը: Հերթական անգամ, երբ Իսագուլովը մեկնել էր, Շուլցը թե՝ «Արի բուժաշխատողներին պատիվ տանք, գիշեր-ցերեկ աշխատում են: Արի գնանք Հաղրութ, այնտեղ խոզ կամ մի ուրիշ կենդանի կմորթեն»: Հաղրութում Շուլցին բոլորը գիտեին: Շուլցն էլ անգիր գիտեր, թե ում գոմում քանի հատ և ինչ կենդանիներ կան: Մեքենան ամեն ինչով բեռնեցինք և գնացինք: Մինչև առավոտ Շուլցի նախաձեռնությամբ բուժաշխատողներին պատիվ տվեցինք: Իսագուլովը եկավ: Ամեն ինչից տեղյակ էր: Զղայնացավ, թե՝ «Քեզ վրա չի կարելի հույս դնել»: Արդարանում եմ, որ խեղճ բուժաշխատողները առավոտից երեկո առանց հանգստի աշխատում են, կարելի էր մի անգամ պատիվ տալ նրանց: Նա թե՝ «Ճիշտն ասա, ո՞ւմ մտահղացումն էր, բո՞, թե՞ Շուլցի»: Ասացի՝ «Անձամբ իմ առաջարկությունն էր»: Այդ անգամ էլ Շուլցին «փրկեցի»:

Երբ գնացել էինք Օդեսա, ինձ ուղարկել էին որպես «Արցախ» միության ներկայացուցիչ, Դադամյանին՝ որպես «Ամարասի» ներկայացուցիչ: Այնտեղ ինչ-որ ֆիրմա կար, որ պետք է մեկ միլիոն ֆրանկ տար: Մեզ հյուրանոցում տեղավորեցին, բոլոր պայմանները ապահովեցին: Շնայդեր անունով մի գերմանացի կար, այդ ֆիրմայի ներկայացուցիչն էր: Նա սամբիստ տղա էր, ինձ էլ ճանաչեց: Որտեղ և ինչ շրջապատում նստում էինք հաց ուտելու, Դադամյանին Օդեսայի «պատվավոր» քաղաքացու կոչում էին տալիս: Դադամյանը այնպիսի անեկդոտներ էր պատմում, բոլորը ծիծաղում էին, իր հումորով բոլորի հախից գալիս էր: Նույնիսկ քաղաքապետն է ասել Դադամյանի՝ Օդեսայի պատվավոր քաղաքացի լինելու մասին: Նրանք մեզ սիմվոլիկ փող տվեցին՝ երկու մետր երկարությամբ, մեկ մետր լայնությամբ ֆրանկ, որի վրա գրված էր՝ «Մեկ միլիոն»: Բայց ես համոզված եմ, որ այդ գումարը փոխանցել են Հայաստան: Հետո գնացինք Մոսկվա: Այնտեղ երկու օր էր, ինչ Զորի Բալայանը, Վաչիկ Գրիգորյանը, Սոս Սարգսյանը, Վիկտոր Համբարձումյանը և մի խումբ մարդիկ հացադուլ էին հայտարարել: Զորին թե՝ «Որտեղ է Դադամյանը: Գտիր նրան: Մի՛ մոռացիր, որ նա շաքար ունի և նրան բաղցած մնալ չի կարելի»: Գնում եմ Բ կորպուս, տեսնեմ՝ Դադամյանը ոտքերը մեկնած, պառկած է: Ասաց, որ ինքն էլ է հացադուլ հայտարարում: Ասում եմ՝ «Զորին ինձ ուղարկել է, որ ձեզ հաց ուտելու հրավիրեմ», նա թե՝ «Դու նրան փոխանցիր, որ ես էլ եմ հացադուլ հայտարարում»: Սուս-փուս դուրս եկա, գնացի Զորիի մոտ, ասացի Դադամյանի որոշման մասին: Զորին ջղայնացավ, թե՝ «Գնա, Դադամյանին բեր այստեղ: Ի՞նչ հացադուլ, նա կմնոնի...»: Գնում եմ Դադամյանի մոտ, հիմա էլ նա թե՝ «Գնա գրողի ծոցը»: Ասում եմ՝ «Ընկեր Դադամյան, որտեղ ուզում եք ինձ ուղարկեք, միայն՝ եկեք ինձ հետ»: Հետո սկսեց հայհոյել Զորիին: Ասացի՝ «Բորիս Վարդանիչ, ինձ հանձնարարել են, որ վերադառնամ ձեզ հետ, ես առանց ձեզ չեմ կարող այնտեղ գնալ»: Համոզեցի, դուրս եկանք: Ճանապարհին շարունակում է հայհոյել Զորիին, թե՝ «Ո՞վ է նա, ինչո՞ւ նա պետք է հացադուլ անի, ես՝ ոչ»: Զորին երկար խոսեց, բացատրեց, որ իրենք հացադուլ են հայտարարել, իսկ Դադամյանը բաղաքական պլանում պետք է նրանց աջակցի:

Մի անգամ ես, Դադամյանը, Աղաջանյան Լյոնյան հաց էինք ուտում: Այդտեղ էր նաև Ժիրինովսկին: Լսում ենք, որ խոսում են, թե՝ «Նա Դադամյանն է՝ ԼՂ պատգամավորը»: Նրանք շամպայն էին

խմում: Մատուցողին կանչեց, երկու շիշ շամպայն պատվիրեց և մրգեր: Դադամյանն էլ էր խում նրանց խոսակցությունը: Վերջին պատվերը լսելով՝ ինձ ուղարկեց կոնյակի ետևից: Լյոնյային շտապ ուղարկեցի սենյակ, ամենաընտիր կոնյակից բերելու: Մինչ մատուցողը նրանց հյուրասիրած շամպայնները կդներ մեր սեղանին, մյուս մատուցողը մեր հյուրասիրած կոնյակներն է դնում նրանց սեղանին: Ժիրինովսկին մոտ տասը հոգու հետ էր նստած, մենք՝ երեք հոգի էինք: Ժիրինովսկին երկու տեղակալներ, մեկը թաթար էր, մյուսը՝ հայ: Այդ հայը մոտեցավ և առաջարկեց միանալ նրանց սեղանին: Ժիրինովսկին էլ մոտեցավ: Միացանք: Ժիրինովսկին հարցրեց, թե ինչպես կարելի է Զորի Բալայանի հետ հանդիպել: Այն ժամանակ Ժիրինովսկին այն հռչակը չուներ, ինչ հիմա է: Դադամյանն ասաց, որ կխոսի Զորիի հետ, պատասխանը կփոխանցի: Բարձրացանք սենյակ, Դադամյանը փոխանցեց Ժիրինովսկու խնդրանքը: Զորին թե՝ «Ո՞վ է Ժիրինովսկին...»: Եվ չցանկացավ Ժիրինովսկու հետ հանդիպել: Երբ երեկոյան նորից իջանք հաց ուտելու, Ժիրինովսկին իր խմբով նստած էր: Ամոթից չգիտեինք ինչ անել: Դադամյանին ասացի, որ Ժիրինովսկուն պատասխանի, իբր մի բանի օրից հանդիպումը կկայանա: Այդպես էլ պատասխանեց Ժիրինովսկուն: Երեք օր շարունակ հանդիպում էինք Ժիրինովսկուն: Զորիին ասացինք, որ մենք այդ մարդու հետ արդեն ընկերացել ենք և Ժիրինովսկին Ռուսաստանի մեծահարուստներից է, նավթային բիզնեսի դեմքերից է, անունով տղա է, մի տեղակալն էլ արթիկցի տղա է: Գոնե այդ հայ տղայի խաթեր համար պետք է համաձայնի հանդիպել: Համոզեցինք: Ժիրինովսկին գալիս է Զորիի սենյակ: Զրույցի ընթացքում Զորին համակրանքով է լցվում Ժիրինովսկու նկատմամբ:

Մոսկվայում հայկական համայնքը, հատկապես՝ ուսանողները, բարոյական մեծ օգնություն ցույց տվեցին: Ամբողջ գիշեր կանգնում էին հյուրանոցի մոտ, որտեղ հայ պատգամավորները հացադուլի մեջ էին: Առավոտյան հայ ուսանողները ուռած աչքերով գնում էին դասի:

Ռուսական Դումայում պատգամավորը իրավունք չուներ նույն թեմայով երկու անգամ խոսել: Այդ պատճառով Ղարաբաղյան խնդիրն ամեն օր բարձրացնելու համար պայմանավորվում էին, և մի անգամ Զորին էր խոսում, հետո՝ Հենրիխ Անդրեևիչը կամ Վիկտոր Համբարձումյանը: Եկավ Հենրիխ Իգիթյանի խոսելու հերթը: Ելույթը պետք է տևեր հինգ րոպե: Նա գիշերը պատրաստվեց ելույթին: Եկավ Դադամյանի սենյակ և ներկայացրեց ելույթը: Դադամյանն ասաց, որ շատ լավ է: Մեկ

էլ հարևան սենյակից Զորին պատը թխկացրեց: Գնացինք նրա մոտ: Զորին մի ձեռքով տպում էր, մի ձեռքով՝ հեռախոսով էր խոսում: Ակնոցներն էլ քթին դրած՝ նայեց Հենրիխին, թե՝ «Հը, ինչ կա, ինչ ես պատրաստել»: Հենրիխն սկսեց կարդալ: Զորին ուշադիր լսեց, մեկ էլ գոռաց՝ «Այդ ինչ ես գրել, տուր ինձ»: Հենրիխը շատ հանգիստ թուղթը փոխանցեց նրան: Զորին սկսեց հայհոյել և թղթերը շպրտեց սենյակով մեկ: Հենրիխ Իգիթյանը հանգիստ նայում էր: Զորին գոռգոռում էր, թե՝ «Դու, որ պետք է գրավես բոլորին քո խոսքով, արտասանությամբ, դու՝ Հենրիխ Իգիթյանը լինելով, քո խոսքը թղթից ես կարդում...»: Հենրիխը լսեց, լսեց, վերջում, թե՝ «Դու էլ էշ դարաբաղցի ես...»: Զորին վեր կացավ տեղից: Մի պահ լռություն էր: Եվ փաթաթվեցին իրար: Հաջորդ օրը Իգիթյանը շատ լավ ելույթ ունեցավ:

Գրիգորյան Վաչիկը երեսունհինգ տարի եղել է Ղարաբաղի գլխավոր անասնաբույժը: Մենք շատ մտերիմ էինք: Իմ սպորտաձևում տեստեր կան, որ լիցքավորում է, հանգստացնում: Որոշեցինք կիրառել հացադուլ անողների վրա: Ասացի՝ «Վաչիկ, ես կարող եմ այնպիսի փորձարկում անել քեզ հետ, որ դու կշտանաս»: Համաձայնեց: Ասացի՝ «Վաչիկ, եթե հիմա այստեղ լավաշի մեջ փաթաթած տաք խորոված լիներ, կուտեիր»: Ասում եմ՝ «Սիմոն Հմայակովիչ, քնզ էլ բերեմ», նա թե՝ «Չէ, ես չեմ ուզում»: Դուրս եմ գալիս, քիչ անց մտնում այնպես, կարծես ձեռքերս վառվում են տաք լավաշից: Մատներս այնպես եմ շարժում, իբր բրդուճ եմ սարքում: Երևակայական բրդուճը տալիս եմ Վաչիկին և զգուշացնում այնպես ուտել, որ քյաբաբի հյութը չկաթի, սավանը չկեղտոտի: Հետո ասում եմ.

- Գարեջուր կխմեմ:

- Ի՞նչ գարեջուր է:

Նա արդեն խաղի մեջ է մտել: Իբր բացում եմ գարեջուրը, լցնում բաժակը, տալիս եմ նրան, թե՝ «Միանգամից չխմես, կում-կում խմիր: Համ կեր, համ խմի»: Այդ ամեն ինչի վերջում հարցնում եմ.

- Հը, Վաչիկ, ոնց էր:

- Թոռներիս արև, կշտացա:

Ամեն օր ինձ կանչում էր: Մեկ էլ Վաչիկը կանչում է, թե՝ «Լյովա, էն քյաբաբից չկա, մի հատ բեր»: Ասում էի՝ «Հարց չկա»: Զորին ասում էր՝ «Դու մեզ աշխարհով մեկ կխայտառակես»: Բացատրեցի, որ արածս ընդամենը իմիտացիա է:

Պատմում է ՌԱԶՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆԸ,
Երևան, 24.11.2005 թ.

Աշխատում եմ Ազգային անվտանգության ծառայությունում որպես վարչության պետի տեղակալ: 1991 թ. Ռուսական բանակում բուժակ եմ եղել: Ռուսաստանից վերադարձել եմ Ղարաբաղ: Պատկերացում չունեինք, թե Ղարաբաղում իրականում ինչ է կատարվում: Հասկացա, երբ իջա Խոջալուի օդակայան, որտեղ ադրբեջանական ՕՄՕՆ-նն էր: Ինձ շարժման մեջ ներքաշեց Աշոտ Առուշանյանը: Ունեինք հիմնականում մեր ջոկատը և մի քանի ջոկատներ: Քաջավանի ջոկատը նոր էր ստեղծվել Նորայր Դանիելյանի գլխավորությամբ: Մենք պահում էինք Քաջավանի հատվածը: Մեր գյուղի՝ Վարդաձորի (Գյուլաթաղ) և հարևան գյուղերի ժողովուրդը պահում էին ադրբեջանական սահմանին գտնվող դիրքերը: Պարետային ժամ էր, ռուսական զորքն էր հիմնականում, մեր ջոկատի տղաներից 16-17 հոգու բռնեցին, տարան Շուշիի բանտ: Նորայր Դանիելյանը Շուշիի բանտում նստեց մեկ ու կես տարի, հետո տարան Բաքու: Նրան ազատ արձակեցին 92-ի գարնանը, երբ արդեն սկսվել էին պատերազմական գործողությունները: Նա վատառողջ էր, բայց միանգամից կպավ գործին: «ԿԱՄԱԶ»-ով պիտի գնային Ստեփանակերտից զենք բերեին, ճանապարհը անցնում էր ադրբեջանական մի քանի գյուղերի միջով: Այդ գյուղերը ազատագրված էին, բայց այդտեղ նա ականի վրա պայթում է: 2-3 ամիս պառկում է հիվանդանոցում, ապաքինվելուց հետո վերադառնում է: Մենք արդեն նահանջել էինք, Մարտակերտը հանձնել էինք: Մենք գտնվում էինք Քաջավանում, կապի միջոցներ՝ «Ալինկո» և այլն, հիմնականում չկային, հազարից մեկի ձեռքին կար, սխալ ինֆորմացիա էր մեզ հասնում, օրինակ, չգիտեինք, որ ադրբեջանական տանկերը համարյա մտնում են Մարտակերտ:

Հրաման ստացանք՝ նահանջել...

Բ.Կ. *Ասում էին՝ Հայրուկ գունդը գալիս է, գրաններն ասում էին՝ գնացեք, Մարտակերտը հանձնում է...*

Ռ.Հ.- Այդպիսի բան չեմ լսել: Մեզ ոչիշտ ինֆորմացիա չէր հասնում, մենք գիտեինք, թե ամեն ինչ լավ է, բայց թշնամու տանկերը արդեն մտնում էին Մարտակերտ, Հակոբ Կամարիի, հեռուստաաշտարակի կողմը թուրքերն էին արդեն նստած. եթե շարունակեինք, կհայտնվեինք շրջափակման մեջ, այդ հարթ տարածքից չէինք կարող դուրս գալ: Ետ ենք նահանջում, հետո մեր տղաներն են գալիս՝ 50-60 հոգի, հիմնականում Վարդաձոր գյուղի տղաներն էին՝ Աշոտ Առուշանյանի գլխավորությամբ, քանի որ Նորայրը այդ ժամանակ հիվանդանոցում էր: Աշոտ Առուշանյանը հերոս տղա էր, այդ ժամանակ նա 21 տարեկան էր, բայց ավելի վաղ էր սկիրվել այդ գործին: Սովորում էր Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում՝ ֆիզիկայի բաժնում: Նորայրի հետ միասին էին սկսել գործել: Իր տարիքի համեմատ բավական հասուն էր, հեռուն էր մտածում, կարողանում էր մարդկանց համոզել, որ Ղարաբաղը ազատագրվելու է և վերամիավորվելու է Հայաստանին, դա մեզ այն ժամանակ հեքիաթ էր թվում, իսկ նրա համար իրական էր: Մենք աղրբեջանցիներին կանգնեցրինք Կուկլին Յալ կոչվող վայրում և ահագին ետ շպրտեցինք: Մարտակերտում այդ ժամանակ Կոմանդոսն էր, Ֆելիքսը... Աշոտը մի առաջարկություն արեց, միասին գնացինք շտաբ, ասացինք, որ հիմա հնարավոր է մտնել Միրրաշիր, քանի որ փախչում էին տանկերով, ամեն ինչով, ահագին կոտորած եղավ այդտեղ, 1992 թ. հուլիսի սկզբին էր: Բայց մեզ կոնկրետ չասացին, որ վերևից ճնշում է եղել, այրբեջանցիներ, հնարավոր է, մեզ զցել են օղակի մեջ: Ստիպված էինք ետ նահանջել, վերջինը մեր գյուղի ջոկատի տղաներն էին: Գիշերը տեսանք, որ թուրքական զորությունը՝ թալանչիներով, տեխնիկայով, մտել են Մարտակերտ քաղաքը: Մեզ համար դա անբացատրելի հարց էր. ողբերգություն, լաց էինք լինում: Մարդիկ կային, որ չէին ուզում այնտեղից դուրս գալ, զոռով ենք հանել, ասում էին, թե՝ Սովետական Միությունը, կոմունիստները թույլ չեն տա...Նահանջելով՝ հասանք Դիրմրոնի ու Մեհմանայի խաչմերուկ: Կազմակերպված չէր, անկանոն նահանջ էր, ընդհանուր հրամանատար չկար, թեև այնտեղ Կոմանդոսն էր, բայց այնպիսի խուճապ էր առաջացել, որ ոչ մեկը մյուսին չէր լսում,

կին, երեխա, ընտանիք... չգիտեին՝ իրենց երեխային ուր տեղ կերակրել, ուրդ կար դատարկ դուրս էր եկել, նույնիսկ՝ առանց սի կտոր հացի: Հավաքվեցինք 70-80 հոգի, Աշոտն ասաց՝ «Ո՞վ է ուզում մնալ ու մեռնել, բայց պահենք: Մոտ 10 հոգի մնացին, մյուսները խնդրեցին իրենց ընտանիքները Ստեփանակերտում տեղավորեն ու ետ գան: Հիմնական մասը վերադարձավ: Մի քանի օրից մտանք գյուղ, ահագին տարածք ետ գրավեցինք, բայց չկարողացանք պահել, քանի որ ուժերը անհավասար էին, նրանց տեխնիկան շատ էր, հրետանին ուժեղ էր: Այդ ժամանակ ոսհանջեցինք մինչև Չլդրան: Նորայր Դանիելյանը ասաց՝ «Պատերազմում ջոկատներով կռվել չի լինի. պիտի սկզբնական շրջանում կազմել զոնե գումարտակ, հետո գունդ և, եթե տղաները ետ գան, նա՝ երկու գունդ»: Սկսեցինք այդ ուղղությամբ աշխատել, անջատված, 10, 20, 30 հոգանոց ջոկատները միացրինք, որից հետո մոտ 300 հոգի ունեինք և ի վիճակի էինք պահելու ահագին տարածք: Որ սկսեցինք մեր գունդը կազմավորել, սկզբնական շրջանում կար մոտ 400 մարդ: Երբ մենք արդեն ի վիճակի էինք քիչ թե շատ պահել, Մամվել Կարապետյանն իր գնդով տեղափոխվեց ուրիշ տեղ: Մեր հրամանատարը Նորայր Դանիելյանն էր, առաջին տեղակալը՝ Աշոտ Առուշանյանը, ես հետախուզության պետն էի. 92-ի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսն էր:

Բ.Կ.- *Հետախուզության գծով ինչ էիք աշխատում:*

Ռ.Հ.- Մարտակերտի շրջանում հիմնականում անտառներ են, այդպես արդյունավետ աշխատում էին փոքր պարտիզանական հետախուզական ջոկատները՝ դիվերսիոն խմբերը: Հիմնականում անհրաժեշտ էր ռազմապարհների ականապատել, մտնել թիկունք, շատ հեշտ էր ճակատը անցնելը: Մի անգամ անցանք ութ հոգով՝ ես, Աշոտ Առուշանյանը, Գարսաղանյան Մարտիկը, Արթուր Դանիելյանը, Ռաֆիկը, Ռոբերտ Սարգսյանը, ընտրում էինք նրանց, ովքեր ֆիզիկական ավելի լավ տվյալներ ունեին, տեղանքին ծանոթ էին: Անձրև էր գալիս, ամբողջությամբ թրջվել էինք, բայց կրակ վառել չէինք կարող, թշնամու թիկունքում մոտ 5 կմ առաջացել էինք: Մտել էինք Չլդրանից, հասանք Վարդաձոր, այդ տարածքը, ամեն մի քար ու թուփ շատ լավ ճանաչում էինք: Հիմնական ռազմապարհին նրանց տեխնիկան էր, տանկերը, մեքենաները, պիտի պայթեցվեր խուճապ առաջացնելու համար: Վոլոդյա ունեինք, ականապատման գործով նա էր զբաղվում, ականապատեցինք, ու սպասում

էինք, բայց նրանց բալստը բերեց, որ այդ օրը մեզ ոչ մի մեքենա չհան-
դիպեց: Մեր վերադառնալուց հետո միայն ահագին տեխնիկա ականնե-
րի վրա պայթեց՝ զրահամեքենաներ, մեքենաներ, որոնց մեջ մարդիկ կա-
յին, սնունդ էր, գինամթերք: Չգիտեմ, թե որքան զոհ է եղել, երբ ետ
գրավեցինք, այդ ժամանակ տեսանք մեր աշխատանքի արդյունքը:

Թուրքերը համարյա մտնում էին Գանձասար. Ալեքսանյան Ար-
թուրն էր Վաղուհասի ուղղությամբ, Արկադի Շիրինյանը՝ Խալաստոյը:
Ռաֆիկ Սահիյան տեր Հովհաննես քահանան, «Մահապարտները»
եկան, կազակները, որոնք ահագին օգնեցին, թեև շատ էին խմում: Վա-
ղուհասի ուղղությունը ամենաթեժ տեղն էր: Բարձրացել էինք, տղաները
այնպիսի տեղերում էին դիրքեր դնում, որ դա անհավատալի բան էր:
անտառներ էին, խրամատներում ձյուն էր, դժվար էր այնտեղ ուտելիք
հասցնել, շատ անգամ չէին կարող կրակ վառել, հատկապես 93-ի ձմեռը
շատ դաժան էր: Այդտեղ հրամանատարությունը հիմնականում Ալեք-
սանյան Արթուրի վրա էր դրված: Հարձակումը հակառակորդը սկսեց:
Առաջաձորի վերևում հին դպրոցն էր, իսկ ներքևում նորն էին կառու-
ցում, հին դպրոցը հարուստի տուն է եղել, մեծ էր, այնտեղ էինք շտաբը
տեղադրել: Առավոտյան կրակոցներից ելանք, թուրքերը մեզնից 100 մ
հեռավորության վրա էին: Հրետանու՝ «Գրադի» ժորայի տղաների
շնորհիվ կարողացանք նրանց ետ մղել և մտնել Հարությունագոմեր:
Մտել էինք ես, Մորուք Ռաֆոն, այդ օրը մի քանի տանկ էինք գրավել,
երեք թնդանոթ, «ռապիրաներից», և կարելի է ասել, նրանց ողնաշարը
կոտրվեց: Վերև չբարձրացանք, մնացինք այդտեղ, զորքը կամաց-կա-
մաց իջեցրինք: Հաթերքի կողմից Զալյան Սերգեյն էր, դաշնակցության
տղաները, Մեղրյան Շահենի ջոկատը: Նրանց արած դիվերսիաների
հետքերը մինչև հիմա մնում է Սարսանգի մյուս ափին: Միահամուռ ու-
ժերով կարողացանք մի քիչ խելքի գալ, ոգին բարձրացավ, քանի որ
շատ կորուստներից, նահանջից շատ էինք ընկճվել, միշտ չէր, որ կարո-
ղանում էինք ոգևորվել, տղաները հոգնել էին, նրանց մեջ կային այնպի-
սիները, որ 6 ամիս դիրքերում էին եղել, նորմալ սնվելու, քնելու ժամա-
նակ չկար:

Գիշերը կապվում են մեզ հետ, թե այսինչ խումբը՝ մոտ 60 հոգի,
շրջափակման մեջ են, այդ հատվածի հրամանատարը Մուսայելյան
Էդիկն էր, մեր աջ կողմում Ժիրոն էր, Պետոն, Ռումիկը՝ դաշնակցական-
ների գումարտակը: Այդտեղ հակառակորդի դիվերսիոն խմբեր կային,

որոնց կառավարում էին խախտները: Մի քանի դիվերսիոն խումբ մտել
էին մեր ջոկատների ետևը, գիշերը տղաները նկատել էին ու մտածում
էին՝ ինչ անել, նահանջե՞լ, թե՞ ոչ: Առուշանյան Աշոտն ասաց՝ «Ոչ մի քայլ
չանենք, հիմա հասնում ենք»: Գիշերվա կեսին հասնում ենք տեղ, միա-
նում տղաներին: Ինձ զարմացրեց, որ դիվերսիոն խումբը իրեն շատ
ազատ էր զգացել, երեի չէին սպասում, մտածում էին, որ առավոտյան
հարձակումը կսկսվի իրենց կողմից, իրենք էլ թիկունքից կխփեն, խառ-
նաշփոթի մեջ կկարողանային լուծել մեր խնդիրը: Յուրաքանչյուրիս
հանձնարարություն տրվեց, բոլոր կողմերից պիտի պահեինք, մինչև հե-
տախուզությունը պարզեր, թե ինչն ինչից է: Տեղացի մի տղա կար, տա-
րավ հասցրեց հենց դիվերսիոն խմբի մոտ: Նրանց այնպիսի վիճակում
գտանք. շատ ազատ էին, մեկը զենքն էր մաքրում, մյուսը շատ կերել ու
քնել էր: Երկու-երեք խումբ էր՝ մոտ 20 հոգի, իրենց հաջողության վրա
շատ էին վստահ: Մեզ գլխավորում էր Աշոտը, բաժանվեցինք երեք
խմբի: Մինչև պատերազմը սկսելը ջոկատների հետ Աշոտն էր պարա-
պել: Նա գիտեր, թե հիմնականում ինչ պիտի անել, թեև նա սպա չէր:
Մոտեցանք, համարյա 5 մ հեռավորության վրա էինք, նրանց պարզ
տեսնում էինք, զրույցը լսում: Նրանցից ոչ մեկը ողջ չմնաց, երևի չիմա-
ցան էլ, թե որտեղից են իրենց կոտորում: Մենք, ցավոք, մի զոհ ունե-
ցանք: Նույն ճակատագրին արժանացան 2-րդ, 3-րդ խմբերը: Նրանց
պլանները խափանվեցին Աշոտ Առուշանյանի, նրա ճիշտ կողմնորոշվե-
լու, ճիշտ հրամաններ արձակելու շնորհիվ: Հերոս տղա էր: Դրանից հե-
տո Ալեքսանյան Արթուրը եկավ մեզ մոտ: Քեղրաջարն արդեն ազատագ-
րել էինք, բայց 94-ի սկզբին դարձյալ թուրքերը մտան, դժվար էր դեմն
առնել: Վերևի ճակատի հրամանատարը Արթուրն էր, ներքևինը՝ ես:
Արթուրի, Արկադիի, Վլադիմիրի տղաների շնորհիվ կարողացանք ետ
գրավել: Գործով գնացել էի Գանձասար՝ տեր Հովհաննեսի մոտ, երեկո-
յան ժամը 10-ին հրաման ստացա գնալ Օմար: Եկա Յանշաղ գյուղի
դպրոցը, այնտեղ բարձրաստիճան սպաներ կային, որովհետև պիտի
շուտափույթ ազատագրվեր: Մեզ հետ տարանք երկու «ԲՄՊ», մոտ 60
հոգու, Շիրինյան Արկադին էր իր խմբով: Ձյուն էր, քամի, ռացիաները
չէին աշխատում այդտեղ, երևի սառել էին ձյան փչելուց: Բարձրացանք
վերև, թուրքերի զենքերը տեղում էին՝ խրամատներում, բայց նրանք
մոտ 100 մ ներքև էին՝ վրանների մեջ: Գործողությունը շատ արագ կա-
տարվեց, նույնիսկ մեզ համար անսպասելի: Ջոկատների ժամանակ

դնպքեր էին լինում, երբ շփոթում էինք իրար, քանի որ զենքերը, համազգեստը նույնն էին: Նստած էինք ես, գումարտակի հրամանատար Իլյիչը ճակատից 5 կմ ետ: Ամեն ինչ նայել, ստուգել էինք, երեքով նստած զրուցում էինք, հանկարծ մեզ մոտեցավ մի թուրք, սկսեց թուրքերեն խոսել՝ հարցնում է՝ ինչ-որ գումարտակ է թե վաշտ, որտեղ է: Բնական է, նրան գնդի վերցրինք: Մեր գյուղը գրավելուց Բաղմանյան Հայկազն էլ էր, մեր շտաբի պետը նա էր, հոռաթաղցի «Ճուտոն» ունինք, այն ժամանակ երևի 16 տարեկան էր, բայց անում էր ամեն ինչ: Ադրբեջանցիների շտաբը դպրոցում էր: Գյուղը որ գրավում ենք, մի խմած ռուս մնացել էր այդտեղ, չէր կարողանում կողմնորոշվել, թե ով է, ինչ է: Ճուտոն, Աշոտ էր անունը, տղաների հետ նրան բռնում են, զենքերը դնում մեջքին, 5 վիրավոր կանանոց կար, մեջը զինի լցրին, դա էլ հետը բերեցին մեզ մոտ: Այդ ռուսը Բաղմանյան Հայկազին ասաց՝ «Տեսնում եք՝ հայերը ոնց են կռվում, իսկ դուք փախչում եք, չեք էլ ամաչում»: Առավոտյան միայն հասկացավ, թե ինքը ուր է ընկել: Ազգությամբ չեչենի ենք բռնել, Օմարի լեռնանցքում Թուրքիայի թուրքի ենք բռնել, մուսուլմանական աշխարհից շատ կային: Մի գերի ունեինք՝ մոտ 13 տարեկան ադրբեջանցի երեխա, շտաբում պահում էինք, արդեն Ղարաբաղի բարբառով խոսում էր:

15-17 տարեկանների խումբ ունեինք՝ 30 հոգի, այդ տղաները արտանց, մեծ ցանկությամբ պարապում էին, հրամանատարը Ներքին Հոռաթաղից Ռաֆիկն էր: Երեխաներն իրենց ահագին արդարացրին, ցավոք, 4 5 հոգի զոհվեցին նրանցից: Մի գյուղ կար, բոլորն ադրբեջանցիներ էին, միայն Մերուժն էր հայ, ակցենտով էր խոսում հայերեն, այնքան էր շփվել նրանց հետ: Մի անգամ միայնակ գնում է հետախուզության, 4 երեխայի գերի է բերում, ավելի ճիշտ, երեխա չէին, այլ թուրք իսկական կռվող: Մտնում է, գոռգոռում, թե՝ էս ինչի՞ չեք կռվում, ետևիցս եկեք: Վերցնում, բերում է նրանց, գլխի չեն ընկնում, որ հայ է:

Մի օրվա մեջ երկու ինքնաթիռ խփեցինք. մեկը խփեց Ղևոնդյան Պետրոսը՝ դաշնակների, Շուշիի գումարտակի Պետոն, նա Պոռշյանից է, շատ գրագետ, համեստ տղա է: Նա տղաներին հավաքել, բացատրում էր, թե այդ զենքը (իգլան) ինչպես կարելի է օգտագործել: Հենց այդ ժամանակ էլ տեսնում են, որ թուրքերի ինքնաթիռը գալիս է, ու Պետրոսը խփում է: Մյուսն էլ մեր տղաներից Յաղուբյան Սամվելն է խփում: Օդաչուն ռուս էր, մյուսը ուկրաինացի էր, հենց օդում խփվում է: Ռուսին բռնեցինք, նա կարող էր փախչել, բայց որ ընկերը խփվում է, շուռ է գալիս՝ տեսնելու, թե ինչ եղավ: Խփվածի դիակը ծառերը ուզում էին տանել ուկրաինա: Հրաման ստացանք, որ այդ դիակը պիտի բերվի: Դիակը բերինք Առաջաձորի շտաբի մոտ: Առաջաձորի վերևը սարեր են, բերձեր, բարձրանում էինք վերև, այնպես է ստացվում, որ թուրքերը գալիս են, մենք անցնում ենք նրանց թիկունք, որպեսզի աշխատենք: Նրանք «ինության են կանչում, վերևից էլ են գալիս: Չեմ հասկանում, թե ինչ հրաշքով այնտեղից դուրս եկանք: Մեզ հետ տարիքով մարդկանց էլ էինք տարել՝ էշերով, պարաններով, որպեսզի դրանց կապեինք, բերեինք: Զարմանալի էր, որ չորս կողմը դիպչում էր, բայց մեզ չէր դիպչում: Նրանք թե պատրաստվածությամբ, թե մատակարարումով շատ ետ էին:

Մի դեպք էլ Օմարի լեռնանցքի հետ կապված. Հաթերքի գլխով ճանապարհ էինք բացել, եկել էինք, որ Օմարի լեռնանցքի միակ ճանապարհը փակենք: Շատ մեծ դժվարությամբ փակեցինք, այնտեղ տեղանիկա չէինք կարող տանել. տարել էինք խոշոր տրամաչափի գնդացիրներ, մի քանի մեքենա խփել էինք, հակառակորդի մեջ արդեն խուճապ էր առաջացել: Սկսեցինք աշխատել ներքևում: Նրանք ահագին զոհեր ունեցին այդտեղ, կային, որ մոտենում էիր, ավտոմատը ձեռքից վերցնում շպրտում, ձեռքերը այնպես սառած էին, որ չէին կարողանում դիմադրել: Այնտեղ մեր և թուրքերի տանկերը դեմ-դիմաց կանգնած էին, տանկիստը Սայադյան Համիկն էր: Օմարի լեռնանցքում մի ցավալի դեպք եղավ. մերոնք իրար չճանաչեցան, երկու կողմից էլ հայեր էին, կապը չէր աշխատում, խառնաշփոթ էր առաջացել, իրար վրա կրակեցին, երկու կողմում էլ զոհեր եղան: Հիմնականում հրամանատարների սիսալն էր, քանի որ ճիշտ չէին բացատրել տեղանքը, առաջադրանքը: Այդ օրը կռվի վերջին օրն էր, Օմարը ազատագրվեց:

1992 թ. էր: Մեզ մոտ Բաղդասարյան Կամո անունով մի տղա կար, լավ կռվող տղա էր, լավ հետախույզ, նա Քաջավանում վիրավորվեց: Այդ տարածքի ջոկատի ավագը ես էի, Կամոն եկավ ինձ մոտ, ասաց՝ «Մեր թիկունքում թուրք կա», ասացի՝ «Լավ, նայիր՝ չսխալվես», թե՝ «Միլիոն տոկոսով կա»: Մեր ընկերներից մեկը՝ վարդաձորցի Սամվելը, ասաց՝ «Կամո, եթե գնանք, ու այնտեղ թուրք չլինի, քեզ ենք նրա տեղը խփելու», ասաց՝ հարց չկա: Այդտեղ էլ լրիվ մոշի թփեր էին, անտառներ, այդ տարին էլ բերքը շատ առատ էր, 92-ի հոկտեմբեր ամիսն էր: Սամվելն էր, Կամոն, ես, մեզ հետ էլի մարդ կար, զզոյշ բայլում էինք: Սամ-

վելը նկատում է թուրքի սապոգը, որը ծառի կողքից երևում էր: Ու սկսվում է...4-5 հոգով մենք մտնում ենք, ընկնում արանքը, մի կողմից նրանք էին, ետևից հայերն էին: Նրանք զոհ տվեցին, մենք՝ ոչ: Եթե Սամվելը ժամանակին չնկատեր, նրանք մեզ անպայման կխփեին:

1992-ի հուլիսի սկզբին Քաջավանից նահանջում էինք, Մարտակերտի տակն էինք, որտեղ գինու-կոնյակի գործարանն էր: Մեր ետևից գալիս էր մի տրակտոր՝ պոչին լաֆետ կապած, մեջն էլ՝ 13-14 հոգի: Ասացին, թե՝ դրանք թուրքեր են: Ետևից էլ մի տանկ էր գալիս: Մեր «ԲՄՊ»-ն շրջվում է ետ ու 4-5 հոգու սպանում մերոնցից: Մինչև կանգնեցնում ենք... Այդտեղ զոհվեց կարծեմ Կարմիրավանի հրամանատարը: Լավ էր՝ գոնե թնդանոթը չէր աշխատում, գնդացրով էր խփում, հակառակ դեպքում այնտեղ կենդանի մարդ չէր մնա:

Ամեն կովից հետո իջնում էի Մեծ Շենի հոսպիտալ՝ տեսնելու, թե քանի զոհ, վիրավոր ունենք, ինչ են անում այնտեղ: Տեսնում էի՝ ով ինչ էր անում, աջ ու ձախ լրիվ արյուն էր: Արցախ Բունիաթյանը ասաց՝ «Ռազմիկ, արի, մի բան ցույց տամ»: Մի վիրավոր էր պառկած, բեկորը թե փամփուշտը կպել էր սրտին: Բունիաթյանը սիրտը կարել էր: Հարցրի՝ «Կապրի՞ այս վիճակով», ասաց՝ «Չէ, բայց կյանքը տասը րոպեով կավելանա»: Նրանց համար գիշեր-ցերեկ չկար, նա էր, Պավլիկը... Պատերազմ էր, բայց կյանքը շարունակվում էր, ծննդաբերություններ, հարսանիքներ էին լինում, թեկուզ մարդիկ նկուղներում էին ապրում: 1993 թ, թոհուբոհի ժամանակ Հարությունագոմերում իսկական՝ հարսի շորով հարսանիք արեցինք:

1992 թ. վերևից՝ Հաթերքով, մյուս վայրերով թուրքերը իջնում էին, հասել էին Ջագլիկ: Վարչական շենքերն էին որպես զորանոցներ օգտագործում, հրամանատարը որ մտնում է գրավված գյուղ, հարմար տուն է գտնում, որ շտաբը տեղափոխի այդտեղ: Գասպարյան Ժորայի հայրական տունը ընտրել էին որպես շտաբ: Ալեքսանյան Արթուրը տեսնում է, որ այդտեղ մարդիկ, մեքենաներ են հավաքված, ենթադրում է, որ դա հրամանատարական կետ է: Կրակը ուղղորդում է, որ այդ շենքի վրա խփեն: Ժորան մի քիչ լռում է, բայց խփում է: Պարզվում է, որ իրենց տունն է, բայց Արթուրը չգիտեր, որ Ժորայի տունն է: Հետո, երբ մտնում են, տեսնում են, որ ամբողջը ոչնչացած է: Ամեն մարդ չէր, որ կարող էր իր հայրական տան վրա խփել:



Պատմում է ՏԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱՀԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ (Գանձասարի վանքի վանահայր), Գանձասար, 24.11.2005 թ.

Ես ծնունդով, արմատներով Մարտակերտի շրջանի Վանք գյուղից եմ: Գերաշնորհ Տեր Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանի օրհնությամբ 1992 թ. փետրվարին ես նշանակվեցի Գանձասարի վանքի վանահայր և հոգևոր հովիվ: Այդ ժամանակ բոլորս էլ զինվոր էինք: Սկսվեց մի սարսափելի պատերազմ, որը թվում էր, թե կավարտվի քարերով ու փայտերով կռվելով և ոչ թե կհասնի թնդանոթների, օդանավերի: Որքան շատ էին զոհերն ու ավերածությունները, այնքան հողը ավելի էր քաղցրանում մեզ համար, այնքան սերն ու հարգանքը միմյանց հանդեպ աճում էր, այն մի կտոր հացը, որ դժվարությամբ էր ճարվում, սիրով էինք կիսում իրար հետ: Եվ հավատը Աստծո նկատմամբ ավելի մեծ էր: Չկար մի զինվոր, մի հայ, որը պաշտպանում էր Արցախը, չգար Գանձասար և չաղոթեր: Երբ ազերիները Գանձասարի արևմտյան մասով ձգվող բլուրի տակ էին գտնվում՝ վանքից ընդամենը մեկ ու կես կմ հեռավորությամբ, ռացիայով կապվեցի սրբազանի հետ, հարցրի, թե ինչ պետք է անենք: Լինում էին պահեր, երբ ես էլ էի երկմտում, քանի որ չորս կողմից, նաև օդից, գնդակոծում էին, Գանձասարը վտանգի մեջ էր: Սրբազանը հուսադրում, քաջալերում էր, թե ամեն ինչ լավ կլինի, մեզ օգնության կհասնեն, և հաղթանակը մերը կլինի: Իսկ ժողովուրդը, ընդհակառակը, սարսափի մեջ էր: Ասում էին. «Տեր հայր, սրանից վատ օրեր լինել չեն կարող: Թուրքը հասել է այստեղ, շուտով գյուղ կմտնի, ինչպես կարող է լավ լինել»: Նրանց հանգստացնում էի՝ ասելով, որ եթե

Պարգև սրբազանը ասում է լավ կլինի, ուրեմն այդպես էլ կլինի:

Բ.Կ. *Պատմեք զինվորներից, հրամանատարներից, ինչպես էին ուժերը տեղաբաշխված, ինչպես էիք ճակատը պահում, անձամբ Դուք ինչով էիք զբաղվում...*

– Նախ պատմեմ 1992 թվականի հոկտեմբերի 28-ին տեղի ունեցած Գանձասարի վանքի ռմբակոծության մասին: Մինչ այդ ռումբեր զցում էին, բայց վանքը անվնաս էր մնացել: Օդանավը վանքի գմբեթի վերևից 40 հրթիռ արձակեց: Մի քանիսը ընկան մոտակա երկհարկանի շենքի վրա, այն փլվեց, երկու հոգի վիրավորվեցին: Նրանցից մեկը վանքի պահակն էր՝ Բենիկ Հակոբյանը, որն այդ դեպքից երեք տարի հետո մահացավ: Նա 60 տարեկան էր, բայց հանգիստ նստել չկարողացավ, ասում էր. «Եթե ես չգնամ, բա ո՞վ պետք է պաշտպանի»: Ստեփանակերտցի 21 տարեկան մի զինվոր՝ Էդիկը, զոհվեց Գանձասարի պատի տակ: Մի քանի հրթիռ վնասեցին եկեղեցու զանգակատունը: Ժողովուրդը ընկճվեց, հուսահատվեց, երբ Գանձասարին էլ խփեցին: Բայց, միևնույն է, դիմակայելու ուժ գտանք:

1992 թ. դեկտեմբերի 31-ին, անկախ ամեն ինչից, որոշեցինք դիմավորել Նոր տարին: Գնացի շնորհավորելու զինվորներին, նաև այն մի քանի բնակիչներին, ովքեր մնացել էին գյուղում և որոշել էին ոչ մի դեպքում չլքել իրենց տունը: Սրբազանին հաղորդեցի, որ Մերժ Սարգսյանը նկել է Գանձասար և նրան է սպասում: Մենք բոլորս զինվորական համազգեստով էինք: Վանքը լիքն էր զինվորներով: Մերժ Սարգսյանի հետ էր Արթուր Ալեքսանյանը: Երբ մտա նկեղեցի, տեսա՝ մոմ են վառել ու աղոթում են: Անձայն կանգնեցի նրանց կողքին՝ սպասելով, որ ավարտեն: Մերժ Սարգսյանը շրջվեց Արթուրի կողմն ու հարցրեց, թե ուր է Տեր Հովհաննեսը: Թեև կողքին կանգնած էի, չէր ճանաչել, տարբերել մյուսներից, մանավանդ որ այն ժամանակ բոլորն էլ մորուք էին պահում: Զարմացավ, երբ ինձ զինվորական հագուստով տեսավ: Հոգևոր զգեստս հագնելուց հետո միայն օրհնություն տվեցի ու շնորհավորեցի Նոր տարին: Չնայած թուրքերը տարբեր կողմերից գնդակոծում էին, եկեղեցու զանգերը ուղիղ ժամը 12-ին մոտ մեկ րոպե խփեցին, և ձայնը հասնում էր բոլոր դիրքերը: Դիրքերում շրջելիս երբ տեսնում էի, որ տղաները հուսահատված են, միացնում էի իմ մեքենայի մագնիտոֆոնը,

հնչեցնում հայրենասիրական, ֆիդայական երգեր, ինչն իսկապես ոգեշնչում էր նրանց:

Բ.Կ.- *Այդ ժամանակ ՀՀ-ից «Արծիվները» օգնության եկել էին:*

– «Արծիվները» եկան 1992 թ. օգոստոսի 30-ի գիշերը: Ղեկավարը Աստվածատուր Պետրոսյանն էր: Նրանց հետ էին Արթուր Ալեքսանյանը, Հովսեփ Հովսեփյանը: Այդ օրը վանքից նայում էի դեպի Խաչենի հովիտը, հանկարծ նկատեցի, որ ճանապարհին փոշի է բարձրանում: Կարծեցի, թե ճանապարհն են ռմբակոծում: Հետո տեսա մանկանների շարասյունը, որ կանգնեց փայտամշակման արտադրական կոմբինատում: Մտավախություն անցավ, հասկացա, որ մերոնք են օգնության եկել, թուրքերը այդքան ազատ չէին կարող մտնել: Ոգևորված նրանց ընդառաջ գնացի, գրկախառնվեցի: Մահապարտների խումբը հավաքվել էր Վազգեն Սարգսյանի կոչով, որ մեզ պետք են 500 մարտիկներ, ովքեր պատրաստ են կռվելու պատերազմի ամենաթեժ կետում: Իսկ այդ ժամանակ ամենաթեժ կետը Գանձասարի վանքն էր: Վազգեն Սարգսյանի հրամանատարությամբ հավաքվել էին 360 հոգի, հրամանատար տեղակալը Աստվածատուր Պետրոսյանն էր, գումարտակի հրամանատարները՝ Արթուր Ալեքսանյանը, Հովսեփ Հովսեփյանը: Եկել էին պաշտպանելու Գանձասարը, Վանք գյուղը, Խաչենի գավառը: Հենց հաջորդ օրը կռվի մեջ մտան: Շատ կորուստներ ունեցանք Վաղուհասի մոտ, քանի որ թշնամին բավական մեծ ուժեր էր կենտրոնացրել այդ ճակատում: Մերոնք, ճիշտ է, պատրաստ չէին, բայց եթե այդ օրը մարտի չբռնվեին, թշնամին կմտներ գյուղը, նա շատ լավ էր պատրաստվել: Երկու կողմերն էլ մեծ կորուստներ տվեցին, բայց թուրքերը նահանջեցին, կանգնեցին Վաղուհասի ու Գանձասարի արանքում, եկան, պատնեշի դեմ առան: Նույն գիշերը Գանձասարում հետախուզության ծրագիր մշակեցինք: Տեղանքը ինձանից լավ ոչ ոք չէր կարող իմանալ, ուստի խնդրեցի ինձ ուղարկել: Սկզբում չէին համաձայնվում, բայց պատերազմում հոգևորականի ու զինվորականի տարբերություն չկար: Էլի քահանաներ կային, որ պատրաստ սպասում էին օգնության հասնելու իրենց հերթին: Գիշերը ժամը երեքին հետախուզական խմբի հետ հասանք Վաղուհասի մոտ, անցանք թշնամու թիկունքը, այնտեղից ռացիայով տեղեկություններ հաղորդեցինք նրանց ուժերի մասին: Հսկայական բա-

նակությամբ հետևակային զորք էին հավաքել, բայց տանկեր չկային, ճանապարհները հարմար չէին դրանց համար, այդտեղ հասնել չէին կարող: Կռիվը սկսվեց միանգամից: Շատ ծանր մարտ էր՝ երկու կողմերի համար էլ մեծ կորուստներով: Այդտեղ զոհվեց Սամվել Շահմուրադյանը: Այդ պահին ես նրա կողքին չեմ եղել: Երբ կռիվը դադարեց, իջանք ձորը, տեսանք, որ ութ հոգի արդեն զոհվել էին, նրանց թվում՝ Սամվելը: Նախորդ գիշերը մենք միասին էինք, խոսում էինք, ծիծաղում: Ողջ գիշեր նկեղեցում կնունքի արարողություն էր: Ջինվորներից 120 հոգի մկրտված չէին, ես նրանց բոլորին կնքեցի, իսկ կնքահայրը դարձավ Հովսեփ Հովսեփյանը: Շատ մեծ աշխատանք էր հերթով 120 հոգու առաջ ծնկել, ծնկներին մեռոն քսել: Բայց ես չհոգնեցի, դեռ դրանից հետո էլ գնացի հետախուզության: Ո՛չ հոգնել էինք տեսնում, ո՛չ մահ, միայն՝ պաշտպանություն և ազատություն: Ջոհվածների մարմինները դուրս հանեցինք, վիրավորներին տեղափոխեցինք Ստեփանակերտի հիվանդանոց: Ավելի շատ կորուստներ մենք այս մարտում ունեցանք, քանի որ ազերիները իրենց ուժերը կենտրոնացրել էին այս ուղղությամբ: Ուզում էին Գանձասարը գրավել, անընդհատ ռմբակոծում էին, օդանավից հրթիռներով խփում, ինքս մի քանի անգամ մահից հրաշքով փրկվել եմ: Երբ Վաղուհաս գյուղը ազատագրել էինք, «Արծիվներ» մահապարտների ջոկատը տեղափոխվեց Դրմբոնի, Չլդրանի դիրքեր: Թուրքերը դարձյալ եկան և Գանձասարի բլրի մոտ դիրքավորվեցին, որովհետև ուժերն այստեղ պակասել էին: 1993 թ. հունվարի 17-ին կիրակի էր, եկեղեցում պատարագ էր: Ես պատարագում էի, Արցախի թեմի փոխառաջնորդ հայր Վրթանեսը «վերաբերում» էր անում, մեզ հետ էր մի երգչուհի՝ Ռուզաննան: Երեքով պատարագ էինք մատուցում: Այդ ընթացքում ռացիան ինձ տվեցին: Ասում էին. «Տեր հայր, վերցրու քո խաչը, ավետարանը և եկեղեցուց դուրս արի, որովհետև այլևս հնարավոր չէ այն պահել»: Բլուրի մոտ մեր տղաները 40 հոգի էին, իսկ հակառակորդը՝ 360: Բայց տարբերությունը միայն թվաքանակը չէր, այլ՝ մի ուրիշ, շատ կարևոր իրողություն. թուրքերը եկել էին գրավելու, իսկ մենք՝ պաշտպանելու: Մեր հոգևոր ուժը զորեղ էր նրանց ֆիզիկական ուժից: Պատարագը կիսատ չթողեցի: Վերջացնելուց հետո դուրս եկանք, բայց ստիպված էինք նահանջել, թողնել Գանձասարը: Հայր Վրթանեսին

պատվիրեցի Ռուզաննայի հետ հեռանալ այդտեղից: Իսկ ես պահակի՝ Ռենիկ Հակոբյանի, նրա որդու, որն իմ վարորդն էր, և եղբորս, որը եկել էր Ստեփանակերտից, խրամատներն էր վերանորոգում, գնացինք: Ռացիայով կապվեցի գումարտակի հրամանատարի՝ Կոճողոտի Համոյի հետ և ասացի, որ 40 հոգի օգնության են եկել, կնս ժամից կգանք: Լավ զինվեցինք, մոտ 40 բոպեում հասանք այնտեղ: Բայց այդ նույն ճանապարհը այսօր հանգիստ պայմաններում երկու ժամում հազիվ կանցնեմ: Տղաները ինձ տեսնելով ուրախացան, հարցրին, թե ուր են մնացած 36 հոգին: Արթուր Ալեքսանյանն ու Աստվածատուր Պետրոսյանը լսել էին ամեն ինչ և ինձ ետ էին կանչում: Իմ ռացիան անջատեցի, տղաներին ասացի, որ հիմա ես եմ հրամայում, նրանց հանգստի համար 15 բոպե ժամանակ տվեցի: Ես վերցրել էի տանկի գնդացիրը, որի ետևի մասը ինքնաշեն նռնականետ էի սարքել. ծանր, բայց լավ զենք էր: 15 բոպեից կռվի մեջ մտանք: Ձմեռ էր, գետնին կես մետր ձյուն էր նստած: Ժամը 14:30-ն էր, մենք թշնամուն էինք լավ տեսնում, նրանք՝ մեզ: Բայց նրանց կողմից շատ էին զոհվում, վիրավորվում, իսկ մենք ոչ մի զոհ չէինք տալիս: Ազերիները մեծ զոհեր տալով փախան, 7 կմ այդտեղից հեռու քաշվեցին: Գիշերը դիրքավորվեցինք ժայռերի մեջ: Տղաներին խնդրեցի վերցնել գնդացիրը, որպեսզի ես ետ վերադառնամ: Ոչ ոք չհամաձայնվեց, թե՝ «ես այդ ծանր զենքը քարշ տվողը չեմ»: Ստիպված շալակում եմ, այդ ամբողջ ճանապարհը ոտքով գալիս: Զենքը թողեցի եկեղեցու բակում, ծնկաչոք մտա եկեղեցի, աղոթեցի Աստծուն: Թողություն խնդրեցի, եթե զենք վերցնելով մեղք եմ գործել, կամ ապաշխարություն, եթե այն պաշտպանությունն էր մեր երկրի ու սրբավայրերի: Միակ անվնաս տեղը կաթողիկոսի ընդունարանն էր մնացել: Այնտեղ մահճակալ ու վառարան էր դրված: Երբ ներս մտա, բոլորը ոտքի կանգնեցին: Մարտակերտի շրջանի հրամանատար Նորայր Դանիելյանն էր՝ 5-րդ պաշտպանական հրամանատարը, Արթուր Ալեքսանյանը, Աստվածատուր Պետրոսյանը, Հովսեփ Հովսեփյանը: Ասացին.

- Տեր հայր, այս ինչ եք անում: Դուք դեռ պետք է մեզ օրհնություն տաք:

- Աստված բոլորիս տալիս է իր օրհնությունը:

Գանձասարի պաշտպանության գործում մեծ դեր են ունեցել Մո-

բուք Ռաֆոն, Խալաստոյ Ագոն: Մեզ հետ էր նաև Հարությունյան Սեգո-Սամոն՝ Ստեփանակերտի 3-րդ վաշտի հրամանատար Արայիկի եղբայրը:

Վաղուհասը 1992 թ. աշնանը, մի քանի անգամ նահանջելուց ու ետ վերցնելուց հետո, ազատագրել էինք: Իմացանք, որ Ալեքսանյան Արթուրը վիրավորվել է: Ես, Գասպարյան Ժորան, բուժքույր Աիդան «Վիլիս» մեքենայով գնացինք Վաղուհաս: Ճանապարհին հանդիպեցինք Սևանի ջոկատի տղաներին, որոնք մասնակցել էին Վաղուհասի պաշտպանությանը: Տեղ չհասած՝ մեքենան շուռ եկավ, նտևի մի անիվը ընկավ փոսի մեջ՝ թույլ չտալով առաջ ընթանալ: Գրաղ Ժորան ինձ լավ էր ճանաչում: Նայեց, ասաց. «Տեր հայր, ինչ աննենք»: Նրանց պատվիրեցի նստել մեքենան, իսկ ես անիվը բարձրացրի, փոսից հանեցի: Հասանք Վաղուհաս: Արթուրը մի կիսավեր, պատերը վառված տան մեջ կրակի շուրջը զինվորներով շրջապատված նստել էր: Գիշերվա ժամը 3-4-ն էր: Բուժքույրը նրան առաջին օգնություն ցույց տվեց: Ռեկորը ոտքի մեջ էր մտել, բայց խոր չէր, ինքը դանակով հանել էր: Հետս «Գանձասար» կոնյակ էի վերցրել: Մի քիչ խմեցինք, հաղթանակը շնորհավորեցինք և տաքացանք:

Հոկտեմբերի 10-15-ն էր: Գիշերը ժամը 4-ին իմ առանձնասենյակից կանչեցին: Դուրս եկա, ութ կազակներ ինձ էին սպասում: Խնդրեցին, որ օրհնեմ իրենց: Ես հայնրենով Պահպանիչը ասացի, խաչը դրեցի գլխներին: Հերթով իրենց անուններն էին ասում, ես օրհնում էի: Նախավերջինը կարճահասակ մենն էր: Հարցրի անունը, ասաց՝ Յուլիանա: Զարմացա, զինվորական հագուստի, մթության մեջ չէի նկատել, որ աղջիկ է: Ասացի.

- Ո՞ւր ես գնում, դու պետք է մնաս քո երկրում, երևիա ունենաս, ազգդ շատացնես:

- Նախ պետք է մեր հողերը ազատագրենք օտարից, հետո միայն կմտածեմ դրա մասին,- ասաց Յուլիանան:

Վաղուհասում կազակներն էլ են կռվել: Մարտերի ժամանակ կանչեցին, թե՝ ատամանի որդին զոհվել է: Այդտեղ ծանոթացա բուժքույր Աիդա Մեսրոպյանի հետ: Զինվորական համազգեստով էի, ոչ մեկի մտքով չէր անցնում, որ հոգևորական եմ: Ատամանը եկավ, որդու դիակը դրված էր գետնին: Գլուխը բռնեց, բարձրացրեց, ասաց. «Ну Вася, ну ладно...»: Բոլորս լաց եղանք, բացի նրանից: Շրջվեց զինվորների կողմը ասաց՝ "вперед": Ինչ ուժ էր պետք արցունքները զսպելու համար, որպեսզի հանկարծ իր զինվորները չերկմտեին, չհուսահատվեին: Յոթ զոհվածների դրեցինք բեռնատար մեքենայի մեջ ու տեղափոխեցինք Ստեփանակերտ:

Բ.Կ.- *Ի՞նչ կարող եք պատմել Բենիկի մասին:*

– Բենիկ Հակոբյանն իր կնոջ՝ Մանուշակի հետ միշտ Գանձասարի վանքում է եղել: Կինը վանքի մոմավաճառն էր: Բենիկը շատ լավ որսորդ էր, շատ դիպուկ կրակում էր: Նույնիսկ ասում էր, որ եթե թուրք տեսնեք ճակատից խփած, իմացեք, որ ես եմ արել: Միայնակ գնում, թշնամու դիրքերի միջով անցնում ու տեղեկություններ էր բերում, թե այնտեղ ինչքան զորք կա, ինչ զենքեր: Մասնակցել է Գանձասարի, Վաղուհասի, Զարդախաչի, Դրմբոնի, Հաթերքի, Վերին Հոռաթաղի, այսինքն՝ Թարթառի ձորակի բոլոր գյուղերի ազատագրմանը: Նաև շատ լավ տրակտորիստ էր: 1994 թ. ձմռանը երբ պետք է Օմարի լեռնանցքը անցնեինք, նա տրակտորով ամրողջ ճանապարհը մաքրեց, որպեսզի զինվորները կարողանային անցնել, և զինտեխնիկան տեղափոխեինք: Հիվանդ, բարձր ջերմությամբ պառկած էր: Տղաները եկան, ինձ դիմեցին, որ համոզեմ ճանապարհը մաքրի: Ես չէի ուզում, որ այդպես հիվանդ գնար, խղճում էի: Լսեց, որ կանչում են, վեր կացավ գնաց՝ ուշադրություն չդարձնելով հիվանդությանն ու կնոջ բողոքներին: «Ուրալ» մեքենայով հրանոթներն էինք հասցնում այնտեղ, վարորդը քրոջս ամուսինն էր՝ Վալերի Բեգլարյանը: Բոլորս էինք մասնակից, յուրաքանչյուրն իր ուժերի չափով նպաստեց այդ պայքարին:

Երբ 1993 թ. հունվարի 17-ից հետո Գանձասարը, մյուս վայրերի համեմատ, մի քիչ ապահով վիճակում էր, ես պետք է գնայի Ստեփանակերտ՝ սրբազանի հետ հանդիպելու: Վարորդիս հետ մեքենայով իջանք գյուղ: Կանգնեցինք հիվանդանոցի դիմաց, որը նաև որպես շտաբ էր ծառայում: Ընդամենը մի քրոջ հետո երկու ինքնաթիռ կանգնեցին հիվանդանոցի վերևում ու հրթիռներ գցեցին վրան: Ութ հոգի զոհվեցին, տասնյոթը վիրավորվեցին: Առաջին հրթիռը որ պայթեց, հիվանդանոցը միանգամից ծխի մեջ կորավ: Վազում էինք՝ չմտածելով, որ կարող է

երկրորդն էլ զցեն: Նույնիսկ այդ պահին չէինք մտածում, որ մեքենայով ավելի արագ այդտեղից կհեռանանք: Հետո իմ մեքենայով վիրավորներին ու զոհերի էինք տեղափոխում: Իմ քեռու հարսը այդ հիվանդանոցում բուժքույր էր աշխատում: Չորս երեխա ուներ, զոհվեց: Գլուխը մնացել էր պանելների արանքում: Մոմ չէինք գտնում, որ գլուխը դուրս հանեինք, միգուցե դեռ ողջ էր մնացել: Այդտեղ մահացան այն ժամանակվա սովխոզի նախագահ Բորիկ Հակոբյանը, ես գրկեցի, դրեցի մեքենան, Մարտակերտի շրջանի վարչակազմի ղեկավար Բորիկ Բաբայանը: Պատուհանով մտա հիվանդանոցի սենյակը, որտեղ այդ կինն էր: Ինչ-որ տեղից մի մոմ ճարեցի: Բազեն որ մտնում է ճտերի մեջ, ճտերը վախեցած խցկվում են խոտերի արանքը, այ, նման մի վիճակ էր տիրում: Մարդիկ վազվզում են այս ու այն կողմ՝ չիմանալով ինչ անել, զոռում, անուններ են կանչում, զոհվածներին քաշում, հանում: Այդ պահին օդանավից երկրորդ անգամ հրթիռներ գցեցին: Մեկը հիվանդանոցի մոտ ընկավ, մյուսը՝ մի քիչ հեռու: Դարձյալ վիրավորներ եղան: Այիքը մոտ 10 մետր ինձ շպրտեց դեպի պատը: Խփվեցի պատին, ընկա, թևս դուրս ընկավ, բայց ինձ վրա ուշադրություն դարձնելու ժամանակ չկար: Հրթիռից մի բեկոր ականջս էր ծակել, դա էլ չզգացի: Թևիս ցավը սաստկանում էր: Մոմը վերցրի, գնացի քեռուս հարսին դուրս հանեցի: Երբ մարմինը գրկեցի, ոսկորների խշրտոցը լսվում էր: Երբ արդեն բոլոր զոհերին ու վիրավորներին մեքենայով ուղարկեցի, նստեցի ծառի տակ: Աիդան մոտեցավ, ասաց. «Տեր հայր, Դուք վիրավորվել եք»: Չհավատացի: Թևս բացեց, լրիվ կապտել էր: Այդ ժամանակ տեսա, որ ականջիցս արյուն է հոսում, նույնիսկ չէի պատկերացնի, որ ականջի վրա այդքան արյուն կա: Վերքը մաքրեց, մշակեց: Պատվիրեցի ռացիայով այդ մասին չհաղորդել ոչ մեկին, իմ վիրավորվելու լուրը կարող էր խուճապ առաջացնել: Թշնամու հետախուզությունն էլ կտեղեկանար, ինչը նրանց շատ կուրախացներ: Աիդան ասաց.

- Տեր հայր, ախր ինչու՞ վիրավորվեցիք:

- Աստված ասաց՝ եթե մի անգամ էլ զենք վերցնես ու գնաս կռվի, ականջդ կկտրեմ:

Հիվանդանոցը ռմբակոծելու ժամանակ մի տղա ընկած էր գետնին, ոչ ոք նրան ձեռք չէր տալիս, ամեն մեկն իր հարազատի, ընկերոջ մասին

էր մտածում: Մոտեցանք նրան. բեկորը ծնոտից մտել, գլխից դուրս էր եկել՝ գլուխը երկու մասի բաժանելով: Ուղեղը աշխատում էր, քանի որ տղան ներվային շարժումներ էր անում: Հոռաթաղցի մի տղա եկավ, հարցրեց, թե՝ եղբորը չե՞նք տեսել: Պատմեց, որ հայրը հիվանդանոցում երիկամների հիվանդությամբ պառկած է եղել, եղբայրը պետք է դեղ հասցներ: Նկատեց գետնին ընկած տղային, հարցրեց, թե ով է, շրջեց նրան, հանկարծ աչքը ընկավ մատանուն, ճանաչեց ...ու ծնկաչոք ինչպես էր ոռնում: Ձայնը մինչև հիմա ականջներիս մեջ է: Ինձ հետ էր նաև Մորուք Ռաֆոն:

Բ.Կ.- *Նրա հետ կապված ինչ դեպքեր կարող եք հիշել:*

– Նա շատ բարձունքներ, վայրեր է գրավել իր խմբով: Խալաստոյը նրա տեղակալն էր, միասին էին միշտ գործում: 1992 թ. աղջիկը հիվանդացել էր: Ընտանիքը Երևանում էր ապրում դեռ մինչև պատերազմը սկսվելը: Երեխան թունավորվել էր: Երբ տեղափոխում են հիվանդանոց, պարզվում է, որ կույր աղիքն է պայթել: Անհնար էր փրկել, և երեխան մահանում է: Նրան կանչում են Երևան: Գնում է, աղջկան թաղում, հաջորդ օրը ետ վերադառնում: Ասաց. «Ես ո՞նց կարող եմ թողնել Ղարաբաղը: Համարում եմ, որ նա էլ է զոհ»: Ցույց չէր տալիս, թե կորստի ցավը որքան խորն է: Իր խմբով երկար ժամանակ մնացել էր Օմարի լեռնանցքում: Ես քարտեզներ ունեմ, որտեղ նշված է՝ ո՞ր վայրում քանի հոգի են, այնտեղ գրված է. «Մորուք՝ մենակ»: Ամեն տեղ Մորուքը մենակ կար: Շատ անգամ է վիրավորվել: Մի օր ռացիայով կապվեցին, թե՝ Մորուքին բերում են: Ողջ էր, ոտքերն էին ցրտահարվել: Մի շաբաթ պառկած վիճակում էր խումբը ղեկավարում, հրամաններ, ցուցումներ տալիս: Չէր թողնում, որ իրեն գրկած դուրս տանեն, ծնկաչոք էր զնում կամ քարտեզին մոտենում, ոտքերի թաթերը սևացած, կապտած:

Պատմում է ՎԱՀԱՆ ԱՐՍԵՆՅԱՆԸ (Գնդապետ, բանակային կորպուսի հրամանատարի տեղակալ), Վարդենիս, 21.11.2005 թ.

1988-ի երկրաշարժից հետո Ներքին գործերի մարմիններում էի ծառայում, կոմերիտմիության քարտուղար էի: Մերձավոր Արևելքում էի կռվել, Լիբանանում, Սիրիայում էի կռվել, դրանից հետո երաշխավորել էին Ներքին գործերի պետական անվտանգության կառույցներում աշխատելու համար: Հետո 1989 թվականին, որ արդեն խմորումները կոնֆլիկտային բնույթ սկսեցին ստանալ, միանգամից թողեցի Ներքին գործերի մարմիններն ու եկա միացա երկրի պաշտպանության հարյուրավոր, հազարավոր տղաներին: Այդ ժամանակ Էջմիածինը իր թվաքանակով, իր տղաների քանակով բավականին մեծ թիվ էր կազմում: Իմ գյուղից արդեն շատ տղաներ, ներկայիս փոխնախարար Մելքումյան Գագոյի, գեներալ Սեյրան Սարոյանի գյուղն է, ես նրանց քեռու տղան եմ: Այդ ժամանակ Քոլոզյան Վալոդն էր (ներկայիս գնդի հրամանատարի տեղակալ), Հովհաննեսն էր (գնդի հրամանատարի տեղակալ), Ենոքյան Ենոքն էր, Գևորգն էր (գնդի հրամանատար), Ջաքարյան Համոն (ներկայումս ակադեմիայում է), մոտավորապես 100-120 տղաներ Արմավիրի մարզից, Էջմիածնի շրջանի Հայկաշեն գյուղից: Ես էլ իրենց պես միացա ջոկատին: Հետո Մելքոնյան Գագոն գնաց, Հատուկ գնդի կազմում ձևավորեց Էջմիածնի վաշտը, հետագայում մի մասը ձևավորվեց արդեն Մանվելի ջոկատի հիման վրա: Մանվելի ջոկատի կազմում 1991 թվականին մեկնեցի Ղարաբաղ, Հադրութի շրջան: Հադրութ թռանք ուղղաթիռով: Մոտավորապես երեք ուղղաթիռ: Դե, այնտեղ էլ ջոկատ կար, հետո Մանվելի ջոկատը անժամկետ էր գնում, չէին գնում մի ամիս մնան, ետ գան: Անընդհատ փոխում էին: Կապից լավ հասկանում էի և կապի

պետն էի: Մանվելը ինձ նշանակեց Էդիլլուի ձորակում Դուդուկչի, Ալբուլախ, Մելիքաշեն, Բլուրախ, Խրմնջուղ, Ախլլու-Էդիլլու գյուղերի ու ձորակի հրամանատար: Միաժամանակ դպրոց էի գնում, դաս էի տալիս, որովհետև այդ ժամանակ սովետական զորքերի անձնագրային ռեժիմից խուսափելու համար որպես ուսուցիչ էի ձևակերպվել, և միաժամանակ զբաղվում էի նաև ինքնապաշտպանական աշխատանքներով: Այդտեղ առաջին անգամ ծանոթացա Կոմանդոսի՝ Արկադի Տեր-Թադևոսյանի հետ: Առաջին անգամ, որ եկավ, զինվորական հագուստով էր, դաշտային համազգեստով, երկարաճիտք կոշիկներով: Առաջինը իջանք Թաղլար: Թաղլարի օդանավակայանում դիմավորեց ներկայիս փոխնախարար Աղաբեկյան Արթուրը, որի հետ նաև երկար տարիներ կռվեցինք, նաև լավ ընկերություն արեցինք: Բանիմաց մարդ է, բանակի հոգսով, զինվորի հոգսով, ցավով ապրող մարդ: Հեղաշրջումը եղավ օգոստոս ամսին, դրանից հետո ռուսների վերաբերմունքը հայերի հանդեպ մի փոքր փոխվել էր, ավելի ազատ շարժվելու հնարավորություն էինք ստացել, բայց էլի կաշկանդվածությունը կար, որովհետև, ի վերջո, ռուսները ավելի շատ օգնում էին ադրբեջանցիներին, քան հայերին, բայց և այնպես, ռուսների օգնության առկայության դեպքում էլ Ղարաբաղի տարածքում ադրբեջանցիները չկարողացան հաջողությունների հասնել, որովհետև Ղարաբաղում արդեն ազգային ոգի կար, ազատատենչ գաղափարներ կային, և մարդիկ գիտեին, որ իրենց տան համար էին կռվում և ոչ թե ինչ-որ զավթողական մարտեր կամ զավթողական գործողություններ էին անում: Ամենահիշարժան դեպքերից մեկն էր հարձակումը Էդիլլու, Ախլլու, Ալբուլախ գյուղերի վրա: Ես այդ ժամանակ Էդիլլուում էի: Էդիլլուում կազմակերպում էին, դե այն ժամանակ զենքերը հրաձգային լավ լուրջ զենքեր չէին, հրացաններ կային, տոզի հրացաններ, հատուկենտ ավտոմատներ կային և կապի միջոցով կապվեցինք, Մանվելն ասաց. «Վահան, մնում ես Էդիլլուում, կազմակերպում ես, որպեսզի պաշտպանությունը չճեղքեն: Դա 1991 թ. աշունն էր, հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին: Եվ այդտեղ լուրջ ընդհարումներ տեղի ունեցան, վիրավոր տղաներ եղան նույնիսկ, և այդտեղ առաջին անգամ, անկեղծ ասած, ես Մանվել Գրիգորյանի ուժը տեսա: Եվ առաջին անգամ զգացի, որ արժե, իրոք, այդ մարդու և այդ ջոկատի հետ կռվել, որովհետև ամեն մի տղա ցանկացած առաջադրանք աշխատում էր ինքը կատարել, չթող-

նել իր ընկերոջ վրա: Գիշերը ժամը 24.00-ն էր, կապվեց, ասաց. «Ուղեկցող եմ ուղարկում, բարձրացիր, միացիր մեզ»: Շատ կցկտուր էինք խոսում, որովհետև ռացիաներր լսվում էին, ձայնագրվում էին հակառակորդի կողմից, ես Էդիլլու մարդ թողեցի այնտեղ շտաբում, Արթուր Մկրտչյանի հետ էի Էդիլլուում մնում: Արթուրը շատ հայրենասեր մարդ էր: Եվ հիշում եմ՝ այդ օրերին Մանվելին ռացիայով ասաց. «Մանվել ջան, մենք այստեղ ահագին ուժ ունենք: Ես քեզ խնդրում եմ այդ կողմում, որտեղ որ դու կաս, այդ կողմը պինդ կպահես, որովհետև այդտեղ թույլ է: Խնդրում եմ քեզ չթողնես, ախպեր ջան, ախր ետևում մեր գյուղերն են, մեր տներն են, մեր շենն ա, մեր տներն են»:

Արթուրն, ասենք, լավ հռետոր էր, լավ հայրենասեր էր, բայց վախը մեջն էր, սառնասրտություն չկար: Ուղղակի շատ զգացմունքային էր այդ պահին, կաշկանդվածությունն, ընկճվածությունն էր տիրապետում: Ասացինք. «Արթուր ջան, մի մտածիր, Մանվելը ոնց կթողնի էդ գյուղերը մտնեն»: Բարձրացա Մանվելի մոտ: Բոլորը հոգնած էին, մի երկու վիրավոր տղա կար: Ասաց. «Վահան, եթե մի մետր ետ գնայիր գյուղից, էստեղ քեզ խփելու էի»: «Բայց մի մետր ինչքան ետ պիտի գնայի ես, ետ գնացողը ավելի դժվար է գնում, քան առաջ եկողը: Ոնց կգնայի, բա էդ ժողովուրդը, էդ տունը, հետո որ էինք ապրելու»,- ասացի ես: Գրկեց, ասաց. «Եղբոր պես, ետ գնա գյուղ, մինչև կորոշենք՝ ինչ ենք անելու»:

Բ.Կ.- *Ասաց՝ խփելու եմ, դու ոնց ես ընկալում դա:*

Վ.Ա.- Չէ, նախ այսպիսի մի գաղափար կար, այսպիսի մի պայմանավորվածություն, ասում էինք. «Տղերք, ախպերդ էլ լինի, դավաճանի, խփելու ենք»: Չնայած ինքը, ես չեմ մտածում, որ պիտի վերցներ ու ինձ գնդակահարեր: Դա փոխաբերական իմաստով, իհարկե, ես չգիտեմ, հիմա ասենք եթե այդ պահին ես այդ գյուղից նահանջեի, գյուղը տայի: Ստիպվածի բան չկար, եթե նահանջեի՝ վախի առկայության դեպքում էի նահանջելու: Խոսքը նրա մասին էր, որ ուղղակի թողնեի, փախչեի: Այնտեղ ինքը ոչ մի անգամ ոչ մեկին ոչ մի բան չէր ասի: Ինքը ընդհանրապես դավաճանությունը չէր ներում: Նույնիսկ իր եղբայրը, հանգուցյալ եղբայրը ինձ մոտ էր այդ ժամանակ, իր եղբորը՝ Ղազարին, որն ինձ մոտ էր, ասել էր. «Արսենյան Վահանի գլխից մազ ընկավ, մորթելու եմ քեզ, գյուլլելու եմ քեզ»: Երբ որ ես մի տեղ էի գնում, Ղազարն ասում էր. «Ավապոր պես, ուզում ես իմ գլխին բազար լինի, ինձ կտա կսպանի: Խնդրում եմ էլի, քիթդ մի խոթի էնտեղ, որտեղ վտանգավոր է»: Հետո Մանվելի հետ աշխատելը դժվար չէր, որովհետև իմ ասածը բացատրում էի, ընդունում էր, և կային տղաներ, ասենք՝ Շմայսն էր, Հայրոն էր, Արայիկն էր, տղաներ կային, Մեխակը, որ ասում էինք, թե այսպես է, հրամանատար, կարծիքների գերակայության դեպքում վերջ, խնդիր չկա: Չնայած շատ անգամ մենք, նույնիսկ եղել են պահեր, որ նույնիսկ սխալ որոշում է եղել, որովհետև իրավիճակը փոխվում է, էդ պահին դու որոշում ես, բայց միշտ չի, որ քո ուզածով է լինում: Դու չգիտես՝ դիմացդ ինչ ուժեր են, ինֆորմացիան թերի է, և այդ ժամանակ արդեն ինչ-որ բան ճիշտ չի լինում: Բայց, ընդհանուր առմամբ, հավաքվում էինք, ինքը խորհրդակցություն էր անում ու որոշում կայացնում: Մի օր կանչեց, ասաց. «Վահան դու, Հայրո դու, Շմայս դու, Ղազար դու, Հայկ դու, Կյաժ դու, նստում եք «Վիլիսը», զենքերը վերցնում եք, գնում եք Ստեփանակերտ: Կոմանդոսը կանչել է, երեք-չորս օրվա գործ ունեք, արագ գործը անում եք, շուտ ետ եք գալիս: Գնում եք Քարինտակ, ձեզ ուղարկելու է Քարինտակ՝ ինքնապաշտպանական աշխատանքներ կատարելու»: Այդ ժամանակ մենք Հադրութի սարերում բունկերներ, գետնախորշեր, գետնուղիներ, այդպիսի բաներ էինք սարքել, մինչև հիմա պահպանվել են դրանք: Որ փախչում էինք, մտնում էինք մի տեղ, մի 300 մ ուրիշ տեղ դուրս էինք գալիս, այդպես ռուսներից փախչում էինք, այդպիսի շատ դեպքեր են եղել: Ինձ ասաց. «Դու կապը կկազմակերպես, Հայրո՝ դու դիրքերը կնայես»: Գնացինք, Կոմանդոսն ուրախացավ: Նստեցինք, հաց կերանք, նկարվեցինք, նկարներն էլ կան, ասաց. «Վաղը գնում եք Քարինտակ, գնում եք, ուսումնասիրում եք, տղերք, տեղանքը, շատ հնարավոր է Շուշիից առաջիկայում հարձակում լինի: Դուք հասցրեք մինչև կոնկրետ երեք-չորս օրվա ընթացքում բոլոր ինժեներական կառույցները սարքեք: Ձեզ տալիս եմ չորս օր ժամանակ, ամբողջ գյուղը խրամատավորեք, ինչ հնարավոր է անհրաժեշտ շինարարական աշխատանքներ կատարելու, կատարեք, կվերջացնեք, կզեկուցեք, կգնաք: Արսենյան, դու կապը կապահովես:

Վերջը եկանք, էնտեղի գյուղապետը Սամոն էր: Հերոսական գյուղ էր: Կոմանդոսը զանգեց, ասաց. «Վաղը ձեզ մոտ զինվորականներ եմ ուղարկում՝ ռուսներ, պրոբլեմներ կան, էդ պրոբլեմների մասին լսեք, տեսեք՝ ինչ եք անում»:

Ասացին, որ ռուսները դպրոցի շենքում են: Ես, Հայրոն, Շմայսը գնացինք: Վազգեն Սարգսյանը նոր զենքեր էր ուղարկել, ավտոմատներով գնացինք, բացեցինք, մտանք սպորտդահլիճ: Մինչ այդ զեկուցեցի, որ ջոկատի հրամանատարներ են եկել: Մտանք ներս, միանգամից անկյուններից զենքերը պահեցին մեզ վրա:

- Положите оружие.

- Մենք զենք չենք հանձնում:

- Զենքերը հանձնեք:

Հայրոն քաշեց նռնակն ու ասաց.

- Взорву всех.

- Не надо, не надо, мы пошутили.

- Не каких шуток. Положите оружие.

- Вы что, вы хотели нас разоружить?

- Конечно, вы в нашем селе, в нашей территории, уничтожим вас, давайте, положите оружие.

- Ладно, ребята, мир, мир, мир, давайте поговорим.

Այդպես նռնակը դրեց, զենքերը քաշեցին, նստեցինք, մայորն ասաց. «Տղերք, գինվոր ենք կորցրել, երկու գինվոր, ռուս գինվորներ են, դրա համար իմ հերը կանիծեն: Շուշիից ենք մենք իջել, մեզ նեղացրել են: Մեզ գինաթափել են, ետ են ուղարկել: Գտեք մեր գինվորներին, ձեզ ինչ պետք է, կօգնենք»: Ասացինք. «Մեզ պիտի գինամթերք տաք»: Ասաց. «Զենք չենք կարող տալ, բայց գինամթերք կտանք, ինչքան պետք է: Դուք մենակ ման եկեք, գտնք»:

Մի խոսքով, ռուսների հետ սկսեցինք համագործակցել, երեք օրվա ընթացքում գիշեր-ցերեկ աշխատեցինք, ինչ-որ պահանջվում էր մեզանից, արեցինք: Առավոտյան ժամը 5.00-ն է, գալիս եմ տուն, ու կրակոց: Ես մտածեցի՝ մեր տղերքն են էլի: «Արա,- ասացի,- էլի սկսեցիք, էս ինչ եք անում»:

Հայրոն դուրս թռավ: Շմայսը թե. «Էս չջոկի՝ կրակում են»:

Շուտ կապվեցի շտաբի հետ՝ Կոմանդոսի հետ: Պատասխանեց.

- Арсенян, я не хотел, чтобы утечка информации был.

Մեզ օրվա տվյալներ էին հասել: Մայորին հարցնում եմ, թե դու գիտեիր, որ հարձակում պիտի լիներ, ասում է՝ հա: Ասում եմ՝ բա ինչո՞ւ չես ասել: Ասում է, թե իրենք ինֆորմացիայի արտահոսքից վախեցան: Այդ ժամանակ, ըստ Կոմանդոսի տված տվյալների, հետագայում նաև ուղղաթիռային բանակի այդ ինֆորմացիայի, հետո դատական պրոցեսներից, մենք իմացանք, որ մեր վրա երկու ուժեղ գումարտակ էր հարձակվել. մեկը ՆԳ-ի ստրուկտուրայից, մյուսը՝ սպեցնազից, մեկը չգիտեմ ինչ ստրուկտուրայից: Եվ համարյա մի գումարտակ ամբողջովին ոչնչացվեց: Առաջին անգամ մենք ռուսներից «ԱԳՍ» տիպի նռնականետ վերցրինք: Շմայսը խփեց նռնականետով, Շուշիում բոց բարձրացավ: Ուրեմն արկը կպել էր գազամուղին, ու մի 50 մետր բարձրության կրակե շիթ էր առաջացել, որը Գորիսի սարերից տեսել են: Մինչև գիշեր մենք Քարինտակը պահեցինք: Հետագայում պարզվեց, որ Քարինտակի հերոսներ ենք կոչվել:

Բ.Կ.- *Ակելի մանրամասն կարող եք էլի դեպքեր հիշել:*

Վ.Ա.- Մենք այդ ժամանակ միանգամից իջանք շտաբ, գնացինք տարբեր ուղղություններով, տարբեր տեղեր: Ղարաբաղցիք, ընդունված էր ասել, քյալ են, ռազմատենչ ժողովուրդ են, սիրում են պատերազմել, այդքան գեներալներ, այդքան մարշալներ ունենք, հիմնականում ղարաբաղյան արմատներից, մենք իրենցով էինք ոգևորվում, իրենք էլ մեր ներկայությամբ: Պարզվում էր, որ մեր մի հայաստանցին իրենց համար ավելի շատ հեղինակություն էր, ավելի շատ ոգեկոչում էր, ոգևորում էր, բան 10-ը իրենց գյուղացի տղա: Բոլորն արդեն գիտեին՝ Մանվելի տղաներն են եկել, արդեն Ղարաբաղում՝ կապված «Կոլցո» օպերացիայի հետ, Մանվելի ջոկատի անունը բավականին համբավ ուներ, որպես լավ կռվող ջոկատ: Թուրքերը սկսեցին տներին խփել: Շուշիից, ձախ կողմը Լիսագորի ճանապարհն էր, այդտեղ մի հատ կրպակ կար, այդ ճանապարհից էին իջել: Մի երկու կածան կար, իջել էին, բայց ուղիղ չէին կարող իջնել, որովհետև ժայռերի տակն էր: Թեքվել էին դեպի Շոշի կողմը: Այդ ժամանակ Ագոն էր հրամանատարը: Արդեն Ագոն եկավ ձորի բերանը, սկսեց նրանց խփել, իսկ երբ նաև աջ կողմից խփեց, թուլացան: Հետո այդ ժամանակ դաշնակցական ջոկատ կար, ես չեմ հիշում ջոկատին, իրենք մեզանից ձախ շրջանցեցին, փորձեցին ճանապարհին խփել: Հետո, իրենց ասելով, բավականին հաջող ստացվեց, որովհետև թուլացավ հարձակումը: Հետո մեր դիրքերը շատ լավ էին: Մենք լավ գետնախորշեր էինք սարքել, դարաններ էինք տարքել, նույնիսկ դեպք եղավ. երբ թուրք մեզանից անցան, մենք ետևից խփեցինք: Շատ լավ

էր կազմակերպված: Հրաշալի պաշտպանություն էր: Քարինտակի պաշտպանությունը, Տեր-Թադևոսյանի խոսքերով եմ ասում, շատ հաջողված պաշտպանություն էր: Պաշտպանությունը վերջացավ, գիշերն արդեն մոտավորապես մի երկու զոհ, մի տասը վիրավորներ ունեինք, իսկ թուրքերը բավականին զոհեր, վիրավորներ ունեցան: Նրանց հարձակումը չհաջողվեց, նահանջեցին: Դե իջնելը ավելի հեշտ էր, քան բարձրանալը: Այդ պահին էլ էինք խփում: Մոտավորապես մենք այդտեղ երևի մի 50-ից ավել զենք վերցրինք: Բայց բատալիոնը ամբողջովին, դե այնտեղ արդեն ականանետներ, պազաններ օգտագործեցինք, տարբեր բաներ և նահագին վնաս հասցրինք: Հետագայում ասացին, որ բատալիոնը համարյա շարքից դուրս էր եկել: Հետո մենք եկանք Ստեփանակերտ: Եկանք Ստեփանակերտ, հավաքվեցինք նորից Արզիկենց տուն: Բոլորիս գրկեց, համբուրեց, ասաց. «Մանվելը չգիտի, որ դուք այստեղ կռվի մեջ եք ընկել, կաշիներս կքերթի: Կասի տղերքիս տարաք գլուխները կերաք: Մենք էլ չգիտեինք, պայմանավորվել էինք, որ առավոտ պիտի ետ գաք: Առավոտյան ժամը 4.00-ին լուրը հասնում է Մանվելին, որ այսպիսի բան է եղել: Մանվելը վերցնում է Սարիկին, 2-3 մեքենայով դեպի Ստեփանակերտ է գալիս, որ հասնի մեզ: Դե չգիտի, որ կռիվը վերջացել է, կարծում է՝ դեռ կռվի մեջ ենք: Հայհոյելով, թե տարան տղերքիս գլուխը կերան, գալիս է մեզ օգնության: Այդ օրը փնտրեցինք, գտանք ռուս զինվորներին, բերեցինք փոխանակման, մի լավ ավտո զինամթերք վերցրինք, ու փոխանակեցինք, զինվորներին տվեցինք իրենց: Այդպես վերադարձանք ճանապարհ, եկանք, հասանք Կարմիր Շուկա, եկանք, հասանք Մանվելին դեմ-դիմաց: Իջավ, թե՝ «Ո՞ւր եք, ձեզ ո՞վ է ասել կռվի մեջ մտնեք առանց ինձ: Ես ձեզ ինչ եմ ասել»: Բայց որ տեսավ բոլորս ողջ-առողջ, ավտոն էլ հետներս բերում ենք զինամթերքով, ասացինք. «Հրամանատար, հո չէինք փախչելու, համ էլ էսքան զինամթերք ենք բերել»: Բացատրեցինք, որ Քարինտակը վերցնելը նշանակում էր մինչև Կարմիր Շուկա, Հադրութ ճանապարհը բացել: Եվ երբ ես հիշում եմ Սամոյին, հիշում եմ Վաղո կար, Վաղոն հետո իմացա, որ զոհվել է, Արթուրը, Ռիժիկը, Կյաժը, շատ հրաշալի տղաներ կային, որոնք զոհվել են, ես ափսոսանքով եմ հիշում այդ տղաներին: Իրոք, հրաշալի տղաներ էին: Ջոկատում մնացի մինչև յոթ ամիս, հետո եկա տուն՝ 1992 թ. փետրվարի 2-ին ետ եկա: Կարծում էին՝ զոհվել եմ, քանի

որ կապ չկար: Առաջարկեցին մտնել արդեն գործող բանակ: Այդ ժամանակ Հատուկ գունդն էր ձևավորվում, գնացի Էջմիածնի վաշտ: Վաշտի հրամանատարը Մելքոնյան Գագոն էր, որը հետո նշանակվել էր «Հատուկ գնդի» թիկունքի պետ, վաշտի հրամանատարը իմ հորեղբոր տղան էր՝ հայտնի զինագործ Արսեն Սարգսյանը: Ինձ որպես զինվոր վերցրին: Մանվելը կանչեց. «Այ տղա, իմ տեղակալն ես, ահագին ջոկատի հրամանատարի տեղակալ ես, գնում ես էնտեղ որպես զինվոր...»: Խնդրեցի, որ բաց թողնի ինձ:

Մարտ ամսին թռա Շահումյան՝ արդեն Հատուկ գնդի կազմում որպես զինվոր: 1992 թ. մարտ ամսին, այն ժամանակ Հատուկ գունդը այնտեղ փոփոխություններ էր կրում: Հատուկ գնդի այդ գումարտակի կազմում Աշտարակի, Ապարանի վաշտերն էին: Աշտարակի վաշտի հրամանատարը Թանգամյան Համոն էր, Ապարանի վաշտինը հետո ապարանցի Ռազմիկը դարձավ, Հոկտեմբերյանինը Սմբատն էր, հետո Ռուստամը դարձավ, Էջմիածնի վաշտինը էդ ժամանակ Արսենն էր, հետո Ֆիրդուսը եղավ՝ Սարոյանի հայրը, նա էլ իմ հրամանատարն է եղել, մի 6-7 ամիս հետո ես դարձա վաշտի հրամանատարը, հետո նոր ձևավորվեց գումարտակ, ինձ գումարտակի հրամանատար նշանակեցին: Ու թռանք Շահումյան: Իջել ենք դրախտ երկրում: Գնացինք Խարխափուտ գյուղը: Հենց առաջին գիշերը լուսացրինք, երկրորդ օրը տանկով երկու արկ ուղիղ տան մեջ խփեցին: Երկու հոգի զոհվեց 4-րդ վաշտից, ինը հոգի վիրավորվեցին:

Մեկ ամիս հետո՝ ապրիլին, ետ եկանք: Մայիսին հրաման եկավ՝ հավաքել մնացած մասն ու գնացինք Լաչին: Շահումյանի հետ կապված մինչև օրս էլ ինձ համար շատ ծանր մի դեպք եղավ: Ապարանի վաշտում Ռաֆիկ անունով տղա կար: Ծանր վիրավորվեց, իմ արյան կարգը բռնեց: Եկա, ասացի. «Քաշեք արյունս»: Մալաթիայի հիվանդանոցի բժիշկն էր վիրաբույժը: Արյունը քաշել էին այնքան, մինչև ուշաթափվել էի: Հետաքրքիրն այն է, ինձ չէին տարել իմ վաշտը, Ապարանի տղերքը ասել էին, թե արդեն սա մեր ախպերն ա, ինքը արյուն է տվել ապարանցուն: Դե ես մարտունեցի եմ, իրենք էլ ապարանցի: Այն ժամանակ կատակով ասում էին, որ էշի քուռակներ են մարտունեցիք: Ապարանի Ռազմիկն ասում էր, թե որը լավ է, վերցրեք ձեզ, ինչ կմնա, տվեք մեզ: Կուզեք «քուռակը» վերցրեք ձեզ, կուզեք՝ «էշը», մեկ ա: Երկուսն էլ նույնն

են: Երկրորդ օրն աչքերս բացեցի, հարցրի, թե ինչ կա Ռաֆոյից, թե՝ լավ է: Բայց շատ թույլ էի: Երրորդ օրը վեր կացա ու իմացա, որ չէր ապրել...: Ու ես շատ ծանր տարա այդ դեպքը: Ես մտածում էի, որ իմ արյունը մեկին իրոք պետք կգա, բայց իրեն ընդամենը մի երկու ժամ էր պետք եկել: Հետո առիթ եղավ, ես քառասունքին էի այնտեղ, ուրեմն ծնողները չէին իմանում, ես ով էի: Ժամանակին ես գնացել էի արաբների համար էի կռվել, հրեաների դեմ, ուր մնաց մի հատ էլ իմ հայրենիքի կամ իմ հայի համար արյուն չտայի:

Ես երկու շքանշան ունեմ արաբական: Հետո այնտեղ ասացին, որ այդ տղան մեր ընտանիքի տղա է դարձել, ես արդեն չկարողացա ինձ պահել, հետո իմացան, գրկախառնվեցին, թե տղա ենք կորցրել, բայց տղա ենք ձեռք բերել: Գիտեք ոնց, այն ժամանակ կարգախոս էր, ասում էին, թե ավելի լավ է տղաս պատերազմում զոհվի, քան խմի, կռիվ անի, դանակահարությամբ զոհվի: Այդպիսի շատ լավ բաներ կար մարդկանց մեջ: Ու ես այդ ընտանիքի անդամ դարձա: Այդ ընտանիքի հետ մինչև հիմա ոնց որ ես այդ տան տղա: Իր եղբայրը՝ Սամվելը, ծառայում է Քելբաջարում, կապի պետ է: Կյանքում լինում է՝ կորցնում ես, բայց նաև ձեռք ես բերում:



Պատմում է ՎԱԼԵՐԻ ՄԱՐՈՒԹՅԱՆԸ (1992-1996 թթ. ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի բժշկական ծառայության պետ), Դրմբոնի ռազմաճակատային հոսպիտալ, 15.04.1993, ապրիլ

- Պարոն Մարության, թե՛ արևմտյան և թե՛ արևելյան ճակատներից անընդհատ թնդանոթների խուլ որոտներ են լսվում: Ահա հոսպիտալը նկուղային հարկից տեղափոխվել է նորակառույց շենք: Ի՞նչ է պայիս այն:

- Դուք ինքներդ տասնյակ անգամ եղել եք այդ երկար ու մութ նկուղում, որը մի կերպ հարմարեցվել էր վիրավորներին առաջին օգնություն ցույց տալու համար: Բայց հենց այդ նկուղային սենյակներում ամենաբարդ վիրահատություններն էինք անում: Հունիսի 12-ից սկսած, երբ մայրաքաղաքի ռմբակոծություններից վիրավորներին պատսպարելու համար նկուղ իջանք, ընդունել ենք հազար վիրավորի, կատարել ենք 400 բարդ վիրահատություն: Բայց տեղը շատ նեղ էր, յուրաքանչյուր սենյակում՝ 13-15 վիրավոր, չկար օդափոխություն: Ստիպված էինք վարակի տարածման դեմ ևս միջոցներ ձեռնարկել: Բանակի և հանրապետության ղեկավարությունը որոշեց նոր շենք հատկացնել: Մենք, ներքին աշխատանքներից հետո, այն հարմարեցրինք մեր պահանջներին: Դրանք երեք տեղանոց լուսավոր հիվանդասենյակներ են՝ բուժական բոլոր հարմարություններով:

- Հավանաբար ձգտելու եք քիչ վիրավորների ուղարկել Երևանում բուժվելու:

- Մենք Երևան ենք ուղարկում այն վիրավորներին, որոնց այստեղ

նող մասնագիտական բուժում ապահովելը դժվար է: Նրանք աչքի, գլխուղեղի և ողնուղեղային բարդ վնասվածքով վիրավորներն են: Վիրավորների թիվը շատ մեծ է, մինչդեռ հրազենային վնասվածքները երկարատև բուժում են պահանջում: Վիրավորների կուտակումը խանգարում է գործին: Մենք պետք է միշտ պահեստային տեղեր ունենանք: Ինչ խոսք, նոր պայմանները զգալիորեն կնվազեցնեն Երևան ուղարկվող վիրավորների թիվը: Մեր հոսպիտալը Երևան է ուղարկել ընդամենը 200 վիրավորների:

- Հիմա մարտեր են մղվում բոլոր ուղղություններով, պատերազմը ավելի է բորբոքվում: Բժշկական անձնակազմը ապահովում է վիրավորների սպասարկումը:

- Ռազմական բժշկությունը, ինչպես և մյուս կազմակերպությունները, պետք է լինեն նաև գնդերի կառուցվածքում: Արդեն նախաձեռնել ենք այս գործը: Հանրապետության բժիշկների քանակը այսօր չի բավարարում թե՛ պատերազմող բանակի և թե՛ քաղաքացիների պահանջները: Այդ իսկ պատճառով բժիշկների սուր կարիք է զգացվում: Ասկերանի պաշտպանության գոտում մենք հոսպիտալ ենք բացել, և բժիշկների թափուր տեղեր կան: Սակայն գումարտակներն ունեն իրենց բուժակներն ու սանիտարները: Մյուս պաշտպանական շրջաններում ևս արդեն հոսպիտալներ են ստեղծվել:

- Խաղաղ բնակչությանը սպասարկող բժիշկները հանկարծ սկսեցին հրազենային, բեկորային վնասվածքներով վիրավորների բուժել: Հոգեբանական բարդություններ չեն առաջանում նման անցման շրջանում:

- 1988-ի շարժման սկզբին մենք արդեն հանդիպում էինք նման վերքերի: Սկզբում կրակում էին զինվորները, հետո եղավ Խոջալուն: Իհարկե, հրազենային վերքերն իրենց յուրահատկություններն ունեն: Հայաստանի Հանրապետությունում, ցավոք, նույնիսկ կենտրոնական հոսպիտալ չկա, որտեղ կարող էին հավաքել բոլոր վիրավորներին: Ճակատում գտնվող զինվորը գիտե, որ իր մասին հոգում ենք: Ահա այդպես է, որ ղարաբաղցի բժիշկներս զինվորական բժիշկների ենք վերածվել: Երբ գիտես, որ առանց քեզ կարող են շատ վիրավորներ չդիմանալ, չես կարող չվիրվել այդ պատասխանատու, դժվար և վեհ գործին: Երբ ավարտել էի բժշկականը, ինձ առաջարկեցին իբրև զինվորական բժիշկ մեկնել Գերմանիա կամ Մոնղոլիա, ինչից ես հրաժարվեցի և հայրենիք վերադարձա: Հիմա ստիպված եմ զինվորական դարձել:

- Իսկ ինչ եք անում զինվորներին պատահական բեկորներից, գլխակներից պաշտպանելու ուղղությամբ: Բժիշկներն ասում են, որ անփորձ զինվորները մեծ մասամբ վիրավորվում են գլխից:

- Նախ շատ կարևոր է հենց խրամատում տրվող առաջին օգնությունը: Ինքը՝ զինվորը, ևս պետք է կարողանա իրեն վիրակապել: Ձգտում ենք դաշտային հոսպիտալները ընդհուպ մոտեցնել ռազմական գործողությունների շրջանին: Վերլուծությունները ցույց են տալիս, որ վերքերի մեծ մասը բեկորային են: Եթե խորը խրամատներ ու բլինդաժներ լինեն, նման վնասվածքներ չեն լինի: Եթե մարտիկները սաղավարտ դնեն, գլխի բեկորային վնասվածքներ քիչ կլինեն: Սաղավարտ շատ կա, բայց չեն օգտագործում: Շատերը մի քանի մետրից կրակում են սաղավարտին ու հետո ասում՝ գնդակի հարվածից չի ապահովում: Իսկ իրականում հեռվից եկող գնդակից ու բեկորներից պաշտպանում է: Մենք ռազմական նոր թերթ ենք լույս ընծայում, որտեղ ես գրել եմ համազգեստի, այդ թվում և՝ սաղավարտի պարտադիր լինելու մասին: Դա կարգապահություն է: Մենք, անշուշտ, սերտ կապերի մեջ ենք քաղաքացիական բուժհիմնարկների հետ: Մեզ մեծ օգնություն է ցույց տալիս փրկարար ջոկատի անձնակազմը:

- Բարեգործական օգնությունները, ասենք՝ լեդի Քոկսի, Նաջարանների, բեռլինցի հայերի կողմից, ինչ մաս են կազմում ձեր ծառայության նյութամատակարարման գործում:

- Եթե չլիներ այդ օգնությունը, մեր ծառայությունը ուղղակի չէր գործի: Մարդասիրական այս օգնությունը ապահովում է մեր կարիքների 90 տոկոսը, մինչդեռ պետության կողմից 10 տոկոսն էլ չի կազմում:

- Զինվորների մեծ մասը ձմռան ամիսներին խրամատներում մրսել են, այլ հիվանդություններով հիվանդացել:

- Մենք, անշուշտ, մտածում ենք այդ մասին: Շատ զինվորներ թերսնումից էլ են հյուծվում, վիտամինների խիստ պակաս են զգում: Միայն առողջ զինվորն է ընդունակ մարտունակ վիճակում լինել՝ ի պաշտպանություն հայրենիքի: Այս տեսանկյունից մյուս ծառայությունները բժշկական ծառայության հետ ամբողջական համալիր են կազմում: Մենք հիվանդությունները կանխելու համար ևս բավական գործ ենք կատարում:

Աստիճանաբար բարելավում ենք և ընկերային ապահովվածությունը: Ասել, թե ամեն ինչ լավ է, սխալ կլինի, քանի որ անելիքներ դեռ շատ ունենք:

- *Հոսպիտալում հանդիպեցի մյունխենցի բժիշկ Ֆրիդրիխ Շուպերին, որը երեք ամիս է՝ ձեր հոսպիտալում է:*

- Պարոն Շուստերը հրաշալի մարդ է, հրաշալի բժիշկ: Դա եզակի երևույթ է: Բայց մենք մեր հույսերը մեր մասնագետների վրա ենք դնում: Ասենք, Արցախ Բունիաթյանը մի ամբողջ տարի է, ինչ անընդմեջ աշխատում է դաշտային պայմաններում:

- *Իսկ ինչ բարդության վիրահատություններ են կատարում վիրաբույժները:*

- Մեզ համար սովորական են դարձել գանգոսկրի, կրծքավանդակի, աղեստամոքսային համակարգի ամենաբարդ վիրահատությունները: Հաճախ են պատահում բոլոր այդ մասերի համատեղ վնասվածքները: Մեր մասնագետները այժմ հաջողությամբ են իրականացնում նման բարդ վիրահատությունները: Շատ վիրավորներ, ոտքի կանգնելով, ռազմաճակատ են վերադառնում ու շարունակում հայրենիքի պաշտպանությունը: Իհարկե, հետագայում մենք կհետազոտենք կատարվածի արդյունքները: Հիմա դրա ժամանակը չունենք:

«ԱԶԱՏԱՄԱՐՏ», թիվ 15, ապրիլ, 1993 թ.



Պատմում է ՍԱՄՎԵԼ ՇԱՀԻՆՅԱՆԸ, (Երևանի ճարտարապետական և շինարարական պետական համալսարանի Գեոէկոլոգիայի և կենսաանվտանգության ամբիոնի վարիչ, բնագետ, ճարտարապետության գ.թ.), Երևան, 07.06.2006 թ.

Ս.Շ. - Ծնվել եմ 1954 թ., Ստեփանավանի շրջանի Գյուլագարակ գյուղում:

Բ.Կ.- *Շարժման հետ ինչպես առաջին անգամ առնչվեցիք:*

Ս.Շ. - Երևի շարժումը առնչվեց ինձ հետ, միանգամից քշեց ու տարավ ինձ հենց առաջին օրը: Այդպես էլ պիտի լիներ, որովհետև Երևանում բոլոր այն ակտիվ, մի փոքր հակախորհրդային տրամադրված յուրաքանչյուր անձ, կամ ստեղծագործող յուրաքանչյուր անձ, կամ մարդիկ, ովքեր իշխանություն ունեին իշխանությունների վրա, բայց իշխանություն չէին, սրանք բոլորը անհրաժեշտ էին այդ շարժման համար: Սա իսկապես դիպված էր, որ մեկ օրվա մեջ կարծես թե մարդիկ փոխվեցին, իրենց նախկին ապրած կյանքը մի կողմ դրեցին, և այդ օրը կարծես թե յուրաքանչյուրը մի նոր մասնագիտություն, մի նոր պարտականություն վերցրեց իր վրա: Ես, որ նախկինում նաև խորհրդային ընդերքն էի տեսել, անընդհատ հետապնդման խնդիրներ էր եղել, բավական մեծ հակասություններ ունեի Խորհրդային Միության հետ և արդեն անցել էի զուտ գիտական աշխատանքի, ստեղծագործական աշխատանքը այնպես մասնակի բնույթ էր կրում, այս նոր երևույթը ինձ ամբողջությամբ կլանեց: Հենց առաջին օրվանից «Ղարաբաղ» կոմիտեի կողքին էի: Հիշենք, որ առաջին «Ղարաբաղ» կոմիտեն Իգորն էր, Զորին Բալայանը, Արմենն էր, հետո սկսեց գնալ ինչ-որ սելեկցիա, ինչ-որ փոփոխություններ և այդ փոփոխությունները օրավուր էին: Օրինակ,

մարդը կարող էր հայտնվել, մեկ-երկու օրվա մեջ դառնալ ազգային հերոսին հավասար կերպար և յոթերորդ օրը անհետանալ ասպարեզից:

Բ.Կ.- *Ջոկատների կազմավորման հետ ինչպես եք առնչվել:*

Ս.Ճ.- Երբ Ղարաբաղյան կոմիտեն արդեն կազմված էր այն կազմով, որը որ նստեցրին, այդ ժամանակ ես հարց բարձրացրի, որ անհրաժեշտ են անպայման զինված ջոկատներ: Բոլորը դեմ էին, բացի երկու հոգուց՝ Աշոտը Մանուչարյան և Վազգենը Մանուկյան: Այնուամենայնիվ, հենց նրանք էլ խորհուրդ տվեցին, որ գաղափարը լավ է և կարելի է սկսել: Առաջին ջոկատը, առաջին զինված ջոկատի սաղմը՝ 28 հոգի, մեր տանը՝ Մասսիվում, երդումով հաստատեցին իրենց մոտեցման կարևորությունը Արցախյան շարժմանը, որ պիտի գնան զինված պայքարի և այդ օրվանից սկսեցին զենք-զինամթերք կուտակել, տեղերում զինված ջոկատների սաղմերը ստեղծել: Առաջին այդ խմբի տղաներից մեր Արտաշեսն էր առաջին զոհը, որ պայթյունից զոհվեց Մեղրիում: Կամո Դանիելյանն ընկավ Արցախյան ազատամարտում:

Բ.Կ.- *Ի՞նչ պայթյուն էր:*

Ս.Ճ.- Հերթով կմոտենամ: Արդեն այդ ամենի սաղմնային վիճակն էր, մենք սկսեցինք զենք հավաքել, իսկ որոշ տեղերում նույնիսկ գողանալ, բայց դեռևս բռնի ուժով զենքի, ասենք, խլելու փորձեր մեզ մոտ չկար: Մեծ քանակությամբ հին հրացաններ, նոր հրացաններ, կարաբիններ, նույնիսկ ավտոմատներ ձեռք էինք բերում Ռուսաստանից: Մեր հայրենակիցներն էին ուղարկում Ուկրաինայից: Ուկրաինայից Վաչիկ Պետրոսյանն էր որոշակի քանակությամբ հին զենքերից բերել: Մոսկվայի տղաներն էին հավաքում, մեծ քանակությամբ զինամթերք էին ուղարկում: Բայց, իհարկե, զինամթերքի մեծ պաշարներ Կովկասում էր կուտակված, որպես սահմանամերձ գոտի, մենք այստեղից գնում էինք: Մի խոսքով, շատ կարճ ժամանակում բոլորս փոքրիշատե զինված էինք նորմալ որսորդի մակարդակով, մի փոքր ավելի: Այդ ժամանակ հետաքրքիր էր, որ մեր կապը Արցախի հետ անընդհատական էր: Գնում էինք Արցախ, գալիս էինք: Իմ մոտ պահպանվել են լուսանկարներ, երբ որ առաջին անգամ Վոլսկու ղեկավարման ժամանակն էր, «Ղարաբաղ» կոմիտեի անդամները՝ Վազգենը, Լևոնը, Վանոն Սիրադեղյան, գնացել էին, որ այնտեղ բանակցություններ վարեն, ես նախօրոք թռել էի այն-

տեղ, որպեսզի անվտանգության հետ կապված ինչ-որ խնդիրներ կարգավորեի:

Բ.Կ.- *Մի քիչ մանրամասն: Գնացիր ո՞ւմ հետ հանդիպեցիր, ինչ արեցիր:*

Ս.Ճ.- Մենք մի օր շուտ թռանք, մեզ դիմավորեց Դանիելյան Կամոն, որը նախօրոք գնացել էր այնտեղ ապահովելու հնարավոր տարբեր տիպի պրովոկացիաներից: Հետո այնտեղ մի լուսանկարիչ կար, կարծեմ Սամվել էր անունը, նրա տանը եղանք, դրանից հետո, ես կարծեմ Ջորին հանդիպեցի: Ադրբեջանցի պահապաններ էին կանգնած, ոստիկաններ էին ռուսների հետ միասին օդանավակայանում: Երբ մենք իջանք, մենք զենքով էինք, ես ավտոմատով էի, ինձ հետ էլ երկու հոգի էին: Մենք կազմակերպել էինք այնպես, որ Կամոն վերցրեց իր վրա ամբողջ փողոցային երթևեկության ընթացքն ապահովել, ես իրենց հետ պիտի լինեի հիմնականում: Շենքի շրջակայքը ապահովելու էին տղաները, ովքեր հետո Մուրադի ու Բաբայան Սամվելի հետ էին, այն ժամանակ դեռ իրենք հրամանատար չէին, բայց Մուրադը դեմք էր արդեն: Բոլոր ուժերը, սկսած ինտելեկտուալից մինչև հանցագործ, բոլորը մոբիլիզացված էին այնտեղ բոլոր ազգային խնդիրները լուծելուն: Մենք ապասում էինք, որ պիտի գան Լևոնենք: Իջնելուց դեռ չէինք դիմավորել, դեռ այնտեղ թուրքերի հետ հարցեր կային լուծելու, դեռ ապրանք հանելու հարց կար, փաստաթղթեր, բան, որոնք մի կերպ պիտի անցկացնեինք, սրանք չբռնագրավեին, այդ ժամանակ ինքնաթիռ իջավ Գյումրիից: Այն ժամանակ Լենինական էր: Հանճարեղ բան էր, տղաները եկան այս դելեգացիայի հետ միասին, մենք բոլորով լուսանկարվեցինք, այդ լուսանկարը պահպանվել է: Պաստառի վրա, որ Լենինականը Արցախի հետ է և այլն: Հետո գնացինք, շատ տարօրինակ օրեր էին, մի կողմից կարծես թե մենք թշնամական միջավայրում էինք, մյուս կողմից մենք տեր էինք, իսկ նրանք, ովքեր երկրի տերերն էին, Վոլսկին և մյուսները, թուրքերը և այլն, վախեցած էին, չնայած մենք էինք անկապ ձերբակալվողը, իսկ նրանք միայն ման էին գալիս խմբերով, ասենք, եթե ինչ-որ տեղ տեսնում էին տարօրինակ մարդիկ խմբված, երեք կամ երկու հոգի կանգնում, երկար խոսում են, անմիջապես գալիս, գոնե մեկին տանում էին հարցաքննության, ստուգելու: Բավականին լավ այդ դելեգացիային տե-

դավորեցին: Նրանց հետ Պետրոսյան Մանուշակն էլ էր, լուսանկարիչ էր եկել և արձանագրել, թե ինչ է կատարվում այդ բանակցություններին: Նրանք չորսով էին եկել, իսկ ես նախօրոք էի եկել: Ես իմ ֆունկցիան արել էի փաստորեն, ուղղակի մնում էր արդեն հետևել գործընթացներին: Մյուս կողմից էլ ով պիտի խփեր, վերջին հաշվով Վոլսկին ինքը շահագրգռված էր, որ հանկարծ միջադեպ չլիներ, թուրքերը վախենում էին քիթը հանել իրենց բնից, բայց ամեն ինչ հնարավոր էր: Բանակցությունների ընթացքում մինչ այդ մեր տղաներից երկուսին ձերբակալեցին, հետո բաց թողեցին:

Բ.Կ.- *Լևոնը, Վանոն ում հանդիպեցին:*

Ս.Շ.- Միայն Վոլսկոն են հանդիպել երկու անգամ: Ես ներկա չեմ եղել, բայց լավ կլիներ, որ այդ հանդիպման մանրամասները դուք իմանայիք: Դրանից առաջ մենք էքսպեդիցիայով գնացել էինք 1988 թ., մենք 1987 թ.-ին էլ էինք գնացել, դա իմ արշավախումբն էր քարանձավագիտական հետազոտությունների, Գիտությունների ակադեմիայի աշխարհագրական ընկերության, և այդ պատճառաբանության տակ, մենք բավականին լավ հետախուզեցինք ամբողջ տարածքը: 1989 թ. եղանք նաև Մարտակերտում, դրանով ավարտվեց այդ հետախուզությունը: Երբ մենք Ազոխի քարանձավի հետախուզությունից եկանք Ստեփանակերտ, որպեսզի հետո գնանք Մարտակերտ, այդ ժամանակ տեղի ունեցավ այն միջադեպը, երբ առաջին անգամ բռնության դիմեցին զանգվածային ադրբեջանցիները և Աղդամից եկող ավտոբուսը քարկոծել էին ու բազմաթիվ վիրավորներ կային: Շատ օպերատիվ Բարայան Տիգրանը, որ հիմա Թուրքիայի տարածքում լուսանկարներ է անում, շատ արագ նրան վերցրինք, երեկոյան մտանք հիվանդանոց, մեկ առ մեկ նկարեցինք բոլորին, բոլոր վիրավորներին, բժիշկներին և ապա տեղեկատվությունը ամբողջ՝ ինչպես է եղել: Մինչև գիշերվա ժամը 2-ը արդեն ծրագրված, լուսանկարները արդեն պատրաստ, լուսանկարները պատրաստեցինք էլի շատ դաժան պայմաններում, որովհետև նոնից դուռը ջարդեցինք, մտանք ներս, եթե դիմացից ջարդեինք, լուսանկարչատունը հրապարակի վրա էր, զինվորականությունը, ոստիկանությունը հաստատ թույլ չէին տա, երևակեցինք բոլոր ժապավենները, նկարների փաթեթները պատրաստեցինք մեծ, այդ տեքստերի հետ միասին Շահնազարյան Դավիթը, որ այն ժամանակ այդտեղ էր, կարողացավ երեկոյան սրանց ուղարկել Երևան, բառացիորեն մյուս օրը երեկոյան Մոսկվայում և արտաահմանում տպվեցին այդ դեպքերի մասին մանրամասները, հենց մեր ուղարկած նյութերի վրա: Ինչու եմ պատմում, որովհետև այն ժամանակվա ինտերնետային և այլ տեղեկատվության միջոցների բացակայության պայմաններում այսպիսի օպերատիվությունը, այն էլ շրջափակման մեջ գտնվող, իսկապես բերդային պայմաններում ապրող ժողովրդի համար չափազանց դժվար գործ էր: Բայց ինչքան էլ տարօրինակ լիներ, ինչ-որ ուզում էինք անել, շատ արագ ստացվում էր:

Դրանից հետո հիշում եմ մոմերով ցույցը, որը եղել է Արցախյան շարժման հետաքրքիր դեպքերից: Էլի նույն օրերի ընթացքում եղավ: Բոլորը մոմերը վառած բարձրացան Շահումյանի արձանի մոտ:

Բ.Կ.- *Դա եղել է Բաքվի կոտորածի օրը՝ սեպտեմբերի 18-20-ը: Բաքվի օրն էր, որ երեկոյան պիտի գնային մում վառեին:*

Ս.Շ.- Վառեցինք, գնացինք հասանք Աղդամի մոտ, հետո իջանք հիվանդանոց, ցրվեցինք: Զորին էլ դիմացից գնում էր:

Բ.Կ.- *Ճանապարհի կեսից մենք թեքվեցինք հիվանդանոց: Խոջալուից ջարդած եր եկանք:*

Ս.Շ.- Դրանից հետո մի դեպք էլ հիշեմ: Մարտակերտում նորից էքսպեդիցիա էինք գնացել:

Բ.Կ.- *Ազոխում ինչ տեսաք, Ազոխի մասին մի քիչ պատմիր:*

Ս.Շ.- Անմիջապես հետազոտություն արեցինք: Մեր բազան Մաճկալաշենում էր: Մենք ամեն երեկո հերթապահում էինք: Գյուղն էլ մեր օրինակին հետևեց: Արդեն բարձրանում էինք բարձունքները՝ մեկը կացինով, մեկը՝ փայտով: Արդեն ռազմական դրություն էր, պետք է պատրաստ լինեինք, եթե մի տեղ արդեն մի բան եղել էր, մյուսն էլ կլիներ: Մենք փնտրում էինք քարանձավներ: Շատ լավ գիտեինք, որ ինչքան գիտական նյութ ունենանք էս պատերազմից առաջ, էնքան կարելի է համարել փրկված, որովհետև անկախ պատերազմի ելքից, ամեն ինչ ավերման ենթակա է, վտանգը կար, որ կարող է ավերվել: Բնականաբար առաջինը ֆիքսվեցինք Ազոխի վրա: Ազոխն ու Թաղլարը չափագրելուց, լուսանկարելուց հետո ի վիճակի չէինք դրա հետախուզումն անցկացնել պարզապես ժամանակի սղության պատճառով: Բարձրա-

ցանք Տոդտունի, այնտեղ պարզվեց, որ մեր ստացած տվյալները կամ չեն համապատասխանում ճշմարտությանը, կամ մենք չգտանք ուղղակի, այնտեղ ասում էին թունել կա, որը տանում էր բերդ, համենայն դեպս գյուղացիները չկարողացան: Հեշտ է գտնելը, եթե բերդը ցույց տային զոնե, մենք թունելը կգտնեինք: Բայց եթե ոչ նրա տեղը գիտեին, ոչ նրա, միայն խոսակցություն է, իսկապես բարդ է: Ազոխից հետո Մաճկալաշենի շրջակայքում, հետո Սոսում, Ճարտարում ինչքան որ ման եկանք, դրանք բոլորը փոքր, ոչ անտրոպոգեն քարանձավագիտության համար հետաքրքրություն ներկայացնող օբյեկտներ էին: Մենք որոշեցինք այդտեղ համարել ավարտված և հասնել Ասկերանի շրջան, որտեղ ունեինք կոնկրետ տվյալներ: Ասկերանի շրջանում մեզ խիստ զգուշացրին թե՛ Խորհրդային Միության իշխանությունները, թե՛ ռուսական, թե՛ ոստիկանությունը, որ եթե մտնենք, վատ կլինի: Մենք երկար մտածեցինք. եթե պիտի մտնենք ու անընդհատ խանգարեն, չկարողանայինք հետազոտություն անել, միայն գրգռիչ դեր էինք կատարելու, մեզ էլ պետք չէր ինչ-որ շարժում, գնացինք Մարտակերտ: Բոլորը հրաշալի էին ընդունում, նույնիսկ այն գյուղապետները, որոնք շատ էին կապված ադրբեջանական իշխանությունների հետ, ու մենք գիտենք, որ հաստատ ամեն երեկո հաշվետվություն էր գնում, նույնիսկ այդ գյուղապետները ամեն ինչ անում էին, որ մեզ համար լավ լիներ: Իրենց այդ ծանր վիճակում, էլի մեզ համար ամեն ինչ անում էին: Մի օրինակ բերեմ, երբ հետազայում՝ 1992 թ. մենք ազատագրեցինք մի անգամ Մարտակերտի շրջանը, Մադավուզի ձորի աղբյուրի մոտ թղթեր էին թափված: Գյուղսովետի թղթերը հանել շաղ էին տվել: Որ պայթեցրել էին, հետաքրքիր բան ասեմ, ստորգետնյա թունելի մուտք էր բացվել: Բայց քանի որ կռվի ժամանակ էր, ոնց մտնեինք, ոնց նայեինք: Թղթերից մեկը ինձ շատ ծանոթ թվաց: Բարձրացրի, տեսա իմ ստորագրությամբ ու ողորմածիկ Ռաֆայել Վահանյանի ստորագրությամբ մեր նամակն է գյուղսովետին: 5-6 տարի առաջ ուղարկված նամակն էր, որ խնդրում ենք եթե ձեր ենթակայության տակ գտնվող հողատարածքներում կան անցքեր, հնագիտական հուշարձաններ ստորգետնյա, կամ ստորգետնյա եկեղեցիներ, տեղեկացրեք Հայաստանի աշխարհագրական ընկերությանը: Եվ բոլոր գյուղերից պատասխանները գաղտնի ստանում էինք: Եվ համոզված եմ, որ

բոլոր գյուղերում գյուղսովետների նախագահները կարևորագույն փաստաթղթի նման սրանք պահում էին: Ում էր պետք, նամակ էր, ստացանք, պատասխանեցինք, ոչ մի փաստաթուղթ չի: Սա պահպանված էր կարևոր թղթերի մեջ: Ես ուղղակի թուղթը վերցրի, տղաներն էին հետս երիտասարդ, որոնք երկրորդ անգամ էին գալիս ճակատ, կանչեցի, ասացի.

- Ուզում եք համոզված լինել, որ սա մեր հայրենի հողն է, և ավելին, սա հենց իմ հողն է:

Ասացին.

- Ի՞նչ իմաստով:

Ու ես թուղթը ցույց տվեցի.

- Տես ստորագրությունը, տես թիվը: Հիմա մենք ինչն ենք ազատագրում: Ազատագրում ենք ոչ միայն մեր պապերի հայրենիքը, չէ, հենց իմ տունը, իմ հողն ենք ազատում: Եթե մի տանը էս թուղթը սենց պահել են, ուրեմն սա հենց մերն ա:

Դրանից մեկ տարի հետո էքսպեդիցիան չստացվեց մեծ ուժերով գնալ: Այն ժամանակ արդեն բոլոր տեղերում կայազորներ կային թուրքռուսական: Զափարից ներքև Գետավանում նախկին գյուղսովետի նախագահի տանն էինք, շատ հումորով մարդ էր, նրանց տանն էինք հանգրվանել ու հետազոտում էինք ժայռերը: Վաղուհասի ժողովրդի հետ միասին բարձրացանք, շատ լավ տղաներ կային կռվող, գնացինք հետազոտման Մարիշկալի, Զարիքթալի կողմերը: Ինչ որ պետք էր, քարտեզագրեցինք, թուրքական ուժերի տեղաբաշխումը, բոլորը նշեցինք, անցուղիները նշեցինք, բավականին գործ արեցինք, ետ էինք գալիս, մեկ էլ ոչխարի հոտ տեսանք: Մեծ քանակությամբ ոչխարի հոտ էին տանում: Ասացի.

- Էս ինչ ա:

- Մար գնալը սկսվել ա սրանց մոտ:

- Բա դեմը չե՞ք առնում: Սրանց որ ճանապարհից կտրես, Լաչինը կմեռնի: Իրենք էլ էս ճանապարհը կմոռանան:

- Հունց փակինք:

- Դե հունց փակինք, հունց փակինք:

Գնացինք բացեցինք մեր գաղտնի պաշարը, բարձրացանք վերև,

սիրուն ամռնալը տեղադրեցինք գիշերով ու պայթեցրինք: Հիմա կա տատրոֆան պատմեմ: Վահան Տեր-Ղազարյանն է, ես եմ, Արմենն է, Գևորգյան, Վահանը ֆիթիլը միացրել է ու մոռացել է սկզբում Արմենին քաշի, որ նոր վառի: Եկել է, ես էլ մյուս կողմից եմ ֆիթիլները միացնում: Ամռնալը դրել ենք ժայռերի մեջ, որ պայթեցնենք: Արմենը կախված է, չենք կարողանում բարձրացնել, արդեն ուժերս չի հերիքում, երկու հոգով ենք, ժայռն էլ պայթելու է: Ասված ենք կանչում, լավ է, որ մյուս կողմի վրա է կախված, Ասված ենք կանչում դետոնացիան չտա մյուս կողմի ժայռերն էլ փլի, մենք մի կերպ փախանք, թաքնվեցինք, բայց խլացել էինք մի օրով, պայթյունը որ եղավ, ռուսական տեղադրված բանակի զորամասը երկու ՌՄՊ-ով եկան: Մենք մեկ վերևից, մեկ ներքևից ուզում ենք Արմենին իջեցնել, հնարավոր չի: Ասում ենք, թե պարանը կտրենք, Արմենը Գևորգյան հիմա աղքատացման ծրագրերում է աշխատում, բայց որ կտրենք, մոտ 8 մետր բարձրություն է, ոնց էլ կտրենք, կարող է ողնաշարը ջարդենք: Արմենն էլ գոռում է, թե երակներս արդեն բռնվել են, գանգրենա է սկսվում, արյուն չի խաղում ոտքերիս մեջ: Զինվորներն եկան, ես ինձ առաջ գցեցի.

- Спасители, спасители, наконец прибыли, здесь нас режут, нас убивают. Вот смотрите что они делают.

- Ух эти турки,- ասում է նրանց հրամանատարը:- БМП сюда.

ՌՄՊ-ն բերին կանգնեցրին, բարձրացավ ահագին, ինչ-որ բան դեմ տվեցին, մի կերպ էս տղեն իրա պարանը կտրեց, իջավ, մի կերպ բացեցին ոտքերը: Հրամանատարին ասում ենք, թե փախան, մեր վրա կրակեցին: Ռուս հրամանատարը մի հինգ զինվորի ասաց, որ գնան, մի 30-40 մետր գնալուց հետո ետ եկան, ասացին, որ անանցանելի է, ամբողջն էնպես են պայթեցրել, որ անհնարին է, մինչև գետ փակած է: Ես ասացի.

- Բայց մենք չենք կարող այսպես աշխատել: Մի բան արեք, ապահովեք մեր աշխատանքը, մենք գիտնական ենք, Академия наук СССР.

- СССР, или Армянский ССР ?

- СССР, вы что, мы же Географическое общество СССР.

Ճիշտ եմ ասում էսքան տեղը, որովհետև մեր Աշխարհագրական ընկերությունը նաև Խորհրդային Միության աշխարհագրական ընկերության բաժանմունքն էր, չնայած ինքնուրույն մարմին էր, նաև մեր ակադեմիային էր պատկանում: Զինվորականը, որ գլխացավանքի մեջ չընկնի, որովհետև թուրքը գիտուն չի, խելոք չի, չի կարող Մոսկվա բողոքի, ես գիտուն եմ, կբողոքեմ, ես ավելի վտանգավոր եմ, անմիջապես մարդ ուղարկեց, որ վերևը փակեն, սրանք եկան իրիկունը հարցրի.

- Շամո Լին փչացրել: Մենք ախր Լստեղ քարանձավներ ունեինք պատմական, դա ազգային մեծ արժեքներ ունի:

Էդ տարածքը Օդակայա էին ասում: Տեղացիները ասում էին Օդակայա: Քարանձավ էլ կար փոքր: Մենք ստուգել էինք, հետազոտել էինք, բան չկար, դիտակետ էր ուղղակի: Ձոր մտնող թշնամուն նայելու համար շատ լավ դիտակետ էր, որովհետև և դեպի արևելք էր նայում, և դեպի արևմուտք: Այսինքն՝ մտնողին տեսնելու էին, կրակով զգուշացնելու էին ետևում գտնվողներին: Տիպիկ դիտակետ էր, դա էինք պայթեցրել նաև, միակ վնասն էր, որ մեզ տվել էինք, ուրիշ քարանձավ չկար: Հիմա Դավիվանքի ճանապարհը փակվել է արդեն: Հիմա ռուս հրամանատարին բացատրում եմ.

- Էստեղ միջնադարյան հզորագույն եկեղեցական կոմպլեքսներ կային, դրա համար են պայթեցրել: Բացի դրանից, Լստեղ ռուս-հայկական բանակը, երբ որ ազատագրում էր, Գյուլիստանի պայմանագիրը գիտես, չէ, որ կնքել են:

- Это я знаю.

- Բոլոր զինվորները հարձակումից առաջ Լստեղ մեծ քարանձավ է եղել, Լստեղ են հանգստացել: Բոլորը պայթեցրին:

Դրանից հետո մի շաբաթ մնացինք, սա եկել է, ասում է.

- Ребята, эти турки говорят, что здесь не фига не было. Я смотрел на карту, на карте тоже ничего не отмечено.

- Ո՞նց կարող ա:

Դե ռազմական քարտեզներում ամեն մի ծակը ցույց են, չէ, տալիս: Վերջը հիմա էս տղաները, ովքեր որ Լստեղ կային, համագյուղացիները, բոլորը գիտեին անխտիր, դե իրենք էին օգնել, յոթ օր Լստեղ ենք եղել, ու Լստեղ միշտ, ամեն օր, ինչ-որ խորհրդավոր փողեր էին գնում, կաշառք տալիս, որ էս ժողովուրդը ինֆորմացիա տար և այլն: Թե մեկը կասկածեց, որ դա մենք ենք քանդել, գիտնականներն էին, ամոթ ինձ:

Այսինքն՝ կար այսպիսի մի միասնականություն, որ բացահայտ հանցագործություն է արվել, գյուղացիներ էլ էին տուժել, որովհետև քարերը ոնկել էին այգիները, ոչ մեկը ոչ մի բան չասաց: Էդ օրը տոն էր իրենց համար: Վաղուհասից էլ ձիավորներ եկան, ասացին.

- Էլ չեք գնում հետախուզելու քարանձավներ:

Մի ուրիշ դեպք էլ: Մեզ որ սեղմել էին, արդեն Դրմբոն էր շտաբը Մարտակերտի, Սուրիկն էր հրամանատարը: Շատ հանգիստ էր, էդպիսի կոիվներ մղած մարդու համար: Շտաբի պետի համար շատ լավ էր, բայց հրամանատար լինելու համար երևի լավ չէր: 44-ը Բաբայան Սամվելի վիզիվնոյն էր, Ամարասի Արթուրը Չապարի տակ խփնված հարձակումներից բժժած նստած էր, դրանք նրա ամենածանր օրերն էին: Մի լավ տղայի եմ հիշում: Էնքան փորձված էր, գյուղացի տղա էր: Ուտյոս էին ասում: Գյուղը գրավել, էնտեղ էին ապրում, Էն լճի մոտ: Լենինդի ջոկատի մնացորդներն էլ մի 8 հոգի Հարութի հետ էն լագերում էր՝ Ալաշանում: Մեզ հետ սևանցի տղաներ էին: Ընտիր կրակող էին: Հետներս մի ջահել կար 20 տարեկան, ՌՇԿ-ից ոնց էր կրակում, քեֆդ կգար: Բժիշկը էնտեղ էր: Դրմբոնի մոտ լազարեթը որ սարքել էին՝ «Արցախ», բեղերը սրած, ասի.

- Ոնց ա վիճակդ:

Լավ ա, բայց հիվանդները սննդի կարիք ունեն: Հիմա որ ամայի տեղ է, բնակչություն չկա, սնունդը չէին հասցնում:

Հիվանդի համար: Ջինվորին ինչ կա, խոտ ուտելով էինք շատ հաճախ մնում: Կարող էինք խոտից թեյը խմեինք մի շաքարի հետ, երեք մասի բաժանեինք, դա էլ էինք անում: Հարձակում էր, ասինք միանանք, 5 հոգով էինք: Էդիկ կար, հետո որ բանակում հակահետախուզության պետ դառավ: Մի հատ էլ շատ լավ տղա կար, շատ հետաքրքիր հրամանատար էր, կարողանում էր ճիշտ ղեկավարել: Ոչ մեկը ռազմական կրթություն չուներ: Շատ արագ նախկին տրակտորիստը դառավ սնայպեր տանկիստ, սովորական հաշվապահը՝ մեկ էլ տեսար ընտրագույն հրամանատար, վարորդը դարձավ ճակատի հրամանատար: Աբսուրդ վիճակ էր, էլի: Բայց իսկապես կյանք էին տալիս: Բերում էին մասնագետին դնում էին, ասում էր.

- Так не завоевать.

- Ոնց так не завоевать: Էս ա:

- Ինձ պետք է 300 հոգի, էսքան հրետանային միավոր, էսքան սով տոմատ, էսքան գնդացիր:

- Ինչի համար:

- Որ գրավենք:

- Ո՞ր ա, չկա: Բայց պետք ա գրավել:

- Я так не могу воевать.

Մի երկու կազակ էին եկել, մի օր մնացին, հետո ասացին՝ սա մեր տեղը չի: Ոնց որ ռազմագերի ընկած չեչեններն էին ասում. «Мы больше в Карабах не пойдем, здесь убивают»: Մյուս պատերազմներում կռիվ ա էլի, էնտեղ չեն սպանում, բայց ստեղ սպանում են, էս ինչ կռվողներ են: Չեկան էդ մարդիկ: Հետո Դուդաևն էլ սկսեց չթողնել: Ողորմածիկ Սեմյոն Բաղդասարյանն էր կամրջաշինարար Դուդաևի հետ կապը պաշտպանում, ինքնաթիռների նավթի հարցն էլ լուծեց: Մենք իրար հետ քանի անգամ Արցախ գնացինք, հետո էդ գերիներին ինքը իր ձեռքով բերեց, տարավ հանձնեց: Էդ կռվի ժամանակ, որ մենք գնացինք, մենք պիտի փակեինք, իրենք պիտի հարձակվեին, հեռուստակայանը գրավեին, իջնեին էդ շենի վրա, մտնեին Մաղավուզ: Մենք էլ պիտի հասնեինք Լուլասագի տակը, որ կամուրջը փակեինք, չհասցնեին ռազմամթերքը տանեին: Մեր ուղեկցողներից մեկը Մաղավուզի դպրոցի ուսմասվարն էր, հրամանատարն էլ ԿԲ-ի սպեցնազի տղան էր, լրիվ անգրագետ: Ճանապարհի կեսից հասկացանք, որ սպեցնազ անունն է մենակ, էս տղաներն արդեն 20 տարի է, դաշտ դուրս չեն եկել: Աֆղանստանում ժամանակին կռվել են, բայց դե հիմա... Վերջը էնենց ստիպեց ես իմ վրա վերցրի, բայց արդեն լուսաբացը մոտենում էր, փաստորեն մենք հասանք Մաղավուզի ու Մեծ Շենի խաչմերուկը, նոր մերոնք խփեցին, մենք ընկանք էդ կրակի արանքը: Պատկերացրեք փոխանակ մենք արդեն նրանց թիկունքում էլ լինեինք: Փաստորեն ճակատային գծի մեջտեղում մենք ենք. վերևից խփում են, տակից խփում են: Սրանք երեխա էին, ջահելներ էլ կային մեջները, սկսեցին կրակել, մի կերպ կանգնեցրել եմ: Որովհետև մեծ մասի ձեռը 5.45 է, անտառի մեջ կրակում ենք: Շրջանաձև պաշտպանությունը բռնեցինք, թուրքեր էին անցնում իրենց դիակը քարշ տալով մոտներովս, դրանց վրա կրակահերթը բացեցինք ընդհանուր, 45 հոգ

գի մարդ Լինք, քիչ չէր: Ստոպ տվեցի, Էնտեղ իրենք թողեցին դիակը, փախան, որովհետև երբ երեք հոգով խաշամի վրայով բան են քաշում, ձայնը ուրիշ է, երկու հոգու փախչելու ձայնը ուրիշ: Թողեցին, հետո մյուս օրը գտել էին դիակը ու սկսեցին մեր վրա կրակել մոխայով ու մինու մյուտով: Դրմբոցը լսում ենք, պայթյունները չենք տեսնում: Դու մի ասա, որ փափուկ հողի մեջ խրվում են, չգիտես ինչու չեն պայթում: Երբ լույսը բացվեց, գնացինք, մի ութ հատ դրանցից հավաքեցինք: Երբ մտանք գյուղ, հարձակումը սկսվեց արդեն կանոնավոր: Մտանք Մաղավուզ, մարդ չկար: Արդեն լրիվ դատարկ, փախել էին: Բայց շատ հոգնած էինք, փաստորեն երկու օր անընդհատ ոտքի վրա, անընդհատ դեսանոցային հարձակումներ, ետ նկանք, ևս ճանապարհին մոլորված մի հավ գտա: Մեր տղաներից մեկը՝ Վարդանը, շատ ճարպիկ էր, հավը գցեց ուսապարկը, մեր զինամթերքի, շորերի մեծ մասն էլ վարի էր գնացել, որովհետև դրանից հետո Մոխրաթաղում ճակատամարտ բռնկվեց, ուժերի մեծ մասը տարան Էնտեղ, փոքր մասով մենք ետ եկանք: Էնտեղ էդ ԲՄՊ-ի մեջ որ մնացել էր, թարմ ուժերով որ եկանք էդ ԲՄՊ-ի մեջ, էդ ԲՄՊ-ն խփվել էր, իրենք էլ, էդ մեր ունեցած պաշարն էլ վարի էր գնացել: Հավը վերցրեց, ճանապարհից էլ կարտոֆիլ էին փորել, եկանք, տուն էր, որտեղ ապրում էին, հայկական տուն, աղ էր մնացել, սիրուն տնական ճաշ եփեցինք, մեկ էլ Վազգենենք եկան: Մանուկյան Վազգենը, մյուսները եկել են տեսնեն, թե ոնց ա վիճակը: Իրենց էլ մի 6 հոգի մարդ էր ուղեկցում: Մյուս օրը Վազգենի հետ գնացինք արդեն գրված տարածքը մինչև Մարտակերտի վերևի բլուրները: Գնացել ենք, շախմատաձև ականսահարման են ենթարկում թուրքերը, ու պարզ երևում է ռուսական ձեռագիրը կամ երևում է բութ կրթություն ստացած թուրքի ձեռագիրը: Եթե դու գիտես, որ շախմատաձև պիտի խփես, դա խփում ես միայն այն դեպքում, երբ զորքի մեծ կուտակում կա, բայց ցրված են: Դու ուղղակի խփում ես, որ փախչողը գնա, հիմա մյուսը Էնտեղ է ընկնելու, շախմատաձև գալիս են էլի: Այսինքն՝ հետո որ էդ փոսերը նայում ես, հավասար հեռավորությունների վրա փոսեր են փորված: Վազգենին բացատրեցինք, որ պիտի իջնենք հիմա: Բարձրացել ենք էն թմբի ետևը, որ դաշտավայրը սկսում է, մեկ էլ էդ 32 էր, ինչ էր էդ պազիվնոյը, ինքը որ ղեկավարում էր էդ ամբողջ հարձակումը, բոյով, սիրուն տղա էր, Հա-

ղորությունը, հետո ինձ ասացին, որ զոհվել է, հանգիստ, լավ տղա էր, ու խելագար, կրակելու համար խելքը իրենը չէր: Ուղղաթիռ խփելու համար խելքը իրենը չէր: Մեկ էլ մեզ ասում էր.

- Սուս, սուս: Մի՛ ցցվեք:

- Ի՞նչ է եղել:

- Վերտալյոտ ա գալիս:

- Վերտալյոտը մեզ ինչ պիտի անի:

- Կտեսնի ձեզ, որ տեսնի, չի գա:

Այսինքն՝ ինքը վախենում էր, որ վերտալյոտը մեզ տեսնի, չի գա: Հիմա մեզ ասում է՝ ապասեք, ու փախավ: Վազգենն ասում է.

- Ո՞ւր փախավ: Ինչի՞ փախավ, դե եկեք էտեղ դիրք բռնենք:

- Վազգեն, սպասի: Չի փախել: Ինքը զենքը հետը մեն չի ածում, գնացել ա բերի, պատրաստ լինի, հո ավտոմատով չի խփելու:

Մեկ էլ էն կողմից ասում է.

- Տղերք, գլուխներդ չիանեք:

Էն կողմից ա ասում, իջել ա էն կողմ, ոչ թե էս կողմից պաշտպանված տեղ, չպաշտպանված տեղ ա եկել, որ լավ տեսնի: Ուղղաթիռը մոտեցավ, էդ զինվորը, որ դրանց կրակադիլ Լինք ասում, հետախուզական ուղղաթիռը մյուս կողմից, ձորից Մարտակերտի, ոնց դուրս պրծավ եկավ դեմը, ինքը խփեց, սրան կպավ: Այսինքն՝ ավելի խոշոր որսը տեսավ, որ սրան խփին, միանգամից շրջվեց ու փախավ: Մի մարդ ա է կանգնած: Սրա նպատակը հենց կենդանի զինուժը ոչնչացնելը չի: Այսինքն՝ ընտենց Լին կռվում, արդեն լավ վախեցած: Իսկ մյուսը, որին որ կպել էր, ծուխ արձակելով գնաց ու Չայուից էն կողմ ընկավ:

Հիմա Վազգենի հետ ետ ենք եկել, լվացվեցինք, թեյը եփել էր, սկզբում բորշ, հետո երկրորդ՝ տապակած կարտոֆիլ հավով, Դրմբոն շտաբ ենք եկել: Մի արձակագիր կար՝ Վահրամը Մարտիրոսյան, եկել էր, որ ՀՀՇ-ի թերթում մեր մասին ինչ-որ բան գրի: Ասել եմ արի տես, այ տղանք, որ էսենց չի, ինչ-որ ասում ես, մենք էտեղ հաց ու պանրով չենք, ռեստորան չենք գնում, մարդասպանության չենք գնում, որ դուք էսենց գրում եք խաղաղություն, բան: Խաղաղություն թելադրողը մենք չենք, խաղաղությունը իրենց կողմից պիտի գա, մենք ընդամենը պաշտպանվող ենք, արի տես: Եկավ տեսավ: Դրանից հետո ինչքան հնարավոր էր

խելքի եկավ: Նա էլ էր մեզ հետ: Կնրանք: Վազգեննեք եկել են ու տարածվել ա: Էն Ռուբիկը, որ հիմա թաղապետ է, մի պահ եկել, էստեղ լուր է տարածել, որ Շահինյանը գնում ա կռվելու, չի կարող իր ռեստորանային հաճույքներից զրկվի: Մինչև էդ որ սոված ենք նստել, էդ ցեխերի մեջ, դա չի երևում:

Իսկ «Երկրապահը» որ ստեղծեցինք: Երասխավանի կռիվը հիշում ես: Ես չէի գնացել: Ես որ գնայի, բա էստեղ զենք ով էր ուղարկելու: Մի գյուղս զենք էինք ուղարկում: Երասխավանի կռիվը բացեց բոլոր պահեստների դռները: Ինչքան մարդ իր տանը պահած ուներ և ինչքան մարդ, որ մտմտում էր՝ գնա կռվի թե ոչ, բոլորը դուրս եկան: Եթե սրանց չկանոնակարգեիր, ՀԱԲ-ի սինդրոմը խորանալու էր: Էդ արդեն շատ վտանգավոր էր: Որ Սովետը սարքում ա մի հատ բանակ, անունն էլ Հայկական ազատագրական բանակ: Իսկապես շատ կանոնավոր մարդիկ էին մեջը, դե հիմա արի ու դրա կողքին Ղարաբաղ ու անկախություն ուզի: Շատ բարդ վիճակ էր ստեղծվել: Գևորգ Բաղդասարյանի հորինած բառով, հորինած որն ա, խորհուրդ տված բառով, մենք «Երկրապահ» կամավորականների ցուցակագրում սկսեցինք: Ես ու Խաչատրյան Լյուդվիգը: Էդ ընթացքում մեր մոտ գալիս էին էնպիսի ուժեր, էնպիսի հզորագույն մարդիկ, որոնք կյանք են տեսել, մեծ փորձ ունեն: Հերթով բոլորից կազմում էինք համապատասխան փոքր ջոկատներ, ուղարկում էինք էստեղ՝ հետո ետ գալու, հանդիպելու պայմանով: Էդ ժամանակ Մոսն եկավ, Գեորգիայան Մովսեսը:

- Մոս ջան, ուր ես եկել:

- Պիտի գնամ Երասխավան:

- Կատեգորիկ արգելում եմ: Էստեղ մեր նմանները շատ-շատ են: Քո նման մի հատ ա: Մի հատ տես ինչ ահռելի գործ ես արել: Էն մատենաշարը որ հրատարակեց, էն հզորագույն թռուցիկները որ անում էր: Ո՞ւր ես գնում:

Մի խոսքով, խիստ խոսեցինք: Հետո մայրը շատ էր սիրում իրեն: Ամեն անգամ որ գնում էի, ասում էր.

- Բա Մոսոյին չես բերել, ճաշը եփել եմ:

Շատ ուրիշ տղա էր, ինտելեկտուալ, ըմբոստ, պայքարող ոգի: Մոսոյին ես էդտեղ չթողեցի գնար: Ինքը գնաց, գնաց ու զոհվեց: Հետո

Սարգսյան Արմենն էր հանել Մոսոյին Լնտեղից: Իսկ էդպիսի տխուր դեպք էլի եղավ: Նորից Տեխնիկայի տանը, գիշերը 4-ին ինձ կանչել էին ՀԱԲ-ի դեմ առնելու, ՀԱԲ-ը շատ էր լկտիացել արդեն, եկանք, տեսնում Գևորգենը մոլորված նստել է, Վանոն էլ, նստել են, Սմբատն էր, մեկ էլ Ֆոուշը եկավ գեղեցիկ հագնված: Ասացի.

Վերջապես դու սովորեցիր լողանալ, գեղեցիկ հագնվել:

Ինչքան տեսնում էինք մրոտ, կեղտոտ: Ինքն էլ գոհ իր տնաքից, նստեցինք, ասացի.

- Ի՞նչ ա եղել: Գիշերվա 4-ն ա, քնից արթնացրել եք:

- ՀԱԲ-ը:

- ՀԱԲ-ի հետ երեկ խոսեցինք հեռախոսով, ես շատ խիստ խոսեցի, ասացի, եթե հիմա չհանձնվեք, դուք ձեր գլխին սարքում եք: Դուք շանս չունեք, սա համազգային պայքար ա, դուք դուրս եք եկել նորաստեղծ պետության դեմ: Դուք կրակել եք արդեն նորընտիր վարչապետի ու նախագահի վրա: Էդ արդեն անթույլատրելի է, բայց էլի պրոբլեմ չկա:

Սրանք չեմուչումով խոսքը ձգում են, որ տղաները զենքը տեղ հասցնեն: Դե լավ, անում-անում են: Հիմա ասում եմ.

Դե հրաման տվեք, պետություն ենք վերջին հաշվով, հրաման տվեք, տակը ստորագրեք, որ գնանք գրավենք, մենք ով ենք, որ գնանք: Ռազմաբացի ենք, չէ: Վեր կենանք, գնանք, կրակենք:

Վանոն ասում է.

- Մանուկյան Վազգենին չեմ գտնում:

- Մանուկյան Վազգենին չես գտնում, հանրապետության Գերագույն խորհրդի նախագահին գտի:

Նրան էլ չեմ գտնում:

- Ո՞նց չեք գտնում, ձեռ եք առել:

Էդ վիճակում, ասի՝ լավ, եթե կառավարությունից մարդ չկա, ես եմ մենակ Գերագույն խորհրդի նախագահությունից, էն ժամանակ չէի լսվել, իմ դեպուտատի իրավունքով ես ուր գնամ, ինչ անեմ: Ասացի.

- Վանո, էս ժողովուրդը ընդունում է «Ղարաբաղ» կոմիտեն որպես նիմական գործադիր մարմին: Դու որպես էդ գործադիր մարմնի պետ կրման տուր:

- Հրաման եմ տալիս:

- Ընենց չէ: Գրավոր հրաման, դնեմ ծոցս, գնամ:

- Ես դա կտամ:

- Ինչքան էլ որ բնրանիցդ թռել ա, էդքան տղամարդ ես, վերջ:

Որոշեցինք, որ Սարգսյան Վազգենը Սմբատի հետ նստի կողմից գնան, ես, էն ժամանակ թատերական ստուդիա կար, էնտեղից իմ ջոկատով, իմ ջոկատից բոլորին կանչել էի արդեն, հավաքվել էին մի 20 հոգի. Կյաժ Մուրադն էր, Գագիկն էր, ֆիզիկ տղաներն էին: Զաուշին էլ ասացի, որ էդ օրը չգա, հազիվ լողացել էր, էսօր բռ կովելու օրը չի: Վիտյային էլ ասացի, որ լիքը գործ ունի, ավտոմատը վերցնում է, որ ինչ: Արմենը կար, հետո դարձավ պետնախարար, նա գնաց ավտոմատը բերեց տվեց Վիտյային, Վիտյան էլ միացավ նրանց հետ, իրանք էն կողմից: Ես չգիտեմ Վիտյային ոնց խփեցին, բայց ես ներքևից որ բարձրանում էի, մենք 6 հոգով էինք, առաջին պլան, մեր մեքենան շուտ հասավ, մենք իջանք ու միանգամից առաջ գնացինք: Վեցն էլ իմ տղաներն էին. Յոկոն էր Իջևանի, մեքենայով տանկ էր շուտ տվել, մեքենան բարձել էր, մեծ արագությամբ շուտ տվել, հետո վեց ամիս ոսկորներն իրար էին կպցնում, չէր կպնում: Բայց ողջ մնաց: Մենք հասել էինք արդեն հին փլուզված շենքերին, խաչմերուկը որ կա բանկի մոտից մտնում ա, խաչմերուկից տասը մետր էր մնացել, մեկ էլ, մի բանի հոգի, թե.

- Ո՞վ ա, կանգնեք, կկրակենք:

Գոռացի.

- Ձենքը վայր դրեք: Հո հայասպան չեք, զենքը վայր դրեք, վերջացնում ենք պատմությունը:

- Կկրակենք,- ու կրակեցին:

Երկու ավտոմատ կրակահերթ տասը մետրից մեզ վրա: Որ դուրս եկանք, բոլորիս շորերը ծակ էին: Մենակ մեր Գրիգորի ականջի բլթակն էր տարել: Աստծու պահած էինք, ինչ էինք, ապշելու բան է: Էդ ժամանակ իմ ավտոմատը լռվեց, մերոնք բոլորը կրակ բացեցին, իմ ավտոմատն էլ չաշխատեց, էն ժամանակ Կյաժ Մուրադն էր կարծեմ, բռնեց ինձ, գցեց պատի տակ: Իրենք սկսեցին կրակել: Հրամանատարին փրկեց, այսպես ասած: Ու սկսեցին կրակել: Սրանք որ սկսեցին կրակել, էս կրակոդներից մեկը ընկավ, մյուսը փախավ, էն կողմից էլ Զաուշը գոռում է.

- Մի՛ կրակեք, մի՛ կրակեք, Զաուշն ա, Զաուշն ա:

Թե ում էր պետք Զաուշն է, որ արդեն կրակում են, կրակկոտ են: Մեկ էլ Զաուշի ձայնը կտրվեց: Ինքը գոռաց.

- Վայ խփեցին, ես ձեր ու ընկավ:

Սրանք դադարեցրին կրակը: Մեկ էլ Գագոն ասաց.

- Զաուշին խփեցին, անմիջապես տարեք հիվանդանոց:

Հայրոն Զաուշին տանում է, բայց արդեն մեռած: Ու էն ժամանակ էլ պարզվեց, որ մեր տղաներից մեկին էլ են խփել: Վիտյային նույն ժամանակ վերևն են խփել: Մենք տակից էինք խփում: Հետագայում դատարանում, իմիջիայլոց դատարանում մենակ ես եմ վկայություն տվել, ոչ մեկը չգնաց դատին: Ես դատավորին ասում եմ.

- Քաղաքացի դատավոր, մենք կրակել ենք և էնտեղ մարդ ենք սպանել 2 հոգի, իրենք խնդրել են կրակը դադարեցնել, որ էդ 2 հոգուն տանեն: Եվ այդ 2 հոգուն տարել են, մենք դա տեսել ենք: Ովքեր են այդ 2 հոգին:

Էնտեղից էն Ադանայի Անդոն կա, վեր է կենում, ասում է.

- Սուտ է ասում, պարոն դատավոր, իր ավտոմատը չէր աշխատում, ինքը չէր կարող մարդ խփել:

- Էդքանը որ գիտես, Անդո, ո՞վ է եղել, ո՞ւմ ենք խփել:

- Ոչ մեկի էլ չենք խփել, մենակ ձերոնցից պատահական 2 հոգի զոհվել են:

- Այ տղա, էս Երևանում հնարավոր չի, որ մարդը մեռնի, քաղաքը չիմանա, էն էլ էդ օրերին: Հնարավոր չի, որ դուք մեկին կարողանաք թաղեն թաղել: Հնարավոր չէ թաղման ժամանակ գնդակի տեղը չիմանան, հենց նույն օրը չպարզեն: Դրանք ուրեմն հայ չեն եղել, որովհետև անհետ կորած մարդ էլ չի եղել էդտեղ: Դուք ո՞ւմ հետ եք ընկերություն արել, բացատրեք, էդ ՀԱՔ-ը ո՞ւմ հետ է եղել: Էդ ովքե՞ր էին ձեզ խորհուրդ տալիս, որ կրակեք:

Վերջում ես դատավորին խորհուրդ տվեցի, որ տղաներին չպատժի, որովհետև նրանք զինվոր են, կատարել են հրաման: Ու շատ լավ կռվող էլ տղերք են, հետագայում էլ բազմիցս ապացուցեցին, որ գիլ տղերք են: Բայց ովքեր են իրենց հրաման տվել, ովքեր են կազմակերպել, ովքեր են գնել ու կազմակերպել ու կառուցել էդ ամենը, նրանց է պետք գտնել:

Բ.Կ.- *Ռազմիկը կմոր դատարանում:*

Ս.Ծ.- Ռազմիկը չկար: Մի վեց մարդ կար, բայց Ռազմիկը չկար:

«Երկրապահում» նատած եմ, ջոկատներն ենք ուղարկում, Մոլլիում, Կիրանցում, Իջևանում, դե Գորիսն ինքը իրեն արդեն լավ կազմակերպել էր, ինդիր չկար, Ղափանում Համլետն էր կազմակերպում, Եղոյան Ռուրիկը արդեն կազմակերված լավ ջոկատ ուներ հոկտեմբերյանցիների, իրենց ուղարկեցինք, որ գնան մարզվեն տղաների հետ, ուզում էին լավ ինստրուկտորներ էիք ձարել, որ գնային մի քիչ մարզվեին, որ իրենց էլ ուղարկեիք, մեկ էլ Արարատից Գրիգորը, որ հետո դարձավ Ներքին գործերի փոխնախարար: Գրիգորինը առաջին ջոկատն էր, որ տարան Դահրազ, որ 6 ամիս նստեցին Լնտեղ, հետո փոխարինվեցին Աբովյանի տղաներով: Էդ առաջին ջոկատն էր գինված, որ տարել էինք Էնտեղ: Էդ ժամանակներն էր, դրանից առաջ էլ Երասխավանի կոմին էր եղել, որ Վազգեն Սարգսյանն էլ մի հոգի կորցրել էր: Բայց փաստորեն Քյարքին չէին գրավել: Հիշում եմ Քյարքին գրավելու պատմությունը, որ հարձակվել էին, չէին գրավել, մի հոգի զոհվել էր: Քյարքիում, քանի որ բաբվեցի փախստականներ կային, ծրագիր է մշակել Ալեքսան Հակոբյանը, որ սրանք Ադրբեջանի քաղաքացիներ են, ոչինչ չի խանգարում, որ էս փախստականները, որոնք որ համարժեք տներ ունեին, էդ իրենց տները փոխանակեն էս տների հետ: Փոխանակողը չկա, ոչինչ, կմտնեն, Բաքվի իրենց լավագույն տների հետ էս գոմերը կփոխանակեն: Ռուսական կողմի հետ խոսել է, նրանք ասել են ոչ: Նա էլ կարողացել է լեզու գտնել ռուսների հետ, որ Ադրբեջանի քաղաքացիները ուզում են մտնել Ադրբեջան, դուք չեք թողնելու: Սրանք ասել են, թե թողնում ենք, եթե Ադրբեջանի քաղաքացու անձնագիրը ցույց է տալիս, մենք թողնում ենք, պրոբլեմ չկա: Բայց Հայաստանով ոնց են գալու մտնեն: Ալեքսանն էլ ասում է, որ դա իր պրոբլեմն է, ավտոբուսները կազմակերպված կբերենք, կմտնենք, էդ մարդիկ ուզում են իրենց տներում ապրեն: Էս հրամանատարն էլ ասում է, որ դա վտանգավոր է: Սա էլ ասում է, որ այդ գործը անի, իրեն 3 հայկական կոնյակ ենք տալիս: Ես էլ ամեն ինչից անտեղյակ նստած եմ, Ալեքսանը մտնում է, ՀՀԾ-ի խորհրդի նիստում ասում է, Լևոնենք կորուկ դեմ են լինում: Ասում է.

- Գոնե 51 ռուբլի փող տվեք, ես իմ ռիսկով անում եմ էդ գործը՝ Քյարքին հայկականացնում եմ:

51 ռուբլի չէին տվել: Ինքն էլ գիտեք ոնց էր ապրում, աշխատավարձով աշխատավարձ, դժվարությամբ, չնայած երբեք էդ մարդուց ամբողջ կյանքում դժգոհություն լսած չկամ ու երևի չլսեմ էլ: Իմիջիայլոց, հետագայում նրա շնորհիվ էր, որ Լաչինի քարանձավները կարողացանք հետազոտել մարզպետ ժամանակ: Ահռելի օգնություն ցույց տվեց: Քրոնը, Հոչանցը, ուրարտական ժայռափոր դամբարանը, արձանագրությունները, դրանք բոլորը նրա շնորհիվ գտանք: Ֆինանսավորեց, պահեց էքսպեդիցիան: Միջանցքում ինձ բռնեց, «Երկրապահը» տեղավորված էր առաջին հարկում, երկրորդ հարկում ՀՀԾ-ի վարչությունն էր: Բռնում է ինձ, ասում.

- Սամվել, մի շատ կարևոր հարցով եմ եկել:

- Ասա:

- Ինձ կարող ես տալ 27 ռուբլի 10 կոպեկ:

- Նախ 27 ռուբլին չհասկացա, ինչի ոչ թե 25, այլ՝ 27: Երկրորդը 10 կոպեկը ընդհանրապես գլուխս չմտավ:

- Երեք կոնյակը էդքան արժե:

- Երեք կոնյակը շատ ավելի արժե՝ «Նաիրին», «Վասպուրականը», դու ինչ կոնյակ ես ուզում:

- Էդ գործի համար միջին կոնյակ է պետք՝ «Տոնական»:

Սա եկել է, ես «Երկրապահի» նախագահն էի, արդեն «Երկրապահը» ստեղծվել էր, զբաղված էինք ուժերը միավորելով: Ընդ որում, ինչքան միավորում էինք, էնքան դժվար պահեր էին առաջանում: Եթե հիշում ես «Հանրապետական» բանակ առաջացավ, առաջացավ «Մուշ», «Սասունցի Դավիթ», «Սասնա ծռեր», բայց հետո, իհարկե, բոլորը միացան մեզ, մանավանդ ՀԱԲ-ից հետո, որովհետև էլ ուրիշ ճանապարհ գոյություն չուներ: Պիտի միավորվեին, բոլորը միացան «Երկրապահին»: Ես զբաղված էի կոնկրետ Երկրապահ ջոկատների ամրացմամբ: Երկրապահի մեջ կային ջոկատներ, որ նույն տեղամասում էին, իրար հետ չէին միավորվում, իրար հետ չունեին, բայց մեզ հետ միավորվելով, իրար համատեղ գործունեություն էին անում: Օրինակ, ասենք Գրիգորի ջոկատը Արարատում, մեկ էլ Վազգեն Սարգսյանի ջոկատը: Երկուսն էլ ուզող ջոկատներ էին, բայց մեկը մյուսի հետ չէր ուզում միանալ: Իսկ Արարատում ընդհանրապես խայտառակություն էր. նրանք վերածվեցին

ավազակախմբերի և դարձան պատիժ: Բայց դա միակ դեպքն է, որ չեն դում է, եղել, որիշ դեպք չենք ունեցել: Նույնիսկ Այավերդում, որ տղան իր շատ ըմբոստ էին, նման բան չի եղել, բոլորը միավորվեցին «Երկրորդ պահի» հետ: Մի խոսքով, մենք կարողացանք տեղերում այդ կառույցները ստեղծել: Էդ պահին մոտենում է ինձ, կոնյակ է, ուզում: Իմ դարդն ա նրա կոնյակ ուզելը: Ասում եմ.

- Լավ, ինչվոր է պետք: Չասես չի տալիս, 100-անոցը հես է, վերցրու

Փառք Աստծո, փող ունի, ոչ մեկից չի ակնկալում, որ պիտի գոհություն անեին: Մտանք սենյակ, ասաց.

- Քյարքին պիտի հասցնենք:

Ասացի.

Վազգենը զոհ տվեց, 120 հոգով հարձակվեց, էդ ահռելի դիմադրության պայմաններում դու ինչ ես մտածում:

Շատ պարզ, ուղղակի իրենք դոները բացելու են, հայերը մտնեն այդ տներում ապրեն: Տներն էլ բաշխել եմ արդեն:

- Ո՞ւմ ես տանելու:

Ադրբեջանի բնակիչներին: Իրենց անկողիններով, ուտելիքով: Գյուղապետ էլ արդեն նշանակել եմ:

- Այդքանը 3 կոնյակով:

- Հա:

- Հալալ է, վերցրու 50 ռուբլի:

- Ես հիմա մանր չունեմ, մանրը կվերադարձնեմ:

Ինքնաս, ինձ մի սպանիր, էլ ինչ է պետք, ասա, օգնեմ:

Այեբանը գնաց, և երկրորդ օրը երեք ավտոբուսով Քյարքին հայաբնակեցրեց: Մեկ ամիս հետո ռուսական զորքը անելիք չուներ, դուրս եկավ այնտեղից: Ու Քյարքին դարձավ հայկական, և ճանապարհը վերջապես բացվեց, մաքրվեց առանց զոհի:

Մի դեպք էլ հիշեմ: 1992թ. շատ ծանր էր: Գորիս-Ղափան ճանապարհը արդեն մի քանի ամիս թուրքերի ձեռքում էր: Մերոնք ստիպված Տանձավերով էին գնում: Ու ծանրացավ վիճակը, որովհետև թուրքերը զանգվածային հարձակում էին սկսել: Ազերիների զանգվածային հարձակումից մենք վախենում էինք: Ամենախոցելի տեղը Ղափանն էր: Ղափանն անընդհատ ռմբակոծում էին, ադրբեջանցիներն էլ իրենց շտաբը

պրոլեն բերել-դրել էին Ղափանի մեջ: Մեր շտաբը մոտ 2 կիլոմետր դուրս էր Ղափանից, օդանավակայանի մոտ էր, իսկ նրանցը մոտ էր երկրաբանական կայարանին: Իրար դեմ դիմաց էինք: Ղափանում բնակչությունը խուճապի մեջ էր: Մի անգամ ինքնաթիռով պատվիրակություն գացինք, որ ժողովրդին համոզենք, որ չի կարելի էդպես, հողը տիրոջով է, հող, բայց երևում է թուրքերն իրենց լավ մշակել էին: Ամեն առուով էին մշակել: Նրանք պահանջում էին, որ իրենց տներ տանք Երևանում, իրենց պահենք, երեխաներին ուղարկենք առողջարաններ: Միակ Համլետի ջոկատն էր կռվող, էն էլ Համլետի մահից հետո, որ պրոթեց ինքնաշեն, մեր սարքած ականով, ընդ որում՝ չհետևելով խորհուրդներին: Էդ ինքնաշեներ որ պայթեց, իրենց մոտ թալացավ պաշտպանություն, ու թուրքը արդեն հանգիստ մտնում էր Ղափան: Մենք որ եկանք Գորիս, բնակության հետ հանդիպում ունեցանք, տեսանք, որ Լրտեղ ասելիք չունենք: Գորիսեցիք շատ լավ էլ պատրաստ են պաշտպանվելու, դեռ ավելին պատրաստ են Հայաստանի պաշտպանության կենտրոն դառնալու: Շուռնուխը այդ ժամանակ էլի շատ ծանր վիճակում էր, որովհետև էնտեղ երկու անգամ բռնեցին ժողովրդին, Մերգելյանի Լրևնեքը որ էնտեղ բազա էին դրել, մի անգամ բռնեցին բաց թողեցին, հիմա արդեն Շուռնուխի միջով անցնող ճանապարհը գրավված էր, թալան ոլորանները, հետո գալիս էր Շիրիս ձորը, ձորից հետո բարձրանում էիր, մտնում էիր Ղափանի առողջարանը: Մեզ ասել էին Դավիթ-Բեկ գյուղի ժողովրդին հանդիպեինք, որ սահմանի բերանն է, և ավելի շատ էր հարվածի տակ: Ղափանում բացատրենք իրավիճակը, հետո բարձրանանք վերև, որ հողի սեփականաշնորհման հետ կապված Քաջարանի արդնձամոլիքդենային տարածքները սեփականաշնորհեն որպես գյուղատնտեսական հողեր, որ հետո հանքը կարողանանք շահագործել, որովհետև ստրատեգիական էր: Դա էլ իմ ֆունկցիան էր: Դրա դեմ էլ մի թիչ Արշակ Սադոյանն էր: Դրա համար էլ Սադոյան Արշակը, ես ու երկու հոգի Արշակի մերենայով գնում էինք: Մյուսները խելացի էին, գիտեին, որ դա վտանգավոր ճանապարհ է: Հասանք ճամփաբաժին կամ պիտի գնայինք Տաթևով, Տանձավերով, կամ պիտի մյուսով գնայինք: Սատանա մտավ մեջս, ասացի, թե թուրքն ով է, որ մենք ճանապարհը վերցնում ենք, էդ ճանապարհով չգնանք: Մի պահ չմտածեցի ականապատված լի-

նելու մասին: Որովհետև տրամաբանական չէր, որ վերցրել էինք, պիտի օգտագործեինք, բայց հետո գլխի ընկա, որ վախենում են օգտագործել ու ականապատել են հենց սկզբից: Բարձրանում էինք, վերջին կետում Արշակը ուզեց դուրս գա մեքենայից: Ես էլ չեմ կարող ասել, որ արդեն ադրբեջանական հսկողության տարածքում ենք: Դուրս է գալիս, մենք ներսում նստած, բուպեն մեկ ասում եմ՝ Արշակ, արի: Մի քիչ էլ վախ կար մեջս, որովհետև հենց էդ թմբի վերևում ես եմ, Բոռնի գյուղապետ Սերոժը (որ բռնեցին իրեն, գյուղերը դատարկելու հետ կապված Բաքու տարան, իրեն, Համլետին, որ մենք մի կերպ կարողացանք Բաքվի բերդից բերել), վախենում եմ, որովհետև գիտեմ, որ էդ տեղը միշտ դարանի տեղ է եղել, թուրքը սովոր է: Ես երեխուս հետ՝ լուսահոգի Հակոբիս հետ, շրջապատման մեջ եմ ընկել, 6 ժամ կրակել ենք: Իրենք վախեցան գնացին, երևի դիմադրությունից հուսահատվեցին: Չնայած մենք բացարձակ պատրաստ չէինք, փամփուշտն էլ չէր հերիքի: 3 պահոնակ ունեի ընդամենը: Արշակը նստել է, թե ինչ գնդեցիկ հայրենիք ունենք: Ասում եմ, թե այ Արշակ ջան, դրա ժամանակը չի, գնանք: Նստեցինք, բարձրացանք. ամապատ, ոչ մի բան չկա, եղնիկ է քայում ճանապարհով, որ չորս կողմը կրակում էին, լիքը գազաններ կային, ճյուղ էր ընկած ճանապարհին, խոտը դուրս էր եկել: Այ էդ ժամանակ սկսեցի մտածել, որ կարող է ականներ լինեն, բայց դե ճանապարհից ետ չես գնա: Անցանք գյուղը, որ մերգելյանցիները պահում էին՝ Շուռնուխը, դա էլ անցանք, բարձրացանք, վերևով իջանք Չարիզանիմ գետակը, տեսանք թուրքական բազա է: Մի տանկ է կանգնած, մի հատ էլ ԲՄՊ հենց ճանապարհի տակ Ղափանի կողմ որ բարձրանում է, հենց էդ մասում: Մոտով անցնում ենք, Արշակը վարորդին ասում է.

- Կանգնիր մեր զինվորների հետ զրուցենք:

- Արշակ, լռիր, չի կարելի:

Վարորդին ասում եմ, որ քշի: Ասում եմ.

- Արագ քշիր, այ տղա:

Նա տոնիցս վախեցավ, ինչ-որ բան գլխի ընկավ: Արագ որ թեքվեցինք, տեսա թուրքը տանկի վրա նստած էր, մեկ էլ տեսավ հայկական մեքենա է անցնում, աչքերը չորս արած նայում է: Մեկը պառկած էր, մյուսը ծխում էր: Մենք որ թեքվեցինք, ԲՄՊ-ի մեջ մեկը կար, որ իր դիրքում էր, ԴՇԿ-ն դիմացրեց ու սկսեց կրակել: Որ սկսեց կրակել, ճյուղերը սկսեցին թափվել, էդ կրակոցի ձայները, էդ դղրդոցները: Արշակին ասեցի, թե վարորդը իր մեքենային լավ չի նայում, ասաց.

- Այ տղա, քեզ չեմ ասել մեքենային նայես, էս ինչ ձայներ են գալիս:

- Ախր, պարոն Սադոյան, ես էս վերջերս եմ նայել, չգիտեմ էս ձենը որտեղից է գալիս:

Ուզում է կանգնի: Ասում եմ.

- Այ տղա, քշի, սա թուրքն է:

Քշեց, դուրս եկանք, մոտենում ենք Կարմրաքարին: Հենց մոտենք Կարմրաքարի տակի ձորը, արդեն մերոնք էին: Առաջին իսկ կրակոցից կոլպակը թռավ:

- Սրանք մերոնք են, սրանք խփում, հետո են ստուգում ում են խփել: Քշի, դուրս գանք:

Քշեց, դուրս եկանք թմբի գագաթը: Բայց կեցցեն, իսկապես հայերները տեսել էին, արդեն ահազանգը տվել էին: Մենք դուրս եկանք թմբի վրա, բարիկադի ետևը ամբողջ շրջանի ղեկավարությունը զինվորների հետ կանգնած է: Հեռվում կանգնեցինք, հանձնվողի սպիտակ պրոշը շարժեցինք, որ մերոնք չփոթեն: Մեքենան կամաց գալիս էր, մենք էլ դիմացից՝ ոտքով: Մոտեցանք, շրջխորհրդի նախագահը, բոլորն էնտեղ էին, ասում են.

- Դուք որտեղով եկաք: Թուրքեր են:

- Ինչի են թուրքերը, հայկական չի: Ճանապարհը լավ էլ ազատ է:

- Ականապատված է:

- Ականապատած է, բայց մենք էդտեղով ենք եկել:

Բայց հետո որ բացվեց, 2 ավտոբուս, մի մարդատար պայթեցին: Իսկապես ականապատված էր:

Մի անգամ էլ Արշակ Սադոյանին Վանքից էշով տարել-հասցրել ենք Վաղուհաս: Նարիշտարի վրա մայիսի 9-ից հետո, Շուշիից հետո որ սոնհաջող հարձակում եղավ, որ մայիսին ձյուն եկավ, բոլորս փայտապանք ցրտից:

Պատմում է ԱԼԵՔՍԵՅ ՖԵՈԴՈՐՈՎԸ (Մոսկովյան «Մեգապոլիս էքսպրես» թերթի ֆոտոռեպորտյոր), Երևան, 1992, հուլիս

Բ.Ա.- *Պարոն Ֆեոդորով, նախ շնորհավորում եմ ձեզ «Ազատամարտ»-ի խմբագրության, ընթերցողների անունից անդրանիկ ցուցահանդեսի բացման առիթով: Այցելուները հնարավորություն ունեն մտքով տեղափոխվելու Արցախ և ձեզ հետ վերապրելու անկրկնելի պահերը, որ պատկերված են այս լուսանկարներում: Նկարահանման պահին դուք նկատի ունեցել եք այսօրվա ցուցահանդեսի այցելուին:*

Ա.Ֆ.- Ես այդ հարցը ճիշտ չեմ ընդունում:

Բ.Ա.- *Ուրեմն դուք միթե այն մարդկանց համար չեք նկարել, որոնք հեռու են կռվի դաշտից, Գրադի համազարկից:*

Ա.Ֆ. - Իմ սկզբունքը իրադարձությանը հոգով մասնակցելն է: Ես ապրում եմ կռվող տղաների հետ: Ես դառնում եմ այն կոլեկտիվի անդամը, որի հետ գտնվում եմ դիրքերում: Սա զուտ իմ հայացքով տեսած Ղարաբաղն է, նրա պայքարը, կյանքը: Ցուցահանդեսը միջանկյալ օղակ է իսկական, ավելի մեծ ցուցահանդես ստեղծելու ճանապարհին: Ես պետք է այս ցուցահանդեսով զգամ, թե ինչ է պակասում:

Բ.Ա. - *Ի՞նչ եք մտածում ցուցահանդեսը արտասահման տանելու մասին:*

Ա.Ֆ. - Դա պետք է արվի «Արցախի մանուկների օգնության ֆոնդի» շրջանակներում, որը մենք հիմնեցինք ցուցահանդեսի բացման պահին: Ֆոնդի հիմնադիրներն են Հայաստանյան «Ավետիս» բարեգործական ընկերությունը և մեր «Մեգապոլիս-Էքսպրես» շաբաթաթերթը: Ֆոնդի

ստեղծումը անձամբ ինձ հնարավորություն է տալիս գործը մի քիչ այլ կողմից տեսնելու: Եթե մեկը Արցախին օգնում է իր փողերով, մեկը՝ կյանքի զոհաբերումով, ես օգնում եմ իմ լուսանկարներով: Այս լուսանկարները անհատույց ֆոնդ կստեղծեն, որը հնարավորություն կունենա անմիջականորեն օգնելու Արցախի երեխաներին: Իսկ նման օգնությունն ուղղակի անհրաժեշտություն է:

Բ.Ա.- *Դուք Գուրգեն Մելիքյանի հետ այդ ֆոնդի համանախագահն եք: Ինչպես եք հավաքելու միջոցները:*

Ա.Ֆ.- Ցուցահանդեսը, դրան զուգահեռ լուսանկարչական ալբոմի հրատարակումը, տեսաֆիլմը երևի հնարավորություն կստեղծեն ֆոնդի համար գումար հավաքել: Մեր թերթի աշխատակից Անդրեյ Պրալնիկովի հետ ցուցահանդեսին զուգահեռ ելույթներ կունենանք, կպատմենք մեր տեսածը:

Բ.Ա.- *Ի՞նչ ծրագիր ունեք մոտ ապագայում:*

Ա.Ֆ. - Որպես պրոֆեսիոնալ, ես ծրագրում եմ մասնակցել Մարտակերտի ազատագրման գործողություններին:

Բ.Ա.- *Դա էլ կլրացնի ցուցահանդեսը:*

Ա.Ֆ. - Անշուշտ, ցուցահանդեսը մշտապես կլրացվի թարմ նյութերով:

Բ.Ա.- *Ո՞րն է Ձեր ամենադժվար լուսանկարը: Երևի «Կտրած ձեռքը»:*

Ա.Ֆ. - Գիտեք, Մոսկվայում լրագրողները միմյանց դիմում են՝ եղել ես Սպիտակի երկրաշարժի գոտում: Դա չափանիշ է: Փլատակների տակ զոհված հարյուրավոր դիակներից հետո ոչ մի բան զարմանալի չէ:

«ԱՋԱՏԱՄԱՐՏ», № 30, հուլիս, 92

Պատմում է ՆԻԿՈԼԱՅ ԲԼՈԽՈՎԸ
(Հատուկ կազակական գումարտակի հարյուրապետ),
Ստեփանակերտ,1992, դեկտեմբեր,

- Ինչպես եք հայտնվել Ղարաբաղում:

- Ես ծառայում էի Դոնի Ռոստովում՝ Պարամոնովի առանձնատանը, գնդապետ հրամանատար Մեշչերյակովի պահակախմբում: Հիմա Դոնի զորքերի գլխավոր հրամանատարը Վիկտոր Ռատինն է՝ պատերազմող մի այր: Ես թողեցի կնոջս ու երկու զավակներիս և եկա Ղարաբաղ: Ես վաղուց էի հետևում իրադարձություններին և սպասում էի հարմար պահի: Ստեփանակերտում քիչ եմ եղել ու կոնկրետ բան չեմ կարող ասել: Ռազմաճակատում այնքան էլ լավ չի կազմակերպված: Տագնապային մի ամբողջ ժամ են հավաքվում: Ուրեմն՝ դա ամենևին էլ բանակ չէ: Զգացվում է, որ զինվորները նախնական ռազմական ուսուցում չեն ստացել:

- Գուցե ձեր վերջին մարտի մասին պատմեք:

- «Ռերկուտ» ջոկատից վեց հոգի և «Ապառաժից» երեք հոգի հետախույզների խումբ ստեղծեցինք և գնացինք թշնամու դիրքերն ուսումնասիրելու: Մերոնք Զլդրանից ոչ հեռու աղբյուրին էին հասել: Շատ խորանալ չկարողացանք, որովհետև 4 կմ առաջանալուց հետո թշնամու երկրորդ գծին դեմ առանք: Գիշերն ուրվագծվում էին հրասայլը, զրահամեքենան ու գնդացրային կետերը: Ադրբեջանցին, նկատելով մեզ, ձայնեց. «Կանգնիր, ով է գալիս»: Հայ տղաներից մեկը պատասխանեց. «Հետախույզներ ենք, տուն ենք վերադառնում»: Մենք պետք է հետախուզեինք թշնամու դիրքերը, որպեսզի առավոտյան հարձակման ժամանակ բարդություններ չառաջանային: Ադրբեջանցի զինվորը հրամայեց թողնել զենքերն ու մոտենալ իրենց: Վեց հոգի էին: Մեր խմբի հրամանատարը՝ Անատոլին, կարճ կրակահերթերով ցած գցեց հրասայլի վրա գտնվող

երկու ադրբեջանցու: Հետո ցած գցեցինք նաև զրահատեխնիկայի վրա գտնվող զինվորներին: Այդ պահին սկսեց ճարճատել ադրբեջանցիների գնդացիրը: Նոնականները ուղղեցի գնդացրի ուղղությամբ ու կրակեցի: Ականջներս նախօրոք չէի փակել ու խուլ պայթյունից մինչև հիմա խելքի չեմ գալիս: Նշան էի բռնել գնդացրի ուղղությամբ, բայց հրասայլին կպա: Բոլորս տնսանք, որ այն կողքի շրջվեց: Զրահամեքենան գործի գցեցին: Հայ տղաներից Սերյոժան ու Գոգան վիրավորվեցին: Ստիպված սկսեցինք ետ նահանջել: Ես ու Անատոլին ապահովում էինք խմբի նահանջը: Ճանապարհի կողմից դոփյուն լսվեց: Նրանք վազում էին, որ առաջ անցնեին ու փակեին մեր նահանջի ճանապարհը: Մենք լուսացծող գնդակներով էինք կրակում ու տնտնում էինք, թե դրանք ինչպես են մարում ադրբեջանցի զինվորների մարմնի մեջ: Մեր դիրքերը հասնելուց հետո «Ռերկուտից» չորս հոգով կրկին գնացինք հետախուզության: Բավական խորացել էինք, երբ ինչ-որ ձայներ լսվեցին: Ադրբեջանցի զինվորները մարտից առաջ որպես ազդանշան՝ ոռնում էին: «Անատոլի, օդակի մեջ ենք ընկնում»,- ասացի ես: Կանգ առանք: Տերևների շրշյունն էր լսվում: Դուրս նկանք ճանապարհ, որ ազատ ընդունենք մարտը: Թուրք զինվորները շատ մոտ էին: Մալիշը հանեց ավտոմատի կափարիչը: Այդ դեպքում ավտոմատը գնդացրի ձայն է հանում ու խուճապի մատնում թշնամուն: Ետ էինք գնում ու կրակում երկու կողմերի վրա: Ադրբեջանցի զինվորների վայոցներով լցվեց անտառը: Հենց հասանք մեր դիրքերը, գոռացինք՝ մեզ հետապնդում են.... Մերոնց կրակոցները ադրբեջանցիներին անակնկալի բերեցին: Առավոտյան Անատոլին, Անդրեյն ու ես կրկին առաջացանք: Գիշերը դիակների մի մասը տարել էին՝ տեղում թողնելով բաճկոնները: Արյուն շատ կար: Վերևում ադրբեջանցու նկատեցի: Ճանապարհն ականապատված էր: Ետ եկանք ու տարանք սակրավորներին, որպեսզի ականազերծեն ճանապարհը:

- Իսկ հրամանատարները ինչ տպավորություն են թողնում:

- Հրամանատարները հիմնականում մասնագետ չեն: Գյուղացին ինչ իմանա, թե ինչպես են պատերազմում: Մարտավարության մեջ սխալներ շատ են լինում: Այդպես երբեմն սխալմամբ իրար վրա են կրակում: Մասնագետ սպաների կարիք շատ կա: Հակառակ դեպքում դա պատերազմ չէ, սպանություն է: Ստեփանակերտում համարյա բոլորը աֆղանական համազգեստ են կրում, բայց վառոդի հոտ չեն առել:

- Դու կպատերազմեիր ադրբեջանցիների կողմից, չէ՞ որ նրանք լավ են վարձատրում:

- Ոչ, երբեք: Ես այստեղ փողի համար չեմ կռվում: Ես պատերազմում եմ արդարության համար: Եթե գրավեն Ղարաբաղը, ապա Հայաստանն ու Վրաստանն էլ կգրավեն, հետո Կրասնոդարի վրա կգան: Մենք դա լավ ենք գիտակցում: Ես սիրեցի Ղարաբաղը, նրա բնությունը:

- Իսկ ինչո՞ւ են ռուս կամ ուկրաինացի սպաները ծառայում Ադրբեջանին:

- Որովհետև լավ են վարձատրում: Բայց երբ թուրքերը սկսեն նրանց տները թալանել, միայն այն ժամանակ կզգան, թե որքան են սխալվել: Նրանց գնել են թուրքերը:

- Շատերն են զոհվում նրանց կողմից:

- Վարձկանները: Այո, գիտեմ, մանավանդ մարդասիրական միջանցքում:

- Որտե՞ղ ես վիրավորվել:

- Չլդրանի տակ. ձեռքս հանկարծ տաքացավ: Հիմա լավ եմ և ուզում եմ ռազմաճակատ վերադառնալ: Գիտեք ինչ է նշանակում հետախույզ: Ինձ սպասում են տղաները:

«ԱԶԱՏԱՄԱՐՏ», թիվ 49, դեկտեմբեր, 1992 թ.

Պատմում է ԳԱՌՆԻԿ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԸ, 03.03.2004 թ.

Հինգ տարի է ծառայում եմ զորամասում: Մինչ այդ ծառայել եմ Շուշիի զումարտակում, որը հետագայում վերանվանվեց «զորամաս 38043»: Պատերազմի ընթացքում, այնուհետև մինչև 2001 թ., Շուշիի առանձին զումարտակում եմ եղել: 1992 թ. Աբովյանից մեր ջոկատի կազմում եկել եմ Արցախ: Իմ մանկության տարիների ընկերոջս՝ Սերգեյ Ջավանյանի հետ էի եկել: 1993 թ. հունվարի 14-ին Սրխավենդի հատվածում հակառակորդը ուժեղ ռմբակոծում էր մեր դիրքերը, սկսեց հարձակվել տարբեր կողմերից: Այդտեղ ընկերս զոհվեց, և ինձ համար պարտադիր պայման դարձավ մինչև վերջ մասնակցել Արցախյան ազատամարտին: Մարտակերտում հիմնական կռիվները լինում էին անտառներում՝ բարձունքները վերցնելու համար: Մենք Չլդրանից աջ՝ Սրխավենդի բարձունքում էինք: Այդտեղից պիտի կրակեինք Մանիքլու գյուղի ուղղությամբ, Բաշ Գյունեփայա և Օրթա Գյունեփայա բարձունքները, առաջանայինք դեպի Մանիքլուի բարձունքը, այն վերցնելուց հետո Մանիքլու գյուղը անցնում էր մեր անմիջական հսկողության տակ: Գիշերվա ժամը մոտավորապես 3-ին դուրս եկանք, ուղեկցողի հետ հասանք բարձունքի տակը, որտեղ թուրքերը դիրքավորվել էին: Մութ էր, չգիտեինք, թե էլ որտեղ դիրքեր ունեն: Հազիվ մեկ-երկու դիրք ենք հայտնաբերել: Սպասեցինք մինչև լուսացավ: Լույսը նոր էր բացվում, թուրքերի շարժը սկսվեց: Փետրվարի 4-ին կամ 5-ին էր: Թուրքերը դուրս եկան, նայեցին, շուռ եկան ու գնացին: Մենք մոտ 40 հոգի էինք, բայց ոչ ոք չնկատեց մեզ: Դիրքերում մարդ չկար, երևում էր, որ քնաթաթախ էին, դեռ ուշքի

չլինի նկկ: Մենը պատահական դուրս եկավ: Սթափ վիճակում էր, մեզ նկատեց ու մտավ ներս: Մեր տղաները ձախ թևից կրակեցին, որից հետո կրակոցները սկսվեցին: Հրամանատարը Մարգարյան Ռոմիկն էր: Նա անմիջապես հրաման տվեց, կրակեցինք, ելանք բարձունքը, թուրքերը արդեն փախել էին: Իջել էին գյուղ, նրանց հիմնական մասը տեղավորվել էր գյուղի դպրոցում: Մենք երեք ջոկատով տարբեր ուղղություններով էինք հարձակվում: Միանգամից հարձակումը սկսեցինք: Հանկարծակիի եկան, քանի որ պատրաստ չէին՝ ուտաբռբիկ, ներքնաշորերով: Խուճապի մեջ ընկան, իսկ մենք այնքան լավ կազմակերպված էինք, որ ոչ մի վիրավոր չտվինք: Մոտ 30 թուրք խփեցինք: Վերցրինք նրանց զենք-զինամթերքը, 82 մմ-անոց երեք ականանետ՝ յուրաքանչյուրը 40-50 արկով: Օրվա վերջում այնքան էինք հոգնել, որ տղաներն անցնում էին, չէին վերցնում, որ բեռ չլինի: Հրամանատարը եկավ, ասաց՝ «Չնք տեսնում, որ ականանետներն այստեղ դրված են, ինչու չեք վերցնում»: Առջևից գնացողը ետ դարձավ, ամբողջ շղթան՝ ետևից: Մեկը արկ, մյուսը ականանետ վերցրին, նորից գնացին, հասան մեր դիրքերը: Մեզ արդեն փոխարինեցին: Մի քանի օրից Մանիքլուի օպերացիան սկսվեց: Այդտեղ ևս հանկարծակիի բերինք թուրքերին, ոչ մի գործողություն չկարողացան անել: Հիմնական ղեկավարը Պետրոս Ղևոնդյանն էր, որը զոհվեց Քելբաջարում 1994 թ. փետրվարի 14-ին՝ մարտական գործողություններից հետո, երբ գումարտակը հավաքվում էր, որ նորից տեղաբաշխվեր Հադրութում: Մեր խմբի ղեկավարը Ռոմիկ Մարգարյանն էր:-Հրազդանի ջոկատն էր այնտեղ, որը ղեկավարում էր Ալավերդյան Ալբերտը, նա զոհվեց Ֆիզուլիում 1994 թ. հունվարի 10-ին: Ստացել է երկրորդ աստիճանի «Մարտական խաչ»: Աբովյանի ջոկատն էր: Հրազդանի, Աբովյանի, Չարենցավանի ջոկատները միասին էին գալիս՝ մոտ 65 հոգուց բաղկացած խումբ էր: Պետրոսը օպերացիան շատ լավ ղեկավարեց, առանց կորստի, անգամ վիրավոր տալու՝ վերցրինք այդ բարձունքները: Հետո նկատեցինք, որ շատ մեծ ուժեր գյուղից դուրս են գալիս, թուրքերը նահանջում էին, այն տպավորությունն էր՝ կարծես չէին ուզում անգամ մարտի մեջ մտնել, համարյա երկու գումարտակ գյուղից դուրս եկավ: Միգուցե մտածեցին, որ իրենց մնալը իմաստ չունի, քանի որ հարձակումն այնքան հանկարծակի էր, որ չհասցրին օգնական ուժեր

ստանալ: Հետո մենք երկու զոհ տվեցինք, ականների վրա մեր ընկերներից երկուսը պայթեցին: Գիշերը բերեցին, Մաղավուզի վերևը մնացինք, լույսը չբացված ասացին, որ պիտի առաջ շարժվենք: Այդ օրը մեր հրետանին շատ մեծ աշխատանք արեց, ամեն խրամատում մեկ-երկու արկ էր պայթեցված, ահագին զոհեր կային: Երբ լուսացավ, հարձակումը սկսվեց: Թուրքերի ինքնաթիռը եկավ, ավիառումբերը թափեց, շուտ էր գալիս, որ հեռանար, մեր «Իգլան» բարձունքից կրակեց, բայց տաքությունից շարժիչը մինի մեջ է մտնում: Դրանից հետո մեր հետևակի գործողությունները սկսվեցին: Մի պահ կար, որն ինձ կասկածելի թվաց: Մի ռուս տանկիստ կար՝ Վիկտորը: Նստեցինք նրա տանկի վրա, որ մեզ առաջացնի, մոտեցնի դիրքին: Բայց մեզ տարավ ուղիղ կրակի տակ: Թուրքերը սկսեցին խփել մեզ: Մի տանկի վրա 25 հոգի կային: Փամփուշտները կպնում էին աշտարակին, ձայնը լսվում էր, բայց ոչ մեկին չէր կպնում: Այդ տանկիստին էլ չկարողացանք տեսնել, անգամ չհասցրինք կասկածել: Դրանից հետո իջանք, Մաղավուզի խաչմերուկը վերցրինք, շարժվեցինք դեպի աջ՝ Պուշկին Յալ, հետո՝ Վիշկին Յալ: Թուրքերը մեծ քանակությամբ զինամթերք էին թողել, փախել: Գրոհեցինք, լրիվ վերցրինք: Վլադիմիրի ջոկատից էլ տղաներ կային: Երբ մենք առաջանում էինք, ձայն տվին, թե՝ սպասեք, նրանք մեր աջ կողմով էին բարձրանում: Այդ բարձունքը երկու խմբով գրավեցինք: Արմիկն էր՝ պարսկահայր, Բորիսը, Ռոմիկը, Դավթյան Վիտոն: Թուրքերը մեծ տարածության վրա էին, բայց մեզ տեսնում էին: Նրանց ականանետները պատրաստ դրված էին: Մի քանի արկ միանգամից գցեցին ականանետի մեջ ու փախան: Մինչև գլխի ընկանք՝ ինչն ինչոց է, պայթեցին մեր շարքերում: Մեր տղաներից չորս հոգի ծանր վիրավորվեցին: Բարձունքները վերցրինք: Կենտրոնացված կրակ արինք Պուշկին Յալի վրա: Կապվեցին, ասացին, որ չկրակենք, այնտեղ էլ են մերոնք: Գիշերը մեր տանկերից մեկը, երևի դիրքն էր շփոթել, բարձրացել էր թուրքերի կողմը: Թուրքերն իմացել էին, թե իրենց տեխնիկան է: Ոգևորված դիմավորել են, ծափ տվել: Այդ տղան երևանցի էր, անունը Անուշավան էր: Դուրս է նկել, տեսել է, որ բոլորը թուրքեր են: Նորից նստել է մեքենան: Ասում է՝ 10 հոգի տանկի դիմաց կանգնած էին: Մի հատ բեկորային արկով է կրակել նրանց մեջ, ու սկսել են գնդացիրներով կրակել: Բլրի ետևում

վրան է եղել, որի տակ թուրքերն էին: Տանկիստը կարծել է, թե հող է: Այդտեղով անցնելիս՝ 15 թուրքի տանկի թրթուրի տակ սպանել էր: Տեխնիկան էլ կախվել էր, թրթուրներից մեկը ընկել էր փոսի մեջ, այդպես կախված մնացել էր: Ասում է՝ թուրքերը սպասում էին լույսը բացվի, որ սկսեն մեզ փնտրել: Մի ավտոմատ են ունեցել, այն էլ կորցրել են, երեքով նռնակը բռնել են, մատը գցել օղակի մեջ ու սպասել, թե վերջը ինչ է լինելու: Լուսադեմին մենք արդեն հարձակումը սկսեցինք, թուրքերը փախան: Մեր տղաները կարողացան փրկվել: Տեխնիկան մերն էր, այնտեղ նաև «ՌԻԱԶ» մեքենա կար՝ զենք-զինամթերքով լիքը:



Պատմում է ՀԱՄԼԵՏ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ, (1992-98 թթ. ԼՂՀ ԱԺ պատգամավոր, 1998-02 թթ. ԼՂՀ կրթության եւ գիտության նախարար, 2002-08 թթ. Արցախի պետական համալսարանի ռեկտոր), Ստեփանակերտ, 16.07.2006 թ.

Ծնվել եմ 1941 թ., Մարտունու շրջանի Հերհեր գյուղում: Շարժման հետ իմ կապերը եղել են ներքին, առանց արտահայտվելու՝ դեռ շատ վաղ տարիներից: Այն միտքը, թե ինչու Արցախը պետք է գտնվի օտար հանրապետության կազմում և ոչ թե իր մայր հայրենիքում, մտահոգում էր ինչպես բոլոր արցախցիներին, այնպես էլ ինձ, և լուռ խմորվում էին այդ գաղափարները: Տարեցտարի այդ գաղափարը խորացավ:

Բ.Կ.- *Հիշում եք, թե ինչպես սկսեցիք գործել:*

Հ.Գ.- Հիմնական պոռթկումը եղել է 1988 թ. հունվարի 25-ին, երբ նախօրոք հավաքել էինք Արցախի պատմության վերաբերյալ շատ փաստաթղթեր, գրականություն, ստորագրություններ: Արցախի մանկավարժական ինստիտուտը պետք է կազմակերպեր էքսկուրսիա՝ դեպի Մերձբալթիկա: Խումբը 25 հոգի էր, Ստեփանակերտից գնացինք Բաքու, այնտեղից ինքնաթիռով թռանք Մոսկվա, Մոսկվայից էլ՝ Վիլնյուս: Մեզ հետ տանում էինք մեծ քանակությամբ փաստաթղթեր մեր երկրամասի՝ ԼՂԻՄ-ի վերաբերյալ: Փաստաթղթերը մի ճամպրուկի մեջ էին, որն իր հետ տանում էր Նիկոլայ Հովակիմյանը: Նա պետք է Մոսկվայում հանդիպեր պրոֆեսոր Եպիսկոպոսյանի հետ: Նիկոլային փաստաթղթերով թողեցինք Մոսկվայում, իսկ մենք մեկնեցինք Վիլնյուս: Որտեղ գնում էինք, ասում էինք, որ մենք Ղարաբաղից ենք, այսպիսի հիմնախնդիրներ ունենք, եկել է պահը, որ ասենք մեր սրտի խոսքը: 10 օրվա շրջագայության ընթացքում որտեղ հանդիպում էինք, տալիս էինք

նկարներ, փաստաթղթեր, այցեքարտեր: Վերադարձանք փետրվարին:

Բ.Կ.- *Իսկ Վիլնյուսում նրանց հետաքրքրում էր:*

Հ.Գ.- Նրանք Ղարաբաղի մասին տեղյակ չէին, գիտեին՝ Հայաստան, Ադրբեջան, մենք ասում էինք՝ այն ինքնավար մարզ է, բնակչության գերակշռող մասը հայեր են, այն գտնվում է Ադրբեջանի տիրապետության տակ, ներկայացնում էինք պատմությունը՝ կապված Ստալինի կատարած քայլերի հետ, և ոչ միայն Ստալինի, այլև Ադրբեջանի կառավարության կազմակերպած քայլերի:

Բ.Կ.- *Նրանք ինչպես էին ընկալում, ում հետ էիք հանդիպում:*

Հ.Գ.- Տարբեր մարդկանց, շրջում էինք հյուրանոցներով, թանգարաններով, բացատրում մեր նպատակը, և մեծ հետաքրքրությամբ մեզ լսում էին: Հանդիպեցինք, գրուցեցինք, նրբ վերադարձանք, Ղարաբաղում համատարած այդ տրամադրությունն էր: Մենք ծանոթացել էինք Իգոր Մուրադյանի և ուրիշների հետ և գիտեինք, որ այդ խմորումները տեղի են ունենում նաև Հայաստանում: 1988 թ. փետրվարի 12-ն էր. այդ խմորումները Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ուսանողների մեջ արդեն տարածվել էին, ակտիվիստներ էին առանձնացել, կոմերիտական ղեկավարներից ևս: Համալսարանի սկզբնական ակտիվիստներից էին Համլետ Մովսիսյանը, Լենա Գրիգորյանը, Սեղան, հետո ուսանողական շրջապատից Շահվերդյան Սերգեյը, Մասիս Մայիլյանը... Նրանք առաջիններն էին, որոնք առանց վախի կազմակերպում էին ստորագրահավաքներ, կոչեր էին անում, ընդհատակյա հավաքներ և այլն: Դրանից հետո շրջապատը ընդլայնվեց, ոմանք դուրս եկան, ուրիշները միացան: Առաջին հանրահավաքին ես մասնակցում էի, հրապարակում ուսանողներ էին, առաջին խոսափողը վերցնողը Աֆանասյան Գրիշան էր: Հավաքվեցին ուսանողները, փորձում էին ուսանողներին ճանապարհից ետ դարձնել, համալսարանի ռեկտորն էր՝ Սարգսյան Սերգեյը, նա զուսպ, բայց բացահայտ ասում էր, որ չի կարելի, մենք ունենք կուսակցություն, բայց առանձին արգելք չէր կազմակերպում: Ես այդ ժամանակ ինստիտուտի արհմիության նախագահն էի, և մաթեմատիկայի ամբիոնում դոցենտ էի: Այդտեղից սկսվեց շարժումը, դրանից հետո մի քանի անգամ պատվիրակությամբ գնացել ենք Մոսկվա: Առաջին անգամ գնացինք հինգ հոգով՝ ես, Ղալարյան Ավետը, Միխայելյան Արգիկը, Ճարտարի կոլտնտեսության նախագահ Մայիլյանը և Փառքի

երրորդ ատիճանի շքանշանակիր քեռի Վադարշակը: Մայիլյանը այն ժամանակ Ադրբեջանի Գերագույն խորհրդի պատգամավոր էր: Մենք գնացինք հանդիպելու Գորբաչովի հետ: Հանդիպումը ձգձգվեց, մոտ մեկ շաբաթ գնում էինք, անընդհատ խոստումներ էին տալիս:

Բ.Կ. - *Այդ դեպքը նրբ էր:*

Հ.Գ. - Որքան հիշում եմ՝ 1988 թ. գարնանն էր, ես գնացել եմ, նրբ արդեն շարժումը սկսվել էր, ոչ թե մինչև շարժումը: «Ռոսիա» հյուրանոցում էինք մնում, շատ հեռագրեր ուղարկեցինք, սակայն Գորբաչովը մեզ չընդունեց, բայց շատերը ընդունեցին: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Սովետների պալատի նախագահը՝ Ավգուստ Վոսը, որը Մերձբալթիկայից էր, մեզ շատ բան հուշեց, թե ինչպես կազմակերպենք շարժումը: Ասում էր, որ Հայաստանում Գերագույն խորհրդի նիստ հրավիրվի և միացման որոշում ընդունվի: Երբ մենք վերադարձանք, և մեզ Օպերայի հրապարակում դիմավորեցին, ասացի այդ մասին, և ժողովուրդը սկսեց վանկարկել՝ սե-սիա: Հաջորդ պատվիրակությունը մեծ խմբով էր. Զորի Բալայանն էր, Վաչագան Սանթուրովիչը, Գևորգի Պետրոսյանը, Մաքսիմ Միրզոյանը, Բաբուրյան Կարենը... Մոսկվայում մենք հանդիպեցինք Տիխոնովի, Պուգոյի հետ, բայց ոչ մի դրական արդյունք: Մինիստրների խորհրդի նախագահ Պավլովի հետ հանդիպեցինք, նա մեզ խոստացավ, որ գարնանացանի համար կուղարկի մեծ քանակությամբ վառելանյութ: Դա արդեն 1989 թ. էր: Պավլովը մի բան մեզ ասաց. «Ինչու եք գնում Թուրքիայից ալյուր խնդրում,- այդ ժամանակ ՀՀ նախագահը Լևոն Տեր-Պետրոսյանն էր, ես էլ Հայաստանի ԳԽ-ի պատգամավոր էի,- եթե մենք անցնենք Մոսկվայի դատարկ այրաղացներով, երկու Հայաստան կարող ենք պահել»: Նա իսկապես գործունյա մարդ էր և համակրում էր մեզ՝ ղարաբաղցիներիս: Նիշանովի հետ հանդիպում եղավ, նա այդ ժամանակ ԽՍՀՄ ԳԽ Ազգությունների պալատի նախագահն էր: Բացի Գորբաչովից, համարյա բոլոր բարձրաստիճան պաշտոնյաների հետ հանդիպել ենք: Երրորդ անգամ լավ բանի համար չգնացինք: Մեզ ասացին, որ ԳԽ-ի պատգամավորներ Ղարաբաղից, Զորի Բալայանը, Դադամյանը, Վաչագան Սանթուրովիչը, նրանց միջև տարաձայնություններ կան, մինչև անգամ միասին հաց չեն ուտում: Գնացինք նրանց հետ հանդիպելու և պիտի ասեինք, որ մեզ ժողովուրդն է ուղարկել: Ինձ հետ էր Աֆանասյան Գրիշան: Իսկապես անախորժություն կար մեր

պատգամավորների մեջ, և չգիտեինք, թե հիմնական պատճառն ինչն էր: Փորձեցինք ասել Ղարաբաղի ժողովրդի կարծիքը այդ երևույթի մասին, բայց Հենրիխ Պողոսյանը մնաց անդրդվելի, ինչը շատ վատ տպավորություն թողեց:

Բ.Կ.- *Ինչ էր ասում:*

Հ.Գ.- Ոչինչ չէր ասում, իրար մեղադրում էին, ինչ հարցերում՝ չգիտեմ, բայց խոռված Լին:Ավելի շատ իրականությանը մոտ էր Բորիս Դադամյանը, դեպի Ղարաբաղը, ժողովուրդը: Մինչև անգամ Ջորի Բալայանը չկարողացավ նրանց հաշտեցնել: Մեր ցանքերն էլ ապարդյուն անցան: Այդ երեք հիմնական պատվիրակություններն էին, էլի եղել են պատվիրակություններ, որոնք գնացել են տարբեր ուղղություններով: Օրինակ՝ ես ինստիտուտի ճակատագրով գնացել եմ Լուսավորության նախարարություն՝ Կուզցովի մոտ: Նա խոստացավ շենք կառուցել, մեզ մի ավտոբուս նվիրեց և ասաց, որ ցանկացած հարցում դիմենք իրենց, մեզ կօգնեն: Բայց դրանից հետո արդեն ԽՍՀՄ-ը փլուզվեց...

Հիմա պատմեմ մի դեպք, որը շատերը մոռացել են, կամ չեն ասում, ինչպես կազմավորվեց «Կոռունկ» կոմիտեն: Արցախի ժողովուրդը համատարած արդեն ամբողջ օրը Ստեփանակերտի հրապարակում էր: Եկավ մի պահ, երբ տեսանք, որ ժողովուրդը տրտիվել է, խմբերի է բաժանվել հրապարակում. մի խումբը մի տեղ էր վիճում, մյուս խումբը՝ ուրիշ: Մեծ խմբեր էին, բայց ժողովրդի միաձույլ զանգվածը չկար: Մենք, շարժման մի շարք առաջնորդներ որոշեցինք գնալ Հենրիխ Պողոսյանի մոտ և հարցնել, թե ինքն ի վիճակի է հանձն առնել ժողովուրդ ղեկավարել: Նա ասաց՝ ես չեմ ասի, թե մենք պիտի ապրենք Հայաստանի հետ,- նա այդ ժամանակ կուսակցական գործիչ էր, փոխարինում էր Կևորկովին: Ես չգնացի այնտեղ, գնացին Մանուչարովը, Մաքսիմ Միրզոյանը, Ժաննա Գալստյանը, Ռազմիկ Պետրոսյանը, Ռոլևս Աղաջանյանը: Դա 1988 թ. մարտի 1-ի լույս 2-ի գիշերն էր: Հավաքվել էին խմբագրությունում, այդտեղից խումբը գնաց Հենրիխ Պողոսյանի մոտ, մինչև գիշերվա 1-ը զրուցեցին, այնտեղից վրդովված եկան, հավաքվեցինք Լենինի արձանի ետևը, ասացին, որ կոնկրետ ոչինչ չի իրականանում: Հայացքների տարբերություն կար Հենրիխ Պողոսյանի և մեր լիդերների միջև: Որոշեցինք, որ մենակումեկը հանդիպման արդյունքը պետք է Լենինի արձանի պատվանդանից հայտարարի ժողովրդին: Որոշվեց նաև ստեղծել մի կոմիտե, որը կկարողանա ղեկավարել ժողովրդին: Մանուչարովը հրաժարվեց հայտարարել, առաջարկվեց Մաքսիմ Միրզոյանին, նա էլ հրաժարվեց...

Բ.Կ.- *Ինչու էին հրաժարվում:*

Հ.Գ.- Կարող է այդ պահին ժողովուրդը այդ լիդերին, այդ կարծիքը չընդուներ. դրանից էին վախենում: Մանուչարովն ասաց. «Թող Գրիգորյան Համլետը հայտարարությամբ դուրս գա, եթե նրան էլ չընդունեն, ես դուրս կգամ»: Գնացի, ասացի. «Ժողովուրդ, խնդրում եմ հավաքվեք»: Հրապարակի ծայրից ծայր հավաքվեցին, եկան արձանի դիմաց: Նկարագրեցի իրավիճակը, ասացի. «...Դուք պետք է առաջադրեք շարժման ղեկավարներ, այսինքն՝ տարբեր կոլեկտիվներ՝ կահույքի ֆաբրիկայի, կոշիկի ֆաբրիկայի, «Ղարմետաքս» կոմբինատի և այլն, մեծ հիմնարկություններից այսքան հոգի, փոքր հիմնարկություններից այսքան, կրթական հաստատություններից՝ այսքան, որոշեք ձեր լիդերներին, մեկ ժամից կգամ հրապարակ, ձեր թղթերը կտաք ինձ»: Դրանք առաջին դեմոկրատական բջիջներն էին բվեարկության, ընտրության, սաղմն էր: Պետք է 55 հոգի լինեին, այդքանին էլ հավաքեցինք: Մեկ ժամից Ժաննա Գալստյանի հետ դուրս եկանք ամբիոն և հայտարարեցինք. «...Երեք հոգի ներկայացնում են Էլեկտրատեխնիկական գործարանը...»:

Բ.Կ.- *Ժաննան պապմում է, որ ինչ-որ մեկը իրեն բարձրացրել է, և նրա ուսին նստած է ցուցակը կարդացել:*

Հ.Գ. Չէ, այդպես չի եղել: Թղթերը հավաքել էինք, նորից եկել հայտարարում էինք, և ժողովուրդը ընդունում էր: 55 հոգին հավաքվել էին խմբագրության նկուղային հարկում, ակումբ էր կոչվում: Նրանք եղան «Կոռունկի» անդամներ: Պետք է ընտրվեր 11 հոգի՝ որպես «Կոռունկի» խորհրդի անդամներ: «Կոռունկ» անունը դրել է Արմենը. այն խորհրդանշում է կարոտը դեպի հայրենիք: «Կոռունկի» կանոնադրությունը գրելը հանձնարարվեց Ռոբերտ Քոչարյանին և Գևորգի Պետրոսյանին: Արկադի Մանուչարովը նշանակվեց խորհրդի նախագահ, մյուս տասը՝ անդամներ:

Բ.Կ.- *Մանուչարովին միաձայն հանձնարարեցին:*

Հ.Գ.- Այո, միաձայն: Նրա տեղակալներից էր Բաղդասարյան Ռուբիկը, որը հետո թոչեց Ղարաբաղից: «Կոռունկի» խորհրդի անդամներն էին Հակոբյան Վարդանը, ես, Մովսիսյան Համլետը, Ռոլևս Աղաջանյա

նը, Միրզոյան Մաքսիմը և Առուշանյան Բորիսը, ինչպես նաև Պետրոսյան Ռազմիկը («Կոռունկի» անդամ եղել են, բայց խորհրդի անդամ լինելու հարցը վիճելի է, չեմ հիշում), մի քանիսը դուրս են եկել, մի քանիսը մտել, Ռոբերտ Քոչարյանը «Կոռունկի» խորհրդի անդամ չի եղել, «Կոռունկի» ղեկավար է եղել, բայց ոչ՝ խորհրդի անդամ, Խաչատրյան Սերգեյը «Կոռունկի» քարտուղարն էր: Հանձնախմբեր էին պատրաստել, թե ով ինչով պիտի զբաղվեր, գրողների համար հանձնարարություն էր տրվել Գուրգեն Գաբրիելյանին, Հրաչյա Բեգլարյանին, Ժաննա Գալստյանը պիտի միտինգները կազմակերպեր, ժողովրդին հավաքեր, կային մարդիկ, որոնք զբաղվում էին ինքնապաշտպանության հարցերով՝ Պետրոսյան Ռազմիկը, Ռոլես Աղաջանյանը, կային, որ ստորագրություններ հավաքելով էին զբաղվում, Մովսիսյան Համլետը հեռագրեր էր տալիս, միասին էինք անում, գաղափարական աշխատանքները մեզ էին տալիս, զբաղվում էինք հեռագրեր տալով, մարդկանց հանդիպելով, պատասխաններ ուղարկելով, Մոսկվա գրություններ ուղարկելով, պատվիրակություններ ուղարկելով, հանրահավաքներում ելույթ ունենալով և այլն: «Կոռունկի» խորհրդի 12 անդամներին ընտրելուց հետո նորից Լենինի արձանի պատվանդանից ընթերցել ենք ազգանունները, որ ահա այս մարդիկ են լինելու շարժման ղեկավարները, պետք է նրանց հասկանանք, լսենք, բոլոր հարցերով դիմենք: Այն ժամանակ Ներքին գործերի բաժնի քաղաքական հարցերի գծով (թե դաստիարակչական) պատասխանատուն Հայրյան Հրանտն է եղել: Նա չի հասցրել գրել այդ ազգանունները, թե ովքեր են նրանք, առանձին կանգնած էր: Հետո հարցնում էր՝ ով էր, էլ ով էր: Ասացի՝ ինչ հիշողությամբ միլիցիայի աշխատող ես, որ գլխումդ չես կարողանում պահել: Նորից ասացի, նորից ասացի: Եվ գիտեմ, որ ՊԱԿ-ում այդ մարդկանց անուն-ազգանունները գրանցվել էին:

Պատմում է ՍԱՐԳԻՍ ՀԱՑՊԱՆՅԱՆԸ, Երևան 06.06.2006 թ.

Ս.Հ.- Ծնվել եմ 1962թ., Մուսա լեռան շրջանի Կիլիկիայի Ալեքսանդրետ (Սանջակ) քաղաքում: 1990 թ. Ֆրանսիայից եկել եմ Հայաստան: Կրթությունս ստացել եմ Կոստանդնուպոլսում, նախնական կրթությունը՝ Ղարագյոզյան վարժարանում, միջնակարգ կրթությունը՝ Սուրբ Խաչ դպրավանքում: Ուսանել եմ Կոստանդնուպոլսի գեղարվեստական ակադեմիայի կինոյի բաժնում: Այնտեղից գաղթել եմ Եվրոպա: Ապրել եմ Շվեյցարիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում: 1990 թ. առաջին և վերջին անգամ եկել եմ Հայաստան: 1991 թ. նոյեմբերի 11-ին առաջին անգամ թռել-գնացել եմ Լեռնային Ղարաբաղի Շահումյան հատվածը:

Բ.Կ.- *Ինչպե՞ս կապվեցիք շարժման հետ:*

Ս.Հ.- Նախքան Հայաստան գալն էի շարժման մեջ: Ժամանակին, որ թուրք դեսպաններին էին սպանում, այդ կազմակերպության մեջ եմ եղել, ուստի ակտիվ դերակատարում եմ ունեցել ես այդ ամբողջ ժամանակ:

Բ.Կ.- *Ո՞ւմ հետ էիք, ինչ ընկերներ ունեիք:*

Ս.Հ.- Ես չեմ կարող պատմել, որովհետև մեր կազմակերպությունը ռազմական գաղտնի կառույց էր: Երբ Արցախյան շարժումը սկսվել էր, ես ապրում էի Փարիզում, Սորբոնի համալսարանում դոկտորական դիսերտացիա էի պաշտպանելու Սերգեյ Փարաջանովի «Նռան գույնը» ֆիլմի վերաբերյալ: Հայը, նրա ինքնությունը Սայաթ-Նովային նվիրված ֆիլմում. թեման սա էր:

Բ.Կ.- *Ֆրանսիացիներին դա հետաքրքրում էր:*

նություն: Բավական է այս ազգը ցեղասպանության հետ դեմ-հանդիման վտանգի ենթարկվի, արցախյան մեր ժողովրդին զորավիգ ենք, որ ցավյան պայքարը և մեր պայքարը միևնույն պայքարն է և այն: Ես ֆրանսերենով, և հայերենով պատառներ էինք սարքել: Առաջին հարցազրույցին 8 հոգի էինք նստած: Բայց որ ամբողջ կոորդինացնողը ես էի անձամբ, ընկերներս ինձ հորդորեցին, որ ես այդ հարցը Ֆրանսիայից տարածեմ Եվրոպա, քանի որ բոլոր լեզուներին տիրապետում եմ Եվրոպայում խոսվող. անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն: Ես Փարիզից գնացել եմ Մարսել, Մարսելում սկսել եմ նույն ակցիան՝ քաղաքապետարանի դիմաց հայերը հավաքվել են վրանի տակ և ակցիա են արել: Նույնը եղել է Լիոնում: Այդտեղից գնացել եմ Բրյուսել՝ Բելգիա: Ես անձամբ, մենակ: Իրենք նկարահանում էին ակցիան, ես չէ: Ես միայն գնում էի, տեղի հայությանը բացատրում էի, ասում էի, որ եթե դուք չանեք, հիմա մենք չանենք, սրանք Արցախին կհոշոտեն: Պիտի ձայն հանենք իրոն հայություն: Ուրեմն Բրյուսելում եղել է, Հոլանդիայում, Ամստերդամում եղել է, Արմենտ քաղաքում եղել է, Լոտեդից գնացել եմ Բեռլին, Բեռլինից եկել եմ Մյունխեն, Մյունխենից եկել եմ Ֆրոն, Ֆրոնից ետ եմ եկել Փարիզ: Որտեղ գնացել եմ, կրակ է վառվել: Եվ այդտեղի հայությունը, էլի եմ ուզում կրկնել, տեղի հայություն երբ ասում եմ, խնդրում եմ հասկանալ Արևմտյան Հայաստանից և Կիլիկիայից բռնի ուժով հեռացված, իրենց տները, գյուղերը թուրքերի կողմից զավթված մարդկանց: Այս ամբողջ ժամանակ մեր կողքին չի եղել Սիրիայից եկած մի հայ, Լիբանանից եկած հայ, Հայաստանից եկած հայ, Իրանից եկած հայ: Չի եղել, բացառապես Արևմտյան Հայաստանից և Կիլիկիայից գաղթած մարդկանց մասին է խոսքը: Ես մարդիկ իրոք կրակ վառեցին ամբողջ Եվրոպայում, բոլոր հեռուստատեսությունները սկսեցին Հայաստան, Արցախ, Նախիջևան, Ավալբալաք հատվածի մասին խոսել: Բոլոր երկրներում, որ ես թվարկեցի՝ Ֆրանսիա, Բելգիա, Հոլանդիա, Գերմանիա և հետո նաև Շվեյցարիա, որտեղ ես չեմ գնացել, բայց մեր ընկերները այդտեղ գործ են արել: Այս երկրներում սկսեցին Հայկական հարցի առթիվ խոսել շատ լուրջ, արցախյան հիմնախնդիր և այլն: Որ ասում եմ Արցախ, մենք ևս բացահայտում ենք Արցախը, մենք ևս սկսեցինք կամաց-կամաց ճանաչել ինչ է Արցախը, ինչպիսի տեղում է, այդտեղի հայերը երբվանից են այդտեղ ապրում և այլն: Մեզ համար էլ էր դա նորություն: Մենք նախ

բարահայտեցինք մեր հայրենակիցներով ապրած մի հատված: Արխի վում ինչքան նյութեր կային, սկսեցինք հավաքել: Այդ ժամանակ Սովետական Միության բոլոր երկրորդ կամ երրորդ քարտուղարները, որտեղ հոծ հայկական համայնք կար, ինչպես Ֆրանսիան, հայ էին: Այն ժամանակաշրջանում Ֆրանսիայի Սովետական Միության դեսպանության քարտուղարը՝ Գևորգ Գևորգյան, երիտասարդ տղա էր Հայաստանից, լավ կարգին, շատ ակտիվ տղա էր: Այնքան լավ է եղել մեր համագործակցությունը, այնքան նյութ ենք տրամադրել մեզ այդ ուղղությամբ: Որովհետև մենք Ղարաբաղի քարտեզը չգիտեինք, չգիտեինք ինչ տիպի տեղանք է: Գիտեինք, որ Հայաստանից դեպի Բաքու, Ադրբեջանի մեջ մի տարածք է, բայց կոնկրետ տեղը չենք հասկանում: Ու նույնիսկ քարտեզները ձեռք բերելու գործում, դրանք ֆրանսիական մամուլին հաղորդելու գործում կամուրջի դեր ենք ստանձնել: Մի խոսքով, Ֆրանսիան եղել է առաջին երկիրը, որտեղ հենց մեր դրդմամբ ամբողջ Սոցիալիստական և Կոմունիստական կուսակցությունը երկուսն իրար հետ միասին խորհրդարանում հարց են բարձրացրել և անցել է, առաջին անգամ է եղել Ֆրանսիայի պատմության մեջ, որ իրենք որոշել են ֆրանսիական դեսպանատան պիտի հասնի Մոսկվա, Գորբաչովի հետ խոսի, որ Արցախյան հիմնախնդրի առթիվ ինչ-որ բան պահանջի, որ էս ինչ է կատարվում, հայերին նորից նոր ցեղասպանությունն է նախապատրաստվում: Այսպիսի բան է եղել, և դա եղել է, ասում եմ, մի բուռ հայ տղաների աշխատանքի շնորհիվ, որոնց դրդմամբ այդ քաղաքապետ-դեպուտատը ստիպված եղավ անել այդ քայլը, որ հետո նորից վերընտրվի, որովհետև երկու տարի հետո նորից ընտրություններ էր, և նորից վերընտրվեց հայերի քվեներով: Այսինքն՝ ինքը արեց իր պատմական ժամանակաշրջանում իր դերը: Առաջին ժամանակաշրջանում չէր ուզում ոնել, բայց մենք իրեն ստիպեցինք: Մենք դրանով ցույց տվեցինք նախ մեզ՝ հայերիս, Սփյուռքում ապրող հայերին, որ եթե մենք ուզենանք, մենք լուրջ ուժ ենք և իրենք մեզ հետ հաշվի կնստեն: Սա առաջնային էր: Երբ հայկական համայնքը, գաղութը, գաղթօջախը կողք կողքի է գալիս և ուզում է, մի բան անել, անպայման ստացվում է: Դրական արդյունք ենք ստանում: Հենց այդ ժամանակաշրջանում մենք այդ երիտասարդների խմբից վերածվեցինք կազմակերպության, անուն էլ չունեինք, չգիտեինք ինչ անուն դնել, անուն էինք ման գալիս. «Ֆրանսահայ միու-

թյուն», «Ֆրանսահայ երիտասարդների միություն» և այլն: Պաստառ էինք տպել, տակը ինչ ստորագրություն դնեինք, չգիտեինք: Գնացինք պետականորեն օրենքով կազմակերպություն դարձանք, հասարակական կազմակերպություն, որը ոչ շահույթ հետապնդող կազմակերպություն է, այդպիսի համակարգ կա Եվրոպայում գործող, որ չի կարող շահույթ հետապնդել, հասարակական հիմունքներով է գործում: Անունը դրեցինք «Ինքնորոշված Արցախի օգնության միություն»: Այս անունն էլ ծնվել է հենց մեր Պարգև Սրբազանի հետ հանդիպման ժամանակ: Ուրեմն Ալֆորվիլում մեր ընկերներից մեկի տանը հավաքվել ենք մի 20-30 մարդ, ովքեր այս գործի կորիզն էին, ու ասում են, որ Արցախից եկել է Պարգև Սրբազան Մարտիրոսյանը և եկեղեցում պիտի պատարագ անի: Գնացինք, տեսանք: Առաջին հանդիպումն այդպես եղավ: 1989 թ. մասին է խոսքը: Պարգև Սրբազանի հետ ծանոթացանք: Պատարագին մասնակցեցինք, որից հետո նրան ասացինք մենք ովքեր ենք, ինչ ենք անում և ուզում ենք կազմակերպություն դառնալ: Ինքը ասաց. «Միրով ես ձեզ հետ կմիանամ ու կօգնեմ ձեր գործունեությանը»: Մեր ընկերներից մեկի տանը հավաքվեցինք, Սրբազանը ներկա էր: Առաջին հանգանակությունը արել էինք մեր շրջապատում նյութական տեսքով, այդ փոխանցել ենք Պարգև Սրբազանին, մեր առաջին գումարը, որ հավաքել էինք: Ասացինք. «Սրբազան, մենք չենք ճանաչում երկիրը, չգիտենք, երբեք ոտք չենք դրել, բայց դուք ինչ որ հարկ եք գտնում, որ լինի, հավանաբար ինչ-որ բան անհրաժեշտ է, սա ինչ-որ մի մասով օգնի ձեզ, մի թրտինքի կաթիլ էլ մեր կողմից»: Այդ գումարը շատ փոքր էր, բայց մեր հետագա անելիքի հիմնաքարը դարձավ: «Ինքնորոշված Արցախի օգնության միության», այսպես ասած, մկրտության ժողովին ներկա է եղել հենց ինքը՝ արցախցի հանդիսացող, ծնունդով Սումգայիթից, բայց արմատներով Չարդախլու գյուղից Պարգև Սրբազանը: Սա պատահական եղած բան է, բայց հավանաբար պատահականություններ չեն լինում: Ես էլ հավատում եմ նախախնամությանը և իմ բոլոր հանդիպումներում՝ Հայաստանում, Արցախում միշտ այդպես նախախնամությամբ է եղել: Ես այս ընթացքում Եվրոպայում սքանչելի մարդկանց հետ եմ հանդիպել, որոնց չէի ճանաչում: Այսինքն՝ եթե չլիներ Արցախը, ես ու այդ մարդը իրար երբեք չէինք հանդիպի, երբեք: Հիմա իրենց հետ շատ մտերիմ կապեր ունենք, շատ կարգին հարաբերությունների մեջ ենք: Նրանցից

մեկը Շահեն է Զեյթունցյան, որին Բեռլինում հենց այդ ժողովի ընթացքում հանդիպեցի, ցույց տվեցի մեր արածը: Ժիրայրն այդ ժողովում չկար հարգելի պատճառով: Ես մի ժողով եմ արել, ժամանակ չեմ ունեցել, իմ ղեկավարումը Ֆրանսիայում էր: Ուրեմն այդ կազմակերպությունը երբ մենք հիմնեցինք, մի բան արեցինք, որ մինչ այդ աշխարհում ոչ մի սփյուռքյան կազմակերպություն չէր արել և որը ստացվեց: Մենք որոշեցինք, որ մեր ապրած քաղաքում՝ Ալֆորվիլ քաղաքում, որտեղ մոտավորապես 40-50 հազար հայ է ապրում, բոլոր հայերի տները պիտի մտնենք և բոլորից պիտի խնդրենք մի բան, որ այդ մարդիկ մեզ ամեն ամիս իրենց ամեն օր խնայած մի բաժակ սուրճի փողը տան այս կազմակերպությանը: Բայց մշտապես: Ֆրանսիան սուրճի սպառման շատ լուրջ երկիր է: Ամեն մարդ ամեն օր Ֆրանսիայում ամենաքիչը երեք հատ սուրճ է խմում: Մենք գիտենք իրենց ամեն օր խմած երեք սուրճից մեկի գինն ենք ուզել մեկ ամսվա կտրվածքով: Շատ քիչ փող է այսինքն: Բայց մշտապես տալու պայմանով: Այսինքն՝ 12 հատ սուրճի փող մեկ տարվա համար: Այսինքն՝ ազգային տուրքի, մտքի իրագործման ինչ-որ մի փոքրածավալ փորձարար դաշտ ենք ստեղծել Ալֆորվիլում և ստացվել է: Մտել ենք բոլոր հայերի տները: Այս ամբողջը նկարահանված է: Մարդիկ նկարել են մեզ. ոնց են երիտասարդները, որոնք աշխատում են ամեն մարդ իր գործին, գործը պրծնում էր գալիս էր, մեկը 6-ին էր գալիս, մեկը 7-ին, ինչ-որ մի սրճարանում հավաքվում էինք. երեք հոգի այս չենք, երեք հոգի այն չենք, երեք հոգի մյուսը: Մտնում ես, բոլոր հայերի անունները գրում ես. Շահրազյան, Գյումուշյան, ազգանուններից երևում էր, որ հայեր են, օրինակ Մալխասյան, գիտես որ հայ է՝ Մալխասյան: Առանց իմանալու որտեղ հայ է, դուռը թակում ենք, ներկայանում ենք մենք ովքեր ենք ու մի թղթի կտրոն էինք թողնում, որտեղ հաշվի համարը կար և ասում էինք, որ հաշիվը բաց է, ով ուզի, երբ ուզի կստուգի: Ցանկացած ժամանակ ցանկացած մարդ կարող է բանկ մտնել և հարցնել, թե այդ հաշվին ինչ կա, որտեղից և ամեն ամիս իրենց ռապորտ պիտի գնար, ավտոմատ բանկից: Այսքան բաց, թափանցիկ աշխատելաոճով առաջին կազմակերպությունն էր ամբողջ Սփյուռքում: Մինչ այդ չի եղել, 1989 թ. մարտ ամիսն եմ պատմում: Դա ստեղծել ենք և տեսել ենք, որ հարյուրավոր մարդիկ միանում են մեզ, շշված էինք, մենք ինքներս զարմացած էինք: Ասում էինք. «Լավ, մինչ այս էս կազմակերպություններ-

որ ինչով էին զբաղվում, Լև կուսակցությունները, եկեղեցին»: Չէ: Ոչ ոք չէր արել այն, ինչ որ մենք էինք անում: Կամ եթե նույնիսկ արել էին, ինչն չէր ստացվել: Մարդը ում ասում էինք Արցախ, Արցախի տեղը չգիտեր: Իրեն մի բան էինք ասում, ասում էինք.

– Որտեղացի ես:

Ասում էր՝

– Տիգրանակերտից:

– Հիմա Տիգրանակերտում ով կա:

– Թուրքը:

– Քո տանը ով է ապրում:

– Թուրքը:

– Դու ինչու ես եկել:

– Բա որ իմ տանս ուրիշն է ապրում, ինչ անեմ: Փախստական եմ:

– Ո՞ւր ես եկել:

– Ֆրանսիա:

– Ի՞նչ ես կարգավիճակով:

– Փախստական:

– Ուզում ես քո նման մի ուրիշ տիգրանակերտցի նույն ճակատագիրը ստանա:

– Չէ:

– Արցախում այ այսպիսի վիճակ է, եղբայր, Արցախում գյուղ կա, գյուղեր կան, մարդիկ կան, հայեր, քո նման, իմ նման ապրում են, վաղը կարող է իրենց լդտեղից վտարեն, իրենց տեղը գա թուրքը նստի, ու դա դառնա նույն Տիգրանակերտը, նույն Արևմտյան Հայաստանը, նրա ամբողջ ժողովուրդը, նույն Կիլիկիան: Չեմ ուզում, չէ, նման բան լինի, որ հայը լլի կորսնցնի:

– Ո՛չ, անշուշտ:

– Դրա համար էսքան քիչ բան է հարկավոր, կանեմ, կմիանաս մեզ:

– Ո՞վ է ձեր շեֆը:

– Մեր մոտ շեֆ չկա:

– Դուն ես շեֆը, Սարգիս:

Դե ես հայտնի մարդ էի այդ համայնքում, ինձ ճանաչում էին, ես շատ ակտիվ ազգային գործիչ եմ եղել: Ասում եմ.

– Ես շեֆը չեմ: Մենք չունենք նույնիսկ վարչություն: Ուզում ես դուն

սրի շեֆը եղիր: Ով ուզում է, թող լինի: Կարևոր չի: Սա հայության խնդիրն է: Իմ և քո խնդիրն է: Շեֆություն չպիտի խաղանք էստեղ:

Ու հենց այս ընթացքում, որ մեր գործերը սկսեցին ստացվել, ինչ ևս կարծում, որտեղից մենք առաջին ապտակը կևրանք: Ուրեմն Դաշնակցությունը կանգնած տեղը որոշել է, որ ինքնագլուխ ոչ ոք չի կարող գործունեություն ծավալել, և մենք պետք է անպայման իրենց հովանու ներքո աշխատենք: Մեզ կանչում են իրենց կազմակերպություն, ասում են. «Դուք լավ երիտասարդներ եք ազգային, հայրենասեր և ձեր ասած գործն է լավը, բայց եկեք սա մեր հովանու ներքո անենք»: Մենք ասացինք. «Եղբայր, մենք քաղաքական կազմակերպություն չենք, քաղաքական հայացքներ չունենք: Մենք հայ ենք ընդամենը, ուրիշ ոչ մի բան և հայկական որևէ բան որտեղ վատ բան կա, մեզ հետաքրքրում է, ուզում ենք ըստ արժանվույն ինչ-որ բան արած լինել դրա հետ կապված և չենք ուզում քաղաքականացնել, որովհետև առանց այդ էլ Սփյուռքը բաժանված է եղել այս քաղաքական հոսանքների իրար չհանդուրժող կեցվածքի պատճառով: Խնդրում եմ այս համայնքը, ում վրա մենք մեր այս գործունեությունը ծավալում ենք, միակ համայնքն է աշխարհի, որտեղ Դաշնակցություն, Հնչակյան և Ռամկավար չի եղել»: Ուրեմն Թուրքիայի ապրած հայությունը, խոսքը 1915 թ. հետո ապրող հայության մասին է, երբեք չեն քաղաքականացվել, և աշխարհի միակ տարածքն է, որտեղ այդ կեղտը, այդ կուսակցականների կեղտը չի քսվել այդտեղի հայերին: Ուրեմն մաքուր են մնացել: Իրենք մի բան գիտեն. թուրք կա ու իրենք հայ են: Իրենց հայությունը պահպանել են մարդիկ: Ու երբ որ մենք գնացել ենք Եվրոպա, մեզ հարցնում են.

– Դուք դաշնակ եք, թե հնչակ:

– Այ մարդ, ինչ դաշնակ, ինչ հնչակ, մենք չգիտենք ինչ է դաշնակը, ինչ է հնչակը: Հայ ենք, պարզապես հայ:

– Էդպես չի լինում, պետք է մի բանի միանաս:

– Այ մարդ, ինչու զոռով միանալ:

– Չէ, էստեղ էդպես է:

Ոչ թե միացնող, այլ իրարից հեռացնող հայության այդ հատվածը մենք Եվրոպայում ճանաչեցինք, Ամերիկայում, որը ատում եմ մինչև հիմա: Ես ոչ մի կուսակցության անդամ չեմ եղել, իմ ընկերներից ոչ մեկը ոչ

մի կուսակցության անդամ չի եղել: Չեմ էլ ուզում լինել երբեք: Որով-հետև մենք՝ հայ հատվածը, ավելի շատ գործ ենք արել ժողովրդի համար, քան կուսակցականացված հատվածը: Մենք որ մերժեցինք այս դաշնակցականների զոռով իրենց անդամագրվելու պահանջը, իսկույթ մեզ սկսեցին թշնամաբար վերաբերվել: Պատկերացնում եք, մենք Արցախի համար աֆիշա ենք անում, և դաշնակցականները եկան պատռեցին այդ աֆիշաները Ակֆորվիլում: Շշմած էինք մենք: Հայի ձեռքը մեզ կգնա հայության համար կատարված գործը պոկել պատից: Թուրքը դա չի անի: Մենք շշմած էինք: Զորս հոգով գնացել ենք այդ կազմակերպություն, ասում ենք.

– Դուք եք պոկել:

– Հա, մենք ենք պոկել:

– Ի՞նչ իրավունքով ես պոկել: Տարածում ենք «Ջորավիզ կանգնենք Արցախին»: Դա ենք գրել, ուրիշ ոչ մի բան չենք գրել: Ոչ մի գույն չի եղել, գունաբաժանում չի եղել, քաղաքական հայացք չի եղել: Ի՞նչ եք ուզում, այ մարդ:

– Այստեղ կամ մենք գործ կանենք, կամ մեր հետ կմիանաք, կամ չէ:

- Մենք ձեզ ցույց կտանք մենք ով ենք:

Մենք Դաշնակցությանը այդքան ծնծել ենք, բացահայտ ասում եմ, Ակֆորվիլում դաշնակցական չենք թողել, որի ամբողջ ողնաշարը չենք կոտրել: Այնքան շատ ենք մենք, մեզ գտնել չի լինի: Ես ուզենամ 40 հազար հայությանը այդտեղ ուրքի կիանեմ երբ ուզեմ, հիմա մի հատ հեռախոսազանգով ուրքի կիանեմ: Ասում եմ.

– Դու կատակ ես անում մեր հետ, չհասկացա: Ոչ կուսակցականացված հատվածը մեր ժողովրդի 90 տոկոսից ավելի է: Այդ ոսկոր կրծողներդ մի բանի հոգի ևք ընդամենը: Ոչ ավելի:

Մենք ցույց էինք անում 10 հազար հոգի, իրենք ցույց էին անում՝ հազար հոգի չի գալիս: Սա էր երևույթը, ես Ֆրանսիայի մասին եմ խոսում՝ Մարսել, Լիոն, Փարիզ, որտեղ ուզում է լինի: Սրանք հասկացան, որ մեր հետ խաղ չի լինի: Մենք գիժ ենք: Մենք ավելի խելագար ենք, քան իրենք կարծում են: Ու իրենք իրենց տեղը նստեցին:

Համայնավար հայերը մեզ տարածք էին տվել, որտեղ պիտի հավաքվեինք, խոսեինք, տեղ չունեինք: Տեղ չունեինք, շենք չունեինք: Սրճարաններում էինք հավաքվում բացօթյա, դրսում, իրար հետ խոսում

էինք: Իրենց խնդրեցինք մի տեղ, որտեղ կանգնենք, նստենք, տաք տեղ, որ կարողանանք խոսել, ինչ որ պիտի անենք, անենք: Մեր բնակարանների ուրիենտանոցներում կարի, կոշիկի արհեստանոցներում էինք նստել, այս ամբողջը արել: Հավաքատեղի չունեինք: Համայնավարները ևս մեր հետ վարվեցին այնպես, ինչպես դաշնակցականները: Մի քանի ժամանակ անց, ամիսներ են անցնում, տեսնում են, որ մենք այսպես մեծանում ենք, սկսում ենք լուրջ կազմակերպություն դառնալ, արդեն վտանգված ենք: Ասաց.

– Դուք պետք է անդամագրվեք մեր կազմակերպությանը:

– Այ մարդ, չեմ ուզում անդամագրվել:

– Այդ դեպքում մեր դահլիճը չեք կարող օգտագործել:

– Եթե մենք ձեր դահլիճը, պատերը, ներսում հավաքատեղի լինելով օգտագործում ենք, լույսի փող տանք, ջեռուցման փող տանք, հեռախոսից չենք օգտվում, բայց եթե պետք է փողը մենք տանք, մենք վճարենք, լի, բայց մենք նոր շենք չենք կարող գնել, մենք այդ հնարավորությունը չունենք:

Ինչևիցե, մենք վտարվեցինք նաև համայնավարների կողմից: Բայց ես սա ասում եմ միայն նրա համար, որ եթե մարդիկ կան լսող, պատմությունը մի օր թող գրանցեն, որ հայի համայնավարն էլ, դաշնակցականն էլ նույն վերաբերմունքն են ունեցել, մի քիչ ավել-պակաս, սա է: Եթե իրենցից չես, ուրևմն դու դուրս պետք է լինես, իրենց ներսում չպետք է լինես: Փոխանակ ասեն, թե այս ինչ լավ երիտասարդներ են, ազգօգուտ բան են անում, բով քովի են գալիս: Մենք որ գնում էինք իրենց կազմակերպություն, իրենց կազմակերպությունները դատարկ էին, 2-3-հարկանի շենքեր դատարկ էին: Մկներ, առնետները մեջը խլվլում էին, ծերերը մարդիկ ժամանակ վատնելու համար գալիս նարդի էին խաղում, մեր գնացած ժամանակ լիքը տեղ չէր լինում: Հարյուրներով հայ երիտասարդ 17-25 տարեկան, նույնիսկ իր լեզուն չգիտեր, թուրքերեն խոսող երիտասարդ մեծ մասը, ակտիվ, խմբվել է Արցախյան տարին, ուզում է մի բան անել, այդքան եռանդ, այդքան Էներգիա իրենք սպանեցին թե Դաշնակցությունը, թե Համայնավարները:

Ամսական գումարները սկսեցին այնքան լուրջ գումար դառնալ, մենք շշմած էինք անսպասելի լավ դրական արդյունքից: Ասացինք, որ այդ նյութականը պետք է գործի ծառայի: Այդ ժամանակ մեզ Հայաստա-

նից լուր եկավ, որ «Կոմիտե» կոմիտե է գործում Արցախում, որի մեջ էր հիմիկվա Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանը, և այս մարդիկ ինչ-որ գործողություններ անելու համար նյութականի պահանջ ունեն: Մենք Փարիզում, այդ ժամանակ Չեխիա թռնող Պարույր Հայրիկյանի հետ մեր ամբողջ հավաքած գումարը դրել ենք, որ գնա և Ռոբերտ Քոչարյանին հանձնի այդ գումարը: Եվ ինքը իրոք գնացել է, մեր փողը վերցրել է, գնացել է Չեխիայում՝ Պրագա, տեսել է Ռոբերտ Քոչարյանին և անձամբ տվել է Ռոբերտ Քոչարյանին այդ գումարը: 1989 թ. մասին է խոսքը: Դեռ այդ ժամանակ մեզանից ոչ ոք Հայաստան չէր եկել, չգիտեր Հայաստանը ինչ տեղ է: Դրանից հետո, որ այդ կապը ստեղծեցինք, ամեն Հայաստան գնացող մարդու հետ փող ենք ուղարկել՝ առանց իմանալու ուր է գնում, ինչպես է գնում, բայց հասցեատերը մեկն էր՝ «Կոմիտե»: Հետո երբ կապերը սկսեցինք, մենք եկել ստուգել ենք, որ այդ բոլոր գումարները տեղ հասել են: Ոչ ոք չի գողացել, ոչ ոք չի խաբել, այդպիսի դեպք չի եղել: Ու այդ մարդիկ էլ մեր մասին ինչ-որ լսում են, բայց չգիտեն ինչ-որ մարդիկ Ֆրանսիայում ինչ-որ բան են անում:

1990 թ. ես որոշեցի Հայաստան գալ: Սերգեյ Փարաջանովը «Հայֆիլմի» միջոցով վիզա էր ուղարկել ինձ, ես իբրև «Հայֆիլմի» աշխատող եկա Հայաստան: 1990 թ. առաջին օդանավով, որ եղել է 26 մարտի 1990 թ., Փարիզ-Երևան առաջին թռիչքը: Մինչ այդ երբեք ուղիղ կապ չի եղել Հայաստանի հետ: Միշտ Մոսկվա, Պետերբուրգ և այլն: Դա իմ առաջին և վերջին գալն էր Հայաստան: Ես որ եկա Հայաստան մի ուղղությամբ տոմսով եմ եկել: Հետադարձի տոմս չեմ ունեցել: Փարիզ-Երևան, այսքան բան: Երբ տոմս վաճառող մարդը, որ հյուրանոց ունի, ասում էր, թե իրոք պիտի գնաս մնաս, չես գալու ետ, ասացի, որ չեմ գալու ետ, գնալու եմ Հայաստան, մնալու եմ այնտեղ, էլ ետ չեմ գալու Ֆրանսիա: Ասաց. «Դեռ չես ճանաչում երկիրը, այդպես խոսում ես, կգնաս, կտեսնես ինչ է, Սովետ բան ու հավանաբար մի շաբաթ հետո ետ կգաս, այնտեղից տոմս կառնես»: Ես ասացի. «Դա քեզ է թվում»: Մեր մոտ թռիչքը դեպի Հայաստան հոգով է լինում, հոգեոր Հայաստան ենք մենք գնում ոչ թե սիստեմի համար: Այնտեղ սովետական կարգեր են, ինչ կարգեր են, Հայաստանի գոյությունը ինձ չէր հետաքրքրում: Հայաստանում իմ ժողովուրդն է

ապրում, իմ լեզուն է, իմ մշակույթն է: Սա է, ինձ մնացած հայրենիքից մի կտոր, մի բեկոր: Վատ է, լավ է, սա է Հայաստանը: Ֆրանսիան չէ իմ հայրենիքը: Ուստի 1990 թ. օդանավով մշտական բնակության նպատակով Հայաստան եկա և այդ օրվանից էլ ապրում եմ Հայաստանում: Երբ ես եկա Հայաստան, այդ ամբողջ կապերը վերականգնեցի. Պարգև Սըրբազան, Պարույր Հայրիկյան, Ռոբերտ Քոչարյան և այլն: Ով որտեղ էր, ինչ էր, ում հետ ծանոթ էի հետևակ, սկսեցին այդ հարաբերությունները մոտակա դառնալ: Կազմակերպությունը գնալով թափ էր ստանում և արդեն ինքնապաշտպանական կոմիտեներ էր ստեղծվում ամեն տեղ թե Հայաստանում, թե Արցախում: Արդեն գործը դառնում էր զինված պայքարի գործ: Կարաբիններից «Կալաշնիկով» անցման շրջանն էր դա: Այդ ժամանակաշրջանում ես Հայաստանում գործող ինքնակազմակերպված բոլոր ջոկատներին ճանաչել եմ, անխտիր բոլոր: Ինչքան Հայաստանի Հանրապետության տարածքում, Սովետական Հայաստան էր այդ ժամանակաշրջանը, ինքնապաշտպանական ջոկատ կար, բոլորին անխտիր ճանաչել եմ հրամանատարից մինչև առաջին կորիզը, իրենց անդամներին և այլն, գնացել տեսել եմ, գնացել հասել եմ Մեղրի, Սիսիան, Գորիս, Կոռնիձոր, Շուռնուխ, Նոյեմբերյան, Տավուշ, Մովսես գյուղ, ավելի բարձր տեղեր և այլն, որ հասկանամ ինչ է կատարվում այստեղ: Եվ այդ ժամանակաշրջանում հավանաբար իմ կյանքի ամենակարևոր իրադարձությունն է կատարվել. ես ճանաչել եմ Լեոնիդ Ազգալդյանին: Հենց այդ ժամանակաշրջանում Վարդենիսում ադրբեջանցիներից ազատագրված գյուղերում Սևանին ափամերձ, լրիվ, ամբողջ 14 գյուղը ազատագրող Լեոնիդ Ազգալդյանին, որ հենց այդ գյուղերից մի քանիսում ռազմական ճամբարներ էր ստեղծել և մարգումներ էր կատարում: Սա 1990 թ. մայիս ամսվա վերջերն էր կամ հունիսի սկիզբը: Որովհետև Էրեբունիի, Սովետաշենի դեպքերը եղել էր ռուսական բանակի հետ և համակարգողը Լեոնիդ Ազգալդյանն էր եղել ու որ արյունահեղություն չէր եղել այդտեղ, շատ ազդվեցի, որ էս ինչ հետաքրքիր բան է, որ առանց արյունահեղության զսպվեց այդ բանը: Ասացին. «Գիտես, էդտեղ մի գիտնական մարդ կա՝ լազերային ֆիզիկայի մասնագետ, նա գիտության բնագավառի մարդ է, լուրջ գիտնական է, ինքն էր այդ զինվորական շարժումը հայերի կողմից համակարգողը, կազմակերպողը, ուս-

տի նա յուրջ մարդ է»: Ես էլ ընդունեցի, ասացի. «Ուղեղիս մեջ չի մտնում, Լեոնիդ անունով մեկի մասին շատ է խոսվում: Շատ է խոսվում իրրև այլ մարդու, որ նա այլ մարդ է, որ նա քո տեսածներից չէ»: Այսինքն՝ մտնում ես շուկա, շուկայում ամեն տեսակի միրգ, բանջարեղեն, կանաչին կա, չմ, դե ասում են էս ինչ որ տեսնում ես, տեսնում ես: Մի հատ էլ կա, այլ պտուղ է, այլ միրգ, որի համը չգիտես դու: Այ, ըսենց մի տարօրինակ բան: Միշտ այսպես մի արտասովոր մարդու բան է պատմվում ինձ իր մասին և տարբեր մարդկանց կողմից ու արդեն ինքս ինձ ուտում եմ, թե այս մարդուն ես երբ պիտի տեսնեմ, մի օր պիտի տեսնեմ: Շնորհիվ Գագիկ Մանասյանի, որ հիմա մեր մշակույթի նախարարության գործերի կառավարիչն է, այդ ժամանակ թերթ էր հրատարակում «Անդրադարձ» անունով, այդտեղ էր աշխատում նաև ինձ Փարիզում շատ մոտ անձնավորություն՝ Սամվել Մկրտչյանը, թարգմանիչ, գրող, հրապարակախոս, իրենց աջակցությամբ, իրենց օգնությամբ, հայտնել էին իրեն, որ ինչ-որ Ֆրանսիայից այսպիսի երիտասարդ կա Սարգիս անունով և այլն, և այլն, ուզում է հանդիպել քեզ հետ ու ինքը թույլ էր տվել: Մենք իրենց մեքենայով շարժվեցինք Վարդենիս ու հենց այդ Դարա գյուղում, նախկին ադրբեջանաբնակ, որտեղ միայն զինվորներ կային, ես առաջին անգամ կյանքումս հանդիպեցի Լեոնիդ Ազգալդյանին: Ու հավանաբար Լեոնիդ Ազգալդյանն է այդ մագնիսական ուժն ու դաշտը, որ ինձ Հայաստանում, Արցախում, այս ամբողջ պայքարում, այս ամբողջի, ասենք, հիմքը հանդիսացավ: Ես շատ ավելի կապվեցի Հայաստանի հետ, Արցախի հետ Լեոնիդի շնորհիվ: Ամեն ինչ իր շնորհիվ էր, բառերը հիմա շատ քիչ կլինեն: Այդ մարդը գերմարդկային ուժ ուներ, իր մոտ ինչ-որ բիոդաշտ կար, որ այլ մարդկանց մոտ չկար: Երբ ես իրեն ճանաչեցի, տեսա ռազմական այդ ճամբարում ոնց էր ուսուցանում ռազմական արվեստը զինվորին, մարդուն, ու բոլորին շատ կիրթ, բոլորի հանդեպ հարգանքով, համալսարանի դասախոսի մակարդակի շփում: Ոչ մի հայհոյանք, ոչ մի դիմացինին ընկճող, վիրավորող, շատ վեհ կեցվածք, չափից դուրս դաստիարակություն, չափից դուրս կրթվածություն: Այդտեղ ակադեմիական ոճի մարդու հետ գործ ունես: Սա իրոք այլ մարդ էր: Ասում էի այս ինչքան ճիշտ էր, որ մարդիկ պատմում էին, որ մեկը կա ուրիշ է, այլ մարդ է, դա Լեոնիդն է: Մեր հանդիպումը կայծակնային եղավ, մենք

իրար շատ շուտ հասկացանք: Նույն ոլորտի մարդ էինք: Ես կյանքում ոչ մի մարդու վրա չեմ զոռացել, ինձ մոտ չի ստացվում զոռալ: Որևէ մեկի վրա զոռալ, հրամայել, հրամանը կատարել տալ, որ ինքը ստորադաս է, դու վերադաս, դա ինձ մոտ չէր ստացվում, իր մոտ էլ տեսա այդ բանը: Նա հրամանատար է, բայց հրամանները այլ ձևի է տեղ հասնում: Ու մարդիկ սիրով էին անում: Նրա ցանկացած ասածը կատարվում էր անմիջապես: Ես դա աչքովս տեսել եմ ու շշմել: Հարցրեցի, թե իրենց մոտ մարզումները ինչքան են տևում: Ասաց, որ շատ ծանր է, 12-16 ժամ: Ես չէի պատկերացնում: Ես ձեզ վստահեցնում եմ, որևէ քաղաքակիրթ, շատ զարգացած ռազմական ուժ ներկայացնող երկրի էլիտար խումբը, որ էլիտա է, հատուկ կոմանդոսների խումբ, այդքան չի մարզվում: Պատկերացնում եք: Ու նա բոլորին շարք կանգնեցրած ասում էր. «Լսեք, դուք ֆիդայի չեք, դուք պիտի դառնաք հայոց զինվոր: Զինվորի հոգեբանություն պիտի ունենաք, զինվորի կարգավիճակ պիտի ունենաք: Մենք պիտի զինվոր դառնանք»: «Զինվոր» բառը ես բացի իրենից ոչ մեկից չէի լսել: Բոլորն այդ ժամանակ փորր զցած մեծ-մեծ լկտիությամբ ֆիդայի էին խաղում, բացահայտ եմ ասում, որովհետև դա խաղ էր, իսկ Լեոնիդը զինվոր էր պատրաստում: Հայոց բանակի նախնական կարգավիճակն էր ստեղծում ինքը, այդ սաղմը: Եվ ես շատ հպարտ եմ, որ այդ ամբողջին մասնակցել եմ, հետն եմ եղել, տեսել եմ այդ ամենը, դրա ականատեսն ու վկան եմ, տարեգիրն եմ: Երբ ինչ-որ տեսակցիկ է եղել, ես դա նկարել եմ նույնիսկ: Իմ ծանոթությունից մի քանի օր առաջ Սլավիկ Ասրյան, ծագումով հադրութցի մի տղա, զոհվում է, մեր ֆիզիկայի ինստիտուտից: Վարդենիսում դեսանտայիններ են իջնում ուղղաթիռներով դեպի Քելբաջար գնացող հատվածում ու մեզնից 3 հոգու ռազմագերի են վերցնում: Սլավիկին հենց այդտեղ խփում են այդ դեսանտայինները, մեզնից մարդ են վերցնում, այսինքն՝ Լեոնիդի ջոկատի տղաներից, ես այդ ժամանակ այդ ջոկատի հետ ընդհանրապես կապ չունեի, նույնիսկ չէի ճանաչում Լեոնիդին: Լեոնիդը անմիջապես կազմակերպում է հակահարված և ռուսներից սպաներ է վերցնում ռազմագերի: Այդ ժամանակ ռուսներից դեռ ոչ ոք ռազմագերի չէր վերցրել այդ թվականներին, որ ասում եմ, խոսքը 1990 թ. մայիս ամսվա մասին է: Այդ սպաներին վերցրել են ու ռացիայով կապվել են, ասելու, որ մենք պետք է փոխանա-

կում կատարենք մեր ընկերների և ձեր ընկերների միջև: Ռուսական բանակի մարդիկ չշմել են, որ այսպիսի բան չի լինում: Այսպիսի բան իրենք հավանաբար Աֆղանստանում ապրած կլինեն: Որ այդ մարդիկ անմեղ են, իրենց հայրենիքը պաշտպանելու համար են ռազմագերի ընկել: Այդ 3 հայ ռազմագերիներից մեկը նկարիչ է, Էջմիածնի մի գյուղում է ապրում, մյուսը ատաղձագործ է, մեկն էլ Սովետական բանակից նոր եկած, զորացրված, իր ընկերներին տեսել է, ոգևորվել, որ նրանք գնացին ինչ-որ ինքնապաշտպանության զինվորական խմբավորումներ ու ինքն էլ էր նկել: Շատ երիտասարդ տղա էր, 19-20 տարեկան: Եվ Սլավիկն էլ արդեն սպանված, թաղումն էլ եղել էր: Ու իրենց այդ խոսակցության ժամանակ ռուսական բանակի հայերից վերցված պատանդների փոխանակման օրը ես այնտեղ էի: Դա իմ առաջին հուշն է: Ես ռուսերեն լեզվին չեմ տիրապետում, պարզապես ես տեսնում էի: Այդտեղ այդ երեսացող տանը մի հրամանատար կա՝ Լեոնիդ Ազգալդյանը, նա մեկի հետ կապվում է, խոսակցություններ է կատարում, նրա պահանջածը կատարվում է և այդ ընթացքը: Ես դրա մասնակիցն եմ առանց հասկանալու, կողքը նստած մի մարդ եմ, տեսախցիկի նման նայում եմ էլի, թե ինչ է կատարվում: Շատ հեռվից, բարձունքի վերևից մի սպիտակ դրոշակ երևաց, տեսանք մարդկանց մի խումբ շատ հեռու ուզում են քայլել: Այստեղ ռուսներին կապած բերեցին, և տեսա, որ Լեոնիդը ինքն է քայլում ու զարմացա, ինձ համար զարմանալի էր, ոնց թե հրամանատարը ինքն է գնում այդ քայլին, բա որ վերցնեն, բա որ խփեն: Այսինքն՝ գլուխը պիտի մնա, մարմինը դեկավարողն է գլուխը: Ես դա կարող էի իբրև սխրագործություն, քաջություն ընդունել, բայց ես իբրև ռազմական արվեստին մոտ մարդ չշված էի, թե այս մարդը ինչու է գնում այդ քայլին, պետք չի անի այդքանը, դա ճիշտ չի: Ու այդտեղ հասկացա, որ այդ մարդը ամեն ինչ անելիս իրեն պահում է զինվորի հետ հավասար: Երբեք ինքը ետևում, թիկունքում չի լինում: Երեք զինվորով, բոլորը ավտոմատներով, ինքնաձիգներով, ինքը միասին քայլեց, գնաց, մեր պատանդ տղաներին վերցրեց, փոխանակումը կատարվեց: Առաջին իմ տեսած ռազմական իրավիճակը սա եղավ՝ ռազմագերիների փոխանակում: Մեր հայ տղաները վերադարձվեցին, ռուս ապաները նրանց հետ փոխանակվեցին: Զինվորները զինվորներին վերցրին եկան, ռուսները կամ ովքեր որ Լդտեղ էին, չգիտեմ, հետո էլ չեմ հարցրել, գնացին այն կողմ, Լեոնիդը մնաց, մի մարդու հետ խոսում էր Լդտեղ: Զինվորները շարք կանգնած նշան արած պահում են: Մյուս կողմից էլի նշան արած մարդիկ կային: Ես այդտեղ տեսա կայացած զինվորական գործողություն, կայացած զինվորական մարդ, կայացած մարտիկներ, ամեն մարդ գիտեր՝ ինչ է անում, ինչպես է անում, ինչու է անում: Այսինքն՝ հողի վրա կանգնած մարդը կայացած մարդ էր: Այդպես պրոֆեսիոնալներն են միայն լինում, իր գործին տիրապետող մարդը: Եվ ես այդ օրը սիրսհարվեցի այդ ամբողջին, այդ երեխաներին, այդ տղաներին, Լեոնիդ Ազգալդյանին: Երբ Լեոնիդը ետ եկավ, ու բոլորը հավաքված սկսեցին հարցեր տալ, ինքը շատ խիստ երկու բան ասաց ռուսերեն ինչ-որ մեկին: Ասաց, թե դա ձեր քննարկման ենթակա բան չէ, ես ինչ եմ խոսել այդ մարդու հետ: Ֆիլմ ենք պատմում իրար, ինչ է, թատրոն է սա: Բայց երեկոյան շատ ուշ, որ արդեն պիտի քնեինք, ինձ բախտ էր վիճակվել, որ ես իր սենյակում լինեմ, այդտեղ էր նաև Ալեքսանդր Թամանյանը (Շուրիկ), որ մահացավ մեկ տարի առաջ, որ հետո պիտի դառնար ջոկատի հրամանատար դարձյալ, Լեոնիդի շատ հարազատ ու մտերիմ էր, ու որ իրենք ռուսերեն լին խոսում, ես չլի հասկանում, հավանաբար ռուսերեն էին խոսում, որ ես չհասկանամ, բայց հետո ինձ թարգմանեցին: Ես այդ օրը հասկացա՝ ինչ հզոր մարդու հետ ես գործ ունեմ, որ ինքը գաղափարով է, այսինքն՝ իր մտքի թռիչքը հորիզոնն էր հասնում, չէր հատնում, անսահմանափակ էր, տիեզերային: Ուրեմն այդ ռուս մարդը, ում հետ ինքը խոսում էր, գնդապետ էր: Նրան հարցրել էր. «Ես ուզում եմ հասկանալ ձեր դերակատարումը իբրև ռուսի այստեղ, դուք ինչ եք ուզում: Սա մեր երկիրն է, Հայաստանը, սա սահմանն է, մենք եկել ենք մեր սահմանն ենք պահում: Դուք ինչ իրավունք ունեք մտնել մեր սահման, մեր սահմանից մարդ վերցնել, որը նկարիչ մարդ է ընդամենը, բայց ուզում է զինվոր դառնալ, նկարչին վերցնել տանել ձեր մոտ պատանդ և մարդ ապանել մեր հողի վրա: Դուք արդեն ձեր տեղն արել եք, դուք ադրբեջանցու կողքն եք կանգնել: Իմանանք՝ ում հետ գործ ունենք: Մեզ համար տեսաք ինչ հեշտ էր երկու ապա վերցնել, մենք կարող ենք ամեն օր ձեզնից մարդ վերցնել: Ուզում եք դա անենք, կարող ենք: Խնդիր չկա: Եթե դուք դրան եք տանում, մենք դրան կգնանք ու պատրաստ ենք: Ամեն օր: Ուզում եք վաղը փորձենք: Մեզնից

մի մարդ վերցնեք, մի ժամ հետո երկուսը ձեզանից վերցնենք: Ձեզ մի բան եմ ուզում հասկացնել, որ դուք այս գործում մի՛ խառնվեք, մի կողմ քաշվեք, ու մենք մեր հարցերը ում հետ որ հարց ունենք, նրա հետ հարցերը լուծենք: Եթե դուք պիտի խառնվեք, դուք կտուժեք դրանից, որովհետև մենք ժողովուրդ ենք: Եթե մենք ուզենանք, մենք կարող ենք ամբողջ Ռուսաստանի Դաշնության Սովետական Միության տարածքով եղած բոլոր հայկական համայնքները ոտքի հանենք և զինվորագրել այս պայքարին, քանի որ սա համազգային գործ է, Արցախը: Մենք Արցախին վերաբերվում ենք իբրև համազգային հայի հարց, հայկական հարց: Ոչ թե լոկ արցախցու խնդիր, որ ինչ-որ ադրբեջանցու հետ պիտի լուծի, այլ ես՝ Հայաստանում ապրող հայ, Ֆրանսիայից եկած հայ, Լենինգրադում ապրող հայ, Կանադայում ապրող հայ, բոլորիս խնդիրն է: Սա պիտի համազգային խնդիր դառնա, ու դուք չպիտի այդտեղ վատ օրինակ հանդիսանաք»: Սա 1990 թ. մայիս ամսվա իմ մասնակցածս առաջին հիշատակն է Լեոնիդ Ազգալդյանից, ու ռուս գնդապետի հետ խոսակցությունները ինքը ռուսերենով ասել է Շուրիկին, և Շուրիկը հատվածաբար ինձ թարգմանել-ասել է: Ու ես ասացի, որ այդ մարդը կփրկի ամեն ինչ: Որ կարողանում է դիմացինի առաջ այնպիսի հարց դնել, որ դիմացինը զգաստանա, հասկանա իր արածն ու չարածը: Երբ ես այդտեղ առաջին անգամ ուզեցի իմանալ զինվորների և զինամթերքի քանակը, այդ ռազմաբազայում, որտեղ ես առաջին անգամ եղա, խոսքը Վարդենիսի շրջանի մասին է, իրենք ասացին. «Գիտեք ինչ, մենք այստեղ մեզ առաջին բարև տվողին հաշվետու չենք ասելու՝ մենք ով ենք, ինչքան ենք, ինչ ունենք»: Բայց ինչ որ ես այդտեղ տեսա, շատ խեղճ էր զինամթերքի իմաստով և ասացի.

– Դուք այստեղ այդքան զինամթերքով բան չեք անի, սա մեր ունեցած ռազմական ճամբարներից մեկն է, լավ լսիր, սա հարյուրապատկենք:

Ասաց.

– Գիտեք ինչ, մեզ նեղում է նյութականը, որ մենք այդ զենքը-զինամթերքը ձեռք բերենք, քանի որ այստեղ ամեն ինչ վաճառվում է: Մենք ինչքան ասեք զենք կարող ենք ձեռք բերել, բայց մեզ նյութականը խեղճացնում է:

Իմ դերակատարումը այդ բանից հետո հատկապես եղել է նյութականի աղբյուրը լինել և զենք-զինամթերք ձեռք բերել: Եվ մինչև արցախյան գոյամարտի հրադադարը 1994 թ. մայիսի կեսերին, որ տեղի ունեցավ, ես՝ իբրև Սարգիս Հացպանյան, արել եմ այն, որ ամբողջ սփյուռքյան հատվածի կազմակերպությունների նյութական պաշարը, ում հետ որ կապ եմ ունեցել, ուղղել ենք միմիայն զինվորականությանը, ջոկատներին՝ ինքնապաշտպանության նպատակով օգտագործելուն: Մեր այդ նյութականով դպրոց չի սարքվել, ջրի խողովակ չի անցկացվել, որևէ տեղ արտ չի հերկվել, սերմացու չի գնվել: Ինչ նյութական որ եղել է, 1989 թվականից մինչև 1994 թվականի հրադադարը եղել է զուտ ռազմական նպատակներով օգնություն:

Բ.Կ.- *Հովսեփը երբ եկավ, ծանոթ էիր:*

Ս.Հ.- Անշուշտ, Հովսեփը իմ ամենամտերիմ ընկերն է եղել: Մենք միասին ենք եղել նույն քաղաքում, նույն տեղում, նույն համալսարանում ենք ուսանել, նույն կազմակերպության անդամն ենք եղել Ֆրանսիայում: Հովսեփին ես եմ բերել Հայաստան, Հովսեփին և Մոնթե Մելքոնյանին Հայաստան ես եմ բերել: Երկուսին էլ ես եմ բերել Հայաստան, մենք «Ասալա»-ից ենք եղել, և այստեղ, ինչու չեմ պատմում, որովհետև դեռ ժամանակը չէ, օրը կգա, կպատմեմ: Հիմա Մոնթեն չկա, ես ահագին բան գիտեմ Մոնթեի մասին, որ մարդիկ չգիտեն, բայց քանի որ դեռ այդ պատմելը կարող է ոչ ցանկալի հետևանքներ ունենալ, ուստի չեմ կարող: Դուք պատկերացնում եք, չէ, մենք խոսում ենք Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի մասին, որտեղ բաներ կան, գաղտնի են ու հիմա մարդու արդեն ֆիզիկապես գոյություն չունենալը այդ գաղտնիքը բացահայտելուն առիթ չի տալիս, ուստի ես չեմ զտնում ժամանակը հարմար է, որ դա պատմեմ: Երկուսն էլ եկել են Հայաստան կեղծ անձնագրերով, երկուսին էլ ես եմ բերել անձամբ, ես եմ տեղավորել այստեղ Հայաստանում, այստեղից իրենց Արցախ գնալու այդ ամբողջ դերակատարումը ես եմ արել: Հովսեփը Լեոնիդ Ազգալդյանի հետ հետո, 1991 թ. ավարտին 1992 թ. սկզբին ստեղծված ազատագրական բանակի հիմնադիրներից մեկն է եղել, խոսքը Հովսեփ Հովսեփյանի մասին է, ոչ Մոնթեի: Ես ու Հովսեփը Հայաստանում այդ բոլոր տարիներին ապրել ենք նույն տանը, Արցախ գնացել ենք միասին, եկել ենք միասին:

Իմ և նրա կենսագրությունը միասին է եղել այս ամբողջ հատվածում: Ես եմ ծանոթացրել Լեոնիդ Ազգալդյանի հետ: Հովսեփը 1991 թ. արդեն հոկտեմբեր ամսից մշտապես եղել է Շահումյանում, հա գնացել-եկել է, 1992 թ. արդեն Շահումյան-Մարտակերտ, 1992 թ. Լեոնիդի և Վլադիմիրի զոհվելուց հետո ինքն է դարձել հրամանատարը ազատագրական բանակի, 1992 թ. մահապարտների ջոկատից սկսած մինչև Քելբաջարի ազատագրումը եղել է այդտեղ և այն, և այն:

Բ.Կ. - *Ինձ դեպքեր պատմեք:*

Ս.Հ.- Լեոնիդի՝ զինվոր պատրաստող այդ ռազմաճամբարները Հայաստանի տարբեր տեղերում, իրոք ուսուցման ենթակա և նզակի կառույցներ են եղել, որ զարմանահրաշ երևույթ էր: Զինվորներից մեկը կրիա էր սպանել: Լեոնիդը դա լսում է, գալիս է շատ ջղային, չափից դուրս ջղային, որ էդպես դեռ ոչ ոք չէր տեսել նրան: Այդ զինվորին անմիջապես կարգալույծ է անում, իրենց ամբողջ նրան հանձնված զենքը, զինամթերքը, հագուստը, ինչ որ նրան ջոկատ մտնելիս հանձնվել էր իբրև անձնական իր, ամբողջությամբ վերցնում է ու վտարում է: Հավաքում է բոլորին, ու ասում. «Ես ձեզ ուզում եմ մի բան ասել: Մենք՝ հայերս, որ ամբողջ մարդկային պատմության վկան ենք, մեր շատ ծեր լինելով, երկարակյաց լինելով, ինքներս չենք հանդուրժում բնության ամենատարիքով մեծ վկայի ապրուստին: Հիմա այս տղային հարց եմ տալիս՝ տղա ջան, այդ կրիան անմեղ, այս բնության տուրքը, խեղճ կենդանին, քեզ ինչ էր արել, որ դու նրան իբրև նշանառության թիրախ գտար և սպանեցիր, նրա կյանքին վերջ տվեցիր: Ինչ-որ դու արեցիր, թուրքը էսօր փորձում է մեզ հետ անել, հասկանում ես: Դու գիտես կրիան ինչքան է ապրում, ինչքան երկար է ապրում: Դու նախանձում էիր նրա այդքան երկարակյաց լինելուն, որ դու երբեք չպիտի ապրես: Դու գիտես՝ կրիան այդքան դանդաղաշարժ, բայց իր ուզած տեղը հասնում է ի վերջո: Դու բնությունը գիտես, բնության բարիքները գիտես, դու գիտես ինքը ինչքան է մաքրում այս ամբողջ արտերը և այն: Քեզ ինչ վնաս էր տվել, որ դու վնասազերծեցիր: Կարող ես մի բան ասել գոնե»: Այդ տղային որ տեսնեիք, երևսը, մարմինը ռնց էր դողում ամոթից, ինքնագիտակցությունից, ամեն ինչից զրկված, ռնց որ այդ տղան չլիներ արդեն, դադարել էր շնչելուց: Ասաց. «Մենք քո նման մարդկանց հետ ճամփա չենք կարող

գնալ: Եվ քանի որ դու քո արածով մեզ պատիվ չես բերում, ուստի մեր ճանապարհները բաժանվում են: Ինչ որ բանակից վերցրել ես, հանձնում ես ու գնում ես էս դարպասներից դուրս: Էլ ոչ մի անգամ քեզ էստեղ չտեսնենք»: Ես այդ տղայի գլխիկոր հեռանալը տեսել եմ ու էդ տղայի չափ հավասար ամաչել եմ: Եվ իմ երեխաներին, այդ ժամանակ ես ամուրի էի, հիմա որ տեսնում եմ, որ ուզում են մրջյուն սպանել կամ որևէ մի կենդանու բնության մեջ, զերծ մնալու համար իմ կարողության սահմաններում ամեն ինչ անում եմ, այսինքն՝ մի բան տեսա, ապրեցի, սովորեցի Լեոնիդից: Ինքը բնությունը պաշտում էր: Մի անգամ էլ տեսա, որ քայլելով գնում է, 50 տարեկան մարդ, ոնց էր գնում էդ բլուրներով, ոնց էր քայլում, երիտասարդը չէր կարող քայլել իր հետ հավասար: Ինքն իրեն այդքան հետևող: Ասում էր. «Նայեք, ավտոյին երբ դու լավ ես նայում, ավտոն էլ քեզ է լավ նայում, ծառայում, չէ: Մարդու մարմինը ճիշտ էդ ավտոն է, ինչքան դու նրան գնահատեցիր, լավ վերաբերվեցիր էդ մարմնին, էդքան էլ ինքը քեզ կծառայի, կտանի: Այդ ամբողջ հիվանդությունները մեզնից է, որովհետև մենք անլուրջ ենք վերաբերվում մեր մարմնին»: Ու գրքեր էր կարդում էս տիպի: Որ բնության մեջ քայլում էր, ինչ-որ խոտեր էր հավաքում, խոտեր էր բերում: Ասում էր. «Գիտես, Սարգիս ջան, մեզ մոտ բուսաբուժությունը այնքան առաջ է եղել, այս ամբողջ խոտը որ հավաքում ես, էս մեկը էս-էս-էս բաների համար շատ լավ է, էս մեկը էս-էս-էս բաների հետ շատ վատ է, սա էս ժամանակ պետք է օգտագործես, սա էն ժամանակ»: Այս մարդը ահագին գրքեր էր հետը ման տալիս, ուսապարկի մեջ ծանր-ծանր գրքեր, որ հա գիտելիք կա մեջը: Հա ուսումնասիրում էր, կարդում էր, իրենց գտնված տեղանքը ուսումնասիրում էր, հասկանում ինչ կա, ինչ չկա, ինքը մտածում էր, ասում էր. «Եթե մենք էստեղ, օրինակ, շրջափակման մեջ ընկանք,- ինքը միշտ ամենավատթարագույն վիճակն էր երևակայում,- մենք պիտի պատսպարվենք ի վերջո մի տեղ, ապրենք, գոյատևենք ու դիմադրենք: Դա մեզ ինչն է տալիս, այս բնությունը՝ ժայռերը, քարանձավները, աղբյուրները, բույսերը և այն, և այն»: Ծնեբեկը ես Ֆրանսիայում տեսել էի, բայց չգիտեի որ դա դա է: Իսկ ինքը ցույց էր տալիս, ասում էր, որ մարդ դրանով ինչքան ուզես կապրի, սրա մեջ այսքան վիտամին կա, դրա կալորիականությունը և այն: Կամ մեր բանակային իրավիճակով

արդեն համակարգված հրամանատարություն, որ այսքան գիտելիքներին հասու լինի կամ այդ գիտելիքները ման գա, յուրացնի, իմանա: Ինքը որտեղ լինում էր, այդ ամբողջը ուսումնասիրելով և արժևորելով էր սկսում, իր առաջին քայլը դա էր: Ես նրանով եմ Հայաստանի բնությունը ճանաչել և սիրել: Ասում էր. «Որ էդքան ասում են Հայաստան, Հայաստան: Հայաստանը էս քարերը չի, Հայաստանը ամբողջ բնությունն է, ամբողջ կենդանական աշխարհը, էս հարստությունը: Գիտես, ժամանակին մեր թագավորները ինչ արգելոցներ են ունեցել»: Տոնաշենից վերև, դեպի Շահումյանի շրջան Սուրբ Երիցս մանկանց վանքը կա, որ կաթողիկոսանիստ է եղել նաև, էդտեղից տարել է, քար-քար պատմում է ամեն ինչը: Լեգենդ է այդ տղան, ոնց որ դասախոսության ենթակա ուսանող լինեա, նստես, դասախոսը պատմի, և դու դասախոսությունը ըմբռշխնես: Լեոնիդը ըմբռշխնել է: Այսինքն՝ հայրենիքը իր ուղնուծուծով մանրամասն սիրում էր:

Մի դեպք էլ պատմեմ, որ ծայրից ծայր նկարել եմ: Աղդաբան ու Չայլուղուշան երկու գյուղ կա Մարտակերտի շրջանի Չափար գյուղից վերև, դեպի Դաղիվանք: Աղդաբանի գործողությունը պիտի իրագործվի: Նախապատրաստեց ամբողջ մի կառույց: Այդ կառույցը երեքի բաժանեց, ռազմական կառույցի մասին է խոսքը: Չափար գյուղում, այդ տանը, որտեղ մնում էր, մի մեծ սեղանի վրա ահագին հող բերել տվեց: Այդ շրջանը ֆիզիկական քարտեզի տեսքով, որտեղ ինչ գործողություն պիտի լիներ, առաջին անգամ տեսա կյանքիս մեջ, դրանից հետո ահագին օպերացիաների նախապատրաստմանը շտաբային վիճակով, Ռուսաստանի բանակում ծառայած գեներալների ներկայությամբ, որոնցից մեկը նաև Արկադի Տեր-Թադևոսյանը, ներկա եմ եղել, ինչ-որ հիմա պիտի պատմեմ, նման բան չեմ տեսել: Ինքը մակետ, տիկնիկներ սարքող մարդիկ ոնց են սարքում, սարքեց էդ ամբողջը իր ձեռքերով: Սեղանը մեծ, փայտե երկար սեղան էր, կլիներ երևի 3 մետրից ավելի երկարությունը, լայնությունն էլ՝ 1,5-2 մետր:

Ս.Հ.- Շահումյանի հանձնման հետ է կապված Լեոնիդ Ազգալդյանի սպանման փաստը հայկական ուժերի կողմից: Այդ ականազերծումը կատարվեց Շահեն Մեղրյանի հրամանով, կատարվեց գաղտագողի, այդտեղ գոյություն ունեցող ինքնապաշտպանական ջոկատների մեծ

մասի հրամանատարների հետ ես առանձին խոսել եմ, դրանցից երեք հատը ձայնագրված և չորսի նկարահանված նյութերն ունեմ: Հեռուստատեսությանը տվել եմ, չի հեռարձակել: Եվ բոլորը միաբերան մի բան էին ասում. «Ինչ-որ տեղ որոշում է կայացվել Շահումյանը հանձնել»: Եվ էդ ինչ-որ տեղի որոշումը, այսինքն՝ մութ ուժերի որոշումը հասել էր դրան, որ Հայ դաշնակցությունը Շահեն Մեղրյանի...

Բ.Կ.- *Դաշնակցությունն էլ ասում է ՀՀԾ-ն է հանձնել, ՀՀԾ-ն էլ հակառակը:*

Ս.Հ.- Հենց էդ է, որ էստեղ հավանաբար քաղաքական բան կա: Եթե Դաշնակցությունը ասում է, որ ՀՀԾ-ն է հանձնել, բա Շահեն Մեղրյանը դաշնակցական է, ինչու ՀՀԾ-ի հրամանը կատարեց: Ինքն է տվել էդ հրամանը ականազերծման, որ իբրև թե մենք, այսինքն՝ ազնիվ զորքը, ինքնապաշտպանվող ուժերը հակահարձակման անցնենք ազերիների վրա Կարաչինարով, Գյուլիստանով, չգիտեմ որտեղով: Ո՞ւմ ես խաբում դրանով: Երեխային ասես, կխնդա վրան: Եվ հենց այդ ականազերծումից հետո տանկերը առաջ եկան: Ու մենք չէինք կարող տանկերի առաջն առնել: Սկսեցինք դուրս գալ:

Բ.Կ.- *Դաշնակցության ինչին էր պակաս հանձնել:*

Ս.Հ.- Որպեսզի էստեղ ժողովրդին ասեր, որ տեսնում եք ՀՀԾ-ի կառավարությունը հողեր է հանձնում: Սրանք Արցախ պահողը չեն: Այսինքն՝ քաղաքական կոնֆլիկտային իրավիճակ: Քաղաքական չար նպատակներին հասնելու համար ռազմական տարածքից հող ես հանձնում: Եվ դա ստացվեց:

Բ.Կ.- *Շահենին ով խփեց:*

Ս.Հ.- Շահենին ով խփեց՝ ես չգիտեմ: Ես չեմ կարող լավը ասել Շահեն Մեղրյանի ետևից, բայց Շահումյանի կորուստը միմիայն հայերի ձեռքով արված գործ է: Մենք էդտեղ չենք պարտվել, մենք դա հանձնել ենք սկուտեղի վրա: Թուրքի ձեռքը տվել ենք սքանչելի մի շրջան, որը հազար հատ Արցախ արժե: Միայն Շահումյանի շրջանը հազար հատ Մարտակերտ, հազար հատ Շուշի արժե:

Բ.Կ.- *Էդպես մի համեմատիր:*

Ս.Հ.- Շատ ներողություն եմ խնդրում: Գյուղատնտեսության տվյալները եթե Ադրբեջանի Սովետական Սոցիալիստական ժամանակա-

շրջանում վերցնենք, դուք կտեսնեք, որ Շահումյանի էդ ամբողջ դաշտերը, ցորենի դաշտերը, պաշարը մի ամբողջ Արցախ կպահեր, ուստի դրան հիմնվելով եմ ասում, որ Շահումյանը շատ ավելի էական տեղ է մեզ համար, քան մնացած շրջանները: Ես Արցախի բնական գեղեցկությամբ հիացողներից եմ, բայց նաև գյուղատնտեսության արժեք պիտի ունենա: Ուստի Լեոնիդի տպանման դեպքը Շահումյանի կորուստի հետ է կապվում: Մենք մեր ձեռքի տակ եղած բոլոր փաստարկները, ամբողջը, ինչ հանձնել ենք Հայաստանի ռազմական ուժերին, Վազգեն Սարգսյանին, հանձնել ենք այդ ժամանակաշրջանում գործող Ազգային անվտանգության նախարարությանը այստեղ և Արցախում, և այդ նյութերն ինչ են եղել, մինչև հիմա տեղյակ չենք եղել: Բայց ես դարձյալ կրկնում եմ, որ Լեոնիդ Ազգալդյանը թուրքի փամփուշտով չի ընկել: Այդ փամփուշտները հայկական հրաձիգից են արձակվել, բայց մենք էդ մութ, չար ուժերին մինչև հիմա չենք կարողացել բացահայտել: Ինչո՞ւ: Որովհետև, այսինքն, էդ հայի լավը չուզող ուժերը ովքեր են, մի օր կբացահայտվեն, բայց պատկերացրեք, Լեոնիդ Ազգալդյանը հայոց բանակի իշխանը լիներ: Ինչ կլիներ մեր վիճակը: Նույնիսկ պատկերացումը ինձ հրճվանք է պատճառում:

Բ.Կ.- *Այսինքն՝ մենք այսօրվա խնդիրները չէինք ունենա: Ինչ որ ես անում եմ, նա ինձ կօգներ ու միասին կանեինք:*

Ս.Հ.- Այո, միանշանակ: Վազգեն Մանուկյանը մի օր շատ բնական ինքնախոստովանությամբ բան ասաց, երբ ինքը Պաշտպանության նախարարի պաշտոնակատար էր: Երբ ես հարցրեցի. «Պարոն Մանուկյան, շատ ներողություն եմ խնդրում, ձեր գլխավերևում մի նկարը պետք է լինի»: Ասաց. «Ոչ թե նկարը, այդ աթոռը, որ ես հիմա նստած եմ, Լեոնիդ Ազգալդյանը պետք է նստած լիներ: Ես պատկերացնում եմ Լեոնիդի նստած աթոռով հայոց բանակը ինչ վիճակ կստանար, ինչ կուռ կառույց կլիներ, էդ որ ասում են՝ մի հատ Իսրայելի բանակը ամբողջ տարածաշրջանը ձեռքում է պահում, Հայաստանը էդպիսի բանակ կունենար, էդքան կազմակերպված, էդքան ուժեղ...»:

Մի հիշատակ ես պատմեմ: Ասում էր, որ Հայաստանի առաջնային հարցը Հայաստան երկիրը, մենք, հայ ժողովուրդը մի հարց պետք է լուծենք: Հայաստանը, Երևանը պիտի դարձնենք ամբողջ մեր տարածաշրջանի ինֆորմացիոն ռազմահետազոտական կենտրոնը: Միայն այդ կենտրոնի ստեղծումով մենք բոլոր հարցերը կլուծենք: Մենք միայն էս կովկասյան մեր տարածաշրջանում էնքան ինֆորմացիայի կարող ենք տիրապետել, որ այսօր տեղեկատվությունը թիվ մեկ զենքն է աշխարհում: Եթե ես հիմա գիտեմ Դաղստանում ինչ կա, ինչ ուժեր են գործում և էդ ուժերը ինչպես օգտագործել, արդեն ես հաղթող եմ: Ինֆորմացիան իմ ձեռքում է, ես դրա հետ ինչպես ուզեմ խաղում եմ: Ինքն ասում էր՝ Ադրբեջանը ստից ստեղծված բոլշևիկների, Լենինի շնորհիվ ստեղծված ստից պետություն է: Այդտեղ կան ավարներ, լեզգիներ, թալիշներ, դրդեր, հայեր, թաթարներ: Բազմազգ խճանկար է: Ասում էր՝ էս ամբողջը բոլորն էլ ճնշվող երևույթներ են, մի հատ չորան ազգի ձեռքն ընկած վիճակով: Մենք կարող ենք էս ամբողջը տեղից շարժել: Էդ ժամանակ կտեսնենք դիմացինը ոնց է մեզ վերաբերվում: Նույնը Վրաստանում է, նույնը Դաղստանում է, նույնը ավելի Հյուսիսային Կովկասում է, Չերքեզիայում է: Քանի որ մեր ճանապարհները անցնում են այստեղով, էդ Վերին Լարսը ինքն է ինձ պատմել, ես չգիտեի, ես չգիտեի ինչ է Օսեթիան, Հյուսիսային Օսեթիան: Ասում էր, մենք շատ կուռ նստած, մենք մեր տարածքի մի հատվածն ենք նայում, մենք պիտի բարձր կանգնենք, արծվի հայացք ունենանք էստեղ: Քանի որ էս ամբողջ հանրապետություններում հայկական բնակչություն կա, հայը ապրող, կենդանի էակ է էդտեղ, մենք կարող ենք մեր ազգի էս ուժը օգտագործել հօգուտ մեր պետության կայացման: Եվ ասում էր՝ խնդրում եմ էս ուղղությամբ գործ անենք: Սա ռազմական գործից էլ կարևոր գործ է: Ու էդ գործը էդ մարդու մեջ էդպես երազանք էլ մնաց ու չիրագործվեց: Ինձ համար Լեոնիդը գաղափարական մարտիկ է, մտավորական մարդ, գիտնական մարդ, ոչ թե ինչ-որ զենքի միավոր ձեռքը բռնած գրավոր: Եվ էդտեղ ես հասկանում, որ մտավորական հայը ինչքան ուժ, ներդրում կարող է ունենալ ռազմական իրավիճակում: Լեոնիդը դրա փաստն է:

Պատմում է ՎՈԼՈԴՅԱ ՀՈՒՄՆՈՒՆՑԸ (ԼՂՀ ԱԺ պատգամավոր), Ստեփանակերտ, 16.07.2006

Ծնվել եմ 1953 թ., Մարտակերտ քաղաքում: Արցախի ազատագրության պայքարում ես իմ մասնակցությունն ունեցել եմ 1983 թվականից, երբ Շիրինյան Վիգենը Երևանից եկավ Մարտակերտ և սկսեց բացել երիտասարդական հայրենասիրական ակումբներ: Հիմնական նպատակը մեր մեջ հայրենասիրություն տարածելն էր, որը արվում էր հիմնականում գրականություն տարածելով: Մեր հայրենասիրական ավանդապահը Խաչիկ Դաշտենցի «Ռանչպարների կանչն» էր, որն իրար փոխանցելով կարդում ու քննարկում էինք: 1983 թ. ես մեկնեցի Խորհրդային բանակում ծառայելու, երբ 1985-ին վերադարձա, խմբակը ծավալվել էր, ավելի ընդգրկուն էր:

Բ.Կ.- *1983 թ. ովքեր էին ձեզ հետ:*

Վ.Հ.- Իսրայելյան Գառնիկը, հետագայում հայտնի «պրոֆեսոր», Մարտակերտի երեսփոխանորդն էր, Օհանջանյան Ներսեսը, երկրորդ գումարման խորհրդարանի պատգամավոր էր, Մամոնց Կամոն էր, որը Մարտունու խաչի երկրորդ աստիճանի ասպետ է՝ հետմահու ստացավ, Կարապետյան Ռոման՝ Մարաղայից, Գալստյան Վազգենը և այլն: Երկու տարվա ընթացքում Վիգենը մեծ աշխատանք էր կատարել: Երբ ես վերադարձա Մարտակերտ, տեսա, որ լուրջ հիմքերի վրա է դրված աշխատանքը, ուղղություն է մշակված: Ավելի հաճախ էինք հանդիպում: Թեման սա էր. Ղարաբաղում գործող նկեղեցի չկա, հայկական մշակույթը ավերվում է, հոգևոր արժեքները բանի գնում՝ մահանում են, ամենասարսափելին այն էր, որ դպրոցներում հայ ժողովրդի պատմություն չէին անցնում: 1985 թ. ես սովորում էի Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան

-ան կրաժշտական ուսումնարանում, վերջին կուրսում էի, բանակից հետո ուսումս շարունակում էի: Ապրիլի 24-ին ես այնտեղ երիտասարդների մի խմբում կազմակերպեցի, 30-40 հոգով գնացինք Ծիծեռնակաբերդ, ծաղկեպսակ դրեցինք Ղարաբաղի երիտասարդների անունից: Բնականաբար ՊԱԿ-ի կողմից հետապնդումներ, հալածանքներ էին լինում, և սրունակվեցին մինչև 88-ի ազատագրական շարժումը: 88-ին սկսեցինք զենք հայթայթելու ուղիներ փնտրել: Իսկ ստորագրահավաք Շիրինյան Վիգենի հետ 1987-ին սկսեցինք Մարտակերտի շրջանում: Ղարաբաղի մասշտաբով Վիգենը շարժման երեք առաջնորդներից մեկն էր:

Բ.Կ.- *Երեքը ո՞վ էիք համարում:*

Վ.Հ.- Այդ ժամանակ Պետրոսյան Մուրադն էր, որի հետ Ստեփանակերտում շփվում էինք, հետո՝ Արկադի Կարապետյանը, որի հետ սկսեցինք սերտ կապեր հաստատել, աշխատանքները միասին ուղղորդել: Ստեփանակերտ Մարտակերտ կապը հաստատվեց նրանց միջոցով: Մենք ինն անգամ գնացինք Շահումյան՝ Կարաչինար, Բուզլուխ, Մանաշիդ, Շահեն Մեղրյանի հետ սերտ հարաբերությունների մեջ էինք, Կարաչինարի գյուղապետ Վլադիկ Հակոբյանի հետ էինք, ինն անգամ գնացինք և բնդամենը 13 ստորագրություն հավաքեցինք, մարդիկ վախենում էին այնտեղ:

Բ.Կ.- *Իսկ Մարտակերտի գյուղերում ինչ էր:*

Վ.Հ.- Մարտակերտում ավելի դյուրին էր, որովհետև մեր շրջանակը ավելի մեծ էր, հետևորդներ ունեինք:

Բ.Կ.- *Ինչքան ստորագրություն հավաքեցիք:*

Վ.Հ.- 1987-ին երևի մի քանի հարյուր ստորագրություն ունեինք հավաքած: Մարտակերտում առաջինը ես ստորագրեցի, Վիգենը՝ իր ընտանիքով, հայրս, մայրս, նշանածս: Մեր անձնական օրինակով մարդկանց համոզում, քարոզում էինք: Իսկ Շահումյանում շատ դժվար էր, ինն անգամ գնացինք՝ 13 ստորագրություն, Շահենն ու կինը ստորագրեցին, իր շրջապատի մարդիկ, Շահենն իրոք լիդեր էր Շահումյանում, հեղինակություն ուներ, բայց ժողովուրդը վախի սինդրոմից չէր կարողանում դուրս գալ: Մարտակերտից հետո եկանք Ստեփանակերտ՝ այդ աշխատանքները անելու, քանի որ ես արդեն ուսանող էի, Ստեփանակերտում կապեր ունեի, այնտեղ շարժում էինք սկսել: Ստեփանակերտում այն թափով սկսեցինք ստորագրահավաքը, բայց Վիգենը մեզ միշտ

ասում էր, որ մեզ պատերազմ է սպասվում, այս հարցը խաղաղ կարգավորման ենթակա չէ, նա ավելի իրատեսական մոտեցում էր ցույց տալիս։ Մի ուշագրավ դեպք ասեմ. 1987 թ. Մարաղայի հրամանատար Կարապետյան Ռոման իր ընտանիքով մոտ մի քանի հեկտար կաղամբ աճեցրեց, և դրանից ստացած եկամուտով մենք Հայաստանում և այլուր սկսեցինք զենք հայթայթելու գործընթացը, տասնյակ հազար ռուբլին այն ժամանակ մեծ փող էր, հայրը, մայրը, ամբողջ գերդաստանը դաշտում աշխատում էր՝ հողի մեջ մատները ճաքճքելով։ Գումարը տնօրինում էր Վիգենը, մի խումբ ունեինք, որով սկսում էինք զենք հայթայթել Հայաստանից, Ռուսաստանից։ 1988-ից գործընթացը ավելի թափով ծավալվեց, շնորհիվ Շիրինյան Վիգենի՝ մենք ավելի շուտ սկսեցինք զենք ճարել։ Մարտակերտում շատ կազմակերպված էր ջոկատների կազմավորման խնդիրը։ Հետո երբ Վիգենը ընտրվեց ՀՀ ԱԺ պատգամավոր, հրամանատար ընտրվեց, մենք գինվորական խորհրդով լիազորությունները դրեցինք Վագիֆ Գալստյանի վրա, նրա մկրտության անունը Վահան էր։

Բ.Կ.- *Ի՞նչ նկարագիր ունեիր, որ նրա վրա կանգ առաք։*

Վ.Հ.- Այն ժամանակվա մեծահարուստներից միայն Վագիֆն էր, որն իր փողերը ներդնում էր զենք հայթայթելու գործին։ Այն ժամանակ համայնավարական մտածողությունը գերիշխում էր, և նա կարողացավ այդ կաղապարներից դուրս գալ և կանգնել շարժման տղաների կողքին, և մինչև իր կյանքի վերջին վայրկյանը նվիրյալ էր։

Բ.Կ.- *Բայց մարտական փորձը...*

Վ.Հ.- Ցավալին այն էր, որ նա ռազմական գործից քիչ բան էր հասկանում, նույնիսկ իր մահը դրա արդյունքն էր։ Նա կապվեց ինձ հետ և ասաց՝ երկու ճանապարհ կա, և ես գիտեմ, որ մեկը ականապատված է։ Ասացի՝ այդ ճանապարհով մի՛ գնա, երկրորդով գնա, ասաց՝ ինչ կլինի՝ կլինի։ Գնաց ու պայթեց զնդապետ Կարապետյանի հետ։

Երբ ցույցերը Ստեփանակերտում սկսվեցին, Մարտակերտից մեքենաների շարասյուները գալիս էին, որպեսզի սատարեն, մարդկանց ավելի մեծ հավաք կազմակերպեն։

Բ.Կ.- *1988-ից ինչ եք հիշում, «քարապատերազմ» էր...*

Վ.Հ.- Երևի մի քանի հարյուր մեքենայով գալիս էինք Ստեփանակերտ, ետ վերադառնալիս ես շարասյան մեջ էի, Ադրբեջանի տարածքն

էր՝ Ադդամի շրջանը, որ թեքվում էինք Մարտակերտ, խաչմերուկում ազերի ոստիկանների գլխավորությամբ խուժանը բարկոծում էր շարասյանը. 300-400 մեքենա։

Բ.Կ.- *Զինվորներ, զրահամեքենաներ կային։*

Վ.Հ.- Ոչ, սկզբնական շրջանում զրահամեքենաներ չկային։ Երբ մենք ազգային ազատագրական շարժումը սկսեցինք, ուժերը անհավասարաչափ էին. երբ մենք քարով էինք, նրանք ունեին հրացան, երբ մենք հրացան ունեինք, նրանք՝ «Կալաշնիկով» ավտոմատ ունեին, երբ մենք ավտոմատ ունեինք, նրանք՝ «ՌՊԿ» գնդացիրներ, թնդանոթներ ունեին։

Բ.Կ.- *Մարտակերտում ինչպես եք կազմակերպել ադրբեջանական շարասյան բարկոծումը, առաջին անգամ որոշեցիք պատասխան տալ։*

Վ.Հ.- Փետրվարի 21-ին հաջորդող օրն էր, Քարվաճառից Միրբաշիր տանող կամ հակառակ ուղղությամբ Մարտակերտի շրջանի միջով ճանապարհին որևէ ազերիների մեքենա էին տեսնում, մերոնք էին արդեն բարկոծում։ Պատասխանին պատասխան հետևեց, ու սկսվեց այդ ընդհարումը, շարունակվեց մինչև ռազմական առճակատումը։

Բ.Կ.- *Ավելի մանրամասն պատմեք, հիմա կարելի է խոսել այդ մասին։*

Վ.Հ. - Աշխատանքները ուղղորդված էին։ Երբ ՕՄՕՆ-ը մտավ Մարտակերտ, մենք մի տանը մոտ տասնհինգ հոգով հավաքված, սպասում էինք։ Արդեն ռուսները թուրքական ՕՄՕՆ-ի հետ գալիս էին, օրինակ՝ Կարմիրավան, Մարաղա, Հասան Ղայա և այլ գյուղերից երիտասարդներին բռնում էին և տանում ադրբեջանական բանտերը։ Մարտակերտի շրջկենտրոնից ոչ մեկին չբռնեցին, ինչու. այն ժամանակվա ՊԱԿ-ի աշխատակիցները գիտեին, որ Մարտակերտում կա ջոկատ, ու մենք զգուշացրել էինք, որ եթե Մարտակերտի շրջկենտրոնից մարդ բռնեն, արյունահեղություն է լինելու, մենք զինված ենք, հակազդեցության գործոնը կար։

Բ.Կ.- *Ինչով էիք զինված։*

Վ.Հ.- Երկու «Կալաշնիկով» ունեինք, երևի մարտ ամիսն էր, մենք էինք հայթայթել, տարբեր խողովակներով ճարել էինք Հայաստանից, ռուսներից էինք գնել։

Բ.Կ.- *Քանիսով էին ծախում։*

Վ.Հ.- Չեմ հիշում, հիշում եմ, որ մի հատ 15.40 տրամաչափի գնդացիր էինք առել, երևի 3000 ռ. էինք տվել։ Ի՞նչն էր հետաքրքիր. ռուս սպա

էր ծախում, գնեցինք Մարտակերտի ՊԱԿ-ի շենքից, տաքսիով մտանք Ղուկասյան Համլետի հետ, գումարը տվեցինք, արդեն պայմանավորվել էինք: Մարտակերտի գինկոմիսարիատում Պետրոսով ազգանունով մի մարդ էր աշխատում, մայրը թուրք էր, հայրը հայ, նա էր միջնորդում ՊԱԿ-ի հետ կապ ուներ, նա էր այդ գումարը փոխանցում: Տաքսին «Մոսկվիչ» էր, մտնում է ՊԱԿ-ի շենքը, գնդացիրը դուրս հանում: Շատ հետաքրքիր գործարք էր: Պետության ներսում այդպիսի բաներ էին կատարվում: Շատ վտանգավոր էր, բայց ճար չունեինք, պիտի գնվեինք: Երկու-երեք հատ «Կալաշնիկով» ունեինք, «ՏՈՒՋ-8» ունեինք, երկփողանի հրացաններ կային. այն ժամանակվա մեր ռազմական արսենալը դրանք էին: Իրենք որ իմացան՝ Մարտակերտի շրջկենտրոնում կա ջոկատ, որ պատասխան է տալու, հակազդելու է, Մարտակերտի շրջկենտրոնից որևէ մեկին չթողեցին, բայց շրջանից 57 հոգու տարան, կտտանքների ենթարկեցին, երիկամների մեջ նավթ սրսկեցին, նվաստացուցիչ կերպով փչացրին երիտասարդներին:

Բ.Կ.- *Շարժման կենտրոնը Սրեփանակերտն էր, փարքերություն զգում էիք, իշխանություն կար:*

Վ.Հ.- Բացարձակապես՝ ոչ, միգուցե անձնական կապն էր, որ ունեին Մուրադ Պետրոսյանն ու Վիգեն Շիրինյանը, նրանք ընկերներ էին, նույնիսկ երբ առեղծվեց կենտրոնական մարմին, Մարտակերտի հետ երբեք ընդհարում, անախորժություն չի եղել:

Բ.Կ. *Կամ լավ չնայեն, գենք քիչ կան...*

Վ.Հ.- Ո՛չ, ո՛չ, այդպիսի խնդիրներ չենք ունեցել, աշխատանքներն ընթանում էին սերտաշնակ և համաձայնեցված: Մուրադ Պետրոսյանի, Արկադի Կարապետյանի հետ որ աշխատում էինք, այնքան մտերմիկ հարաբերությունների մեջ էինք:

Բ.Կ.- *Մարաղայի գիծը, որը Ղարաբաղի հյուսիսային մուտքն է, գլխավոր բանալի ճանապարհը, դրա ամրության հետ կապված, այնքան էլ համապատասխան չէր երևի, որ լուրջ հարձակման դեմ առնվեր:*

Վ.Հ.- Թերությունը կոնկրետ ոչ թե հրամանատարությանն էր կամ տվյալ գյուղի հրամանատարի մեղքը, այն ժամանակ ուժերի անհավասարություն կար, ուղղակի չէինք կարող պահել: Եվ Մարաղան ամբողջությամբ ուշադրության կենտրոնում էր:

Բ.Կ.- *Դուք գիտեիք, որ ուժերը քիչ են այնտեղ:*

Վ.Հ.- Ուժերը ոչ թե քիչ էին, մենք ուժերը հիմնականում կենտրոնացրել ենք Մարաղայում, ճակատ էինք պահել, բայց փաստորեն ուժերն անհավասար էին, չկարողացան պահել:

Բ.Կ.- *Ճանապարհ էր պահվում, բայց ձորը ազատ էր, նրանք էլ լավ գիտեին:*

Վ.Հ.- Մարաղայի պարագայում ճնշումը շատ մեծ էր, թեև մարդիկ կռվել էին:

Բ.Կ.- Մասնակցել եք կռվին:

Վ.Հ.- Ո՛չ, Մարաղան պահում էին հիմնականում մարաղացիները: Բայց Մարաղայի անկումից հետո մենք բոլորս, Լեոնիդի ջոկատը, Հայաստանից որպես շտաբի պետ ժամանել էր Հայկազ Բաղմանյանը, միասին հակահարձակումով Մարաղան ազատագրեցինք: Բնակիչները, ովքեր խրամատներ էին փորել տան նկուղներում, մնացել էին այնտեղ, լուր չունեին, չկարողացան իրար հաղորդել, և նկուղներում մնացած մարդկանց հանդեպ այդ եղեռնագործությունն արվեց: Ժամերի ընթացքում մեր ուժերը կենտրոնացրինք՝ ամբողջ շրջանից՝ Հաթերքից, Վերին Հոռաթաղից, հակահարձակումով նորից Մարաղան ազատագրեցինք:

Բ.Կ.- *Լեոնիդի և նրա ջոկատի, ինքնապաշտպանության կենտրոնական շրջանային կազմակերպության հետ հարաբերությունները հարթ էին, անգամ Վիգենի և Լեոնիդի:*

Վ.Հ.- Վիգենի և Լեոնիդի հարաբերությունները արտակարգ լավ էին, բայց քանի որ Լեոնիդը որպես պետական, ռազմական գործիչ ավելի գլոբալ մտածողություն ուներ, նա գոնե երեք-չորս տարի առաջ էր նայում: Նա մաքսիմալիստ էր, նույնիսկ դժգոհում էր Վազգեն Մարգայանից, Աստվածատուր Պետրոսյանից, այն մարդկանցից, որոնք Հայաստանն էին ներկայացնում: Նրա չափանիշներն ավելի բարձր էին, ասենք՝ պահանջում էր, որ երիտասարդները ամեն առավոտ կանոնավոր պարապեն, ֆիզիկական պատրաստվածություն ունենան, պատժում, ջոկատից հեռացնում էր ծխողներին, երևի մի քանի հարյուր մարդու ծխելու պատճառով ջոկատից հեռացրեց: Լեոնիդը Հայաստանում և Ղարաբաղում առաջինն էր, որ ոչ պաշտոնական ռազմական ուսումնական դպրոց հիմնեց, և մենք բոլորս անցել ենք այդ դպրոցով:

Բ.Կ.- *Ընթացքում ձևը մասնակցությունը ինչպիսին էր:*

Վ.Հ.- Ես հիմնականում պատասխան էի տալիս Մարտակերտի երիտասարդների բարոյահոգեբանական, դաստիարակչական հարցե-

րի համար, կարծես քաղաքական, դաստիարակչական գծով հրամանատարն էի, տեղակալն էի: Հիմնականում հարթում էի ջոկատներում հրամանատարների հետ անհարթությունները, զինվորների հոգեբանական հարցերն էին: Այդ առաջին ինստիտուտը՝ քաղբաժնի ինստիտուտը, ստեղծվել է Մարտակերտում: Հիմնադիրը ես եմ եղել: Առաջին հրամանատար Արկադի Կարապետյանը, որ պաշտոնապես նշանակվեց Վազգեն Սարգսյանի կողմից, եկավ Մարտակերտ և ասաց. «Վոլոդյա ջան, գործը, ինչ որ դու անում ես, սա է, և դու նշանակվում ես քաղաքական գծով պատասխանատու»: Քանի անգամ ուզում էին ինձ հրամանատար նշանակել Մարտակերտում, բայց ես ռազմական գործից լավ չէի հասկանում, այդ պատասխանատվությունը ինձ վրա չվերցրի, նույնիսկ ստիպում էին, բայց ասում էի՝ ես չեմ հասկանում այդ գործը, նույնիսկ ռուսական բանակում ես շինարարական գումարտակում եմ ծառայել: Ես նշանակվեցի Մարտակերտի շրջանի քաղբաժնի պետ: 1992 թ. Սերժ Սարգսյանի հրամանով Մարտակերտի անկումից հետո այդ ինստիտուտը ստեղծեցինք Ստեփանակերտում, ես Ղարաբաղի ամբողջ բանակի քաղբաժնի պետն էի՝ գրեթե մեկուկես տարի: Մենք ռուսական բանակի հենքի վրա ահագին թարգմանեցինք գնդի, գումարտակի, վաշտի հրամանատարի, տեղակալի պարտականությունները, այդպես Ղարաբաղում ձևավորեցինք այդ ինստիտուտը: Վեց ամիս հետո Հայաստանի բանակում Արկադի Թադևոսովը նշանակվեց քաղբաժնի գծով տեղակալ, մեր բաժնի նյութերից ահագին օգտվեցին: Ղարաբաղում այդ ինստիտուտը դրանից վեց ամիս առաջ էր գործում:

Բ.Կ.- *Երբ այդ ծառայությունը չկա, ինչ է լինում:*

Վ.Հ.- Շատ լուրջ ինստիտուտ էր դա, ազդում էր զինվորի մարտունակության, բանակի մարտական ոգու վրա:

Բ.Կ.- *Ջոկատներից անցում բանակ...*

Վ.Հ.- Լենինիդը պատկերացնում էր բանակը, նա այդ գործը ինքն էր կատարում, զինվորների, հրամանատարների դաստիարակության գործը:

Բ.Կ.- *Այսինքն՝ ամենակարևորը նա բարոյական հիմքն էր համարում:*

Վ.Հ.- Իհարկե: Դրանից հետո՝ ֆիզիկական պատրաստվածությունը, մարտական ոգին: Հիմնականում այդ ուղղությամբ էր աշխատում, մեզ էլ սովորեցնում էր, ուղղություն էր տալիս:

Պատմում է ՍԵՐԳԵՅ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ (ԼՂՀ զբոսաշրջության և հուշարձանների պահպանության վարչության պետ), Ստեփանակերտ, 16.07.06

Ծնվել եմ 1956 թ., Ստեփանակերտում: Արցախյան շարժման սկզբնական շրջանում ՀՅԴ մամլո և տեղեկատու կենտրոնի Ստեփանակերտի գրասենյակի տնօրենն էի: Երևի իմ լրագրողական աշխատանքի ամենավառ հուշերից մեկը Շուշիի ազատագրմանը նախորդող լրատվական պատերազմն էր, որը մենք սկսեցինք Ադրբեջանի դեմ: Շուշիի ազատագրումը մեկ անգամ հետաձգվել է. պետք է լիներ մայիսի սկզբին, բայց տեղափոխվեց մայիսի ութին: Ապրիլի վերջին Լեոնային Ղարաբաղի Գերագույն խորհրդի նախագահի պաշտոնակատար Գեորգի Պետրոսյանը խորհրդակցության էր հրավիրել այն ժամանակ Ստեփանակերտում գործող մամուլի ներկայացուցիչներին: Գեղամ Բաղդասարյանն էր՝ ԳԽ-ի մամլո քարտուղարը, Վադիմ Բըրկինը՝ ՏԱՍՍ-ի սեփական թղթակիցը, ևս մեկ կամ երկուսը կային: Հանձնարարություն էինք ստացել՝ միջազգային հանրությանը նախապատրաստել Շուշիի ազատագրման գործողություններին: Դա առաջին և, եթե չեմ սխալվում, միակ դեպքն էր, որ Ղարաբաղի իշխանությունները կազմակերպված լրատվական պայքար էին սկսել: Մինչ այդ և դրանից հետո մեր լրատվական պայքարն ընթանում էր լրատվական միջոցների ղեկավարների կամ նույնիսկ թղթակիցների հայեցողությամբ: Հրահանգ էինք ստացել քարոզչական արշավ կազմակերպելու, որը պիտի բացատրեր և արդարացներ մեր ուժերի կողմից Շուշիի ազատագրման գործողությունը: Մի քանի հոգով մշակեցինք այդ ծրագիրը: Օրինակ, սկսում էինք հատուկ լարվածություն ստեղծել՝ տպավորություն թողնե-

լով, որ մեր վիճակը շատ ծանր է: Լուրեր հրապարակեցինք, որ ադրբեջանցիները Շուշիից հարձակվում են Ստեփանակերտի վրա: Հաջորդ օրը հրապարակեցինք, որ ռազմական գործողություններն ընթանում են Ստեփանակերտի մատույցներում:

Բ.Կ.- *Բանակի հետ համագործակցում էիք:*

Ս.Շ. - Դա քաղաքական ակցիա էր, բանակի հետ կապ չուներ, բանակն իր գործն էր անում, մենք՝ մեր, մեր լուրերը այդ օրերին ոչ մի կապ չունեին իրական վիճակի հետ:

Բ.Կ.- *Բայց դա ընդհանուր ծրագրի մասը չէր կազմում:*

Ս.Շ.- Մենք նախապատրաստական քարոզարշավ էինք տանում Շուշիի ազատագրման օրը նշված ու մեզ էր փոխանցված, դրան նախորդող հինգ օրվա ընթացքում մենք պիտի լարվածություն ստեղծեինք: Մի օր հրապարակեցինք, որ ադրբեջանցիները գրավել են Կրկժանը: Շատ ցայտուն հիշում եմ մեր ամենավերջին լուրը, երբ հաջորդ օրը պիտի Շուշին ազատագրվեր: Մենք հրապարակեցինք տեղեկատվություն այն մասին, որ ադրբեջանական հրթիռներով հրթիռակոծվել է Ստեփանակերտ քաղաքը, ահագին զոհեր կան, մի քանի հրթիռներ ընկել են ծննդատան վրա, հինգ կին և նորածին երեխա են մահացել: Դրան պիտի անմիջապես հաջորդեր Շուշիի ազատագրման լուրը: Մեզ նորից հրավիրեցին ԳՆ-ի նախագահի պաշտոնակատարի մոտ և ասացին, որ Շուշիի ազատագրումը մի քանի օրով ևս հետաձգվում է, և պիտի շարունակենք լարվածությունը պահել: Ծիծաղկով ասացինք. «Այլևս ավելին չենք կարող գրել»: Հինգ-վեց օր հետո Շուշիի ազատագրումն էր: Մենք այդ ժամանակ արտաքին աշխարհի հետ հեռախոսային կապ չունեինք, և մեր լուրերը Երևանի մամլո և տեղեկատվական կենտրոնի գրասենյակ փոխանցում էինք ռացիայով: Շուշիի ազատագրման օրվա համար նախատեսեցինք հատուկ ժամեր, երկու ժամը մեկ լուրեր պիտի հաղորդեինք Երևան: Մայիսի 8-ին սկսեցինք նախատեսված ժամին լուրերը հաղորդել. առաջինը՝ որ Շուշիի ազատագրման գործողությունը սկսված է: Երկու ժամ պարբերականությամբ մինչև կեսգիշեր հաղորդել ենք ընթացքը: Երբ վերջին լուրը պիտի փոխանցեինք այն մասին, որ Շուշին վերջնականապես ազատագրվեց, դժբախտաբար այդ պահին ռադիոկապը ընդհատվեց Երևանի հետ: Մեկ երկու ժամ փորձում էինք կապը վերականգնել, այդպես էլ չստացվեց: Վերադարձանք մեր գրասենյակ:

Այնտեղ արբանյակային հեռախոսակապ ունեինք, որից կյանքերիս մեջ չէինք օգտվել, որովհետև ահագին թանկ էր այդ հեռախոսակապը: Խոսափողը վերցրինք և փորձեցինք կապվել Երևան: Ոչ մի կերպ չէինք կարողանում, կոդերը չէին գործում: Ի վերջո հաջողվեց Երևանի հետ կապվել Ճապոնիայի հեռախոսավարուհու միջոցով: Կապվեցինք Ճապոնիա, հեռախոսավարուհուն մի կերպ բացատրեցինք, որ ուզում ենք կապվել Երևանի հետ: Հաղորդեցինք վերջին լուրը, որ Շուշին արդեն ազատագրված է: Մայիսի 9-ի առավոտյան՝ ժամը 6-ին, «Երկիր» օրաթերթի համարը արդեն լույս էր տեսել, որի առաջին էջը ամբողջությամբ նվիրված էր Շուշիի ազատագրման գործողություններին, և մեր բոլոր ժամերին հաղորդած լուրերը այնտեղ տպագրված էին: «Ռեսպուբլիկա Արմենիա»-ն ևս նյութ էր տպագրել:



Պատմում է ՎԱՀԱՆ ՇԻՐԽԱՆՅԱՆԸ (1993-1998 թթ. ՀՀ կառավարությանն առընթեր Հատուկ ծրագրերի վարչության պետ), Երևան, 03.04.2006

Ծնվել եմ 1947 թ. Ներքին Ջավախքում՝ Ախալցխայի շրջանում, Ծղալտբիլա - Նոր Շեն գյուղում, մանկավարժի ընտանիքում: 1988 թ. ես աշխատում էի ակադեմիայի համակարգում՝ հատուկ կոնստրուկտորական բյուրոյում որպես փոխտնօրեն: Սկսվեցին ջարդերը, ցույցերը սկզբից Ղարաբաղում, Սումգայիթում, Բաքվում: Ղարաբաղում քույրս էր ապրում, և ես մանրամասնորեն տեղյակ էի ամբողջ անցուդարձին: Տեղեկությունները անմիջապես փոխանցում էի հատուկ կոնստրուկտորական բյուրոյի կոլեկտիվին, Աշտարակի արդեն ձևավորված ակտիվին: Այդ ժամանակ Աշտարակը համակարգում էր չորս-հինգ շրջաններ՝ Ապարան, Եղվարդ, Թալին, Մարալիկ, Արթիկ, երբեմն Հոկտեմբերյանից, Էջմիածնից էին գալիս մեր նիստերին մասնակցում: Անմիջապես օգնելու խնդիր դրվեց՝ սկզբում հումանիտար օգնության, այնուհետև խնդիրները աստիճանաբար բարդացան, և առաջացավ ավելի լուրջ օգնություն ցույց տալու անհրաժեշտություն: Աշտարակում կազմակերպվեցին առաջին, երկրորդ, երրորդ ջոկատները: Ղարաբաղյան իրադարձությունները անմիջապես անդրադարձան Հայաստան-Ադրբեջան սահմանամերձ հարաբերությունների վրա: Հայաստանի սահմանամերձ գյուղերից ադրբեջանցիները սկսեցին մարդկանց և նրանց ունեցվածքը գողանալ: Մեր սահմանամերձ շրջանները ոտնձգություններից, գողությունից, ավազակությունից պաշտպանելու խնդիր դրեցինք: Աշտարակն առաջին ջոկատն ուղարկեց Նոյեմբերյանի շրջան, որտեղ այդ ջոկատը բավական երկար մնաց: Երկրորդ ջոկատը մենք ուղարկեցինք Կոռնիձոր, որտեղ ընդհարումներ էին սկսվել. Գեղազնիկ Միքայելյանի՝ Չաուշի ջոկատն էր, որի մեջ Աշտարակի, Թալինի, Մարալիկի տղաներն էին:

Բ.Կ.- *Ի՞նչ կրաներ էին ընդգրկված, հրամանատարները ինչ պատրաստվածություն ունեին:*

Վ.Շ.- Աշտարակում ունեինք պրոֆեսիոնալների շատ լուրջ խումբ՝ Աֆղանստանի պատերազմով անցած, հատուկ ստորաբաժանումներում ծառայած: Միավորողը ոգին էր: Չաուշի ջոկատում հիմնականում սասունցիներ էին և պատրաստակամությունը շատ մեծ էր, զուտ ազգային մտահոգություն էր: Այնուհետև ձևավորվեց ավելի մոբիլ ջոկատ, որը մասնակցում էր ոչ միայն Սյունիքի, այլև Ղարաբաղի պաշտպանությանը:

Բ.Կ.- *Զենքի խնդիրը...*

Վ.Շ.- Աշտարակի կառույցը Հայաստանի բոլոր կառույցներից տարբերվում էր ապահովվածությամբ: Անմիջապես ի հայտ եկան դրսից զենք բերելու և ներսում ճարելու ճանապարհներ: Շատ անգամ զենքով օգնելու հարցով ուրիշ ջոկատներ էին դիմում, և մենք օգնել ենք: Նման դեպքեր են եղել Մասիսի, Կոտայքի, Եղվարդի ջոկատների հետ: Այդ միջոցներն ի հայտ եկան շնորհիվ այդ ժամանակվա ունևոր մարդկանց, որոնք մեծ կապեր և հեղինակություն ունեին: Օրինակ, Աշտարակից Մուշեղը, որին սպանեցին, Ռուսաստանից օգնեց մեզ, շատ անկեղծորեն նվիրվեց այդ գործին: Ապրելով Ռուսաստանում և հեռու լինելով ազգային, պետական, մտավոր շրջանակներից՝ եկավ... Այնուհետև օգնեցին ներսի մարդիկ՝ Ներքին գործերի մարմինների աշխատողներ, բանակի հետ կապ ունեցող մարդիկ, որոնք մեր տարածքից էին: Այն ժամանակվա լավագույն զենքերը ինձ տվեց Աշտարակի միլիցիայի պետը՝ Զաքարյանը: Ես նրա այդ քայլը մինչև հիմա էլ բարձր եմ գնահատում: Մյուս բաժիններից թալանում էին, զոռով էին հանում, նա ինձ զանգեց, ասաց. «Բան ունեմ ասելու»: Գնացի, ասաց. «Արի անցիր, նայիր...»: Նոր կարաբիններ էին: Զենքի կարիք շատ ունեինք, տղաները շատ էին, իսկ զենքը՝ քիչ: Բայց երբ շարժումը Կոշի գաղութից Ներքին զորքերի ուղեկցությամբ Երևան տեղափոխվող զենքերի մեծ խմբաքանակ վերց-

րեց, բավական երկար ժամանակ մենք զենքի կարիք չունեինք: Հետաքրքիրն այն էր, որ 1988 թ. աշնանից հարևան հիմնարկի ինժեներների հետ մեր հիմնարկում սկսեցինք սեփական զենք նախագծել: Այնուհետև կապվեցինք Չարենցավանի գործարանի հետ: Երրորդ կողմը դարձավ Արովյանի գործարանը: Մենք բավական հաճախ էինք հանդիպում, աշխատանքի բաժանում, նախագծերի քննարկումներ էին լինում: Այնուհետև «Հայէլեկտրո» գործարանն էր: 1988 թ. վերջից Հայաստանում սկսվեց զենքի արտադրության գործընթացը: Այն, որ Աշտարակում համակարգվում էր զենքի արտադրության հարցը, պետական մարմինները շատ լավ գիտեին՝ ի պատիվ Աշտարակի պետական անվտանգության կառույցի պետի՝ Ավետիքյան Ռաֆայելի: Համոզված եմ՝ նա շատ լավ գիտեր, որ մեզ մոտ նման աշխատանքներ են ընթանում, ընդ որում՝ փորձարկումներով: Մենք որոշակի զենքեր պատրաստում էինք՝ նռնականետներ և «ՈՒԶԻ» ավտոմատներ: Նռնականետները որոշ տեղեր աշխատեցին, բայց մի քանի մարդ զոհվեց: Առաջիններից մեկը Նոր Հաճընի Էդիկ Տոռոզյանն էր, Գորիսում զենք պատրաստելիս զոհվեց Էդիկը, Քոչարյան Համլետը զոհվեց Ղափանում՝ իրենց սարքած ականանետը փորձարկելիս: Մենք նռնականետներ էինք սարքում: Ավետիքյանը շատ լավ գիտեր, որ 88-89-ի ձմռանը մենք փորձարկումներ ենք անում դաշտերում, որոնց Դեմիրճյանի այգիներ էինք ասում: Ոչ մի լուրջ հետապնդում ինձ և մյուս տղաներին ընդհանրապես չի եղել: Ղեկավարներին թեթև նախազգուշացրել են, թե՝ զգույշ եղեք:

Այնուհետև պատգամավոր ընտրվեցի: ԱԺ-ում ստեղծվեց Պաշտպանության, ներքին գործերի, ազգային անվտանգության առաջին հանձնաժողովը: Վազգեն Մարգայանը ընտրվեց նախագահ, ես՝ տեղակալ: Աշխատանքը ընթացավ ավելի ակտիվ, ծավալուն, ավելի մեծ լիազորություններով: Ամենածանր շրջանը եղել է 1990 թ. սկզբից մինչև օգոստոս, երբ Հայաստանում հարյուրավոր անկառավարելի, տարաբնույթ ջոկատներ կային: Կային մարդիկ, որ ուղղակի սեփական շահերն էին հետապնդում, ինչ-որ մեկի հանձնարարությունն էին կատարում: Բոլորին ի մի բերելը շատ դժվար խնդիր էր: Շատ ծանր պահեր, զոհեր ունեցանք, այդ թվում՝ Չառուշը: Արտաշատում, Սևանում ընդհարումների, կորուստների բազմաթիվ դեպքեր եղան, բայց հաջողվեց հասնել մեզ նպատակին: Մենք ամեն օր հանդիպումներ էինք ունենում

տարբեր ջոկատների հրամանատարների հետ: Ինձ հանձնարարված էր աշխատել ՀԱԲ-ի և «Սասունցի Դավիթ» ջոկատի հետ: ՀԱԲ-ը մեծ հավաք էր անցկացնում:

Բ.Կ.- *Ռազմիկը, մյուսները ինչ էին ներկայացնում, ինչ տղաներ էին ընդգրկված...*

Վ.Շ.- 89-90 թ-ի Ռազմիկ Վասիլյանը և 95-97 թթ. Ռազմիկը շատ տարբեր մարդիկ էին: 89-ին նրա հետ խոսելը շատ դժվար էր: Նրան առաջին անգամ հանդիպել եմ Փարպի գյուղում: Նա փարպեցու թոռ էր, եկել էր հատուկ հանդիպելու համար: Ես որպես ՀՀՇ ջոկատների ներկայացուցիչ էի գնացել, նա՝ ՀԱԲ-ի: Խոսակցությունը նույնն էր՝ մենք պետք է միասին աշխատենք: Սկսվեց այդտեղից: Այնուհետև ես մասնակցեցի նրանց մի ժողովին, որը անցկացնում էին ԴՕՍԱԱՖ-ի դպրոցներից մեկում՝ 26 կոմիսարների շրջանում: Նրանք հարյուր հոգի էին: Ես ելույթ ունեցա, խոսեցի, թե մենք պետք է միասին գործենք: Նրանց մոտեցումները տարբեր էին, կային մարդիկ, որ ուղղակի ասում էին. «Դրանք դավաճաններ էին, դրանց հետ չի կարելի, մենք պետք է ազգային բանակը պահենք...»: Բայց ժողովի վերջում մթնոլորտը փոխվեց: Դրանից հետո մի քանի հանդիպումներ եղան արդեն նեղ շրջանակներում. ՀԱԲ-ի և «Սասունցի Դավթի» ղեկավարությունն էր: Հանդիպումներից մեկը անցկացրել ենք մի նկարչի արվեստանոցում՝ Օրբելի փողոցի վրա, մեկը՝ Դավիթաշենում: Մի դպրոցում ամբողջ գիշեր ժողովին մասնակցել են ՀԱԲ-ի պարոն Վարդանը, «Սասունցի Դավթից» Համլետ Հովսեփյանը: Այդ հանդիպումներին 7-8 խոշոր ջոկատների հրամանատարներ մասնակցում էին: Մոտենում էր 1990 թ. մայիսը, միասնական գործողություններ ծավալելու, ընդհանուր հրամանատարություն ստեղծելու մասին որոշումներ էինք ընդունում: Հատկապես Հովսեփյան Համլետի կեցվածքը շատ դրական էր, կառուցողական, առաջինը նա հայտարարեց, որ «Սասունցի Դավիթ» ջոկատը դնում է ընդհանուր շարժման մեջ՝ ընդհանուր հրամանատարությամբ: Եվ դա եղավ մայիսին: Վազգենը աշխատում էր մյուս ջոկատների հետ: Ջոկատներ շատ կային, բայց ամենադժվար խնդիրը Վրեժի հետ էր, Վազգենն էր աշխատում Վրեժի հետ: Այդ փոլը մենք հաղթահարեցինք, երբ հայտարարվեց, որ ստեղծվում է հատուկ գունդ, և բոլորին հրավիրում ենք այդտեղ: Բայց մի բան է, որ մենք ներսում սեփական բանակի շինարարությունն

էինք սկսել, այլ բան է, որ սահմանամերձ գոտում լարվածությունը աստիճանաբար շիկանում էր, Ղարաբաղում ընդհարումները շատանում, ճնշումները ավելանում էին: Զուգահեռ անհրաժեշտ էր ուժեր ուղարկել այնտեղ: 1991 թ. հունվարի 4-ին կառավարության որոշումով ստեղծվեց Պաշտպանության կոմիտեն: Արդեն Ներքին գործերի համակարգում գործում էր Հատուկ գունդը: 1990 թ. աշնանը Թիֆլիսում պետք է կայանար Անդրկովկասի ռազմական օկրուգի նիստ: Նիստին մասնակցելու համար ինձ ուղարկեցին: Ես գնացի յոթերորդ բանակի հրամանատար գեներալ լեյտենանտ Անատոլի Պիշչևի հետ: Շատ լավ հիշողություն է մնացել նրա մասին: Մասնակցեցինք նիստին: Հրամանատարը Պատրիկեևն էր, նա շատ կոպիտ խոսեց մեզ հետ: Մինչև նիստը ինձ շատ կոպիտ ընդունեց, թե. «...Ի՞նչ է, անկախություն եք ուզում»: Մենք օգոստոսին հայտարարություն էինք արել, իսկ այդ հանդիպումը օգոստոսից հետո էր: Նույն կերպ ես նրան պատասխանեցի: Մեզ հետ զինկոմն էր՝ Հարությունյան Արթուրը: Նիստի ժամանակ Պատրիկեևն ասաց. «Հայաստանի բոլոր թոշակառուներին գրկել թոշակներից, ամբողջ զորակոչին տանել Խորհրդային Միության խորքը, հեռավոր տարածքներ...»: Իսկ ես պահանջ էի դրել, որ զորակոչն իրականացվի այնտեղ, ուսումնական մասն անցնեն Թիֆլիսում, որտեղ ուսումնական մեծ կենտրոն կար, իսկ ծառայության համար վերադառնան Հայաստան: Չընդունեց այդ առաջարկը: Ետ վերադառնալիս, երբ ինքնաթիռից իջանք, Պիշչևն ասաց. «Ինչքան հնարավոր է, շուտ ստեղծեք ձեր բանակը», ուրիշ բան չասաց. 1990 թ. աշնանն էր: 1991-ի մայիսին ստեղծվեց կոմիտե: Շատ ծանր ժամանակներ էին. «Կոյցո» գործողությունն էր, Ղարաբաղում և Շահումյանում գյուղերի հայաթափում էր տեղի ունենում, կարծեմ 20-ից ավելի գյուղեր էին: Հայաստանի շուրջ իրականացվում էր շատ դաժան ռեժիմ, հատկապես Նոյեմբերյանի հատվածում, Գորիսում: Բնդդաձորում ջոկատի վրա հարձակում եղավ՝ իբր թե անօրինական զենքերի առգրավում է: Ի՞նչ արեցինք այդ ժամանակ: Բոլոր շրջաններում նույն ջոկատներից ստեղծվեցին վաշտեր, բայց արդեն օրինական վաշտեր պետական համակարգում, որոնք մտնում էին Հատուկ գնդի կազմի մեջ, թեև գտնվում էին տարբեր շրջաններում՝ Մեղրիից մինչև Նոյեմբերյան բոլոր շրջաններում: Զենքը շատ քիչ էր, ու հազարավոր մարդիկ էին ընդգրկվել, բայց խնդիրը շատ կոնկրետ էր: Երբ օգոստոսին տեղի ունե-

ցավ մոսկովյան պուտչը, կոմիտեն մի հրաման իջեցրեց, սա հետաքրքիր դրվագ է, բոլոր վաշտերում՝ մարտական պատրաստության առաջին աստիճան, վերահսկել բանակի բոլոր ստորաբաժանումների շարժը: Երկու ամենապատրաստված ջոկատներից մեկը մենք դրեցինք Քանաքեռում տեղաբաշխված խորհրդային գնդի դարպասների դիմաց, մյուսը՝ բանակի շտաբի դիմաց, որպեսզի չկարողանան դուրս գալ: Այդ ժամանակ բանակի հրամանատարը փոխվել էր, շատ կոպիտ մարդ էր, անունը լավ չեմ հիշում: Ես կոմիտեում նստած էի, զանգեց, ասաց.

- Դուք փակել եք շտաբի դուռը, հրամայում եմ հենց հիմա հանել, այլապես ջարդելու եմ:

- Ուրիշ...

- Դուք Լենինականում կանգնեցրել եք զինվորական ավտոշարասյունը, որն ունեցվածք է տեղափոխում Ռուսաստան: Հրամայում եմ հենց հիմա կանգնեցնել, թե չէ նրանց կջարդեմ, իսկ ձեզ 10 րոպեից սպասում եմ ինձ մոտ:

- Իսկ ես կարծում եմ, որ 15 րոպեն հերիք է, որ դուք այդտեղից գաք Պաշտպանության կոմիտե,- մենք Մասսիվում էինք նստում,- այստեղ մենք կխոսենք:

Կոպտեց, հեռախոսը գցեց: Անցավ ժամանակ, տղաները ոչ այնտեղ են բաց թողնում, ոչ էլ այստեղ են հեռանում: «Երեբունի» օդանավակայանից ռազմական ուղղաթիռով փորձում էին արդեն բարձած զենքեր հանել: Ես ավելի ուշ իմացա, որ դրանք ոչ թե զենքեր են, այլ՝ Հայաստանում եղած հրթիռների կառավարման համակարգեր: Երկու ուղղաթիռներ արդեն թռել էին, երրորդը տղաները պահեցին: Դրանից հետո նա զանգեց, արդեն ուրիշ տոնով խոսեց. «Լավ, հանդիպենք...»: Մեր հանդիպումը կայացավ Մասսիվի շրջկոմի շենքում: Մեր հանդիպումից հետո կազմակերպեցի հանդիպում Վազգենի հետ, որից հետո նրանք ընկերացան, նույնիսկ որոշ ժամանակ նա մեզ օգնեց անհրաժեշտ զենքով:

Բ.Կ.- *Այդ հրթիռները մնացին:*

Վ.Շ.- Չէ, հրթիռները նրանք հանել էին երկրաշարժից անմիջապես հետո: Այստեղ կային կառավարման համակարգեր՝ էլեկտրոնիկան: Դրանք հանեցին 1990 թ. օգոստոս-հոկտեմբեր ամիսներին: Լրիվ ապամոնտաժեցին Արազածի ռադիոլոկացիոն կայանը՝ դարձյալ ամրողջ բլոկներով, կառավարմամբ: Համարում եմ, որ գողացան տարան, որով-

հետն հայտարարված էր, որ Հայաստանում եղած ողջ ունեցվածքը Հայաստանի սեփականությունն է: Մոսկվայում արդեն մշակվում էր դիրեկտիվ, ըստ որի՝ բոլոր հանրապետությունները դառնում են իրենց տարածքում եղած գենք-զինամթերքի սեփականատերեր:

Բ.Կ.- *Հատուկ ծրագրերի պետվարչությունը ստեղծվեց, դուք արդեն այնտեղ էիք, նաև Ջավախքի հետ կապը...*

Վ.Շ.- 1991 թ. դեկտեմբեր - 92-ի հունվարին ստեղծվեց Պաշտպանության նախարարությունը: Լուծարվեց կոմիտեն: Կոմիտեի բազայի վրա ստեղծվեց նախարարությունը: Ինձ նշանակեցին Հատուկ ծրագրերի վարչության պետ: Ես համարում եմ, որ դա ինձ համար ամենակարևոր փուլերից մեկն է եղել, նույնիսկ ավելի կարևոր, քան Պաշտպանության կոմիտեում էր, որովհետև շատ մոտիկից ես տեսա Ղարաբաղի ժողովրդի իրական վիճակը, պաշտպանության, տնտեսության հնարավորությունները, Ղարաբաղ-Հայաստան հարաբերությունների իրական վիճակը: Համենայն դեպս, ես այդ ընթացքում արել եմ հնարավորինը: Ի՞նչն էր ամենադաժան բանը. տեսնել, որ ժողովուրդը թշվառ վիճակում է, և չկարողանալ օգնել, շրջափակման մեջ էին, կապը միայն օդով էր, այն էլ՝ ուղղաթիռով, ինչի հնարավորությունները սահմանափակ էին: Հատուկ ծրագրերի վարչությունում ես վերևում նստած էի, ինձ մոտ բերին բավական տարիքով մի մարդու: Ասաց.

- Ես թոշակս ստացել եմ, ուզում եմ Ղարաբաղի ֆոնդին տալ, ո՞ւմ տամ:

- Ինչքա՞ն ես ստացել:

- 27 ռ. 70 կոպեկ:

- Բա դու ինչո՞վ ես ապրելու:

- Յոլա կգնամ...

- Հաշվապահությունում գրանցում են, մտիր այնտեղ:

Մի խումբ դասախոս կանայք հավաքվել էին և գործում էին Միրզոյան Գրետայի ղեկավարությամբ: Նրանք ջոկատի տղաների համար հավաքում էին գուլպաներ, շալեր, գլխարկներ և այլն: Ուղղաթիռների՝ Ղարաբաղ գնալ-գալը բավական բարդ էր, քանի որ կրակում էին, չէին թողնում: Վաղ առավոտյան պիտի գնային: Երբ մենք ճարեցինք մինչև երեք տոննա տարողությամբ պոլիէթիլենի տակառներ, վառելանյութ հասցնելը ահագին հեշտացավ: Մինչ այդ երկաթե տակառներով էինք

տանում: Այն փուլը, երբ Ղարաբաղում ակտիվացավ դիմադրությունը, ապա և հարձակումները՝ Խոջալու, Շուշի, Լաչին... Դրանք նախապատրաստելու համար հսկայական քանակությամբ ապրանքներ էին պետք, որոնք միայն օդով կարելի էր տանել: Իհարկե, տեղում ահագին բան ձեռք բերվեց՝ և 366 գնդի ունեցածից, և ադրբեջանցիներից խլված: Բայց հսկայական մասը պետք էր տեղափոխել: Վարչության հիմնական աշխատանքը համարում եմ այն, որ վարչության աշխատակիցները գնում էին այնտեղ, բերում էին պրոբլեմները, և այստեղ փորձում էինք դրանք լուծել: Կազմում էին Ղարաբաղի տնտեսության, էներգամատակարարման, հեռախոսակապի, շենքերի վերականգնման մանրամասն ծրագրեր:

Շրջափակման ժամանակ մի անգամ գնացի Ղարաբաղ: Լեռնարդի հետ ման էինք գալիս քաղաքով, տեսնում էինք ավերակ շենքերը, նկուղներում ապրող մարդկանց: Վառարանի վրա մի կին հաց էր թխում, ասացի՝ տեսնեմ հացը: Կանաչ գույնի հաց էր, հարցրի.

- Ինչո՞ւ է կանաչ:

- Մեծ մասը խոտ է աղացած, մի բուռ ալյուր ենք լցնում, մնացածը՝ աղացած խոտ:

Բ.Կ.- *Ժինգյալով հաց է:*

Վ.Շ.-Չէ, ժինգյալովը չի...

Բ.Կ.- *Շահումյանի կորուստը ինչպես եք բացատրում, հնարավոր էր դուրս գալ այդ վիճակից, պահել...*

Վ.Շ.- Բաներ կան, որոնք ես պատմեմ, ինձ քարշ կտան Հաագայի դատարան: Շահումյանի 91-ի գարնանից մինչև ձմեռ ընկած փուլը եղել է կոմիտեի աշխատանքով՝ և Դալիբալթայանի այնտեղ գործուղումը, և Սմբատ Այվազյանի գործուղումը, և զնդապետների, և ջոկատների...: Ամբողջը եղել է կոմիտեի համակարգման մեջ: Ես արդեն «Արցախ» կոմիտեում էի, երբ վիճակը այնտեղ վատթարացավ: Շահումյանում մենք բավարար ուժեր ունեինք, չնայած շատ լավ տղաների կորցրինք: Ասացին, որ Ջիվանին խփել են: Ջիվան Աբրահամյանը մեր ջոկատի հրամանատարներից մեկն էր: Հաջորդ օրը մարմինը ուղղաթիռով բերեցինք Երևան՝ «Էրեբունի» հիվանդանոցի մորգ: Երեկոյան Վազգենի հետ գնացինք, երկուսով մտանք ներս: Ջիվանի դիակից բացի գետնին սավանի վրա ևս երկու դիակ էր դրած: Գիշերվա ժամը 2-3-ն էր: Հանկարծ

մի ոտնոց լսվեց, Վազգենը գրկել էր այտնը: Ասում եմ. «Վազգեն, հանգստացիր...»: Չի ստացվում: Ասում է. «Այսր ես գրող տղա, իմ ինչ գործն է...»: Էլ չկարողացավ շարունակել: Սա առաջին զոհերն էին, որոնք ցնցել էին: Վազգենը այնքան նուրբ հոգի ուներ, հուժկու, կոպիտ արտաքինի տակ անչափ նուրբ հոգի կար: Նման դեպքեր շատ են եղել: Մի անգամ Շահումյանի շրջանում մի զոհված տղայի դիակն էին բերել: Երկուսով գնացինք, մտանք ներս: Տանը մութ էր, ցուրտ, էլեկտրականություն չկար, ճրագ էր վառած, մայրն էր, հայր չուներ, մի քանի մարդ նստած էին: Գլուխները կախ, ասելիք չունենք, ջահել տղա... Վերջում Վազգենը մոտեցավ մորը՝ մխիթարելու համար: Կինը շուռ եկավ, ասաց. «Վազգեն, դու ինձ մի՛ մխիթարիր, իմ տղան ազգի համար է զոհվել»: Սա կինո չէ, փաստ է, որ իմ աչքի առաջ է եղել: Վազգենը ոչինչ չասաց, շուռ եկավ, տեսա՝ աչքերից արցունքները թափվում են:

Բ.Կ.- *Ձեր և Վազգենի հարաբերությունները Մեղրյան Շահենի հետ...*

Վ.Ճ.- Չեմ ուզում Շահենի տղաները վատ կարծիք ունենան իրենց հոր մասին: Ես պաշտոնապես հայտարարել եմ, որ Շահենին մեղադրում եմ Շահումյանի անկման մեջ: Մինչ այդ ես հայտարարել եմ, որ Շահենը Շահումյանից ներքին կարգով ունեցվածք է դուրս բերում և վաճառում Հայաստանում: Դրա համար ես նրան երկու շաբաթ «Արցախ» կոմիտեում զրկեցի ուղղաթիռներից: Հետադարձ ճանապարհին նա բերել էր ապրանք: Բերում էր մեծ արկղերով, տակառներով կոնյակ, նույնիսկ մեքենա: Գալիս ինձ ասում էին, քանի որ ուղղաթիռի մարդիկ մեր մարդիկ էին: Մի անգամ Կամոյի օդանավակայանը փակել տվեցի այդ ուղղաթիռի համար: Հաջորդ անգամ նա ուղղաթիռը իջեցրեց բաց դաշտում: Որ հայրենասեր էր, կռվող, նվիրված այդ հողին՝ կասկած չկա: Բայց այսպիսի բաներ նա անում էր: Գաղթի ժամանակ, երբ մենք Վոլոդյայի գնդին ասել էինք, որ ինքը պետք է Գյուլիստանով մտներ, տաներ հասցներ այնտեղ, ավելի քան բավարար ուժեր կային: Շահումյանի անկումից հետո ինձ հանձնարարվեց ծառայողական քննություն անցկացնել: Կոմիտեում բոլորս միասին ենք մարդկանց խոսեցրել, գրել տվել: Այդ բոլորը ես փոխանցել եմ նախագահական ապարատին: Այնտեղից եկածներն ասում էին. «Մեզ դավաճանել են, ճանապարհը բացել են և ասել՝ քանի շուտ է, գնացեք, ոչ թե կռվեք, այլ հավաքվեք և գնա-

ցեք...»: Քանի որ ես չեմ եղել Շահումյանում, գաղթի ճանապարհին ամբողջ 15 օրը ինձ համար մղձավանջ էր: Որ պատմում են 1915 թվականի մասին, ես շատ լավ պատկերացնում եմ, թե գաղթը ինչ է: Ոտքերով, բոբիկ ոտքերով երեխաներին քարշ էին տալիս, սպանում, ցանել՝ խալու մեջ փաթաթած ամբողջ ունեցվածքը ձեռքներին... Եղ ամբողջով գնում էի Ստեփանակերտ, մի պառավ ու մի երիտասարդ կին կրկնում էին հայերեկան երեխայի Շուշիի քարքարոտ ճանապարհով քարշ էին տալիս, գնում էին դեպի Լաչին: Ոտքներին կոշիկ չկար. այդ ամբողջ ճանապարհը անցնելիս ոնց կոշիկ դիմանար: Ասացի.

- Նստեք մեքենան...

- Չէ, մենք Հայաստան ենք ուզում...

- Նստեք մեքենան, կգնանք Ստեփանակերտ, հետո ետ կվերադառնանք, ձեզ կտանեմ Գորիս...

Չկարողացա համոզել: Եղանակը շատ սառն էր, բայց նրանք ցնցոտիներով, բոբիկ, հոգնած՝ երեխայի հետ շարունակեցին գնալ: Ահավոր վախ կար նրանց մեջ, Ղարաբաղում մնալ չէին ուզում: Այստեղ էլ պրոբլեմ կա: Ես մտա Ռոբերտի մոտ, ասացի. «Դու ունես հինգ ազատ գյուղ, ունես Շուշի, ժողովուրդը հրապարակում թափված է, նրանց տեղավորիր այդտեղ: Ես հարցը կդնեմ նիստին, կառավարությունը որոշում կհանի՝ ամեն ընտանիքին սկզբի համար որոշակի գումար տալ, որ այստեղ ապրեն, հետո նրանք իրենց գլխի ճարը կտեսնեն»: Ասաց. «Լավ, տեսնենք...»: Ես ետ դարձա Լաչին, որպեսզի Լաչինում հավաքվածներին համոզեմ, որ ետ գնան: Մինչ նորից շարժվում էի դեպի Ստեփանակերտ, տեսա՝ ժողովրդի ամբողջ զանգվածը քանդվել գալիս է: Հարցնում եմ.

- Ինչո՞ւ եք գալիս...

- Մեզ ասացին՝ գնացեք Հայաստան, մեր պրոբլեմները այստեղ շատ են, Հայաստանում ձեզ կնայեն...

Իհարկե, դա սխալ քայլ էր: Ղարաբաղը 20-50 հազար մարդու պիտի պահեր և այդ մարդկանց դիմաց ինչքա՞ն քաղաքական օգուտ կունենար: Ադրբեջանը մի քանի մարդ է պահել, բայց 100.000 վրան է դրել: Փախստականներին, տեղահանվածներին պետք է պահել և՛ որպես բնակչություն, և՛ քաղաքականություն:

Բ.Կ.- *Ուրեմն՝ եթե լավ կազմակերպվեր, հնարավո՞ր էր Շահումյանը պահել:*

Վ.Ծ. - Այո:

Բ.Կ. *Բայց պապրեր կողմերից պանկերով մնան...*

Վ.Ծ. - Համենայն դեպս 1992 թ. հունիսը 91 ի ապրիլ մայիս չէր, Խորհրդային Միությունը չկար, բանակի ունեցվածքը բաժանված էր բոլորին, Ադրբեջանի կողմից այնտեղ կային նաև 4 րդ բանակի վարձու զինվորներ: Նրանք առաջին լուրջ դիմադրության հանդիպելուց հետո չէին շարունակի, գիտեին, որ իրենք փողով մտել են ավանտյուրայի մեջ: Դա բանակ չէր, վարձկաններ էին:

Բ.Կ.- *Շահումյանում ամեն ինչ կոտակցակոնացված էր, դա ինչ դեր ունեցավ Շահումյանի անկման գործում:*

Վ.Ծ. - Պատերազմի ժամանակ եթե մի կուսակցություն է և պետական է, դա դրական է, պատերազմը ավելի կազմակերպված տանելու առումով: Եթե պետությունը պատերազմում է, իսկ դու ընդդիմադիր կուսակցություն ես, դա քայքայիչ է, և ոչ միայն խանգարող հանգամանք:

Բ.Կ. - *Վազգենի հետ հարաբերությունները պահվում էր, բայց Սրի փանակերտի հետ Շահումյանի դեկավարության հարաբերությունները լավ չէին...*

Վ.Ծ. - Շատ վատ էին: Այն ժամանակ, երբ Շահենը ԼՂՀ ԳԽ -ում իր թեկնածությունը դրեց, ամեն ինչ սրվեց, պարզապես հակադրում էր՝ Ստեփանակերտ - Շահումյան: Մեզ համար շատ դժվար էր: Նույնիսկ Հայաստանում, էլ չեմ ասում Ղարաբաղում, դաշնակցական ջոկատ հրամանատարով, որը չի համակարգվում կենտրոնից՝ միահամուռ որոշումով այսինչ ուղղությամբ ընդհանուր հարված տանել, իսկ կողքը գնում է, ընդհանուր ճակատ, ոնց ես համակարգում դա:

Բ.Կ.- *Շահենի գոհվելու վերաբերյալ կան պապրեր կարծիքներ. մեկը ասում է, որ կողքը ադրբեջանական ռազմական, դիրքեր կային, և կարող էին գալ ադրբեջից խփել. մյուսներն ասում են, որ անհնար էր ադրբեջից գալ, մերոնք են արել. դուք ինչ կարծիքի եք:*

Վ.Ծ.- Ես չեմ կարծում, որ փոխհարաբերությունների մեջ պետք է այդքան խորանալ և գտնել սուբյեկտիվիզմի դաշտ: Ադրբեջանի կողմից հանգիստ հնարավոր էր խփել այդ ուղղաթիռը: Հիմա եթե շատ ենք ուզում ինչ որ մեկին սևացնել, ասում ենք՝ այ, ինքը կազմակերպեց... Ադրբեջանի կողմից այդ ուղղությամբ հնարավոր էր խփել, և նրանք այդ առիթը բաց չէին թողնի:

Բ.Կ.- *Երկու «Գրադի» մարտանավից մեկը Շահումյան գնաց, մյուսը՝ Հոսպատակ...*

Վ.Ծ.- Մենք ենք ուղարկել՝ «Արցախ» կոմիտեն: «Գրադի» հրթիռներ ես եմ տարել: «Յակ-40» ինքնաթիռի աթոռները հանել տվեցի, ամբողջ շարեցի մեջը, 4-5 հոգով նստել ենք հրթիռների վրա ու գնացել Մոսեիանակերտ: Իջել ենք Խոջալուի օդակայան, Շուշին դեռ ազատագրված չէր, այդ ինքնաթիռը չէր կարող իր ընդունված նրթուղով պտտվել, գալ հանգիստ իջնել: Ինքնաթիռը պետք է հանկարծակի երևար, կտրուկ իջներ ու նստեր: Կտրուկ իջնելու ժամանակ բոլորս հրթիռների վրայից սողալով իջանք ու խփվեցինք օդաչուի խցիկին: Հանգիստ կարող էր պտտվել ընկնել, բալանսը կորցնել: Բայց այդ տղաները հրաշք գործեցին: Առաջին խմբաբանակի հետ ասում էին՝ մենք չենք գնա: Ասացի. «Որ չեք գնա, միասին ենք գնում»: Գնացինք: Դրանից հետո մի թռիչք էլ եղավ: Հետո և Բաքուն, և Թուրքիան հայտարարեցին. «Եթե մի չվերթ էլ եղավ Երևանից Ադրբեջան, մենք կխփենք»: Եվ այդպես էլ եղավ:

Բ.Կ.- *Ջավախքի, այնտեղից եկած զենքի հետ կապված ինչ կարող եք ասել:*

Վ.Ծ.- Ջավախքի օգնությունը Ղարաբաղին սկսվել է մինչև 1990 թ.՝ մինչև նոր իշխանության հաստատումը, երբ Խաչիկ Ստամբոլցյանը ինչ-որ օգնության հիմնադրամ ուներ: Մի օր ինձ ասացին, որ Ախալքալաքից մեքենաներով մարդիկ են եկել և ուզում են ինձ տեսնել: Հինգ մեքենաով սենդամթերք էին բերել, հարցրին, թե որ տանեն, ասացի՝ Ստամբոլցյանի մոտ: Այդտեղ առաջին անգամ հանդիպեցի Պետրոսյան Սամվելի հետ: Դրանից շատ կարճ ժամանակ անց Սամվելը եկավ, թե. «Մենք ջոկատ ենք հավաքել և ուզում ենք գնալ Ղարաբաղ»: Այդ ջոկատը Ղարաբաղում ահագին երկար մնաց: Զենքը այնտեղ նրանք էին հայթայթում ոչ միայն իրենց, այլև մեզ համար, բերում էին Ախալցխայի կայազորից, Ախալքալաքի գնդից: Բավական լուրջ քանակությամբ զենք է բերվել Հայաստան, այն ժամանակ, երբ որևիշ տեղից մենք գրեթե զենք չէինք բերում, դեռ յոթերորդ բանակից զենք վերցնելու մասին Մոսկվայի դիրեկտիվը ստորագրված չէր: Մենք զենք բերում էինք Խաշուրից, Ախալքալաքից և Ախալցխայից: Դրանք հիմնական աղբյուրներն են եղել:

Պատմում է ԴԱՎԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ
20.10.2005, Տոնաշեն

Ես Շահումյանից եմ: Փոխգնդապետ եմ: Նախկինում եղել եմ Շահումյանի ազատագրական ջոկատների անդամներից մեկը: Գաղթելուց հետո եղել եմ Շահեն Մեղրյանի պարտիզանական ջոկատում: Այժմ յոթերորդ պաշտպանական շրջանի հրամանատարի տեղակալն եմ:

1992 թիվն էր: Հունիսին Շահումյանը գրավել էին, հուլիսին կազմեցինք պարտիզանական ջոկատներ: Թռանք, իջանք Հանդատափ, ու անմիջապես անցանք գործողությունների: Աշխատում էինք փոքր խմբերով, քանի որ մեր քանակը շատ քիչ էր: Չորս-հինգ հոգով տարբեր ուղղություններով դիվերսիոն աշխատանքներ էինք տանում: Փայլուն դիվերսիոն աշխատանքներից մեկն այսպես եղավ: Գյուլիստանում հակառակորդը թալան էր անում: Մի քանի հատ էլ դիրքեր ունեին: Նրանք այդ թալանչիներից հարկ էին հավաքում: Որոշեցինք պատժել թե՛ այդ դիրքում կանգնածներին, թե՛ թալանչիներին: Քանի որ մենք քանակով շատ քիչ էինք, նրանք էլ շատ-շատ էին, տարածքն էլ մեծ էր, չէինք կարող ճակատ առ ճակատ հարձակվել: Նրանք կփախչեին, մեր ուզած արդյունավետությունը չէր լինի: Չայանը՝ մեր հրամանատարը, նախկինում խորհրդային սպա է եղել, մասնակցել է Աֆղանստանի պատերազմին: Նա պլանը մշակեց: Չորս հոգանոց խումբ ուղարկեցինք Գյուլիստանի բերանը, որպեսզի պայմանավորված ժամին ընդամենը կրակեն դեպի գյուղը, որ նրանք հավաքվեն, միանգամից փախչեն գյուղից: Իսկ մենք

անցանք հակառակորդի թիկունքը՝ Խարխափուտ-Գյուլիստան տանող ճանապարհի վրա: Տասնվեց հոգի էինք, այդքանից կազմեցինք յոթ խումբ: Երկու-երեք հոգանոց խմբեր էին: Ճանապարհը բաժանեցինք այդ յոթ խմբերի միջև: Պայմանավորված ժամին այդ յոթ հոգին սկսեցին կրակել: Նկատեցինք, որ թշնամին, մեքենաներով հավաքված, փախած գալիս է: Դեպքի հետաքրքրությունն ինչումն է: Մենք շատ էինք մոտենալու ճանապարհին, որովհետև երկու կողմը անտառ էր, հեռվից չէինք կարող մեքենաներին կրակել: Մոտեցել ենք, հենց ճանապարհի բերանին նստել: Հրամանատարի որոշման համաձայն ես ամենավերևում էի կանգնած, հրամանատարը՝ ամենաներքևում: Ե՛ս էի վերևից ասում, թե ինչ մեքենա է գալիս, մոտավորապես քանի հոգի են: Պայմանավորվածությունն այսպիսին էր. առաջին մեքենան նա է խփում, վերջինը՝ ես: Մյուսները մեջտեղի մեքենաներն են ոչնչացնում: Առաջին մեքենան եկավ, «Նիվա» էր, ոստիկանի համազգեստով էին: Հրամանատարը խփեց: Վերջին մեքենան եկավ՝ «Զիլ» էր, թափքում մոտ տասնհինգ հոգի կլինեին: Չեմ ասում՝ բոլորը զենքով էին, մի քանիսն էին զենքով, մյուսները թալանչիներ էին: Հետաքրքրությունը նրանումն է, որ այնքան շատ էին թալանչիները, որ չէինք հասցնում սպանել: Այն ժամանակ՝ 1992 թվականին, ներքին պայմանավորվածություն ունեինք. ով հակառակորդին խփեր, սպանվածի զենքը նրանն էր: Վալերը տեսնում է, որ թշնամին զենքով դուրս է գալիս, ուզում է կրակել: Շատ մոտ են լինում՝ մոտ մեկ մետր: Հակառակորդը տեսնում է, նա էլ է զենքը պահում, որ կրակի: Վալերը, մտածելով, որ եթե կրակի, զենքին կկպնի, իր զենքը ցած է գցում, թշնամու ձեռքից բռնում, որ զենքը ձեռքից խլի: Թուրքը ուժեղ է լինում, Վալերային դնում է տակը: Վալերան ներքևից զենքը բռնել էր, թուրքն էլ ուզում էր պոկվել նրանից, փախչել: Տղերքից մեկը՝ Շուրան, գնում է, որ թուրքին խփի: Գլխին խփում է, տասը մատները ջարդում: Քաշքշում են իրար: Վերջը, թուրքին սպանում են: Սպանողն ասում է. «Զենքը իմն է», մյուսը ասում է. «Չէ, ես եմ բռնել, իմն է»: Շատ հետաքրքիր պահ էր: Այդ օրն էլ շատ փայլուն գործ ենք արել: Երեսունվեց հատ մեքենա ենք խփել: Դիակների մասին չեմ ուզում խոսել. լիքն են եղել, քանի որ մեծ մասը խաղաղ բնակչություն էր: Ավելի ճիշտ՝ ինչ խաղաղ բնակիչ: Խաղաղ բնակիչը իր տանն է խաղաղ բնակիչ: Մեր հայկա-

կան գյուղը թալանելու դեպքում ինձ համար տարբերություն չկա՝ նա տանկի մեջ է, թե հայի ցանած կարտոֆիլն է հանում տանում: Մի խոսքով, հարյուրից ավել մարդ կար: Ոչ զոհ ենք տվել, ոչ վիրավոր: Միայն Շուրայի մատներն էին ջարդվել: Ահագին զենք-զինամթերք ենք վերցրել: Քանի որ մենք պարտիզանական ջոկատ էինք, տեխնիկան տանելու տեղ չունեինք, սոլյարկա ենք լցրել, վառել մեքենաները:

1993 թվականի հունիսի 13-ին ազատագրվել է Մարտակերտի շրջանի Դաստակերտ գյուղը: Դաստակերտը շատ փոքր գյուղ էր: Նախկինում, ինչքան գիտեմ, շատ քիչ մարդ է ապրել: Բայց ռազմական առումով 1993 թվականին հակառակորդն այնտեղ շատ ուժեղ հենակետ էր ստեղծել: Այնտեղ տեղակայված էր Բաքվի դևսանտային-գրոհային գումարտակը: Մեծ գումարտակ էր: Ի դեպ, Դաստակերտի հենակետից են Շահեն Մեղրյանի ուղղաթիռին խփել: Դաստակերտի հենակետը ոչնչացնելու որոշումը վաղուց էր կայացվել: Գործողությունը հետաձգեցինք մինչև հունիսի 13-ը: Շահենը արդեն մահացել էր, ուղղաթիռը խփել էին ապրիլին: Հունիսի 13-ը Շահումյանի անկման օրն էր: Հենակետը ոչնչացնելը հետաձգեցինք մինչև այդ օրը՝ սրտներս հովացնելու և հանգստացնելու համար: Հունիսի 13 ի առավոտյան սկսեցինք գործողությունը: Մենք երեսունութ հոգի ենք եղել: Երեք խմբերի ենք բաժանվել: Մի մասը, որը կազմում էր մեր խումբը, պետք է անմիջապես գրոհեր: Իսկ այն երկու խմբերը կողքից պիտի պաշտպաններին մեծ զենքերով՝ գնդացրով, «SPG»-ով: Գրոհող խումբը կազմում էր տասնհինգ հոգի մարդ: Հակառակորդի դիրքերը երկարությամբ էին դասավորված, մենք սարից պետք է իջնեինք նրանց ուղղությամբ: Նրանք դեմքով դեպի Մարտակերտի շրջանն էին, իսկ մենք ճակատով էինք հարձակվում՝ կողքից: Դիրքերի երկարությունը մինչև Մատաղիս էր հասնում, այսինքն՝ մենք համարյա յոթ կիլոմետր պիտի իջնեինք: Իհարկե, տարիքով մարդիկ չէին կարող այդ տարածքը արագությամբ իջնել: Այդ պատճառով մենք խնդրեցինք ինչքան հնարավոր է ներգրավել ջահելների: Հրամանատարը՝ Զալյան Սերգեյը, մի քիչ տատանվեց:

Բայց գրոհը կազմակերպողը Գյուլումյան Նովիկն էր՝ Վերիշենի ջոկատի հրամանատարը, հիմա Հաթերքի գումարտակի հրամանատարն է: Նա ընդառաջ գնաց մեր խնդրանքին, չնայած ասաց, որ մի ջահել էլ

ինքն է, ինքն էլ է մեզ հետ գալու: Գրոհը սկսեցինք ոչ թե մեր ուզածով, այլ հակառակորդը նկատեց գրոհող խմբի անցումը դեպի թեն ու առաջին կրակը նրանք բացեցին: Նրանք արդեն պատրաստ էին, նկատող էին: Առաջին իսկ գրոհի առաջին դիրքի գրավման ժամանակ մահացավ մեր շատ սիրելի Վահեն՝ Թալինի շրջանից: Վիրավորվեց Հարությունյան Կամոն, հիմա նա հրամանատարի տեղակալ է: Մնացինք տասնչորս հոգով: Գրոհը շարունակեցինք: Մեր դիրքը ավելի նպաստավոր էր, քան հակառակորդինը: Այսինքն՝ մենք կողքից էինք խփում, իսկ նրանց խրամատները քանդած էին դեպի ճակատը, դրա համար նրանք չէին հասցնում պաշտպանվել: Ոչ թե չէին կարողանում, այլ չէին էլ հասցնում խրամատից դուրս գալ, այնքան արագությամբ էր հարձակումը: Ինչու եմ այդ դեպքը հիշում. հունիսի 13-ին էր, և շատ արագ ավարտվեց: Դաստակերտը գրավեցինք այդ օրը: Գրավեցինք նույնիսկ նրանց շտաբը՝ իրենց փաստաթղթերով, ամեն ինչով: Փաստաթղթերից երևաց, որ նրանց գումարտակում 168 հոգի են: Իսկ իրականում ստացվեց, որ եղել են 285 հոգի: Տասնչորս հոգով հարձակվել էինք 285 հոգու վրա: Այդ գյուղը ազատագրեցինք մոտ չորս-հինգ ժամվա ընթացքում: Հետո, երբ հաշվեցինք հակառակորդի զենքերը և նրանց թողած դիակները... մոտ վաթսունհինգ հատ ավտոմատ և նռնականետ ենք վերցրել: Կռվի դաշտում թողել էին երեսունութ դիակներ: Բացի այդ, մենք տեսել էինք, թե ինչպես են մեքենաներով զոհերին հանել, եթե դրանք հաշվենք, հաստատ մոտ ութսուն զոհ տվել էին, չհաշված՝ վիրավորները: Մեր կողմից միայն Վահեն էր զոհվել: Խոտը բարձր էր, որին վիրավոր հակառակորդն էր պառկած: Չէր նկատել, մոտիկ տեղից կրակել էր Վահեին: Չհաշված մեր ընկերոջ մահը, հունիսի 13-ին փայլուն հաղթանակ տարանք: Դրանից հետո թռիչքը ավելի ապահով դարձավ պարտիզանական ջոկատի ուղղաթիռների համար, որոնք Երևանից սնունդ և մեր պահուստային ուժերն էին բերում, կամ՝ այստեղից մեր մարդկանց տանում էին տուն: Հակառակորդին հասցրինք մինչև Մատաղիս: Հունիսի տասնչորսին հանգստացանք, տասնհինգին գրավեցինք Մատաղիսը, այն դեպքում, որ դարաբաղյան ճակատը՝ Մարտակերտի ուղղությամբ, հասնում էր մինչև Սարսանգ, Մեծ Շեն: Մաղավուզը, Լյուլասազը, Մարտակերտ քաղաքը, Թալիշը՝ բոլոր այդ բարձունքները հակառակորդի ձեռքում էր: Մենք

կողքով՝ թիկունքով, մտել ենք: Մեկ ամիս քսան օր Մատաղիսի բարձունքը պահել ենք, մինչև ամբողջ ճակատը եկավ մեզ միացավ: Մեզ փոխարինելու եկավ Մարտակերտի Իլիչի՝ «20»-ի գումարտակը:

Ընդհանրապես, երբ պարտիզանական ջոկատներ էինք կազմել, ճիշտ է, առճակատ՝ խրամատից խրամատ, գործողություններ չենք արել մինչև 1994 թվականի սկիզբը, բայց տարբեր հրամանատարների հետ փայլուն գործողություններ կատարել ենք: Մարտակերտի հրամանատար Նորիկ Դանիելյանի, «Գրադի» ժորայի հետ, որը հրետանու պետն էր, Սարսանգում փայլուն գործողություններ ենք կատարել: 1993 թվին էր, երբ ճակատից մեր զորքը սկսել է հարձակողական մարտեր վարել: Եկել ենք հասել Դրմբոն: Գետավանի վիճակը ծանր էր: Հակառակորդը Սարսանգից զինամթերք էր հասցնում՝ նավթ, ինչպես նաև՝ հետևակ, պահուստային ուժեր: Խնդիր կար փակել Սարսանգի ճանապարհը: Մոտ քսան հոգի էինք, շատ չէինք: Ընդհանրապես, պարտիզանական խմբում երեսունհինգ հոգուց չենք ավելացել, այնքան, որ մի ուղղաթիռի բեռ լինի: Մարտակերտի տղաների վիճակն էլ էր շատ ծանր: Հակառակորդից «խեղդվելով»՝ զորքը հասել էր Սարսանգի ջրամբարի աջ՝ Ռմուդլու-Հաթերքի կողմը, ու այլևս տեղ չուներ: Հակառակորդի քանակը մեծ էր, զինամթերքը՝ նույնպես: Շատ էին նեղում: Խնդիր կար թե փախչողներին, թե մտնողներին Սարսանգի ջրամբարի կողքով մինչև Ռմուդլուի ճանապարհը չթողնել անցնել: Գնացինք այնտեղ: Գյուլումյան Նովիկն էր ղեկավարում: Փայլուն տղաներ շատ ենք ունեցել, չեմ ուզում անուններով նշել: Կրկին փոքր խմբերի բաժանվեցինք: Ընդհանրապես, մարտերի ժամանակ ծիծաղելի դեպքեր շատ են եղել: Համատեղ են եղել հաղթանակը և զվարճալի դեպքերը: Չեմ ուզում պատմել ինչքան տեխնիկա խփեցինք: Հակառակորդի կողմից Միրզոն ազգանունով ժուռնալիստ կար: Այդ կռվի ժամանակ նա հակառակորդի կողմից նկարահանել է մարտը: Հեռուստացույցով մի քանի անգամ ցույց են տվել Սարսանգի ջրամբարի այդ գործողությունը: Երբ վերջացրել ենք գործը, մի քանի ամիս հետո դյուդ Ժորան պատմում է այդ կռվի մասին: Ասում է. «Տեսնում եմ՝ հակառակորդի շարասյուները կանգնած: Կրակոցներ եմ լսում, բայց չեմ պատկերացնում, որ կարող է հայերն են: Մենք գիտեինք, թե թուրքերն այդտեղից մեզ վրա են կրակում: Մենք

կրնտանիով նշանառության տակ ենք վերցրել մեքենաները, որ շարասյունը ոչնչացնենք: Մինչև կրակելը տեսնենք մեքենան պայթեց»: Մինչև այդ գործողությունը նրանք չեն պատկերացրել, որ մենք՝ Շահումյանի տղաներս, իրոք աշխատում ենք: Մի քանի օր հետո մեր հրամանատարներից մեկը՝ Նորիկը, անցավ ջրամբարը, հանդիպեցինք: Այդ օրվանից սկսում ենք համատեղ աշխատել: Շատ հաճախ խնդրել են՝ այսինչ տեղը կամ ճանապարհը փակել, կամ ոչնչացնել այսինչ դիրքը, որտեղից «Գրադ» կայանքով շատ են իրենց նեղում: Նման գործողություններ շատ են եղել: Արդյունավետ գործողություններ շատ ենք արել, քանի որ անտառային պայմաններ էին, տեղանքը թույլ էր տալիս ծածուկ անցնել ուզածդ տեղը: Փոքր խմբերով գործերը ավելի լավ էին ստացվում: Չեմ ուզում ասել՝ խրամատի զինվորները մեզանից լավ կամ վատ են կռվել, բայց մեր պարտիզանական գործողությունները 1992-1993 թվականներին շատ օգուտ են տվել, նամանավանդ՝ հյուսիսային գոտում: Դեռ չեմ պատմում, թե Շահումյանում ինչքան գործողություններ ենք արել: Մենք այստեղից՝ Մարտակերտից, պետք է զինամթերքը շուտ հասցնեինք Շահումյան, ինչը շատ դժվարին խնդիր էր. մենք ֆիզիկապես ի վիճակի չէինք 60-70 կիլոմետր այդքան բեռը տանել: Բայց ունեինք բազաներ: Չեչենները նոր են գլխի ընկել, բայց մենք ժամանակին այդպես արել ենք: Տարբեր ուղղություններով զինամթերքի բազաներ ունեինք. կապ չունի՝ մենք այդ օրը այդտեղ գործ անելու ենք, թե ոչ, նախօրոք դրել ենք: Կարող է երեք ամիս հետո գնանք այդ դիրքին խփենք, գիտենք, որ այդ տեղում մենք բազա ունենք: Շահումյանում շատ ենք գործողություններ կատարել՝ թե շրջկենտրոնում, թե մեր գյուղում, թե Վերիշենում, թե սարերում: Օրինակ, մի անգամ Նովիկն իր խմբով՝ չորս թե վեց հոգով, մոտենում են և մեկ օրում՝ առավոտ լուսաբացին, ոչնչացնում յոթանասուներեք հոգու՝ անասնապահներին և նրանց պահակներին: Առանց մի վիրավոր, մի զոհ տալու գործը արել են, եկել: Նման դեպքեր շատ են եղել:

1992 թվականի հունվարի մեկն էր՝ առավոտ շուտ... Երեք ամիս էր, ինչ ես ջոկատ էի մտել, որը դեռ առանձին ջոկատ չէր, հետո առանձին ջոկատ կազմեցինք: Մեզ տարան Բուզլուխ գյուղ՝ որպես ուեզերվ: Իսկ հիմնական կռվող տղերքը Բուզլուխի տղերքն էին և Արտաշատի ջո-

կատն էր: Նրանք համատեղ դիրքեր էին պահում: Գիշերը, ինչ ինչ պատճառներով, նրանցից մի քանի հոգի իջնում են դիրքերից, գալիս մեր նոր ստեղծված ջոկատի տղերքից հինգ հոգու ուղարկում, որ օգնեն, դիրքը պահեն: Տղերքը գնում են: Նոր տարի էր, առավոտ շուտ, տղերքը չեն պատկերացնում, որ կարող է ինչ-որ բան լինի: Դիրքում զգոն չեն լինում: Բլինդաժից դուրս են գալիս, նայում, նորից ետ մտնում: Խրամատում մարդ չի լինում: Հակառակորդը, օգտվելով դրանից, հարձակվում է: Այդ օրը մեր հրամանատարը վիրավորվեց, մեր ջոկատից երկու տղա զոհվեցին, Արտաշատի ջոկատից երեք հոգի սպանվեցին: Երկար պաշտպանվեցինք: Մեր հրամանատարի վիրավորվելուց հետո՝ երեկոյան, նոր կարողացան մեր դիրքերը գրավել: Այդ օրը եղբայրս վիրավորվեց աչքից: Պատճառը նրանումն էր, որ զգոն չէին: Չնայած մենք հունվարի վեցին նրանց պատժեցինք և այդ նույն դիրքերը ետ վերցրինք: Նրանք ավելի շատ զոհ տվին, բայց նրանց տասը-տասնհինգ զոհը մեր կորցրած ընկերոջ եղունգն էլ չարժե: Այդպիսի դեպքեր էլ են եղել, միշտ փայլուն մարտեր չենք տարել: Ես կյանքում չեմ թերագնահատել թշնամու ուժերը: Եթե համարես, որ դիմացինդ ոչխար է, դա էլ ճիշտ չէ, ստացվում է, որ դու ոչխարասպան ես, ոչ թե զինվորը զինվորի դեմ է դուրս եկել: Նրանք մեզ գերազանցել են թե մարդկային ռեսուրսներով, թե զենք-զինամթերքով: Հիշում եմ՝ ով մի փամփշտակալ փամփուշտ ուներ՝ նա ամենահարուստ մարդն էր: Մեր ամբողջ զինամթերքը մենք նրանցից ենք վերցրել: Հարձակվել ենք, գրավել, նրանց դիրքերը լցված են եղել ամեն ինչով:

Բ.Կ.- *Շահենին թուրքերը խփեցին: Դու որևէ բան պատկերացնում ես, ինչպես եղավ:*

Դ.Պ.- Առանց պատկերացնելու ես կարող եմ ուղղակի այդ դեպքը պատմել: Տասը օր հանգստանալուց հետո մենք իջել ենք «Եոնիկների» հենակետը, երկու ուղղաթիռով ենք եկել: Շահենենք պիտի գնային: Երբ առաջին ուղղաթիռը թռավ, դրա վրա կրակեցին Դատակերտի հենակետից: Չորս հատ «Իգլա» խփեցին, դրանցից ոչ մեկը չկպավ: Շատ ուժեղ օդաչու էր, եթե չեմ սխալվում՝ Գեղամն էր: Մի օդաչուն Գեղամն էր, մյուսը՝ Ջամբուլաթը: Նրա անձնակազմը զոհվեց: Խաբս էր տալիս ուղղաթիռով, հրթիռը գալիս էր, նորից էր խաբս տալիս: Ի դեպ, ասեմ, որ

թուղաթացիական ուղղաթիռներն ավելի շարժունակ էին, քան զինվորականն: Զինվորական ուղղաթիռները ծանր էին:

Բ.Կ.- *Գեղամը դեռևս էր, որ կրակում են:*

Դ.Պ.- Հրթիռը ճակատ ճակատի կանգնեցնում էին, երբ հարյուր մետր էր մնում, որ հրթիռը պետք է կպնի, կտրուկ իջնում էր ներքև, մինչև մյուս հրթիռն էր թռնում գալիս, նորից էր թեքվում: Այնքան, որ հինգուկես կիլոմետրը «ծախսում» էր օդում, հրթիռը ինքն իրեն պայթում էր: Մի խոսքով, այդպես խաբս տվեց, գնաց: Մենք Շահենին ասացինք, որ ուղղաթիռը կանգնեցնեն: Որտեղից կրակում էին, մոտ հինգ կիլոմետր էր հեռու՝ ամենաշատը կես ժամվա ճանապարհ էր: Կարող էինք գնալ, խփել նրանց, հետո հանգիստ կգնային: Շահենը չուզեց, ասաց. «Դե, ինչ պիտի անեն...»: Հետո մոտ քսան րոպե անցավ, ասաց. «Որ կրակող լինեն, կկրակեն, երևի վերջացել են հրթիռները»: Նստեցին: Նրա ընկերներից մեկը չէր ուզում գնալ: Երբ ուղղաթիռն արդեն բարձրանում էր, թե ինչ խելքին փչեց, թռավ կախվեց ուղղաթիռից, գնաց նրանց հետ: Լավ տղա էր: Մեր աչքի առաջ են խփել, մենք ենք առաջինը հասել: Եթե շուտ չհասնեինք, ամեն ինչ կվատվեր: Ուղղաթիռը վառված էր: Մտել ենք, միջից հանել դիակները: Չէինք էլ հասկանում, որ ուղղաթիռը կարող էր պայթել: Երբ դիակները հանել ենք, յոթ մետր անցել, նոր պայթել է: Այն հարցին, թե Շահենին մերոնք են խփել թե ոչ, ես մի բան կարող եմ ասել. երբ այդ հենակետը վերցրել ենք, դեսանտային-գրոհային գումարտակն այնքան հապճեպ է փախել... մարդ է եղել, որ առանց զենք է փախել: Օրինակ, ես մեկին խփել եմ՝ նռնականետը գցել էր, բայց իրերի տոպրակը շալակին էր: Իրերի տոպրակը լիքն էր: Մտածեցի՝ երևի հարստություն է տանում: Քանդեցինք, տեսանք՝ մի բալոն շաքարավազ: Այնքան խուճապահար էր, որ չի հասցրել տոպրակը գցել, շալակած փախել է, բայց զենքը գցել էր: Հիմա այդ ծառն էլ կա, արկերի կտորտանքներն էլ կան: Նրանք այդտեղ խրամատ չունեին, բայց դրանցից մեկը նրանց խրամատն էր: Ուզում եմ ասել, որ մենք այդտեղ «Գրադ»-ով չենք խփել: Դրանից հետո մինչև հունիսի 13-ը խփել են, մոտ տասը անգամ ուղղաթիռ եկել է: Այսինքն՝ նրանք շահագրգռված կլինեին նորից խփել, բայց չեն խփել: Դա կասկածանքի տեղիք չի տալիս, որ այն ժամանակ հայն է ոչնչացրել Շահենին, որովհետև որտեղից կրակել

են, մոտ հիսուն-հարյուր մետր ներքև թուրքի խրամատն էր: Հնարավոր չէր, որ հինգ կամ տասը հոգով գային այդտեղ կանգնեին, կրակեին, հարյուր մետր հեռու գտնվող թուրքը նրանց վրա չկրակեր: Հնարավոր է՝ ուրիշ պատերազմում դեսանտային-գրոհային գումարտակ լիներ, խնդիրը այլ կերպ լուծեին, հատուկ մարդիկ կանչեին, խփեին գնային: Որովհետև համարյա մեկ ամիս ուրիշ ուղղաթիռ չի եղել, կամ էլ սպասել են, հետո նրանց ետ են կանչել: Ընդհանրապես, Շահեն Մեղրյանի հետ կապված շատ ասեկոսություններ կան՝ իբր Շահումյանից դուրս գալուց հետո դավաճանել է, «ծախել» է, բայց բոլորս էլ զինվորական ենք, բոլորս էլ տեսնում ենք, որ նման բան չի եղել և չէր էլ կարող լինել: Այդ մարդն իր կյանքը տվեց հայրենիքին: Փող վաստակող մարդը նորից գենք չի վերցնում և փորձում տասը հոգով Շահումյանը ազատագրել: Այսօրվա դրությամբ որ Ղարաբաղում գոնե այսքանս կանք, այն գործի շնորհիվ է, որ Շահենը ստեղծեց այդ ջոկատը: Թեկուզ նա կարճ ժամանակ անց մահացավ, բայց նրա ստեղծածի հիման վրա ստեղծվեց հսկա գունդ, որը կոչվում է Շահումյանի գունդ: Եվ ինչ բանակում էլ ինչ գրեն, միևնույն է, բոլորն էլ գիտեն, որ յոթերորդ պաշտպանական շրջանը Շահումյանի շրջանն է: Իմ գլխում չի տեղավորվում, որ կարող է հայ խփած լիներ, ես մեր ժողովրդին շատ եմ հարգում և շատ եմ նվիրված: Նույնիսկ եթե տեսնեմ էլ՝ էլի չեմ հավատա, որ հնարավոր է՝ հայը հայի դեմ այդպիսի բան անի:



Պատմում է ՊԵՏՐՈՍ ՄԵՂՐՅԱՆԸ, Երևան, 02.03.2006

Ծնվել եմ 1954 թ., Շահումյանի շրջանի Գյուլիստան գյուղում: Շարժման հետ առաջին կապը եղել է 1988 թ., երբ Ղարաբաղի ԳԽ-ն Հայաստանին միանալու որոշում կայացրեց: Ես ապրում էի Ռուսաստանում, 1990 թ. հունվարի 9-ի դեպքերի ժամանակ գտնվում էի այնտեղ, ռադիոյով լսեցի, որ Շահումյանի ղեկավարությանը գերի են վերցրել: Հունվարի 11-ին արդեն Երևանում էի: Հունվարի 12-ի առավոտյան ռազմական ուղղաթիռով վեց հոգով թռանք: Ինձ վերցրին որպես տուժող կողմի եղբայր, ուղղաթիռում էին Հենրիկ Սեֆյանը և 4 այլ բժիշկներ: Եկանք Շահումյան, այդ օրը Մանաշիդի, Թոդանի դեպքերն էին. Ստեփանակերտից Ղարաբաղի Հատուկ նշանակության ջոկատը օգնության եկավ, բայց ռուսներ էին: Ես շրջանում մնացի մինչև Շահենին Գետաշենում փոխանակեցին: Գետաշենի ինքնապաշտպանական ուժերը գերի վերցրին Կիրովաբադի ոստիկանության աշխատողի որդուն՝ երկու հոգու հետ միասին և հունվարի 18-ին փոխանակում կատարեցին: Եղբորս՝ Շահենի հետ հունվարի 21-ին թռանք Երևան:

Բ.Կ.- *Ձերբակալման պատմությունը մանրամասն ներկայացրեք:*

Պ.Մ.- Ուղղաթիռի դեպքը եղավ, պիտի գնային թաղմանը: Երբ Շահումյանի սահմանը անցնելիս, որ դուրս էր գալիս դեպի Գետաշեն, Մարտունաշեն, Կուշչի Արմավիրի մոտ նրանց առաջը կտրում են: Ինչ-ինչ պատճառներով այնտեղ լինում են ռուսներ, ադրբեջանցի ՕՄՕՆ-ականներ, քաղաքացիներ: Խմբի մի մասին տանում են մի ուղղությամբ, մի մասին, այդ թվում Շահենին՝ Խանլար: Բանակցություններ են ընթա-

նում. ուզում են նախ իմանալ, թե որտեղ են, ոնց են... Երբ ոստիկանության աշխատողի տղային բռնում են, պարզվում է, որ Շահենը մի քանի ընկերների հետ խանգարում է: Նրանց բերեցին, ես Շահենի հետ թռա Երևան: Շահենն ասաց. «Եղբայր, այս իմոքը շատ ջուր է քաշելու, դու պիտի տեղափոխվես, գաս կողքիս կանգնես, որովհետև հավատարիմ մարդիկ պետք են այս պատերազմին...»: 1990 թ. մայիսին Կրասնոյարսկից տեղափոխվեցի Արովյան: 1990 թ. հունիսից ես եղել եմ Շահումյանում: Կատարել եմ Շահենի բոլոր հանձնարարությունները. ֆաբրիկայի տնօրեն էի աշխատում, Շահենն ինձ հանձնարարում էր՝ այս տար, այն բեր...

1990 թվականից մեր շրջան մուտք գործեց ՀՅԴ կուսակցությունը: Դաշնակցության ներքո ձևավորվում էին ջոկատներ: Շրջանի բոլոր գյուղերն ունեին իրենց ջոկատներն ու հրամանատարները: Հիմնական կորիզը կրդվյալ դաշնակցականներն էին: Գյուլիստանի Գետի Գոմերում (Ինջայի վրա՝ Մինասին աղբյուրի տակը, դեպի Թալիշ, Թալիշն ընկնում է աջ կողմի վրա) բազա էր ստեղծվել, որտեղ պարապում էին թե՛ շրջանի, թե՛ ՀՀ-ից գնացած տղաները: Պարապելուց հետո ջոկատների մի մասը տեղափոխվում էր Գետաշեն: Շահենն ինձ Երևանում նշանակեց որպես լիազոր ներկայացուցիչ: Քանի որ ընտանիքս այստեղ էր, մեկ ամիս մնում էի այնտեղ, մոտ 10 օր՝ Երևանում: Կապ կար «Արցախ» կոմիտեի հետ, այն ժամանակ Գրիշա Հարությունյանն էր, մինչև շրջանը հանձնելը՝ Շիրվանյանը: Շրջանը դուրս գալուց հետո այլևս կապ չենք պահել:

Բ.Կ.- *Դաշնակցությունը ձեր շրջանում հզորացավ, կազմակերպեց, բայց իշխանությունը Հայաստանում ՀՀԴ-ի ձեռքում էր, որը հակառակ էր ՀՅԴ-ին, վտանգ չէիք տեսնում, Շահենը վտանգ չէր տեսնում...*

Պ.Մ.- Ցավալի է, բայց պետք է ասել. մենք մի ֆիլմ ունեինք՝ «Под знаменем человечности», որում Շահենն ասում էր. «Երբ ես խոսում եմ Խորհրդային Միության Ներքին զորքերի հրամանատարության հետ, ասում եմ՝ դուք ինչո՞ւ եք եկել, ինչ առաքելություն եք կատարում մեր շրջանում: Նա ասում է՝ «Շահեն, մենք այստեղ ենք, որ խաղաղ բռնագաղթ անենք դեպի Ղարաբաղ...»: ՀՀԴ-ի հետ կապված. դեռ այստեղ զգում էինք, որ չեն ուզում մեզ լսել, նորմալ օգնել, կարող եմ ասել, որ չէին ուզում տեսնել: Մեզ համար շատ ծանր էր, վախ էինք զգում: Այդ

վախը զգացինք 1991 թ. ապրիլի 30-ին Գետաշենի, Մարտունաշենի անկման ժամանակ, թե ինչ օգնություններ են եղել, ոչ մի բան էլ չի եղել: Եթե շրջանի ինքնապաշտպանական ջոկատները չլինեին... Շահենը կազմակերպեց, և մենք միանգամից ամբողջ գիծը՝ Բուզլուխից մինչև Թոդանի բերանը, փակեցինք, որպեսզի թուրքերը, ռուսները առաջ չգան: «Կոլցո» գործողության մեջ մենք էլ կային, բայց շրջանը միանգամից ոտքի կանգնեց ու փակեց, ռուսները ոիսկ չարեցին գալ: Բայց դա տևեց ընդամենը մեկ տարի:

Բ.Կ.- *Եթե կուսակցական կողմնորոշում չլիներ, շրջանը կարելի էր պահել:*

Պ.Մ.- Շահումյանի հարցը միանշանակ լուծված էր դեռ 90-ական թթ., արդեն բարտեզը գծված էր, բայց չէին կարող ժողովրդին ասել՝ ձեր բարտեզը գծված է...

Բ.Կ.- *Այդպես ամբողջ Ղարաբաղի բարտեզն էր գծված...*

Պ.Մ.- Դա ոչինչ չէր տա, եթե այնտեղ նույնիսկ իշխանության գլուխ լինեին կոմունիստները, ՀՀԴ-ն: Քարտեզը կար, շահումյանցիները զգում էին...Մենք հնարավորություն ունեինք 92-93-94 թթ. ազատագրել Շահումյանը, բայց քանի որ մեզ չէին թողնում առաջ գնալ, ասում էին, որ պիտի շղթան պահվի Օմարում, հասկացանք, որ դա նախօրոք պայմանավորված, գծված քարտեզ է եղել: Այսօր միգուցե նախկին իշխանավորները հասկացել են, որ սխալ են թույլ տվել, քանի որ մենք շատ քիչ կորուստներով կարող էինք շրջանը ազատագրել:

Հիշում եմ 91 թ. ապրիլի 30-ը. Շահենի աչքերում առաջին անգամ այդ օրն եմ արտասուք տեսել, երբ Թաթուլը զոհվեց, Գետաշենի ժողովուրդը անտառներով գալիս էր: Շահենը 3-4 օր չէր քնել, չէիր կարող խոսել նրա հետ: Հիշում եմ 91 թ. նրա զրույցը Հայաստանի ղեկավարության հետ, ասում էր. «Գտեք Լևոն Տեր-Պետրոսյանին, բան ունեմ ասելու նրան...»: Այդտեղ էին Երջանիկ Աբգարյանը, որը ՀՀԴ-ի անմիջական ներկայացուցիչն էր, Այվազյան Սմբատը: Երջանիկն ասաց. «Շահեն, պետք չէ Լևոնին հայհոյել, ես կգնամ ու ամեն ինչին տեղյակ կպահեմ...»: Ինձ հաջորդ օրը Շահենն ասաց. «Երջանիկին կվերցնես կգնաս Գյուլիստան, Երջանիկն այնտեղից պիտի օգնություն բերի»: Երկու օր վատ եղանակի պատճառով մնացինք գյուղում, Երջանիկը մեր տանն էր: Նրան ճամփու դրեցի, ասաց. «Ես գալու եմ...»: Երջանիկը եկավ Երևան

ու մաքսատան պետի պաշտոնը ստացավ: Հիշում եմ Շահենի խոսքերը Երջանիկի հասցեին, թե՝ մենք քեզ ինչի համար ուղարկեցինք, իսկ դու գնացիր պաշտոն ստացար ու ամեն ինչ մոռացար, ոչ մի օգնություն չկա:

Շահենը 1992 թ. մայիսի 20-24-ն ընկած ժամանակահատվածում եկել էր Երևան, Ղարաբաղում ԳԽ-ի նստաշրջան պիտի լիներ, որպեսզի ԳԽ-ի նախագահ ընտրեին: Շահենի հետ «Հրազդան» հյուրանոցում էինք: Մոտն գնացինք, ասաց. «Շահեն, Վազգենը (Սարգսյան) ուզում է խոսել...»: Վազգենը Շահենին «շեֆ» էր ասում, ասաց. «Շեֆ, իջիր, գնում ենք նախագահի մոտ»: Շահենն ասաց. «Ես Պետրոսի հետ կիջնեմ գլխավոր մուտքի մոտ, դու արի»: Իմ մեքենայով գնացինք այնտեղ: Նա էլ Սենիկի՝ «բիձու» հետ սպիտակ «24»-ով էր (Սենիկը գնդապետ է, հիմա թոշակի է անցել, «գնդի Սենիկն» էր): Մուտքի մոտ Շահենն ու Վազգենը իջան ու մոտն եկան Տեր-Պետրոսյանի մոտ: Մոտ մեկ ու կես ժամ մենք մեքենայում սպասեցինք: Շահենն այնտեղից անտրամադիր դուրս եկավ, Վազգենը նրա հետ չէր: Շահենն ասաց՝ քշիր Նար-Դոս: Ինտերդաշնակցության գրասենյակն էր: Ճանապարհին հարցրի, թե ինչու է անտրամադիր, ասաց. «Դեմս հարց են դրել...»: Նա էլ եկել էր, որ այստեղից պիտի տանկեր տանեին, ասաց. «Ինձ ասացին՝ մենք տեղյակ ենք, որ դաշնակցությունը ԳԽ-ի նախագահի ընտրությանը քո թեկնածությունը պիտի դնի: Դու չպետք է համաձայնես: Ընտրություններից հետո կլինես մեր թեկնածուի տեղակալը՝ «վիցե սպիկեր», ու շրջանից կտեղափոխվես Ստեփանակերտ: Ասացի՝ ես այդպիսի տրամադրություն չունեմ, իմ շրջանի ժողովրդին թողած՝ ես գնամ Ստեփանակերտ... Եվ եթե կուսակցությունը առաջադրի, ես չեմ կարող ասել՝ չէ...»: Եկանք Նար-Դոս, նա հանդիպեց Հրանտ Մարգարյանի հետ: Միջանցքում էի, դուրս եկավ, ասաց՝ «Քշիր օդակայան, պիտի թռնենք գնանք, ինչ-որ բան է կատարվում, որին ես ընդհանրապես տեղյակ չեմ...»: Եկանք օդակայան, Վանցյանն ասաց, որ միայն առավոտյան կարող ենք թռչել: Մայիսի 26-ի առավոտյան Շահենը թռավ շրջան, ինձ ասաց՝ դուք տանկերը կրերեք: Կիրովականից պետք է մեզ 5 տանկ տային: Կիմիկին՝ մեր պահեստապետին հանձնարարվեց գնալ: Այդ տանկերը գնացքով պիտի գային Մասիս, այնտեղից մենք պիտի տանեինք շրջան. Լաչինի միջանցքը բացվել էր: Կիմիկը երեկոյան եկավ, ասաց. «Մի հատ տանկ են

տվել»: Ռացիայով կապվեցինք, թե՝ վիճակն այսպիսին է: Շահենը ջղայնացավ, ասաց. «Դա էլ մի վերցրեք»: Բայց քանի որ մի տանկը արդեն բերել էինք, տարանք հասցրինք մինչև Ստեփանակերտի տակը: Տանկը գնում հասնում է շրջան. Թալիշով, Ինջայով պիտի մտներ շրջան, մեր ճանապարհը դա էր: ԳԽ-ի նիստից 10 օր հետո շրջանը ընկավ: Կա Վազգեն Սարգսյանի նամակը Շահենին. «...30 տանկ... օգնություն...»: Այդ նամակի մասին Շահենը ոչ ոքի չէր ասել: Երբ նա գոհվեց, նրա շորերը որ վառված հանում էինք, այդ նամակը ես գրպանից գտա: Պաշտպանության նախարարության բլանկի վերևը վառված էր: Կտրեցի ու վերցրի, այդ ժամանակ խելքս չէր կտրում, որ այդպես վառված պետք է թողնեմ: Այդ նամակը՝ Վազգենի ստորագրությամբ, կա. «...Չկարողացա քեզ 30 տանկ ... բայց քանի որ կան այս կուսակցությունները, նրանք մեր ազգի հերը կանիծեն...»: Շահենին Շահումյանի անկումից հետո չէինք կարողանում անտառից հանել, ուղղաթիռներին չէին թողնում թռչել, այսինքն՝ Շահենը չպիտի անտառից գար: Այդ ժամանակ ես այստեղ էի՝ Երևանում, նրանք չէին կարողանում ռացիայով երկար խոսել: 20 հոգով մտել էին անտառ, Հովասափյան Շահենն էլ էր նրանց հետ: Մեզ օդակայանում, որքան էլ փորձեցինք, թույլ չտվեցին նույնիսկ մտնել, թե՝ ոչ մի թռիչք չպիտի լինի, խփում են... Բայց Վանցյանը կարողացավ կազմակերպել, երկու ինքնաթիռ պատրաստեց՝ իբր սահմանամերձ գոտիներ պիտի նայեն: Այդտեղից կարողացանք նրանց հանել, բայց չբերեցինք Երևան: Երևանի օդակայանում արդեն լուր էր հասել, որ Շահենին ու տղաներին ուզում են հանել, նույնիսկ օդակայանը «լավ տղաները» օդակել էին: Ուղղաթիռներն իջեցրինք Սևանի մայրուղու վրա: Երկրորդ օրը մեքենայով գալիս էինք, Սևանի ճանապարհին երկու «ԿԱՄԱԶ» մեզ սեղմեցին: Իմ մեքենայով դուրս պրծա, ընկա բորդյուրների վրա: Շահենն ասաց. «Որ այսպես է գործը, պետք է շտապ մամուլի ասուլիս անել»: Դեռ երկրորդ օրն էր: Դաշնակցության գրասենյակում մամուլի ասուլիս տվեց: Դրանից հետո դաշնակցությունը մեզ մոտ մեկ ամիս ուղեկցում էր, Շահենը Աբովյանում իմ տանն էր մնում: Հետո նա նորից գնաց անտառ՝ որպես պարտիզանական ջոկատ: Թերթերը գրում էին Մանուչարյանի միջոցով, որ ոչ մի պարտիզանական շարժում չկա, այդպես չէր:

Բ.Կ.- *Շահենի գոհվելու հանգամանքների մասին ինչ կարող եք պատմել:*

Պ.Մ.- Անուններ չեմ տա, բայց դա միանշանակ դավադրություն էր: Կար մարդ ներսում էլ, «Եղնիկներում» էլ, որ գիտեին, թե որ ուղղաթիռում է նստում Շահենը: Եթե խփում էին, նստելիս պիտի խփեին, այդքան մարդ մեջը՝ երկու ուղղաթիռով գնում էին: Եթե ետ էին գալիս, երկու ուղղաթիռներին պիտի խփեին, առաջինին, որը դատարկ էր, չխփեցին, երկրորդին խփեցին, ինչու «լոժնի» կրակոցներ... ինչու տվյալ գիշերը, որ տղաները գտել էին խփած զենքի պարկուճը, այդ տարածքից՝ վրանի դիմացից խփած արկի պարկուճը չկար, կորավ, տարան այդ գիշեր, ինչու խփելուց մեկ շաբաթ առաջ մեր հետախուզությունը և դարձյալ մեր կողմից հետախուզությունը հասան Տոնաշենի վերևը, որը որ գիտեին պիտի գնանք, ինչի Շահենին խփելուց երկու օր հետո մեզ ասացին, որ Գյուլիստանից պիտի դուրս գանք, մենք արդեն գնացել Վերիշենի վերևն էինք կանգնել, մեզ միանգամից հանեցին, նույնիսկ այն տղաները, որ Գյադուկում էին՝ դեպի Վերիշեն, Խարխափուտ, տեղյակ էլ չէին, որ ուղղաթիռը խփվել է, ինչու տղանները բարոյալքվեցին, և Շահենի խփվելուց հետո Հոկտեմբերյանի ջոկատը, Էջմիածնի տղաները, ուրիշ տղաներ ասացին՝ մենք այստեղ չենք մնում, դուրս ենք գալիս, ինչու այստեղ Վազգենի հրամանով այդ ջոկատներին գինաթափեցին...: Սաշա Կուրեպինը, ռուս էր, մեր զորամասում եղել էր հրամանատարի տեղակալ: Նա Շահենի հավատարիմ մարդն էր, պարտիզանական շարժման ժամանակ մեզ հետ էր, Շահենի զոհվելուց հետո 1994 թ. աշնանը տեղափոխվեց Մանվելի բրիգադ: Թաղիշում ծանր վիրավորվեց, նրան բուժեցինք, շահումյանցիները տիրություն արեցին Ռուսաստանում: Նրա պատմելով՝ ադրբեջանցիները իրեն Մոսկվայից գողացան տարան Բաքու: Մի գրույցի ժամանակ շահումյանցիների մոտ ներկա էին ադրբեջանցիները, ասում են՝ մենք Սաշային կճանապարհենք: Սաշան ասաց՝ ես արթնացա Բաքվում: Վեց ամիս նրան պահում են, վեց ամսից նրա «հավաքագրումը» կատարվում է, ու նորից ուղարկում են այստեղ, քանի որ ինքը Ղարաբաղում է կռվել...: Այդ տղան եկել էր Երևան, պիտի գնար Ղարաբաղ: Ինքը նորից հանդիպեց ինձ, ասաց. «Խիղճս չի տալիս, ես Շահենի հետ եմ եղել, այսքան տղաներ են իմ աչքի առաջ զոհվել, ես չեմ կարող թուրքերին ծառայել, դու պիտի ինձ փրկես, տանես այն մարդու մոտ, որը պիտի ինձ տիրություն անի...»: Մեր ընդհանուր ընկերներից մարդիկ ունեինք, տարա նրանց մոտ: Այդ մարդն ինձ շատ բան պատմեց, Բաքվում գիտեին, թե ինքը ում մոտ է կռվել, ոնց: Ասում է. «Հարց ծագեց Շահենի մասին, ասացի, որ Շահենի մոտ եմ կռվել, երբ շատ մտերմացանք, հարցրի՝ դուք ոնց եք խփել Շահենին: Մի գեներալ էր, ասաց՝ եթե մենք խփած լինեինք, խփողին ազգային հերոս կդարձնեինք, մենք թերթերից, հեռուստատեսությունից ու ռադիոյից ենք լսել...»:

Ղարաբաղից Լեոնարդ Պետրոսյանը, Ռոբերտ Քոչարյանը, Գեորգի Պետրոսյանը, Շահենը, ես, Ջահանը, Ջորի Բալայանը և Բորիս Դադամյանը գնացինք Մոսկվա: Ապրում էինք «Ռոսիա» հյուրանոցում, Ջորին ու Դադամյանը՝ «Մոսկվա» հյուրանոցում: Մոտ 15 օր միասին էինք: Ես մնում էի Լեոնարդ Պետրոսյանի ու Ռոբերտ Քոչարյանի հետ մի սենյակում, Գեորգին, Շահենը և Ջահանը՝ մի սենյակում: Գնացել էինք ռուսական այլ ուժերի հետ բանակցություններ վարենք՝ կապված Շահումյանի ճակատագրի հետ: Նոյեմբերի 7-9-ին վերադարձել ենք: Հանդիպեցինք տարբեր մարդկանց, գեներալների հետ, Գդլյանի հետ... Ես ու Ջահանը գնացել էինք որպես թիկունքը պաշտպանող մարդիկ: Հիշում եմ Արթուր Մկրտչյանի հետ կապված պատմությունը. Շահենի հրահանգով Գավառից վառելիք ու սնունդ էի ուղարկում Շահումյան, ես ու «Արցախ» կոմիտեի ներկայացուցիչը ընդհարվեցինք, ջահել տղա էր, անունը չեմ հիշում, ուզում էին՝ ամենը Ղարաբաղ ուղարկել, Շահումյանին՝ ոչ մի բան: Շահենն այստեղ էր. 1992 թ. հունվար-փետրվար ամիսներն էին, զայրացած եկա հյուրանոց, Շահենին ասացի. «Այս ինչ է կատարվում, վերևներով այդ հարցերը դուք պարզեք...»: Արթուրին ես մի անգամ էի տեսել շրջանում՝ ընտրությունների ժամանակ, բայց չէի հիշում: Հյուրանոցում ասացին, որ Շահենը ներքևում նախաճաշում է: Գնացի, երկուսով նստած էին, ջղայնացած ասացի. «Էս ղարաբաղցիները կյանքներս կերան, ինչ են ուզում մեզնից...»: Շահենն ասաց՝ «Զենդ կտրիր, նստիր, սա Մկրտչյան Արթուրն է»: Արթուրը եկել էր Ռուսաստանից, Եցինը նրան ժամացույց էր նվիրել: Շահենն ասաց. «Լավ էլ եկել ես, Արթուրին կվերցնես ու կգնաս Կամո, երեք օր է՝ այստեղ է, չեն թոցնում, ՀՀԾ-ն խաղեր է անում, գնում ես այնտեղ, բայց տղաներին չես ասում, թե ով է, ուղղաթիռը դատարկ լինի թե լիքը, պիտի թռչես, գնաս Քոլատակ...»: Արթուրի հետ ամբողջ ճանապարհին զրուցելով գնացել ենք, Արթուրն ասաց. «Մեր վիճակը շատ ծանր է, եթե դաշնակցությունն ու ՀՀԾ-ն չեն կարողանում այս ամեն ինչը կիսել, մեր վիճակը շատ է ծանրանալու...»:

Եկանք Գավառ, շամշադինցի Գեղամին ասացի.

- Պիտի թռչենք Շահումյան:

- Չեմ կարող, իմ ուղղաթիռը բարձած է, ու պիտի թռնենք Ղարաբաղ, քանի որ եղանակը վատ է, մի քիչ խմել ենք, կարտ ենք խաղում...

- Վեր կացեք...

Գեղամն էր, Վարդանը... նստեցինք ուղղաթիռը, Արթուրն էլ՝ մեզ հետ: Գեղամը հարցրեց՝ սա ո՞վ է, ասացի՝ քշի՛ր: Բարձրացանք, Քելբաջարի վերևը ասացի՝ իջնում ես Քոլատակ, թե՝ չեմ կարող: Ականջին ասացի՝ Մկրտչյան Արթուրն է, նրան Քոլատակ իջեցնենք, իրենք մի բան կանեն, մի «Ուրալ» մեքենա է գալիս կանգնում»: Արթուրին իջեցրինք այնտեղ, չանցած մեկ ամիս՝ ապրիլի 11-ին, Արթուրի դեպքը եղավ: Հիշեցի նրա խոսքերը՝ «Մեր վիճակը շատ է ծանրանալու, այստեղ ոչ ոք չի մտածում Ղարաբաղի ու Շահումյանի մասին, բոլորը մտածում են իրենց աթոռների մասին...»: Ուղիղ մեկ տարի հետո՝ 1993 թ. ապրիլի 17-ին Շահենի դեպքը եղավ: Ուղղաթիռն այստեղից ուղարկեցին: Քելբաջարի գործողությունն էր, պայմանավորվել էինք, որ միանգամից մտնելու ենք Շահումյան: Պատրաստված, ջոկատները պատրաստ, թարմ ուժերով, բոլորս պիտի գնանք, որ այստեղից մտնում ենք Քելբաջար, այնտեղից էլ՝ Շահումյան: Նա «Մեխակով» արդեն խոսել էր «Պունիի» հետ: Ռացիայով՝ «Մեխակով», մի գրույց կա. «Աշխատեք, որ Շահեն Զինավորիչը չգա այստեղ...»: Շահենի խփված օրը՝ նույն ժամին, նույն վայրկյանին, մենք կարողացանք կազմակերպել, որ ռացիայի բոլոր ռադիոգրամաները, սև արկղը հանեն, Ռուսաստանում ապակոդավորեն (ռաշիֆրովկա): Ո՞նց կարող է պատահել, որ Շահենի ուղղաթիռին խփում են, Զամբուլատը՝ հրամանատարը, հրապարակում, որ դեռ պիտի բարձրանա, մտնի ձորը, ասում է «На нас целятся...»: Զամբուլատը տեսել է, որ իրեն տակից խփում են: Մի արկից այդպես չի լինում, այն վառվելով պիտի գնա, ընկնի... երկու հատ խփեցին, մենք վառվելով ընկել ենք: Պայթյուն լինում է, երբ զինամթերք է մեջը լինում, իսկ այստեղ երևի պայթուցիչ է եղել...

Բ.Կ.- *Օդաչուն չի՞ խնայել:*

Ժ.Մ.- Եթե մասնագետը դրեց, ինչ կարող ես անել...

Պատմում է ՎԱՉԱԳԱՆ ԱՎԱՆԵՍՅԱՆԸ,
Ստեփանակերտ,
12.08.2006 թ.

Ծնվել եմ 1963 թ., Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Մաճկալաշեն գյուղում: 1986-87թթ. աշխատում էի Ստեփանակերտում «Ղարմետաքս» կոմբինատում: Ղարաբաղյան շարժման մեջ մտա 1987 թ. ամառվանից, երբ գաղտնի ստորագրություններ էինք հավաքում:

Բ.Կ.- *Ո՞ւմ հետ էիք կապված, ո՞վ էր ղեկավարում:*

Վ.Ա.- Այդ ժամանակ մեզ ղեկավարներ չկային, ինքներս էինք զբաղվում՝ գաղտնի, փոքր խմբերով՝ երեք-չորս հոգով, աշխատանքի վայրերում, շենքերում: Հավաքված ստորագրությունները ուղարկում էինք անհրաժեշտ տեղը, ասում էին, որ Իգոր Մուրադյանը դրանք պիտի տանի Երևան:

Բ.Կ.- *Մարդիկ ինչպե՞ս էին մասնակցում ստորագրահավաքին, ուզո՞ւմ էին, դժվա՞ր էր:*

Վ.Ա.- Շատերը վախենում էին, բայց բնակչության մեծ մասը ուրախությամբ, մեծ խանդավառությամբ տալիս էր իր համաձայնությունը, ստորագրում անուն-ազգանունով, անգամ հասցեներով:

Բ.Կ.- *Դուք գյուղո՞ւմ էիք հավաքում:*

Վ.Ա.- Ոչ, ես Ստեփանակերտում:

Բ.Կ.- *Իսկ գյուղում կապ ունե՞ք, երբ ջոկատ էր կազմավորվում:*

Վ.Ա.- Սկզբնական շրջանում ես մասնակցում էի Ստեփանակերտի չորս կողմերում պաշտպանական գործողությունների կազմակերպմանը: 1991 թ. աշնանը ես գնացի Մաճկալաշեն: Մինչ այդ գտնվում էի Կրկժանի, Մալիբեյլուի և Ստեփանակերտի շուրջը գտնվող դիրքերում:

Բ.Կ.- *Իսկ ո՞վ էր կազմակերպում, ո՞ւմ հետ էիք շփվում:*

Վ.Ա.- Կազմակերպիչները դարձյալ մենք էինք, թաղի տղաներով...

Բ.Կ.- *Բայց ընդհանուր կոորդինացիա կար, չէ...*

Վ.Ա.- Անպայման, Ստեփանակերտում շտաբը գործում էր, այնտեղ Պետրոսյան Մուրադն էր, Աղաջանյան Ռոլեսն էր և այլն: Դիրքերում խոշոր բախումներ չեղան, կրակոցներ էին լինում, հրացանները քիչ էին, փամփուշտները քիչ էին, մի նռնակով չորս-հինգ հոգով լուսացնում էինք, բայց դիրքերը պահում էինք:

Բ.Կ.- *Ինչը սրիպեց, որ գնաք գյուղ:*

Վ.Ա.- Գյուղում ապրում էին իմ հարազատները: Մաճկալաշենը սահմանային գյուղ էր: Այնտեղ փոխհրաձգությունը սկսվել էր՝ Ֆիզուլու շրջանի գյուղերի կողմից: Ես ճիշտը համարեցի գնալ իմ գյուղը, ծնողներիս մոտ: Մեր տարեցներն էին ասում, որ Ամարասի ճամփան թուրքի ճամփա է, թուրքը քանի անգամ այդտեղով է մտել Ղարաբաղ, և շատ կարևոր էր այդտեղի պաշտպանությունը: Գյուղի մարդիկ արդեն ստեղծել էին մի փոքր ջոկատ: Արամ Ավետիսյանն էր, «Թոփիկ» էինք ասում, շատ լավ տղա էր, նրան օգնում էր Մելքումյան Արմենը, որը հետո դարձավ վաշտի հրամանատար: Կամաց-կամաց ջոկատը մեծացրին, կողքի գյուղերից էլ եկան՝ Հերհերից, Սոսից, Մամայից, Կոլխոզաշենից: Ջոկատը դարձավ վաշտ, հրամանատարը Արմենն էր: Մասնակցում էինք պաշտպանական գործողություններին, բլինդաժներ էինք փորում, ռազմամթերք հայթայթում: Մինչև Սոսի գրավումը փետրվարին պետք է Ղաչարի կողմից բարձունքում գտնվող թուրքերի դիրքերը ոչնչացնեինք: Կազմակերպեցինք, նույնիսկ Ազոն օգնության հասավ, ճիշտ է, չմասնակցեց այդ հարձակմանը: Մեր ջոկատը 1992 թ. փետրվարին մասնակցեց Կարմիր Շուկայի գրավմանը: Ազերիները գնդացիրներով, հրետանիով հրետակոծում էին Կարմիր Շուկան, Մաճկալաշենը: Պետք է վերացնեինք նրանց դիրքերը: Արմենն էր, Ազոն, Կարմիր Շուկայում հրամանատար կար, «Կոկա» էինք ասում, ասում են՝ շատ շուտ փախավ, հասավ մինչև Ավստրալիա, չգիտեմ, թե որքանով է դա ճիշտ, բայց պատերազմի տարիներին մենք չտեսանք այդ հրամանատարին: Արմենի գլխավորությամբ ջոկատի մեծ մասը հասավ մինչև ադրբեջանական դիրքերը: Հաղրութի շրջանից էին մեզ օգնում այդ գործողության ժամանակ: Մեր ուժերը քիչ էին, տեխնիկա չունեինք: Գնացինք, նրանց հրանոթը վերցրինք, մի փոքր գյուղ կար, Ջամիլու էր կոչվում, նրանց դիրքերը ոչնչացրինք: Նրանց համար այդ հարձակումը շատ անսպասելի էր: Գիշերներն էինք

կազմակերպել, հրամանատարներն էին կազմակերպել, մենք էլ մասնակցում, ամենքս մեր պարտքն էինք կատարում: Քանի որ ես երկու գիշեր հերթապահել էի, Արմենը ինձ թույլ չտվեց մտնել այդ բլոկպոստերի դիրքերը: Առանձին հանձնարարություն տվեց: Ուրիշ դիրք էինք պահում: Մի վեց ժամ վերցրինք, ադրբեջանցիներին քշեցինք, նրանց դիրքը պահեցինք: Բայց Ֆիզուլու կողմից ադրբեջանցիներին մեծ ուժ, տեխնիկա օգնության հասավ, մենք ետ քաշվեցինք, քանի որ մենք տեխնիկա չունեինք, հրացաններով էինք, և հնարավոր չէր նրանց տեխնիկայի դեմ դուրս գալ:

Բ.Կ.- *Ինչ տեխնիկայով եկան:*

Վ.Ա.- «ԲՄՊ» տանկեր, «Կրոկոդիլ» երկու ուղղաթիռներ, դրանցից մեկին մեր տղաները Կարմիր Շուկայից վերև խփեցին, «Գրադ» կայանք ունեին, ԲՄՊ-ով գյուղի վրա խփեցին: Գիշերը նախապատրաստվել էինք, մոտեցել էինք թաքուն, մի քանի բոպեում նրանց դիրքը վերցրինք:

Դրանից հետո Ստեփանակերտի իմ ընկերները ինձ բերին Ստեփանակերտ: Այնտեղ ստեղծվել էր կապի ջոկատ, որը հետագայում վաշտ դարձավ. այն մշտապես գտնվում էր կենտրոնական շտաբի ենթակայության տակ: Արկադի Տեր-Թադևոսյանի շատ մոտ ընկերն էր Արթուր Փափազյանը, նա շատ մեծ գործ արեց, արտակարգ բնավորություն ուներ, ես աշխատում էի նրա հանձնարարությամբ: Շուշիի գրավման ժամանակ ես թիկունքում էի աշխատում, գիշերները պատրաստում էինք ռադիոկայանները, Արթուր Փափազյանը մտնում էր, թե՝ ժամանակ չկա, հնարավորություն չկա, պետք է ստեղծենք, պետք է հավաքվի, ռադիոկայան պետք է ստեղծվի: Տալիս էր հանձնարարությունը և միշտ էլ գոհ էր մնում մեր աշխատանքից:

Փոքր եղբայրս ծառայում էր Վարդան և Վահան Ղարիբյանների ջոկատում:

1994 թ. սկզբին Հորադիզի ռազմական դիրքերի ոչնչացմանն ես մասնակցել: Այստեղ հստակ զգացվում էր Մարտունու շրջանի տղաների, տան կիսատների հերոսական գործը: Տանկին դեսանտը նստած, ճակատ ճակատի, բաց դաշտում, քաղաքի մեջ, քաղաքից դուրս, հայտնվում էին ազերիների դեմ-դիմաց, առանց թաքնվելու, գնում մտնում, ջարդում, քանդում վում, ազերիների դիրքերը ոչնչացնում: Գրավման ժամանակ մենք մարտունեցիներին օգնել ենք, մարտունեցիներին փոխարինել ենք, մեզ վերցրին մարտերի: Չեմ ասում, թե մեծ մարտեր էին դրանք, այլ այլոն մարտում էինք քաղաքը՝ Հորադիզը: Կես ժամվա մեջ յոթ գերի վերցրինք: Ես մաս-

նակցում էի կապի ջոկատի հետ, 15-20 հոգի էինք: Մասնակցում էին նաև Ցորի, Ստեփանակերտի գնդի տղաները այդ փողոցային մարտերին: Հետո դիրքեր դրեցինք: Մեզ համար անհավատալի էր. կանգնած էինք Արաքսի ափին՝ Իրանի սահմանապահների հետ, մոտ 12 օր միասին խոսում էինք, անընդհատ խնդրում էին՝ չկրակեք:

Շտաբից տեղափոխվել եմ Շուշիի գունդ, երկու տարի ծառայել եմ գնդում, մասնակցելով Մարտակերտի ուղղության ճակատամարտերին, Մարտակերտի գյուղերի ազատագրմանը:

1994 թ. «Ժդանովի գործողությունը» ձախողվեց: Ավելի ճիշտ, մենք չգնացինք: Ադրբեջանցիները հետո անցան հակահարձակման: Խորը ձյուն էր Ժդանովի տարածքում, մեր տանկերից մի քանիսը գնացին կորան: Պարզ երևում է, որ գործողությունը լավ չէր կազմակերպված:

Բ.Կ.- *Ո՞վ էր այդ ուղղության հրամանատարը:*

Վ.Ա. - Այդ ժամանակ արդեն Ավոն չկար, Մոսին էր ղեկավարում, այդ շրջանի պաշտպանական հրամանատարը նա էր: Մեր հարձակման ձախողումից հետո ազերիները հակահարձակման անցան, մտան համարյա մինչև Ֆիզուլի: Հակահարձակումը ետ մղելու համար հետախուզության Ստեփանակերտից Ագոյի վաշտը գնաց:

Պատմում է ՀԱԿՈԲ ՊՈՂՈՍՅԱՆԸ (Հեռուստաօպերատոր, լուսանկարիչ), 16.03.06, Երևան

Ծնվել եմ Երևանում, 1961 թվականին: Դպրոցն ավարտելուց հետո աշխատում էի Հայաստանի Հեռուստապետկոմում, որպես օպերատոր:

Բ.Կ.- *Ե՞րբ եք գնացել Շահումյան: Պատմեք Շահումյանի հետ կապված ձեր գործունեության մասին:*

Հ.Պ.- Շահումյան գնացել եմ 1993 թվականի հունվարին: 1992 թվականի դեկտեմբերի 30-ին Շահումյանի ջոկատի՝ «Եղնիկների» հետ գնացել ենք Կրասնոսելսկ՝ Վահան գյուղ:

Բ.Կ.- *Ո՞նց կապվեցիք «Եղնիկների» հետ:*

Հ.Պ.- Շահեն Մեղրյանի միջոցով: «ԷյԴիՍի» դաշնակցականների կազմակերպությունը առաջարկեց, Շահեն Մեղրյանի հետ անմիջապես կապի մեջ մտանք:

Կրասնոսելսկում ենք եղել: Վահան գյուղի դիրքերում դեպքեր էին եղել, 13 հոգու սպանել էին: Վազգեն Սարգսյանի հրամանով ուղղաթիռը պետք է իջներ Շահումյանում: Մենք օգնության կարգով իջանք Կրասնոսելսկի՝ Վահանի դիրքերը, մնացինք մինչև հունվարի 12-ը: Ապա ուղղաթիռը եկավ, և մենք գնացինք Արտատափ, որը Գյուլիստանից վերև էր: Հետո մենք առաջխաղացում ունեցանք դեպի Եղակեր: Մենք, կարելի է ասել, գտնվում էինք Ջրաբերդի և Գյուլիստանի մեջտեղում՝ Քաչալ սարում: Շահեն Մեղրյանենց հետ իջանք, մոտ քսաներեք հոգի էինք, և փոխարինեցինք տղաներին:

Բ.Կ.- *Դու և՛ նկարում էիր, և՛ ջոկատի անդամ էիր:*

Հ.Պ.- Ճիշտն ասած, գնացել էի, որ նկարեի, ջոկատի հետ այդքան կապ չունեի: Բայց իրավիճակն այնպես ստացվեց, որ ստիպված էի արդեն համագործակցել. հիմնականում ռացիայի վրա էի: Իրավիճակն այդպես ստիպեց, թվաքանակով քիչ էինք: Պարտիզանական ջոկատ էր դա: Շահենը հրահանգ տվեց, որպեսզի Լյովիկենք, Շուրայենք... գնանք Արտատափ, սկսենք դիվերսիոն աշխատանքները: Չէ, Շուրան մեզ հետ էր, բայց այդ օրը Շուրան մեզ հետ չթռավ, ինչ-որ դեպք էր պատահել ընտանիքի հետ, նա հետո եկավ: Գզիրյան Շուրան հետո զոհվեց: Նա Գզիրյան Աշոտի հորեղբոր տղան էր: Այդտեղ մեզ մոտ մնացին Սևանի Վահեն և ևս մի հոգի, որոնց Նովիկենք էին թույլատրել: Շահենը հրահանգ տվեց, որ ջոկատները մնան, ոչ ոք դուրս չգա, բայց համարյա վեց ամիս էր՝ սնունդ չկար: Թռիչք էլ չէր ստացվում:

Բ.Կ.- *Բա ինչով լիք սնվում:*

Հ.Պ.- Սննդամթերք հիմնականում լինում էր, բայց եղել է պահ, որ վերջանում էր: Արդեն չորացած, պենիցիլին դարձած, բորբոսնած հաց էինք ուտում:

Բայց լավ էր, սննդի պակաս մենք չենք ունեցել: Հագուստը նորմալ է եղել, ոչ մի խնդիր չի եղել, կարելի է ասել՝ ամբողջ ռազմաճակատում միակ ապահովված հարցը դա է եղել:

Գործողություններ հիմնականում եղել են Ջրաբերդի, Երիցմանկանց վանքի, Տոնաշենի տարածքներում: Դե, մենք ինչ էինք անում, ոչ մի գործողություն հիմնականում չէինք կարող անել, միայն դիվերսիա էր: Ի՞նչ էր իրենից ներկայացնում դիվերսիան. հինգ, վեց կամ յոթ հոգով գնում էինք, ճանապարհի վրա պայթեցնում Քելբաջար գնացող մեքենաները: Մենք շրջապատման մեջ էինք, այդ ժամանակ Սարսանգը աղրբեջանցիների ձեռքին էր: Մեզ հետ Վազգեն կար, որը Աբովյանից էր, անհետ կորավ: Նրա հետ ծանոթացել էի Կրասնոսելսկում: Աբովյանից մոտ հինգ հոգի կային մեզ հետ, Շահենն էր հավաքել: Գնացինք գործողության Սարսանգի ուղղությամբ, դեպի Ականաբերդ գնացող ճանապարհին: Այդ ժամանակ Վահիկն էր, Վազգենն էր, Սաշա Կուլեպինը, որը ռուս գնդապետ էր: Մոտ տասը հոգով սկսեցինք այդ գործողությունը: Թուրքերը վրա տվեցին: Մենք արդեն վերցրել էինք մի գերի: Հետո բարձրանում ենք անտառ: Վազգենը իր վրա վերցրեց կրակը, իջավ ներքև, Սաշա Կուլեպինի հետ էր: Դիրքավորումը այսպես էր. երկու-երկու հոգով բաժանվում էին, որ մի մեքենա պայթեցնեն, մյուսները իրենց կողմից մյուս մեքենաները պայթեցնեն, որպեսզի հարձակում չլինի: Թուրքերը մեծ քանակությամբ հարձակվեցին: Մենք վերևի մասում՝ անտառի մեջ, սպասում ենք, որ պետք է Վազգենն ու Սաշան գան, որ մենք շարժվենք: Վազգենը մնում է: Սաշան վազելով եկավ, ասաց՝ ներքևում է, բայց Վազգենը չկար, թուրքերը տարել էին արդեն: Հետո մենք գտանք նրա ավտոմատը, շորերից ինչ-որ բաներ: Թուրքերը վախեցել էին, միանգամից նրան վերցրել գնացել էին, զենքը թողել:

Մինչև այս դեպքը երկու դիվերսիոն աշխատանք էլ եղավ: Ռուսական զորքերի բարձրաստիճան սպա էր, նրան էին խփել «Նիվայի» մեջ: Վահիկը Վազգենի հետ էր, խփեց «Մուխայով»: Դրանից հետո մենք Սարսանգից ետ եկանք Երիցմանկանց վանք: Արդեն հասնում էինք վանքը, երբ ուղղաթիռները՝ «Կրոկոդիլները», սկսեցին զնդակոծել: Հետաքրքիր բան էր, էլի... Վահիկը բարձրացել էր քարի վրա, գոռում էր. «Մամա ջան, ամերիկական կինո է»:

Հետո Երիցմանկանց վանքի մոտերքում մեքենա պայթեցրինք: Շահեն Մեղրյանը պետք է գար Երևան, որովհետև ուրիշ հնար չկար, մենք չէինք կարող: Հունվար, փետրվար, մարտ ամիսներին մենք մոտ քսան հոգով էինք անտառում: Նա եկավ, որ տղաներին բերի: Պիտի հանդիպեր ՊՆ նախարարին՝ Վազգեն Մանուկյանին: Եկավ, հանդիպեց: Պայմանավորվածությունը այնպես էր Երևանում, որ ես Շահենի հետ պիտի գնամ, նրա հետ ետ գամ: Բայց ասաց. «Ես գնում եմ երկու օրով ու ետ եմ գալու»: Շահենը եկավ, հրահանգ ստացանք, որ պետք է Քելբաջարի ազատագրումը լինի: Նա պիտի գար Երևան, որ վերցներ «դաբրո» կոչվածը, որ մտնենք Գյուլիստան՝ Շահումյանի կողմը: Պաշտպանության նախարարությունում նրան ասել էին, որ պետք է օգնի դեպի Քելբաջար ուղղությանը, Քելբաջարը կազատագրենք, նոր կշարժվենք դեպի Շահումյան: Ուղարկեց այնտեղից տղաներին՝ մոտ վաթսուն հոգու՝ Լյովիկն էր, Շուրան էր, Էդոն էր: Եկան տղաները: Արդեն մոտ ութսուն հոգի դառանք: Հիմնականում Երևանից ու Աբովյանից էին: Երևանից ես էի, Թալինից՝ Վահիկը, Հրազդանից՝ Սևանը, որի պապերը Վերիշենից են, մոտ վեց հոգի եղել են Աբովյանի տղաները: Վազգենն արդեն կորել էր, մնացել էին Կարենը, Գևորգը, Վանիկը, Նվերը, իսկ Արմենը հետո եկավ: Հոկտեմբերյանից էլ տղաներ կային՝ Վարդա-

նը, որը գոհվեց Տոնաշենի մարտերի ժամանակ: Դրանից հետո մենք սկսեցինք բազան տեղափոխել դեպի Եղակեր, որ ավելի հեշտ լիներ Տոնաշենի հատվածից Սարսանգի վրա խփելը:

Բ.Կ.- *Բազա ասելով ինչ էիք հասկանում, ինչ էիք կեղափոխում:*

Հ.Պ.- Զենք-զինամթերք, սննդամթերք, որը ուղղով բերեցինք դեպի Եղակեր: Դա մեզանից մոտ քսան օր ժամանակ խլեց: Ոսապարկերով ենք տեղափոխել զենք-զինամթերքը, «Մալյուտկաները», որ մեր ձեռքի տակ եղածներից ամենածանրն էր, բայց հարմար էր պարտիզանական գործողությունների համար, փոքր տրամաչափի զենքեր էին, որ կարող էինք դրանով տանկ, մեծ զրահատեխնիկա խփել:

Բ.Կ.- *Բայց դու նաև նկարահանում էիր:*

Հ.Պ. Բնականաբար, այդ ամբողջը նկարահանվում էր: Երբ Շահենը գոհվեց, առաջին ռեպորտաժը տվեցինք Ազգային հեռուստատեսությամբ: Երեք լրագրի չափ նյութ էր՝ Շահենի հետ կապված:

Բազան տեղափոխելուց մեկ շաբաթ հետո Շահենը եկավ: Մենք արդեն Եղակերում վրաններով բազայավորվել էինք: Եղակերը գյուղ է եղել, բայց վաղուց բնակչություն չունեն: Այնտեղ Եղիշե առաքյալի վանքն էր, գումեր կային: Դրանից ներքև էինք՝ դեպի Դաստագիր: Մենք հիմնականում կանգնել ենք Եղթափա, Եղակեր, Չամչաբույաղ երեք ուղղություններով, և այդ երեք կետերից կապվում էինք Գյուլիստանի հետ: Բարձունքի վրա էինք կանգնած, ու հարվածելու դեպքում միանգամից կարող էինք իջնել: Հետո հրահանգ եկավ, որ պետք է միանանք Քելբաջարի ուժերին: Շահեն Մեղրյանի առաջ առաջադրանք էր դրված, որ պետք է ինքը գլխավորի այդ ամեն ինչը՝ դեպի Թալիշի ու Սարսանգի ուղղություններով փակի ճանապարհները: Մենք պետք է տասը օր պահեինք այդ ճանապարհը: Ինչ գնով ուզում է լինի, պետք է պահվեր, որ թուրքերի կողմից զենք-զինամթերք և զինվորական ուժ չմտներ Քելբաջար: Պետք է բացեինք մի ճանապարհ, որ Քելբաջարից եկող թուրքերը կարողանային դուրս գալ: Անտառի միջով նրանք եկան, Ջրարերդով, Երիցմանկանց վանքով դուրս եկան դեպի Միրբաշիր: Այդպես, Թարթառի ափով այդ հատվածը բացեցինք:

Բ.Կ.- *Այդպես, ժողովուրդը նկել անցել է, հա:*

Հ.Պ. Հա, հեռուստալրագրող Նեգորովը նրանց հետ է եղել, նկարահանել է: «Վեց հարյուր լրագրում» հաղորդման մեջ այդ հատվածը եղել է, որ Ջրարերդով, Երիցմանկանց վանքով նրանք դուրս են գալիս:

Բ.Կ.- *Բեռնած մեքենաներով:*

Հ.Պ.- Չէ, ոտքով, հնարավոր չէր, որ մեքենաները անցնեին: Հիմա է, որ մեքենայով բարձրանում են, այն ժամանակ այդ ամեն ինչը ոտքով է եղել:

Բ.Կ.- *Շատ բնակչություն է անցել այդպես:*

Հ.Պ.- Հա, թուրքերի համարյա ամբողջ նահանջը այդ կողմով է եղել:

Բ.Կ.- Մի մասն էլ Օմարով է անցել:

Հ.Պ.- Դե, բնական է, Օմարով էլ է գնացել: Եթե մենք ինֆորմացված լինեինք, կարող էինք նրանց վնասազերծել, որովհետև Արտատափի մեր բազայից, որը մենք թողել տեղափոխվել էինք դեպի Եղակեր, երկու հարյուր մետր հեռավորության վրա են նրանք այդ ճանապարհը անցել: Մենք սկսեցինք ամունալով ժայռերը պայթեցնել, որ ճանապարհը փակենք: Ճանապարհը փակում էինք, աղրբեջանցիները տրակտորով գալիս էին, մինչև մաքրում էին, օրեր էր անցնում: Հետո առաջին երկու օրը գալիս էին, այս կողմ, այն կողմ վազվզում, տեսնեն մարդ կա, թե ոչ, որ կարողանան աշխատել: Իսկ եթե այդ ընթացքում տեխնիկա գար, դա էինք պայթեցնում: Դա արվում էր այսպես, «Մալյուտկան» վերևից՝ հենց անտառի միջից, կախում էինք զինվորներով կամ սննդով բարձված մեքենայի վրա, որ օգնության էր գնում: Մոտ քսանից ավելի մեքենաներ հինգ-վեց օրվա մեջ պայթեցվեց: Մենք Մարտակերտից հրահանգ ստացանք: Ասել էին, որ այդ հատվածում հետախուզությունը նորմալ աշխատել է: Նրանց տված ինֆորմացիայով Տոնաշենում քիչ թուրքեր կան՝ մի քանի հոգի: Մարտի 27-ին էր, մտանք Տոնաշեն: Տոնաշենում վիրավորվեցի: Հենց այդտեղ էր, որ չկարողացանք հետախուզությունը ամբողջությամբ անել, որովհետև մենք հիմնվեցինք Ստեփանակերտից եկած տվյալների վրա: Հետախուզության անցանք ու զգացինք, որ լուրջ շարժ կա գյուղում, մոտ երկու տուն աղրբեջանցիներ կան: Մենք այնտեղ էինք հինգն անց կեսին՝ լուսադեմին: Այդ կես ժամվա մեջ հասցրինք ինչ-որ բան անել ու մտանք գյուղ: Ժամը վեցին պետք է խփեինք: Վեցին խփեցինք, դուրս եկավ, որ մոտ երեսուն մետրի վրա աղրբեջանցիներն են՝ մի սպիտակ շենքի մեջ: Ետ նահանջելու տեղ չունեինք, առաջ գնալու տեղ չունեինք: Այդ ճանապարհի վրա պառկեցինք:

Բ.Կ.- *Տոնաշենի ո՞ր հատվածն էր, վերևի՞ գյուղում, թե՞ ներքևի՞:*

Հ.Պ.- Վերևից, Դաստագիրից գալու ճանապարհին: Դպրոցի մոտ էր:

Այդտեղից սկսեցին կրակել: Ցանկապատ կար: Մենք արդեն առաջ էինք եկել, դիրքավորվել: Անտառից երկու կողմից ճանապարհ էր գալիս: Մեկը անտառի ճանապարհն էր, մյուսը քարերով շարած ոտքի ճանապարհ էր: Մզոզի կողմից Շահենենք էին: Տարբեր ջոկատների բաժանվեցին: Ներքևի կողմից՝ Զայլուի ուղղությամբ, մենք էինք բարձրանում Նովիկենց հետ: Երեք կողմից անցանք: Ես մեր կողմն եմ ասում: Հունիսի 12-ին՝ Շահումյանի նահանջից հետո, մենք առաջինն էինք, որ Տոնաշեն մտանք, որովհետև մենք շրջապատված էինք: Իսկ այն ժամանակ, երբ երկրորդ անգամ ազատագրվել է Տոնաշենը, եղել է Քելբաջարից հետո:

Բ.Կ.- *Այդ ժամանակ ուրիշ զորքեր էին մասնակցում:*

Հ.Պ.- Տոնաշենի առաջին ազատագրումը արվել է «Եղնիկների» կողմից, այսինքն՝ Մարտակերտ-Ստեփանակերտ թևից ոչ մի ուժ չի խառնվել, որովհետև բոլոր ուժերը կենտրոնացված են եղել Քելբաջարի վրա: Երևի այդպես էլ ծրագիրը եղել է: Չեմ կարող կոնկրետ ասել, թե ինչպես էր ծրագիրը իրականացվելու, բայց մեր կողմից հրահանգը այն էր, որ պետք է փակենք Քելբաջար տանող ճանապարհը, որ օգնություն չգնա: Դրա մեջ մտնում էր նաև Տոնաշենը, որ մենք Տոնաշենով պետք է մտնեինք այդ հատվածը: Այդտեղ առաջինը Տերձյան Հայկը զոհվեց: Բուզլուխեցի Սաքոն, եթե չեմ սխալվում՝ Հարությունյան էր ազգանունը, զոհվեց: Սաքոն վիրավոր էր, Ստեփանակերտում մահացավ: Հետո հոկտեմբերյանցի Վարդանը զոհվեց: Երեք հոգի զոհվեցին: Նովիկը ոտքից վիրավորվեց: Բժիշկ կար մեզ հետ:

Բ.Կ.- *Դու ո՞նց վիրավորվեցիր:*

Հ.Պ.- Ես ոտքից վիրավորվեցի, ձեռքից, վզից:

Երբ Սաքոյին ու Հայկին խփեցին, այդ ժամանակ արդեն էլ ուրիշ հնար չկար, կամերաս դրեցի ու Սաքոյի ավտոմատը վերցրի: Այդ ժամանակ ես արդեն ոտքից վիրավորվել էի, չէի կարող ետ գնալ: Ու բաց տարածք էր, ոչ ծառ կար, ոչ թուփ կար, ճանապարհի վրա պառկած էի: Ու սկսեցի կրակել, մինչև թալինցի Հայկը՝ Վահեի եղբայրը, որ հետագայում զոհվեց, քաշելով ինձ հանեց դեպի անտառի ճանապարհը: Այնտեղ

պատ կար շարած: Այդտեղից արդեն հանեցին: Պապիկյան Արայիկը՝ բժիշկը, վիրավորվեց ոսից: Հետո դուրս եկանք, շարժվեցինք դեպի Եղակեր:

Բ.Կ.- *Քեզ պատգարակով էին տանում:*

Հ.Պ.- Ճանապարհը ես ոտքով գնացի: Մենք մեզ հետ պատգարակ չէինք վերցրել, որովհետև գործողություն էր, հետո դիվերսիոն աշխատանքների ժամանակ բժշկական սարքերը անտեսում էինք: Երբ կապվեցինք, որ վիրավորներ, զոհեր կան, բազայից տղաներ եկան: Շահենն ասաց. «Կգնաք Երևան»: Այնտեղից կապվեց Երևան, որ պետք է ամեն ինչ նորմալ լինի: Բայց ուղղաթիռը եկավ, մեզ տեղափոխեց Ստեփանակերտ, որովհետև այդ ժամանակ ռազմաճակատում շատ ծանր վիճակ էր. Քելբաջար-Մարտակերտ այդ հատվածը, որ պիտի գային Տոնաշենում միանային մեզ, չկարողացան, քանի որ Սարսանգի հատվածում, Ումուդլուում զոհերը, վիրավորները շատ-շատ էին: Ուղղաթիռները չէին հասցնում Քելբաջարից, Մարտակերտից տեղափոխեին անգամ Ստեփանակերտ: Ուղղաթիռները աշխատում էին այդ ուղղությամբ՝ Մարտակերտ-Ստեփանակերտ, Քելբաջար-Ստեփանակերտ: Չէին հասցնում Երևան մարդ տեղափոխել: Հոսպիտալում ահավոր վիճակ էր, շատ վիրավորներ կային: Ես էի, Լյովիկը,Նովիկը: Հետո մեզ մոտ եկավ գեներալ Դալիբալթայանը: Նա ուզում էր մեր բազայի տեղը իմանալ: Ինչքան էլ զարմանալի է, Նովիկն ասաց. «Ոչ մի բան չեք ասում, թե բազան որտեղ է, ինչ է, ով ուզում է հարցնի»: Երևի Մեղրյան Շահենից հրահանգ ուներ Նովիկը: Երբ եկավ գեներալ Դալիբալթայանը, հոսպիտալում քարտեզը բացեց, դրեց սեղանի վրա, ասաց. «Ցույց տվեք՝ որտեղ է բազան»: Ես ասացի. «Ես քարտեզից չեմ հասկանում»: Ասաց. «Դու ո՞վ ես», ասացի՝ «Օպերատոր եմ»: Ասաց՝ հա, լավ: Կողքս նստած էր Նովիկը: Նովիկին ասաց. «Ցույց տվեք՝ ձեր բազան որտեղ է»: Նովիկն ասաց.

- Ես քարտեզ չգիտեմ:

- Հասկացա, դու հրամանատար ես ու քարտեզ չգիտես:

- Չեմ իմանում, գյուղացի տղա եմ, քարտեզ չգիտեմ: Եթե ձեզ պետք է, Շահեն Մեղրյանին դիմեք այդ հարցերով: Ես չգիտեմ մենք որտեղ ենք: Քաչալ սարում ենք, բայց քարտեզով ձեզ չենք կարող ցույց տալ, թե որտեղ ենք:

Բայց իրականում մենք Արտատափից բազան տեղափոխել էինք

եղակեր, Զամչաբուլաղ: Ստեփանակերտից մի կերպ կարողացանք Վարդանի, Սաքոյի, Հայկի դիակները ուղարկել Երևան: Ես ու Նովիկը մնացինք, որովհետև ուղղաթիռում տեղ չկար: Համարյա ամեն օր գալիս էինք տատիկ-պապիկի արձանի մոտ, որ ուղղաթիռով թռնեինք: Երևանից հատուկ հրահանգով ուղղաթիռ ուղարկեցին, որ մեզ անպայման տեղափոխեն Երևան: Գեղամը եկավ, որ ես, Լյովիկը, Նովիկը պիտի տեղափոխվենք Երևան: Եկանք այդտեղ, չկարողացանք թռնել: Լյովիկն ու Նովիկը նստեցին, ինձ ասացին. «Պիտի նստես»: Գեղամն ասաց. «Ասել են, որ դու պիտի նստես անպայման»: Դե, պատգարակով վիրավորներ էին բերում, ես՝ ոտքով: Ասացի. «Լավ, մյուս ուղղաթիռով ես կգամ անպայման»: Հետո եկանք հոսպիտալ: Ոտքս արդեն ուռել էր, արյունը մեջը լերդացել էր: Երբ Դալիբալթայանը եկավ, ասաց. «Շտապ նրանց տեղափոխեք Երևան»: Բացի այդ, Շահենը արդեն դաշնակցականներին էր ասել, որ մենք չմնանք այնտեղ: Այսինքն՝ մեզ համար այստեղ կազմակերպված էր նորմալ բուժում, ամեն ինչով ապահովված էր: Այդ ժամանակ Զորի Բալայանը Քոկսի հետ եկավ հոսպիտալ: Ինձ հետ նույն պալատում պառկած էր ֆրանսիացի օպերատոր Լեոն, որը ոտքից վիրավորված էր: Նրանք եկել էին Լեոյին տեսակցության: Զորին ասաց. «Որ գնաս, անպայման կգնաս Մարաշի հիվանդանոց, որովհետև այնտեղ ոչ մի դեղորայքի պակաս չկա, մենք Քոկսի հետ ուղարկել ենք»: Ասացի. «Խնդիր չկա», որովհետև ՀՕՖ-ը՝ Հայ օգնության ֆոնդը, էլի ամեն ինչ անելու էր: Հետո Կարենը եկավ մոտս ու Աշոտը՝ Ժաննա Գալստյանի տղան, վիրաբույժները: Ասացին. «Շտապ պետք է վիրահատվի ոտքը, որովհետև դեպի փտախտ է գնում, արդեն ուռել է»: Ես այդ օրը պետք է թռնեի Երևան: Էլի հատուկ ուղղաթիռ էր ուղարկված, որ ինձ պիտի տեղափոխեր, ես պիտի գնայի: Ինձ մոտ եկավ նեյրովիրաբույժ Երվանդ Սեֆիլյանը: Ասացի. «Ես պիտի գնամ Երևան, Երևանում ամեն ինչ կա», ասաց. «Չէ, այստեղ պետք է անեմ, որովհետև արդեն ուշ է»: Մտցրին վիրահատարան, վիրահատեցին: Հետո ես եկա Երևան: Անսպասելի եկա, ոչ ոք չէր ապասում, որ ես պետք է գամ Երևան, և դիմավորող չկար: Ես այնպես էի հագնված, որ չէր երևում, որ վիրավոր եմ, վիրակապերը հագուստի տակ էր: Կանգնած եմ: Այդ պահին 15-20 հատ «Շտապ օգնության» մեքենաներ եկան, լցրին վիրավորներին, տանում են: Ես կանգնած եմ, չգիտեմ ինչ անեմ, ոչ ոք մոտիկ չի

գալիս: Վերջը «Կինոն» եկավ, կինոյում պահեստապետ էր: Ասաց. «Գա կոր, էս դռի ես, չհասկացա»: Մի «Շտապ օգնության» մեքենա կանգնեց, ասաց՝ տարեք: Ասաց. «Հիմա ես տղաներին կասեմ, մեկ ժամից քեզ մոտ կլինեն»: Ստեփանակերտում ինձ դեղորայքի թողած լինի՝ ոչ ասել էին. «Որ գնաս, կտաս բժշկին, որ այս բուժումը քեզ անի»: Ինձ բերեցին Ծերեթելիի հիվանդանոց, մոտիկ հիվանդանոցը դա էր: Բժշկին ասում եմ. «Այս դեղորայքն են նշանակել», թե՝ «Քո գործը չի, քեզ ոչ ասում եմ, այնպես արա, դու պառկի, մենք ոչ մի դեղորայք չունենք»: Ասում եմ. «Բա որ դեղորայք չունեք, ես որպես ինչ եմ այստեղ պառկում»: Կիրակի օր էր: «Շտապ օգնության» բժշկին ասում եմ. «Ինձ տեղափոխեք Նորք», ասում է. «Բենզին չունենք»: Ասում եմ. «Ունես, չունես՝ ինձ պետք է Նորք տանես, ինձ ասված է, որ ես այնտեղ պետք է գնամ»: Թե՝ «Բենզին չկա»: Ինձ մոտ էլ փող չկար: Արդեն փողը փոխվել էր: Ինձ մոտ եղած փողը արդեն փող չէր: Երթուղային տաքսու փող էր դարձել: Ասացի. «Ինձ տարեք, այնտեղից կգանգեմ, բենզինի փող կբերեն, խնդիր չկա», թե՝ «Մենք չենք տանի ձեզ»: «Շտապ օգնության» մեքենայի մեջ ինձ հետ մի հոգի էլ կար պառկած: Ասացին. «Նրան տանում ենք Միքայելյան հիվանդանոց, քեզ այնտեղ կարող ենք տանել»: Ասացի. «Տարեք այնտեղ, միայն ոչ այստեղ»: Տարան «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ», այնտեղ արդեն դեղորայք բերեցին: Պառկած էի: Ապրիլի 17-ին խփեցին Շահեն Մեղրյանենց ուղղաթիռը: Խաչատրյան Ռուբիկը եկավ մոտս, ասաց. «Հակոբ, շտապ կադրեր են պետք, որ լուրերով ինֆորմացիա տանք»: Ասացի.

- Ռուբիկ, դիակը բերել են:

- Չէ, ուղղաթիռը թռել է, որ դիակը բերի:

Կադրերը տվեցի: Ասացի. «Ես ուզում եմ թռնել այնտեղ՝ դիակը բերելու»: Եկանք օդակայան: Կամերան վերցրել էի, որ պետք է թռնեմ, բայց ուղղաթիռն արդեն թռել էր: Սպասեցինք այդտեղ: Շահումյանից ուղղաթիռի ուղղությունը փոխել տվին դեպի Ստեփանակերտ՝ տղաների դիակները մեջը: Հետո Ստեփանակերտից կարգադրեցին, որ ուղղաթիռը պետք է իջնի Գորիս: Բայց ժողովուրդը Երևանում սպասում է: Սերգեյը, Տիգրանը մյուս ռադիոկապի աշխատողները ռացիայի մոտ նստած էին, հարցնում էին՝ բայց ինչմ: Նրանք Շահումյանի հետ աշխատող հիմնական ռադիոկապի աշխատողներն էին, շատ բորբոքված էին:

Ասացին, որ Վազգեն Սարգսյանը Գորիսում է, պետք է ուղղաթիռով գա։ Սպասեցինք, Վազգեն Սարգսյանը Գորիսից եկավ։ Կադրը, որ ես նկարել եմ, շատ հետաքրքիր էր. ուղղաթիռից դուրս է գալիս Վազգեն Սարգսյանը, նրա ետևից հերթով հանում են տասնյոթ դիակները։ Երբ մոտեցա դիակին... ես չէի պատկերացնում այդպիսի բան։ Դիակներ տեսել էի Մարաղայում, բայց չէի պատկերացնում, որ այդպիսի դիակներ էլ կարող է տեսնեմ։ Երբ մոտեցա, շորը բարձրացրի, ուզում էի նկարել դեմքը, տեսա, որ ամբողջությամբ մի սև մոխիր է։ Վառվել էին։ Ռուքիկը զգաց, որ վատացա։ Նա էլ էր իմ ետևից նկարում։ Ժողովուրդը սեղմում էր։ Մի կերպ ինձ հանեցին, նստեցրին մեքենա ու տեղափոխեցին հիվանդանոց։ Թաղմանը մասնակցեցի։

Հետո մայիսի 9-ին Շուշիի ազատագրման առաջին տարին էր։ Շուշիի ազատագրմանը մասնակցել էի։ Ինձ մոտ կան Մյունխենի հեռուստաընկերության աշխատակիցները։ Ֆիլմ էին ուզում անել իմ նկարահանած կադրերով։ Պողիկյան Արոն էր ուղարկել։ Նրանց հետ նկարահանումներ արեցինք։ Ինձնից հարցազրույց վերցրին հիվանդանոցում։ Ասացին. «Պիտի գնանք Շուշի»։ Ասացի. «Շուշի ևս գալու եմ»։ Այդտեղից ես գնացի Շուշի՝ ազատագրման առաջին տարելիցին։ Գնացի Ստեփանակերտի հոսպիտալ՝ վիրակապելու, անպայման պետք է արվեր, չէի կարող թողնել։ Հետո Սեֆիրյան Ժիրիկի հետ պայմանավորվեցի, որ գամ Շուշիի գումարտակ։ Մարգարյան Հրանտի հետ խոսեցի, ասաց՝ հա։ Եկանք Երևան։ Մայիսի 20-ին գնացի Շուշիի գումարտակ։ Մնացի մինչև օգոստոս ամիսը։ Հունիսի 12-ին Մոնթեն զոհվեց Աղդամում, հունիսի 13-ին Թալինի Վահիկը զոհվեց Դաստագիրում։ Հայկն այդտեղ էր, նրան ուղարկեցի Երևան, որ գնար Թալին՝ թաղմանը։ Ես այդտեղից դուրս եկա, մոտ քսան օր հետո եկա ու 1993 թվականի հոկտեմբեր ամսին գնացի նորից «Եղնիկների» մոտ։ Ի՞նչ էր այնտեղ կատարվել. Գյուլիստանը վերցրել են, ետ էին տվել։ Տոնաշենից հետո, երբ ես վիրավորվեցի, եկա, այդ 17 օրվա մեջ, փաստորեն ապրիլի 1-ից մինչև 5-ը ազատագրվում է Քելբաջարը, այդ ընթացքում Շահենը Շուրայենց հետ մըտնում են Գյուլիստան։ Գյուլիստանը ազատագրվում է։ Երբ ապրիլի 17-ին Շահենին խփում են, ապրիլի 25-ին Գյուլիստանը առանց կռվի ետ են տալիս։ Մերոնք նորից նահանջում են անտառներ, որովհետև առաջխաղացման հրաման չի լինում, անիմաստ էր մնալ Գյուլիստանում, թուրքերը Գյուլիստանի սարերից անընդհատ կխփեին։ Նրանք Անապատ եկելիցու մոտ էին։

Բ.Կ.- *Շահումյանի գաղթին դու այնտեղ ես եղել։*

Հ.Պ.- Չէ, հունիսի 12-ին ես այնտեղ չեմ եղել։ Մայիսի 13-15-ը, երբ ազատագրվեց Լաչինը, այդ ժամանակ ԱԺ նախագահի ընտրություններն էին։ Հենց այդտեղ եմ ավելի մոտիկից ծանոթացել Շահենի հետ։ Հայաստանից դաշնակցական ֆրակցիան էր՝ Մեխակ Գաբրիելյանի, Վահան Հովհաննիսյանի գլխավորությամբ։ Եվ ՀՀՇ-ի անձնակազմն էր՝ Խաչիկ Ստամբոլցյան, Վազգեն Սարգսյան, Երջանիկ Աբգարյան։ Ստեփանակերտում ընտրություններ էին գնում։ Պետք է պաշտոնակատար Գեորգի Պետրոսյանը դուրս գար և նախագահ ընտրեին։ Դրված էր Գեորգի Պետրոսյանի, Ռոբերտ Քոչարյանի թեկնածությունը, եթե չեմ սխալվում, մի հոգի էլ կար բանակից։ Դաշնակցությունը Շահեն Մեղրյանի թեկնածությունը դրեց։ Հետո վիճաբանություն գնաց, որ Ղարաբաղում պիտի դարաբաղցի լինի, բայց ոչ շահումյանցի, հենց ստեփանակերտցի պիտի լինի։ Այդ բանավեճը գնաց, Սամվել Բաբայանի և Շահեն Մեղրյանի միջև դրսում ընդհարում եղավ։ Հետո եկավ Կոմանդոսը։ Նա այսպիսի արտահայտություն արեց, ասաց. «Պետք է իշխանությունը տրվի ամբողջ զինվորական կազմին, էլ նախագահ պետք չէ Ղարաբաղում այսօրվա դրությամբ, որովհետև սահմաններում վիճակը շատ ծանր է, մենք կորցնում ենք Մարտակերտը և Շահումյանը»։ Դա 1992 թվականի մայիսի վերջերն էր, հունիսի սկիզբը՝ երկուսը կամ երեքը։ Վազգեն Սարգսյանը ելույթ ունեցավ, ասելով. «Հայաստանն է ձեզ ապահովում զենք-զինամթերքով և ոնց ասում է, այդպես պետք է լինի»։ Նորից պաշտոնակատար մնաց Գեորգի Պետրոսյանը, որովհետև վիճակը արդեն սրվել էր։ Այդ ինֆորմացիան պետք է բերեինք։ Խաչատրյան Մարիետայի հետ լինք։ Այդ նյութերը պետք է ուղարկվեր ցուցադրվելու համար։ Ես եկա։ Այդ ընթացքում Շահումյանն ու Մարտակերտը ընկնում են։ Փաստորեն, դա եղել է հունիսի 5-9-ը հատվածում, որովհետև մենք եկանք Երևան, մինչև նյութերը պատրաստեցինք ուղարկելու, այդ ժամանակ Շահումյանն ու Մարտակերտը միանգամից ընկան։ Դրա համար ես այնտեղ չեմ եղել։ Հետո եկա Լաչին, արդեն գաղթ էր, ժողովուրդը ոտքով գալիս էր։

Բ.Կ.- *Դա սկսեցիք։*

Հ.Պ.- Չէ, չեմ նկարել: Ստեփանակերտում մի քանի բան նկարել եմ հրապարակում: Այդ ժամանակ ես ոչ մի ջոկատում կոնկրետ չկայի: Այդ ժամանակ ես Էջմիածնում Մանվելի մոտ էի, հետո Շուշիի ազատագրման ժամանակ տարբեր ջոկատների հետ էի:

Բ.Կ.- *Շուշիից ինչ ես նկարահանել, ո՞ր խմբի, ո՞ր ջոկատի հետ էիր, ո՞ր ուղղությամբ էիր:*

Հ.Պ.- Ուղղությունը Շոշ գյուղի, բերդի տակ էինք: Ես չգիտեի՝ ում հետ եմ եղել: Ամսի ութին մենք դուրս ենք եկել: Ես ուշ եկա, արդեն գործողությունը սկսվել էր, նրանք արդեն պատրաստել էին ջոկատները: Ես պիտի Սոնախով գայի դաշնակների, Ժիրոյի հետ: Սոնախի ուղղությամբ Ժիրոն էր, Ագոն՝ ուրիշ, Բեկոր Աշոտը ուրիշ ուղղությամբ էր:

Մանվելի մոտ էի՝ հինգերորդ բրիգադում, Հադրութում: Այնտեղ Տոդի գործողությունն էր: Արմենչոյի մոտ էինք: Թուրք զերիներ էին վերցրել, գնացել էի, նրանց էի նկարում: Այդտեղից ես եկա ամսի ութին: Շատ դժվարությամբ հասա Կոմանդոսենց մոտ՝ Շոշի հատվածը: Այդտեղ նկարել եմ, ցույց եմ տալիս հրամանատարական կետը փակված, Գեորգի Պետրոսյանն էր, Կոմանդոսը, Դալիբալթայանը: Դա իմ կադրն է: Այդտեղ ես նկարում եմ և իջնում ենք: Չաղ-չաղ տղա կար, իրար հետ իջանք ու միացանք տղաներին: Հետո ես միացել եմ Արարատի Գրիգորենց ջոկատին, «Վեդի Ակո»-ի Մանվելենց հետ էի: Հետո մենք բարձրանում ենք դեպի բերդի Գանձակյան մուտքի հատվածը, այդտեղով ենք մտել: Շուշիում ամենահետաքրքիրն այն էր, որ եկա Շուշիի եկեղեցի, այնտեղ ոչ ոք չէր մտել: «Գրադ» կայանքի արկերն էին, զինվորները բոլորը կանգնած էին: Ես առաջ եկա, նկարելով մտնում եմ եկեղեցի: Գոռում են. «Ականապատված է, մի՛ մտի»: Կադրիս մեջ դա կա: Նկարելով մտա նկեղեցի, եկեղեցու համարյա մեկ երրորդը եկել էի: Ետևիցս գալիս է Արարատի ջոկատի տղաներից մեկը: Մոմերը վառվում էին պատերի վրա: Շուշիի կադրերում այն տեսարանը, որ գյուխները կապած մարդիկ մոմ են վառում պատերի վրա, դրանք իմ կադրերն են: Երբ մտնում ենք նկեղեցի, նա գալիս է, կողքովս միանգամից մտնում է: Ու կադրիս մեջ նա գալիս է մոմը ձեռքին, արդեն խորանի վրա է, մոմը դնում: Դա առաջին մոմն էր, որ վառվեց եկեղեցում, առաջինը մենք էինք, որ մտանք եկեղեցի: Հետո եկան Ջորի Բալայանը, Պարգև սրբազանը: Եկեղեցու տերտերը եկավ: Պատարագի ամբողջ ընթացքում նա ծնկաչոք լացում էր: Ավտոմատով ներս մտավ եկեղեցու տերտերը: Դուք էլ էիք այնտեղ, կադրիս մեջ կաք:

Բ.Կ.- *Արթուրին բերեցին, լաց էր լինում:*

Հ.Պ.- Դա Արթուրն էր, եկեղեցու տերտերը:

Բ.Կ.- *Նա տերտերը չէր, Ամարասի Արթուրն էր:*

Հ.Պ.- Նա Ամարասի Արթուրն էր, մինչև հիմա ես գիտեի եկեղեցու տերտերն էր: Պատարագի ժամանակ նրան բերեցին, սկսեց լացել: Երկար մազերով էր:

Բ.Կ.- *Նա Շուշիում բռնվել էր, Շուշիից ազատվելուց հետո սպանվել է, որ իրեն բերեն այդ եկեղեցի: Այդ եկեղեցու հետ կապված նա հիշողություններ ուներ, լացում էր: Երևանյան հիվանդություն ունի, որքերը բռնվել էին, ձեռքերից բռնած՝ բերեցին: Դե, թեթև տղա էր:*

Հ.Պ.- Հետո մոտեցա Պարգև սրբազանին, ասացի. «Մի խնդրանք ունեմ, ուզում եմ, որ դուք «Գրադի» արկը հանեք»: Նա Ջորիի հետ բռնեց, նկարելով դուրս եկանք: Շավոն ուզում էր Քոչարի պարեին, նկարահաներ: Ասում էր. «Ջուռնա, դհոլ ճարեք»: Ընկել էր այսկողմ-այնկողմ, ջուռնա, դհոլ էր փնտրում:



Պատմում է ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ,
Երևան, 08.11.2005 թ.

Ես եղել եմ «Ամարաս» բարեգործական ընկերության ներկայացուցիչը Հայաստանում: Իմ բոլոր աշխատանքները ես կատարել եմ Արթուր Ալեքսանյանի հետ: Կոորդինացրել ենք զենք, զինամթերք, հագուստ և ամբողջը տեղափոխել ենք Արցախ երկիր: Կարող եմ հիշել Բորիս Դադամյանի, Պարգև սրբազանի, մեր զինակից ընկերների, որոնք ներկայումս չկան, հետ կապված դեպքեր:

Օրերից մի օր, գիշերը՝ ժամը երեքի կողմերը, պետք է Գորիսից շարժվեինք Խնձորեսկ: Շատ մութ էր, այդ ժամանակ գյուղերը հոսանքազրկված էին: Խնձորեսկ պետք է գնայինք առավոտյան թուրքերի վրա հարձակման հետ կապված հարցերով պայմանավորվելու համար: Նաև՝ մեզ մոտ զենքեր կային, որ պետք է հանձնեինք մեր ընկերներին ինքնապաշտպանության համար: Գիշերվա երկուսը-երեքն է: Մեքենայում Արթուր Ալեքսանյանն էր, Պարգև սրբազանը, զինագործ Արմենը, Սևանը: Միամիտ ճանապարհից շեղվեցինք: Մոտ մեկ կիլոմետրի չափ ճանապարհվելուց հետո զգացինք, որ մենք թուրքի հողում ենք: Բոլորիս մեջ վախ առաջացավ: Մեքենայի ներսում, ոչ թե պահոցում, ունեինք մի հատ նագան, մեջը՝ երեք փամփուշտ: Բոլորս էլ մտածեցինք, որ թուրքի ձեռքը ընկնելու դեպքում ինքնասպան ենք լինելու: Բայց, փառք աստծո, նորմալ անցանք, թուրքի չհանդիպեցինք: Չնայած թուրք տեսնելու դեպքում այդ երեք փամփուշտը կարող էինք օգտագործել թուրքի վրա, ոչ թե մեզ վրա: Հետո, երբ դուրս եկանք, մեկս մյուսի դեմքին նայելով հասկացանք, որ ճիշտ չէր ինքնասպան լինելու մեր որոշումը, ավելի ճիշտ էր թուրք սատկացնելը:

Գորիսում զենքի արտադրություն ունեինք: Զենքը արտադրվելուց հետո, երբ տղաները մեզ կանչում էին զենքը հանձնելու, Արթուրի հետ միշտ գալիս էինք Քյարքի, որտեղ թուրքերն էին բնակվում: Այդ «պատուհանը» խորհրդային տարիներին ադրբեջանական հող էր, այնտեղ միշտ ադրբեջանական դրոշն էր ծածանվում, և ադրբեջաներենով ինչ-որ խոսքեր էին գրված, որոնք ռուսական մի ագենտի ասած խոսքերի թարգմանությունն էր: Զենքերը Արթուրի հետ փորձարկել ենք Քյարքիի վրա, և ռուսական բանակի «BMP»-ն, «BTR»-ը միշտ մեզ վրա կրակ է բացել: Փառք աստծո, տերը մեզ հետ էր, հազիվ էինք պոկվում այդտեղից: Միշտ հետապնդում էին: Օրերից մի օր շտաբում էինք: Հունվարի կեսերն էր: Շատ ցուրտ, ձյունոտ օր էր: Նորից փորձարկեցինք ու փախանք: Երասխավանը անցանք, մեքենայի ռեմենը փրթվեց: Մեքենան չէր շարժվում: Բուք-բորան էր: Մենք երկար ոստիկանական մուշտակներ էինք հագել: Դուրս եկա, սկսեցի աշխատել մեքենայի վրա, որ փոխեմ փոկը: Արթուրն էլ դուրս եկավ: Շատ թույլ էինք, սոված, ծարավ, շաբաթներով մեքենայի մեջ էինք հաց ուտում, քնում: Շտապում էինք օդակայան հասնել: Ժամը վեցին Արթուրը պետք է թռներ Ռոստով: Կանչել էին, զենք-զինամթերք կար: Պետք է պայմանավորվեր, թե ինչպես այդ ամենը տեղափոխենք Հայաստան: Ես իմ գործը արեցի, վերջացրի, մեքենայի կապոտը փակեցի, նստեցի մեքենան: Արթուրին ասացի.

- Արթուր, դե արի, նստի:
- Տիգրան, չեմ կարողանում:
- Ո՞նց չես կարողանում, այ ախպեր, արի նստի:
- Չեմ կարողանում...

Շատ հոգնած էր, մտածեցի դա է պատճառը, որ չի կարողանում գալ: Դուրս եկա, նկատեցի, որ մուշտակը կպել է գետնին, չի կարողանում, ուժ չունի, որ պոկի: Պոկեցինք, նստեց մեքենան, առանց կանգ անելու ուղևորվեցինք դեպի օդակայան: Ճանապարհեցի, ետ եկա: Այդ գործարքը ձախողվեց, «ծախողներ» էին եղել: Հազիվ Արթուրը կարողացել էր ետ դառնալ: Փառք աստծո, որ նա շուտ էր զգացել, որ «ծախողներ» կան և չէր մասնակցել այդ հանդիպմանը:

Մենք հաճախ էինք հանդիպում Դավիթ Շահնազարյանի հետ: Մի օր Արթուրն ասաց, որ անպայման պետք է հանդիպենք Դավթի հետ, քանի որ Արցախ աշխարհին պետք է հոգևոր առաջնորդ: Հանդիպե-

ցինք Դավթի հետ: Արթուրի հետ զրույցից հետո որոշվեց, որ Պարգև սրբազանին անպայման պետք է համոզենք, որ նա դառնա Արցախի հոգևոր առաջնորդը: Այդ հարցում շատ աշխատանքներ է տարվել: Պարգև սրբազանին Արթուրն ու Դավիթը կարողացան համոզել: Երբ կոնդակը հանձնվեց, բոլորիս աչքերից ուրախության արցունքներ հոսեցին, որ Արցախ երկիրն ունեցավ իր քրիստոնյա հոգևոր առաջնորդը:

Արթուրը շատ մեծ գործեր է կատարել:

Ես և Արթուր Ալեքսանյանը ուխտ էինք արել, որ Ամարաս եկեղեցին ազատագրելուց անմիջապես հետո տղաներիս պետք է կնքեմ Ամարասում, և քավորը պիտի լինի Արթուր Ալեքսանյանը: Արթուրը պետք է մեզ դիմավորեր: 1991 թվականի վերջերն էր, աշուն էր: Ինքնաթիռով տղաներիս հետ թռանք: «Տիգրան Մեծի» տղաներն էլ էին հետներս, երկու դիակ կար մեզ հետ: Արթուրը գիտեր, որ մենք գալիս ենք: Ճանապարհվել էր օդակայան: Սաֆոնովի հրամանով ձերբակալեցին Արթուրին: Մենք վայրէջք կատարեցինք և իմացանք այդ վատ լուրը: Նրան տարել էին Շուշի: Պարգև սրբազանը հոգևոր հանգստություն տվեց՝ ասելով, որ մեր ընկերները մեզ հետ են, երբեք չպետք է վախենանք: Ամարասի բացումը կատարեց, տղաներս կնքվեցին: Այդ օրը համարյա երեք հարյուր մարդ կնքվեց: Ինչ արած: Մեզ համար շատ վատ օր էր, այն առումով, որ մեր ընկերոջը ձերբակալել էին: Բայց, փառք տիրոջը, արարողությունը կատարվեց: Արթուրը ինձ շատ ստիպեց, թե՝ տուր, մեքենան քշեմ: Ասում եմ.

- Այ Արթուր ջան, այ ախպեր ջան, դրա ժամանակը չի, շտապում ենք, գնանք, հասնենք տեղ:

- Չէ, պիտի ես քշեմ մեքենան:

Մեքենան վերցրեց ձեռքիցս: Մեր դիմացից մի պանելներ տանող մեքենա էր գնում: Շատ հոգնած էինք: Մի պահ աչքս կպավ: Ու աչքերս այն վայրկյանին բացեցի, երբ արդեն պանելներ տանող մեքենայի (պանելավոզ) տակ ենք: Արթուրն էլ գոռում է՝ «Տիգրան, մտանք պանելավոզի տակ, ինչ անեմ, ինչ անեմ...»: Ի՞նչ պիտի անես... Հազիվ ձեռքս գցեցի, ղեկը պահեցի: Փախանք, ճանապարհից թռանք: Ջարդուխուրդ էինք եղել: Արթուրն ասում է՝ «Ես չէի ուզում մտնեինք մեքենայի տակ»: Մեր մեքենան «Վոլգա» էր: Ասում եմ.

- Արթուր ջան, բա որ չէիր ուզում, ինչ մտար:

- Ինքը իրեն գնաց, մտավ:

Օր ու գիշեր չունեինք, օր ու գիշեր չկար: Մենք մեքենայի մեջ էինք ընում, հաց ուտում: Վեց տարի մեքենայից չենք իջել:

Շահումյան ենք գնում: Ուղղաթիռի օդաչուների դիմացի պատուհանները պահպանիչ վահան (զաշիտնիկ) չունեին: Օդաչուն՝ Ստյոպան, ասաց.

- Արթուր, այ ախպեր ջան, զաշիտնիկ էլ չկա, թե որ ներքևից կրակեն, մեզ չկպնի:

- Ո՞նց չկա, այ ախպեր ջան:

Եվ վեր կացավ, նստեց ապակիների վրա, թե՝ «Սրանից լավ զաշիտնիկ»:

- Այ ախպեր ջան, քո քամակը...

- Իմ քամակը լավ էլ կփախցնի...

Ախպերս իր մեջքով իր ընկերներին պահեց, որ մտածելու ոչինչ չկա, ինքը կարող է իր մեջքով պահել թուրքի գյուլլան:

Ձենք-զինամթերքը թաքստոցներում էինք պահում: Փաթեթավորում էինք, որ չերևա, թե ինչ ենք պահում: Հետո վերջում, որ այդ տներից հանում էինք... Ճիշտ կլինի՝ այդ տների տեղը գաղտնի պահենք, որովհետև նրանք շատ-շատ էին վախենում վերջում: Երբ սկսում էինք զենքերը հանել, և այդ մարդիկ տեսնում էին՝ ինչեր ենք այնտեղ պահել, մեկի ուշքն էր անցնում, մեկը վախից վազում էր հիվանդանոց: Այդպիսի մարդ չկար, որ չվախենար:

Մի օր տղաներով դուրս եկանք: Պարետային ժամ էր: Մեզ հետ էր նաև Լուիզան՝ մեր լավ ընկերը: Մեր ընկերներից մեկը անձնագիր չուներ: Լուիզան էլ թմբլիկ աղջիկ էր: Հենց ռուս զինվորները կանգնեցրին, Արթուրն ասաց՝ «Արմեն, գլուխդ կոխի Լուիզայի փեշի տակ»: Լուիզայի փեշը մեր Արմենին փրկեց: Լուիզան էլ ասում էր՝ «Այ տղա, զգույշ, ուրիշ բան չանես»: Արթուրն էլ խնդում էր՝ «Հը՛, ինչ է այդտեղ, թռնրատնում...»: Այդպես, մեր ընկերոջը ռուսական զորքի ձեռքից կարողացանք փախցնել:

Պարգև սրբազանը իր ծննդյան օրն ինձ ասաց, որ տորթը Աստվածաշնչի պես մի գիրք լինի և «Հայր մերը» գրենք վրան: Այդ օրը Սիսակիս հետ էինք: Գնացինք, տորթը տարանք տուն: Սրբազանը տեսավ, կարդաց Աստվածաշնչի բառերը, ուրախությունից միամիտ ուսով խփեց

տղայիս, որը նրա կողքին՝ աթոռի վրա էր կանգնած: Այդ հարվածից տղաս գլխի վրա ընկավ «տորթ-գրքի» մեջ: Տորթը փչացավ: Խեղճ երեխաս վախեցել էր: Արթուրն ասաց.

- Սրբազան, մանկություն է ընկել տորթիդ մեջ: Ուրախանալու ենք, հաղթանակ ենք ունենալու:

Ու այդ օրը շատ ուրախացանք: Լավ օր էր:

Մի դանակ ունեինք, երկու սյարկ փող: Այդ փողը նախատեսված էր Ղարաբաղում գործադուլ արած ժողովրդին օգնելու համար: Մի հատ «ֆինկա» ունեինք: Ես էի, Ամուլյան, Արթուրն էլ օդակայանում սպասում է, որ այդ փողը հասցնենք, թոնեն, տանեն Ղարաբաղ: Իմ և Ամուլյայի հետ էր նաև Ռաֆոն, մականունը՝ «Փափուկ», շատ վախկոտ անձնավորություն էր: Նա անընդհատ ետ էր նայում, թե՝ «Մեզ հետևում են, Տիգրան, փախի...»: Ամուլյան ասաց՝ «Այ ախպեր, շատդ քաշի, ո՞ր փախչի, ումից փախչենք Հայաստանում»: Տրամվայները գալիս են իրար ետևից: Կինոյի տեսարանների պես հազիվ փախել ենք այդ տրամվայների արանքներով: «Փափուկը» մտել էր Ամուլյայի ոտքերի արանքը: Ամուլյան գլխին խփեց, թե՝ «Արա, գլուխդ հանի, այ տղա: Ի՞նչ ես խառնվել իրար...»: Մի-երկու հատ էլ լավ «նախշեց»: Հասանք Արթուրին, Արթուրը պարկերը վերցրեց, և փառք աստծո, այդ ամբողջ գումարը, որ պիտի բաժանվեր գործադուլ անող ժողովրդին, տեղ հասցրինք:

Տղաներից վերցրինք կրականետները:

Ռ.Կ.- *Ի՞նչ կրականետներ էին, որտեղից էր:*

Տ.Պ.- Սովետաշենի զորամասը թալանվեց: Այդ ժամանակ Գերագույն խորհուրդը կար: Մոսկվան եկավ Գիս: Մեծ աղմուկ էր բարձրացել: Փնտրում էին այդ կրականետները: Մի հատ «Վաթսունվեց» բեռնատար մեքենա կար: Արթուրի հետ այդ մեքենան բարձեցինք այդ կրականետները: Քսան հատ վերցրել էինք: «Պոչը»՝ ՊԱԿ-ը, ետևներիցս գալիս էր: Թոնել էին մեզ արդեն: Ստիպված մեքենան ձորի թեքությամբ քշեցինք, կամ այս կողմ, կամ այն կողմ, որ դրանցից պոկվենք: Ճանապարհի կեսին Արթուրին իջեցրել եմ, ես հասել եմ Քյավառ, այնտեղից այդ կրականետները ուղղաթիռով ճանապարհել եմ Ղարաբաղ: Իսկ Արթուրին որոշեցինք շուտ իջեցնել, որ նրան ուրիշ տեղ չփնտրեն, տեսնեն, որ Երևանում է: Երբ ես գնացել եմ Քյավառ, Արթուրը վեց ժամ նստած մնացել է մեր շտաբի՝ «Ամարասի» դիմացի քարին, ճանապարհի եզրին:

Այդքան ժամանակ սպասել է, մինչև ես ետ գամ: Ոչ մեկի հետ ոչ զրուցել է, ոչ խոսել է, միայն մտածել է՝ ո՞նց հասա, ո՞նց ճանապարհեցի, ինչպես կգամ, հասնեմ տեղ: Քյավառից ուղղաթիռով եմ ուղարկել: Արթուրը կարողացավ քսան տոննանոց ուղղաթիռները Վրաստանից բերել: Այստեղ շատ մեծ քանակով զինամթերք ունեինք, որ պետք է տեղափոխեինք: Ո՛չ հնարավորություն կար, ո՛չ ճանապարհ: Այդ երկու քսան տոննանոց ուղղաթիռները բերեց, հասցրեց: Ես էի, Արկադիան էր՝ Ագոն, «Ասկոլկան» էր՝ մեր հերոս ընկերը՝ Ղուլյան Աշոտը, Քյավառում սպասում էինք: Արթուրը ուղղաթիռներով եկավ: Կարողացանք այդ ամբողջ զենքը տեղափոխել: Ուղղաթիռները պետք է այստեղ տեղափոխեին: Այստեղ բարձվեց Էրեբունի օդակայանում, Քյավառի օդակայանում վայրէջք կատարեց: Այնտեղ բարձեցինք զենք-զինամթերքը ու թռան: Զինամթերքը տեղավորում էինք այստեղի պարկերի, կարագի մեջ: Հացի մեջ մի հատ առանց պոչի «ԱԿՍ» եմ քանդել, տեղավորել: Զենքը տեղափոխելը շատ դաժան էր: Մեկ հատ փամփուշտը, որ հասնում էր այնտեղ, մեզ համար տոն էր, ուրախություն: Օրերով սպասում էինք, որ մառախուղ լինի, որ մեր օդաչուները, որոնք բոլորն էլ հերոս են, կարողանան թռչեն և չերևան: Սպասում էինք, որ եղանակը վատանա, որ թեկուզ ոտքով անցկացնենք:

Մի անգամ Լեոնիդը իր ջոկատով պետք է թռչեր: Արթուրը իմացավ, որ օդակայանում ծուղակ են սարքել, կարող է Լեոնիդին ռուսները բռնեն: Զանգեց, ասաց, որ չթողնեմ, որ Լեոնիդը իջնի ներքև, որ նրան, ամբողջ զինամթերքը և ջոկատը, որ կարելի է ասել՝ զորախումբ, տեղափոխեմ Քյավառ, այնտեղից թռցնեմ: Այդ օրը մենք կարողացանք Լեոնիդին փախցնել և Քյավառից թռցնել: Դա մեր վերջին հանդիպումն էր: Նա զոհվեց հերոսի մահով:

Հայաստան էի գնացել: Տաս-տասնհինգ րոպե էր, ինչ տուն էի մտել, մայրս, հայրս խառնված, թե՝ «Տղա ջան, Արթուրին զանգի...»: Ես գիտեի, որ նա ինձ սպասում է: Զանգեցի, ասաց.

- Տղա ես, թե՞ աղջիկ:

Լավն ու վատը իմանալու համար նա այդ խոսքերով էր ինձ դիմում: Ասացի.

- Տղա եմ, Արթուր ջան: Մի հատ նոր ժապավենով գնդացիր ենք բերել, երկու հատ «ԱԿ» ավտոմատներ, նռնակներ, փամփուշտներ, զինամթերք:

Ջավախքում զույգ հոգևորական եղբայրներ կային:

- Շուտ արա, հենց հիմա, շուտ, վերցրու, գնում ենք:

Ո՞ւր ենք գնում, ես դեռ չեմ էլ լվացվել:

- Շուտ արա հասի:

Արթուրի տունը «Դվին» հյուրանոցն էր: Գնացի, Արթուրին վերցրի: Այդ օրը Ռազմիկ Դանիելյանն էլ էր մեզ հետ: Արթուրը թե.

- Քշի:

- Ո՞ւր:

- Երասխավան:

- Ի՞նչ կա:

- Խաբար չես, երկու օր է այնտեղ մարտեր են գնում:

Գնացինք: Ամբողջ ճանապարհին Արթուրը մատներով գնդացրի ժապավեն էր լիցքավորում: Ժողովուրդը երբ տեսնում էր, որ մեր մեքենայի մեջ գնդացիր կա, ուրախանում էր, թե՝ «Շուտ արեք, ճանապարհ տվեք»: Այդ օրը թեժ մարտեր տեղի ունեցան: Մենք կարողացանք թուրքի լամուկին մի քիչ ետ շպրտել: Այդտեղ զոհվեց մեր ընկերներից մեկը՝ Գեորգիսյանը, որ «Անկախություն» բանակի հրամանատարն էր այն ժամանակ: Գիշերը Արթուրը և «Վոժդ» Միշիկը սողալով բերեցին Գեորգիսյանի զենքը, որ մնացել էր մարտի դաշտում:

Բ.Կ.- *Գեորգիսյանին մերո՞նք են խփել:*

Տ.Պ.- Ասեմ՝ հա, թե չէ... Չեմ տեսել: Եթե տեսած լինեի, կասեի՝ հա: Արթուրը ՀՀԾ-ի տղաներին կարողացավ համոզել, և մի ժապավենով գնդացիրը տասը հատ կարաբինի հետ փոխեցինք: Այն ժամանակ զենքգինամթերքի պահեստապետը Վազգեն Մանուկյանն էր: Ուսուցողական ավտոմատները տանում էինք Գորիս: Այնտեղ կարողանում էինք լազերային զոդման միջոցով լցնել փողերը և օգտագործել մարտական նպատակներով: Մեր զինագործ Արմենը շատ լավ գործ էր անում, ամենալավը ինքն էր անում: Այստեղ էլ էին անում, բայց նրանք այդքան հաջող չէին անում: Գորիսինը շատ հաջող էր: 1918 թվականի զենքը կարողանում էինք վերանորոգել և աշխատեցնել թուրքի վրա:

Մի անգամ Արթուր Ալեքսանյանն ու Բորիս Դաղամյանը կանչեցին, ասացին, որ ես այսօրվա մեր նախագահի՝ Ռոբերտ Քոչարյանի հետ ճանապարհվեմ Կիրովական, քանի որ նա Կիրովական քաղաքում պետք է ընտրվեր ՀՀ պատգամավոր: Կապվեց Կիրովականի Տիգրանի, Վանոյի հետ, պայմանավորվեց, որ մեզ անպայման դիմավորեն և ուղեկցեն այնտեղի կարի ֆաբրիկայի մեծ դահլիճը, որտեղ պետք է թեկնածուներին հանդիպեին: Այնտեղ մենք կարողացանք թեկնածուներին համոզել, որ բոլորը իրենց թեկնածությունը հանեն, մնա միայն պարոն Քոչարյանը և ընտրվի պատգամավոր: Նա պետք է լիներ արցախցի առաջին պատգամավորը Հայաստանում: Բորիս Դաղամյանը շատ մեծ աշխատանք տարավ այդ հարցում: Նա խնդրանքով մոտեցավ թեկնածուներին, որոնցից մեկը կինարմատ էր, շատ զգայուն և շատ ուժեղ աղջիկ էր: Այդ օրը միտինգ կազմակերպեց, Ռոբերտ Քոչարյանը ելույթ ունեցավ, ժողովուրդը ընդունեց նրան: Արցախի ազատագրական պայքարի մասին մեծ միտինգ տեղի ունեցավ: Հիշում եմ՝ այդ օրը բենզինս քիչ էր, ժողովուրդը իմացել էր: Երբ ետ պետք է գայինք, ամեն մեկը մի դույլ բենզին վերցրած վազելով գալիս էր: Ու ես նայում և մտածում եմ, որ ես մեկ-երկու դույլ բենզինի տեղ ունեմ, մի քանի հոգի կկրվեն իրար հետ, ծխողներն էլ շատ են, հրդեհ կլինի, բոլորս կվառվենք: Արագ նստեցինք մեքենան և առանց բենզին լցնելու փախանք, ես էի, Դաղամյանը և Քոչարյանը: Ճանապարհին Դաղամյանի փորը ցավում էր, ասաց.

- Тико, Тико, ну останави машину, живот болит.

- Դեղ, ես առանց կանգառի եմ ուզում քշել:

- Չէ, այ տղա, կանգնի, չեմ կարողանում...

Խեղճ մարդուն այնքան տանջեցի, որ իջնելիս գոտին անջատել էր, ես էլ քշեցի, հիմա էլ ինձ էր կանգնեցնում...

Ահագին ծիծաղեցինք:



Պատմում է ՍԱՄՎԵԼ ՄԻՐԶՈՅԱՆԸ,
Խանածախ, 05.06.2006

Շարժումը որ սկսվեց, եղել եմ մեր գյուղի ջոկատում, որն առաջին ջոկատներից էր: Հրամանատարը Արմեն Ավագյանն էր: 1992 թ. հունիսի 28-ին նա զոհվեց: Այդ օրը թուրքերը մեզ ծուղակ էին գցել: Փամփուշտները վերջանալու վրա էին, Արմենն ու տղաները գալիս էին, որ օգնեին, փամփուշտ բերեին: Ասկերանի մոտով անցնելիս, Նախիջևանիկի բարձունք են ասում, այդտեղ հողը փլուզվել էր, թափվել է վրան, մյուս օրն ենք գտել:

Բ.Կ.- *Ո՞վ կար նրա հետ, երեք հոգով էին, ծոծրակին էլ խփած էր:*

Ս.Մ.- Քարն է կպել, ինքն էլ ընդհանրապես լողալ չգիտեր. Կարկառն էր ընկել: Հունիսի 30-ին ինձ են նշանակել գյուղի հրամանատար: Մի վաշտ կազմեցինք՝ 180 հոգուց ավելի էինք: Առաջին մարտը եղել է Ջանգլի գյուղում: Սկզբում մի քիչ դժվար էր, դիմադրում էին, հետո հեշտ վերցրինք: Բայց երբ ռուսական Հատուկ նշանակության ջոկատը եկավ, մենք դուրս եկանք: Գիշերը նորից մտանք: Շատ դժվարություններ եղան Ջանհասանը վերցնելիս: Ուժեղ դիմադրություն ցույց տվին, նրանց Ազգային ճակատն էր, 300 հոգուց ավելի էին: Բայց դրանից հետո մինչև Լաչին գնացինք: Ջանհասանից մինչև Լաչին ոչ մի կռիվ չի եղել: Դժվար մարտեր են եղել Նախիջևանիկ գյուղում: Մենք Քյաթուկի բարձունքներում էինք: Թուրքի առաջին ինքնաթիռը գցելու օրը շատ դժվար կռիվներ եղան: Թուրքերը արդեն հասել էին Քյաթուկ գյուղը: Բարձունքները նորից ազատագրել ենք: Նախիջևանիկը հեշտ վերցրել ենք: Որտեղ դժվար պահեր էին լինում, Վիտալի Բալասանյանը մեր

վաշտն էր ուղարկում: Վաշտի հրամանատարը ես էի, գումարտակի հրամանատարը՝ Ռոբերտ Աղաջանյանը: Բալուջայի, Խանածախի մարտերի ժամանակ վաշտի հրամանատարը Հակոբյան Սամվելն էր: Շտաբի պետը Կամոն էր: Բայց հետո նրանք մտան հրետանի: Դրանից հետո մտան 32-րդ գումարտակ, որի հրամանատարը Ռոբերտ Աղաջանյանն էր: 10 հոգով բարձրացել ենք, ես էի, վաշտի հրամանատարը՝ Էդոն, իմ նոնականետը՝ Սամվելը, և հինգ զինվոր: Բարձրացանք, նրանք պահել են ձախ կողմը, որ չխփեն: Ես ելա բարձունքի վրա, երկու նոնակ գցեցի: Նրանք նոնականետով ինձ խփում էին: Վիտալի Բալասանյանը կապվեց, թե՝ չես կարողանալու խփել: Ասացի՝ չէ, պիտի բարձրանամ: Բարձրացանք, սոպկեն (բարձունքը) վերցրինք: Թուրքերը փախուստի դիմեցին: Աջ կողմով Շոշի տղաները եկան, որ օգնեն, բայց արդեն վերցրել էինք: Իջել ենք ներքևի դիրքը, ազատագրել: Այդ դիրքը մեզ շատ էր խանգարում, հարկավոր էր անպայման վերցնել: Հետո նրանց հրետանին սկսեց մեզ վրա կրակել: Առանց մի զոհի դիրքը վերցրինք: Հրետանուց վիրավորներ շատ կային: Հետո Բալասանյան Վիտալին հրաման տվեց, որ հարկավոր չէ, շատ ենք կորուստներ տալիս:

Ադդամ հեշտ ենք մտել: Թուրքի տանկը գալիս էր՝ 13 հոգի նստած էին վրան: Մենք կարծում էինք, թե հայ են, նրանք կարծում էին, թե մենք թուրք ենք: Երբ մոտեցանք, նոր գլխի ընկանք: Սկսեցինք փոխադարձ կրակել: Տանկը փախավ, բայց 13-ին էլ սպանեցինք: Մեզնից մի զոհ եղավ:

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Արզարյան Երջանիկ 165, 201, 489, 499
Աբիզադե Արազ 45
Աբրահամյան Ջիվան 165, 463
Աբրամյան Ռուբիկ 127
Ազարբան 56
Ազգայդյան Լեոնիդ 73, 174, 175, 176, 187, 433, 434, 436, 437, 438, 439, 442, 444
Ազարյան Ռուդիկ 288
Աթանեսյան Գագիկ 197, 198, 200, 202
Այվազյան Ալբերտ 412
Այվազյան Նաիրա 111-112
Ալեքսանյան Արթուր 182, 193, 356, 357, 360, 362, 363, 365, 366, 502, 504, 508
Ալեքսանյան Արտեմ 96,97, 100, 103
Ալեքսանյան Արտուշ 190
Ալիև Հեյդար 7, 30, 42, 44, 46, 246, 247, 250, 257, 338
Ալիխանն Մամե 121
Ալիխանով Աբրահամ 20
Աղաբալյան Էդվարդ 319
Աղաբալյան Նարինե 315
Աղաբեկյան Արթուր 371
Աղաջանյան Գենադի 198, 241
Աղաջանյան Ռոբերտ 511
Աղաջանյան Ռոլես 182, 288, 289, 418, 419, 420, 786
Աղաջանյան Վոլոդյա 198, 199
Ամատունի 11, 13
Այդինյան Մուրադ 422
Այվազյան Սմբատ 75, 463, 479
Այվազյան Սուրեն 253, 344
Այվազյան Վիտյա 72, 162
Անդրանիկ Օզանյան 10, 28, 34, 70
Աշճյան Մեսրոպ 311, 312, 317
Առաքելյան Էդիկ 134
Առաքելյան Սերգեյ 165
Առուշանյան Աշոտ 353- 355, 357
Առուշանյան Բորիս 419
Առուշանյան Մանվել 174
Արզումանյան Գասնիկ 411
Արզումանյան Վովա 182
Արսենյան Վահան 370, 372, 373
Արությունով Արտյոմ 212
Ասծատրյան Եղիշե 30
Ասլանյան Սերժ 127, 204, 207, 209
Ասլանյան Վանիկ 155
Ասրյան Սլավիկ 435
Ավագիմյան Վոլոդյա 120
Ավագյան Արմեն 510
Ավանեսյան Արբատ 112
Ավանեսյան Արթուր 134
Ավանեսյան Վագիֆ 205
Ավանեսյան Վաչագան 465
Ավգուստ Վոս 417
Ավետիսյան Արամ 486
Ավետիսյան Ավետիս 72, 172
Ավետիքյան Ռաֆայել 488
Ավետիքյան Վահան 422
Աֆանասև 264
Աֆանասյան Գրիշա 297, 331, 416, 417
Բաբայան Արայիկ 239, 368
Բաբայան Բորիկ 385
Բաբայան Սամվել 5, 234, 263, 269, 274, 275, 336, 392, 499
Բաբայան Սեմյոն 56
Բաբայան Տիգրան 386
Բաբաջանյան Համազասպ 20
Բաբուրյան Կարեն 417
Բազեյան Ալբերտ 78
Բալայան Ջորի 86, 245, 258, 286, 344, 350, 351, 383, 417, 483, 496, 500
Բալայան Վալերի 275-277
Բալայան Վլադիմիր 174-176
Բալասանյան Վիտալի 136, 510, 511
Բալբաբյան Ալեքսանդր 115
Բաղդասարյան Ալբերտ 38
Բաղդասարյան Գեղամ 219, 389, 453
Բաղդասարյան Գևորգ 396
Բաղդասարյան Հովհաննես 24, 25
Բաղդասարյան Սեմյոն 393
Բաղդասարյան Կամո 359
Բաղդասարյան Ռուբիկ 419
Բաղդասարյան Վահե 115
Բաղմանյան Հայկազ 122, 207, 358, 451
Բաղրամյան Հովհաննես 16, 18, 20, 115
Բաղրյան Նելսոն 183
Բարավիկ Գենրիխ 254
Բարդադին Նիկոլայ 301
Բարսեղյան Էդմոնդ 317, 318
Բարսեղյան Լյուդմիլա 112
Բեգլարյան Հրաչյա 334, 420
Բեգլարյան Վալերի 367
Բերիա Լավրենտի 11, 13, 19
Բեյով Վասիլի 268
Բոյկո Եվգենի 288
Բոլկին Վադիմ 219, 453
Բիլբրեյ 308, 309
Բլոխով Նիկոլայ 408
Բրեժնև Լեոնիդ 19, 21, 22, 23, 29, 31, 32, 33, 251
Բրուտենց 55, 56, 58
Բունիաթյան Արցախ 360, 282
Բունիաթյան Պավլիկ 136
Բուշ /ավագ/ 139, 140, 308

Գաբրիելյան Արամ 72, 75, 76, 79, 80, 81
Գաբրիելյան Գուրգեն 334, 420,
Գաբրիելյան Մեխակ 499
Գաբրիելյան Վահան 56, 123, 124
Գալստյան Ժաննա 315, 334, 347, 413, 419, 420, 496
Գալստյան Սուրեն 177
Գալստյան Վագիֆ 120, 121, 187, 204, 446, 448
Գայդար Թիմուր 83, 264
Գարեգին Նժդեհ 80, 163, 165
Գասպարյան Արտաշես 332, 334
Գասպարյան Ժորա 110, 112, 113, 134, 360, 366
Գասպարյան Նորիկ 139, 318
Գասպարով Գարի 103
Գեյլ Ռոբերտ 280
Գևորգյան Արմեն 390
Գևորգյան Բորիս 217
Գևորգյան Գևորգ 425
Գևորգ Զավուշ 144
Գզիրյան Աշոտ 490
Գզիրյան Շուրա 490
Գզոդյան Ֆելիքս 131, 165, 171, 225, 230, 237, 277, 354
Գիրո /Միրզոյան/ 135, 175, 176, 180, 229, 230
Գյուլիզադե Վաֆա 45
Գյուլումյան Արմո 143, 151, 154

Գյուլումյան Նովիկ 470, 472
Գորբաչով Միխայիլ 27, 30 -32, 35, 55, 56, 61, 67-69, 158, 162, 254-260, 264, 266-268, 289, 298, 417, 425
Գովորով Վլադիմիր 55, 59, 60
Գրիգորյան Ալեքսանդր 335
Գրիգորյան Անուշավան 345
Գրիգորյան Ավետ 278
Գրիգորյան Լենա 416
Գրիգորյան Համլետ 415, 419
Գրիգորյան Հովիկ 119, 124
Գրիգորյան Մանվել 77, 102, 126, 218, 371
Գրիգորյան Վալենտին 205
Գրիգորյան Վաչագան 212, 240, 265, 350, 352

Դաղայան Օնիկ 25
Դաղամյան Բորիս 37, 275, 350, 351, 417, 418, 483, 502, 508, 509
Դալիբալթայան Գուրգեն 115, 137, 195, 229, 275, 276, 277, 314, 363, 495, 496
Դանիելյան Արթուր 355
Դանիելյան Արմեն 334
Դանիելյան Գրիգոր 122, 127
Դանիելյան Էդիսոն 120
Դանիելյան Կամո 384, 385
Դանիելյան Նորիկ 110, 324, 353, 355, 365, 472
Դանիելյան Սլավիկ 123
Դանիելյան Վազգեն 121
Դանիելյան Ռազմիկ 508
Դավթյան Կոլյա 213, 215, 221
Դավթյան Հրայր 123
Դավթյան Վիտո 413
Դավթյան Վլադիմիր 204
Դեմիրճյան Կարեն 20, 23, 24, 27, 28, 30, 31, 33, 251, 261, 458
Դինսթբիր 305-307

Ելենա Գեորգենա Բոներ 263
Ելցին Բորիս 32, 83, 125, 483
Եղիազարյան Սամվել 165
Եղոյան Ռուբիկ 400
Ենոքյան Ենոք 370
Եսայան Մարտին 174

Զարոբյան Յակով 9, 10, 20, 24-27, 30
Զուլֆիգարով Թոֆիկ 44

Էյչիրեյ 7, 46, 47
Էմին Գևորգ 248

Թամանյան Ալ. 201, 437
Թեռչեր Մարգարետ 268
Թովմասյան Սուրեն 20, 30
Թումանյան Ռոբերտ 343

Ժիրինովսկի 350, 351

Իգիթյան Հենրիխ 265, 351, 352
Իգոր Մուրադյան 65, 66, 136, 198, 253,254, 255, 257, 258, 260-263, 286-288, 290, 337, 338, 343, 344, 383, 485
Իոսիֆյան Անդրանիկ 252
Իսագուլով Արմեն 349
Իսահակյան Ավետիք 16, 18, 19
Իսրայելյան Գառնիկ 446
Իսրայելյան Ռուդիկ 343
Լենին 19

Լյովա Գեորգյան
Լոլո (Լևոն Մովսիսյան) 192-194
Լուկյանով 51, 262, 302, 303

«Խալաստոյ» Ագո 132, 207, 366
Խանզադյան Սերո 248, 251
Խանջյան Աղասի 10, 11, 13
Խաչատրյան Մարիետա 499
Խաչատրյան Լյուդվիգ 396
Խաչատրյան Սարգիս 9,420
Խաչատրյան Ռուբիկ 497
Խաչատուրով Յուրի 76, 116, 169, 170, 284
Խաչիկ Դաշտենց 446
Խոնդկարյան Կամիլա 293
Խրուշչով Նիկիտա 18-20, 26-27, 31-33

Ծատուրյան Բորիս 232
Ծատուրյան Գրիգոր 235

Կապուտիկյան Սիլվա 24, 66, 248, 269
Կարախանյան Բենիկ 212, 341, 347
Կարախանյան Իսահակ 197
Կարապետյան Արամայիս 21
Կարապետյան Արկադի (Ագո) 206-207, 269, 288, 331, 344, 375, 447, 450, 452, 486, 500, 507
Կարապետյան Շավարշ 223
Կարապետյան Ռոմա 446, 448
Կարապետյան Սամվել 133, 355
Կարապետյան Սուրեն 127
Կարապետյան Վագիֆ 188
Կարապետյան Վոլոդյա 170
Կասյան Վլադիկ 345
Կնորկով Բորիս 181, 212, 213, 250, 332, 343, 418
Կիրակոսյան Ալեքսեյ 27
Կիրակոսյան Արման 49
Կիրակոսյան Ջոն 21, 27, 30
Կիրակոսյան Մուրադ 169
Կրաև 48
Կրպեյան Թաթուլ 164
Կոզերև Անդրեյ 300-302
Կոնովալով 58-59
Կոսիգին 29
Կորոլյով Սերգեյ 252
Կուլեպին Սաշա 490

Հակոբյան Ալեքսան 400
Հակոբյան Արթուր 143
Հակոբյան Արմեն 213
Հակոբյան Բենիկ 362, 365, 367, 368
Հակոբյան Ռազմիկ 353
Հակոբյան Սամվել 511
Հակոբյան Սմբատ 89
Հակոբյան Վարդան 419
Հակոբյան Վլադիմիր 330, 447
Համբարձումյան Սեգո 217
Համբարձումյան Վիկտոր 24, 25, 28, 265, 350, 351
Հայրապետյան Լևոն 112, 343
Հայրապետյան Հայրո 21, 138, 373, 374, 399
Հայրապետյան Նինա 316
Հայրապետյան Սամվել 174
Հայրապետյան Վոլոդյա 116
Հայր Վրթանես քահ. 364
Հայրիկյան Պարույր 132, 432, 433
Հարությունյան Անդրանիկ 346

Հարությունյան Արթուր 460
Հարությունյան Գագիկ 344
Հարությունյան Գայանե 220
Հարությունյան Գրիշա 346, 478
Հարությունյան Կամո 471
Հարությունյան Լյուդմիլա 62, 65, 334
Հարությունյան Յուրա 75
Հարությունյան Նազուշ 22, 25
Հարությունով Գրիգոր 10, 14-16, 18-21, 30
Հարությունով Ռոման 55, 58, 186
Հարությունյան Սուրեն 75
Հարությունյան Վահան 331
Հացպանյան Սարգիս 421
Հոյոյան Թորոս 422
Հովասափյան Շահեն 150, 156, 167, 481
Հովհաննիսյան Ալբերտ 163
Հովհաննիսյան Աշոտ 10, 30
Հովհաննիսյան Հրաչ 248
Հովհաննիսյան Մաքսիմ 333
Հովհաննիսյան Յուրա («26»-ի) 124, 189, 190, 193-195, 223, 224, 227, 228, 276
Հովհաննիսյան Վահան 449
Հովհաննիսյան Ռաֆֆի 49
Հովսեփյան Համազասպ 72
Հովսեփյան Համլետ 459
Հովսեփյան Հովսեփ 363-365, 439
Հովսեփյան Միշա 436
Հովսեփյան Յուրա 347
Հոնանյան Էդգար 345
Հուրմուց Լեոնիդ 246, 248
Հուսմունց Վոլոդյա 446

Ղազարյան Հայկ 168
Ղազարյան Ժորա 141
Ղազարյան Ավետ 416
Ղահրամանյան Բարսեղ 163, 165, 167, 169
Ղամբարյան Արամ 308
Ղարիբյան Վահան 487
Ղարիբյան Վարազդատ 79
Ղարիբյան Վարդան 487
Ղևոնդյան Պետրոս 358, 412
Ղուկասյան Արթուր 184
Ղուկասյան Արկադի 331, 337, 339
Ղուկասյան Համլետ 450
Ղուղազարյան Գուրգեն 198
Ղույան Աշոտ 507
Ղույան Դավիթ 323
Ղույան Վոլոդյա 322

Մազմանյան Արմեն 396
Մալենկով 11, 12
Մայիլյան Նորայր 197-198
Մայիլյան Մասիս 416
Մայիլյան Սասուն 222
Մամոնց Կամո 446
Մանգասարյան Արթուր 124
Մանսուրով Անվար 60
Մանվելյան Ալյոշա 291
Մանուչարով Արկադի 37, 55, 181, 189, 269, 287, 332, 334, 418, 419
Մարության Վալերի 136, 216, 254, 278, 379
Մանուկյան Լուիզ-Սիմոն 255
Մանուկյան Վազգեն 144, 145, 154, 284, 290, 384, 394, 397, 444, 491, 508
Մարգարյան Հրանտ 480, 498
Մարգարյան Ռոմիկ 412
Մարդիրյան Մովսես 422

Մարեսկա Ջեկ 48
Մարկոս Խուրշուդյան 208
Մարտիրոսյան Աքշեն 132
Մարտիրոսյան Էդիկ 283, 284
Մարտիրոսյան Հրանտ 21
Մարտիրոսյան Ռուդոլֆ 315
Մարտիրոսյան Վահրամ 355
Մաքսուդով 28
Մեղրյան Շահեն 40, 41, 143-145, 148, 154, 167, 199, 200, 203, 271, 339, 356, 442, 443, 447, 464, 468, 470, 476, 489,491, 492, 495, 497, 499
Մեղրյան Պետրոս 477
Մելիքյան Գուրգեն 407
Մելիք-Շահնազարյան Լևոն 285
Մելքոնյան Գագիկ 165, 370, 377
Մելքումյան Արմեն 486
Մեշչերյակով 408
Մեսրոպյան Աիդա 366
Միխայլով Վլադիմիր 209,254
Միկոյան Անաստաս 12, 13, 19,20, 30
Միկոյան Սերգո 256
Միրզոյան Գրետա 462
Միրզոյան Մաքսիմ 417-419
Միրզոյան Սամվել 510
Միրզոյան Ռաֆիկ 289
Միքայելյան Գեղազնիկ 457
Մկրտչյան Առնո 344
Մկրտչյան Արթուր 144, 272, 280, 301, 306, 313, 335, 372, 483, 484
Մկրտչյան Գագո 313
Մկրտչյան Շահեն 246
Մկրտչյան Սամվել 444
Մկրտչյան Վանիկ 121
Միշին 252
Մյասնիկյան Ալեքսանդր 10, 19
Մոնթե Մելքոնյան 53, 101, 102, 171, 439, 498
«Մորուք» Ռեֆո /Սպանիա/ 125, 129, 137, 204-207, 356, 366, 369
Մովսիսյան Համլետ 416, 419, 420
Մովսիսյան Սուրեն 23
Մութալիբով Այազ 7, 313
Մուկուչ Տոնոյան 92-94, 103
Մուղդուսի Խաչիկ 12
Մուրադյան Անդրանիկ 139
Մուրադյան Արթուր 126
Մուրադյան Ռաֆայել 19, 23, 25
Մուսայելյան Գենո 121
Մուսայելյան Էդիկ 356

Յազով Դմիտրի 55, 59, 60, 202, 221, 260, 302, 303
Յակովլև 256-258, 263
Յարիշ Արմեն 200

Նազարբեկ Նուրուպեկ 83, 125
Նազերով Ջանդաս 48
Նալբանդյան Վասիլի 197, 201
Նանագուլյան Սերգեյ 211
Նանագուլյան Վալերի 183
Նապոլեոն Բոնապարտ 205
Նաջարյան Վարդգես 276, 280, 381
Նաջարյան Ջորջ և Քարոլան 255
Նեզորով Ալեքսանդր 177, 492
Նովիկով Վասիլի 59
Նուբար փաշա 22
Նույկին Անդրեյ 83, 124, 264
Նույկինա Գալինա 83, 124, 264

Շահինյան Մարետա 63
Շահինյան Հայկազ 261
Շահինյան Սամվել 363

Շահնազարյան Դավիթ 35. 503
Շահնազարով Գեորգի 255, 256, 258, 303
Շահվերդյան Սերգեյ 453
Շատպին 88, 123, 303, 305
Շելեպին 19, 23
Շիրազ Հովհաննես 330
Շիրինյան Արկադի 356, 357
Շիրինյան Վիգեն 120, 121, 446-448, 450
Շիրխանյան Վահան 453
Շմայս /Առաքել Մովսիսյան/ 194, 373-375
Շտուգելբերգեր Հանս 320
Շուստեր Ֆրիդրիխ 382

Ռսկանյան Դավիթ 222
Ռսկանյան Հրանտ 31
Ռսկանյան Նելլի 107
Ռսկանյան Վրեժ 230

Չալյան Սերգեյ 145, 151, 167, 203, 256, 468, 470
Չարենց Եղիշե 109, 199
Չատշ 397, 398, 399, 457, 458
Չերրիկով Վիկտոր 259
Չեռնիչենկո 264

Պապիկյան Արայիկ 495
Պարամոնով 408
Պարգև արք. Մարտիրոսյան 194, 277, 361, 426, 433, 501-505
Պարոյր Սևակ 330
Պավլով 417
Պատրիկեև 460
Պետրոսյան Աստվածատուր 206, 229, 363, 365, 451
Պետրոսյան Դավիթ 468
Պետրոսյան Գեորգի 127, 204, 300, 301, 339, 340, 417, 419, 453, 483, 499, 500
Պետրոսյան Լևոնարդ 483
Պետրոսյան Մուրադ 112, 447, 450, 486
Պետրոսյան Ռազմիկ 418, 420, 497
Պետրոսյան Սամվել 467
Պետրոսյան Վաչիկ 384
Պետրոսյան Տիգրան 502
Պիշչև Անատոլի 460
Պողիկյան Աբո 498
Պողոսյան Հակոբ 489
Պողոսյան Հենրիխ 56, 302, 333, 351, 352, 418
Պողոսյան Ստեփան 21
Պողոսյան Վիտո 324
Պողոսյան Վոլոդյա 337
Պոլյանիչկո 85-87, 158, 264, 270, 317, 334, 335
Պոպով 157
Պրալնիկով Անդրեյ 407
Պուգո Բորիս 303, 304, 417

Ջանյան Բոգդան 249
Ջաբի Յուրա 241
Ջիվանշիրյան Արթուր 162

Ռեյգան Ռոնալդ 32, 355
Ռոստոմյան Թեմուր 174, 178
Ռուզվելտ 17

Սադոյան Արշակ 35, 403, 405
Սախարով Անդրեյ 86, 263, 264, 422, 423
Սաղյան Բորիս 119
Սամսոնով գեն. 298
Սահակյան Սամվել 173
Սահակյան Սլավիկ 286
Սահիյան Պավել 181
Սայաթ Նովա 36, 421, 446
Սայրուս Վենս 299,300
Սարգսյան Ալիկ 232
Սարգսյան Աշոտ 81
Սարգսյան Արայիկ 119
Սարգսյան Արսեն 377
Սարգսյան Բորիս 121, 127
Սարգսյան Գագո 132
Սարգսյան Եղիշե 27, 30, 32, 330, 332
Սարգսյան Լևոն 123
Սարգսյան Հովիկ 123
Սարգսյան Հովհաննես 119, 130, 136
Սարգսյան Հուսիկ 73, 75, 77, 80, 123
Սարգսյան Մարգարիտ 107
Սարգսյան Շահեն 122
Սարգսյան Ռոմա 127, 132
Սարգսյան Ռոբերտ 121, 355
Սարգսյան Սերգեյ 416
Սարգսյան Սերժ 37, 110, 116, 117, 126, 134, 137, 268-270, 272, 274, 276, 277, 305, 336, 341, 362, 452
Սարգսյան Սոս 269, 350
Սարգսյան Վազգեն 28, 38, 75, 77, 127, 164, 169, 172, 206, 229, 270 , 281, 284 305, 363, 374, 398, 400, 401, 443, 451, 452, 458, 480, 481, 489, 498, 499
Սարգսյան Վլաստ 124
Սարգսյան Վոլոդյա 137
Սարյան Մարտիրոս 16
Սարոյան Սեյրան 370
Սարուխանյան Վաչե 65, 111
Սասունցի Դավիթ 401, 459
Սաֆարյան Էդիկ 345
Սաֆոնով 88, 158, 159, 216, 221, 264, 268, 334, 504
Սեյրանյան Միսակ 197
Սեֆյան Հենրիկ 477
Սիլանյան Ռոբերտ 212
Սիմոնյան Գագիկ 213, 316
Սիմոնյան Խաչիկ 128
Սիմոնյան Հրաչիկ 114
Սիրադեղյան Վանո 5, 38, 3843
Սոբչակ 264, 266
Սոկոլով Վալերի 57, 61, 157
Սողոյան Պետրոս 100
Սողոմոնյան Գրիգոր 213, 216, 217, 317
Ստալին Իոսիֆ 11-19, 27, 32, 33, 366, 416
Ստամբոլցյան Խաչիկ 467, 499
Ստարովոյտովա Գալինա 67, 263
Ստաս Նամի 17
Ստեփանյան Ալբերտ 22
Ստեփանյան Սլավիկ 221
Սուսլով 19, 27, 29
Սուքիասյան Գագիկ 101

Վազգեն I-ին 25
Վահանյան Ռաֆայել 388
Վանյան Ժորիկ 209
Վանցյան Սերգեյ 480-481
Վասիլյան Ռազմիկ 459
Վարդանյան Շավարշ 189, 501
Վեզիրով Արդուռահման 7, 58
Վոլսկի Արկադի 158, 263, 268, 290, 303, 335, 385, 386

Տեր-Ավետիքյան Եղոր 291
Տեր-Ավետիքյան Հրայր 291
Տեր Գրիգոր բահ. Մարկոսյան 195
Տերձյան Հայկ 194
Տեր-Թադևոսյան Արկադի /Կոմանդոս/ 122-125, 131, 189, 274-277, 354, 371, 373-376, 442, 487, 499, 500
Տեր-Ղազարյան Վահան 256, 290,
Տեր-Ղազարյանց Գեորգի 21-23, 28
Տեր-Պետրոսյան Լևոն 47, 69, 117, 263, 270-273, 302, 303, 335, 340, 417, 479, 480
Տեր Սահակ 291-296
Տիգրան Մեծ 34, 75, 167, 201, 202, 504
Տրեգուբով Սեմյոն 157
Տրոյանովսկի Ալեքսեյ 210
Տրումեն Հարի 17
Տրուշին 216

Ոլորարյան Բագրատ 249, 262, 269

Փարաջանով Սերգեյ 421, 432
Փարսադանյան Մարտիկ 355
Փափազյան Արթուր 276, 277, 487
Փափազյան Վահան 49
Փիրուզյան Արամ 20

Քենեդի Ջորջ 310
Քենեդի Ջոն 310
Քարիմով Գասիմ 238
Քլինտոն Բիլ 308
Քորոզյան Վալոդ 370
Քոկս Քերոլայն 50, 110, 279, 280, 337, 381, 496
Քոչարյան Ռոբերտ 37, 43, 44, 109, 113-114, 134, 269, 270, 273, 336, 338, 339, 341, 419, 420, 432-433, 458, 483, 499, 508-509

Քոչինյան Անտոն 19-27,30, 33
Քրիստոս21, 321

Օգանեզով Գրիշա 292
Օգանովսկի (Կարապետյան) Սամվել 133-134, 235
Օհանյան Արթուր 234
Օհանյան Սեյրան 132-132, 208, 225, 226, 349
Օհանջանյան Ներսես 447
Օհանջանյան Սերգեյ 56
Օսկոցկի Վալենտին 83, 124, 264

Ֆարսյան Լյուդա 332
Ֆեոդորով Ալեքսեյ 403

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Պրոխոն 20, 146, 155, 172, 199, 344, 400, 411, 412, 458, 478, 481, 490, 491
Պրոտու 399
Պրտ 253
Բեյոտ 159, 163
Պոլիս 386-388
Պրյամ 6, 7, 57, 84, 112, 141, 159, 178, 194, 314, 338, 367, 272, 274, 277, 279, 299, 319, 329, 343, 348, 386, 387, 449, 498, 511
Պուշան 392
Պրոլոգ 371
Պրեմոյան Հայաստան 193, 422-424, 428
Պեքսանդրապոլ 33
Պեքսանդրետ 421
Պթայ 247
Պիթրվիլ 423, 426, 427, 430
Պիալցիա 456, 467
Պիոպքալակ 424, 467
Պիտրյան 100
Պլանարեթդ 156, 490
Ադրաբան 119, 123, 126, 130, 132, 184, 226, 230, 442
Անարաս 129, 131, 162, 181, 189, 223, 350, 292, 486, 501, 502, 504, 506
Ամերիկա 17, 31, 32, 34, 135, 230, 251, 254, 299, 309, 310, 341, 422, 429
ԱՄՆ 47, 85, 307
Անապատ եկեղեցի 499
Անգլիա 32, 50, 52, 306
Անդրկովկաս 11, 88, 211, 256, 460
Այգեստան 139
Աշտարակ 377, 456-458
Ապարան377, 456
Առաքյալ 213
Արաբկիր 422
Արաքս գետ 487
Արդահան 16, 24, 349
Արթիկ 456
Արծվաշեն 74, 75, 169-171, 282-284
Արմենավան 340
Արտաշատ 154, 489, 490 ,493, 495
Արփագյուղ 213, 214
Ասկերան 6, 7, 107, 136, 159, 162, 198, 215, 232, 234, 239-241, 261, 267, 270, 273, 279, 299, 324, 329, 347, 380, 388, 510
Ավան 163
Ավարայր 265
Ատրպատական 136
Աֆղանստան 85, 89, 98, 209, 275, 283, 435, 457, 468

Բագրատց Դուզ 132
Բարուջա 124, 137, 139, 511
Բանաձոր 213
Բաշ Գյոնեփայա 129, 130, 179, 183, 411
Բարդա 274, 301
Բարձրոնի 72
Բաքու42, 56-58, 94, 117, 212, 246, 252, 263, 353, 404, 415, 425, 467, 482
Բելգիա 424
Բեյրութ 251

Բիստ 253
Բյուրական 28
Բոռն 404
Բոսփոր 15
Բրյուսել 424
Բուզլուխ 39, 144, 149, 152, 165, 202, 203, 447, 473, 479, 494

Գախտուկ 165, 166
Գանձակ (Կիրովաբաղ) 11, 83, 115, 117, 120, 155, 160, 198, 201-202, 215, 216, 269, 286, 290-293, 296, 299, 477
Գանձասարի վանք 226, 356, 357, 361-367
Գարդմանք 247
Գերանբոյ 166
Գերմանիա 15, 32, 275, 306, 381, 421, 424
Գետաշեն 51, 144, 149-150, 158, 161-164, 169, 197-199, 201-203, 294, 305, 477-479
Գետավան 119, 120, 123, 126, 129, 130, 131, 206, 207, 226, 229, 231,389, 472
Գյադուկ 482
Գյուլաթաղ 353
Գյուլիջա 135
Գյուլիստան72, 111, 145, 163-166, 196, 391, 443, 464, 468, 469, 477-479, 489, 491, 492, 498, 499
Գյուլիբերդ 96, 100,101
Գյումրի 35, 385
Գորիս 93, 214, 226, 252, 313, 325, 346, 375, 400, 402, 403, 433, 458, 460, 465, 497, 498, 502, 503, 508

Դաշքեսան 115, 117, 247
Դաստագիր 187, 492,494, 498
Դարդանել 15
Դավիթաշեն 459
Դավիթ-բեկ գյուղ 403
Դիլիջան 21, 198
Դիվանլար 162
Դրմբոն 104-105, 128, 131, 170, 177, 182, 205, 207-208, 219, 226-227, 354, 364, 367, 379, 392, 395, 472
Դուդուկչի 371

Եգիպտոս 22
Եղակեր 489, 492-493, 795-496
Եղթափա 492
Եղիշե առաքյալի վանք 492
Եղվարդ 456-457
Երասխ 37, 38, 72, 77
Երասխավան 396, 400, 503, 508
Երիցմանկանց վանք 203, 490-493
Երրորդ սովխոզ 175, 226
Եվլախ 56, 117
Եվրոպա112, 250, 306, 421-422, 424, 426, 429

Զագլիկ 205, 208, 360
Զանգեզուր 238, 266
Զարդախաչ 132-133, 204-205, 230, 367
Զիբիխլի Ներքին 91
Զիբիխլի Վերին 91
Զնաբերդ 253
Զոդ 116

Էդիլլու 141, 371, 372
Էջմիածին 295, 370

Էրեբունի 200, 433, 461, 463, 507
Էրքեջ 39, 144, 149, 152, 164
Էստոնիա 66

Թազա Շեն 292
Թարթառ գետ 128, 135, 367, 492
Թալին 456, 457, 471, 491, 498
Թալիշ 218-219, 471, 478, 481, 482, 492
Թաղլար 371, 387
Թասի Գլուխ 90, 91, 403
Թափատուլլակ 100
Թբիլիսի 11
Թոդան 477, 479
Թողանալի 199, 200

Ժդանով շրջ. 488

Իմերեթ Գյարավանդ 119
Ինջա գետ 73, 166
Իջևան 37, 290, 398, 400
Իսրայել 266, 444
Իրան 22, 48, 136, 424, 488

Լաչին 6, 8, 41, 52, 96, 97, 101-102, 163, 165, 168, 170, 172, 194, 198, 225, 236-238, 273, 284, 300, 346, 377, 389, 401, 463, 465, 480, 499, 510
Լեհաստան 54
Լենինական 252, 385, 461
Լենինավան 78, 79, 124, 185, 186, 279
Լենինգրադ 115, 438
Լիբանան 370, 424
Լիոն 424, 430
Լիսագոր 6, 131, 224, 275, 348, 375
Լոս Անջելես 251, 255, 342

Լուսագյուղ 346

Խանլար 115, 136, 199, 202, 290, 295, 477, 478
Խաչենագետ 6, 139, 145
Խաչիկ 72
Խարխափուտ 73, 145, 153, 377, 469, 482
Խնաբադ 278, 279
Խնձորուտ 72
Խրամորթ 241
Խրմնջուղ 371
Խոջալու 89, 100, 104, 112, 157-159, 183, 209, 216-218, 220, 222, 223, 233-236, 267, 268, 270, 273, 275, 283, 289, 336, 337, 353, 380, 387, 463, 467

Ծղալտբիլա 456
Ծաղկաձոր 28, 346
Ծաղկունք 205
Ծիծեռնակաբերդ 25, 31, 262, 447
Ծմակահող 112, 325

Կամո 163, 464
Կանաչ Թալա 344
Կարաչինար 73, 152, 153, 165-167, 443, 447
Կարմիր Շուկա 376, 486
Կիչան 139, 169, 179, 183, 210
Կիրովական 110, 119, 170, 222, 480, 508, 509
Կոլխոզաշեն 486
Կրասնոսելսկ 283, 489-490
Կրեմ 262, 265
Կրկժան 182, 190, 217, 232, 233, 236, 245, 289, 454, 485

Կոստանդնուպոլիս 421
Կուշչի Արմավիր 197, 202, 477

Հադրութ 98, 123, 141, 212-214, 268, 318, 331, 335, 343, 346, 349, 370, 373, 376, 412, 486, 500
Հաթերք 125, 128-132, 137, 145, 184, 204-207, 219, 226-227, 230-231, 305, 356, 359-360, 367, 451, 470, 472
Հաղորդի 53
Հակոբ Կամարի 102, 188, 354
Հայ Պարիս 73, 165, 167
Հաչիքենդ 200, 203
Հարությունագոմեր 207, 356, 360
Հասանդայա 56, 170, 186-187
Հացավան /ԼՂՀ/ 171
Հերհեր 415, 486
Հին Շեն 224, 225, 344, 346
Հոռմ 306
Հրազդան 9, 24, 28, 29, 31, 170, 222, 234, 412, 480, 491
Հոլանդիա 424
Հորադիզ 349, 487

Ղազախ 48, 198, 293
Ղազանչեցոց եկեղեցի 238, 278
Ղազանչի 175
Ղաչար 162, 486
Ղարագյոզյան վարժ. 421
Ղարա 15, 16, 249
Ղափան (Կապան) 172, 282, 284, 402
Ղզղալա 142, 249, 279
Ղոզլու 122
Ղրիմ 20, 27, 285
Ղուկասյան գյուղ 9

Ճարտար 74, 81, 388, 416

Մազի կամուրջ 236
Մալաթիա 377
Մալիբեյլու 157, 159, 220, 270, 485
Մալխալաֆ 101-102
Մաղավուզ 134, 170, 187, 208, 388, 393, 394, 413, 471
Մանաշիդ 39, 144, 147, 149, 152, 153, 165, 447, 477
Մանասի Շեն 72, 168
Մանիքլու 179, 184, 411-412
Մաճկալաշեն 142, 279, 387, 388, 485, 486
Մատաղիս 77, 142, 187, 188, 203, 218, 219, 231, 470-472
Մարալիկ 456-457
Մարաղա 56, 127-128, 175, 185, 279, 280, 446, 448-451, 498
Մարալյան 55
Մարսել 424, 430
Մարտակերտ 5, 6, 8, 50, 55-56, 77, 102, 104, 107, 109, 112, 116, 120-121, 128, 134-137, 146, 154-158, 160, 170, 172, 177-178, 183, 185-187, 204, 207-210, 222, 226-227, 229-231, 263, 268, 270-271, 275-276, 284, 318, 324, 353-355, 360-361, 365, 368, 386-388, 392, 394-395, 407, 411, 440-443, 446-452, 470-473, 488, 493-495, 499
Մարտունաշեն 51, 150, 158, 161, 164, 197-202, 477, 479
Մարտունի /ԼՂՀ/ 268, 415, 485, 487

Մարտունի /ՀՀ/ 282
Մեղրի 93, 100, 230, 266, 384, 400, 433, 460
Մեհմանա 323, 354
Մեհտիշեն 222, 236
Մելիքաշեն 371
Մեծ Շեն /Բերդաձոր/ 216, 222, 224, 225, 237, 344-347, 460
Մեծ Շեն /Մարտակերտ/ 102, 104, 121, 169, 170, 177, 208, 218, 219, 360, 393, 471
Մերձավոր Արևելք 370
Մերձալթիկա 127, 415, 417
Մինասի աղբյուր 478
Մինգեչաուր 117, 248
Մինսկ 46-48, 50, 51, 306
Միջին Ասիա 69, 288
Միրբաշիր 55, 128, 185, 174, 279, 354, 492
Մյունխեն 306, 424, 498
Մովսես գյուղ 433
Մսմնա 486
Մսրվանիս 253
Մութուդարան 170
Մուղան 16
Մուշ 62
Մուսա լեռ 421-422

Յարումջա 171

Նախիջևան 12, 26-27, 30, 161, 234, 248, 252-253, 256-259, 262, 275, 290, 314, 424
Նարեշտար 122, 184, 226
Նավթալան 166
Ներքին Յուղևենդ 162
Նյու Յորք 256, 311

Նոյեմբերյան 37, 433, 457, 460
Նոր Շեն 456

Շահումյան 39-40, 50, 72-73, 115, 116, 122, 129, 132, 143, 144, 147, 150, 152-153, 165-172, 187, 195, 198-203, 263, 268, 271, 274, 294, 318, 377, 387, 421, 440, 442-444, 447, 460, 463-468, 473, 476-479, 483-484, 491, 494, 497, 499, 505
Շենգավիթ 81
Շովթանլու 135
Շվեյցարիա 421, 424
Շուշի 171, 172, 193, 224, 232, 236-237, 277, 443, 498
Շուռնուխ 90-93, 172, 403-404, 433

Ոսկանապատ 290

Չայ 422
Չայլու 156, 170, 188, 204, 280, 395, 442, 494
Չամչաբուլաղ 492, 496
Չարդախլու 197, 426
Չարենցավան 199, 412, 458
Չարևբտար 119, 124, 126
Չափար 119-121, 124, 127-128, 131-132, 134, 204, 206, 226, 230-231, 392, 442
Չեխիա 432
Չերքեզիա 445
Չինաստան 266
Չլդրան 104-105, 129, 131, 139, 169, 177, 183, 205, 207, 322, 324, 355, 364, 408, 410, 411

Պաղեստին 266
Պյատիգորսկ 169
Պոդոսագոմեր (կլումեր) 323, 326
Պոտսդամ 17
Պրահա 250
Պուշկին Յալ 6, 183, 209, 325, 413

Ջանհասան 157, 191, 333, 510
Ջեբրայիլ 273
Ջիբիխլի 93, 96
Ջրաբերդ 204, 206, 208, 489-493
Ջոջառու 128

Ռիգա 317
Ռոստով 198, 216, 221, 408, 503
Ռուս Պարիս 167

Սաղունց Թումբ 125
Սանջակ 421
Սարդարաշեն 329
Սարիբոր 107
Սարիթաղ 162, 344-345
Սարիղամիշ 16
Սարիսու 200
Սարսանգ 137, 145-146, 154, 177, 219, 231, 256, 471-472, 490-492, 495
Սերաստիա 422
Սևան 16, 20, 26, 28, 116, 205, 219, 222, 253, 346, 366, 433, 458, 481, 490-491, 502
Սևսուլան 171
Սեյթաղ 90-93
Սիբիր 70, 245, 247, 250, 253, 288
Սիրիա 251, 370, 424
Սխտորաշեն 316
Սյունիք 77, 457
Սպիտակ 35, 163, 169, 197, 293, 407

Սորբոն 421
Սոս 134, 388, 486
Սովետաշեն 163, 433, 506
Սրխավենդ 129, 139, 169, 183, 411
Սումգայիթ 51, 57, 58, 61, 64, 66-69, 189, 219, 248, 258-260, 262, 265, 267, 269, 286, 290, 322, 426, 456
Սուրբ Խաչ դպրավանք 421
Սուրմալու 16

Վաղուհաս 110, 112, 129, 131-133, 207, 226-227, 229-231, 279, 356, 363-364, 366-367, 389, 392, 405
Վանք գյուղ 130, 134, 227, 229-231, 361, 363, 405
Վարդաձոր 353-355
Վարդենիս 116, 117, 131, 282, 288, 370, 433-435, 438
Վերին Լարս 445
Վերին Հոռաթաղ 123-125, 132, 134, 204, 206, 227, 231, 367, 451
Վիեննա 53
Վիկտոս 415-416
Վրաստան 11, 27, 28, 88, 410, 445, 507

Տաթև 403
Տանձավեր 402-403
Տաշքենդ 285-288, 295
Տարսիվերս 344
Տարտու 67
Տավուշ 433
Տիգրանակերտ 428
Տող 275-277, 500

Ուկրաինա 24, 27, 209, 211, 359, 384

Ումուդլու 125, 208, 472, 495
Ուրալ 250

Ցղնա 253
Ցոր 135, 213, 488

Փարիզ 299, 421, 423-424, 430, 432, 434
Փարպի 459
Փիրջամալ 234

Քաջավան 353, 359, 360
Քաչալ Թումբ 129
Քաչալ Սար 154, 489, 495
Քարինտակ 6, 142, 191, 193, 235, 375, 277, 278, 313, 348, 373, 375, 376
Քելբաջար 41, 42, 46-48, 63, 119, 146, 205, 230, 273, 357, 378, 412, 435, 440, 484, 490-492, 494, 495, 498

Քարվանսարա 8, 50,51, 72, 79, 81, 117, 136, 143, 197, 449
Քիրս 162, 252
Քյաթուկ 134, 510
Քյարքի 400, 402, 503
Քյոլն 424
Քյոնդալան գետ 162
Քոլատակ 84, 467, 483-484

Օդեսա 32, 349-350
Օմար 42, 116, 117, 136, 205, 357-359, 367, 369, 479, 493
Օմսկ 24
Օսեթիա 445
Օրթա Գյոմեփայա 179, 411

Ֆիզուլի 349
Ֆրանսիա 31-32, 112, 230, 255, 306, 421-425, 427, 428, 430, 432-434, 438, 439, 441

ՀԱՃԱԽԱԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Ադրբեջան
Արցախ
Երևան
Թուրքիա
ԼՂԻՄ
ԼՂՀ
Խորհրդային Միություն
Հայաստան
Ղարաբաղ
Մոսկվա
Ստեփանակերտ

Բակուր

(Բորիս Ավանեսի Կարապետյան)

Արցախյան զոյամարտի համահավաք

գիրք չորրորդ, հինգերորդ

Bakour

(Boris A. Karapetyan)

Collection of materials on Arcakh Liberation Struggle

4-5 volumes

Бакур

(Борис Аванесович Карапетян)

Собрание Арцахской освободительной борьбы

книги 4,5

Շապիկը՝ Բակուրի

Խմբագիր և սրբագրիչ՝ Արմենակ Չագինյան

Համակարգչային ձևավորումը՝ Մարիամ Էդիյանի

Ձայնագրությունների մուտքագրումը՝

Անահիտ Առապրյանի, Մարինա Բաղդասարյանի

և Մարինե Ներսեսյանի

«Նոյյան Տապան» տպագրատուն

Թուղթ՝ օֆսեթ N1. 60x84 1/16 ծավալը 33 տպ. մամուլ.

ՀՀ. Երևան 0009, Իսահակյան 28, հեռ. (374 10) 565965

E-mail: design-nt@mail.ru

URL: http://www.nt.am